

Ժյուլ Վեռն Տասնհինգամյա նավապետը

Արտատպված է՝ Ժյուլ Վեռն, Տասնհինգամյա նավապետը, Ե., Սովետական գրող, 1983: Տպագիր գրքում առկա տողատակի ծանոթագրությունները ներկայացված են անմիջապես ծանուցվող միավորից հետո և առնված են շեղ, գուլգահեռ գծիկների մեջ /...../

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I. «Պիլիգրիմ» առագաստանավը

1873 թ, փետրվարի 2-ին «Պիլիգրիմ» առագաստանավը գտնվում էր հարավային լայնության 43° 57' և արևմտյան երկարության 165° 19'-ի վրա՝ ըստ Գրինվիչի միջօրեականի: Չորս հարյուր տոննա տարողությամբ այդ նավը, որ սարքավորված էր Սան Ֆրանցիսկոյում, հարավային ծովերում կետորսության համար, պատկանում էր Կալիֆոռնիայի հարուստ նավատեր Ջեյմս Ուելչոնին, որը երկար տարիների ընթացքում նավի հրամանատարությունը վստահել էր նավապետ Հոլլին:

«Պիլիգրիմը» ամենափոքր, բայց լավագույն առագաստանավերից մեկն էր այն փոքր տորմիդի, որը Ջեյմս Ուելչոնը ամեն տարի ուղարկում էր Բերինգի նեղուցից այն կողմը, մինչև հյուսիսային ծովերը, ինչպես նաև Հարավային կիսագնդի ծովերը, դեպի Տասմանիա կամ Հորն հրվանդանը: Այդ առագաստանավը խիստ արագընթաց էր և, շնորհիվ դյուրաշարժ սարքավորման, փոքր անձնակազմով իսկ կարողանում էր խիզախել մտնելու հարավային կիսագնդի անանցանելի սառցակույտերի սահմանը: Նավապետ Հոլլը կարողանում էր «գլուխ հանել», ինչպես նավաստիներն են ասում, այն սառույցների մեջ, որոնք ամառվա ընթացքում լողում են Նոր Չելանդիայի կամ Բարեհուսո հրվանդանի շրջաններում, այսինքն՝ լայնության ավելի ցածր աստիճանների տակ, քան երկրագնդի հյուսիսային ծովերն են: Ճիշտ է, այստեղ խոսքը միայն փոքր սառցալեռների մասին է, որոնք արդեն փոքրացած են բախումներից, տաք ջրերի հոսանքներից, և որոնց մեծ մասը գնում է հալելու խաղաղ կամ Ատլանտյան օվկիանոսներում:

Հիանալի ծովային և ամենաճարպիկ հարպունաձիգ նավապետ Հոլլի հրամանատարության տակ գտնվող անձնակազմը բաղկացած էր հինգ նավաստուց և մեկ փոքրավորից: Այդ անձնակազմը, իհարկե, քիչ էր կետորսության համար, որը պահանջում է ավելի բազմամարդ անձնակազմ թե՛ հարձակման մակույկները ղեկավարելու և թե՛ որսի մարմինը մասնատելու համար: Սակայն Ջեյմս Ուելչոնը որոշ նավատերերի օրինակով ավելի շահավետ էր համարում Սան Ֆրանցիսկոյում վարձել միայն սահմանափակ թվով նավաստիներ, այնքան, ինչքան անհրաժեշտ էր առագաստանավն առաջնորդելու համար: Նոր Չելանդիայում, զանազան ազգությունների պատկանող ծովային դասալիքների և այլ մարդկանց մեջ քիչ չէին հարպունաձիգներն ու նավաստիները, որոնք պատրաստ էին վարձվել ընթացիկ սեզոնի համար և շատ հմուտ ձկնորսներ էին: Կետորսության ժամանակը վերջանալուց հետո վճարում էին նրանց աշխատավարձը, և նրանք սպասում էին ափում, որ հաջորդ տարին կետորսները նորից գան իրենց վարձելու: Այսպիսով նավատերերը ավելի լավ էին

օգտագործում անձնակազմին և ավելի մեծ շահ ստանում նրանց համագործակցությունից:

Այդպես էր վարվել նաև Ջեյմս Ուելչոնը «Պիլիգրիմը» կետորսության ուղարկելիս: Առագաստանավը նոր էր վերջացրել կետորսության սեզոնը Հարավային բևեռի սահմաններում, սակայն չէր կարողացել կատարել իր առաջադրանքը՝ դեռևս ճարպի դատարկ տակառներ կային, իսկ նավամբարում անջատված ու չանջատված կետոսկրի համար՝ ազատ տեղ: Այդ ժամանակներում կետորսությունը դժվարացել էր արդեն: Չափից ավելի որսալու հետևանքով կետերն սկսել էին հազվագյուտ դառնալ: Իսկական կետերը սկսել էին բնաջնջվել, ձկնորսներին մնում էր միայն հարձակվել զուլավորների վրա, որոնք իսկայական կաթնասուններ են, և որոնց որսալը վտանգավոր է:

Այդպես էր վարվել նաև նավապետ Հուլը կետորսության այս սեզոնի ընթացքում, սակայն հաջորդ ուղևորության ժամանակ նա հույս ուներ մերձենալու ավելի բարձր լայնությունների, հասնել մինչև Կլարա և Ադելիա, որոնց հայտնաբերումը, ինչպես հաստատել է ամերիկացի Ուիլկեսը, վերջնականապես պատկանում է «Ատրուլաբ» և «Չելե» նավերի նավապետ՝ Ֆրանսիացի Դյումոն դ'Ուրվիլին:

Այսպիսով կետորսության սեզոնը նպաստավոր չէր եղել «Պիլիգրիմի» համար: Հունվարի սկզբին, այսինքն՝ բևեռային ամռան ամենատաք շրջանում, երբ դեռևս կետորսությունից վերադառնալու ժամանակը չէր, նավապետ Հուլը ստիպված էր հեռանալ որսի վայրից: Ժամանակավորապես վարձված նավաստիները, բավական կասկածելի մարդիկ, զզվուտոցի պատրվակներ էին գտնում, և նավապետը ստիպված էր մտածել նրանց հեռացնելու մասին:

Այդպիսով, «Պիլիգրիմը» ուղղվեց հյուսիս-արևմուտք, դեպի Նոր Չելանդիա: Հունվարի 15-ին առագաստանավը հասավ կղզու արևելյան ափին, Խաուրակի ծոցի խորքում գտնվող Օքլենդ նավահանգիստը, որտեղ նավապետը ցամաք իջեցրեց սեզոնով վարձած կետորսներին:

«Պիլիգրիմի» մշտական անձնակազմը գոհ չէր, որովհետև առագաստանավի լրիվ բեռնավորումից պակասում էր առնվազն երկու հարյուր տակառ ճարպ: Դեռևս երբեք այդքան վատ որս չէր կատարված: Այդպիսով նավապետ Հուլը, որպես վաստակավոր կետորս, առաջին անգամ էր վերադառնում ձեռնունայն կամ գրեթե այդպես: Նրա ինքնասիրությունը խորապես վիրավորված էր այդ անհաջողությունից, և նա երբեք չէր ներում այն թշվառականներին, որոնց անհնազանդությունը պատճառ էր դարձել կետորսության ծախսողմանը:

Իզուր նա փորձեց Օքլենդում կետորս նոր անձնակազմ վարձել: Բոլոր ազատ ծովայիններն արդեն վարձված էին ուրիշ նավերի կողմից: Այդպիսով, հարկ եղավ հրաժարվել «Պիլիգրիմի» բեռը լրացնելուց, և նավապետ Հուլը արդեն պատրաստվում էր հեռանալ Օքլենդից, երբ նրան, որպես ուղևորներ, դիմեցին այնպիսի անձնավորություններ, որոնց մերժել չէր կարելի:

«Պիլիգրիմի» նավատիրոջ ամուսինը՝ տիկին Ուելչոնը, նրա հինգ տարեկան որդին՝ Ջեկը, և ազգականներից մեկը, որին կուզեն /Չարմիկ:/ Բենեդիկտ էին անվանում, այդ միջոցին Օքլենդում էին գտնվում: Ջեյմս Ուելչոնը, որ առևտրական գործերով երբեմն ստիպված էր լինում Նոր Չելանդիա մեկնել, նրանց երեքին բերել էր այնտեղ և ենթադրում էր իր հետ միասին վերադարձնել Սան Ֆրանցիսկո:

Սակայն այն միջոցին, երբ ամբողջ ընտանիքը պատրաստվում էր մեկնել, փոքրիկ Ջեկը բավական ծանր հիվանդացավ, իսկ նրա հայրը անհետաձգելի գործով

ստիպված էր հեռանալ Օբլենդից, այնտեղ թողնելով կնոջը, երեխային և կուզեն Բենեդիկտին:

Այդ օրից անցել էր երեք ամիս, բաժանման երեք երկար ու ձիգ ամիսներ, որոնք խիստ ծանր եղան տիկին Ուելդոնի համար: Սակայն, երբ փոքրիկ Ջեյը առողջացավ, մայրը ի վիճակի եղավ վերադառնալ, նրան հայտնեցին «Պիլիգրիմի» նավահանգիստ հասնելու մասին:

Այդ միջոցին էր, որ Սան Ֆրանցիսկո վերադառնալու համար տիկին Ուելդոնը ստիպված էր նախ գնալ Ավստրալիա, որպեսզի այնտեղ փոխադրվեր «Ոսկեդար» անդրօվկիանոսյան ընկերության նավերից մեկի վրա, որոնք մարդատար երթևեկություն էին կատարում Մելբուռնի և Պանամայի պարանոցի միջև՝ Պապետեի վրայով: Պանամա հասնելով՝ նա պետք է սպասեր ամերիկյան շոգենավին, որը կանոնավոր հաղորդակցություն էր պահում պարանոցի և Կալիֆոռնիայի միջև: Այդպիսի երկար ուղեգիծը նախատեսում էր հապաղումներ, տեղափոխություններ, որոնք միշտ էլ անախորժ են կնոջ և երեխայի համար: Այդ միջոցին էր, որ «Պիլիգրիմը» խարխիս գցեց Օբլենդում: Տիկին Ուելդոնը չվարանեց և դիմեց նավապետ Հուլին, որպեսզի վերջինս վերցնելով առագաստանավի վրա՝ Սան Ֆրանցիսկո հասցնի իրեն, իր որդուն, կուզեն Բենեդիկտին և Նանին՝ պառավ նեգրուհուն, որը ծառայում էր նրան իր մանկությունից: Հեշտ բան չէր երեք հազար մղոն ծովային ճամփորդություն անել առագաստանավով, սակայն նավապետ Հուլի նավը այնքան անթերի էր, իսկ տարվա այդ միջոցին եղանակը այնքան գեղեցիկ էր հասարակածի շրջանում: Նավապետ Հուլը համաձայնեց և իր անձնական խցիկն անմիջապես ուղևորուհու տրամադրության տակ դրեց: Նավապետը ցանկանում էր, որ քառասունից հիսուն օր տևող ուղևորության միջոցին տիկին Ուելդոնը կետորս նավի վրա հնարավոր եղածին չափ լավ տեղավորվեր:

Այդպիսով, տիկին Ուելդոնի համար որոշ առավելություններ կային այդ պայմաններում ճանապարհորդելու մեջ: Միակ անպատեհությունը այն էր, որ այդ ուղևորությունը պետք է երկարաձգվեր, որովհետև «Պիլիգրիմը» բեռնաթափման նպատակով պետք է մտներ Չիլիի Վալպարեզո նավահանգիստը: Դրանից հետո առագաստանավին մտնում էր միայն հետևել ամերիկյան ծովափին, իր հետևից ունենալով ցամաքային նպաստավոր քամիները, որոնք այդ վայրերը դարձնում են խիստ հաճելի:

Պետք է ասել, որ տիկին Ուելդոնը քաջասիրտ կին էր և ծովից չէր վախենում: Լինելով երեսուն տարեկան, ամրակազմ, հաճախ մասնակից լինելով ամուսնու երկարատև ճամփորդություններին, սովորել էր ծովային ուղևորության հոգևություններին և չէր վախենում փոքր առագաստանավով ճամփորդելուց: Նա ճանաչում էր նավապետ Հուլին որպես հիանալի ծովայինի, որին մեծ վստահություն էր տաճում Ջեյմս Ուելդոնը: «Պիլիգրիմը» հաստատուն, արագընթաց և ամերիկյան կետորս նավերի մեջ լավ անուն շահած նավ էր: Առիթը ներկայացել էր, պետք էր օգտվել. և տիկին Ուելդոնը օգտվեց:

Հասկանալի է, որ կուզեն Բենեդիկտը պիտի ուղեկցեր նրան: Կուզեն Բենեդիկտը բարի մարդ էր, մոտավորապես հիսուն տարեկան: Սակայն, չնայած այդ տարիքին, նրան չէր կարելի մենակ տանից դուրս թողնել: Ավելի շուտ լողող, քան բարձրահասակ, բարակ, քան նիհար, ոսկրոտ դեմքով, ահագին և մազախիտ գլխով, ոսկե ակնոցը քթին դրած այդ մարդու մեջ կարելի էր ճանաչել մեկն այն հարգելի գիտնականներից, այն անվնաս ու բարի էակներից, որոնց վիճակված է իրենց ամբողջ կյանքում մնալ մեծ երեխա, ապրել երկար և մեռնել որպես ծծկեր: Նրան «կուզեն Բենեդիկտ» էին անվանում ոչ միայն ընտանիքում, այլ նաև ընտանիքից դուրս. և իսկապես նա այն բարեհոգի մարդկանցից էր, որոնք բոլորի

համար ազգական են թվում, կուզեն Բենեդիկտը, որին շատ էին նեղում երկար ձեռքերն ու երկար ոտքերը, երբեք ընդունակ չէր մենակ գլուխ հանել որևէ գործից, նույնիսկ կյանքի ամենասովորական հարցերում: Նա երբեք ծանր բեռ չէր ուրիշի համար: Ո՛չ: Սակայն թվում էր, թե նեղություն էր տալիս բոլորին և ինքն իրեն՝ սեփական անշնորհքության պատճառով: Դժվարահաճ չէր, հարմարվող էր, մոռանում էր նույնիսկ ուտելը և խմելը, եթե նրան ուտելիք և խմելիք չտային, անտարբեր էր թե՛ ցրտին, թե՛ շոգին, թվում էր, թե կուզեն Բենեդիկտը պատկանում է ոչ այնքան կենդանական, ինչքան բուսական աշխարհին: Նա նմանվում էր անպտուղ, տերևից գրեթե զուրկ ծառի, որն ընդունակ չէ ոչ կերակրել, ոչ հովանի լինել: Այնուամենայնիվ, բարի սիրտ ուներ նա:

Այդպիսին էր կուզեն Բենեդիկտը: Նա հոժարակամ ծառայություն կմատուցեր ուրիշներին, եթե, ինչպես Պրուդոնը կասեր, ընդունակ լիներ այդ բանին:

Նրան սիրում էին հենց թեկուզ նրա թույլ կողմերի համար: Տիկին Ուելդոնը նրան ընդունում էր իր գավակի տեղ, որպես փոքրիկ Ջեկի մեծ եղբոր:

Պետք է ավելացնել, որ կուզեն Բենեդիկտը ո՛չ անգործ էր, ո՛չ էլ գործից փախչող: Ընդհակառակն, նա անխոնջ աշխատող էր: Նրա միակ մոլությունը բնագիտությունն էր, որն ամբողջովին կլանում էր նրան:

«Բնագիտություն» ասել նշանակում է շատ բան ասել: Հայտնի է, որ այդ հավաքական հասկացողությունն ընդգրկում է մի քանի գիտություններ՝ կենդանաբանությունը, բուսաբանությունը, հանքաբանությունը և երկրաչափությունը:

Սակայն կուզեն Բենեդիկտը ո՛չ բուսաբան էր, ո՛չ հանքաբան, ո՛չ երկրաբան:

Ուրեմն մի՞թե կենդանաբան էր բառի լայն իմաստով, Նոր Աշխարհի Կյուվեի նման մի անձնավորություն, որ անալիտիկ վերլուծման կամ սինթետիկ վերականգնման էր ենթարկում կենդանուն: Այդ չորս տիպերից (ողնաշարավորներ, կակղամորթներ, հողավորներ և ճաճանջավորներ) միամիտ, բայց ջանասեր գիտնականը ուսումնասիրե՞լ էր տարբեր դասերը, կարգերը, ընտանիքները, տեսակները, ցեղերը:

Ոչ:

Գուցե կուզեն Բենեդիկտը իրեն նվիրել էր ողնաշարավորների, կաթնասունների, թռչունների, սողունների և ձկների ուսումնասիրությանը:

Երբե՛ք:

Կամ գուցե նրան հետաքրքրում էին կակղամորթները, սկսած գլխոտանիներից մինչև մամռակերպերը, որոնց նա գերադասել էր, և որոնք նրա առաջ բացել էին իրենց բոլոր գաղտնիքները:

Դարձյալ ոչ:

Ուրեմն ճաճանջավորները, պոլիպները, փշամորթներն էին, որոնց ուսումնասիրության վրա երկար ժամանակ գիշերները նավթի ճրագ էր վառել:

Պետք է խոստովանել, որ ճաճանջավորներն էլ չէին գրավում կուզեն Բենեդիկտի ուշադրությունը:

Եվ քանի որ կենդանաբանությունից կարելի էր հիշել միայն հողավորներին, ինքնըստինքյան հասկանալի է, որ այդ բաժնի վրա է, որ կենտրոնացել էր կուլգեն Բենեդիկտի միակ մոլությունը: Այո, սակայն այստեղ ևս պետք է ճշտում մտցնել:

Հողավորների ճյուղը վեց դասի է բաժանվում՝ միջատները, բազմոտանիները, սարդակերպերը, խեցեմորթերը, թելտանիները և օդակավոր որդերը:

Կուլգեն Բենեդիկտը, գիտական լեզվով ասած, չէր կարող հողի որդը տարբերել բժշկական տզրուկից, տնային սարդը՝ կեղծ-կարիճից, ծովականջը՝ կրևետից (խեցգետնի մի տեսակը), հազարոտանին՝ օձասանրից:

Ո՞վ էր ուրեմն կուլգեն Բենեդիկտը:

Հասարակ միջատաբան, ուրիշ ոչինչ:

Կարող են մեզ առարկել, իհարկե, թե միջատաբանությունը բնագիտության մի ճյուղն է և ընդգրկում է բոլոր հողավորներին: Ընդհանուր առմամբ այդ ճիշտ է, սակայն սովորություն է հաստատվել միջատաբանությանն ավելի սահմանափակ իմաստ տալ: Այդ տերմինը կիրառվում է միայն այն գիտության մեջ, որն ուսումնասիրում է միջատներին, այսինքն՝ այն բոլոր հողավոր կենդանիներին, որոնց մարմինը օդակ-օդակ իրար միացած՝ բաժանվում է երեք որոշակի մասի՝ գլուխ, կուրծք և փոր, որոնք ունեն երեք զույգ ոտքեր և դրա համար ստացել են վեցոտանի անունը:

Եվ քանի որ կուլգեն Բենեդիկտը սահմանափակվել էր այդ դասի հողավորների ուսումնասիրությամբ, ուրեմն պարզապես միջատաբան էր:

Սակայն չպետք է խաբվել դրանից: Միջատների այդ դասը առնվազը տասը կարգ ունի.

Ջղաթևավորները՝ մորեխները, ծղրիդները և այլն:

Ցանցաթևավորները՝ մրջնառյուծները, շերեփագիները:

Թաղանթաթևավորները՝ մեղուները, պիճակները, մրջյունները:

Թեփաթևավորները՝ թիթեռները և այլն:

Կիսակարծրաթևավորները՝ ճպուռները, ուտիճները, լվերը և այլն:

Կարծրաթևավորները՝ մայիսյան բզեզը, ոսկեբեղը և այլն:

Երկթևանիները՝ մոծակները, մժեղները, ճանճերը:

Հովհարաթևավորները՝ ստիլոպները կամ հովհարաթևը:

Պարագիտները՝ տզերը և այլն:

Անթևները՝ խոնավասերներ և այլն:

Պետք է ասել, որ այս կարգերից մի քանիսը, ինչպես օրինակ,

կարծրաթևավորները հաշվում են երեսուն հազար տարատեսակ, իսկ

երկթևանիները՝ վաթսուն հազար տարատեսակ, այդպիսով՝ պետք է ընդունել, որ բավականաչափ աշխատանք կա միայնակ մի մարդու համար:

Կուլգեն Բենեդիկտի կյանքն ուրեմն ամբողջովին և բացառապես նվիրված էր միջատաբանությանը:

Այդ գիտությանը նա նվիրում էր իր ամբողջ ժամանակը՝ առանց բացառության, նույնիսկ քնի ժամերը, քանի որ երազում ևս շարունակ «վեցոտանիներ» էր տեսնում: Դժվար էր հաշվել, թե ինչքան գնդասեղ էր խրված բաճկոնի թևածալերի, օձիքի, գլխարկի ծալքերի մեջ: Երբ կուլգեն Բենեդիկտը վերադառնում էր որևէ գիտական էքսկուրսիայից, հատկապես նրա գլխարկը բնագիտության տուփ էր

ներկայացնում, որովհետև թե՛ ներսից և թե՛ դրսից լի էր գնդաստեղի վրա հազցված միջատներով:

Իսկ այժմ, լրացնելու համար այս ուրույն մարդու նկարագրությունը, ասենք, որ միջատաբանության նկատմամբ ունեցած իր մոլուքյան հետևանքով էր նա տեր և տիկին Ուելդոններին ուղեկցել դեպի Նոր Չելանդիա: Այնտեղ նրա հավաքածուն հարստացավ մի քանի հազվադեպ նմուշներով և հասկանալի է, որ նա շտապում էր վերադառնալ Սան Ֆրանցիսկո դասավորելու համար դրանք իր առանձնասենյակի դարակներում:

Քանի որ տիկին Ուելդոնը և նրա զավակը վերադառնում էին Ամերիկա «Պիլիգրիմ» առագաստանավակով, շատ բնական է, որ կուզեն Բենեդիկտը նրանց կրկնեանար այդ ուղևորության միջոցին:

Սակայն որևէ վտանգի դեպքում տիկին Ուելդոնը ամենից քիչ հույս կարող էր ունենալ կուզեն Բենեդիկտի օգնության վրա: Բարեբախտաբար, խնդիրը հեշտ կատարվելիք ծովային ուղևորության մասին էր, որը տեղի կունենար տարվա լավ եղանակին և այնպիսի նավով, որի նավապետը միանգամայն վստահելի մարդ էր:

Այն երեք օրերի ընթացքում, երբ «Պիլիգրիմը» մնաց նավահանգստում, տիկին Ուելդոնը շատ շտապ վերջացրեց բոլոր պատրաստությունները, որովհետև չէր ցանկանում ուշացնել առագաստանավի մեկնումը: Օքլենդի բնակարանում իրեն սպասարկող բնիկ ծառաներին ազատ արձակելով՝ հունվարի 22-ին նա առագաստանավ փոխադրվեց Ջեկ որդու, կուզեն Բենեդիկտի և պառավ նեգրուհի Նանի ուղեկցությամբ:

Կուզեն Բենեդիկտը հետը տանում էր միջատների իր ամբողջ հավաքածուն՝ տեղավորած հատուկ տուփի մեջ: Այդ հավաքածուում, ի միջի այլոց, կային կարծրաթևանիների մի քանի նմուշներ՝ բզեզ-մսակերներ, որոնց աչքերը տեղավորված են գլխի բարձր մասում, իսկ մինչ այդ կարծում էին, թե այդ բզեզը միայն Նոր Զալեդոնիային է հատուկ: Կուզեն Բենեդիկտին առաջարկել էին հավաքածուի համար վերցնել նաև «կատիպ» թունավոր սարդը (ինչպես նրան անվանում էին մաորիները /Մաորի — Նոր Չելանդիայի բնիկները: Ծ. Թ.:/), որի խայթոցը հաճախ մահացու է բնիկների համար: Սակայն սարդը իսկական միջատների կարգին չի պատկանում, նրա տեղը սարդակերպերի մեջ է, հետևապես, անարժեք էր կուզեն Բենեդիկտի համար: Այդ պատճառով նա հրաժարվեց այդ սարդից, և նրա հավաքածուի ամենագեղեցիկ նմուշը մնում էր նորգելանդական ստաֆիլին-բզեզը:

Ինչ խոսք, որ կուզեն Բենեդիկտը, խոշոր գումար մուծելով՝ ապահովագրել էր իր հավաքածուն, որը նրա համար շատ ավելի թանկ արժեր, քան թե «Պիլիգրիմի» ամբարում պահված ամբողջ ճարպն ու կետոսկրը:

Այն միջոցին, երբ տիկին Ուելդոնը և նրա ուղեկիցները բարձրացան առագաստանավի կամրջակը, նավապետ Հուլը մոտեցավ ուղևորուհուն և ասաց.

— Ինքնըստինքյան հասկանալի է, տիկին Ուելդոն, որ եթե դուք ուղևորվում եք «Պիլիգրիմով», ապա ձեր վրա եք վերցնում ամբողջ պատասխանատվությունը:

— Ինչո՞ւ եք անում այդ դիտողությունը, պարոն Հուլ, — հարցրեց տիկին Ուելդոնը:

— Որովհետև այդ մասին ես ոչ մի հրահանգ չեմ ստացել ձեր ամուսնուց, և, ամեն ինչ հաշվի առնելով, առագաստանավը չի կարող ձեզ ապահովել այնպիսի լավ

ուղևորություն, ինչպիսին կլիներ մարդատար շոգենավերով, որոնք հատկապես ուղևորներ փոխադրելու են հատկացված:

– Ի՞նչ եք կարծում, պարոն Հուլ, – պատասխանեց տիկին Ուելդոնը, – եթե ամուսինս այստեղ լիներ, կվարանե՞ր միթե ճամփորդել «Պիլիգրիմով» իր կնոջ և երեխայի հետ միասին:

– Ոչ, տիկին Ուելդոն, չէր վարանի, – ասաց նավապետ Հուլը, – իհարկե ոչ, ինչպես նաև ես ինքս չէի վարանի: «Պիլիգրիմը», վերջիվերջո, լավ նավ է, թեև այս տարի վատ վերջացրեց կետորսությունը, և նրան վստահում եմ այնպես, ինչպես իր նավին կարող է վստահել երկար տարիներ նրան ղեկավարող ծովայինը: Ես այդ հարցը տվեցի ձեզ, տիկին Ուելդոն, պատասխանատվությունից խուսափելու, ինչպես նաև մի անգամ ևս կրկնելու համար, որ այստեղ չեք գտնի այն բոլոր հարմարությունները, որոնց դուք սովոր եք:

– Եթե խոսքը հարմարությունների մասին է միայն, պարոն Հուլ, – պատասխանեց տիկին Ուելդոնը, – ապա դա ինձ չի կասեցնի: Ես այն դժվարահաճ ուղևորուհիներից չեմ, որոնք անվերջ գանգատվում են խցիկի փոքրության կամ վատ ճաշի համար:

Ապա, մի րոպե նայելով փոքրիկ Ջեկին, որի ձեռքից բռնել էր, տիկին Ուելդոնը ավելացրեց.

– Կարող եմք մեկնել, պարոն Հուլ:

Վերջինս հրամայեց անմիջապես խարիսխը բարձրացնել, առագաստները պարզվեցին, և «Պիլիգրիմը», ամենակարճ գծով դուրս գալով ծոցից՝ ուղղվեց դեպի ամերիկյան ափը:

Սակայն մեկնելուց երեք օր հետո արևելյան ուժեղ քամուց տարվելով՝ առագաստանավը ստիպված եղավ փոխել ուղղությունը, քամուն դիմադրելու համար: Այդպիսով, փետրվարի 2-ին նավապետ Հուլը հակառակ իր ցանկության, դեռևս գտնվում էր ավելի բարձր լայնության վրա: Կարելի էր մտածել, թե առագաստանավը մտադրվում էր ավելի շուտ շրջանցել Հորն հրվանդանը, քան թե ամենակարճ ճանապարհով մոտենալ նոր ցամաքամասին:

II. Դիկ Սենդը

Ծովը հանդարտ էր, չհաշված ուշացումները, նավարկությունը կատարվում էր տանելի պայմաններում:

Տիկին Ուելդոնը տեղավորվել էր «Պիլիգրիմի» վրա հնարավոր եղածի չափ հարմար պայմաններում: Քանի որ առագաստանավի վրա, բացի նավապետ Հուլի խցիկից, ավելի հարմարը գոյություն չուներ, ուստի տիկին Ուելդոնը բավարարվեց նրանով, որ գտնվում էր նավի հետնամասում և ծովայինի համեստ մի խցիկ էր: Այնուամենայնիվ, հարկ եղավ, որ նավապետը երկար պնդի, որպեսզի տիկինն ընդունի այդ խցիկը: Այդ փոքր սենյակում տեղավորվեցին տիկին Ուելդոնն իր երեխայի և պառավ Նանի հետ: Այդտեղ էլ նա ճաշում էր նավապետի և կուզեն Բենեդիկտի հետ, որի համար մի տեսակ կից սենյակ էին ստեղծել:

Իսկ «Պիլիգրիմի» նավապետը փոխադրվեց այն խցիկը, որը հատկացված էր նրա օգնականին, երբ այդպիսին լինում էր առագաստանավի վրա: Սակայն այդ

միջոցին, խնայողության համար, առագաստանալը նավարկում էր առանց նավապետի օգնականի:

«Պիլիգրիմի» անձնակազմը բաղկացած էր փորձված և լավ ծովայիններից, որոնք մտածողության ու սովորույթների ընդհանրությամբ խիստ կապված էին, իրար: Արդեն չորրորդ տարին էր, որ նրանք կետորսություն էին անում միասին: Բոլորն էլ, լինելով Արևմտյան Ամերիկայի Կալիֆոռնիա նահանգի բնիկներ՝ վաղուց ճանաչում էին միմյանց:

Այս կորովի նավաստիները մեծ պատրաստակամություն էին ցուցաբերում դեպի իրենց նավատիրոջ կինը՝ տիկին Ուելդոնը, և անսահման անձնվիրություն տաժում դեպի նավատերը: Պետք է ասել, որ խիստ շահագրգռված լինելով նավի շահույթներով՝ մինչ այդ նրանք նավարկել էին մեծ օգուտով: Եթե իրենց փոքրաթվության պատճառով նրանց չարչարանքն ավելի ծանր էր լինում, ապա ամեն մի աշխատանք սեզոնի վերջում նրանց բաժին ընկած շահույթը ավելի զգալի էր դարձնում: Այս անգամ իսկապես որ շահույթը գրեթե չնչին էր լինելու, ուստի և նրանք արդարացիորեն զայրացել էին նոր Չելանդիայի սրիկաների դեմ:

Առագաստանալի վրա միայն մի մարդ կար, որը բնիկ ամերիկացի չէր: Ծագումով պորտուգալացի Նեգորոն էր դա, որը սահուն անգլերեն էր խոսում և խոհարարի համեստ պաշտոն էր կատարում առագաստանալում: Երբ Օքլենդում «Պիլիգրիմի» նախկին խոհարարը փախավ, Նեգորոն, որ այդ միջոցին անգործ էր, իր ծառայությունն առաջարկեց: Արտաքինով մռայլ, անհաղորդ մարդ էր նա, միշտ առանձնացած, սակայն իր գործը բավարար էր կատարում: Նրան վարձելով՝ թվում էր, թե նավապետ Հուլը հաջող ընտրություն էր արել, և առագաստանալ տեղափոխվելուց հետո խոհարարը ոչ մի նկատողություն չէր ստացել:

Այնուամենայնիվ, նավապետ Հուլը ցավում էր, որ ժամանակ չէր ունեցել բավականաչափ տեղեկություն ստանալու նրա անցյալի մասին: Նրա դեմքը, ավելի շուտ նրա արտահայտությունը, այնքան էլ դուրեկան չէր, քանի որ այդ փոքր ու մտերիմ շրջանակում մի անձանոթի պետք է ընդուներ, ապա անհրաժեշտ էր նրա անցյալ վարքից ոչինչ անտես չառնել:

Նեգորոն մոտավորապես քառասուն տարեկան կլիներ: Նիհար էր, ջլուտ, միջահասակ, սևահեր և թուփ դեմքով, ուժեղ մարդու տպավորություն էր թողնում: Ստացե՞լ էր արդյոք որևէ կրթություն: Այո, եթե դատենք այն որոշ կարծիքներից, որ նա արտահայտում էր երբեմն: Պետք է ասել, որ նա երբեք իր անցյալի և ընտանիքի մասին չէր խոսում: Թե որտեղի՞ց էր գալիս, որտե՞ղ էր ապրել, ոչ ոք չէր կարող գուշակել: Ոչ ոքի հայտնի չէր, թե ինչ կլիներ նա ապագայում: Նա այնքան էր միայն հայտնել, որ մտադիր է նավից դուրս գալ Վալպարեզոյում:

Անկասկած, բացառիկ մարդ էր: Համենայն դեպս, ըստ երևույթին, ծովային չէր եղել: Թվում էր նույնիսկ, որ ծովային գործերին ծանոթ չէր, ինչպես պետք է լիներ կյանքի մի մասը ծովի վրա անցկացրած նավի խոհարարը: Սակայն ի տարբերություն ծովով չճամփորդող մարդկանց, նա երբեք ծովախտով չէր տառապում, իսկ դա որոշ առավելություն էր նավի խոհարարի համար:

Մի խոսքով, նա քիչ էր երևում նավի վրա: Ցերեկը փակված մնում էր իր նեղ խոհանոցում, վառարանի առաջ, որը գրավում էր խոհանոցի մեծ մասը: Գիշերը, հանգնելով վառարանը, Նեգորոն քաշվում էր իրեն հատկացված խցիկը՝ նավի բնակելի մասում, և անմիջապես պառկում էր ու քնում:

Մենք արդեն ասել ենք, որ «Պիլիգրիմի» անձնակազմը բաղկացած էր հինգ նավաստիներից և մեկ փոքրավորից:

Փոքրավորը՝ այգ տասնհինգ տարեկան պատանին, անհայտ ծնողների գավակ էր: Ծնվելու օրից ծնողները լքել էին նրան, ուրիշները վերցրել էին և հանձնել որբանոց, որտեղ և մեծացել էր նա:

Դիկ Սենդը, այդպես էր նրա անունը, ըստ երևույթին ծնվել էր Նյու-Յորքի նահանգում, գուցե և այդ նահանգի մայրաքաղաքում:

Եթե Դիկ անունը (Ռիչարդ անվան փոքրացնող ձևը) տվել էին ընկեցիկ մանկան, այդ նրա համար էր, որ այդ անունը պատկանում էր այն գթասիրտ անցորդին, որը նրան գտել էր ծնվելուց երկու կամ երեք ժամ հետո: Ինչ վերաբերում է Սենդ /Սենդ – անգլերեն ավագ է նշանակում: / ազգանունին, ապա այն տրվել էր նրան իբրև հիշողություն այն վայրի, որտեղ գտնվել էր Դիկը, Սենդի-Հուկ փոքր հրվանդանում, Նյու Յորքի նավահանգստի Հուդզոնի գետաբերանում:

Դիկ Սենդը երբ հասունանար, միջահասակից ավելի բարձր չէր լինի, սակայն ամրակազմ էր: Ոչ մի կասկած չկար, որ պատանին անգլոսաքսոնական ծագում ուներ: Թեև նա թուխ էր, սակայն կապույտ էին աչքերը, որոնց ոսպնյակը փայլում էր անգուսպ եռանդով: Ծովայինի արհեստը նրան արդեն բավականաչափ պատրաստել էր կյանքի պայքարի համար: Նրա խելոք դիմագծերը եռանդ էին արտահայտում: Դա ոչ միայն խիզախ, այլ նաև ձեռներեց մարդու արտահայտությունն էր: Հաճախ հիշում են Վերգիլիոսի մի անկատար ոտանավորի հետևյալ երեք բառերը.

Audaces fortuna juvat...
Խիզախներին է ժպտում բախտը...

Սակայն այդ բառերը սխալ են վերհիշում: Բանաստեղծը ասել է.

Aedentes fortuna juvat...
Համարձակներին է ժպտում բախտը...

Համարձակ և ո՛չ թե խիզախ մարդկանց է գրեթե միշտ ժպտում բախտը: Խիզախ մարդը կարող է անխոհեմ լինել: Համարձակ մարդը նախ մտածում է, հետո գործում: Այստեղ է տարբերությունը:

Դիկ Սենդը համարձակ էր: Տասնհինգ տարեկան հասակում նա արդեն կարողանում էր որոշել իր անելիքը և մտածված կերպով հասցնել վախճանին: Նրա կայտառ և միաժամանակ լուրջ դեմքը ուշադրություն էր գրավում: Նա չէր շռայլում իր խոսքերն ու շարժումները, ինչպես անում են սովորաբար նրա տարիքի տղաները: Փոքր հասակից, երբ երեխաները քիչ են հետաքրքրվում կյանքի խնդիրներով, նա գիտակցել էր իր վիճակը և խոստացել իրեն՝ «մարդ դառնալ» սեփական ուժերով:

Եվ նա կազմակերպվել էր, գրեթե հասունացած մարդ դարձել այն տարիքում, երբ ուրիշները դեռևս երեխա են:

Լինելով շատ ճարպիկ, դյուրաշարժ ու ճկուն՝ Դիկ Սենդը այն առանձնաշնորհյալ եակներից էր, որոնց մասին կարելի է ասել, թե ծնվել են երկու ձախ ոտքով և երկու աջ ձեռքով: Նրանց ձեռքից ամեն ինչ գալիս է, նրանք ամեն ինչին հարմարվում են:

Հանրային գթասրտությունը, ինչպես ասացինք, խնամել և դաստիարակել էր փոքրիկ որբին: Սկզբում նրան տեղավորել էին այն մանկատներից մեկում, ուր միշտ տեղ կար փոքրիկ լքյալների համար: Այնուհետև չորս տարեկան հասակում

Դիկը սկսեց սովորել կարդալ-գրել և հաշվել Նյու Յորքի նահանգի դպրոցներից մեկում:

Ութ տարեկան հասակում Դիկ Սենդը, բնականից հակում ունենալով դեպի ծովային կյանքը, սկսեց աշխատել որպես փոքրավոր հարավային ծովերում նավարկող մի փոխադրանավի վրա: Այնտեղ նա սովորում էր նավաստու գործը, որը պետք է սովորել միայն փոքր հասակից: Հետզհետե նա մարզվեց նավի ղեկավարների առաջնորդությամբ, որոնք հետաքրքրվում էին այդ փոքրիկ տղայով: Այդպիսով, նա աստիճանաբար դարձավ նորընծա նավաստի՝ հետագայում անշուշտ ավելի լավ վիճակի հասնելու հույսով: Այն տղան, որն սկզբից հասկանում է, թե աշխատանքը կյանքի օրենքն է, որ հացը կարելի է ձեռք բերել ճակատի քրտինքով. այդպիսի տղան հավանորեն մեծ հաջողություններ կունենա, որոնց կհասնի մի օր՝ կամքի և ուժի շնորհիվ:

Նավապետ Հուլի ուշադրությունը նա գրավեց այն միջոցին, երբ պատանին որպես փոքրավոր աշխատում էր առևտրական մի նավի վրա: Այդ պատվական մարդը անմիջապես բարեկամացավ ընդունակ պատանու հետ և հետո նրան ծանոթացրեց նավատեր Ջեյմս Ուելդոնին: Վերջինս մեծ հետաքրքրություն ցույց տվեց դեպի այդ որբը, նրա կրթությունը լրացրեց Սան Ֆրանցիսկոյում:

Ուսման ընթացքում Դիկ Սենդը առանձնապես հետաքրքրվում էր աշխարհագրությամբ և ճամփորդություններով՝ սպասելով, որ հասնի այն տարիքը, երբ սովորեցնում են նավարկության վերաբերող մաթեմատիկան: Այնուհետև, ուսման տեսական մասին նա չմոռացավ ավելացնել գործնականը: Վերջացնելով ուսումը, նա, որպես նորընծա նավաստի, առաջին անգամ նավարկելու գնաց «Պիլիգրիմի» վրա: Լավ ծովայինը պետք է ծանոթ լինի մեծ որսորդությանը /Այսինքն՝ կետորսություն հեռու ծովում, և ոչ թե ավերի մոտ արվող ձկնորսություն:/, ինչպես նաև հեռավոր նավարկությանը: Այդպիսով ձեռք է բերվում մեծ փորձառություն ծովայինի մասնագիտության բոլոր տեսակի անակնկալների համար: Ընդամենը Դիկ Սենդը մեկնում էր իր բարերար Ջեյմս Ուելդոնին պատկանող մի նավով, որի նավապետն էր նրա պաշտպան նավապետ Հուլը: Այդպիսով պատանին գտնվում էր չափազանց լավ պայմաններում:

Ավելորդ կլինի ասել, թե պատանին ինչպիսի անկեղծությամբ էր նվիրված Ուելդոնի ընտանիքին, որին նա այնքան շատ էր պարտական: Ավելի լավ է, որ դեպքերն իրենք պատմեն: Ուրեմն հեշտ է պատկերացնել, թե ինչքան ուրախացավ պատանին երբ իմացավ, որ տիկին Ուելդոնը մեկնում էր «Պիլիգրիմով»:

Տիկին Ուելդոնը մի քանի տարի մայրություն էր արել նրան, իսկ փոքրիկ Ջեկին նա սիրում էր որպես իր հարազատ եղբորը, միաժամանակ նկատի ունենալով իր դիրքը հարուստ նավատիրոջ տղայի հանդեպ: Սակայն նրա խնամակալները լավ գիտեին, որ իրենց ցանած լավորակ սերմը բարեբեր հողի մեջ էր ընկել: Արյան շրջանառության ուժեղ թափի տակ որբ տղայի սիրտը ուռչում էր երախտագիտությունից, և եթե մի օր կարիք լիներ իր կյանքը զոհել նրանց համար, որոնք իրեն սովորեցրել էին ուսում առնել, պատանին չէր տատանվի անելու այդ զոհաբերությունը: Մի խոսքով, տասնհինգ տարեկան հասակում Դիկ Սենդը գործում և մտածում էր երեսուն տարեկան մարդու նման:

Տիկին Ուելդոնը լավ գիտեր, իր պաշտպանյալի արժանիքները և առանց բնավ անհանգստանալու նրան կարող էր վստահել փոքրիկ Ջեկին: Դիկ Սենդը սիրում էր այդ երեխային, որը զգալով «ավագ եղբոր» սերը, հարում էր նրան: Ծովագնացության երկար ժամերի ընթացքում, երբ եղանակը լավ էր, և առազաստանավոր բոլոր առազաստները պարզած առաջանում էր առանց որևէ

ուղղորդում պահանջելու, Դիկը և Ջեկը գրեթե միշտ միասին էին լինում: Պատանի նավաստին երեխային ցույց էր տալիս ծովային արհեստին վերաբերող այն բոլոր կողմերը, որոնք հետաքրքիր կարող էին լինել փոքրիկին: Տիկին Ուելդոնը առանց երկյուղի նայում էր, թե ինչպես Ջեկը Դիկ Սենդի ուղեկցությամբ նետվում էր ճոպանների վրա, մագլցում կայմը և ապա սլաքի նման ցած էր սահում պարանի երկայնքով: Դիկ Սենդը շարունակ երեխայի մոտ էր կանգնում պատրաստ ամեն րոպե օգնության հասնելու, եթե հնգամյա Ջեկի ձեռքերը թուլանային այդ մարզանքի միջոցին: Այդ ամենը նպաստավոր էր փոքրիկ Ջեկին, որը հիվանդությունից հետո մի քիչ դժգունել էր, սակայն շնորհիվ ամենօրյա մարզանքի և ծովի կազդուրիչ քամու, նրա դեմքին վերադառնում էր առողջ գույնը:

Այդպես էր կյանքը առազաստանավի վրա: Ծովագնացությունը տեղի էր ունենում այդպիսի պայմաններում, և եթե չլիներ աննպաստ եղանակը, «Պիլիգրիմը» ո՛չ ուղևորները, ո՛չ էլ նավաստիները դժգոհելու որևէ պատճառ չէին ունենա:

Սակայն արևելյան քամու հարատևությունը անհանգստացնում էր նավապետ Հուկին. նրան չէր հաջողվում առազաստանավը լավ ճանապարհի վրա դնել: Նա ավելի էր անհանգստանում մանավանդ այն բանից, որ հետագայում, Այծեղջեր արևադարձին մոտենալիս, առազաստանավը կարող էր ընկնել անհողմության մեջ, չհաշված հասարակածային հոսանքը, որը նրան անխուսափելիորեն դեպի արևմուտք կտաներ: Նավապետի մտատանջությունը հատկապես տիկին Ուելդոնի ուշացման համար էր թեև դրա պատասխանատուն ինքը չէր: Հետևապես, եթե ճանապարհի վրա պատահեր դեպի Ամերիկա գնացող որևէ անդրօվկիանոսյան նավ, նա անպատճառ խորհուրդ կտար իր ուղևորուհուն՝ տեղափոխվել այդ նավը: Դժբախտաբար «Պիլիգրիմը» գտնվում էր այնպիսի բարձր լայնության տակ, որ դժվար էր հուսալ, թե կարող էին հանդիպել դեպի Պանամա գնացող որևէ շոգենավի, մանավանդ որ այդ ժամանակ հաղորդակցությունը Ավստրալիայի և Նոր Աշխարհի միջև խաղաղ օվկիանոսով այնքան բանուկ չէր, ինչպես եղավ հետագայում:

Ուրեմն պետք էր թողնել, որ բանն ընթանա աստծու կամքով, և թվում էր, թե ոչ մի դեպք չէր խանգարի այս միապաղաղ ուղևորությանը, երբ փետրվարի 2-ին առաջին դեպքը պատահեց այս պատմության սկզբին նշված լայնության և երկարության աստիճանների տակ:

Դիկ Սենդը և Ջեկը առավոտյան ժամը իննի մոտ պայծառ եղանակին բարձրացել էին հետնակայմի առազաստակալի վրա: Այդտեղից նրանք կարողանում էին դիտել ամբողջ առազաստանավը և օվկիանոսի մի մասը՝ բավական մեծ շերտով: Նրանց հետևում հորիզոնի գիծը միայն մեծ կայմն էր կտրում, իր վրա հրելով շեղ մեծ առազաստը, որը ծածկում էր ծովի և երկնքի մի մասը: Առաջամասում նրանք տեսնում էին ալիքների վրա ձգվող թեք կայմը՝ իր երեք եռանկյունաձև առազաստներով, որոնք խիստ մոտիկ լինելով, նմանվում էին երեք անհավասար մեծ թևերի: Ցածում երևում էր առաջակայմի շրջանաձև առազաստը, իսկ նրա վերևում՝ երկու փոքր առազաստները, որոնց եզրալարերը դողդողում էին քամուց: Այդպիսով առազաստանավը թեքվել էր և սլանում էր քամու ամբողջ ուժով:

Դիկ Սենդը բացատրում էր Ջեկին, թե «Պիլիգրիմը», լինելով լավ բեռնավորված և բոլոր մասերում հավասարակշռված՝ չէր կարող շուռ գալ, թեև բավական ուժեղ թեքվում էր դեպի աջ եզրը: Այդ միջոցին փոքր տղան ընդհատեց Դիկին՝ բացականչելով.

— Տեսեք, ի՞նչ է երևում այնտեղ:

– Որևէ բան ես տեսնում, Ձե՛կ,– հարցրեց Դիկ Սենդը՝ կանգնելով կայմի ձողերի վրա:

– Այո, ահա այնտեղ,– պատասխանեց փոքրիկ Ձեկը՝ մատով ցույց տալով ծովի մի կետը, որ ազատ էր մնում երկու առազաստակալների միջև:

Դիկ Սենդը ուշադրությամբ նայեց տղայի ցույց տված կողմը և անմիջապես ուժեղ ձայնով կանչեց.

– Աղետյալ մի նավի իրան՝ քամու ուղղությամբ, նավաքթի կողմում:

III. Աղետի ենթարկված նավը

Լսելով Դիկ Սենդի բացականչությունը՝ նավի ամբողջ անձնակազմը ոտքի կանգնեց: Հերթապահությունից ազատ նավաստիներն իսկույն տախտակամած բարձրացան: Նավապետ Հուլը խցիկից դուրս գալով գնաց դեպի նավախելը:

Տիկին Ուելդոնը, Նանը, նույնիսկ անտարբեր կուզեն Բենեդիկտը հենվեցին նավեզրին դիտելու համար պատանու ցույց տված աղետյալ նավը:

Միայն Նեգորոն էր, որ դուրս չեկավ այն խցիկից, որը որպես խոհանոց էր ծառայում, և ինչպես միշտ, նա միակն էր, որին չհետաքրքրեց աղետյալ նավի հանդիպումը: Բոլորը ուշադրությամբ դիտում էին լողացող մարմինը, որը ալիքների վրա տատանվում էր «Պիլիգրիմից» երեք մղոն հեռավորության վրա:

– Ի՛նչ կարող է լինել,– ասաց նավաստիներից մեկը:

– Որևէ լքված լաստ,– պատասխանեց մի ուրիշը:

– Գուցե լաստի վրա դժբախտ նավաբեկյալներ՞ր կան,– ասաց տիկին Ուելդոնը:

– Շուտով կիմանանք,– պատասխանեց նավապետ Հուլը:– Սակայն, ավելի շուտ, կողքի շուռ եկած նավ է, քան թե լաստ...

– Կարող պատահել, որ ծովային կենդանի լինի, որևէ հսկա կաթնասուն,– ասաց կուզեն Բենեդիկտը:

– Չեմ կարծում,– պատասխանեց Դիկը:

– Քո կարծիքով ի՞նչ է դա, Դիկ:– հարցրեց տիկին Ուելդոնը:

– Շուռ եկած նավի իրան, ինչպես ասաց նավապետը, տիկին՝ Ուելդոն: Ինձ թվում է նույնիսկ, որ տեսնում եմ, թե ինչպես արևից փայլում է նրա պղնձապատված ողնափայտը:

– Այո... ճիշտ է...,– պատասխանեց նավապետ Հուլը:

Ապա, խոսքն ուղղելով դեկակալին՝ ասաց.

– Հետևիր քամու ուղղությանը, Բոլթոն, քառորդ թեքիր, որ մոտենա աղետյալ նավի իրանին:

– Լսում եմ, նավապետ, – պատասխանեց ղեկակալը:

– Իսկ ես պնդում եմ իմ ասածը, – կրկնեց կուզեն Բենեդիկտը, – ոչ մի կասկած չկա, որ կենդանի է:

– Ուրեմն պղնձե կետածուկ է, – պատասխանեց նավապետ Հուլը, – քանի որ շատ որոշ երևում է, թե ինչպես է փայլում արևի տակ:

– Համենայն դեպս, կուզեն Բենեդիկտ, – ավելացրեց տիկին Ուելդոնը, – պետք է ընդունենք, որ այդ կետածուկը մեռած է, քանի որ պարզ երևում է, որ ոչ մի շարժում չի անում:

– Ի՞նչ կա որ, զարմուհի Ուելդոն, – պատասխանեց կուզեն Բենեդիկտը՝ համառելով, – առաջին անգամը չէ, որ պատահում է ծովի երեսին քնած կետածուկ:

– Ճիշտ է, – պատասխանեց նավապետ Հուլը, – սակայն այսօր մեր առաջ ոչ թե կետածուկ է, այլ նավ:

– Կտեսնենք, – պատասխանեց կուզեն Բենեդիկտը, որը հյուսիսային և հարավային բևեռի ծովերի բոլոր կաթնասուններին կտար մեկ հատ հազվագյուտ բզեզ ունենալու համար:

– Ղեկը պահիր, Բոլթոն, ղեկը պահիր, – նորից բացականչեց նավապետ Հուլը, – և մի՛ մոտենա նավի իրանին, պետք է մեկ պարանաչափի /Մոտ 200 հեռու մետր:/ մնալ նրանից: Եթե մենք ոչ մի վնաս չենք պատճառի այդ պատյանին, ապա նա կարող է մեզ վնասել. պետք է զգուշանալ, որպեսզի «Պիլիգրիմը» չջարդի իր կողերը նրան բախվելով: Մի քիչ շեղվի՛ր, Բոլթոն:

«Պիլիգրիմը», որ ուղիղ դեպի նավի պատյանն էր գնում, ուղղությունը փոխեց ղեկի թեթև շեղումով:

Առագաստանավը շուռ եկած պատյանից դեռևս մեկ մղոն հեռու էր գտնվում: Նավաստիները մեծ շահագրգռությամբ դիտում էին: Գուցե այնտեղ թանկագին բեռ կար, որը կարելի էր վերցնել «Պիլիգրիմի» վրա: Հայտնի է, որ այդպիսի դեպքերում դուրս բերված ապրանքի արժեքի մեկ երրորդ մասը պատկանում է ազատողներին, և եթե այս դեպքում նավի ապրանքը չէր փչացել, ապա առագաստանավի անձնակազմը լավ շահ կունենար և կարող էր վարձատրվել անհաջող կետորսության փոխարեն:

Քառորդ ժամ հետո աղետյալ նավը «Պիլիգրիմից» միայն կես մղոն էր հեռու:

Իսկապես դա մի նավ էր, որ կողքի էր պառկած: Տախտակամածը այնպես ուղղահայաց էր կանգնած, որ գրեթե անկարելի էր կանգնել նրա վրա: Կայմերից ոչինչ չէր մնացել, միայն մի քանի պարանի և շղթաների մնացորդներ էին կախ ընկած: Նավի իրանին մի լայն խոռոչ էր բացված, որի մեջ խրվել էին ամրակապերն ու փայտյա մասերը:

– Աղետը առաջացել է բախումից, – բացականչեց Դիկ Սենդը:

– Անտարակույս, – պատասխանեց նավապետ Հուլը, – և հրաշք է, որ անմիջապես չի ընկղմվել:

– Եթե բախում է տեղի ունեցել, – ասաց տիկին Ուելդոնը, – ապա պետք է հուսալ, որ բախող նավը փրկած կլինի աղետոյալ նավի ամբողջ անձնակազմին:

– Պետք է այդպես հուսալ, տիկին Ուելդոն, – պատասխանեց նավապետ Հուլը, – եթե, իհարկե, այդ անձնակազմը չի փորձել ազատվել իր սեփական մակույկներով բախումից հետո, այն դեպքում, երբ բախող նավը շարունակել է իր ճանապարհը, ինչ որ երբեմն պատահում է դժբախտաբար:

– Չի կարող պատահել. դա անչափ դաժան արարք կլիներ:

– Այո, տիկին Ուելդոն, դժբախտաբար, այդպիսի դեպքեր քիչ չեն պատահում: Ինչ վերաբերում է այս նավի անձնակազմին, ես կարծում եմ, որ նրանց չեն փրկել, որովհետև ոչ մի մակույկ չեմ տեսնում, և եթե այդ մարդկանց չեն ազատել, ուրեմն պետք է կարծել, որ նրանք փորձել են ցամաք դուրս գալ: Սակայն այստեղից միջին ամերիկյան ցամաքամասը կամ Օվկիանիայի կղզիները այնքան հեռու են, որ դժվար թե նրանց հաջողված լինի այնտեղ հասնել:

– Մի՞թե երբևիցե չի հաջողվի մեզ իմանալ այս աղետի գաղտնիքը, – ասաց տիկին Ուելդոնը: – Գուցե և անձնակազմից որևէ մեկը մնացել է:

– Հավանական չէ, տիկին Ուելդոն, – պատասխանեց նավապետ Հուլը: – Եթե այդպես լիներ, նրանք մեզ տեսած ու որևէ նշան արած կլինեին: Բայց մենք հիմա կիմանանք այդ: Մի քիչ թեքվի՛ր, Բուլթոն, թեքվի՛ր, – բացականչեց նավապետ Հուլը՝ ձեռքով ցույց տալով ուղղությունը:

«Պիլիգրիմը» այժմ ընդամենը երեք պարանաչափ էր հեռու աղետոյալ նավից, և արդեն ոչ մի կասկած չկար, որ նրա անձնակազմը ամբողջովին հեռացել էր այդ պատյանից:

Սակայն այդ միջոցին Դիկ Սենդը ձեռքի շարժումով բուլորին առաջարկեց լուռ մնալ:

– Լսեցե՛ք, լսեցե՛ք, – ասաց նա:

Բուլորը լսողությունը լարեցին:

– Ինչ-որ հաչոց եմ լսում, – բացականչեց Դիկ Սենդը:

Արդարև, խուլ հաչոց էր լսվում աղետոյալ նավի խորքից: Կասկած չկար, որ այնտեղ կենդանի մնացած շուն կար, գուցե հերմետիկորեն փակված խցիկներից մեկում: Սակայն հնարավոր չէր նրան տեսնել, քանի որ շուն եկած նավի տախտակամածը տեսանելի չէր:

– Եթե նույնիսկ միայն շունն է ողջ մնացել, նավապետ Հուլ, – ասաց տիկին Ուելդոնը, – պետք է փրկել նրան:

– Այո... այո... – բացականչեց փոքրիկ Ջեկը... – մենք կփրկենք նրան... ես նրան ուտելիք կտամ... ևա մեզ կսիրի... մայրիկ, ես իսկույն կվազեմ մի կտոր շաքար կբերեմ նրա համար...

– Սպասի՛ր, տղա՛ս, – պատասխանեց տիկին Ուելդոնը ժպտալով: – Իմ կարծիքով խեղճ կենդանին սատկում է քաղցից և ևա ավելի լավ կհամարի լակ ուտել, քան թե մի կտոր շաքար:

– Այդ դեպքում իմ սոււայը տուր նրան, – բացականչեց փոքրիկ Ջեկը, – ես առանց սոււայի կարող եմ մնալ:

Այդ միջոցին շան հաչոցը ավելի պարզ էր լսվում: Այժմ տարածությունը երկու նավերի մեջ հազիվ երեսուն ոտնաչափ կլիներ: Գրեթե նույն բոլորի մի մեծ շուն երևաց նավի կողին և, կառչելով նրան, ավելի հուսահատ սկսեց հաչել:

– Հովի՛կ, – ասաց նավապետ Հուլը՝ խոսքն ավագ նավաստուն ուղղելով, – ընթացքը դանդաղեցրու և փոքր մակույկը ծովն իջեցրու:

– Մի քիչ էլ համբերիր, շնիկ, – կանչեց փոքրիկ Ջեկը կենդանուն, որը կարծես նրան պատասխանեց խուլ հաչոցով:

Նավաստիները անմիջապես «Պիլիգրիմի» առագաստները դասավորեցին այնպես, որ նավը գրեթե անշարժ մնաց խորտակվածից մոտավորապես հարյուր մետր հեռավորության վրա:

Մակույկը իջեցրին, և նավապետ Հուլը, Դիկ Սենդը և երկու նավաստի տեղ գրավեցին այնտեղ:

Շունը շարունակում էր հաչել: Նա աշխատում էր կառչած մնալ կողերին, բայց ամեն բոլոր ընկնում էր տախտակամածի վրա: Թվում էր, թե մոտեցող նավակի վրա չէ, որ հաչում էր շունը: Գուցե ազդարարում էր նավի վրա մնացող նավաստիներին կամ ուղևորներին:

«Զլինի՞ նավի վրա աղետյալներ կան», – մտածեց տիկին Ուելդոնը:

Թիակների մի քանի հարված ևս, և «Պիլիգրիմի» մակույկը կհասներ շուռ եկած նավի իրանին:

Բայց հանկարծ շան շարժումները փոխվեցին: Նրա առաջին հաչոցներին, որոնցով նա ազատարարներին կոչ էր անում առաջանալ, հաջորդեցին կատաղի հաչոցներ: Ինչ-որ չափազանց բարկացած էր թվում այդ տարօրինակ կենդանին:

– Ի՞նչ է պատահել այդ շանը, – ասաց նավապետ Հուլը այն միջոցին, երբ մակույկը շրջանցում էր շուռ եկած նավի հետևամասը, որպեսզի կարողանար մոտենալ ջրի մեջ սուզված տախտակամածին:

Ո՛չ նավապետ Հուլը, ո՛չ նույնիսկ «Պիլիգրիմի» վրա մնացողները չէին կարող նկատել, թե շան զայրույթը արտահայտվեց ճիշտ այն բոլորին, երբ Նեգորոն, խոհանոցից դուրս գալով, ուղղվեց դեպի նավաքիթը:

Մի՞թե շունը ճանաչում էր և այժմ վերհիշեց նավի խոհարարին: Անհավանական էր այդ: Այսպես թե այնպես, մի բոլոր շանը նայելուց հետո, ոչ մի զարմանք չարտահայտելով, Նեգորոն, որի հոնքերը համենայն դեպս մի բոլոր խոժոռվեցին, վերադարձավ իր տեղը:

Այդ միջոցին մակույկը շրջանցել էր նավի իրանի հետևամասը, որի վրա գրված էր «Վալդեկ» անունը:

Միայն «Վալդեկ» և ուրիշ ոչինչ. չկար այն նավահանգստի անունը, որտեղ նավը պետք է արձանագրված լիներ: Սակայն նավի ձևից, մի քանի այնպիսի մանրամասնություններից, որոնք ծովայինի ուշադրությունը կգրավեին առաջին իսկ հայացքից, նավապետ Հուլը հասկացել էր, որ այդ նավը ամերիկյան էր:

անունն էլ հաստատում էր այդ: Իսկ այժմ հինգ հարյուր տոննանոց այդ մեծ առագաստանավից միայն պատյանն էր մնացել:

«Վալդեկի» առաջամասում բացված լայն խոռոչը ցույց էր տալիս, թե որտեղ էր առաջացել բախումը: Նավի իրանի շուռ գալու հետևանքով այդ խոռոչը հինգ կամ վեց ոտնաչափ ջրից դուրս էր մնացել, ահա թե ինչու առագաստանավը դեռևս չէր ընկղմվել:

Տախտակամածի վրա, որն այժմ նավապետ Հուլը պարզ տեսնում էր, ոչ ոք չկար:

Շունը, հեռանալով նավակողից, սողալով հասել էր մինչև տախտակամածի կենտրոնական անցքը, որը բաց էր մնացել, և այնտեղ հաչում էր մե՛կ դեպի ներս, մե՛կ դեպի դուրս:

— Պարզ է, որ շունը մենակ չէ այնտեղ, — ասաց Դիկ Սենդը:

— Այդպես է երևում, — պատասխանեց նավապետ Հուլը:

Մակույկն այժմ լողում էր կիսով չափ ջրի մեջ ընկղմված նավակողի շուրջը: Եթե մի քիչ ուժեղ ալեկոծություն լիներ, «Վալդեկը», անկասկած, ծովի տակ կգնար մի քանի րոպեում:

Առագաստանավի տախտակամածը կայմերից ամբողջովին մաքրվել էր: Մնում էին միայն մեծ կայմի և հետնակայմի ներքևի հաստ մասերը, երկուսն էլ կոտրված՝ հիմքից երկու ոտնաչափ բարձրությամբ. պարզ էր, որ կայմերը փոլ էին եկել բախման հետևանքով, իրենց հետ քարշ տալով առագաստի կտավներն ու պարանները: Սակայն աչքը կտրածին չափ տեղ խորտակված նավի շուրջը ոչ մի բեկոր չէր երևում, ինչը ցույց էր տալիս, թե աղետը պատահելու օրից արդեն բավական ժամանակ էր անցել:

— Եթե նույնիսկ ողջ մնացած դժբախտներ եղել են, — ասաց նավապետ Հուլը, — հավանական է, որ մեռել են քաղցից կամ ծարավից, քանի որ ջուրը ողողած կլինի խոհանոցը: Նավի վրա միայն դիակներ մնացած կլինեն:

— Ոչ, — բացականչեց Դիկ Սենդը: — Ոչ: Եթե այդպես լիներ, շունը այդքան ուժգին չէր հաչի: Այնտեղ կենդանի մարդիկ կան:

Այդ միջոցին կենդանին, պատասխանելով պատանու կոչին՝ ծովը նետվեց և դժվարությամբ լողաց դեպի նավակը, այնքան ուժասպառ էր երևում:

Նրան վերցրին մակույկի վրա. նա ազահուությամբ հարձակվեց ոչ թե հացի կտորի վրա, որը նրա առաջ դրեց Դիկ Սենդը, այլ խմելու ջրով լիքը դույլի վրա:

— Խեղճ կենդանին սատկում է ծարավից, — բացականչեց Դիկ Սենդը:

«Վալդեկին» ընդհուպ մոտենալու նպատակով ավելի հարմար տեղ գտնելու համար մակույկը մի քանի ոտնաչափ հեռացավ: Շունն ըստ երևույթին կարծեց, թե ազատարարները չեն ցանկանում նավ բարձրանալ, ուստի, բռնեց Դիկ Սենդի բաճկոնից և վերսկսեց ողբագին հաչել ավելի նոր ուժով:

Նրան հասկացան, քանի որ նրա դիմախաղն ու հաչոցը նույնքան պարզ էին, որքան մարդկային խոսքը: Մակույկը իսկույն նավի կողքին կպավ, երկու նավաստիները պինդ կապեցին այն, իսկ նավապետ Հուլն ու Դիկ Սենդը, շան հետ

բարձրանալով նաև, մեծ դժվարությամբ հասան այն խոռոչին, որը բացվում էր երկու կայմերի մնացորդ կոճղերի արանքում:

Այդ բացվածքով երկուսն էլ մտան նավամբարը:

Կիսով չափ ջրով լցված նավամբարում ոչ մի ապրանք չկար: Առագաստանավը նավարկում էր ավազի բալաստով, որն այժմ թափվել էր նավի ծախակողմը և, այդպիսով առագաստանավը կողքի էր պահում: Ուրեմն նավի վրա ազատելու ոչինչ չկար:

— Այստեղ ո՛չ ոք չկա,— ասաց նավապետ Հուլը:

— Ոչ ոք,— պատասխանեց պատանին՝ նավամբարի խորքը գնալով:

Բայց շունը, որ տախտակամածի վրա էր, շարունակում էր հաչել կարծես ավելի համառորեն կոչ անելով և նավապետի ուշադրությունը հրավիրելով:

— Բարձրանանք վերև,— ասաց նավապետ Հուլը պատանուն:

Նրանք կրկին տախտակամած բարձրացան:

Շունը վազելով նրանց մոտ, կարծես հրավիրում էր դեպի նավախցիկ:

Նրանք հետևեցին շանը:

Այնտեղ, մի անկյունում, հինգ հոգի, հավանաբար հինգ դիակ, պառկած էին հատակին:

Լուսանցույցից ներս թափանցող լույսի տակ նավապետ Հուլը հինգ նեգրերի մարմիններ նկատեց:

Դիկ Սենդը, որ մեկից դեպի մյուսն էր գնում, նկատեց, որ այդ դժբախտները դեռևս շնչում էին:

— Պետք է անմիջապես փոխադրել նրանց,— բացականչեց նավապետ Հուլը:

Կանչեցին մակույկը պահող երկու նավաստիներին և նրանց օգնությամբ աղետոյալներին դուրս բերեցին:

Հեշտությամբ չկատարվեց այդ, բայց երկու թույլ հետո հինգ նեգրերը պառկել էին մակույկի մեջ, սակայն նրանցից ոչ մեկը չէր գիտակցում, որ փորձում էին իրենց փրկել: Մի քանի կաթիլ սթափեցնող դեղը և մի քիչ սառը ջուրը խոհեմությամբ գործածելով՝ գուցե նրանց կյանքի բերեր:

«Պիլիգրիմը» կանգնած էր նավի իրանից մոտ հարյուր մետր հեռավորության վրա, մակույկն արագորեն մոտեցավ նրան:

Վերամբարձ ճախարակի օգնությամբ նեգրերից յուրաքանչյուրին հերթով վեր բարձրացրին և դրեցին «Պիլիգրիմի» տախտակամածի վրա:

Շունն ընկերակցում էր նրանց:

— Դժբախտ մարդիկ,— բացականչեց տիկին Ուելդոնը՝ տեսնելով այդ անզգա հինգ մարմինները:

– Նրանք ողջ են, տիկին Ուելդոն: Մենք նրանց կփրկենք, – բացականչեց Դիկ Սենդը:

– Իսկ ի՞նչ է պատահել նրանց, – հարցրեց կուզեն Բենեդիկտը:

– Սպասենք, որ կարողանան խոսել, – պատասխանեց նավապետ Հուլը, – և պատմեն իրենց գլխի անցածը: Բայց նախ և առաջ պետք է մի քիչ ջուր խմացնել՝ մի քանի կաթիլ ռոմ խառնելով:

Ապա գլուխը դարձնելով՝ կանչեց.

– Նեգորո՛:

Այդ անունը լսելով, շունը մեջքը ուռցրեց, կարծես ուզենալով ցատկել մազերը բիզբիզ, երախը բաց արած:

Իսկ խոհարարը չէր երևում:

– Նեգորո՛, – կրկնեց նավապետ Հուլը:

Շունը կրկին սաստիկ կատաղության նշաններ ցույց տվեց:

Նեգորոն խոհանոցից դուրս եկավ:

Բայց հազիվ էր նա բարձրացել կամրջակը, երբ շունը հարձակվեց նրա վրա և ուզեց բռնել կոկորդը:

Ձեռքում բռնած կրակխառնիչով խոհարարը ետ մղեց շանը, որին մի քանի նավաստիներ հազիվ կարողացան զսպել:

– Ճանաչո՞ւմ եք այս շանը, – հարցրեց նավապետ Հուլը խոհարարին:

– Ե՞ս, – պատասխանեց Նեգորոն, – կյանքումս չեմ տեսել:

– Տարօրինակ է, – շնչաց Դիկ Սենդը:

IV. «Վալդեկից» փրկվածները

Գերեվաճառողությունը դեռևս մեծ չափով տարածված է հասարակածային Աֆրիկայում: Չնայած ափի երկարությամբ նավարկող անգլիական և ֆրանսիական ռազմանավերին, ստրուկներով բարձած նավերը ամեն տարի Անգոլայից կամ Մոզամբիկից մեկնում են՝ նեգրեր տանելու աշխարհի զանազան մասերը, և պետք է ասել, նույնիսկ քաղաքակրթված երկրները:

Նավապետ Հուլը գիտեր այդ:

Թեև ծովային այդ շրջանները սովորաբար գերեվաճառ նավերի ուղեգծից դուրս էին, բայց և այնպես նավապետը մտածում էր, թե արդյոք այդ փրկված նեգրերը չէին պատկանում ստրուկների մի խմբի, որը «Վալդեկը» տանում էր վաճառելու Խաղաղ օվկիանոսի որևէ գաղութում: Համենայն դեպս, եթե այդպես էր, այդ նեգրերը ազատվում էին ստրկությունից, քանի որ գտնվում էին «Պիլիգրիմի» վրա, և այդ մասին նա ցանկանում էր նրանց հաղորդել ինչքան կարելի է շուտ:

Մինչ այդ, ամենահոգատար ինամք ցույց տրվեց «Վալդեկի» աղետյալներին: Տիկին Ուելդոնը, Նանի և Դիկ Սենդի օգնությամբ, մի քիչ սառը ջուր էր խմացրել նրանց, որից երկար ժամանակ երևի զրկված էին, դրա վրա ավելացրած մի քիչ սնունդը բավական եղավ նրանց վերակենդանացնելու համար:

Նեգրերի ավագը, որ կլիներ մի վաթսուն տարեկան, շուտով կարողացավ խոսել և անգլերեն լեզվով պատասխանել իրեն ուղղված հարցերին:

– Ձեզ փոխադրող նավը զարնվեց մի ուրիշ նավի՞, – հարցրեց նախ և առաջ նավապետ Հոլը:

– Այո, – պատասխանեց ծերունի նեգրը: – Տասն օր առաջ, մուգ գիշերով, մեր նավը զարնվեց մի ուրիշին: Մենք քնած էինք...

– Իսկ ի՞նչ եղան «Վալդեկի» նավաստիները:

– Նրանցից ոչ մեկը չկար, երբ մենք բարձրացանք տախտակամածը:

– Ուրեմն նավի անձնակազմին հաջողվե՞ց փոխադրվել այն նավը, որը զարնվեց «Վալդեկին», – հարցրեց նավապետ Հոլը:

– Գուցե. և պետք է հուսալ, որ այդպես է եղել:

– Իսկ այդ նավը բախումից հետո մի՞թե չմոտեցավ ձեզ վերցնելու համար:

– Ոչ:

– Ինքը և՞ս ընկղմվեց:

– Ոչ, չընկղմվեց, – պատասխանեց ծերունի նեգրը, գլուխը շարժելով, – քանի որ մենք տեսանք, թե ինչպես հեռանում էր գիշերվա խավարի մեջ:

Այդ իրողությունը, որը հաստատեցին նաև մյուս փրկվածները, կարող է անհավատալի թվալ: Սակայն ճիշտ է, որ կան այնպիսի նավապետներ, որոնք իրենց անզգուշության հետևանքով տեղի ունեցած սոսկալի աղետներից հետո հաճախ փախուստի են դիմում, առանց մտահոգվելու այն դժբախտների մասին, որոնց աղետի են ենթարկել:

Իհարկե, խիստ դատապարտելի են այն կառապանները, որոնք նույն կերպ են վարվում և փախուստ տալով՝ ուրիշներին են թողնում իրենց անզգուշության գոհ դարձած անցորդների ինամքը: Սակայն փողոցում պատահած դժբախտ դեպքի զոհին իսկույն անհրաժեշտ ինամքը տրվում է: Իսկ ի՞նչ ասել այն մարդկանց, որոնք բաց ծովում աղետի ենթարկվածներին թողնում, հեռանում են. դա անհավատալի է և խայտառակություն:

Սակայն նավապետ Հոլին ծանոթ էին այդպիսի տմարդի բազմաթիվ դեպքեր, և նա ստիպված էր կրկնել տիկին Ուելդոնին, թե այդպիսի դեպքեր, ինչքան էլ հրեշավոր լինեն, դժբախտաբար, հազվադեպ չեն:

– Որտեղի՞ց էր գալիս «Վալդեկը», – հարցրեց նա:

– Մելբուռնից:

– Ուրեմն դուք ստրուկներ չե՞ք...

– Ոչ, պարոն, – պատասխանեց իսկույն ծերունի նեգրը, ամբողջ հասակով մեկ կանգնելով: – Մենք Փենսիլվանիա նահանգի բնակիչներ ենք, Ամերիկայի ազատ քաղաքացիներ:

– Բարեկամներս, – պատասխանեց նավապետ Հուլը, – հավատացած եղեք, որ դուք ձեր ազատությունը չեք կորցնի՝ փոխադրելով ամերիկյան «Պիլիգրիմ» նավը:

Արդարև, «Վալդեկով» ուղևորվող հինգ նեգրերը Փենսիլվանիա նահանգի բնիկներ էին: Նրանցից ամենատարիքովը տասը տարեկան հասակում որպես ստրուկ վաճառված լինելով Աֆրիկայում, այնուհետև փոխադրվել էր Միացյալ Նահանգներ և վաղուց ազատվել ազատագրման հրովարտակով: Ինչ վերաբերում է նրա երիտասարդ ուղեկիցներին, նրանք ազատագրված ստրուկների զավակներ էին, ծնվել էին որպես ազատ քաղաքացիներ և ոչ մի սպիտակամորթ երբեք իրավունք չունեին նրանց սեփականացնելու: Նրանք նույնիսկ չէին խոսում այն «նեգրական» բարբառով, որը հող չի կիրառում և բայի միայն անորոշն է գործածում. մի բարբառ, որն արդեն հետզհետե վերանում է հակաստրկային պատերազմից հետո: Այդ նեգրերը ուրեմն ազատ կամքով հեռացել էին Միացյալ Նահանգներից և վերադառնում էին որպես ազատ քաղաքացիներ:

Ինչպես հայտնեցին նավապետ Հուլին, նրանք ծառայության էին մտել մի անգլիացու մոտ, որը ընդարձակ կալվածքներ ուներ հարավային Ավստրալիայի Մելբուռն քաղաքում: Այնտեղ նրանք ապրել էին երեք տարի, մեծ օգուտ էին ունեցել և պայմանաժամը վերջանալուց՝ ցանկացել էին վերադառնալ Ամերիկա:

Ուստի և նրանք ճամփորդում էին «Վալդեկով»՝ վճարելով իրենց ճանապարհածախսը որպես սովորական ուղևորներ: Դեկտեմբերի 5-ին նրանք մեկնել էին Մելբուռնից և տասնյոթ օր հետո, մուլթ գիշերով, բախվել մի մեծ շոգենավի:

Նեգրերը քնած էին: Բախումից մի քանի րոպե հետո, բախում, որը սոսկալի էր եղել, նրանք դուրս թափվեցին և բարձրացան վերև:

Նավի կայմերն արդեն ցած էին թափվել, և «Վալդեկով» պառկել էր կողքի, սակայն չէր ընկղմվել, որովհետև ջուրը մասամբ միայն ներխուժել էր նավամբարը:

Ինչ վերաբերում է «Վալդեկի» նավապետին և նավաստիներին՝ բոլորն էլ անհետացել էին. կամ բախման հետևանքով մի մասը ծովն էին ընկել, կամ կարողացել էին կառչել մյուս նավի սարքերին, որը շտապել էր հեռանալ, այլևս չվերադառնալու համար:

Հինգ նեգրերը մենակ էին մնացել աղետոյալ նավի վրա, մոտակա ափից մոտավորապես հազար երկու հարյուր մղոն հեռու:

Նեգրերի ամենից ավելի տարիքավորի անունը Թոմ էր: Տարիքի, ինչպես նաև եռանդուն բնավորության ու աշխատանքային երկար կյանքի փորձառության շնորհիվ նա իր ուղեկիցների առաջնորդն էր համարվում:

Մյուս նեգրերը քսանհինգից մինչև երեսուն տարեկան երիտասարդներ էին և անվանվում էին Բաթ /Բաթ – Բարթոլդիմեոսի կրճատ ձևը:/ ծերունի Թոմի որդին, Օստին, Ակտոն և Հերկուլես, չորսն էլ ամրակազմ և ուժեղ մարդիկ էին, և կասկած չկար, որ Կենտրոնական Աֆրիկայի շուկաներում շատ բարձր գին կունենային:

Ինչպես տեսանք, Թոմը և Նրա ուղեկիցները աղետից հետո մենակ էին «Վալդեկի» վրա, հնարավորություն չունենալով ոտքի կանգնեցնել այդ տապալված իրանը, ոչ էլ հեռանալ նրանից, քանի որ Նավի երկու մակույկները ջարդվել էին աղետի միջոցին: Նրանց մտում էր սպասել որևէ Նավի օգնության, այնինչ Նավի իրանը հետզհետե տեղից շարժվում էր՝ հոսանքների ազդեցության տակ: Այդ էր պատճառը, որ Նրան պատահել էին ուղիղ գծից դուրս, այլապես «Վալդեկը» պետք է գտնվեր շատ ավելի հարավային լայնության տակ:

Աղետը պատահելու բոլորից մինչև «Պիլիգրիմի» այդ վայրը հասնելը անցել էր տասն օր, և այդ ժամանակամիջոցում հինգ նեգրերը սնվել էին Նավի սեղանատանը գտնված մի քիչ մթերքով: Բայց չկարողանալով հասնել Նավի պահեստին, որը ջրով ողողված էր, նրանք զրկված էին որևէ խմիչքից, իսկ ջրի տակառները ջարդվել էին արկածի միջոցին: Այդպիսով՝ Թոմը և Նրա ուղեկիցները ծարավից տանջվելով, ուշագնաց էին եղել, և «Պիլիգրիմը» շատ պատեհ ժամանակին վրա հասավ:

Մի քանի խոսքով Թոմը այս բոլորը պատմեց Նավապետ Հուլին: Ոչ մի հիմք չկար կասկածելու նեգրի պատմածների ճշտությանը: Ընկերները հաստատեցին Նրա ասածները, բացի դրանից, փաստերը միանգամայն համապատասխանում էին իրողությանը:

Աղետի ենթարկված Նավից փրկված մյուս եակը հավանաբար կխոսեր միևնույն անկեղծությամբ, եթե կարողանար խոսել:

Խոսքն այն շան մասին է, որի վրա այնքան վատ ազդեցություն էր թողնում Նեգրոտյի ներկայությունը: Ինչ-որ իրոք անբացատրելի հակակրություն կար շան այդ վարմունքի մեջ:

Դինգոն, այդպես էր շան անունը, շների այն ցեղից էր, որը հատուկ է Նոր Հոլանդիային /Նոր Հոլանդիա — Ավստրալիայի Նախկին անունը: Ծ. Թ.:/: Սակայն Ավստրալիայում չէ, որ Նրան գտել էր «Վալդեկի» Նավապետը: Երկու տարի առաջ քաղցից կիսամեռ շանը Նա տեսել էր Աֆրիկայի արևմտյան ծովափում, Կոնգոյի գետաբերանի մոտակայքում: «Վալդեկի» Նավապետը վերցրել էր այդ գեղեցիկ շանը, սակայն Դինգոն, չընտելանալով Նրան, կարծես կարոտում էր Նախկին տիրոջը, որից բռնի ուժով բաժանված էր երևում և որին անհնար էր գտնել այդ ամայի վայրում: «Ս. Վ.» այս երկու տառերը, որոնք փորագրված էին Նրա վզակապի վրա, միակ նշաններն էին, որ կապում էին այդ կենդանուն Նրա անցյալի հետ, որի գաղտնիքը լուծել զուր կլիներ:

Դինգոն հիանալի և հուժկու շուն էր. երբ Նա կանգնում էր հետևի ոտքերի վրա, գլուխը բարձր պահած՝ հավասարվում էր մարդու հասակին: Արագաշարժության և մկանային ուժի շնորհիվ այդ շունը պատկանում էր այն կենդանիների ցեղին, որոնք առանց այլայլվելու հարձակվում են յագուարների և հովազների վրա և չեն վախենում պայքարել արջի դեմ: Նրա մազերը խիտ էին, պոչը երկար և կոշտ՝ առյուծի պոչի նման. մուգ շիկագույն մարմնով, միայն դնչի վրա ուներ սպիտակ բծեր: Բարկության բոլորներին այդ շունը կարող էր վտանգավոր լինել և հասկանալի է, թե ինչու Նեգրոն գոհ չմնաց այն ընդունելությունից, որը Նրան ցույց տվեց շնային ցեղի այս նմուշը:

Սակայն Դինգոն եթե մարդամոտ չէր, այնուամենայնիվ, չար էլ չէր: Ավելի շուտ Նա տխուր էր երևում: Ծերունի Թոմը դեռևս «Վալդեկի» վրա նկատել էր, որ Դինգոն կարծես չէր սիրում նեգրերին: Շունը թեև չէր փորձում Նրանց վնաս հասցնել, սակայն պարզ էր, որ խուսափում էր Նրանցից: Գուցե աֆրիկյան այն ծովափում,

որտեղ նա թափառել էր, բնիկների կողմից վատ վերաբերմունքի էր արժանացել: Ուստի և Թոմս ու Նրա ուղեկիցները թեև լավ մարդիկ էին, այնուամենայնիվ, Դինգոն չէր ընտելանում նրանց: Այն տասն օրերին, որ աղետոյալները անց էին կացրել «Վալդեկի» վրա, շունը մեկուսի էր մնացել, հայտնի չէր, թե ինչով էր սնվել, բայց մի բան որոշ էր, որ նա էլ, մարդկանց նման, սաստիկ տանջվել էր ծարավից:

Ահա դրանք էին փրկվել աղետոյալ նավից, որը քամու առաջին հարվածից ծովի հատակը կգնար և իր հետ օվկիանոսի խորքը կտաներ հինգ մարդկանց և շան դիակները, եթե անսպասելիորեն վրա չհասներ «Պիլիգրիմը», որը ուշացած լինելով հանդարտ եղանակի և հանդիպակաց քամիների պատճառով, հնարավորություն ստացն էր նավապետ Հուլիան մարդասիրական գործ կատարելու:

Այժմ մնում էր ավարտել մարդասիրական գործը և հայրենիք վերադարձնել «Վալդեկի» աղետոյալներին, որոնք աղետի պատճառով կորցրել էին երեք տարվա աշխատանքի խնայողությունը: Ճարպի բեռը Վալպարեգոյում բեռնաթափելուց հետո «Պիլիգրիմը» պետք է շարունակեր ճանապարհը, հետևելով ամերիկյան ծովափին, մինչև Կալիֆոռնիա: Այնտեղ, ինչպես խոստացավ տիկին Ուելդոնը, Թոմին և Նրա ընկերներին պարոն Չեյմս Ուոլդենը ցույց կտար ամեն տեսակ օգնություն, որպեսզի նրանք կարողանային հասնել Փենսիլվանիայի Նահանգը:

Այդ մարդիկ միամտվելով իրենց ապագայի մասին՝ ջերմորեն շնորհակալ եղան տիկին Ուելդոնին և նավապետ Հուլիան: Նրանք զգում էին, թե ինչքան շատ էին պարտական նրանց և թեև խեղճ սևամորթներ էին, բայց և այնպես հույս ունեին, որ մի օր կկարողանային երախտահատույց լինել:

V. «Ս. Վ.»

Այդ միջոցին «Պիլիգրիմը» վերսկսեց ընդհատված ուղևորությունը՝ աշխատելով ինչքան կարելի է դեպի արևելք ուղղվել: Եղանակի հարատև հանդարտությունը շարունակում էր անհանգստացնել նավապետ Հուլիան, ոչ այն պատճառով, որ ճանապարհորդությունը Նոր Չելանդիայից մինչև Վալպարեգո պիտի երկարեր մեկ կամ երկու շաբաթով, այլ այն պատճառով, որ այդ ուշացումը կարող էր խիստ հոգնեցնել իր տիրուհուն:

Սակայն տիկին Ուելդոնը չէր գանգատվում և փիլիսոփայի համբերությամբ տանում էր ուղևորության անհարմարությունները:

Փետրվարի 2-ին, երեկոյան դեմ, «Վալդեկի» իրանը անհետացավ տեսողությունից:

Նավապետ Հուլի առաջին գործը եղավ, ըստ հնարավորության, հարմար կերպով տեղավորել Թոմին և Նրա ընկերներին: «Պիլիգրիմի» նավաստիների դահլիճը, որ մի խցիկ էր կամրջակի վրա, այնքան փոքր էր, որ հնարավոր չէր տեղավորել հինգ նեգրերին, ուստի նրանց համար տեղ պատրաստեցին նավի առաջամասում: Պետք է ասել, որ սովորած լինելով ծանր աշխատանքի՝ նրանք խստապահանջ լինել չէին կարող, բացի դրանից, տաք և առողջարար եղանակին այդպես ճամփորդելը նրանց կբավարարեր ամբողջ ուղևորության ընթացքում:

Կյանքն առագաստանավի վրա, որ մի րոպե խանգարվել էր այդ դեպքի պատճառով, վերստին ստացավ իր սովորական ընթացքը:

Թոմը, Օստինը, Բաթը, Ակտեոնը և Հերկուլեսը ցանկանում էին ամեն կերպ օգտակար լինել: Սակայն անփոփոխ քամու հետևանքով, երբ առագաստները մի անգամ արդեն պարզված էին լինում, այլևս անելիք չէր մնում: Բայց երբ կարիք էր լինում նավը պտտել, ծերունի նեգրն ու ընկերները շտապում էին օգնել նավաստիներին, և պետք է խոստովանել, որ երբ հսկա Հերկուլեսը գործի էր անցնում, արդյունքն իսկույն երևում էր: Այդ վեց ոտնաչափ հասակ ունեցող հաղթանդամ նեգրը ինքը մենակ մի ոլորան /Ոլորան – Նավի խարիսխը բարձրացնող գործիք: Ծ. Թ.:/ արժեր:

Փոքրիկ Ջեկը մեծ հաճույքով էր դիտում այդ հսկայի աշխատանքը. նրանից բոլորովին չէր վախենում և երբ Հերկուլեսը նրան վեր-վեր էր նետում ռետինե տիկնիկի նման, անվերջ ցնծություն էր փոքրիկի համար:

- Ավելի բարձրացրու, – ճչում էր փոքրիկ Ջեկը:
- Համեցե՛ք, պարո՛ն Ջեկ, – պատասխանում էր Հերկուլեսը:
- Շա՛տ ծանր եմ:
- Ես նույնիսկ չեմ զգում ձեր ծանրությունը:
- Ուրեմն է՛լ ավելի բարձր, ինչքան որ ձեռքդ կհասնի:

Հերկուլեսը, երեխայի երկու փոքրիկ ոտները լայն ափի մեջ բռնելով, նրան ման էր ածում կրկեսի մարմնամարզիկի նման: Ջեկը իրեն երևակայում էր մեծ, շատ մեծ և անչափ հաճույք էր ստանում: Նա փորձում էր նույնիսկ «ծանր լինել», բայց հսկան չէր էլ նկատում:

Այդպիսով, փոքրիկ Ջեկն այժմ երկու բարեկամ ուներ՝ Դիկ Սենդը և Հերկուլեսը: Քիչ հետո ձեռք բերեց նաև երրորդին՝ Դինգոյին:

Արդեն ասել ենք, որ Դինգոն մարդամոտ շուն չէր: Դա անտարակույս հետևանք էր այն բանի, որ «Վալդեկի» հասարակությունը նրան դուր չէր եկել: Իսկ «Պիլիգրիմի» վրա դրությունը բոլորովին այլ էր: Ջեկը հավանորեն կարողացավ գրավել գեղեցիկ կենդանու համակրանքը: Շունը, շատ չանցած, հաճույքով խաղում էր փոքր տղայի հետ, որին այդ խաղերը դուր էին գալիս: Շուտով պարզվեց, որ Դինգոն այն շներից էր, որոնք սիրում են երեխաներին: Պետք է ասել, որ Ջեկը երբեք նրան չէր տանջում: Նրա ամենամեծ հաճույքն էր շանը դարձնել իր երիվարը և, պետք է խոստովանել, որ այդպիսի ձին շատ ավելի հաճելի է երեխայի համար, քան թե սովորաբար շինվածը, եթե նույնիսկ նրա ոտքերի տակ անվակներ կան ամրացրած: Այդպես, Ջեկը առանց թամբի նստելով շան վրա, սրարշավ քշում էր նրան, իսկ շունը հոժարակամ ենթարկվում էր երեխային, և, ճիշտն ասած, Ջեկը այնքան թեթև էր, որ նրա ծանրությունը բոլորովին զգալի չէր:

Սակայն դրա հետ միասին օրեցօր ինչպե՛ս էր նվազում նավի շաքարի պաշարը:

Դինգոն շուտով նավի ամբողջ անձնակազմի սիրելին դարձավ: Միայն Նեգրոն էր խուսափում նրան հանդիպելուց, որի ատելությունը դեպի նավի խոհարարը նույնքան ուժեղ էր, ինչքան անբացատրելի:

Սակայն շնով հրապուրվելով հանդերձ, Ջեկը չէր մոռացել իր վաղեմի բարեկամ Դիկ Սենդին: Ազատ ժամերին պատանին միշտ էլ ժամանակն անց էր կացնում փոքր տղայի հետ:

Հասկանալի է, որ տիկին Ուելդոնը մեծ բավարարություն էր գգում այդ մտերմությունից:

Մի անգամ, փետրվարի 6-ին, տիկին Ուելդոնը խոսք բացեց նավապետ Հուլի հետ Դիկ Սենդի մասին, իսկ նավապետը մեծ գովեստով խոսեց պատանու մասին:

– Երաշխավորում եմ, – ասաց նավապետը, – որ այդ տղան մի օր հայտնի ծովային կդառնա: Նա իսկապես ծովայինի բնածին շնորհք ունի և այդ շնորհքով էլ փոխարինում է այն, ինչ որ չգիտե նավավարության տեսական խնդիրներից: Այն, ինչ նա անում է, արդեն զարմանալի է, եթե նկատի առնենք այն կարճ ժամանակը, որ ունեցել է դրանք սովորելու համար:

– Պետք է ավելացնել, – պատասխանեց տիկին Ուելդոնը որ նա հրաշալի տղա է, շատ լուրջ, իր տարիքից շատ բարձր և ոչ մի հանդիմանության չի արժանացել մինչև այսօր:

– Ճիշտ է, նա լավ տղա է, – ավելացրեց նավապետ Հուլը, – և իզուր չէ, որ բոլորը սիրում են նրան ու գնահատում:

– Երբ այս ուղևորությունը վերջանա, – ասաց տիկին Ուելդոնը, – ես գիտեմ, որ ամուսինս մտադրություն ունի նրա ուսումը շարունակել տալ ծովային դպրոցում՝ հետագայում նավապետի վկայական ձեռք բերելու համար:

– Պարոն Ուելդոնը իրավացի է, – պատասխանեց նավապետ Հուլը: – Դիկը մի օր ամերիկյան ծովագնացությանը պատիվ կբերի:

– Այդ խեղճ որբը ծանր օրերով է կյանք մտել, դժվար դպրոց է անցել, – ասաց տիկին Ուելդոնը:

– Անտարակոյս, տիկին՝ Ուելդոն, սակայն այդ դասերը իզուր չեն եղել: Նա հասկացել է, որ միայն համառ աշխատանքի շնորհիվ հաջողություն կունենա և այժմ լավ ճանապարհի վրա է:

– Այո, պարտականության ուղու վրա:

– Նայեցեք նրան, տիկին՝ Ուելդոն, – շարունակեց նավապետ Հուլը: – Նա ղեկանիվն է վարում և հայացքը բևեռել է նավի քթակայմի ծայրին: Ոչ մի վրիպում իրեն թույլ չի տալիս այդ պատանին, ուստի և նավի ոչ մի տատանում: Դիկ Սենդը այժմվանից արդեն հմուտ ղեկակալ է: Դա լավ նախաքայլ է ծովայինի համար: Մեր արհեստը, տիկին՝ Ուելդոն, այնպիսին է, որը պետք է սկսել մանկությունից: Ով որ նավի փոքրավոր չի եղել, երբեք կատարյալ ծովային չի դառնա, գոնե առևտրական նավատորմում. ամեն ինչ պետք է որ դաս լինի, ապա և միաժամանակ ամեն ինչ լինի բնագործն և դատողությամբ՝ ծովայինի համար. թե՛ որոշումներ ընդունելը և թե՛ այդ որոշումները կատարելը:

– Սակայն, նավապետ Հուլ, – պատասխանեց տիկին Ուելդոնը, – չէ՞ որ լավ ծովայինների թիվը ռազմական նավատորմում էլ քիչ չէ:

– Իհարկե, – պատասխանեց նավապետ Հուլը, – սակայն ինչքան ես գիտեմ, գրեթե բոլոր լավագույն ծովայինները մանկությունից են սկսել իրենց գործը բավական է հիշել Նելսոնին և ուրիշներին:

Այդ միջոցին հետևի խցիկի դռնակից դուրս ցցվեց կուզեն Բենեդիկտը, որ ըստ սովորականի խորասուզված իր մտքերի մեջ և պատժապարտ հոգու պես սկսեց

Ետ ու առաջ գնալ տախտակամածի վրա, ուշադրությամբ դիտելով ճեղքվածքները, որոնելով հավերժ լի վանդակների տակերը, ձեռքով շոշափելով տախտակամածի կարկատված մասերը, որտեղ կուպրը պոկված էր:

– Լավ ե՞ք զգում ձեզ, կուզեն Բենեդիկտ, – հարցրեց տիկին Ուելդոնը:

– Այո... զարմուհի Ուելդոն... լավ եմ, իհարկե... բայց ավելի լավ կլիներ, եթե շուտ տեղ հասնեիք:

– Ի՞նչ եք փնտրում այդ սատարանի տակ, պարոն Բենեդիկտ, – հարցրեց Նավապետ Հոլը:

– Միջատներ, պարո՛ն, – պատասխանեց կուզեն Բենեդիկտը, – ի՞նչ կուզեիք, որ փնտրեի բացի միջատից:

– Միջա՞տ. դե՛, հասկանալի է, այդ ձեր գործն է, սակայն ծովի վրա չէ, որ դուք կհարստացնեք ձեր հավաքածուն:

– Իսկ ինչո՞ւ ոչ, պարո՛ն: Միթե նավի վրա չի կարելի գտնել մի որևէ...

– Կուզե՛ն Բենեդիկտ, – ասաց տիկին Ուելդոնը, – այդ դեպքում դուք պետք է անիծեք Նավապետ Հոլին, որն իր նավը այնքան մաքուր է պահում, որ ձեր որոնումներն իզուր են անցնում:

Նավապետ Հոլը ծիծաղեց:

– Տիկին Ուելդոնը չափազանցում է, ասաց նա, – սակայն ինձ թվում է, թե դուք իզուր ժամանակ կկորցնեիք խցիկները խուզարկելով:

– Գիտեմ, գիտեմ, – բացականչեց կուզեն Բենեդիկտը, ուսերը թոթվելով, – ես իզուր փորձեցի...

– Բայց «Պիլիգրիմի» նավամբարում, – շարունակեց Նավապետ Հոլը, – գուցե կգտնեք ուտիճներ, որոնք, ի դեպ, այնքան էլ հետաքրքիր չեն:

– Հետաքրքիր չե՛ն այդ գիշերային ուղղաթևավորները, – առարկեց կուզեն Բենեդիկտը զայրացած, – որոնք Վերգիլիոսի և Հորացիոսի անեծքին են արժանացել: Հետաքրքիր չե՛ն «periplaneta orientalis»-ի այդ մերձավոր ազգականները և ամերիկյան «կակերլակ»-ները, որոնք բնակվում են...

– Որոնք կեղտոտում են... – ասաց Նավապետ Հոլը:

– Որոնք թագավորում են նավերի վրա... – առարկեց հպարտորեն կուզեն Բենեդիկտը:

– Հիանալի թագավորություն...

– Է՛հ, անմիջապես երևում է, որ դուք միջատաբան չեք, պարո՛ն:

– Բացարձակապես ոչ, ի վնաս ինձ:

– Լսեցե՛ք, կուզեն Բենեդիկտ, – ասաց տիկին Ուելդոնը ժպտալով, – դուք, իհարկե, չեք ցանկանա, որ ուտիճները մեզ լափեն հանուն գիտության:

– Ես ոչինչ չեմ ցանկանում, զարմուհի Ուելդոն, – աշխուժորեն պատասխանեց միջատաբանը, – Ես միայն ցանկանում եմ իմ հավաքածուն լրացնել որևէ հազվագյուտ միջատով:

– Դուք գոհ չե՞ք ուրեմն Նոր Չելանդիայում կատարած ձեր նվաճումներով:

– Ինչպես չէ, զարմուհի Ուելդոն: Ինձ հաջողվեց այնտեղ որսալ մի նոր ստաֆիլեն՝ բզեզի մի տեսակ, որը մինչև այժմ միջատաբանները գտել էին միայն մի քանի հարյուր մղոն հեռու, նոր Զալեդոնիայում:

Այդ միջոցին Դինգոն, որ խաղում էր Ջեկի հետ, ցատկոտելով մոտեցավ կուզեն Բենեդիկտին:

– Կորի՛ր, կորի՛ր, – բացականչեց վերջինս՝ հրելով շանը:

– Ինչպես կարելի է սիրել ուտիճներին և ատել շներին, – բացականչեց նավապետ Հուլը: – Ա՛հ, պարո՛ն Բենեդիկտ:

– Այն էլ այսպիսի լավ շանը, – ասաց փոքրիկ Ջեկը՝ պստիկ ձեռքերի մեջ առնելով Դինգոյի խոշոր գլուխը:

– Այո... դեմ չեմ... – պատասխանեց կուզեն Բենեդիկտը բայց ինչ արած, այդ սատանի ձագ կենդանին չարդարացրեց այն հույսերը, որ ունեցա նրան հանդիպելով:

– Է՛հ, տեր աստված, – գոչեց տիկին Ուելդոնը, – մի՞թե դուք հույս ունեիք Դինգոյին մտցնել երկթևանիների կամ թաղանթաթևավորների շարքը:

– Այո... դեմ չեմ... – պատասխանեց կուզեն Բենեդիկտը, – բայց չէ որ Դինգոն թեև պատկանում է նորգելանդական ցեղին, այնուամենայնիվ, նրան գտել են Աֆրիկայի արևմտյան ափին:

– Շատ ճիշտ է, – պատասխանեց տիկին Ուելդոնը, – Թոմը հաճախ այդ մասին լսել է «Վալդեկի» նավապետից:

– Ուրեմն ահա թե ինչ... Ես հույս ունեի... Ես կարծում էի... որ այդ շունն իր հետ բերել էր կիսաթևանի միջատներ, որոնք հատուկ են միայն Աֆրիկայի ֆաունային...

– Տե՛ր աստված, – բացականչեց տիկին Ուելդոնը:

– Գուցե և... – ավելացրեց կուզեն Բենեդիկտը, – նոր տեսակի որևէ լու:

– Լսում ե՞ս, Դինգո, – ասաց նավապետ Հուլը, – լսո՞ւմ ես. դու չկատարեցիր քո պարտականություններից ոչ մեկը:

– Սակայն իզուր լու որոնեցի նրա վրա... – ավելացրեց միջատաբանը, խոր վիշտ արտահայտելով, – ոչ մի միջատ չգտա...

– Որոնց դուք անխնա ու անմիջապես կոչնչացնեիք, ինչպես կարծում եմ, – բացականչեց նավապետ Հուլը:

– Պարո՛ն, – խիստ շեշտով պատասխանեց կուզեն Բենեդիկտը, – լավ իմացեք, որ սրը Ջոն Ֆրանկլինը /Ջոն Ֆրանկլին – անգլիացի ծովագնաց (1786-1847): Ծ. Թ.:/

մեղք էր համարում սպանել միջատներին, թեկուզ ամերիկյան մոծակներին, որոնց խայթոցը շատ ավելի վտանգավոր է, քան թե լվինը, և կարծում եմ, թե չեք ժխտի, որ սըր Ջոն Ֆրանկլինը նվազ արժանավոր ծովային չէր, քան մի ուրիշը:

– Ընդունում եմ, – ասաց նավապետ Հուլը՝ գլուխը խոնարհելով:

– Մի անգամ, երբ նրան ուժգին խայթեց պիծակը, Ջոն Ֆրանկլինը փչեց միջատի վրա, փախցրեց և ասաց քաղաքավարի կերպով. «Գնացեք, աշխարհը բավական ընդարձակ է մեր երկուսի համար ևս»:

– Ա՛հ, – բացականչեց նավապետ Հուլը:

– Այո, պարոն:

– Բայց դուք գիտե՞ք, պարոն Բենեդիկտ, – առարկեց նավապետ Հուլը, – որ մի ուրիշը այդ նույն խոսքերն ասել էր սըր Ջոն Ֆրանկլինից առաջ:

– Մի ուրի՛շը:

– Այո, և այդ ուրիշը քեռի Թոբին /Քեռի Թոբի – անգլիացի հռչակավոր գրող Ստերնի (1713–1768) «Տրիստամ Շենդի» վեպի հերոսներից/ էր:

– Միջատաբա՛ն, – վրա տվեց կուզեն Բենեդիկտը:

– Ոչ. Ստերնի քեռի Թոբին ճիշտ միևնույն խոսքն է ասել մի ապտակ տալով իրեն անհանգստացնող մոծակին և առանց քաղաքավարության: «Գնա՛, սատանի ճուտ, – ասել է նրան, – աշխարհը բավական ընդարձակ է թե՛ քեզ և թե՛ ինձ համար»:

– Ինչ լավ մարդ է եղել այդ քեռի Թոբին, – պատասխանեց կուզեն Բենեդիկտը. – ո՞նչ է, թե մեռած:

– Իհարկե մեռած, – լրջորեն պատասխանեց նավապետ Հուլը. – քանի որ երբեք գոյություն չի ունեցել:

Բոլոր ներկաները ծիծաղեցին, նայելով կուզեն Բենեդիկտին:

Այդպիսով, այդ ուրիշ խոսակցությունները, որոնց նյութն անպայման միջատաբանությունն էր, եթե կուզեն Բենեդիկտը մասնակցում էր խոսակցությանը, անզգալի էին դարձնում սրտնեղիչ նավագնացության երկար ու ծիգ ժամերը: Ծովը միշտ հանդարտ էր, թույլ քամիները հազիվ բարձրացնում էին առազաստները: Քամին այնքան թույլ էր, որ «Պիլիգրիմը» շատ քիչ էր առաջ գնում դեպի արևելք, այդպիսով առազաստանավը ուշանում էր հասնել այն շրջաններին, որտեղ տիրապետող քամիները ավելի նպաստավոր կլինեին նրա համար:

Պետք է ասել, որ կուզեն Բենեդիկտը փորձել էր Դիկ Սենդին սովորեցնել միջատաբանության գաղտնիքը: Սակայն պատանին բավական անտարբեր էր եղել դեպի այդ առաջարկությունները: Ճարահատված գիտնականը դիմել էր նեգրերին, որոնք ոչինչ չէին հասկանում այդ գիտությունից: Թոմը, Ակտեոնը, Բաթը և Օստինը ի վերջո փախան լսարանից, և պրոֆեսորը ստիպված էր բավարարվել միայն Հերկուլեսով, որի մեջ նա որոշ բնական հակում էր նկատել տարբերելու պարագիտը թաղանթաթևավորներից:

Այդպիսով, հսկա նեգրը ապրում էր միջատների և բզեզների՝ պատենաթևավորների, մասերների, որսկանների, փոսփորուկների, օդաթռչիների, խլուրդակերպների, ջորյակների, բզեզների, խավարասերների, ուտիճների աշխարհում, ուսումնասիրելով կուզեն Բենեդիկտի ամբողջ հավաքածուն, թեև վերջինս դողում էր, տեսնելով դյուրաբեկ միջատներին Հերկուլեսի կոշտ մատների մեջ: Բայց հսկա աշակերտն այնքան ուշադիր էր լսում պրոֆեսորի դասախոսությունները, որ արժեք որոշ բան վտանգել:

Այն միջոցին, երբ կուզեն Բենեդիկտը զբաղվում էր իր դասերով, տիկին Ուելդոնը փոքրիկ Ջեկին բնավ անզբաղ չէր թողնում, կարդալ և գրել էր սովորեցնում նրան, իսկ նրա բարեկամ Դիկ Սենդը ծանոթացնում էր տարրական հաշիվների հետ:

Հինգ տարեկան հասակում երեխան ավելի լավ է սովորում գործնական խաղերով, քան թե տեսական դասերով, որոնք իհարկե, ավելի դժվար են յուրացվում:

Ջեկը կարդալ սովորում էր ոչ թե այբբենարանով, այլ շարժական տառերով, փայտե խորանարդիկներով, որ երեխան շարում և բառեր էր կազմում: Երբեմն տիկին Ուելդոնը վերցնում էր այդ խորանարդիկները և մի բառ կազմում, ապա խառնում դրանք, իսկ Ջեկը նորից կազմում էր նույն բառը:

Փոքրիկ տղան շատ էր սիրում կարդալ սովորելու այդ ձևը:

Ամեն օր մի քանի ժամ զբաղվում էր մերթ խցիկում, մերթ տախտակամածի վրա՝ շարելով և քանդելով իր այբուբենի տառերը:

Բայց նրա այդ զբաղմունքը մի օր առաջացրեց մի այնպիսի արտակարգ և անսպասելի դեպք, որ արժե դրա մասին խոսել մանրամասնորեն:

Փետրվարի 9-ի առավոտյան ժամերին էր. Ջեկը կիսով չափ պառկած տախտակամածի վրա՝ զբաղված էր մի բառ կազմելով որը ծեր ունի Թոմը պետք է նորից կազմեր, երբ Ջեկը խառնեք տառերը: Թոմը աչքերը փակել էր ձեռքով, որպեսզի չտեսնի, թե ինչ բառ է կազմում փոքր երեխան:

Այդ հիսունի չափ խորանարդիկների մի մասը մեծատառ էին, մյուսները՝ փոքրատառ, բացի այդ, մի մասի վրա կային թվանշաններ, այդպիսով բառեր կազմելուց բացի՝ երեխան սովորում էր նաև թվեր կազմել:

Այդ խորանարդիկները շարված էին տախտակամածի վրա, և փոքրիկ Ջեկը հաջորդաբար վերցնում էր նրանցից մեկնումեկը որևէ բառ կազմելու համար. դա իրոք մեծ գործ էր նրա համար:

Այդ միջոցին Դինգոն պտույտ էր գալիս երեխայի շուրջը, երբ հանկարծ կանգ առավ, հայացքը գամեց մի խորանարդիկի վրա, աջ ոտքը բարձրացրեց և պոչը շարժեց ջղաձգորեն: Ապա հանկարծ հարձակվելով փայտի խորանարդիկներից մեկի վրա՝ աստամներով վերցրեց և, մի քիչ հեռանալով, դրեց հատակին, Ջեկից մի քիչ հեռու:

Խորանարդիկի վրա գրված էր մեծատառ «Ս»:

— Դինգո՛, Դինգո՛,— բացականչեց երեխան, վախենալով, որ շունը կուկ կտա «Ս» տառը:

Սակայն Դինգոն վերադարձավ և միևնույն ձևով վերցրեց մի ուրիշ խորանարդիկ և դրեց առաջինի կողքին:

Այդ երկրորդ խորանարդիկը մեծատառ «Վ» էր:

Ջեկն այս անգամ ճչաց:

Այդ ճիչը լսելով՝ մոտ վազեցին այդ միջոցին տախտակամածի վրա զբոսնող տիկին Ուելդոնը, նավապետ Հոլը և Դիկ Սենդը: Փոքրիկ Ջեկը նրանց պատմեց այդ դեպքը:

Դինգոն ճանաչո՞ւմ էր տառերը: Դինգոն կարդա՞լ գիտեր: Դա հաստատ էր. Ջեկը տեսել էր:

Դիկ Սենդը փորձեց վերցնել երկու խորանարդիկները Ջեկին վերադարձնելու համար, սակայն Դինգոն ատամները կրճտացրեց:

Այնուամենայնիվ, պատանուն հաջողվեց վերցնել երկու խորանարդիկները և դնել տուփի մեջ:

Դինգոն նորից հարձակվեց, կրկին հարցրեց նույն երկու տառերը և մի կողմ տարավ: Այս անգամ երկու թաթերը դրեց նրանց վրա, կարծես վճռելով դրանք պահել ինչ գնով էլ լինի: Ինչ վերաբերում է այբուբենի մյուս տառերին՝ նրանք կարծես գոյություն չունեին Դինգոյի համար:

– Շատ հետաքրքիր է, – ասաց տիկին Ուելդոնը:

– Ճիշտ որ բացառիկ է, – ավելացրեց նավապետ Հոլը՝ ուշադրությամբ երկու տառերին նայելով:

– Ս. Վ. – ասաց տիկին Ուելդոնը:

– Ս. Վ. – կրկնեց նավապետ Հոլը. – ճիշտ նույն տառերը, որոնք գրված են Դինգոյի վզակապի վրա:

Ապա հանկարծ դառնալով ծերունի Թոմին՝ ասաց.

– Թոմ, ինչքան հիշում եմ, դուք ինձ ասացիք, թե այս շունը վերջերս էր միայն «Վալդեկի» նավապետին պատկանել:

– Այո, պարոն, – պատասխանեց Թոմը, – Դինգոն «Վալդեկի» վրա էր գտնվում ամենաշատը երկու տարուց ի վեր:

– Եվ կարծեմ դուք ավելացրիք, որ «Վալդեկի» նավապետը այս շանը գտել էր Աֆրիկայի արևմտյան ծովափում:

– Այո, պարոն, Կոնգոյի գետաբերանի մոտակայքում. այդ մասին հաճախ է ասել նավապետը:

– Ուրեմն, – ասաց նավապետ Հոլը, – ոչ ոքի հայտնի չի՞ եղել, թե ում է պատկանել այդ շունը, ոչ էլ նրա որտեղից լինելը:

– Ոչ ոքի, նավապետ: Գտնված շան գործն ավելի վատ է, քան ընկեցիկ երեխայինը. շունը ոչ մի փաստաթուղթ չունի և բացի այդ չի կարող արտահայտվել:

Նավապետ Հոլը լռեց, նա խորհում էր:

– Այդ երկու տառերը ձեր մեջ որևէ հիշողություն չե՞ն արթնացնում,— հարցրեց տիկին Ուելդոնը նավապետ Հուլին՝ մի քանի րոպե նրան իր մտքերի հետ թողնելուց հետո:

– Այո, տիկին Ուելդոն, մի հիշողություն կամ, ավելի շուտ, տարօրինակ գուգադիպություն:

– Ինչպիսի՞ :

– Այդ երկու տառերը գուցե մի իմաստ ունեն և կարող են պարզել, թե ինչ բախտ է ունեցել այն խիզախ ճանապարհորդը...

– Ի՞նչ էք ուզում ասել,— հարցրեց տիկին Ուելդոնը:

– Ահա թե ինչ, տիկին Ուելդոն: 1871 թ., այսինքն՝ երկու տարի սրանից առաջ, ֆրանսիացի մի ճանապարհորդ Փարիզի Աշխարհագրական ընկերության հանձնարարությամբ Աֆրիկա մեկնեց այդ աշխարհամասը արևմուտքից արևելք անցնելու նպատակով:

Նրա մեկնումի կետը հենց Կոնգոյի գետաբերանն էր: Իսկ հասնելու վայրը, ըստ հնարավորության, պիտի լիներ Դելգադո հրվանդանը՝ Ռովումայի գետաբերանում, որի հոսանքով ճանապարհորդը պետք է ցած իջներ: Այդ ֆրանսիացի ճանապարհորդը Սամուել Վեռնոն էր կոչվում:

– Սամուել Վեռնոն,— կրկնեց տիկին Ուելդոնը:

– Այո, տիկին Ուելդոն, և նկատի ունեցեք, որ այդ անուն-ազգանունն սկսվում են ճիշտ այն տառերով, որ Դինգոն ջոկեց մյուսներից, և որոնք դրված են նրա վզակապի վրա:

– Արդարև,— պատասխանեց տիկին Ուելդոնը:— Իսկ այդ ճանապարհորդը...

– Այդ ճանապարհորդը մեկնեց,— պատասխանեց նավապետ Հուլը,— և այնուհետև նրանից ոչ մի տեղեկություն չստացվեց:

– Ոչ մի լո՞ւր,— հարցրեց Դիկ Սենդը:

– Ոչ մի լուր,— պատասխանեց նավապետ Հուլը:

– Իսկ ի՞նչ է ձեր եզրակացությունը այդ մասին,— հարցրեց տիկին Ուելդոնը:

– Այն, որ Սամուել Վեռնոնը հավանականորեն չի կարողացել հասնել Աֆրիկայի արևելյան ծովափը՝ գերի ընկած լինելով բնիկների ձեռքը և կամ մեռած լինելով ճանապարհին:

– Ուրեմն այս շունը...

– Այս շունը պատկանել է նրան և ավելի բախտավոր է եղել, քան իր տերը. եթե իմ ենթադրությունը ճիշտ է, նրան հաջողվել է վերադառնալ Կոնգո, որտեղ այդ միջոցին նրան վերցրել է «Վալդեկի» նավապետը:

– Սակայն,— առարկեց տիկին Ուելդոնը,— ձեզ հայտնի՞ է, թե ֆրանսիացի ուղևորի հետ շուն է եղել նրա մեկնումի միջոցին:

— Ոչ, այդ միայն իմ ենթադրությունն է, տիկին Ուելդոն,— պատասխանեց նավապետ Հուլը:— Սակայն փաստ է, որ Դինգոն ճանաչում է «Ս» և «Վ» տառերը, որոնք, իրոք, ֆրանսիացի ճանապարհորդի անվան և ազգանվան սկզբնատառերն են: Իսկ թե ինչ պայմաններում է այս անասունը սովորել դրանք տարբերել մյուս տառերից, այդ ես չեմ կարող բացատրել, բայց կրկնում եմ, Դինգոն դրանք ճանաչում է անվիճելիորեն և տեսեք, նա հրում է թաթով և կարծես մեզ հրավիրում է կարդալ այդ տառերը իր հետ:

Արդարև, Դինգոյի այդ վարմունքն այլ կերպ չէր կարելի բացատրել:

— Իսկ Սամուել Վեռնոնը մենա՞կ էր հեռացել Կոնգոյից,— հարցրեց Դիկ Սենդը:

— Այդ ես չգիտեմ,— պատասխանեց նավապետ Հուլը: — Բայց հավանական է, որ իր հետ վերցրել էր ուղեկցող բնիկների մի խումբ:

Այդ միջոցին Նեգորոն դուրս գալով խցիկից՝ երևաց տախտակամածի վրա: Նախ ոչ ոք չէր նկատեց նրա ներկայությունը, հետևապես՝ ոչ ոք չտեսավ, թե ինչպիսի տարօրինակ հայացք նետեց նա շանը, երբ նկատեց այն երկու տառերը, որոնց մոտ կարծես որպես պահակ կանգնած էր շունը: Բայց Դինգոն, նկատելով նավի խոհարարին՝ ծայրահեղ կատաղության նշաններ ցույց տվեց:

Նեգորոն իսկույն քաշվեց նավաստիների սրահը՝ սպառնալի հայացք գցելով շան վրա:

— Ինչ-որ գաղտնիք կա այստեղ, — շնչաց նավապետ Հուլը, որի աչքերից ոչինչ չէր վրիպել այդ տեսարանից:

— Բայց պարոն,— ասաց պատանին,— մի՞թե տարօրինակ չէ, որ շունը կարողանում է ճանաչել այբուբենի տառերը:

— Ո՛չ,— բացականչեց փոքրիկ Ջեկը:— Մայրիկը հաճախ ինձ պատմել է մի շան մասին, որը կարդալ և գրել գիտեր և նույնիսկ դոմինո էր խաղում իսկական ուսուցչի նման:

— Սիրելի տղաս,— պատասխանեց տիկին Ուելդոնը ժպտալով,— այդ շունը, որի անունը Մունիտո էր, գիտնական չէր, ինչպես դու կարծում ես: Եթե հավատամ ինձ պատմածին, Մունիտոն ընդունակ չէր որոշել այն տառերից մեկնումեկը, որոնցով նա բառեր էր կազմում: Սակայն նրա տերը, որ ճարպիկ ամերիկացի էր, նկատելով Մունիտոյի չափազանց սուր լսողությունը, սկսեց զարգացնել նրա այդ ընդունակությունը և հետաքրքիր հետևանքների հասավ:

— Ինչպե՞ս էր անում, տիկին Ուելդոն,— հարցրեց Դիկ Սենդը, որին այդ պատմությունը նույնքան էր հետաքրքրում, ինչքան փոքրիկ Ջեկին:

— Ահա թե ինչպես, բարեկամ: Երբ Մունիտոն պատրաստվում էր «աշխատել» հասարակության առջև, սեղանի վրա դնում էին սրանց նմանվող տառերը: Այդ նույն սեղանի վրա շունը գնում-գալիս էր՝ սպասելով, որ որևէ մեկը մի բառ առաջարկի, բարձր կամ ցածր ձայնով: Բայց անհրաժեշտ էր, որ իր տերը գիտենար այդ բառը:

— Ուրեմն տիրոջ բացակայության դեպքում... — ասաց պատանին:

– Շունը ոչինչ չէր կարողանում անել, – պատասխանեց տիկին Ուելդոնը: – Եվ ահա թե ինչու: Այսպես, տառերը շարված լինելով սեղանի վրա՝ շունը շրջում էր այդ այբուբենի միջև: Մոտենալով այն տառին, որը նա պետք է ընտրի, կազմելու համար առաջարկված բառը, շունը կանգ էր առնում, սակայն կանգ էր առնում ոչ թե այն պատճառով, որ ճանաչում էր այդ տառը, այլ որովհետև լսում էր ուրիշներին անլսելի մի շատ թեթև ձայն՝ ատամմաքրիչի ձայնը, որը ամերիկացին չկէկացնում էր գրպանում: Այդ չկէկոցը Մունիտոյին ազդանշան էր ծառայում վերցնելու տառը և շարելու որոշ կարգով:

– Եվ ա՞յդ էր ամբողջ գաղտնիքը, – բացականչեց Դիկ Սենդը:

– Այո, այդ էր ամբողջ գաղտնիքը, – պատասխանեց տիկինը: – Ինչպես տեսնում եք, շատ պարզ է: Ամերիկացու բացակայության ժամանակ Մունիտոն կորցնում է իր շնորհքը: Ուստի ես զարմանում եմ, որ չնայած տիրոջ բացակայությանը, եթե, իհարկե, Սամուել Վեռնոնը նրա տերն է եղել, – Դինգոն կարողանում է ճանաչել այդ երկու տառերը:

– Իսկապես, – պատասխանեց նավապետ Հուլը, – շատ զարմանալի է: Բայց նկատի ունեցե՞ք, որ այստեղ խնդիրը երկու տառերին է վերաբերում, երկու հատուկ տառերի և ոչ թե պատահաբար ընտրված որևէ բառի: Վերջիվերջո այն շունը, որը զանգահարում էր վանքի դռանը, ստանալու համար աղքատների հատկացված ճաշի մնացորդը, կամ այն շունը, որ մի ուրիշ շան հետ միասին, օրընդմեջ պետք է պտտեր շամփուրը և որը մերժում էր աշխատել, եթե հերթը իրենը չէր, այդ երկու շները, կրկնում եմ, շատ ավելի հասկացող էին, քան Դինգոն: Այնուամենայնիվ, մենք անվիճելի փաստի առաջ ենք կանգնած. այբուբենի բոլոր տառերից Դինգոն երկուսն է ընտրել «Ս» և «Վ»: Մյուս տառերը նա, ըստ երևույթին, չի էլ ճանաչում: Պետք է ուրեմն եզրակացնել, որ մեզ համար անհայտ պատճառով նրա ուշադրությունը հատկապես այդ երկու տառերն են գրավել:

– Ա՛հ, նավապետ Հուլ, – պատասխանեց պատանին, – եթե Դինգոն կարողանար խոսե՛լ... Գուցե նա մեզ կասեր, թե ինչ են նշանակում այդ երկու տառերը, և ինչու ատամները կրճտացնում է մեր խոհարարի վրա:

– Այն էլ ինչպիսի՛ ատամներ, – պատասխանեց նավապետ Հուլը այն միջոցին, երբ Դինգոն, բերանը բաց անելով, ցույց էր տալիս ահռելի ժանիքները:

VI. Կետ է երևում

Պարզ է, որ այդ տարօրինակ դեպքը շատ անգամ խոսակցության նյութ էր դառնում տիկին Ուելդոնի, նավապետ Հուլի և պատանու միջև: Այդ մասին նրանք խոսում էին նավի հետևամասում: Դիկ Սենդը հատկապես բնագործին հակակրանք էր գգում դեպի Նեգորոն, որը սակայն ոչ մի կշտամբանքի արժանի չէր:

Նավի առաջնամասում նույնպես խոսում էին այդ դեպքի մասին, այն տարբերությամբ, որ այստեղ միևնույն եզրակացությանը չէին հանգում: Այնտեղ նավաստիների սրահում, Դինգոն համարվում էր պարզապես մի շուն, որը գիտեր կարդալ, գուցե և գրել ավելի լավ, քան թե նավաստիներից շատերը: Իսկ եթե շունը չէր խոսում, ապա հավանական է այն պատճառով, որ հիմք ուներ լռելու:

– Բայց մի օր, – ասաց ղեկակալ Բուլթոնը, – մի գեղեցիկ օր այդ շունը կմոտենա և կհարցնի, թե ինչ ուղղության ենք հետևում, քամին արևմտահյուսիսային[՞] է, թե արևմտակիսահյուսիսային, և հարկ կլինի պատասխան տալ նրան:

– Մի՞թե քիչ կան խոսող կենդանիներ, – առարկեց մի ուրիշ նավաստի, – օրինակ կաչաղակը, թուփակը: Ուրեմն ինչո՞ւ շունը ևս չխոսի, եթե ցանկանում է խոսել: Ավելի դժվար է խոսել կտուղով, քան թե բերանով:

– Անկասկած, – պատասխանեց ավագ նավաստի Հովիկը, – սակայն խոսող շուն երբեք չի եղել:

«Պիլիգրիմի» նավաստիները շատ կգարմանային, եթե լսեին, թե խոսող շներ իսկապես գոյություն ունեցել են. օրինակ՝ դանիացի մի գիտնական մի շուն ուներ, որը շատ որոշակի արտասանում էր մի քանի բառ: Սակայն սխալ կլիներ կարծել, թե այդ շունը հասկանում էր արտասանած բառերը: Շատ հավանական է, որ այդ շունը, որի ձայնալարերն այնպես էին կազմված, որ կարողանում էին կանոնավոր ձայներ հանել, արտասանած բառերի իմաստն ավելի լավ չէր հասկանում, քան թե, օրինակի համար, թուփակը, ճայը կամ անծեղը: Այդ կենդանիների համար նախադասությունը երգի կամ ճիչի այլակերպությունն է՝ վերցված մի այլ լեզվից, որի իմաստը չեն հասկանում:

Այսպես թե այնպես, Դինգոն առագաստանավի հերոսն էր դարձել, որից, սակայն, նա բոլորովին չգոռոզացավ: Նավապետ Հուլը մի քանի անգամ կրկնեց նույն փորձը՝ այբուբենի փայտե խորանարդիկները շարեցին Դինգոյի առջև և անխուսափելիորեն, առանց սխալվելու, առանց տատանվելու, շունն ամեն անգամ դուրս էր քաշում «Ս» և «Վ» տառերը, մինչդեռ մյուսներին ոչ մի ուշադրություն չէր դարձնում:

Այդ փորձը թեև մի քանի անգամ կրկնվեց կուզեն Բենեդիկտի ներկայությամբ, սակայն նա բոլորովին էլ չհետաքրքրվեց դրանով:

– Այնուամենայնիվ, – բարեհաճեց ասել նա մի անգամ, – չպետք է կարծել, թե միայն շներն են օժտված այդպիսի ընդունակությամբ: Ուրիշ կենդանիներ ևս այդ տեսակետից հավասարվում են նրանց, հետևելով միայն իրենց բնազդին: Օրինակ՝ մկները, որոնք փախչում են ընկղմվող նավից, կամ ջրշունը, որը զգում է, թե գետը պետք է վարարի և համապատասխան բարձրությամբ ամբարտակ է կառուցում, Նիկոմեդոսի, Սկանդերբեգի և Օպպիենի ձիերը, որոնք իրենց տերերի մահվան վշտից իրենք ևս մահացան, իրենց հիշողությամբ այնքան նշանավոր էշերը և, վերջապես, այնքան այլ կենդանիներ, որոնք կենդանական աշխարհի փառքն են կազմում: Հայտնի են դեպքեր, երբ հիանալի մարզված թռչունները անսխալ բառեր են գրում իրենց պրոֆեսորների թելադրությամբ կամ թութակներ, որոնք կարող են հաշվել, թե սենյակում քանի հոգի կա, նույնքան ճիշտ, ինչքան կհաշվեր մի հաշվետար:

Զե՞ որ գոյություն ուներ հարյուր ոսկի արժեցող մի թութակ, որն իր տիրոջ՝ կարդինալի մոտ արտասանում էր առաքյալների ամբողջ հանգանակը առանց մի բառ անգամ սխալվելու:

Վերջապես, որպես միջատաբան, ես օրինապես հպարտանում եմ նրանով, որ մի քանի շատ փոքր միջատներ նույնպես բարձր իմացականության տեր են և հաստատում են պերճախոս աքսիոմը: Օրինակ, մրջյունները, որոնք այնքան լավ կառուցողներ են, որ մեծ քաղաքներին արժանի կլինեին, կամ այն ջրային արծաթասարդերը, որոնք խորասուզվող զանգեր են կառուցում, առանց մեխանիկայի մասին գաղափար ունենալու, կամ այն լվերը, որոնք կառքեր են

քաշում իսկական երիվարների նման, որոնք հիանալի մարզանք են կատարում, որոնք ավելի լավ թնդանոթաձիգներ են, քան թե Վեստ-Փոյնթի հրետանավորները: Ոչ, ձեր Դինգոն արժանի է այդքան գովասանքի և եթե նա այդքան ուժեղ է այբուբենում, ապա ուրեմն անկասկած պատկանում է շների այն ցեղին, որը դեռևս չի դասակարգված կենդանաբանական գիտության մեջ՝ «գրագետ շների» ցեղին:

Հակառակ նախանձոտ միջատաբանի այդ և նման ճառերին, Դինգոյի արժեքը ոչնչով չէր նվազում հասարակական կարծիքի առաջ, և նավաստիները նրան շարունակում էին ընդունել որպես մի զարմանալի երևույթի:

Այնուամենայնիվ, հավանական է, Նեգորոն, որ համաձայն չէր շան հանդեպ արտահայտվող ընդհանուր համակրանքին, գուցե նրան պետք եղածից ավելի խելացի էր համարում: Այսպես թե այնպես, շունը միշտ միևնույն հակակրանքն էր արտահայտում դեպի նավի խոհարարը և, անկասկած, որևէ վատ բան կբերեր իր գլխին, եթե մի կողմից, չկարողանար պաշտպանել իրեն և մյուս կողմից, եթե ամբողջ անձնակազմի համակրանքը նրա կողմը չլիներ:

Այդպիսով, Նեգորոն այժմ, ավելի քան երբևիցե, խուսափում էր Դինգոյի ներկայությունից: Սակայն Դիկ Սենդը լավ էր նկատել, որ երկու տառերի դեպքից հետո մարդու և շան փոխադարձ ատելությունը ավելացել էր, ինչ որ բոլորովին անբացատրելի էր:

Փետրվարի 10-ին հյուսիս-արևելյան քամին, որը մինչև այդ միշտ հաջորդել էր երկար և ճնշող անհողմության, որի միջոցին «Պելիգրիմը» անշարժության էր դատապարտվում, զգալիորեն մեղմացավ, և նավապետ Հուլը հուսաց, որ մթնոլորտային հոսանքների ուղղությունը որոշ փոփոխության կենթարկվի: Գուցե առագաստանավը կկարողանա վերջապես առաջ ընթանալ բոլոր առագաստները պարզած: Առագաստանավի՝ Օքլենդ նավահանգստից մեկնելուց հետո ընդամենը տասնինն օր էր անցել: Հապաղումը շատ մեծ չէր, և բարենպաստ քամու դեպքում «Պիլիգրիմը», իր գերազանց առագաստներով կարող էր շահել կորցրած ժամանակը: Բայց պետք էր դեռևս մի քանի օր սպասել, մինչև որ քամին ուղղությունը փոխեր դեպի արևմուտք:

Խաղաղ օվկիանոսի այդ մասը միշտ ամայի էր: Ոչ մի նավ չէր երևում այդ ծովափում: Այդ մի այնպիսի աշխարհագրական լայնություն էր, որն իսկապես լքված էր նավագնացների կողմից: Հարավային բևեռի ծովերի կետորսները դեռևս չէին պատրաստվում արևադարձային գոտին վերադառնալ: «Պիլիգրիմը», որ արտակարգ հանգամանքների շնորհիվ ստիպված էր եղել կետորսության սեզոնը վերջանալուց առաջ հեռանալ այդ վայրերից, չէր կարող սպասել, որ կհանդիպի նույն ուղղությամբ նավարկող մի ուրիշ նավի:

Ինչ վերաբերում է անդրօվկիանոսյան մարդատար նավերին, ինչպես արդեն ասել ենք, նրանք իրենց նավագնացության ընթացքում այդքան բարձր զուգահեռականների չէին հետևում Ավստրալիայի և ամերիկյան մայրցամաքի միջև:

Սակայն նրանով իսկ, որ ծովն ամայի էր, պետք է առանձին ուշադրությամբ դիտել մինչև հորիզոնի հեռավոր կետերը: Ինչքան էլ միապաղաղ թվար ծովի մակերեսը անուշադիր դիտողին, այնուամենայնիվ, հասկացողի համար չափազանց այլազանություն էր ներկայացնում: Ծովի ամենաաննշմարելի փոփոխություններն իսկ հիացմունք են առաջացնում այն մարդկանց մեջ, որոնք զգում են օվկիանոսի պոեզիան: Լողացող ծովային խոտի ծփանքը, ջրիմուռի մի շյուղը, որը թեթև հետք է թողնում ալիքների վրա, տախտակի մի կտոր, որի պատմությունն են ուզում

իմանալ, այդ բոլորը չափազանց հետաքրքիր երևույթներ են: Անճայրածիր ընդարձակությունը միտքը ոչնչով չի կաշկանդում և հարուստ նյութ է տալիս երևակայությանը: Գոլորշու ձևով դեպի երկինք բարձրացող և որպես անձրև ծովը թափվող ջրի մոլեկուլները պարունակում են, գուցե, որևէ աղետի գաղտնիքը: Պետք է ուրեմն նախանձել նրանց, որոնց ներքին մտքերը հետախուզում են օվկիանոսի գաղտնիքները, որոնք նրա անհանգիստ մակերեսից բարձրանում են մինչև երկնքի բարձունքները:

Կյանքն արդարև դրսևորվում է միշտ և ծովերի վրա, և ծովերի տակ: «Պիլիգրիմի» ուղևորները կարողանում էին տեսնել, թե ինչպես փոքր ձկների վրա էին հարձակվում թռչունների այն երամները, որոնք ցրտերից առաջ փախչում են բևեռի խիստ կլիմայից: Դիկ Սենդը, այստեղ ևս լինելով Ջեյմս Ուելլոնի արժանի աշակերտը, ցույց տվեց, որ նույնքան լավ հրացան է կրակում, ինչպես և ատրճանակ՝ վար գցելով այդ արագաթռիչ թռչուններից մի քանիսին:

Ահա այստեղ ճախրում էին սպիտակ մրրկահավերը և այլ տեսակի մրրկահավեր՝ գորշ թևերով, երբեմն էլ անցնում էին պինզվիկներ, որոնք ցամաքի վրա քայլում էին այնքան դանդաղ և տարօրինակ կերպով: Սակայն, ինչպես նկատեց նավապետ Հուլը, այդ պինզվիկները իրենց ռուդիմենտային բազուկները գործածելով որպես իսկական լողաթևեր, ամենաարագ լողացող ձկներին իսկ կարող են անցնել, այն աստիճան, որ նույնիսկ ծովայինները երբեմն նրանց շփոթում են ձողաձկան հետ:

Ավելի բարձր, հսկա ձկնկուլները իրենց մեծ թևերով ճեղքում էին օդը և ապա, իջնելով ջրի երեսին՝ կտուցով որս էին փնտրում ջրի մեջ:

Այդ բոլոր երևույթները այնպիսի հրապուրիչ տեսարան էին ներկայացնում, որ բնության հանդեպ անտարբեր մարդուն միայն միապաղաղ կարող էր թվալ:

Այդ օրը տիկին Ուելլոնը զբոսնում էր «Պիլիգրիմի» նավախելին, երբ մի հետաքրքիր երևույթ գրավեց նրա ուշադրությունը: Ծովի ջուրը գրեթե միանգամից կարմիր գույն ստացավ: Թվում էր, թե ծովն արյունով ներկվեց, և այդ անբացատրելի գույնը տարածվում էր այնքան հեռու, ինչքան կարող էր հասնել տեսողությունը:

Դիկ Սենդն այդ միջոցին փոքրիկ Ջեկի հետ տիկին Ուելլոնի մոտ էր գտնվում:

— Տեսնո՞ւմ ես, — ասաց վերջինս պատանուն, — Խաղաղ օվկիանոսի ջրերի այս տարօրինակ գույնը: Մի՞թե ծովային խոտերից է առաջանում այդ գույնը:

— Ոչ, տիկին Ուելլոն, — պատասխանեց Դիկ Սենդը, — այդ գույնն առաջանում է այն անթիվ-անհամար մանր խեցգետիններից, որոնք սովորաբար կեր են ծառայում ծովային խոշոր կաթնասուններին: Ձկնորսները իրավամբ նրանց «կետի կեր» են անվանում:

— Խեցգետիններ՞, — ասաց տիկին Ուելլոնը: — Բայց այնքան փոքր են, որ կարելի էր նրանց ծովային միջատ անվանել: Կուզե՞ն Բենեդիկտը գուցե ուրախ լիներ, եթե իր հավաքածուում դրանցից ունենար:

Այդ խոսքերի հետ նա բարձրաձայն կանչեց.

— Կուզե՛ն Բենեդիկտ:

Կուզեն Բենեդիկտը խցիկից դուրս եկավ, գրեթե նավապետ Հուլի հետ միաժամանակ:

– Կուզեն Բենեդիկտ, – ասաց տիկին Ուելդոնը, – նայեցեք ծովի վրա անվերջ տարածվող այն կարմիր շերտին:

– Ահա՛ թե ինչ, – ասաց նավապետ Հուլը, – կետի կե՛ր: Պարոն Բենեդիկտ, ձեզ համար հարմար առիթ է ուսումնասիրելու խեցգետինների այս հետաքրքիր տեսակը:

– Դատարկ բան է, – ասաց միջատաբանը:

– Ինչպե՛ս թե դատարկ բան է, – բացականչեց նավապետ Հուլը, – դուք իրավունք չունեք այդպես անտարբեր վերաբերվելու: Եթե չեմ սխալվում այդ խեցգետինները պատկանում են հողավորների վեց դասերից մեկին և որպես այդպիսիք...

– Դատարկ բան է, – կրկնեց կուզեն Բենեդիկտը, գլուխը շարժելով:

– Ի՛նչ եք ասում: Այդպիսի անտարբերությունն սպասելի չէր միջատաբանից:

– Միջատաբան, այո, – պատասխանեց կուզեն Բենեդիկտը, – Բայց նեղ մասնագիտությամբ, նավապե՛տ Հուլ, չմոռանաք այդ կետը:

– Թող այդպես լինի, – պատասխանեց նավապետ Հուլը, – ընդունենք, որ այդ խեցգետինները ձեզ չեն հետաքրքրում, բայց դուք այլ կերպ կվարվեիք, եթե կետի ստամոքս ունենայիք: Ինչպիսի՛ խրախճանք կանեիք այդ դեպքում: Գիտե՞ք, տիկին Ուելդոն, մենք՝ կետորսներս, երբ որսի սեզոնում խեցգետինների այդպիսի շերտի ենք հանդիպում, իսկույն պատրաստում ենք եռաժանիներն ու մակույկները: Այդպիսի դեպքերում վստահ ենք, որ որսը հեռու չէ:

– Բայց ինչպե՞ս կարող են այդ մանր խեցգետինները ահագին կետին կշտացնել, – բացականչեց Ջեկը:

– Է՛, տղաս, – պատասխանեց նավապետ Հուլը, – զարմանալու ոչինչ չկա այստեղ, չէ՞ որ ձավարի մանր հատիկներից, այլուրից, օսլայի փոշուց լավ սուս է պատրաստվում: Բնության գործն է այդ: Երբ կետը լողում է այդպիսի կարմիր ջրերում, ուրեմն սուսը պատրաստ է, մնում է միայն բերանը բաց անել և անթիվ անհամար խեցգետիններ կուլ տալ, այնուհետև կենդանու քիմքի բազմաթիվ թերթախռիկները փակվում են ձկնորսի ուռկանի նման և այլևս նրանցից ոչ մեկը չի կարող դուրս գալ, խեցգետինների ամբողջ զանգվածը խորասուզվում է կետի մեծածավալ ստամոքսի մեջ, ինչպես սուսը՝ քո ստամոքսում:

– Հասկանալի է, Ջե՛կ, – ավելացրեց Դիկ Սենդը, – որ պարոն Կետը ժամանակ չի կորցնում մեկ-մեկ մաքրելու խեցգետինները, ինչպես մենք ենք անում:

– Ավելացնեմ, – ասաց նավապետ Հուլը, – որ ճիշտ այն միջոցին, երբ հսկա որկրամուր զբաղված է լինում ուտելով, հեշտ է մոտենալ նրան, առանց ուշադրությունը գրավելու: Այդ րոպեն ամենանպաստավորն է հաջողությամբ եռաժանիով նրան խփելու համար:

Այդ միջոցին, կարծես հաստատելու համար նավապետ Հուլի խոսքերը, նավի առաջակողմից լսվեց նավաստիներից մեկի ձայնը.

– Կե՛տը՝ մեր ձախ կողմում:

Նավապետ Հուլը իսկույն ուղղվեց:

– Կե՛տ,— բացականչեց և ձկնորսական բնագոյով ոգևորված՝ «Պիլիգրիմի» առաջակողմը վազեց: Տիկին Ուելլոնը, Ջեկը, Դիկ Սենդը, կուզեն Բենեդիկտը անմիջապես հետևեցին Նրան:

Իսկապես, չորս մղոն հեռավորության վրա, քամու ուղղությամբ, պղպջացող ջուրը ցույց էր տալիս, որ մի ահագին ծովային կաթնասուն է շարժվում կարմիր շերտի մեջ: Կետորսները չէին կարող խաբվել:

Սակայն տարածությունը դեռևս չափազանց մեծ էր, և չէր կարելի որոշել, թե կետի ո՞ր տեսակին էր պատկանում այդ կաթնասունը: Արդյոք այն իսկական կետերից մե՞կն էր, որ հատկապես փնտրում են հյուսիսային ծովերի կետորսները: Այդ կետազգիները զրկված են ողնային լողաթևերից, բայց մորթը ծածկված է ճարպի հաստ շերտով: Նրանց մարմնի երկարությունը երբեմն հասնում է ութսուն ոտնաչափի, թեև միջին երկարությունը վաթսունից ավելի չի լինում, այդ հսկաներից միայն մեկը կարող է տալ մինչև հարյուր տակառ ճարպ:

Գուցե ընդհակառակն, սապատավոր էր: Դրանց լողաթևերի երկարությունը հասնում է մարմնի երկարության կեսին, նմանվում են մի զույգ թևերի, մի խոսքով թռչող կետ:

Բայց ավելի հավանական է, որ զուլավոր լիներ, որի մարմնի երկարությունը կարող է հավասարվել իսկական կետերի երկարության և ունի ողնային լողաթևեր:

Նավապետ Հուլն ու նավաստիները դեռևս որոշակի բան չէին կարող ասել այդ մասին, սակայն կենդանուն դիտում էին ավելի շուտ ազահուությամբ, քան թե հիացմունքով:

Եթե ճիշտ է, որ ժամագործը, որևէ դահլիճում գտնված ժամանակ, չի կարող անտարբեր լինել դեպի պատից կախված ժամացույցը և պահանջ է զգում լարել այն, ապա ինչպիսի անզուսպ պահանջ պետք է զգա կետորսը՝ ձեռք ձգելու իր առջև պառկած կետին: Ասում են, թե մեծ որս անողներն ավելի են ոգևորվում իրենց որսով, քան թե թռչնորսները: Ուրեմն ինչքան կենդանին խոշոր է, այնքան ավելի ցանկություն է գրգռում: Հասկանալի է, թե ի՞նչ են զգում փղեր կամ կետեր որսացողները: Բացի դրանից, չպետք է մոռանալ, որ «Պիլիգրիմի» անձնակազմը դժգոհ էր, որ լրիվ բեռնավորված չէր վերադառնում...

Այդ միջոցին նավապետ Հուլը սկսեց ուշադրությամբ դիտել հեռվում երևացող կենդանուն իմանալու համար նրա տեսակը: Կետը դեռևս պարզ չէր երևում, սակայն փորձված կետորսը հեռվից էլ կարող էր որոշ գաղափար կազմել որսի մասին:

Արդարև, գոլորշու և ջրի այն սյունը, որ դուրս էր ցայտում կենդանու քթածակերից ու գրավում նավապետ Հուլի ուշադրությունը, հնարավորություն կտար նրան որոշելու, թե ո՞ր տեսակին էր պատկանում այդ կետազգին:

– Իսկական կետ չէ սա,— բացականչեց նավապետ Հուլը,— եթե այդպես լիներ, նրա դուրս ցայտած ջրի շերտը ավելի բարձր կթռչեր և նվազ ծավալուն կլիներ: Մյուս կողմից, եթե ժայթքած ջրի աղմուկը նմանվեր թնդանոթի հեռավոր որոտի, ես կարող էի կարծել, թե այդ կետը սապատավոր է, սակայն այդպիսին չէ, քանի որ ուշադիր ականջ դնելով կարելի է որոշակի լսել, որ այդ աղմուկը բուրբուրովին այլ

տեսակի է: Ի՞նչ է քո կարծիքը, Դիկ,— հարցրեց նավապետ Հուլը, պատանուն դառնալով:

— Ինձ թվում է, նավապետ,— պատասխանեց Դիկ Սենդը,— որ մենք գործ ունենք զուլավորի հետ: Տեսեք, թե ինչ ուժեղ թափով է նրա քթածակերից ժայթքում հեղուկի շատրվանը: Չե՞ք կարծում, որ այդ շատրվանը ավելի ջուր է պարունակում, որը հիմք է տալիս իմ կարծիքին, քան թե խտացած գոլորշի: Եվ, եթե չեմ սխալվում, այդ առանձնահատկությունը բնորոշ է զուլավորներին:

— Իսկապես, Դի՛կ,— պատասխանեց նավապետ Հուլը,— այլևս ոչ մի կասկած չի կարող լինել: Այդ կարմրագույն ջրերում լողացողը զուլավոր է:

— Ի՞նչ գեղեցիկն է,— բացականչեց Ջեկը:

— Այո, տղա՛ս: Եվ մտածել, թե վիթխարի կենդանին հանգիստ նախաճաշում է և չի կասկածում, թե կետորսները դիտում են իրեն:

— Համարձակվում եմ ասել,— ասաց Դիկ Սենդը,— որ դա զուլավորի շատ խոշոր տեսակն է:

— Շատ ճիշտ է,— պատասխանեց նավապետ Հուլը,— որը հետզհետե հուզվում էր:— Նրա երկարությունը առնվազն յոթանասուն ոտնաչափ կլինի:

— Ինչ լավ է,— ավելացրեց ավագ նավաստին:— Այդ մեծությամբ վեց կետը բավական կլիներ մեր նավը լրիվ բեռնավորելու համար:

— Այո, այդքանը բավական կլիներ,— հաստատեց նավապետ Հուլը՝ ավելի լավ տեսնելու համար բարձրանալով քթակայմի վրա:

— Այդ կետով,— ավելացրեց ավագ նավաստին,— մենք կարող էինք մի քանի ժամվա մեջ լցնել մեր ճարպի երկու հարյուր դատարկ տակառների առնվազն կեսը:

— Այո... արդարև... այո...— շնչաց նավապետ Հուլը:

— Ճիշտ է,— ասաց Դիկ Սենդը,— սակայն երբեմն շատ դժվար գործ է այդպիսի վիթխարի զուլավորի վրա հարձակվելը:

— Դժվար է, շատ դժվար,— չառարկեց նավապետ Հուլը:— Այդ կետազգիները զարհուրելի պոչեր ունեն, որոնց մոտենալը չափազանց վտանգավոր է: Ամենահաստատուն մակույկն իսկ չի դիմանա նրա լավ հասցրած հարվածին: Բայց և այնպես շահը արժի այդ դժվարությունը հանձն առնելուն:

— Է՛հ,— ասաց նավաստիներից մեկը.— լավ զուլավորը համենայն դեպս հիանալի որս է:

— Ինչպես նաև օգտավետ,— ավելացրեց մի ուրիշը:

— Ափսոս է կողքով անցնել առանց նրան ողջունելու:

Պարզ է, որ այդ քաջ նավաստիները ոգևորվում էին կետին նայելով: Բազմաթիվ տակառներով ճարպ էր լողում քիչ հեռվում, ջրի երեսին: Նրանց լսելիս թվում էր, թե բավական էր միայն «Պիլիգրիմի» տակառները շարել նավամբարում, և ճարպն ինքնին կհոսեր նրանց մեջ:

Նավաստիներից մի քանիսը, բարձրանալով հետնակայմի առագաստածողի վրա, տենչանքի ճիչեր էին արձակում:

Նավապետ Հուլը լուռ էր և եղունգներն էր կրծում: Կարծես մի անդիմադրելի մագնիս կար, որը դեպի իրեն էր քաշում «Պիլիգրիմն» իր ամբողջ անձնակազմով:

– Մայրի՛կ, մայրի՛կ, – այդ միջոցին բացականչեց փոքրիկ Ջեկը, – ես ուզում եմ մոտիկից տեսնել կետին:

– Ա՛հ, դու ցանկանում ես մոտիկի՞ց տեսնել նրան, տղաս: Դե՛, ինչո՞ւ չէ. բարեկամներս, – պատասխանեց նավապետ Հուլը, զիջելով իր ներքին ցանկությանը: – Թեև օգնական ձեռքեր քիչ ունենք, բայց և այնպես մի կերպ գլուխ կբերենք...

– Այո՛, այո՛, – միաձայն գոչեցին նավաստիները:

– Առաջին անգամ չէ, որ ես գործածում եմ եռաժանին, – շարունակեց նավապետ Հուլը, – և դուք կտեսնեք, որ դեռևս չեմ մոռացել նետել այն:

– Ուռա՛, ուռա՛, ուռա՛, – պատասխանեցին նավաստիները:

VII. Պատրաստվում են որսի

Հասկանալի է, թե վիթխարի կաթնասունի հայտնվելը ինչպիսի հուզում առաջացրեց «Պիլիգրիմի» վրա:

Կետը, որ լողում էր կարմիր ջրերում, հսկայական էր երևում: Որքան գայթակղիչ էր նրան որսալ և լրացնել նավի բեռը: Մի՞թե կարելի էր կետորս լինել և ձեռքից բաց թողնել այդպիսի առիթը:

Սակայն տիկին Ուելդոնը պարտք համարեց հարցնել նավապետ Հուլին, թե որևէ վտանգ չէ՞ր սպառնում նավաստիներին և անձամբ իրեն՝ այդ պայմաններում կետի վրա հարձակվելը:

– Ոչ մի վտանգ, տիկին Ուելդոն, – պատասխանեց նավապետ Հուլը: – Շատ անգամ եմ կետի որսորդության գնացել միայն մի մակույկով, և միշտ էլ ինձ հաջողվել է որսալ կետը: Կրկնում եմ, ոչ մի վտանգ չի սպառնում մեզ, հետևապես՝ և ձեզ:

Տիկին Ուելդոնը հանգստացավ ու այլևս այդ մասին չխոսեց:

Նավապետ Հուլը իսկույն ևեթ բոլոր միջոցները ձեռք առավ զուլավորին որսալու համար: Նա փորձով գիտեր, որ կետի որսը ուներ որոշ դժվարություններ, ուստի և որոշեց հաղթահարել դրանք:

Կետի որսալը դժվարանում էր նրանով, որ առագաստանավի անձնակազմի տրամադրության տակ կար միայն մեկ մակույկ, որը դրված էր իր հենարանի վրա, մեծ կայմի և առաջակայմի միջև. մնացած երեքից երկուսը կախված էին ձախակողմի և աջակողմի կախաններից, իսկ երրորդը՝ հետնամասում, կատարից դուրս:

Սովորաբար այս երեք կետորս նավակները միաժամանակ գործածվում են կետազգիներին հետապնդելու համար:

Բայց, ինչպես գիտենք, կետորսության սեզոնում Նոր Չելանդիայում նավաստիներ էին վարձվում, որոնք գալիս էին օգնելու «Պիլիգրիմի» նավաստիներին: Իսկ ներկա պայմաններում «Պիլիգրիմը» որսի կարող էր ուղարկել միայն հինգ նավաստի, այսինքն՝ այնքան, ինչքան պետք էր մի մակույկ սպասարկելու համար: Թեև Թոմս ու Նրա ընկերները առաջարկել էին իրենց ծառայությունը, սակայն հնարավոր չէր օգտվել դրանից, քանի որ կետորսական մակույկը միայն փորձված նավաստին կարող էր ղեկավարել: Ղեկի սխալ մի պտույտ կամ թիակի անժամանակ մի շարժում բավական են, որ ձախողեն որսի հաջող ելքը հարձակման միջոցին:

Մյուս կողմից, նավապետ Հուլը չէր ուզում առաջաստանավից հեռանալ, առանց այնտեղ գոնե մի վստահելի, փորձված նավաստի թողնելու, պետք էր խուսափել բոլոր պատահականություններից:

Բայց որովհետև նավապետ Հուլը ստիպված էր իր հետ վերցնել ուժեղ նավաստիներ, ուստի և կամա թե ակամա «Պիլիգրիմը» հանձնեց Դիկ Սենդի խնամքին:

– Դիկ, – ասաց Նրան, – քեզ եմ հանձնում նավը իմ բացակայության միջոցին, որը, հույս ունեմ, կարճ կլինի:

– Լավ, պարո՞ն, – պատասխանեց պատանին:

Թեև Դիկ Սենդը ցանկանում էր մասնակցել այդ կետորսությանը, որը խիստ գրավում էր Նրան, բայց նա հասկացավ, որ, մի կողմից, հասակն առած մարդու բազուկն իրենից ավելի օգտակար կլիներ այդ գործում, իսկ մյուս կողմից՝ միայն ինքը կարող էր փոխարինել նավապետ Հուլին Նրա բացակայության միջոցին: Ուստի և հնազանդվեց:

Այդպիսով, մակույկի անձնակազմը բաղկացած էր հինգ հոգուց որոնց թվումն էր ավագ նավաստի Հովիկը: Նավաստիներից չորսը պետք է թիավարեին, իսկ Հովիկը պիտի գործածեր հետևամասի թիակը, որը ղեկի դեր է կատարում այդ ձևի մակույկներում: Կետորս մակույկի վրա սովորական ղեկը անմիջապես ազդեցություն չի թողնում արագ շարժումներ կատարելու դեպքում, իսկ երբ կողքի թիակները շարքից դուրս են գալիս, ապա ղեկային թիակը, հմտորեն շարժվելու դեպքում, կարող է մակույկը դուրս բերել հսկայի հարվածի շրջագծից:

Մնում էր նավապետ Հուլը: Նա իր վրա էր վերցրել եռաժանին գործածելը և, ինչպես ասել էր, առաջին անգամը չէր, որ գործածում էր այդ գենքը: Նա պետք է ամենից առաջ նետեր եռաժանին, ապա հետևեր Նրա ծայրին կապված երկար պարանի քանդվելուն և, վերջապես, Նիզակի հարվածներով վերջ տար կենդանուն, եթե սա բարձրանար օվկիանոսի երեսը:

Կետորսները երբեմն հրազեն են գործածում այդպիսի որսորդությունների համար: Կետորս նավի կամ մակույկի վրա դրված հատուկ թնդանոթով արձակում են կա՛մ եռաժանիներ, որոնց ծայրին կապված է լինում մի պարան, և կա՛մ պայթուցիկ գնդակներ, որոնք մեծ վնաս են պատճառում կենդանու մարմնին:

Սակայն «Պիլիգրիմը» զուրկ էր այդպիսի հրազենից: Պետք է ասել, որ այդ հրանոթները թանկ արժեն, դժվար են գործածվում և կետորսները, որոնք այնքան

Էլ չեն սիրում նորությունները, ավելի գերադասում են նախնական ձևի զենքերը, այսինքն՝ եռաժանին և նիզակը, որ նրանք շատ վարժ էին գործածում:

Ուրեմն սովորական միջոցներով, այսինքն՝ սառը զենք գործածելով, նավապետ Հուլը պատրաստվում էր որսալ «Պիլիգրիմից» հինգ մղոն հեռավորության վրա գտնվող զուլավորին:

Եղանակը, ինչպես երևում էր, նպաստավոր կլիներ այդ որսորդության համար: Քամին մեղմանում էր, և «Պիլիգրիմը» աննշան կարող էր շեղվել իր ուղղությունից այն միջոցին, երբ նրա անձնակազմը զբաղված կլիներ բաց ծովում:

Առագաստանավի աջակողմյան մակույկը իջեցրին ծովը, և չորս նավաստիներին տեղավորեցին այնտեղ:

Հովիկը նրանց տվեց երկու եռաժանի, ինչպես նաև սրածայր երկու նիզակ: Հարձակման այդ զենքերին նա ավելացրեց ճկուն և պինդ պարանների հինգ մեծ կծիկ՝ յուրաքանչյուրը վեց հարյուր ոտնաչափ երկարությամբ: Երբ կծիկներից մեկը քանդվում, վերջանում էր, նրա ծայրին կապում էին երկրորդ կծիկը, հետո երրորդը և այդպես հաջորդաբար, սակայն պատահում էր, որ այդ կծիկները չէին բավարարում, այնքան խորն էր գնում կետը:

Դրանք էին այն զենքերն ու իրերը, որ տեղավորեցին մակույկի առաջամասում:

Հովիկն ու չորս նավաստիները հրամանի էին սպասում մակույկի պարանը քանդելու համար:

Մակույկում՝ առաջամասում, միայն մի ազատ տեղ կար, որը հատկացված էր նավապետ Հուլին:

Հասկանալի էր, որ «Պիլիգրիմի» անձնակազմը, նավից հեռանալուց առաջ, նավը ծփանքի դրեց, ուրիշ խոսքով, առագաստները սարքեցին այն ձևով, որ միմյանց հակազդելով՝ առագաստանավը պահեն գրեթե անշարժ վիճակում:

Առագաստանավից հեռանալու րոպեին նավապետ Հուլը մի վերջին հայացք գցեց նրա վրա ու տեսավ, որ ամեն ինչ կարգին էր, պարանները լավ ձգված էին, առագաստները ճիշտ դասավորված: Քանի որ պատանուն թողնում էր նավի վրա, և իր բացակայությունը կարող էր մի քանի ժամ տևել, նավապետը իրավացիորեն ցանկանում էր, որ Դիկ Սենդը ստիպված չլիներ, չհաշված արտակարգ դեպքերը, մանևրելու:

Մեկնելու րոպեին նավապետը պատանուն տվեց վերջին հրահանգները.

– Դիկ, – ասաց նրան, – քեզ մենակ եմ թողնում: Այն դեպքում, եթե զուլավորին հետապնդելիս մենք շատ հեռացած լինենք և կարիք լինի նավը շարժման մեջ դնել, Թոմը և նրա ընկերները կարող են լիովին քեզ օգնել: Դու նրանց կբացատրես, թե ինչ պետք է անել, և ես հույս ունեմ, որ նրանք կկատարեն քո ցուցումները:

– Այո, նավապետ Հուլ, – պատասխանեց ծերունի Թոմը, – Դիկ Սենդը կարող է վստահ լինել մեզ վրա:

– Հրամայեցե՛ք, հրամայեցե՛ք, – բացականչեց Բաթը: – Մենք այնքան մեծ ցանկություն ունենք օգտակար լինելու ձեզ:

– Ի՞նչը պետք է քաշել... – հարցրեց Հերկուլեսը՝ բաճկոնակի լայն թևերը վեր քաշելով:

– Առայժմ ոչինչ, – պատասխանեց Դիկ Սենդը ժպտալով:

– Միշտ պատրաստ եմ ձեզ ծառայելու, – ասաց հսկան:

– Դիկ, – շարունակեց նավապետ Հուլը, – եղանակը լավ է, քամին մեղմանում է, ինչպես երևում է՝ այլևս չի սաստկանա: Չմոռանա՛ս, ինչ էլ որ պատահի, մակույկը չես իջեցնի ծովը և առագաստանավից չես հեռանա:

– Հասկանալի է, նավապետ:

– Եթե անհրաժեշտ լինի, որ «Պիլիգրիմը» մոտենա մեզ, ես քեզ նշան կտամ՝ երկար ձողի ծայրին կապված դրոշակը շարժելով:

– Հանգիստ եղեք, նավապետ, ես աչքից չեմ հեռացնի կետորս նավակը, – պատասխանեց Դիկ Սենդը:

– Լավ, տղաս, – պատասխանեց նավապետ Հուլը: – Եղիր քաջ և սառնարյուն, դու այժմ նավապետի օգնական ես: Պատվով արդարացրու քո կոչումը, ոչ ոք դեռևս չի ստանձնել այդ պաշտոնը քո տարիքում:

Դիկ Սենդը չպատասխանեց, բայց շիկնեց և ժպտաց: Նավապետ Հուլը հասկացավ այդ կարմրելու և ժպտալու նշանակությունը:

«Հիանալի տղա է, – ասաց ինքն իրեն, – համեստություն և բարձր տրամադրություն, ահա ամբողջ Դիկը»:

Սակայն դատելով նավապետի ստիպողական հրահանգներից, պարզ էր, որ թեև ոչ մի վտանգ չէր սպասվում, այնուամենայնիվ, նավապետ Հուլը հոժարակամ չէր հեռանում առագաստանավից նույնիսկ մի քանի ժամով: Բայց կետորսի անդիմադրելի բնագոյր, մանավանդ ճարպի պաշարը լրացնելու և Վալպարեգոյում Ջեյմս Ուելդոնի ընդունած հանձնառությունից ցած չմնալու բուռն ցանկությունը նրան մղում էին այդ վտանգավոր գործին: Պետք է ասել, որ հանդարտ եղանակը շատ նպաստավոր էր կետին հետապնդելու համար: Ո՛չ նա, ո՛չ էլ նրա անձնակազմը չէին դիմանա այդպիսի գայթակղության: Կետորսության կամպանիան վերջապես հաջողությամբ կվերջանար, և այս նկատառումը ամենից ավելի էր գրավում նավապետ Հուլին:

Նավապետ Հուլը ուղղվեց դեպի պարանե ելարանը:

– Հաջողությո՛ւն, – ասաց նրան տիկին Ուելդոնը:

– Շնորհակալություն, տիկին Ուելդոն:

– Խնդրում եմ, շատ չցավեցնեք խեղճ կետին, – կանչեց փոքրիկ Ջեկը:

– Լա՛վ, տղա՛ս, – պատասխանեց նավապետ Հուլը:

– Չգուշությամբ բռնեցեք նրան, պարո՛ն:

– Այո... ձեռնոցներով, փոքրի՛կ Ջեկ:

– Երբեմն այդ մեծ կաթնասունների մեջքի վրա հետաքրքիր միջատներ են հավաքվում, – ասաց կուզեն Բենեդիկտը:

– Դե լավ, պարոն Բենեդիկտ, – պատասխանեց նավապետ Հուլը ծիծաղելով, – ձեզ իրավունք է տրվում «միջատորսություն» անել, երբ զուլավորը «Պիլիգրիմի» վրա կլինի:

Ապա, դառնալով Թոմին, ասաց.

– Թո՛մ, ես հույս ունեմ, որ դուք և ձեր ընկերները մեզ կօգնեք անդամահատելու կետին, երբ նրան կբերենք այստեղ, իսկ դա չի ուշանա:

– Պատրաստ ենք ձեզ ծառայելու, – պատասխանեց ծերունի նեգրը:

– Լավ, – պատասխանեց նավապետ Հուլը, – Դի՛կ, այս հիանալի մարդիկ քեզ կօգնեն դատարկ տակառները պատրաստելու գործում, մեր բացակայության միջոցին թող բարձրացնեն դրանք տախտակամածի վրա, այդպիսով՝ մեր աշխատանքը վերադառնալուց հետո կթեթևանա:

– Ձեր հրամանը կկատարվի, նավապե՛տ:

Կտորսությանն անծանոթ մարդկանց անհրաժեշտ է բացատրել, որ զուլավորին սպանելուց հետո պետք է քարշ տային մինչև «Պիլիգրիմը» և պարանով շատ ամուր կապեին նավի աջակողմին: Այնուհետև նավաստիները, պայտասեպերով ծածկված երկարավիզ կոշիկներ հագած, պիտի կանգնեին վիթխարի կենդանու կռնակին և նրան մասնատեին համաչափ կտորների, զուգահեռ շերտերով՝ սկսած գլխից դեպի պոչը: Այնուհետև այդ շերտերը պետք է կտրատեին մեկուկես ոտնաչափ մեծության կտորտանքների, ապա ավելի մանրացնելով՝ գետեղեին տակառների մեջ և ուղարկեին նավամբարի խորքը:

Ընդհանրապես կետորսությունը ավարտելուց հետո կետորս նավը շտապում է մոտենալ ափին, որպեսզի կարողանա վերջացնել կետի վերամշակումը: Նավի անձնակազմը ցամաք է ելնում և այնտեղ սկսում է հալեցնել ճարպը, որը ջերմության ազդեցության տակ դուրս է տալիս ամբողջ օգտագործելի մասը, այսինքն՝ յուղը:

Սակայն ներկա պայմաններում նավապետ Հուլը չէր կարող մտածել ետ դառնալու մասին, այդ գործողությունը վերջացնելու համար: Ճարպի այս լրացուցիչ մասը նա մտածում էր «հալել» Վալպարեգոյում միայն: Նկատի ունենալով, որ քամին, շատ չանցած, արևմտյան ուղղությամբ կփչեր, նավապետը հույս ուներ, որ ամերիկյան ափը կհայտնվեր դեռ քսան օր չանցած:

Մեկնելու ժամանակն էր: Ծփանքի դրվելուց առաջ «Պիլիգրիմը» մի քիչ մոտեցել էր ծովի այն կետին, որտեղ զուլավորը շարունակում էր ցույց տալ իր ներկայությունը ջրի և գոլորշու շատրվաններ ժայթքելով:

Չուլավորը շարունակում էր լողալ խեցգետինների ընդարձակ կարմիր շրջանում, բաց անելով լայն բերանը և ամեն անգամ անհաշիվ խեցգետիններ կուլ տալով:

Առագաստանավի փորձառուների կարծիքով, վտանգ չկար, թե զուլավորը կմտածեր փախչել: Ոչ մի կասկած չկար, թե դա ինչպես կետորսներն ասում են, «պայքարող» կետ լիներ:

Նավապետ Հուլը ցատկեց առագաստանավի կողի վրայով և, ցած իջնելով պարանե ելարանով, հասավ կետորս նավակի առաջամասը:

Տիկին Ուելդոնը, Ջեկը, կուզեն Բենեդիկտը, Թոմը և նրա ընկերները վերջին անգամ հաջողություն մաղթեցին նավապետին:

Նույնիսկ Դինգոն, կանգնելով հետևի թաթերի վրա և գլուխը նավեզրից դուրս հանելով, կարծես հրաժեշտ էր տալիս նավի անձնակազմին:

Այնուհետև բոլորը վերադարձան նավաքիթ, որպեսզի ավելի լավ հետևեն այդ որսի հետաքրքիր իրադարձություններին:

Կետորս մակույկը հեռացավ առագաստանավից և չորս թիակների ուժգին շարժումների շնորհիվ սկսեց հեռանալ «Պիլիգրիմից»:

— Լավ հսկիր, Դի՛կ, լավ հսկիր,— վերջին անգամ կանչեց նավապետ Հուլը պատանուն:

— Կարող եք վստահ լինել, նավապետ:

— Մի աչքդ առագաստանավի, մյուսը կետորս մակույկի վրա թող լինի, տղա՛ս. չմոռանա՛ս ասածս:

— Ձեր ասածը կկատարվի, նավապետ,— պատասխանեց Դիկ Սենդը՝ անցնելով դեկի մոտ:

Մակույկն արդեն մի քանի հարյուր ոտնաչափ հեռացել էր առագաստանավից: Նավապետ Հուլը, կանգնած առաջամասում, այլևս չկարողանալով լսելի լինել՝ շարունակում էր հրահանգներ տալ ձեռքի շարժումներով:

Այդ միջոցին Դինգոն, շարունակելով թաթերով հենվել նավեզրին՝ սկսեց ողբագին ծայնով կաղկանծել, մի բան, որը կարող էր վատ ազդել սնահավատ մարդկանց վրա:

Այդ հաչոցը սարսռեցրեց նույնիսկ տիկին Ուելդոնին:

— Դինգո՛, Դինգո՛,— ասաց նա,— մի՞թե այդպես ես քաջալերում քո բարեկամներին: Դե՛, հաչի՛ր ավելի հստակ, ավելի ուրախ:

Սակայն շունը այլևս չհաչեց և, իջնելով թաթերի վրա, դանդաղորեն մոտեցավ տիկին Ուելդոնին ու գուրգուրանքով լիզեց նրա ձեռքը:

— Դինգոն պոչը չի շարժում... — շնչաց Թոմը կիսածայն, — Վատ նշան է... վատ նշան:

Բայց այդ նույն րոպեին Դինգոն մեջքը բարձրացրեց և զայրացած մռնչոց արձակեց:

Տիկին Ուելդոնը գլուխը դարձրեց:

Նեգորոն դուրս էր եկել նավաստիների սրահից և ուղղվել էր դեպի նավաքիթը, ըստ երևույթին հայացքով հետևելու կետորս մակույկի շարժումներին:

Դինգոն վազեց դեպի նավի խոհարարը՝ ամենաբուռն և անբացատրելի կատաղությամբ լցված:

Նեգորոն վերցրեց մի լծակ և պաշտպանողական դիրք բռնեց:

Շունը պատրաստվում էր նրա կոկորդին ցատկել:

— Ե՛կ այստեղ, Դինգո՛, ե՛կ այստեղ,— կանչեց Դիկ Սենդը և, մի րոպե դիտակետից հեռանալով, վազեց դեպի այն կողմը:

Տիկին Ուելդոնը իր կողմից աշխատում էր հանգստացնել շանը:

Դինգոն հնազանդվեց, թեև դժկամությամբ, և խուլ մռլտալով մոտեցավ պատանուն:

Նեգորոն ոչ մի խոսք չէր ասել, սակայն դեմքը այլալվել էր մի րոպե: Լծակը դեն գցելով նա վերադարձավ իր խցիկը:

— Հերկուլե՛ս,— ասաց Դիկ Սենդը,— քեզ հանձնարարում եմ հատուկ ուշադրություն դարձնել այդ մարդուն:

— Ձեր ասածը կկատարվի,— պարզորեն պատասխանեց հսկան, սեղմելով սիգարիտը բռունցքը ի նշան հավանության:

Տիկին Ուելդոնը և Դիկ Սենդը նորից իրենց հայացքը հառեցին կետորս մակույկին, որը արագորեն առաջ էր շարժվում իր չորս թիակներով:

Այժմ նա մի փոքրիկ կետ էր ծովի վրա:

VIII. Չուլավորը

Որպես փորձառու կետորս, նավապետ Հուլը երբեք իր հույսը դիպվածի վրա չէր դնում: Չուլավորին որսալը դժվար գործ է: Նախազգուշական ոչ մի միջոցառում չպետք էր անտեսել, այդպես էլ եղավ:

Ամենից առաջ նավապետ Հուլը այնպես մանևրեց, որ մակույկը կետին մոտենար քամու հակառակ կողմից, որպեսզի ոչ մի աղմուկ չմատներ մակույկի մոտենալը:

Այդ նպատակով Հուլիկը կետորս մակույկը առաջ տարավ, հետևելով բավական երկար մի շրջագծի, որը հասցնում էր այն կարմիր շերտի սահմանին, ուր լողում էր զուլավորը: Այդպիսով կարելի էր շրջանցել նրան:

Այդ մանևրը կատարող ավագ նավաստին սառնարյուն ծովային էր և վայելում էր նավապետ Հուլի կատարյալ վստահությունը: Նրա կողմից չէր կարելի սպասել ոչ մի վարանում, ոչ մի անզգուշություն:

— Ուշադրություն, Հովի՛կ,— ասաց նավապետ Հուլը: — Պետք է փորձել հանկարծակիի բերել զուլավորին: Մեր ներկայությունը կհայտնենք այն րոպեին, երբ այնքան մոտենանք նրան, որ կարելի լինի շամփրել:

— Հասկանալի է, նավապետ,— պատասխանեց ավագ նավաստին: — Ես կշարունակեմ հետևել կարմիր շերտի շրջագծին, քամին միշտ հետևից ունենալով:

– Լավ, – ասաց նավապետ Հուլը: – Տղե՛րք, աշխատեցեք թիավարելիս չաղմկել:

Թիակները ինամքով փաթաթված՝ շարժվում էին համրորեն:

Մակույկը, վարպետությամբ ղեկավարվելով ավագ նավաստու կողմից, հասավ խեցգետինների լայն շերտին: Աջակողմի թիակները շարունակում էին խրվել կանաչ և հստակ ջրի մեջ, մինչդեռ ձախակողմի թիակները ցայտեցնում էին կարմիր հեղուկը, որը կարծես արյան կաթիլներից լիներ կազմված:

– Գինի և ջուր, – ասաց նավաստիներից մեկը:

– Այո, – պատասխանեց նավապետ Հուլը, – բայց մի ջուր, որը չի կարելի խմել, և մի գինի, որը չի կարելի կոնծել: Դե՛, տղե՛րք, չխոսենք և ուժ տանք թիակներին:

Կետորս մակույկը, որին ուղղություն էր տալիս ավագ նավաստին, անաղմուկ սահում էր գրեթե ճարպոտ ջրի վրա, կարծես յուղի շերտի վրա էր լողում:

Չուլավորը չէր շարժվում և կարծես չէր նշմարում մակույկը, որ շրջան էր գծում նրա շուրջը:

Այդպիսի շրջան անելով՝ նավապետ Հուլը անխուսափելիորեն հեռանում էր «Պիլիգրիմից», որը հետզհետե փոքրանում էր:

Ընդհանրապես տարօրինակ տպավորություն է թողնում այն երևույթը, երբ ծովի վրա առարկաները այնքան արագ փոքրանում են: Թվում է, թե այդ առարկաներին նայում են հեռադիտակի հակառակ կողմից: Տեսողական այդ պատրանքը բացատրվում է ըստ երևույթին նրանով, որ ընդարձակ տարածությունների վրա համեմատության կետերը բացակայում են: Այդպես էր նաև «Պիլիգրիմի» համար, որը տեսողությունից հեռանում ու փոքրանում էր և շատ ավելի հեռու էր թվում, քան իրականում կար:

Առագաստանավից հեռանալուց կես ժամ հետո նավապետ Հուլը և նավաստիները շրջանցել էին կետին, այդպիսով կենդանին գտնվում էր մակույկի և առագաստանավի միջև:

Ժամանակն էր ուրեմն մոտենալ ինչքան կարելի է քիչ աղմկելով: Գուցե կարելի լիներ ընդհուպ մոտենալ կենդանուն կողքից և մոտիկից շամփրել, նախքան նրա ուշքի գալը:

– Ավելի դանդաղ առաջացեք, տղե՛րք, – ասաց նավապետ Հուլը կիսաձայն:

– Ինձ թվում է, թե զուլավորը ինչ-որ բան զգաց, – պատասխանեց Հովիկը: – Այժմ նրա շնչառությունը ավելի թույլ է, քան մի քիչ առաջ էր:

– Լռություն, լռություն, – կրկնեց նավապետ Հուլը:

Հինգ րոպե հետո կետորս մակույկը ընդամենը մի պարանաչափ՝ երկու հարյուր մետր էր հեռու գտնվում զուլավորից:

Ավագ նավաստին, կանգնած մակույկի խելին, այնպես մանևրեց, որ կաթնասունին մոտենար նրա ձախ կողմից, սակայն մեծ ուշադրությամբ խուսափելով նրա վիթխարի պոչի հարվածի շրջագծի մեջ ընկնելուց, հարված, որը միանգամից կխորտակեր մակույկը:

Առաջամասում նավապետ Հուլը, կայուն դիրք ստանալու նպատակով, ոտքերը լայն բաց արած՝ բռնել էր զենքը, որով պատրաստվում էր տալ առաջին հարվածը: Կարելի էր վստահ լինել, որ նրա եռաժանին կխրվեր ջրի մեջ լողացող ճարպի գանգվածի մեջ:

Նավապետի կողքին, դուլի մեջ դրված էր հինգ կծիկներից մեկը, որի ծայրը պինդ ամրացած էր եռաժանու ծայրին և որին հաջորդաբար պիտի կցեին մնացած չորս կծիկները, եթե կետը շատ խորասուզվեր ջրի տակ:

— Պատրաստ եք, տղե՛րք,— շնչաց նավապետ Հուլը:

— Այո,— պատասխանեց Հովիկը, դեկային թիակը ամուր բռնելով իր լայն ձեռքերով:

— Մոտեցի՛ր, մոտեցի՛ր:

Ավագ նավաստին կատարեց հրամանը, և կետորս մակույկը կանգնեց կենդանու կողքին, հազիվ տասը ոտնաչափ հեռավորության վրա:

Կենդանին չէր շարժվում և կարծես քնած լիներ: Երբ կետի վրա հարձակվում են նրա քնած միջոցին, ավելի է հեշտանում գործը և հաճախ առաջին հարվածը մահացու է լինում:

— Այս անշարժությունը բավական զարմանալի է,— մտածում էր նավապետ Հուլը:— Կենդանին քնած չի երևում և սակայն... ինչ-որ բան կա այստեղ:

Այդ էր նաև ավագ նավաստու կարծիքը, որն աշխատում էր տեսնել կենդանու մյուս կողմը:

Բայց մտածելու ժամանակը չէր, այլ հարձակվելու:

Նավապետ Հուլը, եռաժանու ձողի մեջտեղից բռնելով, մի քանի անգամ շարժեց, ապահովելու համար հարվածի ճշտությունը, և ապա իր բազկի ամբողջ ուժով նետեց:

— Ե՛տ, ե՛տ,— գոչեց իսկույն և եթ:

Նավաստիները, թիավարելով մի մարդու նման, արագ շարժումով մակույկը ետ քաշեցին, կետի պոչի հարվածից խուսափելու համար:

Բայց այդ միջոցին ավագ նավաստու բացականչությունը բոլորին հայտնեց, թե ինչու զուլավորը այդքան երկար ժամանակ և տարօրինակ կերպով անշարժ էր մնում ծովի երեսին:

— Կետի ծա՛գ,— բացականչել էր Հովիկը:

Արդարև, եռաժանուց վիրավորվելով կետը գրեթե ամբողջովին դարձել էր կողի վրա, որի հետևանքով էլ երևաց նրա ծագը, որին կաթ էր տալիս:

Այդ պարագան նավապետ Հուլը քաջ գիտեր, դա ավելի էր դժվարացնում զուլավորին որսալու գործը: Պարզ էր, որ մայրը կպաշտպանվեր ավելի կատաղությամբ՝ թե՛ իրեն և թե՛ «փոքրիկին» փրկելու համար, եթե միայն այդպես կարելի է անվանել մի կենդանու, որի երկարությունն առնվազն վեց մետր էր:

Թեև սպասվում էր, որ զուլավորը անմիջապես կհարձակվի մակույկի վրա, սակայն այդ բանը տեղի չունեցավ, և կետորսները ստիպված չեղան կտրել եռաժանու պարանը, որպեսզի խույս տային կատաղած կենդանուց: Ընդհակառակն, ինչպես պատահում է հաճախ, կետը, հետևից ունենալով ձագին, նախ շեղակի խորասուզվեց ջրի տակ, այնուհետև, հսկա թռիչքով վեր բարձրանալով, մեծ արագությամբ սկսեց փախչել:

Բայց նախքան զուլավորի խորասուզվելը նավապետ Հուլը և ավագ նավաստին, երկուսն էլ ոտքի կանգնած, կարողացան տեսնել, հետևապես և գնահատել նրան:

Այդ զուլավորը, իսկապես, ամենամեծ կետերից էր: Գլխից մինչև պոչը նրա երկարությունը առնվազն քսանհինգ մետր կլիներ: Նրա թուփ դեղնավուն մորթը ծածկված էր ավելի թուփ բծերով:

Իսկապես, ափսոս կլիներ, որ գործը այդպես հաջող սկսվելուց հետո ստիպված լինեին հրաժարվել հարուստ որսից:

Հետապնդումը, ավելի շուտ, քարշ տալը, սկսվեց: Կետորս մակույկը, որի թիակները ջրից դուրս էին բարձրացվել, սլաքի նման սլանում էր, սահելով ալիքների վրայով:

Հովիկը այն պահում էր անշեղորեն՝ հակառակ նրա արագ և ահռելի տատանումներին:

Նավապետ Հուլը, աչքը որսից չհեռացնելով, անընդհատ կրկնում էր միևնույն խոսքերը.

— Ուշադիր եղիր, Հովի՛կ, ուշադիր եղիր:

Կարելի էր վստահ լինել, որ ավագ նավաստու աջալրջությունը ոչ մի րոպե չէր նվազի:

Սակայն, քանի որ կետորս նավակը սլանում էր համարյա կետի փախչելու արագությամբ, կծիկի թելը քանդվում էր այնպիսի արագությամբ, որ կարելի էր վախենալ, թե կբռնկվեր՝ մակույկի եզրին քսվելուց: Այդ պատճառով նավապետ Հուլը կծիկը թաց էր պահում դույլի ջրում:

Այսպես թե այնպես, զուլավորը ըստ երևույթին մտադիր չէր ո՛չ կանգ առնել, ո՛չ էլ փախուստի արագությունը չափավորել: Երկրորդ կծիկը գործադրության դրվեց, որը նույն արագությամբ քանդվեց:

Հինգ րոպե հետո պետք եղավ կապել երրորդ կծիկը, որը ջրի տակ գնաց:

Չուլավորը կանգ չէր առնում: Պարզ էր, որ եռաժանին չէր խրվել նրա մարմնի կարևոր գործարաններից մեկի մեջ: Պարանի թեքումից դատելով կարելի էր նույնիսկ եզրակացնել, որ կենդանին, փոխանակ ջրի երեսը բարձրանալու, ավելի խոր շերտերն էր սուզվում:

— Սատանան տանի,— բացականչեց նավապետ Հուլը,— այդ սրիկան կուլ կտա մեր հինգ կծիկներն էլ:

— Եվ մեզ շատ կհեռացնի «Պիլիգրիմից»,— պատասխանեց ավագ նավաստին:

– Այնուամենայնիվ, շնչելու համար ստիպված կլինի ջրի երեսը բարձրանալ, –
ասաց նավապետ Հուլը: – Կետը ծուկ չէ, նրան օդը այնքան անհրաժեշտ է, ինչքան
մարդուն:

– Նա անպայման շնչառությունը պահում է ավելի լավ փախչելու համար, –
ծիծաղելով ասաց նավաստիներից մեկը:

Իսկապես, կծիկը շարունակում էր քանդվել միևնույն արագությամբ: Երրորդ
կծիկին պետք եղավ կապել չորրորդը, մի բան, որ սկսեց անհանգստացնել
նավաստիներին, որոնք մեծ շահ էին սպասում այդ որսից:

– Չա՛ր սատանա, չա՛ր սատանա, – մրմնջում էր նավապետ Հուլը, – կյանքումս
այսպիսի բան չեմ տեսել, անիծյալ զոլավոր:

Վերջապես հինգերորդ կծիկը գործի դրվեց և արդեն կիսով չափ քանդվել էր, երբ
կարծես քանդվելը դանդաղեց:

– Լա՛վ է, լավ, – բացականչեց նավապետ Հուլը, – պարանը ավելի քիչ է ձգվում,
ուրեմն զոլավորը հոգնում է:

Այդ միջոցին «Պիլիգրիմը» մակույկից հինգ մղոն հեռու էր՝ նույն քամու տակ:

Նավապետ Հուլը, դրոշակը բարձրացնելով ձողի ծայրին, նշան արեց
առագաստանավին մոտենալ:

Գրեթե անմիջապես հետո նա կարողացավ տեսնել, թե ինչպես Դիկ Սենդը, Թոմի և
Նրա ընկերների օգնությամբ, այնպես դասավորեցին առագաստները, որպեսզի
քամին ընկնի նրանց մեջ:

Սակայն քամին թույլ էր և անկայուն. փչում էր կարճատև և ընդհատումներով:
Հավանորեն «Պիլիգրիմը» դժվարությամբ կմոտենար կետորս մակույկին, եթե
նույնիսկ հաջողվեր մոտենալ:

Այդ միջոցին, ինչպես նախատեսել էին, զոլավորը շնչելու համար բարձրացել էր
ջրի երեսը՝ եռաժանին առաջվա նման կողը խրված: Կենդանին համարյա անշարժ
էր՝ սպասելով ձագին, որը, ինչպես երևում է, ետ էր մնացել այդ խելահեղ վազքից:

Նավապետ Հուլը ուժեղացրեց թիավարումը մոտենալու համար զոլավորին և քիչ
հետո ընդհուպ մոտեցավ նրան:

Թիակներից երկուսը ջրից դուրս հանվեցին, և նավաստիներից երկուսը, ինչպես և
նավապետը, զինվեցին երկար նիզակներով, հարվածելու համար կենդանուն:

Հովիկը հմտորեն մանևրեց և պատրաստ էր իսկույն փոխելու մակույկի
ուղղությունը այն դեպքում, եթե կետը հանկարծ հարձակվեր նրա վրա:

– Ուշադրություն, – գոռաց նավապետ Հուլը: – Իզուր չհարվածեք. լավ նշան
բռնեցե՛ք, տղե՛րք, պատրա՞ստ ես, Հովիկ:

– Պատրաստ եմ, – պատասխանեց ավագ նավաստին, – սակայն ինձ
անհանգստացնում է այն երևույթը, որ, այդքան արագ փախուստից հետո,
կենդանին այժմ շատ հանգիստ է:

– Արդարև, Հովիկ. ինձ էլ կասկածելի է թվում այդ:

– Պետք է գգուշանալ:

– Այո, սակայն առաջանանք:

Նավապետ Հուլը հետզհետե ավելի էր հուզվում:

Մակույկը դարձյալ մոտեցավ: Չուլավորը տեղում շարժումներ էր անում. ձագը մոտը չէր և գուցե մայրը նրան էր փնտրում:

Հանկարծ զուլավորը պոչը թափահարեց և միանգամից երեսուն ոտնաչափ հեռացավ:

Մի՞թե նորից փախուստ կտար և մի՞թե պետք էր վերսկսել այդ անվերջ հետապնդումը ծովի վրա:

– Ուշադրություն, – գոչեց նավապետ Հուլը: – Կենդանին հիմա թափ է առնում, որպեսզի հարձակվի մեզ վրա: Դարձրո՛ւ մակույկը, դարձրո՛ւ:

Իսկապես, զուլավորը գլուխը դեպի մակույկն էր դարձրել: Ապա, վիթխարի լողաթևերը ջրին խփելով՝ առաջ նետվեց:

Ավագ նավաստին, որ սպասում էր այդ ուղղակի հարվածին, այնպես մանևրեց, որ զուլավորը անցավ մակույկի կողքով առանց նրան դիպչելու:

Նավապետ Հուլը և երկու նավաստիները նիզակի ուժգին հարվածներ տվեցին նրան, աշխատելով հարվածը կարևոր մասերից մեկին հասցնել:

Չուլավորը կանգ առավ և, արևախառը ջրի մի շատ բարձր շատրվան ցայտեցնելով՝ նորից դեպի մակույկը վերադարձավ և այս անգամ ահռելի ուժով հարձակվեց նրա վրա:

Նավաստիները պետք է աննկուն բնավորության տեր լինեին, որպեսզի այս դեպքում իրենց գլուխը չկորցնեին:

Հովիկն այս անգամ ևս կարողացավ խուսափել զուլավորի հարվածից՝ մակույկը հակառակ կողմը դարձնելով:

Ճիշտ ժամանակին հասցված երեք նոր հարվածներ կրկին երեք նոր վերք բացեցին կենդանու մարմնի վրա: Բայց անցնելիս, կետը իր ահեղ պոչով այնպես հարվածեց ջրին, որ մի հսկա ալիք բարձրացավ, կարծես թե ծովը հանկարծ բացվեց:

Քիչ էր մնացել կետորս մակույկը շուռ գար, իսկ ջուրը մակույկի եզերքից ներս թափվելով կիսով չափ լցրեց այն:

– Դո՛ւյրը վերցնել, դո՛ւյրը, – բացականչեց նավապետ Հուլը:

Երկու նավաստի թիակները թողած՝ սկսեցին արագ-արագ մակույկը դատարկել, այդ միջոցին նավապետը կտրեց պարանը, որն այլևս անօգուտ էր:

Ո՛չ. ցավից կատաղած կենդանին այլևս չէր մտածում փախուստ տալ: Իր հերթին հարձակման էր անցել, և մահամերձ վիճակում ևս սոսկալի կլիներ:

Երրորդ անգամ զուլավորը ուղիղ մակույկի դեմ կանգնեց և նորից հարձակվեց նրա վրա:

Բայց այս անգամ կետորս մակույկը, կիսով չափ ջրով լցված, այլևս չէր կարողանում հեշտությամբ շարժվել: Այդպիսի պայմաններում ինչպե՞ս կարող էր խուսափել սպառնացող հարվածից: Եթե չէր կարողանում շարժվել, առավել ևս չէր կարող փախուստ տալ:

Բացի դրանից, ինչքան էլ որ մակույկը կարողանար արագ շարժվել, ավելի արագաշարժ զուլավորը մի քանի ոստյունով կհասներ նրան: Այժմ պետք էր մտածել ոչ թե հարձակվելու, այլ պաշտպանվելու մասին:

Նավապետ Հուլը գիտակցում է դրության լրջությունը:

Կենդանու երրորդ հարձակումը կարելի չէր դադարեցնել ետ մղել: Մակույկի կողքով անցնելիս զուլավորը նրան խփեց մեջքի հսկա լողաթևով և այնպիսի ուժով, որ Հովիկը վայր ընկավ նստարանից:

Երեք հարված, որոնք, դժբախտաբար, վրիպեցին մակույկի տատանման պատճառով, այս անգամ չհասան իրենց նպատակին:

– Հովի՛կ, Հովի՛կ, – բացականչեց նավապետ Հուլը՝ ինքն էլ հագիվ կարողանալով ոտքի վրա մնալ:

– Այստեղ եմ, նավապե՛տ, – պատասխանեց ավագ նավաստին՝ ոտքի կանգնելով:

Բայց նա նկատեց, որ վայր ընկնելիս դեկի թիակը մեջտեղից ջարդվել էր:

– Ուրիշ թիակ վերցրո՛ւ, – ասաց նավապետ Հուլը:

– Կատարված է, – պատասխանեց Հովիկը:

Այդ միջոցին ինչ-որ շարժում նկատվեց ջրի տակ՝ մակույկից շատ քիչ հեռավորության վրա:

Չուլավորի ծագն էր այդ, որ երևաց ծովի երեսին: Մայրը տեսավ և շտապեց նրան հասնել:

Այդ հանգամանքը է՛լ ավելի էր սաստկացնում տեղի ունեցող պայքարը: Չուլավորը պետք է կռվեր երկուսի համար:

Նավապետ Հուլը նայեց «Պիլիգրիմի» կողմը՝ մոլեգևորեն շարժելով ձողի ծայրին կապած դրոշակը:

Ի՞նչ կարող էր անել Դիկ Սենդը, բացի այն, ինչ որ արել էր նավապետի առաջին կոչի վրա: «Պիլիգրիմի» առագաստները դասավորված էին, և քամին սկսել էր ուռեցնել դրանք: Դժբախտաբար, առագաստանավը պտուտակ չուներ, որով կարելի լիներ արագացնել երթը: Ի՞նչ անել: Ջուրն իջեցնել մի մակույկ և նեգրերի օժանդակությամբ նավապետին օգնության գնալ՝ ժամանակի մեծ կորուստ կլիներ, բացի դրանից, պատանուն արգելված էր նավից հեռանալ, ինչ էլ որ պատահեր: Սակայն Դիկը ծովն իջեցրեց ետնակողմի մակույկը, նավի հետևից քաշելով այն, որպեսզի կարիքի դեպքում նավապետը և նավաստիները կարողանային նստել այնտեղ:

Այդ միջոցին զուլավորը, իր մարմնով պաշտպանելով ձագին՝ կրկին հարձակման էր անցել: Այս անգամ նա այնպես շարժվեց, որ ուղղակի մակույկին հարվածի:

– Ուշադրություն, Հովի՛կ, – վերջին անգամ գոռաց նավապետ Հուլը:

Բայց ավագ նավաստին, այսպես ասած, զինաթափ էր եղել: Դեկային երկար թիակի փոխարեն, որի ուժը մեծ էր, նրա ձեռքում այժմ կար միայն մի կարճ թիակ:

Նա փորձեց փոխել մակույկի ուղղությունը: Բայց չհաջողվեց:

Նավաստիները հասկացան, որ կորած են: Բոլորը ոտքի կանգնեցին և սոսկալի ճիչ բարձրացրին, որը գուցե լսվեց «Պիլիգրիմի» վրա:

Հրեշի պոչի ահռելի հարվածը մակույկին կպավ տակից:

Անդիմադրելի ուժով օդ բարձրանալով՝ մակույկը, երեք մասի բաժանված, ընկավ կատաղորեն միմյանց խփող ալիքների մեջ:

Դժբախտ նավաստիները թեև ծանր վիրավորված էին, բայց գուցե դեռևս ուժ ունենային դիմանալ լողալով կամ կառչելով ծովի երեսին ծփացող որևէ բեկորի:

Այդպես էլ արեց նավապետ Հուլը, որը ավագ նավաստուն մի րոպե բարձրացրեց մի բեկորի վրա...

Սակայն զուլավորը, ծայր աստիճան գազազած, ետ դարձավ, թռիչք գործեց և, գուցե մահամերձի վերջին շղաճգություններով, պոչով ահռելիորեն խփեց ջրին, որի մեջ այդ դժբախտ մարդիկ լողում էին դեռևս:

Մի քանի րոպե երևում էր միայն ջրային մի թաթառ, որը ցիրուցան էր լինում այս ու այն կողմ:

Քառորդ ժամ հետո, երբ Դիկ Սենդը, նեգրերի ուղեկցությամբ մակույկի մեջ նետվելով աղետի վայրը հասավ, ոչ մի կենդանի մարդ չկար: Արևաներկ ջրի երեսին լողում էին միայն մակույկի մի քանի բեկորներ:

IX. Նավապետ Սենդը

Առաջին տպավորությունը, որ ունեցան «Պիլիգրիմի» ուղևորները այս ահռելի աղետը տեսնելով, վշտի ու սարսափի խառնուրդ էր: Սրանց միտքը տարված էր միայն նավապետ Հուլի և հինգ նավաստիների զարհուրելի մահով: Այդ սոսկալի տեսարանը տեղի էր ունեցել գրեթե նրանց աչքի առաջ, և նրանք չէին կարողացել օգնության հասնել: Նրանք չկարողացան նույնիսկ ժամանակին հասնել, վերցնելու համար կետորս մակույկի անձնակազմին, իրենց դժբախտ, վիրավոր, բայց դեռևս կենդանի ընկերներին և «Պիլիգրիմի» պատյանը հակադրելու զուլավորի ահարկու հարվածներին: Նավապետ Հուլը և նրա նավաստիները անվերադարձ կորել էին:

Երբ առագաստանավը հասավ աղետի վայրը, տիկին Ուելթոնը ծունկի եկավ և ձեռքերը երկինք բարձրացրեց:

– Աղոթենք, – ասաց բարեպաշտ կինը:

Նրան միացավ փոքրիկ Ջեկը, որը հեծկլտալով ծունկի եկավ իր մոր կողքին: Խեղճ տղան ամեն ինչ հասկացել էր: Դիկ Սենդը, Նանը, Թոմը և մյուս նեգրերը կանգնած էին՝ գլուխները կախ: Բոլորը միասին կրկնեցին այն աղոթքը, որով տիկին Ուելդոնը դիմեց աստծուն, նրա անհուն բարությանը հանձնելով նրանց:

Ապա տիկին Ուելդոնը դարձավ իր ուղեկիցներին և ասաց.

– Իսկ այժմ, բարեկամներս, աստծուց ուժ և կորով խնդրենք մեզ համար:

Այո. նրանց մնում էր օգնություն խնդրել միայն նրանից, որին ապավինում էին, որովհետև դրությունը խիստ ծանր էր:

Այժմ առագաստանավը, որ նրանց տանում էր, այլևս չունեի ղեկավար նավապետ, ոչ էլ անձնակազմ նավագնացությունը շարունակելու համար: Այժմ այդ նավը գտնվում էր Խաղաղ օվկիանոսի ընդարձակ տարածության մեջ, ցամաքից հարյուրավոր մղոն հեռու, քամիներին և ալիքներին ենթակա:

Ի՞նչ ճակատագրական դիպված էր այդ կետին բերել «Պիլիգրիմի» ճանապարհի վրա: Ի՞նչ չար բախտ էր դրդել դժբախտ նավապետ Հուլին, որը սովորաբար այնքան զգույշ էր, ամեն ինչ վտանգել նավի բեռը լրացնելու համար: Կետի որսորդության տարեգրությունների մեջ եղել է այնպիսի մի աղետ, ինչպիսին սա էր, որը թույլ չտվեց կետորս մակույկի նավաստիներից և ոչ մեկին ազատել կորստից:

Այո, սուկալի ճակատագիր էր այդ:

Արդարև, այլևս ոչ մի ծովային չկար «Պիլիգրիմի» վրա:

Բայց ոչ. մեկը կար՝ Դիկ Սենդը, իսկ նա դեռևս պատանի էր, տասնհինգամյա մի երիտասարդ:

Նավապետ, ավագ նավաստի, հասարակ նավաստի. կարելի է ասել, որ նա այժմ պիտի փոխարիներ ամբողջ անձնակազմին:

Առագաստանավի վրա գտնվում էր մի ուղևորուհի, մի մայր իր տղայի հետ, որոնց ներկայությունը ավելի ևս դժվարացնում էր դրությունը:

Ճիշտ է, կային նաև նեգրերը, այդ հիանալի, քաջ և աշխատասեր մարդիկ, որոնք պատրաստ էին ենթարկվել իրենց նոր առաջնորդին, բայց նրանք էլ ոչ մի հասկացողություն չունեին ծովային գործի մասին:

Դիկ Սենդը, թևերը խաչածնած, կանգնել ու նայում էր այն կետին, որը կլանել էր նավապետ Հուլին, իր պաշտպանին, որի հանդեպ պատանին որդիական սեր էր տածում:

Ապա, հայացքը հառելով հորիզոնին՝ նա փորձում էր հայտնաբերել որևէ նավ, օգնություն կամ օժանդակություն խնդրելու կամ գոնե ապաստարան հայցելու տիկին Ուելդոնի համար:

Նա ոչ մի բոլոր չէր մտածում հեռանալ «Պիլիգրիմից», երբեք, ամեն ինչ կաներ առագաստանավը որևէ նավահանգիստ հասցնելու համար: Սակայն, եթե տիկին Ուելդոնը և նրա փոքրիկ որդին ապահով վիճակում լինեին, նա այլևս անհանգիստ չէր լինի նրանց համար, ում նվիրված էր հոգով և մարմնով:

Օվկիանոսն ամայի էր: Չուլավորի անհետանալուց հետո ոչինչ չէր երևացել ջրի երեսին: Միայն երկինքն ու ջուրն էին «Պիլիգրիմի» շուրջը: Դիկ Սենդը շատ լավ գիտեր, որ գտնվում է առևտրական նավերի սովորական ճանապարհից դուրս, իսկ մյուս կետորս նավերը, զբաղված լինելով կետորսությամբ, դեռևս շատ հեռու էին նավարկում:

Սակայն պետք էր վտանգին նայել առանց այլալվելու և իրերը ընդունել այնպես, ինչպես կային: Այդպես էլ արեց Դիկ Սենդը, սրտի խորքից օգնություն և աջակցություն խնդրելով աստծուց:

Ի՞նչ որոշում պետք է ընդուներ:

Այդ միջոցին Նեգորոն երևաց կամրջակի վրա, որտեղից հեռացել էր աղետից հետո: Թե ինչ էր զգացել անդարմանելի աղետի առաջ այդ հանելուկային մարդը, ոչ ոք չէր կարող ասել: Նա աղետին ակնատես էր եղել առանց որևէ շարժում անելու, շարունակելով մնալ համր, ինչպես միշտ: Նա մեծ հետաքրքրությամբ հետևել էր բոլոր մանրամասնություններին: Բայց եթե այդ րոպեին որևէ մեկի մտքից անցներ ուշադրությամբ դիտել նրան, առնվազն կգարմանար, որ նրա անդրդվելի դեմքի ոչ մի մկանը չէր շարժվել: Համենայն դեպս, ձևացնելով, թե ոչինչ չլսեց, նա չէր պատասխանել տիկին Ուելդոնի բարեպաշտ կոչին՝ աղոթելու ծովի հատակը գնացած անձնակազմի համար:

Նեգորոն գնաց դեպի նավախելը, որտեղ անշարժ կանգնած էր Դիկ Սենդը: Մոտենալով նրան՝ նա կանգնեց պատանուց երեք քայլի վրա:

— Ցանկանում եք խոսել՞ ինձ հետ,— հարցրեց Դիկ Սենդը:

— Ես ուզում եմ խոսել նավապետ Հուլի հետ,— պատասխանեց սառնորեն Նեգորոն,— իսկ եթե նա չկա, ավագ Հովիկի հետ:

— Դուք լավ գիտեք, որ երկուսն էլ կորան,— բացականչեց պատանին:

— Իսկ ո՞վ է այժմ հրամայում նավի վրա,— լրբորեն հարցրեց Նեգորոն:

— Ես,— պատասխանեց պատանին, առանց վարանելու:

— Դո՞ւք,— ասաց Նեգորոն, ուսերը վեր քաշելով:— Տասնհինգամյա նավապետ՞:

— Այո, տասնհինգամյա նավապետ,— պատասխանեց պատանին առաջանալով դեպի խոհարարը:

Վերջինս ընկրկեց:

— Չմոռանաք,— ասաց այդ միջոցին տիկին Ուելդոնը:— Միայն մի նավապետ կա այստեղ... նավապետ Սենդը, և լավ կլինի, եթե բոլորն էլ նկատի ունենան, որ նա կկարողանա ամենքին էլ հնազանդեցնել:

Նեգորոն գլուխը խոնարհեց՝ հեզկորեն ինչ-որ անհասկանալի բառեր շշնջալով և ապա վերադարձավ իր տեղը:

Այսպես ուրեմն, Դիկի որոշումը կայացել էր:

Այդ միջոցին առագաստանավը ուժեղացող քամուց արդեն անցել էր խեցգետինների ընդարձակ շերտը:

Դիկ Սենդը զննեց առագաստների վիճակը: Այնուհետև հայացքը իջեցրեց տախտակամածին: Պատանին զգում էր, թե ինչպիսի՞ ծանր պատասխանատվություն էր ընկնում իր վրա, և նա պետք է բավական ուժ ունենար այն ընդունելու համար: Նա համարձակվեց նայել «Պիլիգրիմի» ուղևորներին, որոնց աչքերն այժմ իրեն էին հառած: Եվ նրանց հայացքում կարդալով, որ ինքը կարող էր հույս դնել այդ մարդկանց վրա, պատանին երկու խոսքով նրանց ասաց, թե իրենց հերթին նրանք ևս կարող էին վստահել իրեն:

Դիկ Սենդը մեծ անկեղծությամբ քննել էր իր խիղճը:

Եթե նա ընդունակ էր պարզել կամ իջեցնել նավի առագաստները, նայած կլիմայական պայմաններին, օգտվելով Թոմի ու նրա ընկերների օժանդակությունից, ապա նա գիտակցում էր, որ դեռևս բավականաչափ անհրաժեշտ գիտելիքներ չունեի հաշիվներ անելու և նավի աշխարհագրական տեղը որոշելու համար:

Չորս կամ հինգ տարի հետո Դիկ Սենդը խորապես ուսումնասիրած կլիներ ծովայինի գեղեցիկ և դժվար գործը: Նա սովորած կլիներ գործածել սեքստանտը, այն գործիքը, որը ամեն օր ձեռքի տակ ուներ նավապետ Հուլը և որի միջոցով դիտում էր աստղերի բարձրությունը: Քրոնոմետրի վրա կկարողանար կարդալ Գրինվիչի միջօրեականի ժամը և այդպիսով կարող կլիներ որոշել երկարության աստիճանը: Արևը նրա ամենօրյա խորհրդականը կլիներ: Լուսինը, մոլորակները նրան կասեին. «Ահա այստեղ, օվկիանոսի այս կետում է գտնվում քո նավը»: Երկնակամարը, որի վրա աստղերը շարժվում են ինչպես անսխալ ժամացույցի սլաքները, որին ոչ մի ցնցում չի կարող խանգարել և որի ճշտությունը բացարձակ է, այդ երկնակամարը նրան ցույց կտար ժամերն ու հեռավորությունները: Աստղագիտական դիտումներով նա կիմանար, ինչպես անում էր ամեն օր իր նավապետը, «Պիլիգրիմի» աշխարհագրական դիրքը՝ մեկ մղոնի տարբերությամբ, ինչպես նաև անցած ու անցնելիք ճանապարհը:

Իսկ այժմ միայն մոտավոր հաշվով, այսինքն՝ լագի միջոցով և կողմացույցով նա իր ճանապարհը պիտի փնտրեր:

Սակայն Դիկը չընկճվեց:

Տիկին Ուելդոնը հասկացավ, թե ինչ էր կատարվում խիզախ պատանու հոգում:

— Շնորհակալություն, Դի՛կ, — ասաց նրան անհողորդ ծայնով: — Նավապետ Հուլը չկա: Ամբողջ անձնակազմը կորավ նրա հետ: Նավի բախտն այժմ քո ձեռքում է: Դի՛կ, կկարողանա՞ս փրկել նավը և նրա ուղևորներին:

— Այո, տիկին Ուելդոն, — պատասխանեց Դիկ Սենդը, — այո, ես այդ կփորձեմ անել:

— Թոմը և նրա ընկերները քաջ մարդիկ են, որոնց դու կարող ես միանգամայն վստահել:

— Ես գիտեմ, ես նրանց ծովայիններ կդարձնեմ, և մենք միասին կաշխատենք: Լավ եղանակին գործը հեշտ կլինի, իսկ վատ եղանակին... դե՛, ինչ արած, վատ եղանակին էլ մենք կպայքարենք և ձեզ կփրկենք, տիկին Ուելդոն, ձեզ և ձեր փոքրիկ Ջեկին, բոլորիդ: Այո, ես զգում եմ, որ կլինեմ այդ:

— Իսկ այժմ, Դի՛կ, կարո՞ղ ես որոշել, որտեղ է գտնվում «Պիլիգրիմը», — հարցրեց տիկին Ուելդոնը:

– Հեշտությամբ,– պատասխանեց պատանին:– Բավական է նայել քարտեզին, որի վրա երեկ նշան դրեց նավապետ Հուլը:

– Եվ կկարողանա՞նք նավը ճիշտ ուղղության վրա պահել:

– Այո, կարող եմ դեպի արևելք ուղղվել, մոտավորապես դեպի ամերիկյան ափը, որին մենք պետք է մոտենանք:

– Սակայն, Դի՛կ,– շարունակեց տիկին Ուելդոնը,– դու, իհարկե, հասկանում ես, որ այս աղետը կարող է և նույնիսկ պետք է փոփոխի մեր նախնական մտադրությունը: Այլևս «Պիլիգրիմը» Վալպարեզո տանելու հարցը վերանում է: Ամերիկյան ափի ամենամոտիկ նավահանգիստը կլինի այժմ մեր գնալիք վայրը:

– Անկասկած, տիկին Ուելդոն,– պատասխանեց պատանին:– Ուստի և վախենալու ոչինչ չկա: Ամերիկյան այս ափը բավականաչափ տարածվում է դեպի հարավ, և մենք անպայման կհասնենք նրան:

– Որտե՞ղ է գտնվում այդ ափը,– հարցրեց տիկին Ուելդոնը:

– Ահա այս ուղղությամբ,– պատասխանեց Դիկ Սենդը՝ մատով արևելքը ցույց տալով և կողմնացույցի միջոցով ստուգելով:

– Այսպես ուրեմն, Դիկ, Վալպարեզո կհասնենք, թե ծովափի մի ուրիշ կետի, միևնույն է, բավական է, որ հասնենք:

– Եվ կհասնենք, տիկին Ուելդոն, ես ձեզ կհասցնեմ ապահով վայր,– պատասխանեց պատանին վստահ ձայնով:– Բացի դրանից, ցամաքին մոտենալով հանդերձ ես չեմ հրաժարվի այն հույսից, որ կպատահենք ծովափի երկարությամբ նավարկող որևէ նավի: Տեսեք, տիկին Ուելդոն, սկսվում է հյուսիսարևելյան քամին: Աստված տա այդպես շարունակվի. մենք արագ, շատ արագ առաջ կգնանք: Մենք կպարզենք մեր բոլոր առագաստները:

Դիկ Սենդը խոսում էր այն ծովայինի վստահությամբ, որն իրեն տեր է զգում նավի վրա: Նա պատրաստվում էր անցնել դեկի առաջ և կանչել իր ընկերներին, առագաստները նպատակահարմար կերպով պարզելու համար, սակայն տիկին Ուելդոնը նրան հիշեցրեց, որ նախքան այդ, նա պետք է իմանար «Պիլիգրիմի» աշխարհագրական դիրքը:

Իսկապես որ դա առաջնահերթ խնդիր էր: Դիկ Սենդը նավապետի սենյակից վերցրեց քարտեզը, որի վրա նշված էր նախորդ օրվա տեղը: Նա տիկին Ուելդոնին կարողացավ ցույց տալ, որ առագաստանավը գտնվում է հարավային լայնության 43° 35' և արևմտյան երկարության 144° 13' տակ, քանի որ վերջին քսանչորս ժամվա ընթացքում նավը, կարելի է ասել, տեղից չէր շարժվել:

Տիկին Ուելդոնը կռացել էր քարտեզի վրա և դիտում էր մուգ ներկածը, որը ցամաք էր ներկայացնում ընդարձակ օվկիանոսի աջ կողմում: Հարավային Ամերիկայի ափն էր այդ, մի ընդարձակ պատվար, ընկած Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսների միջև, սկսած Հորն հրվանդանից մինչև Կոլումբիայի ծովափը: Դիտելով քարտեզը, որի վրա տարածվում էր մի ամբողջ օվկիանոս, այնպիսի տպավորություն էր ստացվում, թե «Պիլիգրիմի» ուղևորների համար հեշտ կլիներ տեղ հասնել: Այդպիսի պատրանքի է ենթարկվում ամեն ոք, ով ծանոթ չէ ծովային քարտեզների աստիճաններին: Եվ իսկապես, տիկին Ուելդոնին թվում էր, թե ցամաքը հենց այդտեղ իր աչքի առաջ էր, ինչպես երևում էր այդ թղթի վրա:

Մինչդեռ եթե այդ սպիտակ էջի վրա «Պիլիգրիմը» նկատվեր իր իսկական աստիճանով, ապա նա ինֆուզորիայից էլ փոքր կլիներ: Այդ մաթեմատիկական կետը, որ շոշափելի մեծությունն չունի, քարտեզի վրա կորած կլիներ այնպես, ինչպես իրականում «Պիլիգրիմը» կորած էր խաղաղ օվկիանոսի անհուն տարածության մեջ:

Սակայն Դիկ Սենդը չէր ենթարկվել տիկին Ուելլոնի տպավորությանը: Նա գիտեր, թե ինչքան հեռու էր ցամաքը, և նրա ու առագաստանավի միջև եղած տարածությունը հարյուրավոր մղոններով էր հաշվվում: Բայց և այնպես նա իր որոշումը կայացրել էր. նա չափահաս մարդ էր դարձել իր վրա ընկած պատասխանատվության տակ:

Գործելու ժամանակը հասել էր: Պետք էր օգտվել նպաստավոր հյուսիս-արևմտյան քամուց: Հակադիր քամուն հաջորդել էր բարեհաջող քամին, և երկնակամարի մի քանի փետրածև ամպերը ցույց էին տալիս, որ այդ եղանակը դեռևս որոշ ժամանակ կտևեր:

Դիկ Սենդը իր մոտ կանչեց Թոմին և նրա ընկերներին:

— Բարեկամներս, — ասաց նրանց, — մեր նավը բացի ձեզնից՝ ուրիշ նավաստի չունի. ես չեմ կարող մանևրել առանց ձեր օգնության: Դուք ծովայիններ չեք, սակայն ուժեղ ձեռքեր ունեք. օգտագործեք այդ ուժը ի սպաս «Պիլիգրիմին», և մեզ կհաջողվի ղեկավարել նավը: Մեր բոլորի փրկությունը կախված է այն բանից, որ կարգ ու կանոն լինի նավի վրա:

— Պարո՛ն Դիկ, — պատասխանեց Թոմը, — իմ ընկերները և ես ձեր նավաստիներն ենք: Բարի կամեցողությունը մեր կողմից չի պակասի, այն ամենը, ինչ որ կարելի է անել ձեր ղեկավարությամբ, կանենք:

— Լավ ասացիք, Թոմ, — ասաց տիկին Ուելլոնը:

— Այո, լավ ասացիք, — շարունակեց Դիկ Սենդը, — սակայն պետք է զգույշ լինել, ես առագաստները լրիվ չափով չեմ բարձրացնի, մեր գործը չփչացնելու համար: Արագությունը թող քիչ պակաս լինի, բայց ապահովությունն ավելի, այդ են հրամայում մեզ հանգամանքները: Ես ձեզ ցույց կտամ, բարեկամներս, թե ինչ պիտի անի ձեզնից յուրաքանչյուրը: Իսկ ես կկանգնեմ ղեկի առաջ այնքան ժամանակ, քանի դեռ ուժասպառ չեմ եղել: Ժամանակ առ ժամանակ մի քանի ժամվա քունը կվերականգնի իմ ուժերը: Բայց այդ մի քանի ժամերի ընթացքում ձեզնից մեկնումեկը պետք է փոխարինի ինձ: Թո՛մ, ես ձեզ ցույց կտամ, թե ինչպես պետք է առաջնորդվել կողմնացույցի օգնությամբ: Դժվար բան չէ, մի քիչ ուշադրություն, և դուք կսովորեք նավը պահել ճիշտ ուղղության վրա:

— Երբ ուզենաք, պարո՛ն Դիկ: — պատասխանեց ծերունի նեգրը:

— Լավ: — պատասխանեց պատանին, — մնացեք ինձ հետ, ղեկի մոտ, մինչև օրվա վերջը, եթե հոգնածությունից ուժասպառ լինեմ, դուք արդեն կարող կլինեք ինձ փոխարինել մի քանի ժամով:

— Իսկ ես, — ասաց փոքրիկ Ջեկը, — միթե ոչնչով չե՞մ կարող օգնել իմ բարեկամ Դիկին:

– Այո, սիրելի տղաս,– պատասխանեց տիկին Ուելլոնը՝ գրկելով երեխային,– քեզ կսովորեցնեն ղեկը կառավարել, և ես վստահ եմ. ինչքան ժամանակ որ դու լինես ղեկի առաջ, քամին նպաստավոր կլինի:

– Անկասկած, մայրի՛կ, անկասկած, խոստանում եմ, որ այդպես կլինի,– պատասխանեց փոքր տղան՝ ձեռքերը միմյանց խփելով:

– Այո,– ասաց պատանին՝ ծիծաղելով,– լավ աշակերտները լավ քամի կառաջացնեն, ինչպես ասում են հին ծովայինները:

Ապա խոսքն ուղղելով Թոմին և մյուս նեգրերին՝ ասաց.

– Բարեկամներս, պետք է բարձրացնել մեծ առագաստը. դուք կկատարեք այն, ինչ որ ձեզ կասեմ:

– Հրամայեցե՛ք, նավապե՛տ Սենդ,– պատասխանեց Թոմը,– հրամայեցե՛ք:

Ճ. Հաջորդ չորս օրերը

Այսպիսով, Դիկ Սենդը դարձավ «Պիլիգրիմի» նավապետը և, առանց ժամանակ կորցնելու, ձեռք առավ բոլոր անհրաժեշտ միջոցները նավի առագաստները պարզելու համար:

Պարզ էր, որ ուղևորները միայն մի բան էին ցանկանում, հասնել ամերիկյան ցամաքի որևէ նավահանգիստ, թեկուզ Վալպարեզոն չլիներ: Դիկ Սենդը նախ և առաջ որոշել էր ծանոթանալ, թե ինչ ուղղությամբ և ինչ արագությամբ էր դնում «Պիլիգրիմը», որպեսզի հաշվի միջինը: Դրա համար բավական էր ամեն օր քարտեզի վրա նշանակել անցած ճանապարհը, որը հնարավոր էր լազի և կողմնացույցի միջոցով: Բարեբախտաբար նավի վրա կար սլաքավոր և պտուտակավոր մի լազ, որը մեծ ճշտությամբ ցույց էր տալիս նավի արագությունը որոշ ժամանակի համար: Այդ օգտակար գործիքը, որի գործածությունը շատ հեշտ է, մեծ ծառայություն կարող էր մատուցել, և նեգրերը կարող էին կատարելապես այն գործածել:

Միայն հոսանքները կարող էին սխալներ առաջացնել: Մտտավոր հաշիվը բավական չէր այդ սխալից խուսափելու համար, միայն աստղագիտական դիտումները կարող էին այդ մասին ճշգրիտ գաղափար տալ: Դժբախտաբար պատանին դեռևս չէր սովորել այդպիսի դիտումներ անել:

Սկզբում Դիկ Սենդը մի րոպե մտածեց «Պիլիգրիմը» տանել Նոր Չելանդիա: Այդ ճանապարհը ավելի կարճ կլիներ, և նա այդպես էլ կաներ, բայց քամին, որ մինչ այդ հակառակ ուղղությամբ էր փչում, այժմ փոխվեց և նպաստավոր դարձավ: Այդպիսով, ավելի լավ էր դեպի Ամերիկա ուղղվել:

Իսկապես, քամու ուղղությունն ամբողջապես փոխվել էր և փչում էր հյուսիսարևմուտքից՝ ուժեղանալու հակումներ ցույց տալով: Պետք էր ուրեմն առիթից օգտվել և, ինչքան կարելի է, ավելի շատ առաջ գնալ:

Դիկ Սենդը որոշեց պարզել «Պիլիգրիմի» բոլոր առագաստները:

Երկկայմ առագաստանավի առաջակայմի վրա կա չորս քառակուսի առագաստ, իսկ մեծ կայմը, ընդհակառակն, ավելի քիչ առագաստ ունի, ընդամենը երկուսը:

Այդ երկու կայմերի միջև, առջևից նրանց պահող ձողերի վրա, կարելի է ավելացնել եռանկյունաձև առագաստների երեք շարք:

Վերջապես՝ առաջամասում, թեք կայմի վրա հաստատված են երեք առագաստներ:

Միջնակայմի և թեք կայմի առագաստները հեշտ է պարզել և հավաքել տախտակամածից, առանց ձողերի վրա բարձրանալու:

Ընդհակառակն, առաջակայմի առագաստների պարզելն ու հավաքելը ծովային արհեստի ավելի մեծ փորձառություն է պահանջում: Դրանք պարզելու համար անհրաժեշտ է բարձրանալ կայմի ձողերի և պարանների վրա, և ոչ միայն բարձրացնելու, այլև նրանց ծավալը փոքրացնելու համար: Այդ գործողության համար պետք է վազել պերտպարանների վրայով (դրանք ձողերի տակ կապված շարժական պարաններ են), աշխատել մեկ ձեռքով, մյուսով պարանին կառչելով, այս մանևրը դժվար և վտանգավոր է անվարժ մարդկանց համար: Չխոսելով կողերի և ողնուցի ցնցումների մասին, որոնք այնքան ավելի ուժեղ են լինում, ինչքան ավելի վեր է նավաստին բարձրանում կայմի վրա, մի քիչ ուժեղ քամու տակ թրթռացող առագաստները կարող են ծովը նետել նավաստուն: Այդպիսով, Թոմի և նրա ընկերների համար վտանգավոր գործողություն էր այդ:

Բարեբախտաբար, քամին չափավոր էր. ծովը դեռևս չէր ավելոծվել. նավի ցնցումներն ու տատանումները չափավոր էին:

Այն միջոցին, երբ Դիկ Սենդը, նավապետ Հուլի ազդանշանով, ուղղվել էր դեպի աղետի վայրը, «Պիլիգրիմի» առագաստներից պարզված էին միայն եռանկյունի առագաստը, առաջակայմի առագաստը և կայմահարթակի առագաստը: Որպեսզի կարողանար ավելի մոտիկից դրեյֆել, պատանուն մնում էր օգտագործել առաջակայմի առագաստը: Նեգրերը առանց դժվարանալու օգնել էին նրան՝ կատարելու այդ գործը:

Այժմ պետք էր առագաստները դասավորել քամու ուղղությամբ և, առագաստները լրացնելու համար, բարձրացնել հարթակայմի, մանրակայմի նետած և առագաստները, կայմակալների առագաստները:

– Բարեկամներս, – ասաց պատանին հինգ նեգրերին, – կատարեցեք իմ հրամանները, և ամեն ինչ լավ կգնա:

Դիկ Սենդը մնացել էր դեկի մոտ:

– Սկսե՛ք, – բացականչեց պատանին, – արձակե՛ք անկյունապարանը:

– Արձակե՛լ... – ասաց Թոմը, ոչինչ չհասկանալով այդ խոսքից:

– Այո, քանդեք, դուք ևս, Բա՛թ... արեք նույնը... ձգե՛ք... պնդացրե՛ք... դե՛, քաշե՛ք:

– Այսպե՛ս, – հարցրեց Բաթը:

– Այո, այդպես: Շատ լավ... դե՛, Հերկուլես... աշխուժացի՛ր:

Գուցե անխոհեմություն էր Հերկուլեսին ասել «աշխուժացի՛ր»: Հսկան, առանց գգալու, այնպես ուժգին քաշեց, որ քիչ էր մնացել կտրեր պարանը:

– Չէ՛, ոչ այդքան ուժեղ, – բացականչեց Դիկ Սենդը՝ ծիծաղելով: – Քիչ էր մնում կայմը տապալեիք:

– Իսկ ես թեթև քաշեցի, – պատասխանեց Հերկուլեսը:

– Լավ, ուրեմն այնպես արեք, իբր թե քաշում եք, այդքանն էլ բավական է... Լավ, թուլացրեք... Ձգե՛ք... Բաց թողեք ձեռքը... պնդացրեք... կապեք... այդպես... լավ...

Եվ առաջակայմի, որի ձախակողմյան թևերը թուլացրել էին, առագաստը դանդաղորեն շրջվեց:

Քամին ուռեցնելով առագաստները՝ մասամբ ավելացրեց նավի արագությունը:

Դիկ Սենդը մի քիչ թուլացրեց եռանկյունի առագաստների պարանները ու իր մոտ կանչելով նեգրերին՝ ասաց.

– Այս գործը կատարվեց, բարեկամներս, և լավ կատարվեց: Այժմ զբաղվենք մեծ կայմով: Բայց ոչինչ չջարդեք, Հերկուլես:

– Կաշխատեմ, – պատասխանեց հսկան՝ առանց դրանից ավելին խոստանալու:

Այս երկրորդ մանևրը բավական հեշտ եղավ: Առագաստածողի պարանը մեղմորեն թուլացնելով՝ ետևի կողմի առագաստը քամին ավելի նորմալ ընդունեց իր մեջ և նրա հզոր ազդեցությունը ավելացավ առջևի առագաստների ուժի վրա:

Այնուհետև նետածև առագաստը բարձրացրին բրիգանդենի վրա, և քանի որ նա պարզապես իջեցված էր, ապա մնում էր միայն քաշել առագաստածիզ պարանը և ամրացնել: Բայց Հերկուլեսը, ինչպես նաև նրա բարեկամ Ակտեոնը, չհաշված փոքրիկ Ջեկին, որը միացել էր նրանց, այնպիսի ուժով քաշեցին պարանը, որ ճախարակը միանգամից կտրվեց:

Երեքը միասին գետին տապալվեցին՝ բարեբախտաբար, առանց վնասվելու: Ջեկը հիացել էր:

– Ոչինչ, ոչինչ, – բացականչեց պատանին, – ժամանակավորապես կապեք երկու ծայրերը և նորից քաշեք, բայց ավելի կամաց:

Այս անգամ գործողությունը կատարվեց Դիկ Սենդի անմիջական հսկողությամբ: «Պիլիգրիմը» արդեն արագ ընթանում էր արևելքի ուղղությամբ, մնում էր միայն պահել այդ ուղղությունը: Դրանից հեշտ բան չկար, որովհետև քամին չափավոր էր, իսկ շեղումները երկյուղալի չէին:

– Լավ է, բարեկամներս, – ասաց պատանին: – Դուք լավ նավաստիներ կդառնաք՝ մինչև ուղևորության վերջանալը:

– Մենք հնարավորը կանենք, նավապետ Սենդ, – պատասխանեց Թոմը:

Փոքրիկ Ջեկն էլ մասնակից եղավ գովասանքին, քանի որ այնքան լավ էր աշխատել:

Տիկին Ուելդոնը նույնպես գովաբանեց այդ հիանալի մարդկանց:

– Ինձ թվում է նույնիսկ, պարո՞ն Ձեկ, – ասաց Հերկուլեսը ծիծաղելով, – որ դուք ջարդեցիք ճախարակը, ինչպիսի՞ գեղեցիկ, փոքրիկ բռունցք ունեք դուք. առանց ձեզ մենք ոչինչ չէինք կարող անել:

Փոքրիկ Ձեկը, խիստ հպարտ զգալով իրեն, պինդ սեղմեց իր բարեկամի՝ Հերկուլեսի ձեռքը:

Սակայն «Պիլիգրիմի» առագաստները լրիվ չէին պարզված, դեռևս մնում էին բարձրի առագաստները, որոնց նշանակությունը չէր կարելի աչքաթող անել կողմնակի ուժեղ քամու դեպքում: Հորիզոնակայմերը, մանրակայմերը, նեցուկային առագաստները, այդ բոլորը զգալիորեն կավելացնեին նավի արագությունը, ուստի Դիկ Սենդը որոշեց դրանք ևս բարձրացնել:

Այդ մանևրն ավելի դժվար կլիներ, քան նախորդները. եթե ներքևի առագաստները կարելի էր պարզել նավի տախտակամածից, ապա մինևույնը չէր կարելի անել վերևի առագաստների համար. դրանց պարզելը պահանջում էր բարձրանալ կայմի ծայրը, և Դիկ Սենդը, չցանկանալով վտանգի ենթարկել անփորձ անձնակազմին, ինքն զբաղվեց այդ գործով:

Կանչելով Թոմին իր մոտ՝ նրան հանձնեց դեկանիվը, ցույց տալով, թե ինչպես պետք է պահել նավի ուղղությունը: Այնուհետև Հերկուլեսին, Բաթին, Ակտոնին և Օստինին կանգնեցնելով իրենց տեղերը, երկուսին առագաստածիգ պարանների մոտ, մյուսներին՝ բռնառագաստների մոտ, ինքը բարձրացավ կայմի վրա: Պատանին շատ հեշտությամբ մագլցեց առաջակայմի կայմակների պարանե աստիճաններով, կայմահարթակի պարանե աստիճաններով և հասավ կայմածողերին: Մի րոպեում նա հասավ բռնառագաստածողի պատվանդանին և թուլացրեց առագաստը ամրացնող կապերը:

Այնուհետև կրկին բարձրացավ ձողերի վրա, մագլցեց առագաստածիգ պարաններով և արագորեն թուլացրեց առագաստը:

Դիկ Սենդը ավարտել էր իր գործը, ուստի, բռնելով ձախակողմի երկար պարաններից մեկը, սահեց և իջավ տախտակամածի վրա:

Այնտեղ նրա հրահանգներով երկու առագաստները լավ ամրացրին, այնուհետև երկու առագաստակալները բարձրացրին միանգամից: Որից հետո կայմակողերի առագաստները պարզելով մեծ կայմի և առաջակայմի միջև՝ այդ գործողությունն էլ ավարտվեց:

Հերկուլեսը ոչինչ չէր ջարդել այս անգամ:

«Պիլիգրիմի» բոլոր առագաստներն այժմ պարզվել էին կայմերի վրա: Կասկած չկա, որ Դիկ Սենդը կարող էր բարձրացնել նաև աջակողմյան կայմակողերի առագաստները, սակայն այդ գործողությունն ավելի դժվար կլիներ ներկա կայմաններում, և եթե կարիք լիներ հավաքել եղանակի վատանալու դեպքում, ապա՝ դժվար կլիներ կատարել պահանջված արագությամբ: Ուստի պատանին այդքանով բավարարվեց:

Դրանից հետո Թոմը իրավունք ստացավ հեռանալ դեկի մոտից, և Դիկ Սենդը գրավեց իր տեղը:

Քամին ուժեղանում էր: «Պիլիգրիմը» մի քիչ թեքված աջ կողին՝ արագ լողում էր, հետևից թողնելով հարթ հետք, որը վկայում էր առագաստանավի սահուն ընթացքը:

— Ահա այժմ լավ առաջ ենք գնում, տիկին Ուելդոն,— ասաց Դիկ Սենդը,— թող միայն աստված տևական դարձնի այս բարեհաջող քամին:

Տիկին Ուելդոնը սեղմեց պատանու ձեռքը: Այնուհետև վերջին ժամերի հուզումնալի ապրումներից հոգնած՝ քաշվեց իր խցիկը և թաղվեց մի տեսակ ծանր թմրության մեջ, որը չէր կարելի քուն անվանել:

Առագաստանավի նոր անձնակազմը մնաց տախտակամածի վրա, հսկելով նավի առաջամասում, պատրաստ լինելով կատարել Դիկ Սենդի հրամանները, այսինքն՝ փոխել առագաստների դիրքը՝ ըստ քամու փոփոխությունների: Բայց քանի դեռ քամին պահում էր միևնույն ուժն ու ուղղություն, ոչինչ չէր մտում անել:

Ինչ էր անում այդ միջոցին կուզեն Բենեդիկտը:

Կուզեն Բենեդիկտը զբաղված էր խոշորացույցի տակ ուսումնասիրելով մի հոդավոր, որը կարողացել էր, վերջապես, գտնել նավի վրա, մի հասարակ ուղղաթև, որի գլուխը կորչում էր նախակրծքի տակ, տափակ վերնաթևերով, կլոր որովայնով, բավական երկար թևերով, և պատկանում էր ամերիկյան ուտիճների տեսակին:

Նեգորոյի խոհանոցը տակնուվրա էր արել կուզեն Բենեդիկտը, մինչև որ գտել էր այդ թանկագին միջատը այն միջոցին, երբ խոհարարը պատրաստվում էր անխնա ճզմել դրան: Այդ բանը սաստիկ զայրացրել էր միջատաբանին, բայց Նեգորոն անուշադրության էր մտանել նրա զայրույթը:

Իսկ կուզեն Բենեդիկտը գիտե՞ր արդյոք, թե ինչպիսի փոփոխություն էր տեղի ունեցել նավի վրա՝ սկսած այն րոպեից, երբ նավապետ Հուլը և նրա նավաստիները սկսել էին զուլավորի չարաբաստիկ որսը: Իհարկե գիտեր: Նա նույնիսկ տախտակամածի վրա էր, երբ «Պիլիգրիմը» հասել էր կետորս մակույկի բեկորների մոտ: Ուրեմն առագաստանավի անձնակազմը կորել էր նրա աչքի առաջ:

Ենթադրել, թե այդ աղետը նրա վրա չէր ազդել, կնշանակեր նրան մեղադրել անսրտության մեջ: Ուրիշի հանդեպ առաջացող գուրք, որն ամեն մարդ զգում է, նա ևս անպայման զգացել էր: Նա նույնպես վշտանում էր այն ծանր դրության համար, որի մեջ ընկել էր իր զարմուհին: Նա մոտեցել և սեղմել էր տիկին Ուելդոնի ձեռքը, կարծես նրան ասելու համար. «Չվախենա՛ք, ես այստեղ եմ և միշտ ել կմնամ ձեզ մոտ»:

Այնուհետև կուզեն Բենեդիկտը վերադարձել էր իր խցիկը՝ անտարակույս, խորհելու այդ դժբախտ դեպքի հետևանքների և վճռական միջոցներ ձեռք առնելու մասին:

Սակայն ճանապարհին պատահել էր վերոհիշյալ ուտիճը: Եվ որովհետև նա հավակնություն ուներ հակառակ մի շարք միջատաբանների կարծիքին ապացուցել, թե ֆորասպենների տեսակին պատկանող և իրենց գույնով նշանավոր ուտիճները բոլորովին տարբերվում են իսկական ուտիճներից իրենց սովորություններով, ուստի, ուտիճը ամբողջովին կլանեց նրա ուշադրությունը, և կուզեն Բենեդիկտը րոպեապես մոռացավ, որ գոյություն ուներ «Պիլիգրիմի»

Նավապետ Հուլը, և որ այդ դժբախտ մարդը կորել էր իր անձնակազմի հետ միասին:

Նա տարվել էր միայն ուտիճով և այնպես էր տարվել, որ կարծես այդ զգվելի միջատը հազվագյուտ ոսկեբզեզ լիներ:

Առագաստանավի վրա կյանքը նորից ստացել էր իր սովորական ընթացքը, թեև ուղևորներից յուրաքանչյուրը դեռ երկար ժամանակ կմնար այնքան կսկծալի և անսպասելի հարվածի ազդեցության տակ:

Այդ օրը Դիկ Սենդը ուղղակի հազար կտոր եղավ, որպեսզի ամեն ինչ իր տեղը լինի, և կարողանա կանխել բոլոր անակնկալները: Նեգրերը նրան հնազանդվում էին մեծ ոգևորությամբ: Ամենակատարյալ կարգ ու կանոն էր տիրում «Պիլիգրիմի» վրա: Կարելի էր, ուրեմն, հուսալ, որ ամեն ինչ կընթանար անխափան:

Նեգորոն էլ իր հերթին այլևս չփորձեց խուսափել Դիկ Սենդի իշխանությունից: Թվում էր, թե նա լռելյայն ընդունել էր նրա հեղինակությունը: Առաջվա նման զբաղված լինելով իր նեղ խոհանոցում՝ շատ քիչ էր դուրս գալիս այնտեղից: Ի դեպ ասած՝ ամենափոքր օրինազանցության դեպքում, անհնազանդության առաջին իսկ նշանին, Դիկ Սենդը որոշել էր նրան բանտարկել նավամբարում մինչև նավագնացության վերջը: Պատանու առաջին իսկ նշանով Հերկուլեսը կբռներ խոհարարի վզակոթից: Երկար չէր տևի այդ գործողությունը: Այդ դեպքում Նանը, որ լավ խոհարար էր, կարող էր փոխարինել նրան: Ուրեմն Նեգորոն հասկացած պետք է լիներ, որ իր ներկայությունը անհրաժեշտ չէր, և, տեսնելով, որ իր վրա հսկողություն կար, այնպես արեց, որ դժգոհության ոչ մի առիթ չտա:

Քամին թեև շարունակում էր ուժեղանալ, սակայն մինչև մթնելը կարիք չեղավ որևէ փոփոխություն մտցնել «Պիլիգրիմի» առագաստների դասավորության մեջ: Առագաստանավի ամրապինդ նավասարքը, ինչպես նաև երկաթե սարքը, որը լավ վիճակում էր, թույլ էին տալիս նրան այդքան շատ առագաստներով դիմանալ ավելի ուժեղ քամուն իսկ:

Գիշերվա ընթացքում սովորաբար կրճատում են առագաստների ծավալը, հատկապես բարձրի առագաստներինը: Այդ արվում է որպես նախազգուշություն որևէ անսպասելի հողմ բարձրանալու դեպքում: Սակայն Դիկը չդիմեց այդ միջոցառմանը: Մթնոլորտային վիճակը ոչ մի վատ անակնկալ չէր նախագուշակում, բացի դրանից, պատանին որոշած լինելով այդ առաջին գիշերն անցկացնել նավի կամրջակի վրա, ցանկանում էր մոտիկից հետևել բոլոր իրադարձություններին: Եվ որովհետև առագաստանավը շատ արագ էր ընթանում, պատանին շտապում էր հասնել ավելի քիչ ամայի ափի:

Վերը ասվեց, որ լազը և կողմնացույցը միակ գործիքներն էին, որոնք կարող էր օգտագործել Դիկ Սենդը՝ մոտավորապես իմանալու համար «Պիլիգրիմի» անցած ճանապարհի երկարությունը:

Այդ օրվա ընթացքում պատանին լազը ծովը նետել տվեց յուրաքանչյուր կես ժամը մեկ և գրանցեց գործիքի ցուցումները:

Ինչ վերաբերում է կողմնացույցին, այդպիսիք երկու հատ էին նավի վրա. մեկը դրված էր կողմնացույցի արկղիկի մեջ, դեկը վարողի աջքի առաջ: Նրա նշատախտակը, ցերեկը լուսավորվելով օրվա լույսով, իսկ գիշերը երկու կողմնային ճրագների լույսով, ամեն րոպե ցույց էր տալիս նավի ուղղությունը:

Մյուս կողմնացույցը ամրացված էր այն խցիկի պատին, որտեղ առաջ ապրում էր նավապետ Հուլը: Այդպիսով, առանց սենյակից դուրս գալու, նա կարող էր միշտ հետևել, թե արդյոք տվյալ ուղղությունը ճշտությամբ պահվում է, թե ղեկի առաջ կանգնողը անփորձության կամ անհոգության հետևանքով շեղումներ չի՞ առաջացնում:

Հեռավոր նավագնացության պատկանող բոլոր նավերը գրեթե միշտ առնվազն երկու կողմնացույց ունեն, ինչպես նաև երկու քրոնոմետր: Անհրաժեշտ է համեմատել այդ երկու գործիքները միմյանց հետ, հետևապես՝ ստուգել նրանց ցուցումները:

Այդպիսով՝ «Պիլիգրիմը» բավականաչափ ապահովված էր այդ տեսակետից, և Դիկ Սենդը պատվիրեց իր մարդկանց հոգատարությամբ հետևել երկու կողմնացույցներին, որոնք իրեն այնքան անհրաժեշտ էին:

Եվ ահա, դժբախտաբար, փետրվարի 12-ի լույս 13-ի գիշերը, երբ պատանին հերթապահ էր և ղեկանիվի առաջ էր կանգնել, մի անսխորժ դեպք պատահեց: Նավապետի խցիկում պղնձե կեռիկից կախված կողմնացույցը պոկվելով ընկավ հատակին: Այդ նկատեցին միայն հաջորդ օրը:

Ինչպե՞ս պատահեց, որ կեռիկը պոկվեց, անբացատրելի էր: Կարող է պատահել, որ կեռիկը ժանգոտվել էր և առագաստանավի ուժեղ շարժումների հետևանքով պոկ գալով վայր ընկավ: Իսկապես ծովը ավելի ակտիվ էր եղել այդ գիշեր: Այսպես թե այնպես, կողմնացույցը ջարդվել էր և նորոգել հնարավոր չէր:

Դիկ Սենդը խիստ վրդովվեց: Այժմ նա ստիպված էր դիմել արկղիկի միակ կողմնացույցին: Ըստ երևույթին, երկրորդ կողմնացույցը ջարդվելու գործում ոչ ոք պատասխանատու չէր, սակայն այդ կորուստը կարող էր վատ հետևանքներ ունենալ: Ուստի պատանին բոլոր միջոցները ձեռք առավ, որպեսզի երկրորդ կողմնացույցը պաշտպանված լինի ամեն տեսակ արկածներից:

Մինչև այժմ, բացի այդ դեպքից, ամեն ինչ լավ էր ընթանում «Պիլիգրիմի» վրա:

Տիկին Ուելդոնը, տեսնելով Դիկ Սենդի սառնասրտությունը, նորից համակվեց վստահությամբ: Չի կարելի ասել, թե նա կորցրել էր հույսը և հուսահատվել:

Դիկ Սենդը աշխատանքն այնպես դասավորեց, որ ղեկի մոտ մնա գիշերվա ընթացքում: Նա ցերեկը քնում էր հինգ կամ վեց ժամ, և այդքանը բավական էր համարում, քանի դեռ իրեն հոգնած չէր զգում: Թոմը կամ նրա որդին՝ Բաթը, նրան փոխարինում էին ղեկանիվի մոտ և, շնորհիվ իր տված խորհուրդների, հետզհետե բավարար ղեկակալներ էին դառնում:

Հաճախ տիկին Ուելդոնը և պատանին գրուցում էին: Դիկ Սենդը հոժարակամ խորհրդակցում էր քաջարի և խելացի կնոջ հետ: Ամեն օր նա նավի քարտեզի վրա ցույց էր տալիս անցած ճանապարհը, որը հաշվում էր մոտավորապես, հիմնվելով նավի ուղղության և արագության վրա:

— Տեսեք, տիկին Ուելդոն, — կրկնում էր նա հաճախ, — այս նպաստավոր քամիներով մենք անպայման կհասնենք հարավային Ամերիկայի ծովափը: Ես չեմ ուզում այնդել, սակայն կարծում եմ, որ երբ մեր առագաստանավը ցամաք տեսնի, ապա, ուրեմն, հեռու չի լինի Վալպարեզոյից:

Տիկին Ուելդոնը չէր կասկածում, թե նավը ճիշտ ճանապարհի վրա էր գտնվում, մանավանդ, որ հետևից փչում էր հյուսիս-արևմտյան քամին: Բայց «Պիլիգրիմը»

դեռևս ինչքա՛ն հեռու էր թվում ամերիկյան մայրցամաքից: Ինչքա՛ն վտանգներ էին դեռևս սպասում նրանց, չհաշված եղանակի փոփոխություններից առաջացած վտանգները:

Ջեկը անհոգ, ինչպես իր տարիքի բոլոր երեխաները, վերսկսել էր սովորական խաղերը, վազելով տախտակամածի վրա, զվարճանալով Դինգոյի հետ: Նա անկասկած նկատում էր, որ Դիկն առաջվա նման իրենով չէր զբաղվում, բայց մայրը նրան հասկացրել էր, որ պետք էր պատանուն թողնել հանգիստ, որ նա ամբողջովին զբաղվի իր գործով: Փոքրիկ Ջեկը համակերպվել էր և այլևս չէր անհանգստացնում «Նավապետ Սենդին»:

Այդպես էր իրերի դրուբյունը առազաստանավում: Նեգրերը խելացիորեն կատարում էին իրենց աշխատանքը և օրեցօր ավելի վարժվում ծովային աշխատանքներին: Թոմը, բնականորեն, ավագ նավաստի էր, քանի որ մյուս չորս ընկերները հենց նրան կընտրեին այդ պաշտոնի համար: Նա էր ղեկավարում հերթափոխությունն այն ժամերին, երբ պատանին հանգստանում էր, իր հետ ունենալով իր որդի Բաթին և Օստինին, իսկ Ակտեոնն ու Հերկուլեսը հաջորդ հերթափոխին էին պատկանում Դիկ Սենդի ղեկավարության տակ: Այդ ձևով, երբ մեկը ղեկի մոտ էր կանգնում, մյուս երկուսը հսկում էին նավաքթում:

Թեև այս մասերում ծովն ամայի էր, և որևէ բախում սպասելի չէր, այնուամենայնիվ, պատանին խիստ աչալուրջ էր գիշերվա ժամերին: Երբեք չէր նավարկում առանց կողային երկու լապտերների, կանաչը աջ կողմում, կարմիրը՝ ձախում և խելացի էր վարվում:

Սակայն այն գիշերները, երբ Դիկ Սենդը ամբողջ ժամանակ անց էր կացնում ղեկանիվի մոտ, երբեմն անդիմադրելի ուժասպառություն էր զգում: Այդպիսի դեպքերում նրա ձեռքը աշխատում էր լոկ բնագոյով: Այդ հետևանք էր հոգնածության, որին, սակայն, նա չէր ուզում ուշադրություն դարձնել:

Եվ ահա այնպես պատահեց, որ փետրվարի 13-ի լույս 14-ի գիշերը, խիստ հոգնած լինելով, Դիկ Սենդը ստիպված եղավ մի քանի ժամ հանգստանալ, և ղեկանիվի մոտ նրան փոխարինեց ծերունի Թոմը:

Երկինքը ծածկված էր թանձր ամպերով, որոնք ցածրացել էին երեկոյան ցրտի ազդեցությամբ: Այդպիսով՝ շատ մուգ էր, և անկարելի էր որոշակի տեսնել բարձր առազաստները, որոնք կորչում էին խավարի մեջ: Հերկուլեսն ու Ակտեոնը հերթապահում էին նավաքթում:

Նավախելում կողմնացույցի արկղիկը թույլ լույս էր արձակում և մեղմորեն ճառագայթում ղեկի մետաղե անիվի վրա: Կողային նշանատու լապտերները լուսավորում էին նավից դեպի ծովն ընկած տարածությունը՝ տախտակամածը թողնելով խոր մթության մեջ:

Առավոտյան ժամը երեքի մոտ տեղի ունեցավ հիպնոսի երևույթ: Ծերունի Թոմը, աչքերը երկար ժամանակ սևեռած լինելով կողմնացույցի արկղիկի լուսավոր մի կետի, միանգամից կորցրեց տեսողության զգացողությունը և ընկավ կատարյալ թմրության մեջ:

Նա ոչ միայն ոչինչ չէր տեսնում, այլև, եթե նրան դիպչեին կամ ուժեղ կամթեին, հավանական է, որ ոչինչ չէր զգա:

Հետևապես չնկատեց, թե ինչպես մի ստվեր անցավ տախտակամածի վրայով:

Դա Նեգորոն էր:

Հասնելով նավախել, խոհարարը կողմնացույցի արկղիկի մեջ դրեց ինչ-որ ծանր բան, որը բռնել էր ձեռքում:

Այնուհետև, մի րոպե նայելով կողմնացույցի լուսավոր շրջանակին, հեռացավ առանց որևէ մեկից նկատվելու:

Եթե հաջորդ օրը Դիկ Սենդը նկատեր կողմնացույցի արկղի տակ դրած իրը, անկասկած իսկույն կվերցնէր այնտեղից:

Բանն այն է, որ Նեգորոյի դրած իրը երկաթի կտոր էր, որի ազդեցության տակ կողմնացույցը սխալ նշաններ սկսեց ցույց տալ: Մագնիսական սլաքը շեղվել էր և, փոխանակ ցույց տալու հյուսիս, ցույց էր տալիս հյուսիս-արևելք: Այդպիսով, առաջացել էր 45° անկյան շեղում:

Թոմը, գրեթե անմիջապես սթափվեց թմրությունից: Հայացքը հառեց կողմնացույցին... Նրան թվաց (և իսկապես այդպես պետք է թվար), որ «Պիլիգրիմը» ուղիղ ճանապարհի վրա չէր:

Թոմը մի շարժումով շրջեց դեկանիվը, որպեսզի նավի ուղղությունը վերադարձնի դեպի արևելք: Ինքը գոնե այդպես էր մտածում:

Սակայն սլաքի շեղումով, որի մասին նա չէր կարող կասկածել, նավի ուղղությունը հարավ-արևելք դարձավ:

Այդպիսով, նպաստավոր քամու ազդեցության տակ «Պիլիգրիմը» փոխանակ առաջադրված ուղղությամբ ընթանալու, առաջ էր գնում քառասունհինգ աստիճանի շեղումով:

XI. Փորձորիկ

Այդ դեպքին հաջորդող շաբաթվա ընթացքում, փետրվարի 14-ից մինչև 21-ը, առազաստանավի վրա ոչ մի առանձին բան տեղի չունեցավ: Հյուսիս-արևմտյան քամին ուժեղանում էր հետզհետե, և «Պիլիգրիմը» սլանում էր արագորեն, միջին հաշվով քսանչորս ժամում հարյուր վաթսուն մղոն առաջանալով: Դրանից ավելի պահանջել չէր կարելի այդպիսի մեծությամբ առազաստանավից:

Դիկ Սենդի հաշիվներով, առազաստանավը պետք է մոտեցած լիներ այն ափերին, որոնց մոտով հաճախակի անցնում են մարդատար շոգենավերը, որոնք մի կիսագնդից մյուսն են գնում: Պատանին շարունակում էր հուսալ, որ կպատահեր այդ նավերից մեկին, և հատկապես որոշել էր կամ նրա վրա տեղավորել իր ուղևորներին, կամ նավապետից փոխարինաբար խնդրել մի քանի օգնական նավաստիներ, գուցե և նավապետի մի օգնական: Բայց թեև ուշի-ուշով դիտում էին հորիզոնը, այնուամենայնիվ, ոչ մի նավ չերևաց, և ծովն առաջվա նման ամայի էր:

Այդ բանը չէր կարող չզարմացնել Դիկ Սենդին: Նա մի քանի անգամ անցել էր Խաղաղ օվկիանոսի այս մասով կետորսության ընթացքում: Հիմա լայնության և երկարության այն աստիճանների տակ, որտեղ իր հաշիվներով գտնվում է «Պիլիգրիմը», չէր կարող պատահել, որ չհայտնվեր որևէ անգլիական կամ

ամերիկյան նավ, որը գնում էր Հորն հրվանդանից դեպի հասարակած կամ դեպի հարավային Ամերիկայի ամենահեռավոր կետը:

Բայց մի բան, որ չգիտեր և չէր կարող գիտենալ Դիկ Սենդը, այն էր, որ «Պիլիգրիմը» արդեն գտնվում էր ավելի բարձր լայնության տակ, այսինքն՝ ավելի հարավ, քան թե ինքը ենթադրում էր:

Այդ շեղումը կատարվել էր երկու պատճառով:

Առաջին պատճառն այն էր, որ այս շրջանների հոսանքները, որոնց արագության մասին պատանին միայն աղոտ գաղափար ուներ, աննկատելիորեն նավը դուրս էին բերել իր ճանապարհից:

Երկրորդ պատճառն այն էր, որ Նեգրոյի չարագործ ձեռքով խանգարված կողմնացույցը տալիս էր սխալ ցուցումներ, որոնք երկրորդ կողմնացույցի ջարդվելուց հետո Դիկ Սենդը չէր կարող ստուգել: Այդպիսով, կարծելով (ուրիշ կերպ էլ չէր կարող լինել), թե նավը դեպի արևելք է գնում, իրականում դեպի հարավ-արևելք էր ընթանում: Կողմնացույցը միշտ իր աչքի առաջ էր: Լագը կանոնավոր կերպով ծովն էին գցում:

Այդ երկու գործիքները նրան հնարավորություն էին տալիս որոշ չափով ուղղություն տալ «Պիլիգրիմին» և հաշվել անցած ճանապարհը: Բայց այդքանը մի՞թե բավական էր:

Սակայն Դիկ Սենդը, ըստ հնարավորության, հանգստացնում էր տիկին Ուելդոնին, որը այս ուղևորության դեպքերից երբեմն շատ էր անհանգստանում:

— Կհասնենք, կհասնենք, — կրկնում էր նա: — Կմոտենանք ամերիկյան ափին, այս կամ այնտեղ, միևնույնն է թե որտեղ կլինի, բայց անպայման կհասնենք:

— Ես այդ մասին չեմ կասկածում, Դիկ:

— Հասկանալի է, տիկին Ուելդոն, որ ես շատ ավելի հանգիստ կլինեի, եթե դուք չլինեիք այստեղ, եթե մենք պատասխանատու լինեինք միայն մեզ համար, բայց...

— Բայց եթե ես չլինեի այստեղ, — պատասխանեց տիկին Ուելդոնը, — եթե կուզեն Բենեդիկտը, Ջեկը, Նանը և ես «Պիլիգրիմի» ուղևորները չլինեինք, և եթե մյուս կողմից թոմը և նրա ընկերները վերցված չլինեին «Պիլիգրիմի» վրա, Դիկ, այժմ նավի վրա միայն երկու հոգի կլինեիք՝ դու և Նեգրոն... Ի՞նչ կանեիր դու այդ չար մարդու հետ, որին չես կարող վստահել: Այո, տղա՛ս, ի՞նչ կանեիր:

— Իմ առաջին գործը կլիներ, — պատասխանեց Դիկ Սենդը վճռականորեն, — Նեգրոյին զրկել ինձ վնասելու հնարավորությունից:

— Եվ դու միայնա՞յ կմանևրեիր:

— Այո, միայնակ... աստծո օգնությամբ:

Այդ խոսքերի վստահ շեշտը բավական էր հույս ներշնչելու տիկին Ուելդոնին: Այնուամենայնիվ, երբ նա նայում էր փոքրիկ Ջեկին, մի տեսակ անհանգստություն էր զգում: Եթե նա չէր ուզում արտահայտել, թե ինչ է զգում մոր սիրտը, սակայն միշտ չէ, որ կարողանում էր զսպել սիրտը ճմլող գաղտնի մտահոգությունը:

Սակայն, եթե պատանին բավականաչափ չէր ուսումնասիրել ծովագնացության գիտությունը աշխարհագրական դիրքը որոշելու համար, ապա նա օժտված էր իսկական ծովայինի բնագործ՝ եղանակը գուշակելու գործում: Մի կողմից երկնքի տեսքը, մյուս կողմից ծանրաչափի ցուցումները նրան հնարավորություն էին տալիս ձեռք առնել անհրաժեշտ նախագուշակական միջոցները: Նավապետ Հուլը, որը լավ օդերևութաբան էր, նրան սովորեցրել էր հասկանալ ծանրաչափի ցուցումները, որի գուշակումները նշանակալիորեն ճիշտ են:

Ահա մի քանի խոսքով այն համառոտ տեղեկությունները, որոնցից կարելի է օգտվել, դիտելու համար ծանրաչափի ցուցումները:

1. Երբ բավական երկարատև լավ եղանակից հետո ծանրաչափը սկսում է միանգամից և շարունակաբար ընկնել, անպայման անձրև կգա, իսկ եթե լավ եղանակը երկար է տևել, սնդիկը կարող է երկու կամ երեք օր իջնել ծանրաչափի խողովակում՝ նախքան մթնոլորտում որևէ փոփոխություն կատարվելը: Այդ դեպքում ինչքան երկար լինի սնդիկի սյան անկման և անձրևը սկսելու միջև ընկած ժամանակամիջոցը, այնքան երկարատև կլինի անձրևային եղանակը:

2. Եթե, ընդհակառակն, անձրևային երկար ժամանակաշրջանում ծանրաչափը սկսի բարձրանալ դանդաղորեն և կանոնավոր կերպով, հաստատապես կարելի է ասել, որ լավ եղանակ կլինի և այնքան երկար կտևի, ինչքան ավելի ժամանակ է անցել սնդիկի սյան բարձրացման և անձրևը սկսելու ժամանակի միջև:

3. Երկու դեպքերում էլ, եթե եղանակի փոփոխությունը հաջորդում է անմիջապես ծանրաչափի սնդիկի սյան շարժմանը, ապա փոփոխությունը շատ կարճատև կլինի:

4. Եթե ծանրաչափը բարձրանում է դանդաղ և շարունակաբար երկու-երեք օր կամ ավելի երկար ժամանակ, ցույց է տալիս լավ եղանակ, եթե նույնիսկ անձրևը շարունակում է տեղալ այդ երեք օրերին: Բայց եթե ծանրաչափը բարձրանում է երկու կամ ավելի օր անձրևի ժամանակ, այնուհետև լավ եղանակի հետ սնդիկի սյունն սկսում է իջնել, այդ դեպքում լավ եղանակը շատ կարճատև կլինի:

5. Գարնանը և աշնանը ծանրաչափի միանգամից անկումը նախատեսում է քամի: Ամառը, եթե եղանակը շատ տաք է, փոթորիկ է նախատեսում: Ձմեռը, մի քիչ երկարատև սառնամանիքներից հետո, ծանրաչափի սնդիկի սյան արագ անկումը քամու փոփոխություն է նշանակում, ձնհալի և անձրևի հետ միասին, բայց բավական երկար տևող սառնամանիքին հաջորդող սնդիկի սյան բարձրացումը ձյուն է նախատեսում:

6. Ծանրաչափի արագ տատանումները երբեք չպետք է նկատել որպես երկարատև չոր կամ անձրևային եղանակի նախատեսում: Այս ցուցումները տրված են բացառապես դանդաղ և հարատև կատարվող բարձրացման կամ իջեցման դեպքում:

7. Աշնան վերջերին, եթե երկարատև անձրևային և հողմային եղանակից հետո ծանրաչափը բարձրանում է, այդ բարձրանալը նշան է հյուսիսային քամու և մոտալուտ սառնամանիքի:

Ահա այդ թանկագին գործիքի ցուցումներից արվող ընդհանուր հետևությունները:

Այս բոլորին կատարելապես ծանոթ էր Դիկ Սենդը, և ծովային կյանքի տարբեր շրջաններում հաստատել էր իր իսկ վարձով և այդպիսով ընդունակ էր դարձել կանխելու ամեն մի անակնկալ:

Եվ ահա փետրվարի 20-ին ծանրաչափի սնդիկի սյան տատանումները սկսեցին անհանգստացնել պատանուն, որ օրական մի քանի անգամ մեծ ուշադրությամբ դիտումներ էր անում: Բանն այն էր, որ ծանրաչափը սկսել էր ընկնել դանդաղ և հարատև, ինչ-որ անձրև էր նախատեսում, բայց որովհետև անձրև չէր գալիս, Դիկ Սենդը դրանից եզրակացրեց, որ վատ եղանակը տևական կլիներ: Այդպես էլ եղավ:

Սակայն անձրևը քամի էր նշանակում, և, իսկապես, տարվա այդ ժամանակ քամին այնքան ուժգին էր լինում, որ օդի հոսանքների տեղաշարժը մեկ ժամում գրեթե վաթսուն կիլոմետրի էր հասնում:

Դիկ Սենդը ստիպված եղավ ձեռք առնել մի շարք միջոցառումներ, որպեսզի չվտանգի «Պիլիգրիմի» կայմերն ու առագաստները:

Նա արդեն ամփոփել էր տվել մանրակայմը, թեք առագաստն ու կլենֆոկը, այժմ որոշեց հավաքել նաև բրամստենգան, ինչպես նաև ամփոփել երկու առագաստ կայմահարթակից:

Այս վերջին գործողությունը որոշ դժվարությունների հետ էր կապված, քանի որ անձնակազմը դեռևս անփորձ էր: Սակայն վարանելու ժամանակ չէր, և ոչ ոք չվարանեց:

Դիկ Սենդը Բաթի և Օստինի ուղեկցությամբ բարձրացավ առաջակայմի առագաստակալի վրա և ոչ առանց դժվարության հավաքեց առագաստը: Եթե եղանակը այդքան սպառնալի չլիներ, երկու առագաստ կթողներ կայմի վրա, բայց նախատեսելով, որ գուցե ստիպված կլինի ոչ միայն հավաքել առագաստները, այլև թեթևացնել կայմերի սարքը, քանից երկու առագաստակալները և իջեցրեց ցած: Արդարև, հասկանալի է, որ երբ քամին շատ ուժեղ է լինում, պետք է ոչ միայն նվազեցնել առագաստների ծավալը, այլև կայմերը: Այդպիսով, փոթորիկի դեպքում նավը բավական թեթևացած լինելով կայմերի ծայրերում, ավելի քիչ է տուժում ավելոծության պատճառած տատանումներից:

Այդ առաջին աշխատանքը վերջացնելով (աշխատանք, որը երկու ժամ պահանջեց), Դիկ Սենդը և նրա օգնականները սկսեցին նվազեցնել կայմահարթակի առագաստակազմը, որը կրկնակի չէր, ինչպես ժամանակակից նավերի մեծ մասի վրա, մի բան, որը հեշտացնում է աշխատանքը: Պետք էր, ուրեմն, գործողությունը կատարել առաջվա նման, այսինքն՝ վազել առագաստակալների վրայով, դեպի իրեն քաշել քամուց տատանվող առագաստը և ապա պինդ կապել պարանով: Աշխատանքը դժվար էր, երկարատև և վտանգավոր, բայց, ի վերջո, կայմահարթակի առագաստի ծավալը փոքրանալով՝ ավելի քիչ էր ենթարկվում քամու ազդեցության, և առագաստանավը զգալիորեն թեթևացավ:

Դիկ Սենդը իջավ Բաթի և Օստինի հետ: «Պիլիգրիմը» այժմ ի վիճակի էր նավարկելու փոթորկոտ եղանակով:

Հաջորդ երեք օրերին՝ փետրվարի 20-ի, 21-ի, 22-ի ընթացքում քամու ուժն ու ուղղությունը ոչ մի զգալի փոփոխության չենթարկվեցին: Բայց և այնպես ծանրաչափի սնդիկը շարունակում էր իջնել, և վերջին օրվա ընթացքում պատանին նշեց, որ սնդիկը անշեղորեն կանգնած էր 728 միլիմետրից ցածր աստիճանի վրա: Ոչ մի նշան չկար, թե ծանրաչափը կարող էր բարձրանալ մոտակա օրերում: Երկնքի տեսքը վատ էր: Բացի այդ, մշուշն այնքան խիտ էր, որ

արևը բոլորովին չէր երևում, այնպես որ դժվար էր որոշել նրա ծագելու և մայր մտնելու տեղերը:

Դիկ Սենդը սկսեց անհանգստանալ, բոլորովին չէր հեռանում կամրջակից և շատ քիչ էր քնում: Սակայն իր բարոյական ուժի շնորհիվ նա կարողանում էր ներսը խեղդել իր մտահոգությունները:

Հաջորդ օրը, փետրվարի 23-ի առավոտյան, քամին կարծես մի քիչ մեղմացավ, սակայն Դիկ Սենդը չխաբվեց և իրավացի էր, որովհետև կեսօրից հետո քամին ուժեղացավ, և ծովի ալեկոծությունն ավելացավ:

Ժամը չորսի մոտ Նեգորոն, որին շատ քիչ էին տեսնում, դուրս եկավ խոհանոցից և բարձրացավ նավաքիթ: Դինգոն անկասկած քնած կլիներ որևէ անկյունում, քանի որ այս անգամ չհաչեց սովորականի նման:

Լռակյաց, ինչպես միշտ, Նեգորոն կես ժամի չափ դիտեց հորիզոնը:

Օվկիանոսի երեսին երկար ալիքներ միմյանց էին հաջորդում՝ առանց դեռևս իրար խփվելու, բայց և այնպես ավելի բարձր էին, քան թե քամու ուժը կարող էր առաջացնել:

Դրանից կարելի էր եզրակացնել, որ շատ վատ եղանակներ էին արևմուտքում, գուցե բավական մոտ շրջանում և չէին ուշանա հասնելու այդ ծովափերը:

Նեգորոն նայեց ծովի այդ ընդարձակ տարածությանը, որ սաստիկ հուզվում էր «Պիլիգրիմի» շուրջը և ապա սառն ու խիստ հայացքը ուղղեց դեպի երկինք:

Երկնքի տեսքը վրդովեցուցիչ էր: Ամպերը տեղաշարժվում էին շատ տարբեր արագությամբ: Մթնոլորտի վերին շերտերի ամպերը վազում էին ավելի արագ, քան ստորին շերտերի ամպերը: Պետք էր ուրեմն նախատեսել, որ բավական մոտիկ ապագայում այդ ծանր զանգվածները կիջնեն ցած և կփոխվեն փոթորկի, գուցե և մրրկի, մինչդեռ ներկայումս քամին դեռևս այնքան ուժեղ չէր, այսինքն՝ փչում էր ժամում քառասուներեք մղոն արագությամբ:

Ըստ երևույթին Նեգորոն կամ վախեցող մարդ չէր, կամ եղանակի սպառնալիքներից ոչինչ չէր հասկանում, քանի որ բոլորովին վրդովված չէր երևում: Սակայն մի չար ժպիտ խաղաց նրա շրթունքներին: Վերջապես կարելի էր կարծել, թե իրերի այդ դրությունը նրան ավելի շատ հաճույք էր պատճառում, քան թե տհաճություն: Մի րոպե նա բարձրացավ քթակայմի վրա և սողալով հասավ մինչև ծայրը ավելի հեռուն տեսնելու համար, կարծես փորձելով ինչ-որ նշան նկատել հորիզոնում: Հետո ցած իջավ, շատ հանգիստ և ոչ մի խոսք չասելով, ոչ մի շարժում չանելով՝ վերադարձավ նավաստիների սրահը:

Սակայն բոլոր այս սպառնալի իրադարձությունների մեջ մի նպաստավոր հանգամանք կար, որը բոլոր ուղևորները պետք է նկատի ունենային՝ այն, որ քամին, ինչքան էլ ուժգին էր կամ ինչքան էլ ուժեղանար, նպաստավոր ուղղությամբ էր փչում և «Պիլիգրիմը» կարծես արագորեն մոտենում էր ամերիկյան ծովափին: Եթե նույնիսկ փոթորիկ բարձրանար, նավագնացությունը կշարունակվեր առանց մեծ վտանգի, և իսկապես վտանգները կհայտնվեին միայն այն ժամանակ, երբ հարկ լիներ մոտենալ որևէ անձանոթ ափի:

Այդ մասին էր մտածում Դիկ Սենդը: Ինչպե՞ս պետք է մանևրեր, եթե որևէ ցամաք հայտնվեր նավի առաջ, ի՞նչ պիտի աներ, եթե որևէ ուղեցույց, ափին ծանոթ որևէ մեկին չպատահեր: Ի՞նչ կաներ այն դեպքում, եթե վատ եղանակը նրան ստիպեր

որևէ նավահանգիստ մտնել. չէ որ այդ շրջանը նրան միանգամայն անծանոթ էր: Իհարկե, դեռևս ոչ մի պատճառ չկար այդպիսի պատահականությամբ զբաղվելու, սակայն վաղ թե ուշ պետք կլիներ որևէ որոշում ընդունել: Ի՞նչ արած. Դիկ Սենդը այդպես էլ կաներ:

Հաջորդ տասներեք օրերին՝ փետրվարի 24-ից մինչև մարտի 9-ը, մթնուլորտը ոչ մի զգալի փոփոխության չենթարկվեց: Երկինքը առաջվա նման ծածկված էր սև ամպերով: Մի քանի ժամ քամին նվազում էր, բայց հետո վերսկսում ավելի մեծ ուժով: Երկու կամ երեք անգամ ծանրաչափը բարձրացավ, բայց նրա տատանումը, որ մի տասնյակ գիծ էր ընդգրկում, այնքան հանկարծակի էր, որ եղանակի ոչ մի փոփոխում կամ չափավոր քամի չէր նախատեսում: Բացի դրանից, ծանրաչափի սնդիկը համարյա անմիջապես իջնում էր, և ոչ մի հույս չկար, թե վատ եղանակը կվերջանար մոտիկ ապագայում:

Մի քանի անգամ ամպրոպը ուժգին որոտաց, որը խիստ անհանգստացրեց Դիկ Սենդին: Երկու կամ երեք անգամ կայծակը խփեց ալիքներին՝ առազաստանավից ընդամենը մի քանի տասնյակ մետր հեռավորության վրա: Քիչ հետո տեղատարափ անձրև սկսվեց, և խիտ մշուշը շրջապատեց «Պիլիգրիմը»:
Նավաքթին կանգնած նավաստին ժամերով ոչինչ չէր տեսնում, և նավը գնում էր կուրորեն:

Թեև առազաստանավը, հենված բարձր ալիքների վրա, ահռելիորեն ճոճվում էր, բարեբախտաբար, տիկին Ուելդոնը դիմանում էր այդ տատանումներին՝ առանց իրեն վատ զգալու: Բայց նրա փոքրիկ տղան շատ էր տանջվում, և մայրը անհրաժեշտ ինամք էր տանում:

Ինչ վերաբերում է կուզեն Բենեդիկտին, նա այնքան հիվանդ էր, ինչքան ամերիկյան ուտիճները, որոնց հետ էր անցկացնում իր ժամանակը, ուսումնասիրելով նրանց այնպես, ինչպես անում էր Սան Ֆրանցիսկոյի իր կաբինետում:

Բարեբախտություն էր նաև, որ Թոմը և նրա ընկերները շատ քիչ էին ենթարկվում ծովախտին և առաջվա նման շարունակում էին օգնության հասնել պատանուն, որը միանգամայն սովոր էր փոթորկից փախչող նավի անկանոն շարժումներին:

«Պիլիգրիմը» արագ վազում էր իր ամփոփված առազաստներով, և արդեն Դիկ Սենդը նախատեսում էր, որ պետք է դարձյալ փոքրացնել առազաստների ծավալը: Սակայն ուզում էր դիմանալ, քանի դեռ անմիջական վտանգ չկար: Ըստ նրա հաշիվների՝ ավիը չպետք է հեռու լիներ: Ուստի մեծ ուշադրությամբ դիտում էին հորիզոնը: Սակայն պատանին չէր կարող վստահել իր ընկերների աչքերին ցամաքի առաջին նշանները հայտնաբերելու հարցում: Արդարև, որևէ մեկը, ինչքան էլ լավ տեսողություն ունենա, եթե վարժված չէ գննել ծովի հորիզոնը, չի կարող որոշել ծովափի առաջին շրջագծերը, մանավանդ մշուշի միջից: Ուստի, Դիկ Սենդը ստիպված էր անձամբ հսկել և հաճախ բարձրանում էր մինչև կայմածոդերը՝ ավելի լավ տեսնելու համար: Սակայն դեռևս ոչինչ չէր երևում ամերիկյան ծովափից:

Այդ բանը զարմացնում էր նրան, և տիկին Ուելդոնը նրա բերնից թռած մի քանի խոսքերից հասկացավ նրա զարմանքը:

Մարտի 9-ն էր, պատանին կանգնած էր նավաքթում, մեկ ծովն ու երկինքն էր դիտում, մեկ «Պիլիգրիմի» կայմերին նայում, որոնք թերվում էին քամու ուժի տակ:

– Դեռևս ոչինչ չի՞ երևում, Դի՛կ, – հարցրեց նրան տիկին Ուելդոնը այն րոպեին, երբ պատանին աչքից հեռացրեց հեռադիտակը:

– Ոչինչ, տիկին՝ Ուելդոն, ոչինչ, – պատասխանեց պատանին, – մինչդեռ հորիզոնը կարծես մի քիչ պարզվում է նորից ուժեղացող քամուց:

– Եվ քո կարծիքով, Դիկ, ամերիկյան ավիը հեռու չպե՞տք է լինի:

– Չի կարող հեռու լինել, տիկին՝ Ուելդոն, և շատ զարմանալի է, որ դեռևս ցամաքը չի երևում:

– Սակայն, – շարունակեց տիկին Ուելդոնը, – առագաստանավը շարունակ լավ է ընթացել:

– Շարունակ, այն ժամանակից սկսած, երբ քամին հյուսիս-արևմտյան դարձավ, – պատասխանեց Դիկ Սենդը, – այսինքն՝ այն օրից, երբ մենք կորցրինք մեր դժբախտ նավապետին և նրա անձնակազմը: Փետրվարի 10-ն էր այդ օրը. այսօր մարտի 9-ն է: Ուրեմն քսանյոթ օր է անցել:

– Իսկ այդ միջոցին ցամաքից ինչքա՞ն հեռու էինք գտնվում, – հարցրեց տիկին Ուելդոնը:

– Մոտավորապես չորս հազար հինգ հարյուր մղոն, տիկին Ուելդոն: Եթե կան այնպիսի բաներ, որոնց մասին ես կասկածում եմ, այս թիվը, սակայն կարող եմ երաշխավորել, գուցե քսան մղոնի սխալով:

– Իսկ ի՞նչ արագությամբ է ընթացել նավը:

– Միջին հաշվով օրական հարյուր ութսուն մղոն, սկսած այն րոպեից, երբ քամին ուժեղացավ, – պատասխանեց պատանին: – Ահա թե ինչու ես զարմանում եմ, որ ցամաքը դեռևս չի երևում: Եվ ավելի տարօրինակն այն է, որ մենք չենք պատահում այն նավերից որևէ մեկին, որոնք սովորաբար երթնեկում են այս շրջաններում:

– Մի՞թե սխալված չես կարող լինել «Պիլիգրիմի» արագությունը հաշվելիս, Դի՛կ, – հարցրեց տիկին Ուելդոնը:

– Ոչ, տիկին Ուելդոն. այդ կետում չեմ կարող սխալված լինել: Լազը ծովը ձգել ենք յուրաքանչյուր կես ժամը մեկ, և ես ճշտությամբ նշել եմ բոլոր ցուցումները: Տեսեք, ես նորից ծովը նետել կտամ լազը, և դուք կտեսնեք, որ այս րոպեին մենք առաջ ենք գնում ժամը տասը մղոն արագությամբ, այսինքն՝ օրական երկու հարյուր մղոնից ավելի:

Դիկ Սենդը կանչեց Թոմին և կարգադրեց ծովը նետել լազը, այդ գործողությունը ձերուհի Նեգրը արդեն շատ վարժ էր կատարում:

Թոմը բերեց պարանի ծայրին պինդ կապված լազը և նետեց ծովը, բայց հազիվ քսանհինգ գրկաչափ էր քանդվել, երբ հանկարծ պարանը թուլացավ Թոմի ձեռքում:

– Ա՛հ, պարոն Դիկ, – բացականչեց նեգրը:

– Ի՞նչ կա, Թոմ,

– Պարանը կտրվեց:

– Կտրվե՛ց, – բացականչեց Դիկ Սենդը, – ուրեմն լազը կորա՞վ:

Ծերունի թոմը պատասխանի փոխարեն ցույց տվեց ձեռքում բռնած պարանի կտորը:

Թոմը ճիշտ էր ասում: Լազը չէր պոկվել պարանից, վերջինս կտրվել էր մեջտեղից, այնինչ այդ պարանը հյուսված էր ամենալավ մանրաթելից, և կարող էր կտրվել միայն այն դեպքում, եթե կտրված տեղում մանրաթելերը մաշված լինեին: Եվ, իսկապես, այդպես էլ կար, ինչ որ հաստատեց Դիկ Սենդը, երբ պարանի ծայրն իր ձեռքն առավ: Բայց արդյո՞ք կտրվածքը առաջացել էր մաշումից. այդ մասին պատանին կասկածամտորեն հարց էր տալիս իրեն:

Այսպես թե այնպես, լազը կորած էր անվերադարձ, և Դիկ Սենդը այլևս ոչ մի միջոց չունեի ճշտորեն հաշվելու նավի արագությունը: Որպես գործիք այժմ նրան մնում էր միայն կողմնացույցը, իսկ նա չգիտեր, որ ցուցումները սխալ էին:

Տիկին Ուելդոնը նկատելով, թե ինչքան էր վրդովված Դիկ Սենդը այդ դեպքից, այլևս չշարունակեց խոսակցությունը և ճնշված տրամադրությամբ իր խցիկը քաշվեց:

Բայց եթե այդ դեպքի հետևանքով «Պիլիգրիմի» արագությունը, հետևապես և անցած ճանապարհը, այլևս չէր կարելի հաշվել, ապա՞՛ հեշտ էր նկատել, որ նավի հետևից առաջացած հետքը չէր նվազում:

Հաջորդ օրը, մարտի 10-ին, ծանրաչափը իջավ մինչև 716 միլիմետրի, դա նշան էր այնպիսի ուժեղ քամու, որի արագությունը մեկ ժամում հասնում է մինչև վաթսուն մղոնի:

Անհրաժեշտ էր շտապ մի անգամ ևս կրճատել առագաստները, նավի ապահովությունը չվտանգելու համար:

Դիկ Սենդը որոշեց հավաքել առաջակայմի առագաստները և բավականանալ միայն միջնակայմի թեք առագաստով:

Պատանին կանչեց թոմին և նրա ընկերներին այդ դժվար գործողությունը կատարելու համար, որը, դժբախտաբար, չէր կարելի արագ կատարել, մինչդեռ պետք էր շտապել, որովհետև փոթորիկը հետզհետե ավելի էր ուժեղանում:

Դիկ Սենդը, Օստինը, Ակտենը և Բաթը բարձրացան կայմի վրա, թոմը մնաց ղեկանիվի մոտ, իսկ Հերկուլեսը՝ տախտակամածի վրա, որպեսզի պարանը քաշի, երբ այդ մասին հրաման ստանա:

Երկար ջանքերից հետո կայմերը ազատվեցին առագաստներից, մի գործողություն, որը կատարեցին այդ հանդուգն նեգրերը հարյուր անգամ ծովը թափվելու վտանգի տակ, այնքան որ կայմերը ցնցվում էին: Այդպիսով, առագաստանավն այժմ առաջ էր գնում միայն երկու կրճատված առագաստներով:

Այժմ առագաստները թեև չափազանց կրճատված էին, սակայն «Պիլիգրիմը» շարունակում էր առաջանալ ծայրահեղ արագությամբ:

Ամսի 12-ին եղանակը ավելի վատացավ: Այդ օրը, առավոտը վաղ, Դիկ Սենդը սարսափով նկատեց, որ ծանրաչափը ընկել էր մինչև 709 միլիմետր:

Այնպիսի ահռելի փոթորիկ էր սպասվում, որ «Պիլիգրիմը» չէր կարող իր վրա կրել մնացած մի քանի առագաստները:

Դիկ Սենդը տեսնելով, որ թեք կայմի առագաստը պատառոտվելու վտանգի տակ է, կարգադրեց հավաքել:

Սակայն արդեն ուշ էր: Ահռելի մրրիկն ամբողջ թափով ընկավ նավի վրա և պոկեց առագաստը: Օստինը, որ այդ միջոցին փոքր առագաստակալի վրա էր, խփվեց կայմին և, աննշան վերք ստանալով, կարողացավ ցած իջնել:

Դիկ Սենդը, չափազանց վրդովված, միայն մի բանի մասին էր մտածում, թե առագաստանավը այդ անդիմադրելի ուժից քշվելով, ամեն թույլ կարող էր ջարդվել, քանի որ, ըստ իր հաշիվների, ծովափի ժայռերը հեռու չպետք է լինեին: Նա իսկույն գնաց նավաքիթ, սակայն ցամաքի ոչ մի նշան չտեսնելով՝ վերադարձավ ղեկի մոտ:

Մի թույլ հետո Նեգորոն բարձրացավ տախտակամած և հանկարծ, կարծես հակառակ իր կամքի, նրա ձեռքը ուղղվեց դեպի հորիզոնի ինչ-որ կետը: Թվում էր, թե մշուշի մեջ որևէ բարձր ցամաք էր տեսնում...

Մի անգամ ևս չար ժպիտը խաղաց նրա շրթունքներին, առանց մի խոսք արտասանելու՝ նա վերադարձավ իր տեղը:

XII. Հորիզոնում

Այդ օրերին փոթորիկը ստացավ իր ամենասոսկալի ձևը՝ փոխվեց մրրիկի: Քամին փչում էր հարավ արևմուտքից, օդի հոսանքները տեղափոխվում էին ժամում հարյուր կիլոմետր արագությամբ:

Իսկական մրրիկ էր, մեկն այն ահռելի քամիներից, որոնք ափ են նետում նավահանգստում խարսխված նավերը և որոնց չեն դիմանում նույնիսկ ցամաքի ամենահաստատուն շինվածքները: Այդպիսին էր այն մրրիկը, որը 1825 թ. հուլիսի 23-ին ամայացրեց Գվադելուպան: Եթե քամին հրետասայլից ցած է գցում քսանչորս սանտիմետր տրամաչափի թնդանոթները, ապա կարելի է պատկերացնել, թե ինչ կլինի նավը, որի հենարանը փոթորկալի ծովն է միայն: Սակայն հենց ծովի շարժողականության մեջ է նրա փրկությունը: Նավը տեղի է տալիս քամու մղումին և, եթե հաստատուն կառուցվածք ունի, կարող է դիմադրել ծովի ամենաուժեղ հարվածներին: Այդպես էր նաև «Պիլիգրիմի» դրությունը:

Թեք կայմի առագաստը պատռվելուց հետո հերթը եռանկյունի առագաստին հասավ, որը քշեց-տարավ քամին: Դիկ Սենդը ստիպված եղավ հրաժարվել նույնիսկ թեք առագաստը պարզելուց, պինդ կտավից պատրաստված մի փոքր առագաստ, որը շատ կհեշտացներ նավին ուղղություն տալը:

Այդպիսով, «Պիլիգրիմը» առաջ էր սլանում առանց առագաստի, բայց քամին ընդգրկել էր նրա պատյանը, կայմերը, ամբողջ սարքը, և այդքանը բավական էր, որ ծայրահեղ արագությամբ առաջ շարժվեր: Երբեմն նույնիսկ թվում էր, թե նավը ալիքներից դուրս էր եկել և հագիվ էր շփվում նրանց:

Այդպիսի պայմաններում առագաստանաձևը ահռելիորեն ճոճվում էր փոթորկից ծառացած ալիքների վրա: Ամեն բուստ կարելի էր սպասել, թե որևէ ահարկու հարված է ստանալու հետևից: Ջրի այդ լեռներն առագաստանաձևից ավելի արագ էին վազում, սպառնում էին հետևի կողմից խփել և խորտակել նավը, եթե այն բավականաչափ արագությամբ չբարձրանար ալիքների վրա: Փոթորկից սլացող նավի համար այդ էր ամենամեծ վտանգը:

Բայց ինչպե՞ս խուսափել այդ վտանգից: Նավի արագությունը հնարավոր չէր ավելի ուժեղացնել, քանի որ ոչ մի առագաստ չէր դիմանա: Պետք էր, ուրեմն, նրան պահել ղեկի միջոցով, որի ազդեցությունը հաճախ անգոր էր:

Դիկ Սենդը այլևս չէր հեռանում ղեկի մոտից, պարանով կապվել էր նավին, որպեսզի որևէ ուժեղ ալիք ծովը չնետեր նրան: Թոմը և Բաթը նույնպես կապված՝ կանգնած էին նրա կողքին, օգնության հասնելու համար: Հերկուլեսն ու Ակտեոնը, կառչած խարսխի հեծանին՝ հսկում էին նավաթում:

Ինչ վերաբերում է տիկին Ուելդոնին, փոքրիկ Ջեկին, կուզեն Բենեդիկտին, Նանին՝ պատանու կարգադրությամբ նրանք մնում էին նավախելի խցիկում: Տիկին Ուելդոնի համար ցանկալի էր մնալ տախտակամածի վրա, սակայն Դիկ Սենդը վճռականապես դեմ էր դրան:

Բոլոր անցքերը և կափարիչները ամուր փակել էին, և հույս կար, որ նրանք կդիմանային, եթե որևէ վիթխարի ալիք թափվեր նավի վրա: Իսկ եթե, դժբախտաբար, տեղի տային ալիքների ծանրությանը՝ այդ դեպքում նավը կարող էր ջրով լցվել և ընկղմվել: Բարեբախտաբար, նավը բավականաչափ ճիշտ էր բեռնավորված, որի հետևանքով, հակառակ սուկալի ճոճումներին, ամբարներում գտնվող բեռը չէր շարժվում:

Դիկ Սենդը դարձյալ կրճատել էր քնի ժամերը, և տիկին Ուելդոնը վախենում էր, որ պատանին կարող է հիվանդանալ, ուստի, նրան համոզեց, որ մի քիչ հանգստանա:

Եվ ահա, մարտի 13-ի լույս 14-ի գիշերը, այն ժամերին, երբ Դիկ Սենդը քնած էր, մի նոր դեպք պատահեց:

Թոմը և Բաթը նավախելում էին, երբ Նեգորոն, որ շատ քիչ էր երևում նավի այդ մասում, մոտեցավ և նույնիսկ կարծես ուզում էր խոսակցել նրանց հետ. սակայն Թոմը և որդին չպատասխանեցին:

Հանկարծ, նավի ուժեղ թեքվելու հետևանքով, Նեգորոն ընկավ և անկասկած ծովը կշարտվեր, եթե չկառչեր կողմնացույցի արկղին:

Թոմը ճչաց՝ վախենալով, թե կողմնացույցը կջարդվի:

Դիկ Սենդը վայրկենական նինջի պահին լսեց այդ ձայնը և, դուրս վազելով սրահից, շտապեց դեպի այն կողմը: Նեգորոն արդեն ոտքի վրա էր, բայց ձեռքում բռնած էր կողմնացույցի պահարանից դուրս բերած երկաթի կտորը, որն իսկույն թաքցրեց՝ նախքան Դիկ Սենդը կնկատեր այդ:

Մի՞թե Նեգորոն շահագրգռված էր, որպեսզի մագնիսական սլաքը վերադառնա իր իսկական ուղղությանը: Այո, որովհետև հարավարևմտյան քամիները այժմ նպաստավոր էին նրա համար...

— Ի՞նչ պատահեց,— հարցրեց պատանին:

– Այս անիծյալ խոհարարն ընկավ կողմնացույցի վրա,– պատասխանեց Թոմը:

Ահաբեկված այդ խոսքերից՝ Դիկ Սենդը կռացավ արկղի վրա... Արկղը լավ վիճակում էր, իսկ կողմնացույցը, լապտերների լույսով լուսավորված, առաջվա նման դրված էր երկու համակենտրոն օղակների վրա:

Պատանին հանգիստ շունչ քաշեց: Վերջին կողմնացույցի ջարդվելը անդարմանելի դժբախտություն կլիներ:

Սակայն Դիկ Սենդը չէր կարող նկատել, թե երկաթի կտորի վերանալուց հետո սլաքը վերստացել էր նորմալ ուղղություն և ուղիղ հյուսիսն էր ցույց տալիս, այնպես, ինչպես պետք է լիներ այս միջօրեականի տակ:

Բայց և այնպես, եթե չէր կարելի Նեգորոյին մեղադրել, որ նա վայր էր ընկել, ըստ երևույթին ակամա, ապա Դիկ Սենդը իրավունք ուներ զարմանալու, որ նա այդ ժամին նավախելում էր գտնվում:

– Ի՞նչ եք անում այստեղ,– հարցրեց նրան:

– Ինչ որ ինձ հաճելի է,– պատասխանեց Նեգորոն:

– Ինչ ասացի՞ք...– բացականչեց Դիկ Սենդը, չկարողանալով զսպել զայրույթը:

– Ասում եմ,– պատասխանեց խոհարարը,– որ ոչ մի այնպիսի կանոն չկա, որն ինձ արգելի զբոսնել այստեղ:

– Եթե այդպես է, այդ կանոնը ես սահմանում եմ,– ասաց Դիկ Սենդը,– և ձեզ արգելում եմ գալ նավախել:

– Իսկապե՞ս,– բացականչեց Նեգորոն:

Այդ մարդը, որ այնքան սառնարյուն էր, սպառնական շարժում գործեց:

Պատանին գրպանից հանելով ատրճանակը, ուղղեց խոհարարի վրա՝ ասելով.

– Նեգորո, դուք լավ գիտեք, որ երբեք չեմ բաժանվում այս ատրճանակից և առաջին իսկ անհնազանդության դեպքում կջարդեմ ձեր գլուխը:

Այդ միջոցին Նեգորոն զգաց, որ մի անդիմադրելի ուժ նրան գետին էր տապալում:

Հերկուլեսն էր պարզապես իր ծանր ձեռքը դրել նրա ուսին:

– Նավապե՛տ Սենդ,– ասաց հսկան,– Ուզո՞ւմ եք, որ ծովը նետեմ այդ սրիկային: Ձկները խրախճանք կանեն, նրանք զգվել չգիտեն:

– Դեռ ոչ,– պատասխանեց Դիկ Սենդը:

Նեգորոն ոտքի կանգնեց, երբ հսկան ձեռքը վերցրեց նրա ուսից: Բայց երբ անցնում էր Հերկուլեսի կողքից, քթի տակ մրթմրթաց.

– Սպասիր, անիծյալ նեգր, ես քեզ ցույց կտամ:

Այդ միջոցին քամու ուղղությունը փոխվել էր, կամ այդպես էր թվում, քառասունհինգ աստիճանով: Եվ, սակայն, պատանին շատ զարմացավ,

Նկատելով, որ այդ փոփոխությունը բուլորովին չէր անդրադարձել ծովի վիճակի վրա: Նավը շարունակում էր գնալ միևնույն ուղղությամբ, սակայն քամին և ալիքները, փոխանակ նրան խփելու հետևից, այժմ խփում էին ձախ կողին: Նավը ենթարկվում էր ծովի ալիքների ուղղակի հարվածներին: Ուստի, Դիկ Սենդը ստիպված եղավ նավի ուղին փոխել չորս կողմնաստիճանով, որպեսզի կարողանա խուսափել փոթորկի հարվածներից:

Բայց մյուս կողմից՝ կասկածը արթնացել էր նրա մեջ: Նա իրեն հարց էր տալիս, թե արդյո՞ք որևէ կապ չկար Նեգորոյի վայր ընկնելու և առաջին կողմնացույցի ջարդվելու միջև: Ինչո՞ւ էր այդտեղ եկել խոհարարը: Արդյոք նա շահագրգռված չէ՞ր, որ երկրորդ կողմնացույցը ևս անպետքանա: Ի՞նչ շահ ուներ նա դրանից: Ոչնչով չէր կարելի բացատրել: Մի՞թե Նեգորոն չէր ցանկանում, ինչպես բուլորը, ինչքան կարելի է շուտ հասնել ամերիկյան ափին:

Երբ Դիկ Սենդը տեղի ունեցածը հայտնեց տիկին Ուելդոնին, վերջինս, թեև որոշ չափով համամիտ էր նրա անվստահությանը, բայց և այնպես որևէ ընդունելի պատճառ չէր գտնում մեղադրելու խոհարարին որևէ կանխամտածված ոճրագործության մեջ:

Սակայն զգուշության համար Նեգորոն խիստ հսկողության տակ առնվեց: Ասենք, նա նկատի ունեցավ պատանու կարգադրությունը և այլևս չերևաց նավախելում, որտեղ ոչ մի գործ չուներ. բացի դրանից, Դինգոյին այնտեղ մշտական պահակ դրեցին, իսկ խոհարարը զգուշացավ մոտենալ նրան:

Ամբողջ շաբաթվա ընթացքում փոթորիկը չմեղմացավ: Ծանրաչափը դարձյալ իջավ: Մարտի 14-ից մինչև 26-ը ոչ մի րոպե քամին չթուլացավ, որպեսզի կարելի լիներ մի քանի առազաստ պարզել: «Պիլիգրիմը» դեպի հյուսիս-արևելք էր սլանում այնպիսի արագությամբ, որ քսանչորս ժամում հավանաբար երկու հարյուր մղոնից պակաս չէր անցնի, իսկ ցամաքը չէր երևում: Ի միջի այլոց, այդ երկիրը՝ ամերիկյան մայրցամաքը, որպես մի ընդարձակ պատվար, ընկած է Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների միջև, հարյուր քսան աստիճանով:

Դիկ Սենդը մտածում էր, թե արդյոք ինքը չէ՞ր խելագարվել, չէ՞ր կորցրել առողջ դատողությունը և միթե այդքան օրեր անընդհատ սխալ ճանապարհի էր հետևում: Ո՛չ, այդքան սխալված չէր կարող լինել: Արևը թեև նկատելի չէր ամպերի միջից, միշտ ծագում էր նավի առաջակողմից և մայր մտնում նրա հետևը: Ուրեմն մի՞թե անհայտ կորել էր այդ երկիրը: Այդ Ամերիկան, որին զարնվելով, նավը գուցե կջախջախվեր, որտե՞ղ էր, եթե չէր ետևում: Թող լիներ Հարավայինը կամ Հյուսիսայինը, ամեն ինչ հնարավոր էր այս քառսի մեջ, «Պիլիգրիմը» չէր կարող չհասնել մեկնումեկին: Ի՞նչ էր պատահել այդ ահռելի փոթորիկը սկսելուց ի վեր: Ի՞նչ էր շարունակում կատարվել, քանի որ այդ ափը, որ փրկություն կամ կորուստ էր, չէր երևում: Դիկ Սենդը պե՞տք է ենթադրեր, թե կողմնացույցը սխալ ցուցումներ էր տվել, որոնք չէր կարելի ստուգել, քանի որ առաջին կողմնացույցը ջարդվել էր: Արդարև, նա այդ կասկածն ուներ, որ արդարանում էր ցամաքի բացակայությամբ:

Ուստի, երբ հեռանում էր դեկանիվի մոտից, Դիկ Սենդը մեծ ուշադրությամբ դիտում էր քարտեզը: Սակայն իզուր էին նրա ջանքերը, քարտեզը նրան չէր կարող տալ այն գաղտնիքի բանալին, որը Նեգորոյի ստեղծած դրության հետևանքով, անհասկանալի էր մնում ինչպես պատանու, այնպես էլ որևէ մեկի համար:

Այդ օրը, սակայն, մարտի 26-ին, առավոտյան ժամը ութին մոտ, մի շատ կարևոր դեպք պատահեց:

Նավաքթում կանգնած Հերկուլեսը բացականչեց.

– Ցամա՛ք, ցամա՛ք:

Դիկ Սենդը վազեց սավաքիթ: Հերկուլեսը թեև ծովայինի տեսողություն չուներ, բայց և այնպես չէր սխալվում:

– Ցամա՛ք, – ասաց Դիկ Սենդը:

– Այո, այնտեղ, – պատասխանեց Հերկուլեսը՝ ցույց տալով հորիզոնի հյուսիս-արևելքում հազիվ նշմարելի մի կետ:

Նրա ձայնը հազիվ էր լսվում ծովի և երկնքի մռնչունի մեջ:

– Դուք տեսա՞ք ցամաքը... – հարցրեց պատանին:

– Այո, – պատասխանեց Հերկուլեսը՝ գլխով հաստատական նշան անելով:

Եվ նորից ձեռքը երկարեց դեպի սավի ձախակողմը:

Պատանին նայում էր... բայց ոչինչ չէր տեսնում:

Այդ միջոցին տիկին Ուելդոնը, լսելով Հերկուլեսի ձայնը, բարձրացավ կամրջակի վրա, հակառակ տված խոստումին:

– Տիկին... – բացականչեց Դիկ Սենդը:

Տիկին Ուելդոնը, որի ձայնը չէր կարող լսվել, ինքը ևս փորձեց տեսնել նեգրի ցույց տված երկիրը, և թվում էր, թե ամբողջ եռությունը կենտրոնացրել էր հայացքի մեջ:

Պետք էր կարծել, որ Հերկուլեսի ձեռքը սխալ ուղղություն էր ցույց տալիս, քանի որ ո՛չ տիկին Ուելդոնը, ո՛չ պատանին ոչինչ չտեսան հորիզոնում:

Բայց հանկարծ Դիկ Սենդը իր հերթին ձեռքը պարզեց և ասաց.

– Այո, այո, ցամա՛ք:

Ինչ-որ մի գագաթ երևաց մշուշի մեջ բացվող լույսի շողի տակ: Պատանու ծովայինի աչքը չէր կարող խաբվել:

– Վերջապե՛ս, վերջապե՛ս, – բացականչեց պատանին՝ ջղաձգորեն կառչելով նավեգրին:

Տիկին Ուելդոնը կռթնած Հերկուլեսին, աչքը չէր հեռացնում այդ ցամաքից, որը տեսնելու հույս չուներ:

Այդ բարձր գագաթից կազմված ափը երևում էր սավի ձախակողմում, տասը մղոն հեռավորության վրա: Ամպերի արանքից դուրս պրծնող լույսի շողի ուժեղանալուն համապատասխան՝ ցամաքը ավելի պարզ երևաց: Անկասկած ամերիկյան մայրցամաքի որևէ հրվանդանը կլիներ: Առագաստներից զուրկ «Պիլիգրիմը» ի վիճակի չէր ուղղվել դեպի այդ ափը, սակայն չէր կարող չմոտենալ նրան:

Խնդիրն այժմ մի քանի ժամ համբերություն ունենալն էր: Դեռևս առավոտյան ժամը ութն էր:

Անկասկած կեսօրից առաջ «Պիլիգրիմը» կմոտենար ցամաքին:

Դիկ Սենդի նշանով՝ Հերկուլեսը տիկին Ուելդոնին տարավ իր նավասենյակը, որովհետև նա չէր կարող դիմադրել տատանման սաստկությանը:

Պատանին որոշ ժամանակ ևս մնաց նավաքթում, այնուհետև վերադարձավ դելի մոտ, որտեղ կանգնած էր ծերունի Թոմը:

Ուրեմն, վերջապես, նա տեսնում էր այնքան անհամբերությամբ սպասված ափը, բայց այժմ սարսափով էր նայում նրան:

Արդարև՝ այդպիսի պայմաններում, այսինքն՝ փոթորկից քշվելով, քամին հետևից, իսկ ցամաքը առջևը, դա նշանակում էր անխուսափելի աղետ իր բոլոր ահռելի հետևանքներով:

Անցավ երկու ժամ: Լեռնային հրվանդանն այժմ երևում էր նավի կողքից:

Այդ միջոցին Նեգորոն երևաց տախտակամածի վրա: Այս անգամ նա մեծ ուշադրությամբ նայեց ափին, գլուխը շարժեց այն մարդու նման, որը հասկացել էր ամեն ինչ, և խոհանոց վերադարձավ ինչ-որ անուն արտասանելով, որը ոչ ոք չկարողացավ լսել:

Իսկ Դիկ Սենդը աշխատում էր տեսնել ցամաքը, որը ձգվում էր հրվանդանի հետևը:

Երկու ժամ անցավ: Հրվանդանը մնաց նավի ձախ կողմը, իսկ ափը դեռևս չէր երևում:

Այդ միջոցին երկինքը պարզվում էր հորիզոնում, և Անդերի բարձր լեռնաշղթայով եզերված ամերիկյան ափը պետք է երևար քսան մղոն հեռավորությունից:

Դիկ Սենդը վեցրեց հեռադիտակը և դանդաղ սկսեց դիտել ամբողջ հորիզոնը:

Ոչի՛նչ. այլևս ոչի՛նչ չէր երևում:

Միջօրեի ժամը երկուսին ցամաքի բոլոր նշանները անհետացել էին «Պիլիգրիմի» հետևը: Առջևում հեռադիտակը ոչ մի բարձր կամ ցածր ափ ցույց չէր տալիս:

Դիկ Սենդը մի հառաչ արձակեց և, անմիջապես կամրջակից հեռանալով, շտապ իջավ այն խցիկը, որտեղ էին տիկին Ուելդոնը՝ փոքրիկ Ջեկի, Նանի և կուզեն Բենեդիկտի հետ:

— Կղզի, պարզապես կղզի էր,— ասաց պատանին:

— Կղզի՞, Դիկ, բայց ի՞նչ կղզի,— հարցրեց տիկին Ուելդոնը:

— Քարտեզից կիմանանք,— պատասխանեց պատանին:

Եվ վազելով նավաստիների սրահը՝ բերեց նավի քարտեզը:

— Ահա, տիկին Ուելդոն,— ասաց նա:— Այն ցամաքը, որը մենք տեսանք, կարող է լինել միայն Խաղաղ օվկիանոսում կորած այս կետը՝ միայն Չատկի կղզին կարող է լինել: Այս վայրերում ուրիշ ոչ մի կղզի չկա:

– Եվ մեր հետևողները թողեցինք այն, – հարցրեց տիկին Ուելդոնը:

– Այո, մեզնից բավական ետ:

Տիկին Ուելդոնը ուշադրությամբ նայում էր Չատկի կղզուն, որը մի փոքր կետ էր քարտեզի վրա:

– Իսկ ի՞նչ հեռավորության վրա է գտնվում ամերիկյան ծովափից:

– Երեսուկհինգ աստիճանի վրա:

– Այսի՞նքն...

– Մոտավորապես երկու հազար մղոն:

– Ուրեմն «Պիլիգրիմը» տեղից չի շարժվել, քանի որ դեռևս այդքան հեռու ենք ցամաքից:

– Տիկին Ուելդոն, – պատասխանեց Դիկ Սենդը՝ մի րոպե ձեռքը ճակատին տանելով, կարծես մտքերը կենտրոնացնելու համար, – չգիտեմ... չեմ կարողանում բացատրել այս անհավատալի ուշացումը... Ոչ, չեմ կարող... Եթե միայն կողմնացույցի ցուցումները խեղաթյուրված չեն եղել... Սակայն այդ կղզին միայն Չատկի կղզին կարող է լինել, քանի որ քամին մեզ շարունակ դեպի հյուսիս-արևելք է քշում: Այո, Չատկի կղզին է այդ: Այո, և այդ կղզին ափից դեռևս երկու հազար մղոն հեռու է: Վերջապես ես գիտեմ, թե ուր է տարել մեզ փոթորիկը և, եթե փոթորիկը հանդարտվի, առանց մեծ վտանգի կարող ենք մոտենալ ամերիկյան մայրցամաքին: Այժմ գոնե մեր նավը կորած չէ Խաղաղ օվկիանոսի անհունության մեջ:

Պատանու այդ հավատը փոխանցվեց բոլոր նրան լսողներին: Տիկին Ուելդոնը նույնպես համոզվեց: Եվ իսկապես, թվում էր, թե այդ խեղճ մարդկանց դժբախտ օրերը վերջացել էին, որ «Պիլիգրիմը» հասել էր արդեն իր նավահանգստին, և մնում էր սպասել ծովի բարձրանալուն՝ ներս մտնելու համար:

Չատկի կղզին, իսկական անունը Վայ-Հու, հայտնաբերել էր Դավիդը 1722 թվին, որից հետո այնտեղ այցելել էին Կուկը և Լապերուսը: Այդ կղզին գտնվում է հարավային լայնության 27°-ի և արևելյան երկարության 112°-ի վրա: Եթե առագաստանավը դեպի հյուսիս էր շեղվել ամբողջ 15°-ով, այդ բանը պետք էր վերագրել հյուսիս-արևմտյան քամուն, որը նրան քշել էր այդ ուղղությամբ:

Ուրեմն «Պիլիգրիմը» դեռևս երկու հազար մղոն հեռու էր ափից: Սակայն կայծակի արագությամբ փչող այդ քամու տակ առագաստանավը տասն օրից պակաս ժամանակում կարող էր հասնել հարավ-ամերիկյան ծովափը:

Բայց մի՞թե հույս չկար, ինչպես ասել էր պատանին, որ եղանակը լավանար, և հնարավոր լիներ պարզել մի քանի առագաստ այն միջոցին, երբ ցամաքը երևար:

Դիկ Սենդը դեռևս այդ հույսն ուներ: Նա ինքն իրեն ասում էր, թե այդ փոթորիկը, որն արդեն այնքան երկար էր տևել, գուցե ի վերջո կհանդարտվեր: Եվ այժմ, երբ, շնորհիվ Չատկի կղզու հայտնվելու, պատանին ճշգրիտ գաղափար ուներ աշխարհագրական դիրքի մասին, նա հիմք ուներ կարծելու, թե վերստին տիրապետելով իր նավին՝ կարող կլիներ այն տանել ապահով տեղ:

«Դիլիգրիմը» ունենալով հաստատուն կառուցվածք և լավ սարքավորում, քիչ էր տուժել փոթորկի այդ կատաղի ճնշումներից: Նավը ընդամենը կորցրել էր թեք կայմը և եռանկյունի առագաստը: Ոչ մի կաթիլ ջուր չէր թափանցել նավի պատյանի և տախտակամածի լավ ծեփված անցքերից: Ջրհանները կատարելապես սարքին էին: Այդ կողմից երկյուղ չկար:

Մտում էր այս անվերջանալի մրրիկը, որի կատաղությունը կարծես բոլորովին չէր չափավորվում: Եթե Դիկ Սենդը կարող էր իր նավը դնել մրրիկի դեմ պայքարելու վիճակում, այնուամենայնիվ չէր կարող կարգադրել, որ քամին մեղմանա, ալիքները հանդարտվեն, երկինքը պարզվի:

XIII. Ցամա՛ք, ցամա՛ք

Դիկ Սենդի հույսերը մասամբ պետք է արդարանային:

Հաջորդ օրը, մարտի 27-ին, սնդիկը բարձրացավ ծանրաչափի խողովակում: Բարձրացումը կատարվեց ո՛չ միանգամից և մի քանի գիծ միայն, բայց թվում էր, թե հարատև կլինի: Փոթորիկը հավանորեն կմտներ մեղմացման շրջանը, և եթե ծովը շարունակում էր չափազանց ալեկոծ լինել, ապա նկատվեց, որ քամին նվազում էր՝ մի քիչ դեպի արևմուտք թեքվելով:

Դիկ Սենդը դեռևս չէր կարող մտածել առագաստ պարզելու մասին: Ամենափոքր առագաստն էլ քամին կպոկեր, կտաներ: Բայց և այնպես նա հույս ուներ, որ մի քանիչորս ժամ էլ չանցած հնարավոր կլիներ պարզել առագաստներից մեկնումեկը:

Իսկապես, գիշերը քամին զգալիորեն մեղմացավ՝ համեմատած նախորդ օրերի հետ, նավը սկսեց ավելի քիչ տատանվել այն ուժեղ շարժումներից, որոնք սպառնում էին ջարդուփշուր անել նավը:

Ուղևորներն սկսեցին երևալ տախտակամածի վրա: Նրանք այլևս չէին վախենում, թե որևէ խոշոր ալիք կարող էր իրենց ծովը նետել:

Նախ տիկին Ուելդոնը դուրս եկավ խցիկից, որտեղ, Դիկ Սենդը նրան ստիպել էր փակված մնալ այդ երկարատև փոթորկի ժամանակ: Նա եկավ խոսակցելու պատանու հետ, որը իսկական գերմարդկային կամքի ուժով կարողացել էր դիմադրել այնքան դժվարությունների: Նիհարած, դժգույն, հողմահար դեմքով, նա կարող էր ընկճվել քնազրկությունից, քունը այնքան անհրաժեշտ է նրա տարիքում: Ոչ. նրա առողջ կազմվածքը դիմանում էր ամեն գրկանքի: Գուցե մի օր կտուժեր փորձության այս շրջանի համար: Բայց այժմ ժամանակը չէր ընկճվելու: Այդպես էր մտածում Դիկ Սենդը, և տիկին Ուելդոնը նրան գտավ նույնքան կայտառ և եռանդուն, որքան եղել էր:

Բացի դրանից, քաջասիրտ Սենդը վստահ էր ապագայի նկատմամբ, իսկ վստահությունը ուժ է տալիս:

— Դիկ, սիրելի՛ գավակս, սիրելի նավապետ,— ասաց տիկին Ուելդոնը՝ ձեռքը պատանուն պարզելով:

– Ա՛հ, տիկին Ուելդոն, – բացականչեց Դիկ Սենդը ժպտալով, – դուք չեք լսում ձեր նավապետին: – Դուք տախտակամած եք բարձրանում, խցիկից դուրս եք գալիս հակառակ նրա... խնդրանքին:

– Այո, ես քեզ չեմ հնազանդվում, – պատասխանեց տիկին Ուելդոնը, – բայց մի տեսակ նախազգացում ունեմ, որ փոթորիկը հանդարտվում է կամ կհանդարտվի:

– Իսկապես հանդարտվում է, տիկին՝ Ուելդոն, – պատասխանեց պատանին: – Դուք չեք սխալվում, ծանրաչափը չի իջել երեկվանից ի վեր: Քամին մեղմացավ, և ես իրավունք ունեմ կարծելու, որ մեր ամենածանր փորձություններն անցան:

– Օ՛հ, երանի այդպես լիներ, Դիկ: Բայց դու այնքան տանջվեցիր, խեղճ տղա: Դու արեցիր...

– Սոսկ իմ պարտականությունը:

– Բայց մի՞թե մի քիչ չես հանգստանա:

– Հանգստանա՞լ, – պատասխանեց պատանին: – Ես կարիք չունեմ հանգստանալու, տիկին Ուելդոն: Ինձ լավ եմ զգում և պետք է դիմանամ մինչև վերջ: Դուք ինձ նավապետ նշանակեցիք, և նավապետ կմնամ մինչև այն րոպեն, երբ «Պիլգրիմի» ուղևորները ապահով վիճակում կլինեն:

– Դիկ, – ասաց տիկին Ուելդոնը, – ամուսինս և ես երբեք չենք մոռանա քո արածը:

– Ես առանձնապես ոչինչ չարեցի, – պատասխանեց Դիկ Սենդը, – աստված արեց ամեն ինչ:

– Տղաս, կրկնում եմ, որ քո բարոյական և ֆիզիկական եռանդով դու իսկական տղամարդ դարձար, տղամարդ, որ արժանի է հրամայելու, և շատ չանցած, երբ քո ուսումը կվերջանա, ես վստահ եմ, ամուսինս դեմ չի լինի, որ դու Ձեյմս Ուելդոնի առևտրական տան նավապետը լինես:

– Ես... ես... – բացականչեց Դիկ Սենդը՝ աչքերը արցունքով լցված:

– Դի՛կ, – շարունակեց տիկին Ուելդոնը, – դու արդեն մեր որդեգիրն էիր, իսկ այժմ դու մեր զավակն ես, քո մոր և փոքր եղբոր՝ Ջեկի ազատարարը: Սիրելի Դի՛կ, թույլ տուր քեզ համբուրել ամուսնուս և իմ կողմից:

Դեռատի կինը աշխատում էր չհուզվել, երբ իր կրծքին էր սեղմում պատանուն, սակայն կուրծքն ուռչում էր: Իսկ թե ինչ էր զգում Դիկ Սենդը՝ դժվար է նկարագրել:

Նա իրեն հարց էր տալիս, թե արդյոք չէ՞ր կարող իր կյանքը զոհելուց ավելին անել իր բարերարների համար, և նախապես ընդունում էր այն բոլոր փորձությունները, որոնք կարող էին նրան ներկայանալ ապագայում:

Այս խոսակցությունից հետո Դիկ Սենդն իրեն ավելի ուժեղ զգաց: Բավական էր, որ քամին մի քիչ մեղմանար, բավական էր, որ ինքը կարողանար մի քանի առազաստ պարզել, ապա չէր կասկածում, որ կկարողանար նավն առաջնորդել դեպի մի նավահանգիստ, որտեղ բոլոր ուղևորները վերջապես կգտնեին իրենց փրկությունը:

Ամսի 29-ին քամին մի քիչ նվազեց, և Դիկ Սենդը մտածեց պարզել միջնակայմի մեծ առագաստն ու առաջակայմի մի առագաստը և այդպիսով ավելացնել «Պիլիգրիմի» արագությունը և միաժամանակ ապահովել նրա ուղղությունը:

– Դե՛, Թո՛մ, դե, բարեկամներս, – բացականչեց պատանին, երբ տախտակամած բարձրացավ առավոտ վաղ: – Եկե՛ք. ձեր օգնությունը պետք է ինձ:

– Մենք պատրաստ ենք, նավապետ Սենդ, – պատասխանեց ծերունի Թոմը:

– Պատրաստ ենք ամեն բանի, – ավելացրեց Հերկուլեսը: – Մենք ոչինչ չէինք անում փոթորկի պահին, և ես սկսել էի ժանգոտվել:

– Պետք է փչեիր քո լայն բերանով, – ասաց փոքրիկ Ջեկը: – Գրագ կգամ, որ քո շունը քամու չափ ուժեղ կլիներ:

– Հրաշալի միտք է, Ջե՛կ, – պատասխանեց Դիկ Սենդը ծիծաղելով: – Երբ հանդարտ եղանակ լինի, Հերկուլեսին փչել կտանք առագաստների մեջ:

– Ես պատրաստ եմ, պարո՛ն Դիկ, – պատասխանեց խիզախ նեգրը, Բորեասի նման թշերը ուռցնելով:

– Այժմ, բարեկամներս, – շարունակեց պատանին, – մենք պետք է նորով փոխարինենք փոթորկի պոկած կայմահարթակի առագաստը, դա մի քիչ դժվար գործ կլինի, բայց պետք է անել:

– Կանենք, – պատասխանեց Ակտոնը:

– Կարո՞ղ եմ ձեզ օգնել, – հարցրեց փոքրիկ Ջեկը, որ միշտ տրամադիր էր աշխատելու:

– Այո, Ջեկ, – պատասխանեց պատանին: – Դու դեկի մոտ կկանգնես մեր Բաթ բարեկամի հետ և կօգնես նավին ուղղություն տալուն:

Ավելորդ է ասել, թե ինչքան հպարտացավ Ջեկը՝ «Պիլիգրիմի» ղեկակալի օգնականը դառնալով:

– Այժմ գործի անցնենք, – շարունակեց Դիկ Սենդը, – և ինչքան կարելի է զգույշ շարժվենք:

Նեգրերը, պատանու առաջնորդությամբ, իսկույն գործի անցան: Առաջադրված աշխատանքը՝ պարզել կայմահարթակի առագաստը, որոշ դժվարություն էր ներկայացնում Թոմի և նրա ընկերների համար: Պետք էր բարձրացնել կախ ընկած առագաստը և ապա կապել առագաստակալին:

Սակայն Դիկ Սենդը այնքան լավ ղեկավարեց գործը, նրա օգնականները այնքան լավ կատարեցին նրա ցուցումները, որ մի ժամից հետո առագաստը իր տեղում էր՝ պատշաճորեն ամրացված երկու առագաստակալների վրա:

Ինչ վերաբերում է մյուս երկու առագաստներին՝ առաջակայմի առագաստին և երկրորդ ֆոքին, որոնք հավաքել էին փոթորկից առաջ, այժմ հավաքվեցին առանց մեծ դժվարության, հակառակ ուժեղ քամուն:

Վերջապես, այդ օրը առավոտյան ժամը տասին «Պիլիգրիմը» ճանապարհը շարունակում էր՝ երեք առագաստ պարզած:

Դիկ Սենդը զգուշացել էր դրանից ավելի առագաստ պարզել, արդեն պարզված առագաստները բավական էին, քանի քամին չէր թուլացել, ապահովելու առնվազն երկու հարյուր մղոն՝ քսանչորս ժամվա ընթացքում և ավելին պետք չէր տասն օրում ամերիկյան ափին հասնելու համար:

Պատանին շատ գոհ էր այդ պահին, երբ վերադառնալով դեկի մոտ, անցավ իր գործին, շնորհակալություն հայտնելով «Պիլիգրիմի» ղեկավարի օգնական Ջեկին: Նավը այլևս ալիքների խաղալիքը չէր լինի, լավ էր առաջ գնում: Պատանու ուրախությունը հասկանալի կլիներ բոլոր նրանց համար, ովքեր քիչ թե շատ ընտելացած են ծովի գործերին:

Հաջորդ օրը ամպերը շարունակում էին վազել միևնույն արագությամբ, սակայն նրանց միջև գոյանում էին մեծ բացվածքներ, որոնց արանքից արևի ճառագայթները թափանցում էին մինչև ծովի մակերեսը: «Պիլիգրիմը» երբեմն ուղղվում էր այդ լույսով: Որքա՛ն լավ էր այդ կենդանացնող լույսը: Երբեմն լույսի այդ շողը հանգչում էր որևէ ամպի հետևը, որը սլանում էր դեպի արևելք, կրկին երևում, նորից անհետանում, բայց եղանակը լավանում էր:

Նավի բոլոր անցքերը բաց արին՝ ներքին մասերի օդը մաքրելու համար: Աղով հագեցած օդը ներխուժում էր նավամբարը, խցիկները, անձնակազմի սրահը: Թռչված առագաստները փռեցին կայմերի ձողերի վրա չորացնելու համար: Տախտակամածը նույնպես մաքրեցին: Դիկ Սենդն ուզում էր, որ իր նավը նավահանգիստ հասներ մաքուր և սարքին: Առանց նավի անձնակազմին ծանրաբեռնելու, օրական մի քանի ժամ այդ գործին նվիրելով, առագաստանավը կարգին կլիներ:

Թեև պատանին չէր կարող լազը նետել ծովը, սակայն բավական փորձ ուներ նավի արագությունն իմանալու՝ հետևից թողած հետքից: Այդպիսով, նա չէր կասկածում, որ յոթ օրից առաջ կտեսներ ցամաքը, և այդ համոզմունքը ներշնչեց նաև տիկին Ուելդոնին՝ քարտեզի վրա նավի հավանական դիրքը ցույց տալով:

— Լավ, իսկ ափի ո՞ր կետին կհասնենք, սիրելի՛ Դիկ,— հարցրեց տիկին Ուելդոնը:

— Ահա այստեղ, տիկին Ուելդոն,— պատասխանեց պատանին՝ ցույց տալով ծովափի այն երկար շերտը, որը ձգվում էր Պերուից մինչև Չիլի:— Ավելի ճշգրիտ լինել չեմ կարող: Ահա Չատկի կղզին, որը մենք թողեցինք արևմուտքում, և քանի որ քամու ուղղությունը միօրինակ է եղել, դրանով եզրակացնում եմ, որ ցամաքը արևելքում կտեսնենք: Նավահանգիստներ բավական կան այս ծովափին, սակայն չի կարելի ասել, թե դրանցից որի՞ն կպատահենք ցամաքին մոտենալիս:

— Դե լավ, Դի՛կ, ո՞ր նավահանգիստն էլ որ լինի, սիրով կողջունենք:

— Ճիշտ է, տիկին՝ Ուելդոն, և այստեղ դուք անկասկած միջոցներ կգտնեք անմիջապես Սան Ֆրանցիսկո վերադառնալու համար: Խաղաղօվկիանոսյան նավագնացության ընկերությունը շատ լավ կազմակերպված երթևեկություն ունի այդ ափին: Նրա շոգենավերը հանդիպում են ափի գլխավոր կետերը, և ձեզ համար դժվար չի լինի Կալիֆոռնիա մեկնել:

— Ուրեմն դու մտադիր չե՞ս «Պիլիգրիմը» Սան Ֆրանցիսկո տանել,— հարցրեց տիկին Ուելդոնը :

— Ինչպես չէ, ձեզ նավից ցամաք փոխադրելուց հետո, տիկին Ուելդոն: Եթե մեզ հաջողվի գտնել նավապետի օգնական և նավաստիներ, մենք Վալպարեզո

կգնանք բեռնաթափվելու համար, ինչպես այդ կաներ նավապետ Հուլը:
Այնուհետև կվերադառնանք մեր հիմնական նավահանգիստը: Բայց այդպիսով
դուք շատ կուշանայիք, թեև շատ տխուր է ինձ համար ձեզանից բաժանվել...

– Լավ, Դիկ, – պատասխանեց տիկին Ուելդոնը, – հետո կտեսնենք, թե ինչ կանենք:
Ասա՛ ինձ, դու վախենո՞ւմ ես ցամաքին մոտենալու վտանգներից:

– Վախենալու առիթ կա, իսկապես, – պատասխանեց պատանին, – բայց ես միշտ
հույս ունեմ, որ կպատահեմ որևէ նավի և նույնիսկ շատ եմ զարմանում, որ ոչ մեկը
չի երևում: Գոնե մի նավի պատահեինք, մենք հարաբերության մեջ կմտնեինք նրա
հետ, նա մեզ ցույց կտար մեր աշխարհագրական ճիշտ տեղը, և այդպիսով շատ
հեշտությամբ կմոտենայինք ցամաքին:

– Մի՞թե այս ծովափերում ուղեցույցներ չկան, – հարցրեց տիկին Ուելդոնը:

– Պետք է, որ լինի, – պատասխանեց Դիկ Սենդը, – բայց ցամաքին ավելի մոտ
վայրերում, պետք է ուրեմն ավելի մոտենալ ցամաքին:

– Իսկ եթե ուղեցույցի չպատահե՞նք, – հարցրեց տիկին Ուելդոնը պնդելով,
որպեսզի իմանա, թե ինչպես պատանին կխուսափեր այդ դժվարություններից:

– Այդ դեպքում, տիկին՝ Ուելդոն, կամ եղանակը լավ կլինի, քամին չափավոր, և ես
կփորձեմ նավը տանել ծովափի մոտիկ ուղղությամբ, որպեսզի կարողանամ որևէ
ապաստարան գտնել, և կամ քամին ուժեղ կլինի, և այդ դեպքում...

– Այդ դեպքում... Ի՞նչ կանես, Դիկ,

– Այդ դեպքում, այն պայմաններում, որոնց մեջ գտնվում է «Պիլիգրիմը», –
պատասխանեց Դիկ Սենդը, – մի անգամ, եթե խրվեց ցամաքի մեջ, դժվար կլինի
այնտեղից դուրս բերել:

– Ի՞նչ կանես, – կրկին հարցրեց տիկին Ուելդոնը:

– Ստիպված կլինեմ նավը ափ նետել, – պատասխանեց պատանին, որի դեմքը
մթափնեց մի րոպե: – Բայց դա կլինի ծայրահեղ դեպքում, և աստված չանի այդ
դրության հասնենք: Բայց, կրկնում եմ, տիկին Ուելդոն, եղանակը վստահեցնող է, և
անկարելի է, որ մի որևէ նավ կամ ուղեցույց-նավ չպատահի մեզ: Ուրեմն,
հույսներս չկորցնենք: Նավը դեպի ցամաք է գնում և շուտով կտեսնենք այն:

Այո, նավը ցամաք նետելը վերջին միջոցն էր, որը ամենահանդուգն ծովային իսկ
առանց սարսափի չի իրագործի: Ուստի Դիկ Սենդը չէր ուզում այդ պարագան
նախատեսել, քանի դեռևս հույս ուներ խուսափել դրանից:

Հաջորդ մի քանի օրերին եղանակը մի քանի անգամ փոխվեց, և այդ կրկին
չափազանց վրդովեց Դիկ Սենդին: Քամին շարունակում էր փչել չթուլացող ուժով,
և ծանրաչափի տատանումները ցույց էին տալիս, որ կրկին պիտի ուժեղանար:
Դիկ Սենդը իրեն հարց էր տալիս, որոշ անհանգստությամբ, թե արդյոք ստիպված
չէ՞ր լինի դարձյալ առանց առագաստի առաջ գնալ: Սակայն նա այնքան
շահագրգռված էր պահել գոնե մեկ առագաստ, որ չհավաքեց թեք առագաստը,
մինչև որ փոթորիկը կսպառնար տանել այն: Բայց կայմերը պնդացնելու համար
նա ձգել տվեց պարանները: Նախ և առաջ պետք էր չվտանգել դրությունը, որը
ավելի ևս կծանրանար, եթե «Պիլիգրիմը» զրկվեր կայմերից:

Բայց ծանրաչափի մի երկու անգամվա բարձրանալը ցույց տվեց, որ քամին միանգամից բոլորովին փոխվելու էր, այսինքն՝ դեպի արևելք էր դառնալու:

Այդ երևույթը նորից մտատանջեց Դիկ Սենդին: Ի՞նչ անել հակառակ քամու դեպքում: Դեսուդե՞ն ընկնել: Բայց եթե ստիպված լիներ այդ միջոցին դիմել, ինչքա՞ն կուշանար. նորից և նորից բաց ծովը քշվելու վտանգի տակ կընկներ:

Բարեբախտաբար այդ վախը չիրականացավ: Քամին, մի քանի օր փոփոխվելուց հետո, մեկ դեպի հյուսիս, մեկ դեպի հարավ փչելով, վերջնականապես արևմտյան ուղղությունն ստացավ: Բայց շարունակում էր շատ ուժեղ փչել և ցնցել կայմերը:

Ապրիլի 5-ն էր: Արդեն երկու ամսից ավելի էր, ինչ «Պիլիգրիմը» մեկնել էր Նոր Չեյանդիայից: Քսան օր շարունակ հակառակ քամին և անհողմությունը ուշացրել էին նրան: Այնուհետև նպաստավոր պայմաններում էր եղել և կարող էր արագորեն մոտենալ ցամաքին: Նավի արագությունը չափազանց մեծ էր փոթորկի միջոցին: Դիկ Սենդի հաշվով միջին արագությունը օրական երկու հարյուր մղոնից պակաս չէր: Իսկ ինչո՞ւ ցամաք չէր երևում. փախչո՞ւմ էր «Պիլիգրիմի» առջևից: Միանգամայն անբացատրելի էր:

Այսպես թե այնպես, ոչ մի ցամաք չէր երևում, թեև նեգրերից մեկը շարունակ հորիզոնն էր դիտում:

Հաճախ Դիկ Սենդը ինքն էր բարձրանում կայմի վրա դիտելու համար, և այնտեղ, հեռադիտակը ձեռքին, որևէ լեռան սմանություն էր փնտրում: Անոյան լեռնաշղթան, ինչպես հայտնի է, շատ բարձր է: Ուրեմն ամպերի մեջ պետք էր փնտրել հորիզոնի մշուշի մեջ կորած որևէ գագաթ:

Մի քանի անգամ թոմը և նրա ընկերները խաբվեցին՝ ցամաքի տեղ ընդունելով տարօրինակ ձևի որևէ հեռավոր ամպ, որ ցցվում էր հետին պլանում: Պատահել էր նույնիսկ, որ նրանք համառել էին, պնդելով, թե իսկապես ցամաք են տեսել, բայց որոշ ժամանակ հետո նրանք ստիպված էին եղել ընդունել, որ տեսողական պատրանքի մեջ են ընկել: Ենթադրյալ ցամաքը տեղաշարժվում էր, ձևը փոխում և վերջն էլ բոլորովին անհետանում:

Սակայն ապրիլի 6-ին այլևս չէր կարելի կասկածել:

Առավոտյան ժամը ութն էր: Դիկ Սենդը բարձրացել էր կայմի վրա: Այդ միջոցին արևի առաջին ճառագայթները ցրել էին մշուշը, և հորիզոնը բոլորովին պարզվել էր:

Դիկ Սենդի բերանից վերջապես դուրս եկավ այնքան սպասված բառը:

— Ցամա՛ք, ցամա՛ք է մեր առջև:

Այդ բացականչության վրա բոլորը վազեցին տախտակամած՝ փոքրիկ Ջեկը, իր տարիքին հատուկ հետաքրքրությամբ, տիկին Ուելդոնը, որի փորձությունները վերջ կգտնեին, թոմը և նրա ընկերները, որոնք վերջապես պիտի կարողանային ոտք դնել ամերիկյան հողի վրա, կուզեն Բենեդիկտը ևս, որը հույս ուներ միջատների նոր և հարուստ հավաքածու ստեղծել:

Միայն Նեգորոն չհայտնվեց:

Այժմ բոլորը տեսան Դիկ Սենդի նկատածը, ոմանք շատ որոշ, մյուսները՝ իրենց հավատի հայացքով: Բայց պատանին, որ այնքան սովոր էր դիտել հորիզոնը, չէր կարող սխալվել, և մի ժամ հետո պետք եղավ ընդունել, որ սխալված չէր:

Մտավորապես չորս մղոն դեպի արևելք ուղվագծվում էր բավական ցածր մի ափ, որը գոնե այդտեղից այդպես էր թվում: Ծովափից ոչ հեռու պետք է բարձրանար Անդյան լեռնաշղթան, սակայն ամպերի ցածր շերտը թույլ չէր տալիս նկատել նրա գագաթները:

«Պիլիգրիմը» ուղիղ և արագ սլանում էր դեպի այդ ծովափը, որը հետզհետե մեծանում էր աչքի առաջ:

Երկու ժամ հետո առագաստանավը ցամաքից միայն երեք մղոն էր հեռու:

Ծովափի այդ մասը վերջանում էր հյուսիս-արևելքում բավական բարձր հրվանդանով, որի տակ կարծես ծածկվում էր մի ինչ-որ ծովախորշ: Հարավ-արևելքում, ընդհակառակն, ծովափը ձգվում էր որպես մի երկար ու նեղ ցամաքալեզու:

Մի քանի ծառ բարձրանում էին ցածր ելուստների շարանի վրա: Նկատի ունենալով տեղի աշխարհագրական դիրքը, պետք էր ենթադրել, որ դրանք Անդյան բարձր լեռնաշղթայի նախալեռներն են:

Բայց չկար ո՛չ մի բնակավայր, ո՛չ մի նավահանգիստ, ո՛չ մի գետաբերան, որը ապաստան լիներ որևէ նավի:

Այդ միջոցին «Պիլիգրիմը» ուղիղ դեպի ցամաք էր գնում: Պակասեցված առագաստներով, կողքից խփող քամիների առկայությամբ պարզ էր, որ Դիկ Սենդը չէր կարող նրան բաց ծովում պահել:

Առագաստանավի առաջ երևում էր ծովափնյա խութերի մի երկար շարան, որոնց խփվելով՝ փրփրում էր սպիտակած ծովը: Ալիքները հասնում էին մինչև ցամաք: Ըստ երևույթին, ահռելի ավեկոծություն էր այնտեղ:

Դիկ Սենդը, որոշ ժամանակ կանգնեց նավաքթում: Ափը դիտելուց հետո վերադարձավ և, ոչ մի խոսք չասելով, անցավ դեկի առաջ:

Քամին անընդհատ սաստկանում էր: Քիչ հետո առագաստանավը միայն մի մղոն էր հեռու ափից:

Այդ միջոցին Դիկ Սենդը նկատեց մի փոքր ծովախորշ և որոշեց ներս մտնել, սակայն այնտեղ հասնելուց առաջ պետք էր անցնել ստորջրյա ժայռերի արանքով, որոնց միջից դժվար էր ճանապարհ բաց անել: Ուժեղ ծփանքը ցույց էր տալիս, որ ծովը ծանծաղ էր այդտեղ:

Այդ միջոցին Դինգոն, որ ետուառաջ էր գնում տախտակամածի վրա, դեպի նավաքիթը վազեց և ցամաքին նայելով՝ սկսեց ողբագին հաչել: Թվում էր, թե շունը ճանաչում էր այդ ափը, և բնագղը նրա մեջ արթնացնում էր որևէ տխուր հիշողություն:

Նեգորոն, անկասկած, լսեց շան հաչոցը, մի անդիմադրելի զգացում նրան խցիկից դուրս հրեց, և ուշադրություն չդարձնելով շան ներկայությանը՝ շտապ առաջացավ և հենվեց նավեզրին:

Նրա բախտից Դինգոն, շարունակելով տխուր հաջել, չնկատեց խոհարարին:

Նեգորոն դիտում էր այդ կատաղի ծփանքը առանց սարսափի: Տիկին Ուելդոնը, որ այդ միջոցին ուշադրությամբ նրան էր նայում, նկատեց, որ Նեգորոյի դեմքը թեթևակի կարմրեց, և մի րոպե դիմագծերը պրկվեցին: Մի՞թե նրան ծանոթ էր ցամաքի այս մասը, դեպի ուր քամին քշում, տանում էր «Պիլիգրիմը»:

Այդ րոպեին Դիկ Սենդը թողեց դեկը՝ հանձնելով այն Թոմին: Մի վերջին անգամ նայեց ծովախորշի անցքին, որը հետզհետե ավելի էր բացվում, և ապա վճռական ձայնով ասաց.

— Տիկին Ուելդոն, ես այլևս ապաստան գտնելու հույս չունեմ: Կես ժամ չի տևի, և «Պիլիգրիմը» ժայռերի վրա կընկնի՝ հակառակ իմ բոլոր ճիգերին: Պետք է, որ ծովափ դուրս գանք: Ինձ չի հաջողվի նավը նավահանգիստ տանել: Ես ստիպված եմ «Պիլիգրիմը» զոհել ձեզ փրկելու համար: Ձեր փրկության և առագաստանավի պահպանման երկընտրանքի մեջ ես տատանվել չեմ կարող:

— Դու արե՞լ ես այն բոլորը, ինչ որ կախված էր քեզանից, Դի՛կ, հարցրեց տիկին Ուելդոնը:

— Բոլորը, — պատասխանեց պատանին:

Եվ անմիջապես պատրաստվեց նավը ցամաք նետելու գործողության:

Նախ և առաջ տիկին Ուելդոնը, Ջեկը, կուզեն Բենեդիկտը և Նանը պետք է փրկագոտիներ հագնեին: Դիկ Սենդը, Թոմը և մյուս նեգրերը վարժ լողորդներ էին, բայց նույնպես միջոցներ ձեռք առան ծովն ընկնելու դեպքում լողալով ասի հասնելու համար:

Հերկուլեսը պետք է հատկապես զբաղվեր տիկին Ուելդոնով: Պատանին իր վրա վերցրեց Ջեկին: Կուզեն Բենեդիկտը, որ շատ հանգիստ էր, տախտակամած բարձրացավ հավաքածուի տուփը ուսին գցած: Դիկը նրան հանձնարարեց Բաթին և Ակտենին: Ինչ վերաբերում է Նեգորոյին, նրա զարմանալի հանդարտությունը բավականաչափ ցույց էր տալիս, որ ոչ ոքի օգնության կարիքը չունի:

Դիկ Սենդը, որպես ծայրահեղ զգուշություն, նավաքիթ բարձրացնել տվեց տասը տակառ կետի յուղ, որպեսզի «Պիլիգրիմը» ծփանքի մեջ լինելու րոպեին, ծովը թափեին և այդպիսով մի րոպե ծովը հանգստացնեին ջրի մոլեկուլները այսպես ասած՝ յուղելով: Այդ մանևրը գուցե հեշտացներ նավի անցումը ժայռերի միջով:

Դիկ Սենդը չէր ուզում աչքաթող անել ոչ մի միջոց, որը կարող էր ընդհանուրի փրկությանը ծառայել:

Բոլոր այդ զգուշությունները ձեռք առնելով՝ պատանին վերադարձավ ղեկանիվի մոտ:

«Պիլիգրիմը» այժմ ցամաքից ընդամենը մի քանի տասնյակ մետր էր հեռու, այսինքն՝ գրեթե շփման մեջ էր խութերի հետ: Նրա աջ եզրը լողում էր արդեն ծփանքի սպիտակ փոփուրի մեջ: Ամեն րոպե պատանին կարծում էր, թե նավի ողնուցը կխփվեր որևէ ժայռի:

Հանկարծ Դիկ Սենդը ջրի գույնից նկատեց, որ խութերի միջև անցում կա: Պետք էր առանց վարանելու մտնել այդտեղ, ինչքան կարելի է ափին մոտիկ ավազի մեջ խրվելու համար:

Պատանին չվարանեց: Ղեկի մի շարժումով առագաստանավը մտցրեց նեղ, ծուռումուռ անցումը:

Այդ կետում ծովը շատ ավելի կատաղի էր, ալիքները թռչում էին տախտակամածի վրա:

Նեգրերը նավաքթում կանգնած էին, տակառների մոտ, սպասելով պատանու կարգադրության:

– Թափեցե՛ք յուղը, թափեցե՛ք, – գոչեց Դիկ Սենդը:

Թափված յուղի ազդեցությամբ ծովը կարծես կախարդանքով հանդարտվեց, մի րոպե հետո ավելի ահռելի լինելու համար:

«Պիլիգրիմը» արագորեն սլացավ այդ լպրծուն ջրերի վրայով և ուղիղ դեպի ծովափ դիմեց:

Հանկարծ մի բախյուն տեղի ունեցավ: Հսկայական ալիքի վրա բարձրացած նավը խրվեց ավազուտի մեջ, կայմասարքը թափվեց՝ առանց ոչ ոքի վիրավորելու:

Բախման հետևանքով «Պիլիգրիմի» պատյանը բացվեց, և ջուրը ներս խուժեց ծայրահեղ արագությամբ: Սակայն ափը կես պարանաչափ էր հեռու և, շնորհիվ փոքր, սև ժայռերի շարանի, հեշտությամբ կարելի էր այնտեղ հասնել:

Այսպես, տասը րոպե հետո «Պիլիգրիմի» վրա գտնվողները միասին դուրս եկան առափնյա սարալանջի ստորոտը:

XIV. Ի՞նչ անել

Այսպես ուրեմն, այդ նավագնացությունը, որին երկար ժամանակ խանգարում էր անհողմ եղանակը, իսկ այնուհետև՝ քամիներն ու փոթորիկը, և որը յոթանասունչորս օր էր տևել, վերջացավ նրանով, որ «Պիլիգրիմը» ջարդվեց՝ ափամերձ խութերին զարկվելով:

Սակայն տիկին Ուելդոնը և նրա ուղեկիցները շնորհակալ եղան նախախնամությունից, որ ապահով վիճակում էին: Արդարև, ցամաքի և ոչ թե հաղաղ օվկիանոսի ինչ-որ դաժան կղզու վրա էր փոթորիկը նետել նրանց: Հարավային Ամերիկայի որ մասում էլ դուրս եկած լինեին, այնտեղից դժվար չէր լինի հայրենիք վերադառնալ:

Ինչ վերաբերում է «Պիլիգրիմին», նա կորած էր ընդմիջտ: Առագաստանավն այլևս մի անարժեք կմախք էր, և ալեկոծությունը մի քանի ժամում կցրեր նրա բեկորները: Անկարելի էր նրանից որևէ բան փրկել: Բայց եթե Դիկ Սենդին չհաջողվեց նավատիրոջը վերադարձնել առագաստանավը անվնաս վիճակում, այնուամենայնիվ, նրա շնորհիվ նավի վրա գտնվողները ողջ և առողջ գտնվում էին որևէ հյուրընկալ ցամաքի վրա, և նրանց մեջ էին Ջեյմս Ուելդոնի կինն ու զավակը:

Իսկ թե ամերիկյան մայրցամաքի ո՛ր շրջանն էր ընկել առագաստանավը, այդ մասին կարելի էր երկար վիճել: Պերուի ծովափը, ինչպես ենթադրում էր Դիկ Սենդը: Գուցե, քանի որ Չատկի կղզին անցնելուց հետո նա գիտեր, որ «Պիլիգրիմը» քվեց դեպի հյուսիս-արևելք, քամու, ինչպես նաև հասարակածային հոսանքների ազդեցությամբ: Այդ պայմաններում, շատ հասկանալի է, որ առագաստանավը, հարավային լայնության քառասուններեք աստիճանից շեղված կլիներ մինչև տասնհինգերորդ աստիճանը:

Շատ կարևոր էր ինչքան կարելի է շուտ ու ճշգրիտ գաղափար ունենալ, թե որտեղ տեղի ունեցավ աղետը: Ընդունելով, որ Պերուի ծովափն էր այդ, հետևապես այդ շրջանում հազվադեպ չպետք է լինեն նավահանգիստները, ավանները, գյուղերը, ուրեմն հեշտ կլիներ հասնել մի որևէ բնակավայրի: Մինչդեռ ծովափի այդ մասը ամայի էր երևում:

Սև ժայռերով մի նեղ ավազաշերտ էր այդ, և միջակ բարձրությամբ մի սարալանջ, այս ու այնտեղ բացված լայն, ձագարածև խոռոչներով, որոնք ժայռերի ճեղքումից էին առաջացել: Մի շարք ոչ շատ թեք զառիվայրերը տանում էին դեպի ժայռի կատարը:

Դեպի հյուսիս, աղետի վայրից քառորդ մղոն հեռու, երևում էր մի փոքրիկ գետաբերան, որը նկատելի չէր հեռվից: Այդ գետակի ափերին թեքվել էին բազմաթիվ ռիզոֆորներ:

Սարալանջի գագաթը ծածկված էր խիտ անտառով, որի կանաչ զանգվածը դուրեկան տեսք էր ներկայացնում և տարածվում էր մինչև հեռավոր լեռները: Այդ անտառում, եթե կուզեն Բենեդիկտը բուսաբան լիներ, ինչքա՛ն նոր տեսակի ծառեր կգրավեին նրա ուշադրությունը:

Այդտեղ կային բարձր բառբաբներ, որոնց սիսալմամբ արտակարգ երկար կյանք էին վերագրում, և որոնց կեղևը նման էր եգիպտական սիենիտ քարին, հովհարաբույսեր, սպիտակ սոճի, հնդկարմավ, հատուկ տեսակի պղպեղենի և այլ հարյուրավոր բույսեր, որոնք ամերիկացին վարժված չէ տեսնել Նոր աշխարհի հյուսիսային մասում:

Ծովափի վրա ճախրում էին մեծ թվով ճղճղան թռչուններ, մեծ մասամբ ծիծեռնակների տարբեր տեսակներ՝ սևակապտավուն փետուրներով, բաց գույնի գլուխներով: Այսուայնտեղ թռչում էին նաև կաքավներ՝ մոխրագույն պարանոցով:

Տիկին Ուելդոնը և Դիկ Սենդը նկատեցին, որ այս տարբեր տեսակի թռչունները մարդկանցից չէին վախենում, առանց խրտնելու թողնում էին մոտենալ իրենց: Մի՞թե դեռևս մարդկանց ներկայությունը նրանց չէր սպառնացել, մի՞թե այս ծովափն այնքան լքված էր, որ հրազենի պայթյունը երբեք չէր լսվել այստեղ:

Ծովի խութերի շուրջը թռչում էին մի քանի հավալուսներ, որոնք մանր ձկներ էին լցնում կտուցի տակ կախված տոպրակի մեջ: Ծովից եկած ուրուրները սկսում էին պտույտ գալ «Պիլիգրիմի» շուրջը:

Երևում է՝ թռչունները ցամաքի այս շրջանի միակ կենդանի էակներն էին, չհաշված, իհարկե, այն բազմաթիվ հետաքրքիր միջատները, որ անշուշտ կգտներ կուզեն Բենեդիկտը: Թեև պստիկ Ջեկը ունեցավ այդ թռչուններից, սակայն նրանց չէր կարելի հարցնել այդ երկրի անունը, որն իմանալու համար պետք էր դիմել որևէ բնիկի:

Բայց ոչ մի բնիկ չկար կամ գոնե չէր երևում: Ոչ մի բնակարան, խրճիթ կամ հյուղակ՝ ոչ հյուսիսում, փոքր գետակից այն կողմ, ոչ հարավում, ոչ վերջապես այդ սարալանջից այն կողմը, խիտ անտառի ծառերի մեջ: Ծիսի ոչ մի քուլա չէր բարձրանում: Ոչ մի նշան կամ հետք չկար, որը ցույց տար, թե ծովափի այս մասին երբևիցե մարդկային ոտք է դիպել:

Այս երևույթը շատ էր զարմացնում Դիկ Սենդին:

«Որտե՞ղ ենք մենք, որտե՞ղ կարող ենք լինել,— հարց էր տալիս իրեն,— մի՞թե ոչ ոք չկա, որի հետ կարելի լիներ խոսել»:

Իսկապես ոչ ոք չկար և, անտարակույս, եթե որևէ բնիկ մոտենար, Դինգոն կզգար և կսկսեր հաչել: Շունը գնում էր, գալիս ավագի վրա՝ քիթն ու պոչը կախ, խուլ գոմռալով: Նրա վարքը տարօրինակ էր, սակայն ո՛չ մարդու, ո՛չ էլ որևէ կենդանու ներկայություն չէր արտահայտում:

— Դի՛կ, նայիր, թե ինչ է անում Դինգոն,— ասաց տիկին Ուելդոնը:

— Այո, տարօրինակ է,— պատասխանեց Դիկ Սենդը:— Կարծես որևէ հետք է փնտրում:

— Իսկապես շատ տարօրինակ է,— ասաց տիկին Ուելդոնը և իսկույն ավելացրեց,— իսկ ի՞նչ է անում Նեգորոն:

— Անում է այն, ինչ որ անում է Դինգոն,— պատասխանեց Դիկ Սենդը:— Գնում է, գալիս... Ասենք, նա ազատ է այստեղ. ես այլևս իրավունք չունեմ նրան հրամայելու: «Պիլիգրիմի» խորտակումով նրա ծառայությունը վերջացավ:

Իսկապես, Նեգորոն քայլում էր ավագի վրա, ետ էր դառնում, դիտում էր ափն ու սարալանջը այն մարդու նման, որը փորձում է ամփոփել մտքերը և վերհիշել: Մի՞թե նրան ծանոթ էր այս ծովափը: Հավանական է, որ կմերժեր պատասխան տալ, եթե այդպիսի հարց տային նրան: Ավելի լավ կլիներ չհետաքրքրվել այդ մարդով: Քիչ հետո Դիկ Սենդը տեսավ, որ նա գնաց փոքր գետակի կողմը, և երբ Նեգորոն անհետացավ սարալանջի հետևը, այլևս չմտածեց նրա մասին:

Այժմ պետք է զբաղվել ամենակարևոր խնդրով. գտնել մի ապաստան, որևէ ծածկած տեղ, որտեղ կարելի լիներ տեղավորվել ժամանակավորապես և մի քիչ բան ուտել: Այնուհետև կխորհրդակցեին և կորոշեին, թե ինչ պետք էր անել:

Ուտելիքի մասին կարիք չկար մտածել: Բացի այն մթերքից, որ պետք է մատակարարեր այդ երկիրը, նավի մթերանոցում բավականաչափ մթերք կար: Ալեկոծությունը այս ու այն կողմն էր նետել մեծ թվով իրեր, որոնք մնացել էին ժայռերի արանքներում, սակայն այժմ տեղատվության հետևանքով դուրս էին գալիս: Թոմը և նրա ընկերները արդեն հավաքել էին մի քանի տակառ չորացրած հաց, պահածոյի տուփեր, աղ դրած մսի արկղեր: Ծովի ջուրը դեռևս դրանք չէր փչացրել, ուստի փոքր խմբի ուտելիքն ապահովված էր ավելի ժամանակի համար, քան անհրաժեշտ էր մինչև որևէ ավան կամ բնակավայր գտնելը: Այդ տեսակետից անհանգստանալու բան չկար: Այդ գանազան տեսակի պարենամթերքը փոխադրվելով ապահով տեղ մակընթացության վտանգից ազատ էր:

Խմելու ջուրը նույնպես առատ էր: Նախ և առաջ Դիկ Սենդը չերկույցսին ուղարկել էր գետակից ջուր բերելու, և իսկա նեգորը իր ուսի վրա մի ամբողջ տակառ սառը, մաքուր ջուր բերեց:

Ինչ վերաբերում է կրակին, եթե պետք լիներ փայտն անպակաս էր շրջակայքում: Ծերուկ Թոմը, որ մոլի ծխող էր, իր հետ վերցրել էր պինդ փակված տուփի մեջ դրված որոշ քանակությամբ արեթ և, կարիքի դեպքում, կարող էր կայծ առաջացնել թեկուզ ծովափից վերցրած կայծքարերով:

Մտում էր ուրեմն մի քարայր գտնել, որտեղ կարողանար ապաստանել փոքր խումբը, մեկնելուց առաջ մի գիշեր հանգստանալ:

Փոքրիկ Ջեկը գտավ այդ «հանգստավայրը»: Սարահարթի ստորոտին խաղալու միջոցին, մի ժայռի հետևը, երեխան հայտնաբերեց մի քարայր, խոր, հարթ, այն քարայրներից մեկը, որ փորում է ծովը մակընթացության պահին և փակված ավիքներով:

Երեխան հիացել էր և ուրախ կանչելով մորը՝ հաղթականորեն ցույց տվեց գտած քարայրը:

— Ապրես, տղաս, — պատասխանեց տիկին Ուելդոնը: — Եթե մենք ռոբինզոններ լինեինք և երկար ապրեինք այս ծովափում, այս քարայրը քո անունով կկոչեինք:

Քարայրը մեծ չէր՝ տասից տասներկու ոտնաչափ խորությամբ և նույնքան լայնությամբ, բայց փոքրիկ Ջեկի աչքին դա մի ահագին անձավ էր երևում: Համենայն դեպս, քարայրում կարող էին տեղավորվել աղետոյալները և, ինչպես տիկին Ուելդոնը և Նանը բավականությամբ նկատեցին, քարայրը շատ չոր էր: Լուսինն այդ միջոցին իր առաջին քառորդում էր, ուրեմն վտանգ չկար, որ մակընթացությունը կհասներ սարավանջի ստորոտը, հետևապես՝ և մինչև քարայրը: Այդպիսով, կարելի էր մի քանի ժամ հանգստանալ:

Տասը ռոպե հետո բոլորը պառկել էին չոր ջրիմուռների գորգի վրա: Նեգորոն ևս ցանկացավ միանալ փոքր խմբին և մասնակից լինել ընդհանուր նախաճաշին: Անտարակույս, խոհեմություն չէր համարել միայնակ թափառել խիտ անտառում, որի միջով անցնում էր ոլորապտույտ գետը:

Կեսօրվա ժամը մեկն էր: Նախաճաշը բաղկացած էր պահածո մսից, պաքսիմատից, ինչպես նաև խմելու ջրից, որին խառնել էին մի քանի կաթիլ Բաթի ծովից դուրս բերած ռոմից:

Բայց եթե Նեգորոն մասնակցեց նախաճաշին, ապա բոլորովին չխառնվեց այն խոսակցությանը, որտեղ քննվում էին ներկա դրության հետ կապված միջոցառումները: Այնուամենայնիվ, առանց ցույց տալու, ուշադրությամբ լսեց խոսակցությունը և հետևություններ արեց իր համար:

Այդ միջոցին Դինգոն, որին չէին մոռացել, հսկում էր քարայրի մուտքի մոտ: Կարելի էր հանգիստ լինել, որ եթե որևէ կենդանի էակ երևար ծովափին, հավատարիմ կենդանին իսկույն կահագանգեր:

Տիկին Ուելդոնը համարյա քնած Ջեկին գիրկն առած, սկսեց խոսակցությունը.

— Դի՛կ, բարեկամս, բոլորի անունից շնորհակալություն եմ հայտնում այն անձնվիրության համար, որը դու ցուցաբերեցիր մինչև այժմ, բայց մենք դեռ քեզ ազատել չենք կարող: Դու մեր առաջնորդը կլինես ցամաքի վրա, ինչպես որ մեր նավապետը եղար նավի վրա: Դու վայելում ես մեր բոլորի վստահությունը: Խոսի՛ր, ի՞նչ պետք է անել:

Տիկին Ուելդոնը, ծեր Նանը, Թոմը և Նրա ընկերները իրենց հայացքն ուղղել էին պատանու դեմքին: Նեգորոն ևս Նրան էր նայում լարված ուշադրությամբ: Պարզ էր, որ Դիկ Սենդի պատասխանը չափազանց հետաքրքրում էր Նրան:

Դիկ Սենդը մի քանի րոպե մտածեց և ասաց.

— Տիկին Ուելդոն, Նախ և առաջ պետք է իմանալ, թե որտեղ ենք գտնվում: Իմ կարծիքով, մեր նավը ծովափ կարող է նետված լինել ամերիկյան այն ցամաքամասի վրա, որը Պերուի ծովափն է կազմում: Քամին և հոսանքները Նրան բերած կլինեն մինչև այդ լայնությունը: Բայց արդյո՞ք գտնվում ենք Պերուի հարավային Նահանգներից մեկում, այսինքն՝ պամպասների սահմանակից ամենից ավելի քիչ մարդաբնակ շրջանում: Գուցե: Ես Նույնիսկ այդպես եմ ենթադրում, տեսնելով այս ամառի ծովափը, որտեղ նավերը շատ քիչ պետք է հանդիպեն: Ուրեմն կարող է պատահել, որ մենք բավական հեռու ենք գտնվում ամենամոտ բնակավայրից, որ շատ վատ է մեզ համար:

— Լավ, ուրեմն ի՞նչ պետք է անենք:

— Իմ կարծիքով, — շարունակեց Դիկ Սենդը, — չպետք է հեռանալ քարայրից, մինչև չպարզենք, թե որտեղ ենք գտնվում: Վաղը, մի գիշեր հանգստանալուց հետո, մեզանից երկուսը կգնան հետախուզության: Նրանք կփորձեն, առանց շատ հեռանալու, հանդիպել բնիկների, տեղեկություններ ստանալ և վերադառնալ քարայր: Չի կարող պատահել, որ տասը կամ տասներկու մղոն շառավիղով՝ ոչ ոք չլինի:

— Մի՞թե պետք է բաժանվենք, — ասաց տիկին Ուելդոնը:

— Այդ անհրաժեշտ է թվում ինձ, — պատասխանեց պատանին: — Եթե ոչ մի տեղեկություն չստացվի, եթե, հակառակ մեր ակնկալության, այս շրջանը բոլորովին ամառի է, ինչ արած, այդ դեպքում ուրիշ միջոցի կդիմենք:

— Իսկ մեզնից ո՞վ կգնա հետախուզության, — հարցրեց տիկին Ուելդոնը՝ մի րոպե մտածելուց հետո:

— Կորոշենք, — պատասխանեց Դիկ Սենդը: — Համենայն դեպս, իմ կարծիքով դուք, տիկին՝ Ուելդոն, կուզեն Բենեդիկտը, Ջեկը և Նանը չեք հեռանա քարայրից: Բաթը, Հերկուլեսը, Ակտեոնը և Օստինը կմնան ձեզ մոտ, իսկ Թոմը և ես կգնանք առաջ, Նեգորոն, անկասկած, կցանկանա մնալ այստեղ, — ավելացրեց Դիկ Սենդը՝ խոհարարին նայելով:

— Հավանական է, — պատասխանեց Նեգորոն, որ դրանից ավելին խոստացողը չէր:

— Մեզ հետ կտանենք Դինգոյին, — շարունակեց պատանին, — օգտակար կլինի մեր հետախուզության միջոցին:

Դինգոն, լսելով իր անունը, երևաց քարայրի մուտքի մոտ և մի կարճ հաչոցով կարծես հաստատեց Դիկ Սենդի առաջարկը:

Պատանու առաջարկից հետո տիկին Ուելդոնը մտածմունքի մեջ ընկավ: Բաժանումը, ինչքան էլ որ կարճատև լիներ, շատ էր անհանգստացնում Նրան: Չէ՞ր կարող պատահել, որ «Պիլիգրիմի» խորտակումը իմացած լինեն այդ ծովափում թափառող բնիկները, և եթե թալանողներ հայտնվեին, ավելի լավ չէ՞ր լինի, որ բոլորը միատեղ լինեին:

Պատանու առաջարկի առթիվ տիկին Ուելդոնի այդ առարկությունը իսկապես արժեր նկատի ունենալ:

Սակայն Դիկ Սենդը կարողացավ փարատել նրա այդ կասկածը՝ դիտել տալով, որ հնդկացիներին չպետք է համեմատել Աֆրիկայի կամ Պոլինեզիայի վայրենիների հետ, և որևէ ավագակային հարձակում նրանց կողմից սպասելի չէ: Բայց խորանալ այդ երկրում, առանց նույնիսկ գաղափար ունենալու, թե Հարավային Ամերիկայի որ շրջանին է պատկանում կամ այս շրջանի ամենամոտ բնակավայրը ի՞նչ հեռավորության վրա էր գտնվում, այդ կնշանակեր ծանր հոգնածության ենթարկվել: Միմյանցից բաժանվելը, իհարկե, կարող էր ունենալ իր անպատեհությունները, սակայն ավելի քիչ, քան թե ամբողջ ջոկատով կուրորեն թափառելը անտառում, որը հավանական է շարունակվում էր մինչև լեռների ստորոտը:

— Բացի դրանից, — կրկնեց Դիկ Սենդը՝ պնդելով իր ասածի վրա, — չեմ կարծում, թե մեր բաժանումը երկարատև կլինի: Ամենաուշը երկու օրից հետո, եթե թոմը և ես չպատահեցինք ո՛չ բնակավայրի, ո՛չ բնակչի, կվերադառնանք քարայր: Բայց դա խիստ անհավանական է, և, քսան մղոն էլ երկրի խորքը չառաջացած, հավանորեն գաղափար կկազմենք նրա աշխարհագրական դիրքի մասին: Ես կարող եմ սխալված լինել իմ հաշիվներում, քանի որ աստղագիտական դիտումներ անելու հնարավորություն չունեմ, և կարող է պատահել, որ հասել ենք լայնության կամ ավելի բարձր, կամ ավելի ցածր աստիճանի:

— Այո... դու անշուշտ իրավացի ես, տղաս, — պատասխանեց տիկին Ուելդոնը խիստ մտահոգ:

— Իսկ դուք, պարո՞ն Բենեդիկտ, — հարցրեց Դիկ Սենդը, — ի՞նչ եք մտածում իմ առաջարկի մասին:

— Ե՛ս... — պատասխանեց կուզեն Բենեդիկտը:

— Այո, ի՞նչ է ձեր կարծիքը:

— Ես որևէ կարծիք չունեմ, — պատասխանեց կուզեն Բենեդիկտը: — Ինձ համար բոլոր առաջարկները լավ են, և կանեմ ինչ որ կորոշվի: Եթե որոշեք մի երկու օր մնալ այստեղ, դա ինձ դուր կգա, կուսումնասիրեմ այս ծովափը զուտ միջատաբանական տեսակետից:

— Արա՛ ուրեմն այնպես, ինչպես ցանկանում ես, — ասաց տիկին Ուելդոնը Դիկ Սենդին, — մենք կմնանք այստեղ, իսկ դու կգնաս թոմի հետ:

— Որոշված է ուրեմն, — ասաց կուզեն Բենեդիկտը. ամենահանգիստ ձայնով. — իսկ ես կձանոթանամ այս շրջանի միջատներին:

— Պատվիրում եմ շատ չհեռանալ, պարոն Բենեդիկտ, — ասաց պատանին:

— Չանհանգստանաս, տղաս:

— Եվ մանավանդ շատ մոծակ չբերեք մեզ, — ավելացրեց ծերունի թոմը:

Մի քանի րոպե հետո միջատաբանը, թիթեղյա թանկագին տուփը վերցրեց, հեռացավ քարայրից:

Գրեթե միաժամանակ Նեգորոն էլ հեռացավ: Այդ մարդու համար շատ բնական բան էր, որ միայն իր մասին մտածեր, բայց այն միջոցին, երբ կուզեն Բենեդիկտը բարձրանում էր թեք սարավանջը անտառի շուրջը թափառելու համար, Նեգորոն, դեպի գետը շուռ գալով՝ դանդաղ քայլերով հեռացավ և երկրորդ անգամ անհետացավ բարձրանալով սարավանջը:

Ջեկը շարունակում էր քնել: Տիկին Ուելդոնը նրան թողնելով Նանի ծնկների վրա, գնաց ծովափի կողմը: Դիկ Սենդն ու ընկերները հետևեցին նրան: Նրանց նպատակն էր ստուգել, թե արդյոք ծովի դրոթյունը թույլ չէ՞ր տալիս գնալ մինչև «Պիլիգրիմի» իրանը, որտեղ դեռևս այնպիսի իրեր էին մնացել, որոնք կարող էին օգտակար լինել փոքր խմբին:

Այն խուլթերը, որոնց խփվել էր առագաստանավը, այժմ ջրից դուրս էին եկել: Չանազան տեսակի բեկորների մեջ ցցվել էր նավի կմախքը, որը տեղատվության հետևանքով մասամբ ջրից դուրս էր մնացել:

Այդ երևույթը շատ զարմացրեց Դիկ Սենդին, քանի որ նրան հայտնի էր, թե մակընթացությունը և տեղատվությունը շատ հազվադեպ են հաղաղ օվկիանոսի ամերիկյան ափին: Բայց ի վերջո այդ երևույթը կարելի էր բացատրել դեպի ափը փչող մուլեգին քամիներով:

Վերստին տեսնելով առագաստանավը՝ տիկին Ուելդոնը և նրա ընկերները վատ զգացին: Այնտեղ նրանք ապրել էին երկար օրեր և այնքան տանջվել էին: Կիսով չափ ջարդված, առանց կայմի և առանց առագաստի, կյանքից զրկված էակի նման մի կողքի պառկած նավի տեսքը ցավալիորեն ճմլեց նրանց սիրտը:

Բայց պետք էր այցելել այդ պատյանը, քանի դեռ ծովը նրան բուրրովին չէր քայքայել:

Դիկ Սենդը և Նեգրերը հեշտությամբ կարողացան տախտակամածի վրա բարձրանալ՝ նավի կողքին կախված պարաններին կառչելով: Այն միջոցին, երբ Թոմը, Հերկուլեսը, Բաթը և Օստինը նավի մթերանոցից դուրս էին բերում այն ամենը, ինչ որ օգտակար կարող էր լինել թե՛ ուտելիք, թե՛ խմելիք, պատանին մտավ անձնակազմի սրահը: Բարեբախտաբար ջուրը չէր ողողել նավի այդ մասը, չնայած որ նավախելն ընկղմվել էր ջրի մեջ:

Պատանին այստեղ գտավ չորս հրացան լավ վիճակում՝ «Պուրդեյ և Ընկ.» գործարանի հիանալի ռեմինգտոններ, ինչպես նաև մի հարյուրյակ փամփուլշտ՝ իրենց փամփշտակալով: Փոքր խումբը այդպիսով կկարողանար զինվել և պաշտպանվել, եթե հնդկացիները ճանապարհին հարձակվեին նրա վրա:

Պատանին չմոռացավ վերցնել գրպանի մի լապտեր: Ցավոք նավաքթի խցիկում պահված քարտեզները թրջվել և փչացել էին:

Նավի զինապահեստում կար նաև կետի մարմինը անդամահատելու մի քանի խոշոր դանակ. Դիկ Սենդը դրանցից վերցրեց վեց հատ՝ լրացնելու համար իր ընկերների զինումը, չմոռացավ վերցնել նաև փոքրիկ Ջեկի մանկական անվնաս հրացանը:

Նավի վրա մնացած մյուս իրերը կամ ցիրուցան էին եղել և կամ անպետքացել: Բացի դրանից, անօգուտ էր ծանրաբեռնվել չափից ավելի, ուղևորության մի քանի օրերի համար:

Ուտելիքով, զենքով, ռազմամթերքով ավելի քան ապահովված էին: Սակայն Դիկ Սենդը, տիկին Ուելդոնի խորհրդով, չմոռացավ վերցնել նավի վրա գտնվող ամբողջ դրամը՝ մոտավորապես հինգ հարյուր դոլլար:

Ճիշտն ասած՝ այդ գումարը քիչ էր: Տիկին Ուելդոնը իր հետ ավելի մեծ գումար էր վերցրել, որը սակայն անհետացել էր:

Ո՞վ, բացի Նեգորոյից, կարող էր կանխած լինել նրանց և գողանալ նավապետ Հուլին ու տիկին Ուելդոնին պատկանող դրամը: Բացի նրանից, ոչ ոքի վրա չէր կարելի կասկածել: Բայց և այնպես Դիկ Սենդը վարանեց մի բոլոր: Նա գիտեր, որ ամեն ինչ սպասելի էր այդ ինքնամփոփ մարդուց, մի մարդ, որին ուրիշի վիշտը ուրախություն էր պատճառում: Այո, Նեգորոն չար մարդ էր, բայց պե՞տք էր եզրակացնել, որ նա չարագործ էր: Դիկ Սենդը դժվարանում էր հավատալ դրան: Սակայն մի՞թե կարելի էր կասկածել մի ուրիշին: Ոչ: Այդ պատվավոր նեգրերը ոչ մի բոլոր չէին հեռացել քարայրից, մինչդեռ Նեգորոն թափառում էր ծովափում: Միայն նա կլիներ մեղավորը: Դիկ Սենդը որոշեց հարցաքննել Նեգորոյին և, եթե կարիք լիներ, խուզարկել հենց որ վերադառնար: Պատանին որոշել էր իմանալ ամբողջ ճշմարտությունը:

Արևն այդ միջոցին իջնում էր հորիզոնից: Տարվա այդ ժամանակ արևը դեռևս հասարակածը չէր անցել, որպեսզի կարողանար ջերմություն և լույս տալ հյուսիսային կիսագնդին, սակայն մոտենում էր նրան, ուստի գրեթե ուղղահայաց ընկավ այն գծի վրա, որտեղ միանում են ծովն ու երկինքը: Վերջալույսը կարճատև եղավ, և խավարը միանգամից վրա հասավ, որը հաստատեց պատանու այն կարծիքը, թե առագաստանավը հասել էր Այծեղջեր արևադարձի և հասարակածի միջև ընկած շրջանին:

Քիչ հետո տիկին Ուելդոնը, Դիկ Սենդը և նեգրերը վերադարձան քարայր մի քանի ժամ հանգստանալու համար:

— Գիշերը դարձյալ փոթորիկ կլինի, — ասաց ծերունի Թոմը՝ ցույց տալով խիտ ամպերով ծածկված հորիզոնը:

— Այո, — պատասխանեց Դիկ Սենդը, — ուժեղ քամի կլինի: Բայց մեզ ի՞նչ, մեր խեղճ նավը խորտակվեց, և փոթորիկը այլևս մեզ չի կարող վնասել:

— Թող աստծո կամքը լինի, — ասաց տիկին Ուելդոնը:

Որոշվեց, որ այդ գիշեր, իսկ դա շատ մուգ կլիներ, նեգրերից յուրաքանչյուրը հերթով պիտի հսկեր քարայրի մուտքը: Բացի նրանցից, չպետք էր մոռանալ Դինգոյին, որի լավ պահակությունը կասկածից դուրս էր:

Այդ միջոցին նկատեցին, որ կուզեն Բենեդիկտը չէր վերադարձել:

Հերկուլեսը նրան ձայն տվեց իր հուժկու թոքերի ամբողջ ուժով, և գրեթե անմիջապես հետո միջատաբանը սկսեց իջնել սարալանջից՝ գլուխը ջարդելու վտանգի տակ:

Կուզեն Բենեդիկտը սաստիկ զայրացել էր այն պատճառով, որ անտառում ոչ մի միջատ չէր գտել, ոչ մի հատ, որը արժանի լիներ մտնել իր հավաքածուի մեջ: Կարիճներ, օձասանդերեր և այլ բազմոտանիներ ինչքան ուզեք, նույնիսկ պետք եղածից ավելի, իսկ մեզ հայտնի է, որ կուզեն Բենեդիկտը չուներ բազմոտանիների հետ:

– Արժե՞ր միթե, – ավելացրեց նա, – հինգ-վեց հազար մղոն ճանապարհ գնալ, փոթորկի դիմանալ, ծովափ նետվել և չգտնել մի հատ ամերիկյան վեցոտանի, որը միջատաբանական թանգարանի գարդն է կազմում: Ոչ: Ոչ, իսկապես որ չարժեր:

Ի վերջո կուզեն Բենեդիկտը պահանջեց մեկնել, չուզենալով մի ժամ ավելի մնալ այդ ատելի վայրում:

Տիկին Ուելդոնը հանգստացրեց այդ մեծ երեխային՝ հուսադրելով նրան, որ հաջորդ օրն ավելի բախտավոր կլինի, որից հետո բոլորը միասին գնացին խցկվելու քարայրը և քնելու մինչև արևածագ, երբ Թոմը հիշեցրեց, որ Նեգրոն դեռ չէր վերադարձել, թեև արդեն գիշեր էր:

– Որտե՞ղ կարող է լինել, – հարցրեց տիկին Ուելդոնը:

– Մեր ի՞նչ գործն է, – ասաց Բաթը:

– Ընդհակառակն, – պատասխանեց տիկին Ուելդոնը, – ավելի լավ կլիներ, որ այդ մարդը մեզ մոտ լիներ:

– Անկասկած, տիկին Ուելդոն, – պատասխանեց Դիկ Սենդը, – բայց նա իր հոժար կամքով գնաց մեզանից. չգիտեմ, թե ինչպես կարելի էր ստիպել նրան վերադառնալ: Ով գիտե, թե ինչ պատճառով է մեզանից ընդմիջտ հեռանում:

Պատանին տիկին Ուելդոնին մի կողմ տանելով՝ հայտնեց իր կասկածները և չգարմացավ, որ նա էլ միևնույն կարծիքին էր: Միայն մի կետում էին նրանք տարակարծիք:

– Եթե Նեգրոն հայտնվի, – ասաց տիկին Ուելդոնը, – նշանակում է, որ գողացածը ապահով տեղ է պահել: Իմ կարծիքով, ավելի լավ կլինի, քանի որ չենք կարող նրա գողությունն ապացուցել, չհայտնենք մեր կասկածները և այնպես ցույց տանք, որ նա մեզ խաբել է, և մենք չգիտենք:

Տիկին Ուելդոնը իրավացի էր, և Դիկ Սենդը համաձայնեց նրա հետ:

Այնուամենայնիվ, մի քանի անգամ ձայն տվին Նեգրոյին... Ոչ մի պատասխան չստացվեց: Կամ նա շատ հեռու էր գտնվում և չէր կարող նրանց լսել և կամ չէր ուզում վերադառնալ:

Նեգրերը չափսոսացին, որ ազատվեցին այդ մարդուց, սակայն, ինչպես ասել էր տիկին Ուելդոնը, գուցե նա ավելի վտանգավոր էր հեռվից, քան թե մոտիկից: Բացի դրանից, ինչպե՞ս բացատրել այն հանգամանքը, որ Նեգրոն համարձակվել էր մենակ թափառել այդ անձանոթ շրջանում: Չէ՞ր մոլորվել արդյոք և իզուր խավարի մեջ քարայրի ճանապարհին էր փնտրում: Տիկին Ուելդոնը և Դիկ Սենդը ոչինչ չէին հասկանում: Ինչ էլ որ լիներ, չէր կարելի Նեգրոյին սպասելու համար զրկվել անհրաժեշտ հանգստից:

Այդ միջոցին շունը, որ վազում էր ծովափի ավազի վրա, սկսեց սաստիկ հաչել:

– Ինչո՞ւ է հաչում շունը, – հարցրեց տիկին Ուելդոնը:

– Պետք է անպայման իմանալ պատճառը, – պատասխանեց Դիկ Սենդը: – Գուցե Նեգրոն է վերադառնում:

Անմիջապես շերկուլեսը, Բաթը, Օստինը և Դիկ Սենդը դեպի գետաբերան գնացին:

Սակայն գետի ափին հասնելով ոչ ոքի չտեսան և ոչինչ չլսեցին: Դինգոն ևս լռել էր:

Դիկ Սենդն ու Նեգրերը քարայր վերադարձան:

Քնելու պատրաստություն տեսան: Նեգրերից յուրաքանչյուրը հանձն առավ հերթով հսկել դրսում:

Սակայն տիկին Ուելդոնը վրդովմունքից չկարողացավ քնել: Նրան թվում էր, թե այդքան ցանկալի երկիրը չէր արդարացնում նրա հույսերը՝ հարազատների ապահովությունը և իր հանգիստը:

XV. Հարրիս

Հաջորդ օրը, ապրիլի 7-ին, Օստինը, որ հսկում էր, վաղ առավոտյան տեսավ, թե ինչպես Դինգոն հաչելով վազեց դեպի գետակը: Գրեթե միաժամանակ տիկին Ուելդոնը, Դիկ Սենդը և Նեգրերը քարայրից դուրս եկան:

Կասկած չկար, որ մի բան էր պատահել:

— Դինգոն մարդու կամ կենդանու հոտ է առել,— ասաց պատանին:

— Համենայն դեպս Նեգորոն չէ,— պատասխանեց Թոմը,— նրա վրա Դինգոն կատաղությամբ կհաչեր:

— Եթե Նեգորոն չէ, ապա որտե՞ղ կարող է լինել նա,— հարցրեց տիկին Ուելդոնը՝ հայացքը Դիկին ուղղելով, որը միայն պատանին հասկացավ,— և եթե նա չէ, ո՞վ է ուրեմն:

— Հիմա կիմանանք, տիկին Ուելդոն,— պատասխանեց պատանին և, դիմելով Բաթին, Օստինին և Հերկուլեսին, ասաց.— Ձինվեցե՛ք, բարեկամներս, և եկե՛ք:

Հետևելով Դիկ Սենդի օրինակին՝ Նեգրերից յուրաքանչյուրը վերցրեց հրացանը և դանակը: Մի-մի փամփուշտ դրեցին հրացանի փողի մեջ և այդպես զինված չորսը միասին գնացին դեպի գետափ:

Տիկին Ուելդոնը, Թոմը և Ակտեոնը մնացին քարայրի մուտքի առաջ, իսկ փոքրիկ Ջեկը և Նանը քարայրի ներսում էին:

Արևը ծագում էր այդ միջոցին, նրա ճառագայթները, խափանվելով արևելքի բարձր լեռներից, ուղղակի չէին հասնում սարալանջին, սակայն ծովը շողշողում էր օրվա առաջին լույսի տակ մինչև արևմտյան հորիզոնը:

Դիկ Սենդն ու նրա ընկերները հետևում էին ծովափին, որի ոլորանը միանում էր գետաբերանին:

Այնտեղ Դինգոն, որսի առաջ կանգնածի նման, շարունակում էր հաչել: Պարզ էր, որ շունը որևէ բնիկի հոտ էր առել:

Իսկապես, նավի իր թշնամու Նեգորոյի վրա չէր, որ այս անգամ հաչում էր շունը:

Մի մարդ այդ միջոցին իջնում էր սարալանջի գառիվայրից: Անծանոթը զգուշությամբ առաջանում էր ժայռի վրայով և բարեկամական շարժումներով աշխատում էր հանգստացնել Դինգոյին: Հասկանալի է, որ չէր ուզում հուժկու շան բարկությունը գրգռել:

– Նեգորոն չէ, – ասաց Հերկուլեսը:

– Ոչինչ չենք կորցնի այս փոխանակությունից, – պատասխանեց Բաթը:

– Ոչ, – ասաց պատանին: – Հավանական է, որ տեղացի է և մեզ կազատի բաժանվելու անախորժությունից: Վերջապես կարելի է ճիշտ տեղեկություն ստանալ, թե որտեղ ենք գտնվում:

Եվ չորսը միասին, հրացանները ուսից կախած, արագ քայլերով դեպի անծանոթը գնացին:

Վերջինս տեսնելով նրանց մոտենալը՝ ամենից առաջ մեծ զարմանք հայտնեց: Շատ որոշ էր, որ անծանոթը չէր սպասում օտարականների պատահել ծովափի այս մասում: Հավանական է նաև, որ դեռևս չէր նկատել «Պիլիգրիմի» բեկորները, այլապես աղետյալների ներկայությունը շատ բնական կլիներ նրա համար: Արդեն գիշերը ավելոծությունը բոլորովին քայքայել էր նավի կմախքը, և այժմ նրանից մնում էին միայն բեկորները, որոնք լողում էին ծովի երեսին:

Առաջին թուպին անծանոթը, տեսնելով իր կողմն առաջացող այդ չորս հոգուն, ուզեց ետ դառնալ: Արագ շարժումով նա վերցրեց փոկից կախ արած հրացանը և դրեց ուսին:

Պարզ էր, որ ապահով չէր զգում իրեն:

Դիկ Սենդը ձեռքով ողջունեց, և անծանոթը անշուշտ հասկացավ, քանի որ մի թուպե վարանումից հետո շարունակեց առաջանալ: Դիկ Սենդն այժմ կարող էր ուշադրությամբ դիտել նրան:

Անծանոթը ուժեղ, ամենաշատը քառասուն տարեկան մարդ էր՝ կայտառ հայացքով, ավելիառն մազերով և մորուքով, արևակեզ դեմքով, ինչպես լինում է անտառում կամ տափաստանում թափառող քոչվորը: Անծանոթը հագել էր կաշվե բաճկոն, լայնեզր գլխարկ, երկարաճիտ կոշիկները հասնում էին մինչև ծնկները, և լայն բամբերով խթանները զրնգում էին նրա բարձր կրունկների վրա:

Դիկ Սենդն իսկույն գուշակեց (և իսկապես այդպես էր), որ իր առջև կանգնած էր ոչ թե պամպասների թափառաշրջիկ մի հնդկացի, այլ այն օտարական արկածախնդիրներից մեկը, որոնք շատ կասկածելի մարդիկ են և հաճախակի են պատահում այս հեռավոր վայրերում: Նրա բավական արագ շարժումներից, մորուքի մի քանի կարմրավուն մազերից կարելի էր նույնիսկ ենթադրել, որ անծանոթը անգլո-սաքսոնական ցեղին էր պատկանում: Համենայն դեպս նա ոչ հնդկացի էր, ոչ իսպանացի:

Այդ կարծիքը հաստատվեց, երբ Դիկ Սենդի անգլերեն լեզվով «բարի գալուստ» ողջույնին անծանոթը նույն լեզվով պատասխանեց՝ առանց որևէ տարաշեշտման:

– Ձեզ ևս բարի գալուստ, պատանի՛ բարեկամս, – ասաց անծանոթը՝ մոտենալով պատանուն և նրա ձեռքը սեղմելով:

Իսկ նեգրերին նա միայն գլխով արեց, առանց խոսքը նրանց ուղղելու:

– Դուք անգլիացի՞ եք, – հարցրեց նա պատանուն:

– Ամերիկացի, – պատասխանեց Դիկ Սենդը:

– Հարավի՞ց:

– Ոչ, հյուսիսից:

Այդ պատասխանը կարծես դուր եկավ անծանոթին, որը ավելի ուժեղ սեղմեց պատանու ձեռքը և այս անգամ զուտ ամերիկյան ձևով:

– Իսկ կարո՞ղ եմ իմանալ, երիտասարդ բարեկամս, թե ինչպես եղավ, որ գտնվում եք այս ծովափում:

Սակայն այդ թուպեին, առանց սպասելու պատանու պատասխանին, անծանոթը գլխարկը հանեց և բարևեց:

Տիկին Ուելդոնը առաջացել էր գետափով և, կանգնելով անծանոթի առջև, պատասխանեց անծանոթի հարցումին:

– Պարոն, – ասաց տիկին Ուելդոնը, – մենք նավաբեկյալներ ենք, մեր նավը երեկ խորտակվեց այս խութերի վրա:

Վշտի զգացում արտահայտվեց անծանոթի դեմքի վրա, և նրա հայացքը ուղղվեց դեպի ծովը խորտակված նավը տեսնելու համար:

– Մեր նավից այլևս ոչինչ չի մնացել, – ավելացրեց պատանին: – Այս գիշեր ավելոծությունը նրան ամբողջովին քայքայեց:

– Եվ մեր առաջին հարցը, – շարունակեց տիկին Ուելդոնը, – կլինի, թե որտե՞ղ ենք մենք:

– Դուք գտնվում եք Հարավային Ամերիկայի ծովափում, – պատասխանեց անծանոթը՝ զարմանք արտահայտելով: – Մի՞թե կասկածում էիք այդ մասին:

– Այո, պարոն, որովհետև փոթորիկը կարող էր մեզ շեղած լինել մեր ճանապարհից, իսկ ես չէի կարող ճիշտ ուղղությունը որոշել, – պատասխանեց Դիկ Սենդը: – Բայց կիսնդրեի ավելի ստույգ մեզ ասել, թե որտեղ ենք գտնվում, Պերուի ծովափո՞ւմ, ինչպես ինձ թվում է:

– Ոչ, պատանի բարեկամս, ոչ: Մի քիչ ավելի հարավ, ձեր նավը խորտակվել է Բոլիվիայի ծովափում:

– Ա՛հ, – բացականչեց Դիկ Սենդը:

– Եվ դուք գտնվում եք հենց Բոլիվիայի հարավային մասում, որը սահմանակից է Չիլիին:

– Իսկ ո՞րն է այս հրվանդանը, – հարցրեց Դիկ Սենդը՝ ցույց տալով հյուսիսային հրվանդանը:

– Չեմ կարող նրա անունը տալ,– պատասխանեց անծանոթը,– որովհետև եթե ես բավական լավ ծանոթ եմ այս երկրի ներքին շրջաններին, որտեղ հաճախ եղել եմ, բայց առաջին անգամն է, որ լինում եմ ծովափում:

Դիկ Սենդը խորհում էր իր լսածի մասին, որը նրան մասամբ էր զարմացնում, քանի որ նա կարող էր նույնիսկ սխալված լինել հոսանքների նկատմամբ, սակայն սխալը շատ մեծ չէր: Արդարև, նա ենթադրում էր, թե գտնվում է քսան յոթերորդ և երեսուներորդ գուգահեռականների միջև, ըստ այն հաշվի, որը նա արել է Չատկի կղզու առաջ, և ահա «Պիլիգրիմը» խորտակվել էր հարավային լայնության քսանհինգերորդ գուգահեռականի մոտ: Ոչ մի անկարելի բան չկա, որ առագաստանավը մի քիչ շեղված լինելու այդքան երկար ճանապարհի ընթացքում:

Պետք է ասել, որ ոչ մի հիմք չկար կասկածելու անծանոթի խոսքերի ճշմարտությանը, և քանի որ սա ստորին Բոլիվիայի ծովափն էր, բոլորովին տարօրինակ չէր, որ այդքան ամայի էր:

– Պարո՛ն,– ասաց Դիկ Սենդը,– համաձայն ձեր պատասխանի, պետք է եզրակացնել, թե մենք բավական հեռու ենք Լիմայից:

– Օ՛հ, Լիման հեռու է... ահա այնտեղ, հյուսիսում:

Տիկին Ուելդոնը, որ Նեգրոյի անհետանալու հետևանքով սկզբում կասկածամիտ էր դարձել, նորեկին դիտում էր ծայրահեղ ուշադրությամբ, սակայն ոչ մի կասկածելի բան չնկատեց ոչ նրա վերաբերմունքի և ոչ էլ արտահայտության մեջ:

– Պարոն,– ասաց տիկին Ուելդոնը,– գուցե իմ հարցը անտեղի է... դուք այս երկրի բնիկ չեք երևում:

– Ես ամերիկացի եմ, ինչպես դուք, տիկին...– ասաց անծանոթը, մի րոպե սպասելով, որ ամերիկուհին հայտնի իր անունը:

– Տիկին Ուելդոն,– պատասխանեց վերջինս:

– Իսկ իմ անունը Հարրիս է, ես ծնվել եմ հարավային Կարոլինայում: Բայց արդեն քսան տարի է, որ հեռացել եմ հայրենիքից և ապրում եմ Բոլիվիայի պամպասներում և ինձ շատ հաճելի է տեսնել իմ հայրենակիցներին:

– Դուք ապրում եք շրջանի այս մասո՛ւմ, պարոն Հարրիս,– հարցրեց տիկին Ուելդոնը:

– Ոչ, տիկին Ուելդոն,– պատասխանեց Հարրիսը,– ես ապրում եմ հարավում, Չիլիի սահմանագլխում, բայց ներկայումս գնում եմ Ատակամա, հյուսիս-արևելք:

– Ուրեմն մենք գտնվում ենք այդ անունով անապատի սահմանագծի վրա՞,– հարցրեց Դիկ Սենդը:

– Շատ ճիշտ է, պատանի բարեկամս, և այդ անապատը տարածվում է հորիզոնը փակող լեռներից շատ հեռու:

– Ատակամա անապա՞տը,– կրկնեց Դիկ Սենդը:

– Այո,– պատասխանեց Հարրիսը:– Այս անապատը մի առանձին երկիր է ընդարձակ Հարավային Ամերիկայի մեջ և նրանից տարբերվում է շատ

տեսակետներից: Դա միաժամանակ այս ցամաքամասի ամենահետաքրքիր և քիչ ծանոթ մասն է:

– Եվ դուք մենա՞կ եք ճամփորդում, – հարցրեց տիկին Ուելդոնը:

– Օ՛, առաջին անգամը չէ, որ կատարում եմ այս ուղևորությունը, – պատասխանեց ամերիկացին: – Այստեղից երկու հարյուր մղոն հեռու մի կարևոր ֆերմա կա՝ Սան Ֆելիչեի հացիենտան, որը պատկանում է իմ եղբայրներից մեկին, և ես այնտեղ եմ գնում առևտրական գործով: Եթե դուք կուզեք ուղեկցել ինձ, այնտեղ լավ ընդունելության կարժանանաք և փոխադրության միջոցներ կգտնեք Ատակամա քաղաքը հասնելու համար: Եղբայրս ուրախությամբ փոխադրական միջոցներ կտա ձեզ:

Ինքնաբերաբար արված այս առաջարկը խոսում էր ամերիկացու օգտին, և նա անմիջապես շարունակեց՝ տիկին Ուելդոնին ուղղելով խոսքը:

– Այս նեգրերը ձեր ստրուկներն են, – միաժամանակ ձեռքով ցույց տվեց Թոմին և նրա ընկերներին:

– Միացյալ Նահանգներում այլևս ստրուկներ չկան, – պատասխանեց տիկին Ուելդոնը, – հյուսիսը վաղուց վերացրել է ստրկությունը, իսկ հարավը պետք է հետևի հյուսիսի օրինակին:

– Ճիշտ է, – պատասխանեց Հարրիսը: – Ես մոռացել էի, որ 1862 թ. պատերազմը լուծել էր այս լուրջ հարցը: Ես ներողություն եմ խնդրում այս ազնիվ մարդկանցից, – ավելացրեց Հարրիսը այն հեգնական շեշտով, որը հատուկ է հարավային ամերիկացուն, երբ նա խոսում է նեգրերի մասին: – Տեսնելով այս ջենտլմեններին ձեզ ծառայելիս, կարծեցի թե...

– Նրանք իմ ծառան չեն և երբեք չեն եղել, պարոն, – պատասխանեց խստորեն տիկին Ուելդոնը:

– Մեզ համար պատիվ կլիներ ձեզ ծառայել, տիկին Ուելդոն, – ասաց ծերունի Թոմը: – Բայց պարոն Հարրիսը թող լավ իմանա, որ մենք ոչ ոքի չենք պատկանում: Ճիշտ է, ես եղել եմ ստրուկ և որպես այդպիսին վաճառվել եմ Աֆրիկայում, վեց տարեկան հասակում, սակայն իմ որդին՝ Բաթը, որը այստեղ է, ազատագրված հոր զավակ է, իսկ մեր ընկերները նույնպես ազատ ծնողներ ունեն:

– Ինձ մտում է շնորհավորել ձեզ, – պատասխանեց Հարրիսը այնպիսի շեշտով, որը տիկին Ուելդոնին այնքան լուրջ չթվաց: – Արդարև, ինչպես հայտնի է, Բոլիվիայում ստրուկներ չկան, այնպես որ ձեզ ոչինչ չի սպառնում, և դուք այստեղ կարող եք նույնքան ազատ զգալ ձեզ, ինչքան Նոր Անգլիայի Նահանգներում:

Այդ միջոցին փոքրիկ Ջեկը, Նանի ուղեկցությամբ քարայրից դուրս եկավ աչքերը տրորելով, և նկատելով մորը՝ վազեց նրա մոտ: Տիկին Ուելդոնը գրկեց և քնքշորեն համբուրեց նրան:

– Ի՛նչ հիանալի տղա է, – ասաց ամերիկացին՝ մոտենալով Ջեկին:

– Իմ որդին է, – պատասխանեց տիկին Ուելդոնը:

– Օ՛, տիկին Ուելդոն, դուք անկասկած կրկնակի տանջվել եք, քանի որ ձեր երեխան այնքան փորձությունների է ենթարկվել:

– Բայց նա այդ բոլոր փորձություններից ազատվեց ողջ և առողջ, ինչպես և մենք բոլորս, պարոն Հարրիս:

– Թույլ կտա՞ք համբուրել նրա սիրուն թշկները, – հարցրեց Հարրիսը:

– Հոժարությամբ, – պատասխանեց տիկին Ուելդոնը:

Բայց ինչպես երևում է՝ «պարոն Հարրիսի» դեմքը դուր չեկավ փոքրիկ Ջեկին, քանի որ երեխան ավելի պինդ կպավ մորը:

– Ահա՛ թե ինչ, – ասաց Հարրիսը, – չե՞ք ուզում, որ համբուրեմ, մի՞թե վախենում եք ինձանից, փոքրիկս:

– Ներողամիտ եղեք, պարոն, – շտապեց ասել տիկին Ուելդոնը, – շատ ամաչկոտ տղա է:

– Լավ. հետագայում ավելի մոտիկից կծանոթանանք միմյանց, – պատասխանեց Հարրիսը: – Երբ հացիենտա հասնենք, այնտեղ մի հիանալի պոնի կգտնի, որը կբարեկամացնի մեզ:

Սակայն «հիանալի պոնին» նույնպես չփափկացրեց Ջեկին:

Տիկին Ուելդոնը անհարմար դրության մեջ ընկնելով, շտապեց փոխել խոսակցության կյուրը: Չպետք է թույլ տալ, որ վիրավորվի այդ մարդը, որը այնքան ազնվորեն իր ծառայությունն էր առաջարկել:

Դիկ Սենդը այդ միջոցին մտածում էր Սան-Ֆելիչեի հացիենտան գնալու առաջարկի մասին, որն այնքան պատեհ ժամանակին էր արվել: Ինչպես Հարրիսն ասել էր, պետք էր գնալ երկու հարյուր մղոն, մերթ անտառի, մերթ դաշտերի միջով, ճանապարհ, որն անկասկած շատ հոգնեցուցիչ կլիներ, քանի որ փոխադրական միջոցներ բոլորովին չկային:

Ուստի, Դիկ Սենդը մի քանի առարկություն արեց այդ մասին և սպասեց ամերիկացու պատասխանին:

– Իսկապես, ուղևորությունը մի քիչ երկար կլինի, – պատասխանեց Հարրիսը, – ծովեզերքից մի քանի հարյուր քայլ հեռավորության վրա ես մի ձի ունեմ, որը հոժարությամբ կտրամադրեմ տիկին Ուելդոնին և նրա որդուն: Մեզ համար ոչ մի դժվարություն չկա, և հոգնեցուցիչ չի լինի ոտքով գնալ: Բացի դրանից, եթե ես երկու հարյուր մղոնի խոսքն արեցի, նկատի ունեի գետի ընթացքին հետևող ճանապարհը, որը ես ինքս անցա: Բայց եթե մենք անտառի միջով գնանք, մեր ճանապարհը կրճատվի առնվազն ութսուն մղոնով: Արդ, օրական տասը մղոն գնալով, ինձ թվում է, թե առանց մեծ դժվարության կհասնենք հացիենտա:

Տիկին Ուելդոնը շնորհակալություն հայտնեց ամերիկացուն:

– Դուք ինձանից ավելի շնորհակալ կլինեք, եթե ընդունեք իմ առաջարկը, – պատասխանեց Հարրիսը: – Թեև ես ոչ մի անգամ չեմ անցել այս անտառով, բայց ինձ թվում է, թե առանց դժվարության կգտնեմ ճանապարհը, քանի որ սովոր եմ այդպիսի ճանապարհորդության: Եթե մի լուրջ խնդիր կա՝ ուտելիքի հարցն է: Ինձ մոտ միայն այնքան ուտելիք կա, ինչքան ինձ հարկավոր էր մինչև հացիենտա հասնելու համար...

– Պարոն Հարրիս, – պատասխանեց, տիկին Ուելդոնը, – մեզ մոտ, բարեբախտաբար, պետք եղածից ավելի ուտելիք կա, և մենք սիրով կբաժանենք ձեզ հետ:

– Եթե այդպես է, տիկին Ուելդոն, ինձ թվում է, թե ամեն ինչ լավ է դասավորվում և մնում է միայն մեկնել:

Հարրիսը դեպի անտառ ուղղվեց ձին բերելու համար, որը թողել էր այնտեղ, երբ Դիկ Սենդը նրան կանգնեցրեց մի հարց տալու համար:

Նրան այնքան էլ դուր չէր գալիս ծովափից հեռանալը և երկրի խորքը գնալը այդ անվերջ անտառի միջով: Նրա մեջ ծովայինի ոգին էր արթնանում և ավելի լավ էր համարում ծովափից չհեռանալ:

– Պարոն Հարրիս, – ասաց պատանին, – փոխանակ հարյուր քսան մղոն ճանապարհ գնալու Ատակամայի անապատով, ավելի լավ չի՞ լինի ծովափին հետևել: Այդքան ճանապարհ գնալուց հետո ավելի լավ չէ՞ փորձել հասնելու ամենամոտ քաղաքը, դեպի հյուսիս կամ դեպի հարավ:

– Բայց, պատանի բարեկամ, – պատասխանեց Հարրիսը՝ հոնքերը թեթևակի կիտելով, – ինձ թվում է, թե երեք-չորս հարյուր մղոնից պակաս հեռավորության վրա քաղաք չկա այս ծովափին, որին ես բավական չափ ծանոթ չեմ:

– Դեպի հյուսիս, այո, – պատասխանեց Դիկ Սենդը, – Բայց դեպի հարավ:

– Դեպի հարավ, – առարկեց ամերիկացին, – պետք կլիներ իջնել մինչև Չիլի, մինչդեռ այդ ճանապարհը գրեթե նույնքան երկար է, և եթե ձեր տեղը լինեի, ավելի լավ կհամարեի չմոտենալ Արգենտինայի հանրապետության պամպասներին: Ինչ վերաբերում է ինձ, ցավոք սրտի, պետք է ասեմ, որ չեմ կարող ձեզ ընկերանալ այդ ուղղությամբ:

– Չիլիից դեպի Պերու գնացող նավերը մի՞թե այս ծովափի մոտով չեն անցնում, – հարցրեց տիկին Ուելդոնը:

– Ոչ, – պատասխանեց Հարրիսը: – Շատ ավելի հեռվից են անցնում, և դուք նրանց պատահած չեք լինի անշուշտ:

– Ճիշտ է, – պատասխանեց տիկին Ուելդոնը: – Ասա: Դիկ, ուրիշ որևէ հարց չունե՞ս պարոն Հարրիսին տալու:

– Միայն մի հարց, տիկին Ուելդոն, – պատասխանեց պատանին, որը դժվարանում էր համաձայնել: – Ես կուզեի հարցնել պարոն Հարրիսին, թե, իր կարծիքով, ո՞ր նավահանգստում շոգենավ կարող ենք գտնել Սան Ֆրանցիսկո վերադառնալու համար:

– Ճիշտն ասած, պատանի՛ բարեկամ, ես դժվարանում եմ պատասխանել ձեզ, – ասաց ամերիկացին, – միայն այնքանը գիտեմ, որ Սան-Ֆելիչեի հացիենտայում մենք ձեզ միջոցներ կտանք Ատակամա քաղաքը հասնելու համար, իսկ այնտեղից...

– Պարոն Հարրիս, – ասաց տիկին Ուելդոնը, – չկարծեք, թե Դիկ Սենդը դժվարանում է ընդունել ձեր առաջարկը:

– Ոչ, տիկի՛ն Ուելդոն, ոչ, ճիշտ է, որ ես չեմ դժվարանում, – պատասխանեց պատանին, – սակայն ես ափսոսում եմ, որ չկարողացա ծովափին հասնել մի քանի աստիճան կամ դեպի հյուսիս կամ դեպի հարավ: Եթե այդպես լիներ, մենք որևէ նավահանգստի կողքին կլինեինք, այդ հանգամանքը կհեշտացներ հայրենիք վերադառնալը, և մենք ստիպված չէինք լինի նեղություն պատճառել պարոն Հարրիսին:

– Չկարծեք, թե ինձ նեղություն կպատճառեք, տիկին Ուելդոն, – ասաց Հարրիսը: – Ես կրկնում եմ, որ քիչ անգամ եմ առիթ ունենում լինել հայրենակիցների հետ, ինձ համար մեծ հաճույք է ձեզ օգտակար լինել:

– Ընդունում ենք ձեր առաջարկը, պարոն Հարրիս, – պատասխանեց տիկին Ուելդոնը, – սակայն չէի ցանկանալ զրկել ձեզ ձիուց, ես լավ քայլող եմ...

– Ես ևս շատ լավ քայլող եմ, – պատասխանեց Հարրիսը՝ գլուխ տալով: – Սովորած լինելով երկար թափառել պամպասներում՝ ես չեմ ուշացնի ձեր քարավանը: Ոչ, տիկին Ուելդոն, դուք և փոքրիկ Ջեկը կվերցնեք իմ ձին: Հավանական է նաև, որ ճանապարհին կպատահեք հացիեմտայի ծառայողներին, որոնք, ձիավոր լինելով՝ իրենց ձիերը սիրով մեզ կտան:

Դիկ Սենդը հասկացավ, որ եթե նոր առարկություն աներ, կվշտացներ տիկին Ուելդոնին:

– Պարոն Հարրիս, – ասաց նա, – ե՞րբ կմեկնենք:

– Այսօր և եթե, պատանի՛ բարեկամս, – պատասխանեց Հարրիսը: – Վատ եղանակն սկսում է ապրիլի սկզբներին, պետք է, ուրեմն, ըստ հնարավորության, մինչև այդ հասնել Սան-Ֆելիչե: Մի խոսքով, անտառի ճանապարհը ամենից կարճ և զուցե ամենից ավելի ապահովն է և ավելի քիչ է ենթակա թափառաշրջիկ բնիկների հարձակման, որոնք համառ թալանչիներ են:

– Թո՛ւմ, և դուք, բարեկամներ՛ուս, – պատասխանեց Դիկ Սենդը՝ դառնալով նեգրերին, – մեզ մնում է միայն պատրաստվել մեկնելու: Ուտելիքի պաշարից վերցնենք ամենից ավելի հեշտ փոխադրվողները և, հակեր կազմելով, մեզանից ամեն մեկը կվերցնի իր մասը:

– Պարոն Դիկ, – ասաց Հերկուլեսը, – եթե կուզեք, ես մենակ կվեցնեմ ամբողջ բեռը:

– Ոչ, իմ լավ բարեկամ, – պատասխանեց պատանին, – ավելի լավ է մեր մեջ բաժանել բեռը:

– Դուք ուժեղ ուղեկից եք, Հերկուլե՛ս, – ասաց Հարրիսը՝ նեգրին այնպես նայելով, կարծես նա ծախու ապրանք լիներ: – Աֆրիկայի շուկաներում ձեզ թանկ կգնահատեն:

– Ոչ ավելի, քան ինչ որ արժեմ, – պատասխանեց Հերկուլեսը ծիծաղելով, – իսկ գնորդները ստիպված կլինեն երկար վազել ինձ բռնելու համար:

Ամեն ինչ որոշված էր, և մեկնումը շտապեցնելու համար ամեն մեկը իր գործին անցավ: Երկար պատրաստվելու կարիք էլ չկար, քանի որ ուտելիք պետք էր վերցնել միայն ծովեզերքից մինչև հացիեմտա հասնելու համար, այսինքն՝ մոտավորապես տասն օրվա համար:

– Բայց մեկնելուց առաջ, պարոն Հարրիս, – ասաց տիկին Ուելդոնը, – Նախքան ձեզ մոտ հյուր լինելը, խնդրում եմ լինել մեր հյուրը:

– Ընդունում եմ, տիկին Ուելդոն, մեծ հաճույքով ընդունում եմ, – ուրախ դեմքով պատասխանեց Հարրիսը:

– Մի քանի րոպեից նախաճաշը պատրաստ կլինի:

– Լավ, տիկին Ուելդոն, իսկ ես այդ ժամանակամիջոցում կգնամ ձին կբերեմ այստեղ. ա՛յ, նա արդեն փորը կշտացրած կլինի:

– Թույլ կտա՞ք ընկերանալ ձեզ, պարոն, – հարցրեց Դիկ Սենդը ամերիկացուն:

– Ինչպես ցանկանում եք, պատանի բարեկամս, – պատասխանեց Հարրիսը: – Եկեք, ես ձեզ ցույց կտամ գետի ստորին հոսանքը:

Նրանք երկուսով գնացին:

Այդ միջոցին Հերկուլեսը գնաց փնտրելու միջատաբանին: Իսկ կուզեն Բենեդիկտը ամենևին չէր հետաքրքրվում, թե ինչ էր կատարվում շուրջը: Նա թափառում էր սարալանջի գագաթին՝ «անգտանելի» մի միջատ որոնելով, սակայն չէր գտնում:

Հերկուլեսը նրան բերեց ուժով: Տիկին Ուելդոնը նրան հայտնեց, թե որոշված է մեկնել, և որ մոտավորապես տասը օր ոտքով պետք է գնային անտառով:

Կուզեն Բենեդիկտը պատասխանեց, թե պատրաստ է մեկնելու և թե շատ գոհ կլիներ նույնիսկ անցնել ամբողջ Լմերիկան, եթե միայն թույլ տրվի միջատներ հավաքել ճանապարհին:

Այնուհետև կազդուրիչ նախաճաշ պատրաստվեց, որն այնքան անհրաժեշտ էր ճանապարհի ընկնելուց առաջ:

Այդ միջոցին Հարրիսը, Դիկ Սենդի ուղեկցությամբ, շրջանցեց սարալանջը և երեք հարյուր քայլի չափ առաջ գնաց: Այնտեղ ծառին կապած ձին ուրախ խրխինջով դիմավորեց իր տիրոջը:

Դա մի անդակազմ ձի էր, որի ինչ ցեղի լինելը Դիկ Սենդը չկարողացավ իմանալ. երկար պարանոց, կարճ կողեր և երկարավուն գավակ, տափակ ուսեր: Բոլոր այս արտաքին նշաններով կարելի էր ենթադրել, թե այդ ձին արաբական ցեղին էր պատկանում:

– Տեսնում եք, պատանի բարեկամս, – ասաց Հարրիսը, – ինչպիսի ամրակազմ ձի է, և կարող եք վստահ լինել, որ ձեզ ճանապարհին չի թողնի:

Հարրիսը արձակեց ձին, սանձից բռնեց և առաջ անցնելով՝ ետ դարձավ: Դիկ Սենդը արագ հայացք նետեց գետի և անտառի վրա, որը տարածվում էր գետի երկու ափերին, բայց կասկածելի ոչ մի բան չտեսավ:

Այնուամենայնիվ, երբ մոտեցավ ամերիկացուն, անսպասելիորեն հետևյալ հարցը տվեց նրան.

– Պարո՞ն Հարրիս, արդյոք այս գիշեր դուք չե՞ք պատահել Նեգորո անունով մի պորտուգալացու:

– Նեգորո՞,– պատասխանեց Հարրիսը այնպիսի մարդու շեշտով, որը չի հասկանում, թե ինչ են ուզում ասել:– Ո՞վ է այդ Նեգորոն:

– Նավի խոհարարն էր, պատասխանեց Դիկ Սենդը,– և անհետացել է:

– Գուցե խեղդվել է...– ասաց Հարրիսը:

– Ոչ, ոչ,– պատասխանեց Դիկ Սենդը:– Երեկ երեկո նա դեռևս մեզ հետ էր. սակայն գիշերը մեզանից հեռացավ և հավանական է գետի ընթացքով վեր բարձրացավ: Այդ պատճառով էլ հարցնում եմ ձեզ, որ այդ կողմից եք եկել, գուցե տեսա՞՞ծ կլինեք նրան:

– Ես ոչ ոքի չպատահեցի,– ասաց ամերիկացին,– և եթե ձեր խոհարարը խորացավ անտառի մեջ, կարող է մոլորվել: Գուցե կհասնենք նրան:

– Այո... գուցե,– պատասխանեց Դիկ Սենդը:

Երբ նրանք վերադարձան քարայր, նախաճաշը պատրաստ էր: Նախորդ օրվա ընթրիքի նման, նախաճաշը բաղկացած էր մսի պահածոյից և պաքսիմատից: Հարրիսը լավ կերավ, բնականից մեծ ախորժակ ունեցողի նման:

– Ինչպես տեսնում եմ, ճանապարհին քաղցից չենք մեռնի,– ասաց նա:– Նույն բանը չի կարելի ասել խեղճ պորտուգալացու համար, որի մասին պատմեց ինձ մեր պատանի բարեկամը:

– Ա՛հ,– ասաց տիկին Ուելդոնը,– Դիկ Սենդը ձեզ ասե՞լ է, թե երեկվանից ի վեր նրան չենք տեսել:

– Այո, տիկին Ուելդոն,– պատասխանեց պատանին,– ես ուզում էի իմանալ, թե արդյոք Նեգորոյին չի՞ հանդիպել պարոն Հարրիսը:

– Ոչ,– պատասխանեց Հարրիսը,– չեմ պատահել, բայց թողնենք այդ դասալիքին իր տեղում և մեր մեկնումով զբաղվենք: Կարող ենք մեկնել, երբ դուք կցանկանաք, տիկին Ուելդոն:

Այնուհետև ամեն մեկը վերցրեց իրեն հատկացված կապոցը: Տիկին Ուելդոնը Հերկուլեսի օգնությամբ ձի նստեց, և ապերախտ փոքրիկ Ջեկը, հրացանը ուսից կախած, նստեց իր հերթին, չմտածելով նույնիսկ շնորհակալություն հայտնել այն մարդուն, որը նրան տրամադրել էր այդ հիանալի ձին:

Ջեկը տեղավորվելով մոր առջևը՝ նրան ասաց, թե ինքը կկարողանա ղեկավարել «պարոնի ձին»:

Եվ այդպես, թույլ տվին նրան, որ բռնի սանձը, և նա չէր կասկածում, որ ինքը քարավանի իսկական պետն էր:

XVI. Ճանապարհին

Որոշ երկյուղով, թեև դրա համար արդարացուցիչ ոչ մի փաստ գոյություն չունեի, Դիկ Սենդը, գետի ափով երեք հարյուր քայլ բարձրանալուց հետո, մտավ խիտ

անտառը, որի անանգանելի արահետներով տասն օր պիտի գնային ինքն ու իր ուղեկիցները:

Ընդհակառակն՝ տիկին Ուելդոնը, լինելով կին և մայր, վտանգից ավելի պետք է վախենար, սակայն շատ հանգիստ էր զգում իրեն:

Երկու լուրջ պատճառների հետևանք էր նրա այդ վստահությանը, նախ և առաջ՝ որովհետև պամպասների այս շրջանը վտանգավոր չէր ո՛չ բնիկների, ո՛չ էլ գազանների կողմից, ապա՝ որովհետև այնպիսի հուսալի ուղեցույցով, ինչպիսին թվում էր ամերիկացի Հարրիսը, ոչ մի վախ չկար մոլորվելու:

Ահա մոտավորապես երթի այն կարգը, որով պիտի առաջնորդվեր փոքր խումբը ուղևորության միջոցին:

Դիկ Սենդը և Հարրիսը, երկուսն էլ զինված, մեկը՝ հրացանով, մյուսը՝ կարաբինով, խմբի առջևից էին գնում:

Նրանց հետևում էին Բաթը և Օստինը՝ յուրաքանչյուրը զինված հրացանով և դանակով:

Նրանց հետևից գալիս էին տիկին Ուելդոնը և փոքրիկ Ջեկը՝ ձիու վրա, այնուհետև՝ Թոմը և Նանը:

Ամենից վերջը՝ Ակտեոնը, զինված չորրորդ կարաբինով, և Հերկուլեսը, տապարը գոտու մեջ խրած, փոքր խմբի վերջապահն էր:

Դինգոն գնում-գալիս էր, ինչպես նկատեց Դիկ Սենդը, միշտ որևէ հետք փնտրող շան նման: Նրա վարմունքը բոլորովին փոխվել էր «Պիլիգրիմի» խորտակումից հետո: Շունը շարունակ գրգռված վիճակում էր և գրեթե անընդհատ խուլ հաչոց էր արձակում, որը ավելի վշտալի էր, քան թե կատաղի: Այդ երևույթը նկատել էին բոլորը, թեև ոչ ոք չէր կարողանում պատճառը բացատրել:

Ինչ վերաբերում է կուզեն Բենեդիկտին, Դինգոյի նման, նրան էլ հնարավոր չէր շարքում պահել, եթե չկապեին պարանով:

Թիթեոյա տուփը կողքից, իսկ խոշորացույցը վզից կախած, ցանցը ձեռքին՝ մեկ խմբի հետևից, մեկ առջևից, թրև էր գալիս նա խոտերի մեջ, փնտրելով ուղղաթևանիներ կամ որևէ այլ «թևանիներ»:

Ուղևորության առաջին ժամերին տիկին Ուելդոնը անհանգստանալով՝ քսան անգամ իր մոտ կանչեց նրան, սակայն իզուր:

— Կուզեն Բենեդիկտ, — ասաց վերջապես նրան, — ես ձեզ շատ լրջորեն խնդրում եմ չհեռանալ և վերջին անգամ առաջարկում եմ լսել ինձ:

— Սակայն, զարմուհի, — պատասխանեց անզուսպ միջատաբանը, — եթե որևէ միջատ նկատեմ...

— Եթե որևէ միջատ նկատեք, — շարունակեց տիկին Ուելդոնը, — նրան հանգիստ կթողնեք, կամ ստիպված կլինեմ տուփը խլել ձեր ձեռքից:

— Ինչպե՛ս, տուփը խլել ձեռքի՛ցս, — բացականչեց կուզեն Բենեդիկտը, որպես թե սպառնում էին նրա փորը թափել:

– Այո, ձեր տուփը և ցանցը, – ավելացրեց անողոր ծայնով տիկին Ուելլոնը:

– Իմ ցանցը, զարմուհի. գուցե և ակնօցս. չեք համարձակվի, ոչ, չեք համարձակվի:

– Նույնիսկ ձեր ակնոցը, լավ հիշեցրիք, շնորհակալություն, կուզին Բենեդիկտ, ինձ հիշեցրիք, որ այդ միջոցով կարելի է կուրացնել ձեզ և ստիպել, որ հանգիստ մնաք:

Այդ եռակի սպառնալիքն իսկապես կարողացավ անհնազանդ զարմիկին հանգիստ պահել մոտավորապես մի ժամ: Այնուհետև նա սկսեց կրկին հեռանալ և որովհետև միևնույն է, նա կվերսկսեր, թեկուզ առանց ցանցի, առանց տուփի և առանց ակնոցի, հարկ եղավ թողնել նրան իր կամքին: Սակայն Հերկուլեսին հանձնարարվեց հատկապես հսկել նրան, որը բնականաբար մտնում էր նրա պարտականությունների մեջ, և որոշվեց, որ հսկան նրա հետ վարվեր այնպես, ինչպես կուզեն Բենեդիկտը՝ իր միջատների հետ, այսինքն՝ բռնել օձիքից, եթե կարիք լիներ, և բերեր այնպիսի քնքշուքյամբ, ինչպիսի քնքշուքյամբ միջատաբանը կվարվեր իր միջատների հետ:

Այդ կարգադրությունից հետո այլևս չգբաղվեցին կուզեն Բենեդիկտով:

Փոքրիկ խումբը, ինչպես տեսանք, լավ զինված և խիստ աչալուրջ էր:

Բայց ինչպես մի քանի անգամ ասել էր Հարրիսը, բացի թափառաշրջիկ բնիկներից, որոնց գուցե և բուլորովին չպատահեին, ուրիշ որևէ վտանգի սպառնալիք չէր երևում:

Համենայն դեպս, ձեռք առնված միջոցները բավական էին այդպիսիներին երկյուղ ազդելու համար:

Այդ խիտ անտառի միջով անցնող արահետները արժանի չէին այդ անվան: Դրանք կարծես ավելի շուտ գազանների շավիղներ, քան թե մարդկանց ճանապարհ լինեին: Շատ դժվար էր նրանցով առաջ գնալը, հետևապես, Հարրիսը շատ խելացի հաշիվ էր արել ասելով, որ փոքր խումբը օրական միջին հաշվով հազիվ հինգ կամ վեց մղոն կարող էր առաջանալ:

Եղանակը շատ լավ էր սակայն: Արևը բարձրանում էր գենիթ՝ ուղղահայաց ճառագայթներ թափելով երկրի վրա: Բաց դաշտում տապն անտանելի կլիներ, բայց անտառի անթափանց սաղարթի տակ հեշտությամբ և առանց տանջվելու կարելի էր տանել այդ շոգը, և Հարրիսը չմոռացավ այդ բանը զգալ տալ ուղևորներին:

Անտառի ծառերի մեծ մասին անձանոթ էին թե՛ տիկին Ուելլոնը և թե՛ նրա նեգր կամ սպիտակ ուղեկիցները: Սակայն մասնագետ մարդը կնկատեր, որ այդ ծառերն ավելի աչքի էին զարնում իրենց որակով, քան թե բարձրությամբ: Այստեղ աճում էին «բառուհիսիան» կամ երկաթե ծառը. մի քիչ հեռու «մոլոմալին», որի դիմացկուն, բայց թեթև փայտից թիակներ են պատրաստում, և որի բունը առատ խեժ է արտադրում, մի քիչ այն կողմը՝ մեծ քանակությամբ գունավոր նյութեր պարունակող «սպարակներ», ինչպես նաև մինչև տասնմեկ ոտնաչափ տրամագծով «դայակներ», որոնք, սակայն, սովորական դայակներից ավելի փոքր են:

Դիկ Սենդը ճանապարհին Հարրիսին հարցնում էր այդ գանազան տեսակի ծառերի անունները:

– Դուք, ուրեմն, երբեք չե՞ք եղել հարավային Ամերիկայում, – հարցրեց Հարրիսը, նրա հարցին պատասխանելուց առաջ:

– Երբեք, – պատասխանեց պատանին, – իմ ուղևորությունների միջոցին առիթ չեմ ունեցել լինելու այս կողմերում և ճիշտն ասած, այս շրջանին ծանոթ և ոչ մի մարդ այդ մասին չի խոսել ինձ հետ:

– Բայց գուցե եղե՞լ եք Կոլումբիայում, Չիլիում և կամ Պատագոնիայում:

– Ոչ մի անգամ:

– Գուցե տիկին Ուելդոնը եղե՞լ է Նոր աշխարհի այս շրջաններում, – ասաց Հարրիսը: – Ամերիկուհիները չեն վախենում ճանապարհորդությունից և անկասկած...

– Ո՛չ, պարոն Հարրիս, – պատասխանեց տիկին Ուելդոնը: – Իմ ամուսինը առևտրական գործերով եղել է միայն Չեյլանդիայում, և ես նրա հետ ուրիշ տեղ չեմ գնացել: Այդպիսով, մեզանից ոչ ոք ծանոթ չէ ստորին Բոլիվիայի այս մասին:

– Եթե այդպես է, տիկին Ուելդոն, դուք և ձեր ուղեկից կծանոթանաք այս զարմանալի երկրին, որը միանգամայն տարբեր է Պերուից, Բրազիլիայից և Արգենտինյան հանրապետությունից, Բոլիվիայի Ֆլորան և Ֆաունան բնագետին զարմանք կպատճառեր: Ա՛հ, կարելի է ասել, որ դուք լավ տեղ ցամաք ընկաք և եթե կարելի է շնորհակալ լինել պատահմունքին...

– Ես կարծում եմ, պարոն Հարրիս, որ ոչ թե պատահմունքը, այլ՝ աստված է առաջնորդել մեզ:

– Աստված, այո, աստված, – պատասխանեց այնպիսի մարդու ձայնով, որը բոլորովին չի ընդունում աստծու միջամտությունը այս աշխարհի գործերին:

Ուրեմն, քանի որ այս փոքր խմբից ոչ ոք ծանոթ չէր ո՛չ այս երկրին, ո՛չ նրա բնական հարստություններին, Հարրիսը սիրով հանձն առավ հայտնել անտառի ամենահետաքրքիր ծառերի անունները:

Իսկապես, ափսոս որ կուզեն Բենեդիկտը միջատաբան լինելով հանդերձ՝ բուսաբան չէր: Եթե մինչև այժմ որևէ հազվագյուտ կամ նոր միջատ չէր գտել, ապա բուսաբանական լավ հայտնագործություններ կարող էր անել: Այնտեղ մեծ քանակությամբ և տարբեր բարձրության այնքան բույսեր կային, որոնց գոյությունը դեռևս չէր նկատված Նոր աշխարհի անտառներում: Կուզեն Բենեդիկտը կարող էր անկասկած իր անունը տալ այս բույսերից մեկնումեկին: Սակայն նա չէր սիրում բուսաբանությունը և ոչինչ չէր հասկանում: Նա նույնիսկ, բնականորեն, ատում էր ծաղիկները, պատրվակելով, որ նրանցից մի քանիսը բանտարկում էին միջատներին իրենց պսակների մեջ և թունավորում իրենց թունավոր հյութերով:

Անտառը երբեմն ճահճոտ էր դառնում: Ուռքի տակ զգացվում էին ջրի հոսանքներ, որոնք գնում թափվում էին փոքր գետի վտակների մեջ: Այդ վտակներից մի քանիսը այնքան լայն էին, որ մյուս կողմն անցնելու համար պետք էր լինում ծանծաղ տեղ գտնել:

Նրանց ափերին աճում էին եղեգնի թփեր, որոնց Հարրիսը պապիրոս էր անվանում: Նա չէր սխալվում. այդ խոտազգի բույսերը առատորեն աճում էին խոնավ գետափերին:

Այնուհետև ճահիճները վերջանալուն պես ծառերի թավուտները նորից ծածկում էին անտառի նեղ արահետները:

Հարրիսը տիկին Ուելդոնին և Դիկ Սենդին ցույց տվեց շատ գեղեցիկ էբենուներ՝ սովորական էբենուսից ավելի բարձր, որից ստացվում է շատ սև և կարծր փայտ: Այնուհետև գալիս էին մանգենիները, որոնք դեռևս շատ էին, չնայած բավական հեռացել էին ծովափից: Քարաքոսը մուշտակի նման փաթաթվել էր մինչև նրանց ճյուղերը: Այդ ծառերի խիտ սովերը և համեղ պտուղները խիստ արժեքավոր էին դարձնում դրանք, սակայն, ինչպես ասում էր Հարրիսը, ոչ մի տեղացի չէր համարձակվում բազմացնել նրանց: «Մանգենի տնկողը կմեռնի», – ասում էր տեղական սնահավատությունը:

Այդ առաջին օրվա երկրորդ կեսին փոքր խումբը կեսօրվա հանգստից հետո սկսեց բարձրանալ մի քիչ զառիվերով: Այդ դեռևս լեռների առաջին շարքի բարձունքը չէր, այլ մի տեսակ վետվետող սարահարթ, որը հարթավայրը միացնում էր լեռանը:

Այստեղ ծառերը մի քիչ նոսրանալով, երբեմն խմբեր կազմելով ավելի կիեշտացնեին առաջ գնալը, եթե գետինը ծածկված չլիներ խոտազգի բույսերով: Այնպիսի տպավորություն էր ստացվում, որ ուղևորները Արևելյան Հնդկաստանի ջունգլիներում են գտնվում: Բուսականությունը այնքան փարթամ չէր, ինչպես գետակի ստորին մասում, սակայն դեռևս ավելի գերակշիռ էր, քան Հին և Նոր աշխարհների բարեխառն գոտիներում: Լեղակաբույսը առատորեն աճում էր և, ըստ Հարրիսի, այդ լոբազգին ամենից ավելի տարածվածն էր այդ շրջանում: Բավական էր, որ մի արտ անմշակ մնար, այդ մակաբույծ բույսը, որը նույնքան արհամարհում էին, ինչքան ուղտափուշը կամ եղինջը, իսկույն ողողում էր այդ արտը:

Սակայն մի ծառ կարծես բացակայում էր այս անտառում, ծառ որը շատ տարածված պետք է լիներ Նոր Աշխարհի այս շրջանում: Կաուչուկի ծառն էր այդ: Իսկապես *ficus prinoides*-ը, *castilloa elastica*-ն, *cecropia peltata*-ն, *collophora elastica*-ն, *collophora itilis*-ը, *camerania latifolia*-ն և մանավանդ *syphonia elastica*-ն, որոնք տարբեր ընտանիքների են պատկանում, մեծ քանակությամբ են գտնվում Հարավային Ամերիկայում: Սակայն շատ զարմանալի էր, որ դրանցից ոչ մեկը չէր երևում այս անտառում:

Մինչդեռ Դիկ Սենդը իր բարեկամ Ջեյկն խոստացել էր ցույց տալ կաուչուկի ծառը: Այդպիսով շատ հուսախաբ եղավ փոքրիկ տղան, որը երևակայում էր, թե ռետինե գնդակները, տիկնիկները, շարժումներ անող ռետինե խաղալիքները ուղղակի ծառերի վրա են բուսնում: Երեխան դժգոհ էր:

– Համբերություն, փոքրիկս, – պատասխանեց Հարրիսը, – այդ կաուչուկներից, այն էլ հարյուրներով, կտեսնես հացիենտայի մոտակայքում:

– Գեղեցիկներ՞ըր, շա՞տ առածգական, – հարցրեց փոքրիկ Ջեյկը:

– Չափազանց առածգական, իսկ մինչև այդ, ահա քեզ մի միրգ հովանալու համար:

Այդ խոսքերի հետ Հարրիսը ծառից մի քանի պտուղ քաղեց, որոնք դեղձի նման հյութալի էին:

– Վստա՞հ եք, պարոն Հարրիս, որ այդ պտուղը վնասակար չէ, – հարցրեց տիկին Ուելդոնը:

– Տիկին Ուելդոն, այս բուստին ձեզ վստահեցնեմ, – պատասխանեց ամերիկացին, ուսելով այդ մրգերից մեկը. – մանգենու պտուղն է:

Իսկ փոքրիկ Ջեկը, առանց նազ անելու, հետևեց Հարրիսի օրինակին և հայտնեց, թե շատ համեղ էին այդ «տանձերը», և իսկույն մեծ քանակությամբ քաղեցին դրանցից:

Այս մանգենիները այն տեսակից են, որի մրգերը հասունանում են մարտին և ապրիլին, իսկ մի մասն էլ սեպտեմբերին, ուստի նրա պտուղները արդեն հասած էին:

– Օ՛հ, ի՛նչ լավն է, ի՛նչ լավն է, – ասում էր փոքրիկ Ջեկը լեցուն բերանով: – Բայց բարեկամ՝ Դիկը ինձ խոստացավ կաուչուկ ցույց տալ, ես ուզում եմ կաուչուկ տեսնել:

– Կտեսնես, սիրելի Ջեկ, – պատասխանեց տիկին Ուելդոնը, – քանի որ պարոն Հարրիսը խոստանում է:

– Բայց այդ դեռ բոլորը չէ, – շարունակեց Ջեկը, – իմ բարեկամ Դիկը ուրիշ բան էլ խոստացավ ինձ:

– Ուրիշ ի՛նչ խոստացավ, – ծիծաղելով հարցրեց Հարրիսը:

– Ճանճ-թռչունը, պարո՛ն:

– Դու կունենաս նաև ճանճ-թռչունը, փոքրիկ բարեկամս, բայց հետո... հետո... – պատասխանեց Հարրիսը:

Բանն այն էր, որ Ջեկն իրավունք ուներ պահանջելու այդ հրաշալի կոլիբրիներից, որովհետև գտնվում էր այն երկրում, որտեղ նրանք բազմաթիվ են: Հնդկացիները բանաստեղծական անուններ են տվել փետրավորների ցեղի այդ գոհարներին: Նրանք կոլիբրիներին անվանում են «ճառագայթներ» կամ «արևի վարսեր», մի տեղ՝ «ծաղիկների թագուհի», մի ուրիշ տեղ՝ «երկնային ծաղիկ», որ թռչելով գալիս է գուրգուրելու «երկրային ծաղկին»: Եվ կամ «թանկագին քարերի մի փունջ, որը ճառագայթում է օրվա լույսի տակ»: Կարծում են նույնիսկ, որ նրանց երևակայությունը բանաստեղծական նոր անուններ է հնարել կոլիբրիների հրաշալի ընտանիքի հարյուր հիսուն տեսակներից յուրաքանչյուրի համար:

Սակայն ինչքան էլ բազմաթիվ լինեին այդ ճանճ-թռչունները Բոլիվիայի անտառներում, փոքրիկ Ջեկին մնում էր բավականա՛նալ Հարրիսի խոստումներով միայն: Ամերիկացու խոսքերով, փոքր խումբը դեռևս շատ մոտ էր ծովափին, և կոլիբրիները չէին սիրում օվկիանոսին մոտիկ անապատները: Մարդկանց ներկայությունը նրանց չէր խրտնեցնում, և հացիենտայում ամբողջ օրը միայն նրանց «տըրտըր»-ը և ճախարակի ձայնին նմանվող բզզոցն էր լսվում:

– Ա՛հ, ինչպես կուզեի այնտեղ լինել, – բացականչեց փոքրիկ Ջեկը:

Այնտեղ լինելու ամենաապահով միջոցը ճանապարհին կանգ չառնելն էր: Ուստի տիկին Ուելդոնն ու նրա ուղեկիցները միայն ամենաանհրաժեշտ ժամանակն էին հատկացնում հանգստանալուն:

Անտառն արդեն տեսքը փոխում էր: Ավելի նոսրացած ծառերի արանքում, այս ու այնտեղ լայն բացատներ էին երևում: Գետիկը, պատռելով կանաչ գորգը, ցույց էր

տալիս իր վարդագույն գրանիտե կառուցվածքը: Մի շարք բարձունքների վրա աճում էր սափարնան՝ փարթամ պալարներով մի բույս, որի թփերը այնպիսի անանցանելի պատվար էին առաջացնում, որ ուղևորները ափսոսելով էին հիշում անտառի նեղ արահետները:

Արևի մայր մտնելուց առաջ փոքրիկ խումբը մոտավորապես ութ մղոն էր առաջ գնացել: Այդ երթը տեղի էր ունեցել առանց արկածի և նույնիսկ շատ չէին հոգնել: Ճիշտ է, այդ դեռևս առաջին օրն էր, և անկասկած հետագա էտապները ավելի դժվար կլինեին:

Ընդհանուր համաձայնությամբ որոշվեց կանգ առնել այդ վայրում:

Անհրաժեշտ էր ոչ թե իսկական ճամբար սարքել, այլ պարզապես քնելու տեղ պատրաստել: Քանի որ ո՛չ բնիկներից, ո՛չ վայրի գազանների կողմից որևէ վախ չկար, որոշվեց երկու ժամը մեկ փոխվելու պայմանով պահակություն սահմանել:

Որպես պատսպարան ընտրեցին մի ահագին մանգենի, որի ընդարձակ, շատ խիտ ճյուղերը մի տեսակ բնական տանիք էին կազմում: Եթե կարիք լիներ, կարելի էր բարձրանալ նրա սաղարթի մեջ:

Սակայն երբ փոքրիկ խումբը հասավ այնտեղ, ծառի գագաթին խլացուցիչ համերգ բարձրացավ:

Բանն այն էր, որ այդ ծառը մոխրագույն թուփակների մի խմբի թառելու վայր էր: Այդ շաղակրատ, կռվարար փետրավորները հարձակվում են թռչունների վրա, և սխալ կլիներ նրանց մասին գաղափար կազմել Եվրոպայի նրանց ցեղակիցների ծանոթությամբ:

Թուփակները ճղճղում էին այնպիսի աղմուկով, որ Դիկ Սենդը մտածեց նրանց լռեցնել կամ փախցնել հրացանի կրակոցով, սակայն Հարրիսը նրան համոզեց չանել այդ, պատճառաբանելով, թե ավելի լավ կլիներ խմբի ներկայությունը չհայտնել հրացանի ձայնով:

— Առաջ գնանք առանց աղմուկի,— ասաց նա,— այդպիսով ավելի ապահով կանցնենք:

Ընթրիքն իսկույն պատրաստվեց, առանց նույնիսկ ուտելիքը տաքացնելու, քանի որ այն բաղկացած էր պահածոներից և պաքսիմատից: Խոտերի տակից օձապտույտ հոսող գետակից խմելու ջուր վերցրին, խմելուց առաջ մի քանի կաթիլ ռոմ ավելացնելով: Իսկ որպես աղանդեր ծառայեց մանգենու հյութալի պտուղը, թեև քաղելու միջոցին թուփակները անտանելի բողոք՝ աղմուկ բարձրացրին:

Ընթրիքից հետո սկսեց մթնել: Խավարը դանդաղորեն գետնից ծառերի գագաթը բարձրացավ, և սաղարթի նուրբ ուրվագիծը քիչ հետո պատկերացավ լուսավոր երկնքի ֆոնի վրա: Առաջին աստղերը լուսավառ ծաղիկներ էին թվում, շողջողալով վերջին ճյուղերի ծայրերին: Քամին դադարեց գիշերվա հետ և այլևս չէր խաղում սաղարթի մեջ: Նույնիսկ թուփակները լռեցին: Բնությունը նիրհում էր և ամբողջ կենդանի աշխարհին հրավիրում հետևելու իր օրինակին:

Քնել ու պատրաստությունները շատ տարրական էին:

— Կարիք կա՞ գիշերը խարույկ վառել,— հարցրեց Դիկ Սենդը ամերիկացուն:

– Ինչի՞ է պետք,– պատասխանեց Հարրիսը:– Գիշերը բարեբախտաբար ցուրտ չէ, և այս ահագին ծառը չի թողնի, որ գետինը գոլորշի արձակի: Մեզ ո՛չ ցուրտն է սպառնում, ո՛չ խոնավությունը: Կրկնում եմ, պատանի՛ բարեկամս, մի քիչ առաջ ասածս՝ առաջ գնանք աննկատելիորեն, ոչ մի կրակ և ոչ մի հրացանի ձայն, եթե հնարավոր է:

– Ես կարծում եմ, որ բնիկներից վախենալու ոչինչ չունենք,– ասաց տիկին Ուելդոնը,– ոչ էլ այն թափառաշրջիկներից, որոնց մասին դուք ասացիք, պարո՞ն Հարրիս: Բայց մի՞թե չորքոտանի թափառաշրջիկներ չկան, որոնց կարելի է հեռու պահել խարույկի լույսով:

– Տիկին Ուելդոն,– պատասխանեց ամերիկացին,– դուք շատ եք կարևորություն տալիս այս երկրի գազաններին, իրականում ավելի շուտ նրանք են վախենում մարդկանցից, քան թե մարդիկ՝ գազաններից:

– Մենք անտառում ենք գտնվում,– ասաց Ջեկը,– և անտառում միշտ էլ կենդանիներ կլինեն:

– Անտառ էլ կա, անտառ էլ, փոքրիկս, ինչպես կենդանի էլ կա, կենդանի էլ,– պատասխանեց Հարրիսը ծիծաղելով:– Երևակայեցեք, որ մեծ այգում ենք գտնվում: Արդարև իզուր չէ, որ տեղացիները իրենց երկրի համար ասում են «Es come el Paradiso»՝ իսկական երկրային դրախտ է:

– Օձեր կա՞ն,– ասաց Ջեկը:

– Ոչ, տղաս,– պատասխանեց տիկին Ուելդոնը,– օձ չկա, և դու կարող ես հանգիստ քնել:

– Իսկ առյու՞ծ,– հարցրեց Ջեկը:

– Ոչ էլ առյուծ, փոքրիկս,– պատասխանեց Հարրիսը:

– Ուրեմն վագրե՞ր:

– Հարցրեք ձեր մորը, թե լսե՞լ է արդյոք, որ վագրեր լինեն այս երկրում:

– Երբե՞ք,– պատասխանեց տիկին Ուելդոնը:

– Այդպես,– ասաց կուզեն Բենեդիկտը, որը պատահամաբ ներկա էր խոսակցությանը,– եթե Նոր աշխարհում ո՛չ առյուծ կա, ո՛չ վագր, ինչ որ շատ ճիշտ է, բայց գոնե կուզուարներ և յագուարներ կան:

– Չա՞ր են նրանք,– հարցրեց փոքրիկ Ջեկը:

– Վա՛հ,– պատասխանեց Հարրիսը,– բնիկները չեն վախենում հարձակվել նրանց վրա, իսկ մենք զինված ենք: Ա՛յ, Հերկուլեսը այնքան ուժեղ է, որ կարող է երկու յագուար խեղդել ամեն մեկին մեկ ձեռքով:

– Դու լավ կհսկես, Հերկուլես,– ասաց փոքրիկ – և եթե ուզի ինձ կծել...

– Ես ինքս նրան կկծեմ, պարո՞ն Ջեկ,– պատասխանեց Հերկուլեսը, ցույց տալով հրաշալի ատամներով զինված բերանը:

– Այո, կհսկեք, Հերկուլե՛ս, – ասաց պատանին, – բայց ձեր ընկերները և ես կփոխարինենք ձեզ:

– Ոչ, պարոն Դիկ, – պատասխանեց Ակտեոնը, – Հերկուլեսը, Բաթը, Օստինը և ես՝ չորսովս բավական ենք այս գործի համար: Իսկ դուք պետք է հանգստանաք գիշերը:

– Շնորհակալություն, Ակտեոն, – պատասխանեց Դիկ Սենդը, – բայց ես պարտավոր եմ...

– Ոչ, թողեք այդ գործը կատարեն նրանք՝ այդ ազնիվ մարդիկ, սիրելի Դիկ, – միջամտեց տիկին Ուելդոնը:

– Ես նույնպես կհսկեմ, – ավելացրեց փոքրիկ Ջեկը, որի կոպերը փակվում էին արդեն:

– Այո, Ջեկ, այո, դու ևս կհսկես, – պատասխանեց մայրը՝ չուզելով հակառակել նրան:

– Բայց, – ասաց դարձյալ փոքրիկ տղան, – եթե անտառում ո՛չ առյուծ կա, ո՛չ վագր, ապա գայլեր կլինեն:

– Այո, ծիծաղի արժանի գայլեր, – պատասխանեց ամերիկացին, – նույնիսկ գայլեր չեն, այլ աղվեսի մի տեսակը, կամ ավելի շուտ անտառային շներ, որոնց «գուլարա» են անվանում:

– Իսկ այդ գուլարաները կծո՞ւմ են, – հարցրեց փոքրիկ Ջեկը:

– Վա՛հ, Դինգոն մի պատառ կանի այդ կենդանուն:

– Միևնույնն է, – պատասխանեց Ջեկը՝ վերջին անգամ հորանջելով, – գուլարաները գայլեր են, քանի որ նրանց գայլ են անվանում:

Այդ խոսքերով Ջեկը հանգիստ քնեց Նանի գրկում, որը հենվել էր մանգենու բնին: Տիկին Ուելդոնը, որ պառկած էր նրա կողքին, վերջին անգամ համբուրեց երեխային, նրա հոգևած աչքերը փակվեցին մինչև առավոտ:

Մի քանի րոպե հետո Հերկուլեսը ճամբար բերեց կուզեն Բենեդիկտին, որը հեռացել էր պիրոֆորներ որսալու համար: Այդ միջատները «կոկոլոսներ» կամ լուսատու ճանճեր են: Պճնասեր կանայք դրանք դնում են իրենց վարսերի մեջ իբրև ակներ: Այդ ճանճերը իրենց վահանակի արմատի երկու կետերից վառ կապտավուն լույս են արձակում և շատ տարածված են հարավային Ամերիկայում: Կուզեն Բենեդիկտը հույս ուներ նրանցից բավականաչափ հավաքել, սակայն Հերկուլեսը նրան ժամանակ չտվեց և, հակառակ նրա տրտունջներին, բերեց հավաքատեղի: Բանն այն էր, որ Հերկուլեսին մի բան կարգադրում էին, կատարում էր ռազմական ճշտությամբ և հետևանքն այն եղավ, որ մեծ թվով լուսավոր ճանճեր ազատվեցին միջատաբանի թիթեղե տուփն ընկնելուց:

Մի քանի րոպե հետո, բացի հսկայից, որը հսկում էր, ամբողջ ճամբարը խոր քնի մեջ թաղվեց:

XVII. Հարյուր մղոն տասն օրում

Սովորաբար արևադարձային անտառում բաց երկնքի տակ գիշերող ուղևորները կամ թափառաշրջիկները լուսադեմին արթնանում են տարօրինակ և անսխորժ մի ժխորից: Այդ առավոտյան համերգում լսվում է և՛ կչկչոց, և՛ կռնչյուն, և՛ քւքւում, և՛ հաչոց, և՛ փնթփնթոց:

Կապիկներն են դրանք, որ այդ ձևով ողջունում են արևածագը: Այստեղ իրար են հանդիպում փոքրիկ «մարիկինան», գույնզգույն դիմագծով «ռագուկներ», մոխրագույն «մոնոն», որոնց մորթուց կարմրամորթները հրացանի պատյան են պատրաստում, ինչպես նաև այդ ընտանիքի բազմաթիվ այլ տեսակները:

Այս զանազան չորեքթաթանիներից ամենահետաքրքիրները, անժխտելիորեն, երկար պոչանի Բեհեդգեբուդի դեմքով կռնչացող կապիկներն են: Երբ արևը ծագում է, հոտի ամենատարիքոտը հանդիսավոր և չարագուշակ ձայնով մի միալար երգ է ծոր տալիս. խմբի բարիտոնն է դա: Նրանից հետո երիտասարդ տենորները կրկնում են առավոտյան սիմֆոնիան: Հնդկացիներն ասում են, թե կռնչաններն իրենց «առավոտյան աղոթքն են անում»:

Բայց այդ օրը, այս կամ այն պատճառով, այդ չորեքթաթանիներից ոչ մեկը անտառը չդղրդացրեց սովորական համերգով:

Կապիկների այս վարմունքից անշուշտ դժգոհ կլինեին քոչվոր կարմրամորթները ոչ թե այն պատճառով, որ այդ խմբերգը նրանց հաճույք էր պատճառում, այլ՝ որովհետև նրանք կապիկ են որսում այդ կենդանիների մսի համար, որը շատ համեղ է, մանավանդ ապխտածը:

Դիկ Սենդը և նրա ուղեկիցները անկասկած տեղյակ չէին կռնչան կապիկների սովորությանը, այլապես այդ լռությունը նրանց զարմանքը կշարժեր: Նրանք արթնացան իրար հետևից և լավ կազդուրված՝ այդ մի քանի ժամվա ընթացքում ոչ մի աղմուկ չէր եղել:

Փոքրիկ Ջեկն աչք բացողներից վերջինը չեղավ: Նրա առաջին հարցը եղավ, թե արդյոք Հերկուլեսը գիշերը գայլ չէ՞ր կերել: Ոչ մի գայլ չէր երևացել, և ուրեմն Հերկուլեսը դեռևս չէր նախաճաշել:

Մյուս ուղևորները նույնպես քաղցած էին, և Նանը նախաճաշի պատրաստությամբ զբաղվեց:

Նախաճաշը նույնն էր, ինչ որ նախորդ օրվա ընթրիքը, բայց անտառի առավոտյան թարմ օդը այնպես էր բոլորի ախորժակը բացել, որ ոչ ոք չէր մտածում դժգոհել: Բոլորը հասկանում էին, որ պետք էր լավ կազդուրվել այդ օրվա ուղևորության համար, ուստի և լավ նախաճաշեցին: Առաջին անգամ իր կյանքում գուցե կուզեն Բենեդիկտը հասկացավ, որ ուտելը անօգուտ կամ ավելորդ բան չէ կյանքի համար, սակայն հայտարարեց, թե ձեռքերը գրպանում «գբոսնելու» համար չէ, որ եկել էր այս երկիրը, և եթե Հերկուլեսը դարձյալ արգելի նրան կոկոլոսներ կամ այլ լուսավոր ճանճեր հավաքել, ինքը Հերկուլեսի հախից կգա:

Այդ սպառնալիքը իհարկե այնքան էլ չվախեցրեց Հսկային: Սակայն տիկին Ուելդոնը նրան մի կողմ տարավ և ասաց, թե կարող էր այդ մեծ երեխային թույլ տալ վազվզել աջ ու ձախ, բայց պայմանով, որ աչքից չհեռացներ նրան: Պետք չէր բոլորովին զրկել կուզեն Բենեդիկտին իր տարիքին անհրաժեշտ հաճույքներից:

Առավոտյան ժամը յոթին փոքրիկ խումբը ուղղվեց դեպի արևելք՝ պահելով
Նախորդ օրը սահմանված կարգը:

Անտառը անվերջ շարունակվում էր: Անմշակ հողի վրա, որտեղ ջերմությունն ու
խոնավությունը միացած աշխուժացնում են բուսականությունը, շատ բնական էր,
որ բուսական աշխարհը երևան էր գալիս իր ամբողջ հզորությամբ: Այս ընդարձակ
սարահարթի զուգահեռականը գրեթե զուգորդում էր արևադարձային
լայնություններին, և ամառվա մի քանի ամիսներին արևը անցնելով գենիթից,
առատորեն թափում էր ուղղահայաց ճառագայթները: Ջերմության ահագին
պաշար կար կուտակված այդ հողերում, որոնց ներքնաշերտը խոնավ էր մնում:
Չարմանալի չէր, ուրեմն, այս հրաշալի անտառային շարքը կամ ավելի շուտ՝
անվերջանալի անտառը:

Սակայն Դիկ Սենդի ուշադրությունից չվրիպեց հետևյալ երևույթը, ըստ Հարրիսի,
ուղևորները գտնվում էին պամպասների շրջանում, մինչդեռ հնդկա-կվիչների
լեզվով պամպաս նշանակում է «դաշտ», և եթե հիշողությունը չէր դավաճանում
իրեն, նա վերհիշում էր, որ այդ դաշտերը առանց ջրի, ծառագուրկ, քարագուրկ,
անձրևային եղանակներին ուղտափշերով ծածկվող շրջաններ էին: Ուղտափշերը
տաք եղանակները սկսվելու հետ բարձրանում, համարյա անանցանելի
թփուտներ էին առաջացնում: Այդ դաշտերում աճում էին նաև գաճաճ ծառեր,
փշոտ թփեր. ամբողջ բուսականությունը այդ դաշտերին չոր ու ցամաք և
անապատային տեսք էին տալիս:

Մինչդեռ այստեղ բոլորովին տարբեր էր՝ սկսած այն բույսերից, երբ ամերիկացու
առաջնորդությամբ փոքր խումբը հեռացել էր ծովափից: Անտառը շարունակում
էր տարածվել մինչև հորիզոնի սահմանները: Ո՛չ, այդ պամպասն այն չէր, ինչ որ
պատկերացնում էր պատանին: Գուցե, ինչպես ասել էր Հարրիսը, Ատակաման
յուրահատուկ շրջան է: Մինչդեռ Դիկ Սենդը Ատակամայի մասին միայն գիտեր, որ
Հարավային Ամերիկայի ընդարձակ անապատներից մեկն է՝ փռված Անդերի ու
Խաղաղ օվկիանոսի միջև:

Դիկ Սենդը օրվա ընթացքում այդ մասին մի քանի հարց տվեց ամերիկացուն և իր
զարմանքը հայտնեց պամպասի այդ տարօրինակ տեսքի նկատմամբ:

Սակայն Հարրիսը հեշտությամբ ցրեց պատանու կասկածները՝ Բոլիվիայի այս
շրջանի մասին ամենաճիշտ տեղեկություններ տալով և այդպիսով այդ երկրի հետ
իր խոր ծանոթությունը ցուցաբերելու:

— Դուք իրավացի եք, պատանի բարեկամ,— ասաց նա:— Իսկական պամպասը
ճիշտ այնպես է, ինչպես նկարագրել են ճանապարհորդները գրքերում, այսինքն՝
բավական «ջրագուրկ» մի հարթավայր, որի միջով անցնելը հաճախ դժվար է:
Պամպասները հիշեցնում են Հյուսիսային Ամերիկայի մեր սավաննաները՝ այն
տարբերությամբ, որ նրանք մի քիչ ավելի ճահճային են: Այդպես է Ռիո-Կոլորադոյի
պամպասը, այդպես են Օրինկոյի և Վենեսուելայի «լանոսները»: Բայց այստեղ
մենք այնպիսի շրջանում ենք, որի տեսքը ինձ ևս զարմացնում է: Ճիշտ է, առաջին
անգամն է, որ գնում եմ այս սարահարթով, որը զգալիորեն կրճատում է մեր
ճանապարհը: Բայց եթե նախապես չեմ եղել այս շրջանում, գիտեմ, որ այն խիստ
տարբերվում է իսկական պամպասից, այս վերջինը դուք կգտնեիք ոչ թե
Արևմտյան Կորդիլերի և Անդերի բարձր լեռնաշղթայի միջև, այլ մայրցամաքի
ամբողջ արևելյան մասում, որը տարածվում է մինչև Ատլանտյան օվկիանոսը:

— Ուրեմն պետք է անցնենք Անդերի լեռնաշղթա՞ն,— աշխուժորեն հարցրեց Դիկ
Սենդը:

– Ոչ, պատանի բարեկամ, ոչ,– պատասխանեց ամերիկացին ժպտալով:– Չէ՞ որ ես ասացի՝ «դուք կգտնեիք» և ոչ թե «կգտնեք»: Հանգստացեք, մենք չենք հեռանա այս սարահարթից, որի ամենաբարձր գագաթները հազար հինգ հարյուր ոտնաչափից ավելի չեն: Իսկ եթե պետք լիներ անցնել Անդերը, մեր ունեցած փոխադրական միջոցներով ես երբեք ձեզ չէի գրավի այդպիսի խելագար ուղևորության մեջ:

– Արդարև,– պատասխանեց Դիկ Սենդը,– ավելի լավ կլիներ հետևել ծովափին:

– Օ՛, հարյուր անգամ,– հաստատեց Հարրիսը:– Սակայն Սան-Ֆելիչեի հացիեմտան Անդերի այս կողմն է գտնվում: Այդպիսով՝ թե՛ առաջին և թե՛ երկրորդ դեպքում մեր ուղևորությունը ոչ մի իրական դժվարության չի հանդիպի:

– Իսկ դուք չե՞ք վախենում, թե կմոլորվեք այս անտառում, որն առաջին անգամ եք անցնում,– հարցրեց Դիկ Սենդը:

– Ոչ, պատանի բարեկամ, ո՛չ,– պատասխանեց Հարրիսը:– Ես լավ գիտեմ, որ այս անտառը ընդարձակ ծովի է նմանվում կամ ավելի շուտ՝ ծովի հատակի, որտեղ նույնիսկ ծովալիներ չի կարող որոշել իր աշխարհագրական դիրքը: Սակայն սովորած լինելով ճամփորդել անտառում՝ ես կարող եմ ճանապարհը գտնել նույնիսկ ծառերի դիրքից, նրանց տերևների ուղղությունից, հողի կազմից ու ռելիեֆից, ինչպես և հազարավոր այլ նշաններից, որոնք խուսափում են ձեր աչքերից: Վստահ եղեք, ես կառաջնորդեմ ձեզ և ձերայիններին այնտեղ, ուր գնալու եք:

Հարրիսը այս խոսքերն արտասանում էր շատ որոշակի: Դիկ Սենդը և նա խմբի առաջն անցած՝ հաճախ խոսակցում էին, և ոչ ոք չէր մասնակցում այդ խոսակցությանը: Եթե պատանին այնպիսի մտահոգություն էր զգում, որը ամերիկացին չէր կարողանում փարատել, ավելի լավ էր համարում ոչ ոքի չհայտնել: Ապրիլի 8-ի, 9-ի, 10-ի, 11-ի, 12-ի օրերն անցան առանց որևէ դեպքի: Օրական ութ-ինը մղոնից ավելի առաջ չէին գնում: Ճաշի և հանգստի ժամերը միմյանց էին հաջորդում կանոնավոր կերպով, ու թեև արդեն մի քիչ հոգնածություն էին զգում, այնուամենայնիվ, ընդհանուրի առողջությունը դեռևս բավարար էր:

Փոքրիկ Ձեկը սկսել էր մի քիչ ազդվել անտառի կյանքից, որին նա սովոր չէր, և որը շատ տաղտկալի էր նրա համար: Բացի այդ, նրան տրված խոստումները չէին կատարվում: Կաուչուկի ծառերը, ճանճ-թռչունները անվերջ հետաձգվում էին: Նրան խոստացել էին նույնպես ցույց տալ աշխարհի ամենագեղեցիկ թութակները, որոնք անպայման կլինեին այս ճոխ անտառներում: Որտե՞ղ էին կանաչ փետրավոր թութակները, որտե՞ղ էին երկարապոչ, վառ գույնի արակոնգիները, որոնց ոտքերը երբեք գետին չեն կոխում, որտե՞ղ էին կանաչ թութակները, որոնք ավելի արևադարձային շրջաններին են հատուկ, և, վերջապես, այն բոլոր շաղակրատ թռչունները, որոնք, բնիկների ասելով, դեռևս խոսում են անհետացած ցեղերի լեզվով:

Որպես թութակ փոքրիկ Ձեկը տեսել էր միայն գորշ մոխրագույն, կարմիր պոչանի ժակոները, որոնք վխտում էին ծառերի տակ: Սակայն ժակոները նորություն չէին նրա համար: Նրանցից տարել են աշխարհի բոլոր կողմերը: Երկու աշխարհամասերում էլ նրանք ականջ են խլացնում իրենց անտանելի շաղակրատությամբ, և «խոսող» թութակների մեջ ժակոն ամենից հեշտ է սովորում մարդկային լեզուն:

Պետք է ասել նաև, որ եթե Ձեկը գոհ չէր, կուզեն Բենեդիկտը նույնպես դժգոհ էր: Ճիշտ է, նրան թողել էին ճանապարհին մի քիչ աջ ու ձախ վագի, սակայն իր հավաքածուն հարստացնելու արժանի ոչ մի միջատ չէր գտել: Երեկոները նույնիսկ լուսատու բզեզները համառորեն մերժում էին երևալ նրա աչքին և իրենց ֆոսֆորային լույսով գրավել նրան: Թվում էր, թե բնությունը ծիծաղում էր դժբախտ միջատաբանի վրա, որի տրամադրությունը հետզհետե վատանում էր:

Հաջորդ չորս օրերի ընթացքում միևնույն պայմաններում փոքր խումբը շարունակեց առաջ գնալ դեպի հյուսիս-արևելք: Ապրիլի 16-ին ուղևորները ծովափից հեռացել էին առնվազն հարյուր մղոն: Եթե Հարրիսը չէր մոլորվել (ինչը նա պնդում էր առանց վարանելու), ուրեմն Սան-Ֆելիչեի հացիենտան քսան մղոնից ավելի հեռու չպետք է լիներ այն կետից, որտեղ խումբը գիշերել էր այդ օրը: Հետևապես, քառասունչորս ժամ չանցած՝ ուղևորները հյուրընկալ տանիքի տակ կլինեին և կկարողանային վերջապես հանգստանալ այդքան հոգևածությունից հետո:

Սակայն, չնայած սարահարթը գրեթե ամբողջովին անցել էին նրա միջին մասով, այնուամենայնիվ, ո՛չ մի բնիկ, ո՛չ մի քոչվոր չէր երևացել ընդարձակ անտառում:

Դիկ Սենդը մի քանի անգամ ավստասաց, որ «Պիլիգրիմը» ծովափի մի ուրիշ մասում չէր խորտակվել, թեև այդ մասին ոչ ոքի ոչինչ չէր ասում: Ավելի հարավ կամ ավելի հյուսիս՝ գյուղաքաղաքները, ավաններն ու պլանտացիաները անպակաս կլինեին, և տիկին Ուելդոնն ու մյուս ուղևորները վաղուց ապաստան գտած կլինեին:

Բայց եթե մարդիկ չէին երևում, ապա կենդանիները ավելի հաճախ էին երևում վերջին օրերը: Երբեմն լսվում էր ինչ-որ երկարածիգ ողբալի ճիչ. որը, Հարրիսի ասելով, համբուկ կապիկի ոռնոցն էր, կապիկներ, որոնք «Այխ» կոչված այս ընդարձակ անտառային շրջանների սովորական հյուրերն են:

Այդ օրը նույնպես, կեսօրվա դադարի միջոցին, ինչ-որ սուլոց լսվեց օդում, որը շատ անհանգստացրեց տիկին Ուելդոնին իր տարօրինակությամբ:

— Ի՞նչ սուլոց է, — հարցրեց մանկամարդ կինը՝ ոտքի ցատկելով:

— Օձի սուլոց է, — բացականչեց Դիկ Սենդը և հրացանը վերցնելով՝ կանգնեց տիկին Ուելդոնի առաջ:

Իսկապես, կարող էր պատահել, որևէ սողուն խոտերի տակով հասել էր մինչև դադարի վայրը: Բոլորովին զարմանալի չէր լինի, եթե դա որևէ վիշապօձ՝ «սուկուրուս» լիներ, որի երկարությունը երբեմն քառասուն ոտնաչափի է հասնում:

Բայց Հարրիսը իսկույն ետ կանչեց Դիկ Սենդին և նրան հետևող նեգրերին ու հանգստացրեց տիկին Ուելդոնին:

Նրա ասելով, այդ սուլոցը վիշապօձինը չէր կարող լինել, քանի որ այդ օձը չէր սուլում: Նա այդ սուլոցը վերագրում էր անվնաս չորքոտանիներին, որոնք այնքան շատ են այդ շրջաններում:

— Հանգստացեք, — ասաց նա, — և ոչ մի շարժում չանեք, որպեսզի չվախեցնեք այդ կենդանիներին:

— Բայց ի՞նչ կենդանիներ են, — հարցրեց Դիկ Սենդը, որը իր պարտքն էր համարում հարցաքննել և խոսեցնել ամերիկացուն: Սակայն սա միշտ էլ սիրով պատասխանում էր բոլոր հարցերին:

– Անտիլուպներ են, պատանի բարեկամս,– պատասխանեց Հարրիսը:

– Օ՛հ, ինչպե՛ս կուզեի տեսնել նրանց,– բացականչեց Ջեկը:

– Շատ դժվար է նրանց տեսնել, փոքրիկս,– պատասխանեց ամերիկացին,– շա՛տ դժվար է:

– Գուցե կարելի է փորձել մոտենալ այդ սուլող քարայծին,– ասաց Դիկ Սենդը:

– Օ՛հ, դուք հազիվ երեք քայլ կանեք,– պատասխանեց ամերիկացին՝ գլուխը շարժելով,– ամբողջ հոտը իսկույն կփախչի: Խորհուրդ կտամ տեղից չշարժվել:

Բայց Դիկ Սենդը պատճառներ ուներ հետաքրքրվելու: Նա ուզում էր անձամբ տեսնել և հրացանը ձեռքին մտավ խոտերի մեջ: Անմիջապես հետո, կարճ և սրածայր եղջյուրներով տասի չափ գեղանի անտիլուպներ հողմի արագությամբ անցան գնացին: Նրանց վառ կարմրագույն մորթը բոցավառ ամպի նման պատկերացավ անտառի բարձր ֆոնի վրա:

– Ես ձեզ նախագուշացրի,– ասաց Հարրիսը, երբ պատանին վերադարձավ իր տեղը:

Եթե իսկապես դժվար էր որոշակի տեսնել այդ արագաշարժ քարայծերին, միևնույնը չէր կարելի ասել կենդանիների մի ուրիշ խմբի մասին, որ երևաց նույն օրը: Այդ կենդանիներին կարելի եղավ տեսնել (ճիշտ է, շատ անորոշ կերպով) սակայն նրանց հայտնվելը բավական տարօրինակ վեճ առաջացրեց Հարրիսի և ուղևորներից մի քանիսի միջև:

Փոքրիկ խումբը երեկոյան ժամը չորսի դեմ կարճ ժամանակով կանգ էր առել մի բացատի մոտ, երբ երեք-չորս բարձրահասակ կենդանիներ դուրս եկան թավուտից, մոտավորապես հարյուր քայլի վրա, և իսկույն փախան՝ շատ մեծ արագությամբ:

Հակառակ ամերիկացու հանձնարարություններին, այս անգամ պատանին իսկույն հրացանը ուսին դեմ արեց և կրակեց:

Սակայն կրակելու թույլից Հարրիսը անմիջապես շեղեց հրացանը, և Դիկ Սենդը, թեև դիպուկ կրակող էր, այս անգամ վրիպեց նպատակից:

– Պետք չէ կրակել, պետք չէ կրակել,– բացականչեց ամերիկացին:

– Լսեցե՛ք, սրանք ընծուղտներ են,– բացականչեց Դիկ Սենդը,– առանց ուշադրություն դարձնելու ամերիկացու նկատողությանը:

– Ընծուղտ,– կրկնեց Ջեկը՝ բարձրանալով ձիու թամբի վրա. – որտե՞ղ են այդ կենդանիները:

– Ընծուղտնե՛ր,– պատասխանեց տիկին Ուելդոնը,– սխալվում ես,– սիրելի Դիկ, Ամերիկայում ընծուղտ չկա:

– Արդարև,– ասաց Հարրիսը, զարմացած ձևանալով,– ընծուղտ չի կարող լինել այս երկրում:

– Ուրե՞մն...– բացականչեց Դիկ Սենդը:

– Իսկապես, չգիտեմ ինչ ասեմ, – պատասխանեց Հարրիսը: – Ձեր աչքերը ձեզ չե՞ն խաբել, պատանի բարեկամս, այդ կենդանիները ջայլամներ չե՞ին:

– Ջայլա՛մ, – կրկնեցին Դիկ Սենդը և տիկին Ուելդոնը՝ զարմացած միմյանց նայելով:

– Այո՛, սովորական ջայլամներ, – կրկնեց Հարրիսը:

– Բայց ջայլամը թռչուն է, – ասաց Դիկ Սենդը, – հետևապես երկու ոտք պետք է ունենա:

– Այդպես էլ կա, – պատասխանեց Հարրիսը, – ինձ թվում է, թե ես լավ տեսա, որ այդ փախչող կենդանիները երկոտանիներ էին:

– Երկոտանի՛, – կրկնեց պատանին:

– Իսկ ինձ թվում է, թե ես լավ նկատեցի, որ նրանք չորքոտանիներ էին, – ասաց տիկին Ուելդոնը:

– Ես նույնպես, – ավելացրեց ծերունի Թոմը, որին միացան Բաթը, Ակտեոնը, Օստինը:

– Չորքոտանի ջայլա՛մ, – բացականչեց Հարրիսը ծիծաղելով: – Չվարճալի բան կլիներ:

– Այդ պատճառով էլ, – ասաց Դիկ Սենդը, – մենք կարծեցինք, թե ընծուղտներ են և ոչ թե ջայլամներ:

– Ոչ, պատանի բարեկամս, ոչ, – ասաց Հարրիսը: – Դուք անշուշտ լավ չտեսաք, որովհետև այդ կենդանիները շատ արագ փախան, պետք է ասել, որ շատ անգամ որսորդներն էլ ձեզ նման խաբվել են և այն էլ ինչպե՛ս են խաբվել:

Ամերիկացու ասածը խիստ հավանական էր: Բարձրահասակ ջայլամին և միջահասակ ընծուղտին, հեռվից նայելիս, դժվար չէ շփոթել: Նրանց կտուցը կամ դունչը երկու դեպքում էլ միացած են ետ շրջված երկար պարանոցին և նույնիսկ կարելի է ասել, որ ջայլամը կես ընծուղտ է. նրան պակասում են հետևի ոտքերը: Ուրեմն այդ երկոտանուն և այդ չորքոտանուն, արագ փախչելիս, կարելի է մեկը մյուսի տեղ ընդունել:

Մանավանդ այն լավագույն փաստը, որ տիկին Ուելդոնը և մյուսները սխալվում էին, այն է, որ Ամերիկայում ընծուղտ չկա:

– Բայց ես կարծում էի, թե Նոր Աշխարհում ոչ միայն ընծուղտ, ջայլամ էլ չկա, – ասաց Դիկ Սենդը:

– Ինչպես չէ, պատանի բարեկամս, – պատասխանեց Հարրիսը, – Հարավային Ամերիկայում գտնվում է նրա մի հատուկ տեսակը, և այդ տեսակին է պատկանում «հանդուն», որին դուք տեսաք:

Հարրիսը ճիշտ էր ասում:

Հանդուն Հարավային Ամերիկայի տափաստանների բարձրասրունք թռչուն է, և նրա մատղաշների միսը կարելի է ուտել: Դա մի խոշոր կենդանի է, որի

բարձրությունը երբեմն անցնում է երկու մետրից, նա ունի ուղղաձիգ կտուց, երկար թևեր՝ խիտ և կապտավուն փետուրներով, ոտքերը երեքմատնանի են՝ զինված եղունգներով, դրանով էլ նրանք գլխավորապես տարբերվում են Աֆրիկայի ջայլամներից:

Այս շատ ճիշտ մանրամասնությունները տվեց Հարրիսը, որը քաջ ծանոթ էր երևում հանդուների կյանքին: Տիկին Ուելդոնը և նրա ուղեկիցները ստիպված եղան ընդունել, որ սխալվել էին:

— Կարող է պատահել, որ մենք պատահենք ջայլամների մի ուրիշ խմբի, — ավելացրեց Հարրիսը: — Այդ դեպքում աշխատեցեք ավելի լավ նայել և այլևս թռչունները չորքոտանու տեղ չեք ընդունի: Բայց հատկապես, պատանի՝ բարեկամս, չմոռանաք իմ խորհուրդները և ոչ մի դեպքում չկրակեք որևէ կենդանու: Ուտելիք ճարելու համար մենք կարիք չունենք որսորդություն անելու, կարիք չկա, որ զենքի պայթյունը մեր ներկայությունը մատնի այս անտառում:

Սակայն Դիկ Սենդը մտախոհ էր: Մի անգամ ևս կասկածը սկսեց կրծել նրա միտքը:

Հաջորդ օրը, ապրիլի 17-ին, վերսկսվեց առաջ գնալը, և ամերիկացին հավատացրեց, թե ամենաշատը քսան ժամ հետո փոքրիկ խումբը կտեղավորվեր Սան-Ֆելիչեի հացիենտայում:

— Այնտեղ, տիկին Ուելդոն, — ավելացրեց նա, — դուք կստանաք անհրաժեշտ խնամք, և մի քանի օրվա հանգիստը ձեզ կկազդուրի կատարելապես: Գուցե այդ ֆերմայում դուք չգտնեք այն շքեղությունը, որին սովոր եք ձեր Սան Ֆրանցիսկոյի բնակարանում, բայց կտեսնեք, որ այնտեղ որոշ հարմարություններ կան: Մենք այնքան էլ վայրենի չենք:

— Պարոն Հարրիս, — պատասխանեց տիկին Ուելդոնը, — եթե մենք միայն շնորհակալություն կարող ենք հայտնեք ձեր վեհանձն աջակցության համար, ապա այդ շնորհակալությունը միանգամ այն սրտաբուխ է: Այո, ժամանակն է, որ տեղ հասնենք:

— Դուք շա՞տ եք հոգնել, տիկին Ուելդոն:

— Խոսքը իմ մասին չէ, — պատասխանեց տիկին Ուելդոնը, — բայց նկատում եմ, որ իմ փոքրիկ Ջեկը հալումաշ է լինում հետզհետե: Երբեմն ջերմում է:

— Այո՛, — պատասխանեց Հարրիսը, — և չնայած, որ այս սարահարթը շատ առողջ կլիմա ունի, այնուամենայնիվ, պետք է խոստովանել, որ մարտ և ապրիլ ամիսներին այստեղ տիրապետում է ընդմիջվող տենդը:

— Ճիշտ է, — ասաց Դիկ Սենդը, — բայց, բարեբախտաբար, բնությունը, որը միշտ և ամեն տեղ նախատեսող է, դեղը դրել է հիվանդության կողքին:

— Ի՞նչ եք ուզում ասել, պատանի՛ բարեկամս, — հարցրեց Հարրիսը, որը այնպես էր ցույց տալիս, թե չէր հասկանում:

— Մի՞թե այստեղ չի աճում խինայի ծառը, — պատասխանեց Դիկ Սենդը:

— Ճիշտ է, — հաստատեց Հարրիսը, — դուք կատարելապես իրավացի եք: Այստեղ խինայի ծառի հայրենիքն է, մի ծառ, որը տալիս է հակատենդային թանկագին կեղևը:

– Շատ զարմանալի է, – ավելացրեց Դիկ Սենդը, – որ դեռևս ոչ մի հատ խինայի ծառ չտեսանք:

– Ա՛հ, պատանի բարեկամ, – պատասխանեց Հարրիսը, – այդ ծառը հեշտ չէ ճանաչել: Թեև նրանք հաճախ շատ բարձր են, մեծ տերևներով, վարդագույն և հոտավետ ծաղիկներով, բայց և այնպես դժվար է նրանց հայտնաբերել: Հազվադեպ են դրանք խմբովին աճում: Ավելի շուտ ցրված են անտառում, իսկ բնիկները, որոնք հավաքում են խինայի բերքը, ճանաչում են միայն նրանց սաղարթի մշտադալարությունից:

– Պարո՞ն Հարրիս, – ասաց տիկին Ուելդոնը, – եթե տեսնեք այդ ծառերից մեկը ցույց կտաք ինձ:

– Իհարկե, տիկին Ուելդոն, բայց հացիենտայում դուք կգտնեք ծծմբաթթվային խինին, որը ավելի շուտ կբուժի ջերմը, քան թե ծառի կեղևը:

Ուղևորության այդ վերջին օրն անցավ առանց որևէ պատահարի:

Մուժն ընկավ, և գիշերվա հանգիստը կազմակերպվեց ըստ սովորականի: Մինչև այդ օրը անձրև չէր եկել, սակայն եղանակը կարծես ուզում էր փոխվել, որովհետև տաք գոլորշի էր բարձրանում գետնից, որը շուտով խիտ մշուշի փոխվեց:

Արդարև, մոտենում էր անձրևային շրջանը: Բարեբախտաբար, հաջորդ օրը փոքրիկ խումբը տեղ կհասներ և պատշաճ հյուրընկալություն կստանար: Մնում էր մի քանի ժամ ևս սպասել:

Թեև, ըստ Հարրիսի հաշիվների, փոքր խումբը միայն վեց մղոն հեռու կլիներ հացիենտայից, այնուամենայնիվ, գիշերվա համար ձեռք առնվեցին սովորական նախազգուշական միջոցներ:

Թոմը և նրա ընկերները պետք է հսկեին՝ միմյանց հաջորդելով:

Դիկ Սենդը պահանջեց, որ ոչինչ զանց չառնվեր այդ ուղղությամբ: Ավելի քան երբեք, չէր ուզում հրաժարվել սովորական զգուշությունից, քանի որ սոսկալի կասկածը կրճում էր նրա միտքը. սակայն դեռևս ոչինչ չէր ուզում ասել:

Հանգստավայրը սարքեցին պուրակում՝ բարձր ծառերի տակ: Հոգնածությունից ընկճված, տիկին Ուելդոնը և մյուսները արդեն քնել էին, երբ արթնացան բարձր ճչոցից:

– Ի՞նչ կա, – անմիջապես հարցրեց Դիկ Սենդը, առաջինը ոտքի կանգնելով:

– Այդ ես եմ, ես ճչացի, – պատասխանեց կուզեն Բենեդիկտը:

– Ի՞նչ պատահեց, – հարցրեց տիկին Ուելդոնը:

– Ինձ կծեցի՞ն...

– Օ՞ճը... – ահաբեկված հարցրեց տիկին Ուելդոնը:

– Ո՛չ, ո՛չ, օճ չէ, միջատ է, – պատասխանեց կուզեն Բենեդիկտը, – սպասեցեք, բռնեցի, բռնեցի:

– Լավ, ոչնչացրեք միջատին, – ասաց Հարրիսը, – և հանգիստ թողեք մեզ, որ քնենք, պարո՞ն Բենեդիկտ:

– Ոչնչացնե՞մ միջատին, – բացականչեց կուզեն Բենեդիկտը, – երբե՛ք, երբեք, պետք է տեսնեմ, թե ինչ միջատ է:

– Որևէ մոծակ կլինի, – ասաց Հարրիսը՝ ուսերը վեր քաշելով:

– Ոչ, մոծակ չէ, ճանճ է, – պատասխանեց կուզեն Բենեդիկտը, – և շատ հետաքրքիր ճանճ պետք է լինի:

Դիկ Սենդը վառեց գրպանի փոքր լապտերը և մոտեցրեց կուզեն Բենեդիկտին:

– Տեր աստված, – բացականչեց նա, – վերջապես բոլոր հուսախաբույթյուններս վերջացան. վերջապես մի բան գտա:

Միջատաբանը հրճվանքից շնչահեղձ էր լինում. հաղթական հայացքով նայում էր ճանճին. քիչ էր մնում համբուրեր:

– Բայց ինչո՞ւ եք այդքան ոգևորվել, – հարցրեց տիկին Ուելդոնը:

– Մի երկթևանի եմ բռնել, հիանալի երկթևանի:

Այդ խոսքերի հետ կուզեն Բենեդիկտը ցույց տվեց մեղվից փոքր մի ճանճ՝ անփայլ, մարմնի ներքևի մասում դեղին գծերով:

– Թունավոր չէ՞ այդ ճանճը, – հարցրեց տիկին Ուելդոնը:

– Ո՛չ, զարմուհի, ոչ, զոնե մարդկանց համար, բայց կենդանիների, քարայծերի, գոմեշների, նույնիսկ փղերի համար՝ այլ բան: Ա՛հ, թանկագին միջատ է սա:

– Բայց կասե՞ք, վերջապես, այդ ճանճի անունը, պարոն Բենեդիկտ, – ասաց Դիկ Սենդը:

– Այս ճանճը, – պատասխանեց միջատաբանը, – այս ճանճը, որ մատներիս արանքում է, այս ճանճը... ցեցե, մի այնպիսի հիանալի երկթևանի, որը հազվագյուտ է, և Ամերիկայում դեռևս ոչ մի ցեցե չի գտնվել:

Դիկ Սենդը չհամարձակվեց կուզեն Բենեդիկտին հարցնել, թե ո՞ր աշխարհամասում է լինում այդ վտանգավոր ցեցեն:

Եվ մինչդեռ իր ընկերները այդ դեպքից հետո վերստին քնեցին, Դիկ Սենդը, չնայած սաստիկ հոգնածությանը, ամբողջ գիշերը աչք չփակեց:

XVIII. Սոսկալի բառը

Ժամանակն էր, որ տեղ հասնեին: Տիկին Ուելդոնը, հոգնածությունից ուժասպառ եղած, այլևս չէր կարողանում այդպիսի ծանր պայմաններում շարունակել ուղևորությունը: Նրա փոքրիկ տղան, որի դեմքը չափազանց կարմրում էր ջերմի րոպեներին և գունատվում ընդմիջումներին, խղճալի տեսք ուներ: Մայրը, խիստ մտահոգված, չէր ուզում նրանից հեռանալ, չվատահեղիվ նույնիսկ Նանի խնամքին,

և միշտ իր գրկում էր պահում: Այո, ժամանակն էր, որ տեղ հասնեին: Ըստ ամերիկացու խոսքերի, այդ օրվա՝ ապրիլի 18-ի երեկոյան իսկ փոքրիկ խումբը վերջապես կհասներ Սան-Ֆելիչեի հացիենտան:

Տասներկու օր քայլել, տասներկու օր բացօթյա գիշերել: Այսքանը բավական էին՝ ուժասպառ անելու նույնիսկ այնպիսի առույգ կնոջը, ինչպիսին էր տիկին Ուելդոնը: Բայց հիվանդ երեխայի վիճակն ավելի վատ էր և, զրկված լինելով ամենատարրական դեղամիջոցից, երեխան կարող էր չդիմանալ:

Դիկ Սենդը, Թոմը, Նանը և մյուս ուղևորները ավելի լավ էին դիմացել հոգնածությանը:

Ուտելիքը թեև սկսում էր վերջանալ, սակայն բավականացրել էր, և նրանց վիճակը գոհացուցիչ էր:

Իսկ Հարրիսը կարծես սովոր լիներ անտառով երկարատև ուղևորության, հոգնածության ոչ մի նշան ցույց չէր տալիս: Սակայն Դիկ Սենդը նկատեց, որ քանի մոտենում էին հացիենտային, Հարրիսը ավելի մտազբաղ և ավելի զգույշ էր երևում: Մինչդեռ հակառակը պետք է լիներ: Այդպես էր գոնե մտածում պատանին՝ ավելի կասկածամիտ դառնալով ամերիկացու հանդեպ: Ի՞նչ շահ ուներ Հարրիսը նրանց խաբելու: Դիկ Սենդը չէր կարողանում իրեն հաշիվ տալ, բայց մոտիկից հետևում էր ուղեցույցին:

Ամերիկացին հավանաբար զգում էր Դիկ Սենդի անվստահությունը դեպի իրեն, և անկասկած «պատանի բարեկամի» այդ կասկածամտությունն էր, որ նրան ավելի մռայլ էր դարձնում:

Փոքր խումբը վերսկսեց առաջանալ:

Ավելի նոսրացած անտառում ծառերը խմբերով էին կանգնած և այլևս անանցանելի պատվար չէին առաջացնում: Մի՞թե իսկական պամպասում էին, որի մասին ասել էր Հարրիսը:

Օրվա առաջին ժամերին Դիկ Սենդի անհանգստությունը ավելացնող ոչ մի նոր դեպք տեղի չունեցավ, սակայն երկու հանգամանք գրավեցին նրա ուշադրությունը, որոնք գուցե կարևոր նշանակություն չունեին, բայց ներկա պայմաններում ոչ մի երևույթ պետք չէր աչքաթող անել:

Դինգոյի վարմունքն էր, որ ամենից առաջ հատկապես գրավեց պատանու ուշադրությունը:

Արդարև, շունը, որ ուղևորության ամբողջ ընթացքում կարծես ինչ-որ հետքի էր հետևում, հանկարծ բոլորովին փոխվեց: Մինչ այդ քիթը կախ արած, հաճախ հոտոտելով խոտերը կամ ծառերը կամ լռում էր, կամ ողբագին հաչում, այդպիսով կարծես վիշտ կամ ավստասանք արտահայտելով:

Բայց այդ օրը շան հաչոցները դարձան հնչուն, երբեմն՝ կատաղի, ինչպես այն ժամանակ, երբ Նեգորոն երևում էր «Պիլիգրիմի» տախտակամածի վրա:

Կասկածը մտավ Դիկ Սենդի սիրտը, այդ հաստատեց նաև Թոմը՝ ասելով.

— Տարօրինակ է, պարոն Դիկ, Դինգոն այլևս գետինը չի հոտոտում, ինչպես երեկ, քիթը բարձրացրել է, հուզված է, և մազերը ցցված են: Կարծես զգում է հեռավոր ներկայությունը:

– Նեգորոյի, այնպէս չէ՞, – պատասխանեց Դիկ Սենդը, – և բռնեց ծերունի Նեգրի ձեռքը, որ կամաց խոսի:

– Այո, Նեգորոյի, պարոն Դիկ. չի՞ կարող պատահել, որ հետևել է մեզ...

– Այո, Թոմ, և այս միջոցին գուցէ և հեռու չէ:

– Բայց... ի՞նչ նպատակով, – ասաց Թոմը:

– Կամ Նեգորոն անձանոթ է այս երկրին, – շարունակեց Դիկ Սենդը, – ուրեմն շահագրգռված է հետևելու մեզ...

– Կա՞մ... – հարցրեց Թոմը՝ անհանգիստ հայացքով պատանուն նայելով:

– Կամ, – շարունակեց Դիկ Սենդը, – ծանոթ է, և այդ դեպքում...

– Բայց ինչպէ՞ս Նեգորոն կարող էր ծանոթ լինել այս երկրին. չէ՞ որ ոչ մի անգամ չի եղել այստեղ:

– Երբեք չի եղե՞լ, – շնչաց Դիկ Սենդը: – Վերջապէս փաստն այն է, որ Դինգոյի շարժումներից երևում է, թէ նրա ատած մարդը մոտեցել է մեզ:

Ընդհատելով խոսքը՝ պատանին կանչեց շանը, որը, մի քիչ վարանելուց հետո, մոտեցավ նրան:

– Դե՛, – ասաց Դիկ Սենդը, – Նեգորոն, Նեգորոն:

Կատաղի հաչոց եղավ շան պատասխանը: Այդ անունը նրա վրա սովորական տպավորությունը գործեց, և շունը այնպէս վազեց, որ կարծես Նեգորոն պահված լինէր որևէ թփի հետևը:

Հարրիսը ներկա էր եղել այդ տեսարանին: Շրթունքները քիչ սեղմած մոտենալով պատանուն, ասաց.

– Ի՞նչ հրամայեցիք Դինգոյին:

– Է՛հ, առանձնապէս ոչինչ, պարո՞ն Հարրիս, – պատասխանեց ծերունի Թոմը կատակելով, – մենք նրանից տեղեկություն ենք ուզում նավի մեր այն ընկերոջ մասին, որը անհետ կորավ:

– Ա՛, – բացականչեց ամերիկացին, – այն պորտուգալացի խոհարար՞ը, որի մասին դուք ասել եք ինձ:

– Այո, – պատասխանեց Թոմը, – Դինգոյի հաչոցից կարելի է ենթադրել, թէ Նեգորոն հեռու չպետք է լինի:

– Ինչպէ՞ս կարող էր մինչև այստեղ հասնել, – պատասխանեց Հարրիսը: – Ինչքան ես գիտեմ, նա երբեք չէր եղել այս երկրում:

– Իսկ եթէ մեզ չէր հայտնել այդ մասի՞ն, – պատասխանեց Թոմը:

– Չարմանալի կլիներ,– ասաց Հարրիսը:– Բայց եթե կցանկանաք, կարելի է խուզարկել այս թփուտները. գուցե այդ խեղճ մարդը օգնության կարիք է զգում, գուցե վատ դրության մեջ է...

– Կարիք չկա, պարոն Հարրիս,– պատասխանեց Դիկ Սենդը:– Եթե Նեգորոն մինչև այստեղ հասել է, կարող է և ավելի հեռու գնալ. նա ճարպիկ մարդ է:

– Ինչպես կուզեք,– պատասխանեց Հարրիսը:

– Դե՛, Դինգո, լռիր,– կտրականորեն ավելացրեց Դիկ Սենդը՝ վերջացնելու համար այդ խոսակցությունը:

Երկրորդ երևույթը, որ նկատեց պատանին, ամերիկացու ձիուն էր վերաբերում:

Ամենակին չէր երևում, թե ձին «ախոռի հոտ էր առել», ինչպես սովորաբար լինում է: Օդը չէր հոտոտում, քայլերը չէր արագացնում, ռունգները չէր ուռցնում, չէր խրխնջում, ինչպես լինում է ուղևորությունը վերջացնելուն մոտ: Հարրիսի ձին, որ մի քանի անգամ հացիենտա գնացած կլիներ և պետք է զգար նրա մոտիկությունը, միանգամայն անտարբեր էր պահում իրեն, կարծես ախոռը դեռևս հարյուրավոր մղոն հեռու լիներ:

«Տեղ հասնող ձիու երևույթը չունի»,– մտածեց պատանին:

Մինչդեռ, ինչպես ասել էր Հարրիսը նախորդ օրը, ընդամենը վեց մղոն էր մնացել և այդ վերջին վեց մղոնից երեկոյան ժամը հինգին չորսն արդեն անցած կլինեին:

Եթե ձին ախոռի հոտը չէր զգում, ուրեմն ոչ մի նշան չկար, որ Սան-Ֆելիչեի հացիենտայի նման մեծ ֆերմայի մոտիկությունը հայտներ:

Նույնիսկ տիկին Ուելդոնը, որ բացի երեխային խնամելուց ուրիշ ոչ մի բանով չէր հետաքրքրվում, չափազանց զարմացավ շրջապատի ամայությունից: Ինչպե՞ս, ոչ մի բնիկ, հացիենտայի ոչ մի ծառայող չկար այդքան մոտիկության վրա: Մի՞թե Հարրիսը մոլորվել էր. ո՛չ, չէր կարող պատահել: Նոր ուշացումը կսպաներ իր փոքրիկ Ջեկին:

Այդ միջոցին Հարրիսը շարունակում էր առաջ գնալ, բայց նա ուշադրությամբ դիտում էր անտառի խորքերը, անվստահ աջ ու ձախ էր նայում այն մարդու նման, որը կորցրել է ճանապարհը:

Տիկին Ուելդոնը աչքերը փակեց նրան այլևս չտեսնելու համար:

Մի մղոն լայնությամբ հարթավայրից հետո ոչ շատ խիտ անտառը նորից հայտնվեց արևմուտքում, և փոքր խումբը կրկին մտավ բարձր ծառերի մեջ:

Երեկոյան ժամը վեցին փոքր խումբը հասավ մի թավուտի, որի միջով ըստ երևույթին դեռ վերջերս խոշոր կենդանիների նախիր էր անցել:

Դիկ Սենդը ուշադրությամբ շուրջը նայեց:

Վերևում, մարդաբոյից ավելի բարձրության վրա, ծառերի ճյուղերը պոկված կամ կոտրատված էին: Միաժամանակ խոտը ոտնակոխ էր եղած և մի քիչ ճահճային գետնի վրա երևում էին հետքերը, որոնք ոչ յագուլարների, ոչ էլ կուզուլարների կարող էին լինել,

Ուրեմն «այիսների» կամ որևէ այլ դանդաղաշարժ կենդանու հետքերն էին դրոշմված հողի վրա: Իսկ ինչո՞վ բացատրել այդպիսի բարձրության վրա ճյուղերի կոտրատումը:

Միայն փղերը կարող էին այդպիսի դրոշմ թողնել, դնել այդպիսի լայն հետքեր, բացատ առաջացնել անթափանցելի թավուտում: Սակայն չէ՞ որ փղեր չկան Ամերիկայում: Այդ վիթխարի թանձրամորթները Նոր աշխարհի բնիկներ չեն, ոչ էլ այնտեղ ընտելացվածներ:

Այն ենթադրությունը, թե փղեր կարող էին անցած լինել, միանգամայն անընդունելի էր:

Այսպես թե այնպես, Դիկ Սենդըր ոչ ոքի չհայտնեց այդ անբացատրելի երևույթից զգացածը: Նույնիսկ ամերիկացուն ոչինչ չհարցրեց: Ի՞նչ կարելի էր սպասել մի մարդուց, որը փորձում է ընծուղտները ջայլամի տեղ ընդունել տալ: Հարրիսը անշուշտ որևէ երևակայական բացատրություն կտար, իսկ դրությունը ոչնչով չէր փոխվի:

Համենայն դեպս, Դիկ Սենդըր իր կարծիքը կազմեց Հարրիսի մասին: Նա զգում էր, որ ամերիկացին դավաճան է, և սպասում էր հարմար առիթի՝ պատռելու նրա դիմակը, նրա հախիցը գալու համար, և ըստ երևույթին այդ առիթը չէր ուշանա ներկայանա:

Բայց ի՞նչ գաղտնի նպատակ Ուներ Հարրիսը: Ի՞նչ ապագա էր սպասում «Պիլիգրիմից» ազատվածներին: Դիկ Սենդըր ինքն իրեն կրկնում էր, որ իր պատասխանատվությունը չէր վերջացել առագաստանավի սուզվելով: Ինքը դեռևս պարտավոր էր, ավելի քան երբևէ, հոգատար լինել աղետի հետևանքով ցամաք նետվածների հանդեպ: Միայն ինքը կարող էր փրկել այդ կնոջը, երեխային, նեգրերին, դժբախտության բուլոր ընկերներին: Բայց եթե որոշ բան կարող էր անել նավի վրա, եթե կարող էր գործել որպես ծովային, ապա ի՞նչ կարող էր անել այստեղ, այն ահռելի փորձությունների մեջ, որ նախատեսում էր նա:

Դիկ Սենդըր չէր ուզում աչքերը փակել այն սոսկալի իրականության առջև, որը ամեն րոպե ավելի անվիճելի էր դառնում: Տասնհինգամյա նավապետ՝ «Պիլիգրիմի» վրա, այժմ պետք է ղեկավար լիներ ներկա պայմաններում: Բայց նա չէր ուզում ոչ մի խոսք ասել այդ մասին, չվրդովելու համար խեղճ կնոջը, մինչև հասներ գործելու ժամանակը:

Եվ ոչինչ չասաց նույնիսկ այն պահին, երբ, հարյուր քայլի չափ խմբից առաջ անցնելուց հետո, հասնելով բավական լայն գետակի ափին՝ վիթխարի կենդանիներ տեսավ, որոնք շտապում էին մտնել գետափի բարձր խոտերի մեջ:

«Գետածի՛ր, գետածի՛ր» քիչ էր մնացել բացականչելու նա:

Իսկապես գետածի՛ր էին՝ խոշոր գլխով, լայն և ուռած դնչով, որոնց բերանը զինված է մեկ ոտնաչափից ավելի մեծ ատամներով, որոնց հսկայական մարմինը ծանրանում է կարճ ոտքերի վրա, որոնց անմազ մորթը մուգ կարմրագույն է: Գետածի՛ր Ամերիկայո՞ւմ:

Շարունակեցին առաջ գնալ մինչև երեկո, բայց շատ դժվարությամբ: Հոգնածությունից սկսում էին ետ մնալ նույնիսկ ամենուժեղները: Արդեն ժամանակն էր, որ տեղ հասնեին, այլապես ստիպված կլինեին կանգ առնել:

Տիկին Ուելդոնը, միմիայն փոքրիկ Ջեկով զբաղված, գուցե հոգնածություն չէր զգում, սակայն ուժասպառ էր եղել: Բոլորն էլ քիչ թե շատ հոգնել էին: Դիկ Սենդը դիմանում էր բարոյական գերագույն ուժով, պարտականության գիտակցությունից դրդված:

Երեկոյան ժամը չորսի մոտ ծերունի Թոմը խոտերի մեջ ինչ-որ բան գտավ, որը նրա ուշադրությունը գրավեց, մի գեղք էր այդ, հատուկ ձևի մի դանակ, լայն ու կոր բերանով, բավական կոպիտ փորագրված քառակուսի փղոսկրե կոթով:

Վերցնելով դանակը՝ տվեց Դիկ Սենդին, որը իր հերթին ուշադրությամբ զննեց և ապա ցույց տվեց ամերիկացուն, ասելով.

– Անկասկած բնիկները հեռու չեն:

– Իսկապես, – պատասխանեց Հարրիսը, – սակայն...

– Սակա՞յն, – կրկնեց Դիկ Սենդը, ուղիղ Հարրիսի աչքերին նայելով:

– Մենք շատ մոտ պետք է լինեինք հացիենտային, սակայն չեմ կարողանում...

– Մոլորվե՞լ եք ուրեմն, – իսկույն վրա տվեց Դիկ Սենդը:

– Մոլորված, ոչ... Հացիենտան երեք մղոնից ավելի հեռու չպետք է լինի, ճանապարհը կրճատելու համար ես անտառի ամենակարճ ճանապարհն ընտրեցի և գուցե սխալվեցի:

– Գուցե, – պատասխանեց Դիկ Սենդը:

– Կարծում եմ ավելի լավ կլինի, եթե ես առաջ անցնեմ, – ասաց Հարրիսը:

– Ոչ, պարոն Հարրիս, միմյանցից չբաժանվենք, – պատասխանեց Դիկ Սենդը կտրուկ շեշտով:

– Ինչպես կուզեք, – շարունակեց ամերիկացին, – բայց գիշերը ինձ համար դժվար կլինի ձեզ առաջնորդել:

– Ինչ արած, – պատասխանեց Դիկ Սենդը, – այստեղ կանգ կառնենք: Տիկին Ուելդոնը կարծում եմ կհամաձայնի մի վերջին գիշեր ևս անցկացնել ծառերի տակ, և վաղը, երբ լույսը կբացվի, կշարունակենք ճանապարհը: Երկու կամ երեք մղոնը մի ժամվա գործ կլինի:

– Թող այդպես լինի, – պատասխանեց Հարրիսը:

Այդ միջոցին Դինգոն կատաղորեն հաչում էր:

– Մոտ արի, Դինգո՛, մո՛տ արի, – բացականչեց Դիկ Սենդը: – Դու լավ գիտես, որ ոչ ոք չկա, որ մենք անապատում ենք գտնվում:

Այդպես, որոշվեց վերջին դադարը անել: Տիկին Ուելդոնը թողեց, որ իր ընկերները գիշերելու պատրաստություն տեսնեն՝ առանց մի բառ արտասանելու: Փոքրիկ Ջեկը, ջերմից թմրած, պառկած էր նրա գրկում:

Գիշերելու համար ընտրեցին ամենալավ տեղը:

Մի լայն պուրակի մեջ Դիկ Սենդը որոշեց պատրաստվել քնելու, բայց ծերունի Թոմը, որը նրա հետ այդ պատրաստությամբ էր զբաղված, հանկարծ կանգ առավ բացականչելով.

– Պարոն Դիկ, նայեցե՛ք, նայեցե՛ք:

– Ի՞նչ կա, սիրելի՛ Թոմ,– հարցրեց Դիկ Սենդը,– այնպիսի հանգիստ մարդու ձայնով, որի համար ամեն ինչ սպասելի է:

– Տեսե՛ք... այնտեղ...– ասաց Թոմը,– այդ ծառերի տակ... արյան բծերը... և... գետնին... հոշոտված անդամներ:

Դիկ Սենդը վազեց դեպի այն կողմը, որտեղ ցույց էր տալիս ծերունի Թոմը, և իսկույն վերադառնալով՝ ասաց.

– Լռի՛ր, Թո՛մ, լռի՛ր:

Իսկապես, գետնի վրա թափված էին կտրված ձեռքեր, իսկ այդ մարդկային բեկորների մոտ՝ մի քանի ջարդված երկժանի և կտրված շղթա:

Բարեբախտաբար, տիկին Ուելդոնը ոչինչ չտեսավ այս ահավոր տեսարանից:

Իսկ Հարրիսը մի կողմ էր քաշված, և այդ բոլորին նրան նայողը կզարմանար, տեսնելով նրա դեմքի փոփոխությունը, որ այնքան վայրագ էր դարձել:

Դինգոն մոտենալով Դիկ Սենդին՝ կատաղած հաչում էր այդ արյունոտ մնացորդների առաջ:

Պատանին հագիվ կարողացավ նրան վռնդել:

Այդ միջոցին ծերունի Թոմը, նայելով այդ երկժանուն և ջարդված շղթային՝ անշարժ կանգնել էր, կարծես ոտքերը գամված լինեին գետնին: Աչքերը լայն բաց արած, ձեռքերը գալարած՝ նա նայում էր և կցկտուր խոսքեր ասում.

– Ես արդեն տեսել եմ... տեսել եմ... այդ երկժանիները... մանկությունից... տեսել եմ...

Եվ, անկասկած, մանկության հիշողությունները տարտամորեն վերադառնում էին. նա աշխատում էր հիշել... ուզում էր խոսել...

– Լռի՛ր, Թո՛մ,– կրկնեց Դիկ Սենդը,– լռի՛ր, ի սեր տիկին Ուելդոնի, ի սեր մեր բոլորի, լռի՛ր:

Եվ պատանին այդտեղից հեռացրեց ծերունի նեգրին:

Դադարի համար մի ուրիշ տեղ ընտրեցին, մի քիչ ավելի հեռու. և ամեն ինչ պատրաստվեց գիշերելու համար:

Ընթրիք պատրաստեցին, բայց գրեթե ոչ ոք ձեռք չտվեց: Հոգնությունը հաղթահարել էր քաղցը: Բոլորն էլ երկյուղի աննկարագրելի ազդեցության տակ էին, երկյուղ, որ սարսափի էր փոխվում:

Խավարը հետզհետե վրա հասավ, և քիչ հետո կատարյալ մութ էր: Երկինքը ծածկված էր փոթորկաբեր խոշոր ամպերով: Ծառերի արանքով, արևմտյան

Ահա թե ինչու կաուչուկի ծառերը, խիւնաները բացակայում էին այս մայրցամաքում, որը ո՛չ Ատակամայի սարահարթն էր, ո՛չ էլ Բոլիվիական պամպասը:

Այո, ընծուղուներ և ոչ թե ջայլամներ էին, որ փախել էին բացատից: Փղեր էին անցել պուրակից: Գետաձիերի հանգիստն էր խանգարել Դիկ Սենդը բարձր խոտերի մեջ: Ցեցեն, կուզեն Բենեդիկտի բռնած երկթևանին, վտանգավոր ցեցեն էր, որն իր խայթոցով սպանում է քարավանների կենդանիներին:

Վերջապես՝ իրոք առյուծի մռնչյունն էր, որ տարածվել էր խավարի մեջ: Իսկ այդ օղակները, շղթաները, այնքան տարօրինակ ձևի դանակը՝ ստրկավաճառի իրերն էին, հոշոտված ձեռքերը գերիների ձեռքերն էին:

Պորտուգալացի Նեգորոն և ամերիկացի Հարրիսը համախոհներ էին:

Եվ այն սոսկալի բառերը, որոնք ծագել էին Դիկ Սենդի մտքում, վերջապես թռան Նրա բերանից.

«Աֆրիկա՛ն, Հասարակածային Աֆրիկան, գերեվաճառների և ստրուկների Աֆրիկա՛ն»:

Վերջ առաջին մասի

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

I. Գերեվաճառությունը

Գերեվաճառություն՝ Բոլորին հայտնի է այս բառի նշանակությունը. մի բառ, որը երբեք չպետք է տեղ ունենար մարդկային լեզվի մեջ: Այդ խայտառակ առևտուրը, որ երկար ժամանակ կատարվում էր անդրծովյան գաղութներ ունեցող եվրոպական ազգերի օգտին, վաղուց արդեն արգելված է: Սակայն շարունակվում է կատարվել ընդարձակ տարածության վրա և գլխավորապես՝ Կենտրոնական Աֆրիկայում: XIX դարի կեսերին իրենց քրիստոնյա անվանող մի քանի պետությունների ստորագրությունը դեռևս պակասում էր ստրկությունը վերացնող պայմանագրի տակ:

Կարելի էր կարծել, թե գերավաճառությունը այլևս չէր լինի, որ մարդկային էակի գնումն ու վաճառքը վերջացել է: Այդպես չէր և այդ է, որ պետք է ընթերցողը իմանա, եթե ուզում է ավելի մոտիկից ծանոթանալ այս պատմության երկրորդ մասին: Պետք է, որ ընթերցողը իմանա, թե ինչպես է կատարվում մեր օրերում մարդու որսը, որն սպառնում է ամայացնել մի ամբողջ մայրցամաք, պահելու համար մի քանի ստրուկների գաղութներ, թե որտե՛ղ և ինչպե՛ս են կատարվում այս բարբարոս արշավանքները, ինչքա՛ն արյուն է հոսում, ինչքա՛ն հրդեհներ ու կողոպուտներ են լինում և, վերջապես, ո՞ւմ շահի համար է կատարվում այդ բոլորը:

Առաջին անգամ XV դարում սկսվեց Նեգր ստրուկների վաճառքը և ահա թե ինչպիսի պայմաններում տեղի ունեցավ:

Մահմեդականները Իսպանիայից վնդվելուց հետո հաստատվեցին Նեղուցին մյուս կողմը, աֆրիկյան ծովափում: Պորտուգալացիները, որոնք այդ միջոցին գրավում էին ծովափի այդ մասը, սաստիկ հալածում էին նրանց: Այդ փախստականների մի մասը բանտարկվեց և վերադարձվեց Պորտուգալիա: Ստրկացվելով՝ նրանք դարձան աֆրիկյան ստրուկների այն առաջին կորիզը, որը կազմվեց Արևմտյան Եվրոպայում մեր դարաշրջանի սկզբին:

Սակայն այդ մահմեդականները պատկանում էին մեծ մասամբ հարուստ ընտանիքների, որոնք ցանկացան ետ գնել նրանց ոսկով: Պորտուգալացիները մերժեցին ընդունել այդ փրկանքը, ինչքան էլ մեծ լիներ գումարը: Ինչների՞ն էր պետք օտար ոսկին: Նրանց պակասում էր նորաստեղծ գաղութներում աշխատող ձեռքը կամ, ավելի պարզ ասած, ստրուկների աշխատանքը:

Մահմեդական ընտանիքները, չկարողանալով ետ գնել իրենց գերի ազգականներին՝ առաջարկեցին նրանց փոխել ավելի մեծ թվով աֆրիկացի նեգրերի հետ, որոնց ձեռք բերելը խիստ հեշտ էր: Այդ առաջարկն ընդունվեց պորտուգալացիների կողմից, որոնց համար շահավետ էր փոխանակությունը, և այդպիսով ահա գերեվաճառությունը հաստատվեց Եվրոպայում :

XVI դարի վերջին այդ զգվելի առևտուրը ընդհանրապես ընդունված էր, և դեռևս վայրագ բարքերը դրանից չէին խորշում: Բոլոր պետությունները այն պաշտպանում էին ավելի շուտ և ավելի ապահով կերպով գաղութացնելու համար Նոր աշխարհի կղզիները: Արդարև, նեգր ստրուկները կարող էին դիմանալ այնտեղ, որտեղ սպիտակները ընտելացած, վարժված չլինելով, չկարողանալով դեռևս դիմանալ մերձարևադարձային կլիմայի տապին, կարող էին ոչնչանալ հազարներով: Նեգրերի փոխադրումը ամերիկյան գաղութները կատարվում էր կանոնավոր կերպով, հատուկ նավերով, և անդրատլանտյան առևտրի այս ճյուղը ստեղծեց կարևոր գրասենյակներ աֆրիկյան ծովափի տարբեր կետերում: «Ապրանքը» Էժան էր արտադրության վայրում, իսկ օգուտը չափազանց մեծ էր:

Վեհանձն մարդկանց ձայնը շուտով լսելի եղավ, նրանք բողոքեցին սևերի առևտրի դեմ և Եվրոպական կառավարություններից պահանջեցին, հանուն մարդասիրության, օրենք հրատարակել գերեվաճառությունը վերացնելու մասին:

1751 թ. քվակերները կանգնեցին աբուլիցիոնիստական շարժման գլուխը այն նույն Հյուսիսային Ամերիկայում, որտեղ հարյուր տարի հետո բռնկվեց անջատողական պատերազմը, որի պատճառներից էր ստրկության վերացման հարցը: Հյուսիսի զանազան նահանգներ Վիրջինիան, Քոնեքթիքուտը, Մանսսաչուսետսը, Փենսիլվանիան, հրատարակեցին գերեվաճառության վերացման հրովարտակ և ազատագրեցին իրենց ստրուկներին:

Սակայն քվակերների սկսած պայքարը չսահմանափակվեց Նոր աշխարհի հյուսիսային նահանգներով: Ստրկության կողմնակիցների վրա ուժեղ հարձակումներ եղան մինչև Ատլանտյանի այն կողմը: Հատկապես Ֆրանսիայում և Անգլիայում մեծ թվով կողմնակիցներ առաջ եկան այս արդար գործի համար:

Շարժումն սկսվել էր: 1807 թ. Անգլիան վերացրեց նեգրերի առևտուրը իր գաղութներում, և Ֆրանսիան նրա օրինակին հետևեց 1814 թ.: Երկու հզոր պետությունները պայմանագիր կնքեցին այս խնդրի վերաբերյալ, պայմանագիր, որը Նապոլեոնը հաստատեց «հարյուր օրերի» ժամանակ:

Սակայն այդ դեռ զուտ տեսական դեկլարացիա էր: Նեգրեր փոխադրող նավերը շարունակում էին անցնել ծովերը և գաղութային նավահանգիստներում «բեռնաթափել» իրենց «սև ապրանքը»:

Պետք եղավ ավելի գործնական միջոցներ ձեռք առնել այդ առևտրին վերջ դնելու համար: Միացյալ Նահանգները 1820 թ., Անգլիան 1824 թ. գերեվաճառությունը ծովահենություն հայտարարեցին, և ծովահեն` այդ գործով զբաղվողներին: Որպես այդպիսիք, նրանք մահվան պատժի սպառնալիքի տակ էին և նրանց հետապնդում էին ծայրահեղ խստությամբ: Շատ չանցած Ֆրանսիան միացավ նոր պայմանագրին: Բայց Ամերիկայի հարավային նահանգները, իսպանական և պորտուգալական գաղութները չմասնակցեցին գերության վերացման ակտին, և նեգրերի արտահանումը շարունակվեց ի նպաստ նրանց, հակառակ այն բանի, որ նավերի հսկողության իրավունքը միջազգային ճանաչում էր ստացել, որը, սակայն, սահմանափակվում էր միայն կասկածելի նավերի դրոշներն ստուգելով:

Սակայն գերեվաճառության վերացման օրենքը հետադարձ ուժ չունեց, այսինքն, թեև արգելվում էր նոր ստրուկներ գնել, բայց հին ստրուկները դեռևս չէին ազատագրված:

Անգլիան տվեց առաջին օրինակը: 1833 թ. մայիսի 14-ի օրենքով ազատագրվեցին Մեծ Բրիտանիայի գաղութների բոլոր նեգրերը, և 1838 թ. օգոստոսին վեց հարյուր յոթանասուն հազար ստրուկներ ազատ հայտարարվեցին:

Տասը տարի հետո, 1848 թ. Ֆրանսիան ազատագրեց ֆրանսիական գաղութների ստրուկներին` ընդամենը երկու հարյուր վաթսուն հազար հոգի:

1859 թ. Միացյալ Նահանգների հյուսիսի և հարավի միջև պատերազմը ավարտելով ազատագրման գործը, այն տարածեց ամբողջ Հյուսիսային Ամերիկայում:

Երեք մեծ պետությունները այդպիսով իրագործել էին մարդասիրական գործը: Ներկայումս գերեվաճառությունը շարունակվում է միայն իսպանական և պորտուգալական գաղութներում և Արևելքում թուրքերի ու արաբների մոտ: Բրազիլիան թեև չազատագրեց նախկին ստրուկներին, սակայն դադարեցրեց նորերն ընդունելը, և նեգրերի երեխաները այնտեղ որպես ազատ քաղաքացիներ են ծնվում:

Աֆրիկայի խորքերում տեղացի իշխողները չեն դադարում արյունահեղ մարտեր մղել միմյանց դեմ մարդկային որսի համար, և այդ պատերազմների հետևանքով ամբողջ ցեղեր ստրկության են մատնվում: Երկու հակադիր ուղղությամբ են շարժվում ստրուկների քարավանները, մեկը դեպի արևմուտք` դեպի Անգոլայի պորտուգալական գաղութը, մյուսը դեպի արևելք` դեպի Մոզամբիկ: Այդ դժբախտ ստրուկներից միայն մի փոքր մասն է տեղ հասնում, ոմանց ուղարկում են Կուբա կամ Մադագասկար, մյուսներին` Ասիայի արաբական կամ թուրքական նահանգները` Մեքքա կամ Մասկատ: Անգլիական և ֆրանսիական հաճանավերը միայն փոքր չափով են կարողանում արգելել գերեվաճառությունը, քանի որ այդքան ընդարձակ տարածության վրա դժվար է իրական վերահսկողություն, սահմանել:

Մի՞թե այդ զգվելի արտահանության ծավալը դեռևս շատ մեծ է:

Այո: Համեստ հաշիվներով` ութսուն հազարից ոչ պակաս ստրուկներ են հասնում ծովափ, և այդ թիվը, ինչպես երևում է, գերված և սպանված բնիկների միայն մի տասներորդ մասն է կազմում: Այդ ահռելի սպանողներից հետո դաշտերը

ամայանում են, հրդեհված ավանները բնակչությունից դատարկվում, գետերը դիակներ տանում, գիշատիչ գազաններն են տիրապետում երկրին: Լիվինգսթոնը մարդկային այդպիսի որսից հետո այլևս չէր ճանաչում այն շրջանները, որտեղ եղել էր մի քանի ամիս առաջ: Մյուս բոլոր ճանապարհորդները՝ Գրանդը, Սփիքը, Բըրթոնը, Քամերոնը, Սթենլին միևնույն տեսարանին են ականատես եղել Կենտրոնական Աֆրիկայի անտառային սարահարթում բնիկ իշխանների պայքարի գլխավոր վայրում: Մեծ լճերի շրջանում, այն ամբողջ ընդարձակ տարածության վրա, որը «ապրանք» է մատակարարում Չանգիբարի շուկային: Բրնույում և Ֆեգանում, ավելի հարավի Նիասայի և Չամբեգիի ափերին, ավելի արևմուտք՝ վերին Չաիրի շրջանում, որտեղ եղավ խիզախ Սթենլին, միևնույն տեսարանն է կրկնվում. ավերակներ, կոտորած, մարդազրկություն: Մի՞թե ստրկությունը Աֆրիկայում կվերանա միայն նեգր ցեղի ոչնչացումից հետո, և մի՞թե այդ ցեղը նույն բախտին կարժանանա, ինչ որ Նոր Հուլանդիայի ավստրալիական ցեղը:

Սակայն իսպանական և պորտուգալական գաղութների շուկան կփակվի մի օր, ստրուկների այդ աղբյուրը այլևս չի լինի. քաղաքակրթված ժողովուրդները այլևս չեն կարող հանդուրժել գերեվաճառությունը:

Պետք է ասել, որ եվրոպական մեծ պետությունների մեծ թվով գործակալներ այդ առևտրի նկատմամբ ցավալի ներողամտություն են ցույց տալիս: Այն միջոցին, երբ հաճանավերը հսկում են Ատլանտյան և հնդկական օվկիանոսների ափերը, գերեվաճառությունը կանոնավոր կերպով կատարվում է երկրի ներքին մասերում, ստրուկների քարավանները տեղաշարժվում են մի շարք պաշտոնյաների աջքի առաջ, նախապես որոշված ժամանակներում տեղի են ունենում կոտորածներ, և տասը նեգր սպանվում է մի ստրուկ ձեռք բերելու համար:

Այժմ հասկանալի է, թե ինչ նշանակություն ունեին Դիկ Սենդի արտասանած բառերը— «Աֆրիկա՛, Հասարակածային Աֆրիկա՛: Գերեվաճառության և ստրուկների Աֆրիկա՛»:

Պատանին չէր սխալվում, իսկապես Աֆրիկան էր դա՝ իր բոլոր վտանգներով թե՛ իր ուղեկիցների և թե՛ իր համար:

Սակայն աֆրիկյան մայրցամաքի ո՞ր շրջանն էր նետել նրանց անբացատրելի պատահարը, Անկասկած, նրա արևմտյան մասը. և դրությունը ծանրանում էր նրանով, որ ինչպես պատանին մտածում էր, «Պիլիգրիմը» խորտակվել էր Անգոլայի ծովափում, որտեղ գալիս են Աֆրիկայի այդ շրջանն ամայացնող գերեվաճառ քարավանները:

Իսկապես այդ շրջանն էր, որ մի քանի տարի հետո այնքան ծանր պայմաններում հետազոտեցին Քամերոնը հարավում, Սթենլին՝ հյուսիսում: Այն ընդարձակ տերիտորիայից, որը կազմված է երեք նահանգներից՝ Բենգուելա, Կոնգո և Անգոլա, մինչ այդ միայն ծովափնյա մասն էր ծանոթ: Այդ շրջանը տարածվում է սկսած Նուբից՝ հարավում, մինչև Չաիրը՝ հյուսիսում. երկու գլխավոր քաղաքները՝ Բենգուելան և Սան-Պաուլո դե Լոանդան նավահանգիստներ են. այս վերջինը Պորտուգալիային պատկանող գաղութի մայրաքաղաքն է:

Երկրի ներսում այդ շրջանը համարյա անծանոթ էր այն ժամանակ. շատ քիչ ճանապարհորդներ էին հանդգնել երկրի խորքը գնալ: Վատ կլիման, տաք և խոնավ հողերը, որոնք տենդ են առաջացնում, վայրենի բնիկները, որոնց մի մասը դեռ մարդակեր են, ցեղերի միջև տեղի ունեցող մշտական պատերազմները, գերեվաճառների անվստահությունը այն բոլոր օտարականների նկատմամբ, որոնք փորձում են այդ զգվելի առևտրի գաղտնիքները մերկացնել. ահա այն բոլոր

դժվարությունները, որոնց պետք էր դիմանալ, վտանգները, որոնք պետք էր հաղթահարել: Անգլիայի այս նահանգում հասարակածային Աֆրիկայի ամենավտանգավոր տեղերից մեկում:

Տյուկեյը 1816 թ. հասել էր Կոնգո գետի՝ մինչև Ելլալայի ջրվեժից էլ այն կողմը, բայց ամենաշատը երկու հարյուր մղոն տարածության վրա: Այդ կարճ ուղևորությունը չէր կարող լուրջ գաղափար տալ այս շրջանի մասին, սակայն այնտեղ մահացան այդ արշավախմբի գիտնականների և սպաների մեծ մասը:

Երեսուկյոթ տարի հետո դոկտոր Լիվինգսթոնը Բարեհուսո հրվանդանից մեկնելով՝ հասավ մինչև Վերին Չամբեգի: Այնտեղից, 1853 թ. Նոյեմբերին այնպիսի խիզախությամբ, որը երբեք չի գերազանցվել, նա Աֆրիկյան անցավ հարավից դեպի հյուսիս-արևմուտք, անցնելով Կոնգո գետի վտակներից մեկի՝ Կուանգոյի վրայով և 1854 թ. մայիսի 31-ին հասավ Սան-Պաուլո Լուանդա: Այդ առաջին ուղևորությունն էր, որ կատարվում էր պորտուգալական մեծ գաղութի անձանոթ շրջանում:

Տասնութ տարի հետո երկու հանդուգն հետախույզներ Աֆրիկյան անցան արևելքից արևմուտք և դուրս եկան մեկը՝ Անգլիայի հարավում, մյուսը՝ հյուսիսում, անհավատալի դժվարությունների գնով:

Առաջին այդպիսի ուղևորություն կատարողը եղավ անգլիական նավատորմի լեյտենանտ Վերնեյ-Հովետ Քամերոնը: 1872 թ. այն կարծիքն ստեղծվեց, որ Մեծ Լճերի շրջանում Լիվինգսթոնի հետևից ուղարկված արշավախումբը աղետի էր ենթարկվել: Լեյտենանտ Քամերոնը առաջարկեց գնալ նրան որոնելու: Առաջարկն ընդունվեց: Քամերոնը, որին ուղեկցում էին դոկտոր Դիլլոնը, լեյտենանտ Սեսիլ Մերֆին և Լիվինգսթոնի թոռը՝ Ռոբերտ Մոֆան, Չանգիբարից դուրս եկավ: Ուզոգո գետն անցնելով Քամերոնը պատահեց Լիվինգսթոնի դիակին, որը նրա հավատարիմ սպասավորները տանում էին արևելյան ծովափը: Շարունակելով ճանապարհը դեպի արևմուտք, մի ծովափից մյուսն անցնելու անսասան կամքով, անցնելով Ունիանսիբեն, Ուզունդան, Կահուելեն և հավաքելով մեծ ճանապարհորդի թղթերը, անցնելով Տանգանիկա լիճը, Բամբարե լեռները, Լուալաբա գետը, որի հոսանքով չկարողացավ ցած իջնել, անցնելով պատերազմից ավերված, գերեվաճառությունից դատարկված վայրերը՝ Կիլեմբան, Ուրուան, Լոմանեի ակունքը, Ուլուդան, Լովալեն, շրջանցելով Կուանգան և այն ընդարձակ անտառները, որոնց մեջ Հարրիսը մոլորեցրել էր Դիկ Սենդին և նրա ընկերներին, խիզախ Քամերոնը վերջապես տեսավ Ատլանտյան օվկիանոսը և հասավ Սան Ֆիլիպպե դե Բենգուելա: Երեք տարի և չորս ամիս տևող այդ ուղևորության ընթացքում մահացան նրա երկու ուղեկիցները՝ դոկտոր Դեյլոնը և Ռոբերտ Մոֆան:

Անգլիացի Քամերոնին գրեթե անմիջապես փոխարինեց ամերիկացի Հենրի Մորլանդ Սթենլին՝ այդ հայտնագործությունների ճանապարհին: Հայտնի է, որ «Նյու-Յորք Հերալդի» այդ աներկյուղ թղթակիցը, ուղարկված լինելով Լիվինգսթոնին որոնելու, նրան գտավ 1871 թ. հոկտեմբերի 30-ին Ուզիջիում, Տանգանիկա լճի ափին: Սակայն այն, ինչ որ այնքան հաջողությամբ կատարվել էր մարդկայնության տեսակետից, Սթենլին ուզեց վերսկսել ի սեր աշխարհագրական գիտության: Այս անգամ նրա նպատակն էր կատարելապես ծանոթանալ Լուալաբային, որը նա տեսել էր հարևանացիորեն: Քամերոնը դեռևս կորած էր Կենտրոնական Աֆրիկայի նահանգներում, երբ Սթենլին, 1874 թ. Նոյեմբերին, հեռանալով արևելյան ծովափից՝ Բագումոյից, քսանմեկ ամիս հետո, 1876 թ. օգոստոսի 24-ին, դուրս եկավ Ուշիջիից, որը ծաղկի համաճարակից ամայացել էր, յոթանասունչորս օրում անցավ լճից մինչև Նիանգվե ընկած տարածությունը (Նիանգվեն ստրուկների մեծ շուկա է, որտեղ եղել էին Լիվինգսթոնը և Քամերոնը)

և ականատես էր եղել սոսկալի կոտորածների, որոնք տեղի էին ունենում մարունգների և մանիուլեմանների երկրում Չանգիբարի սուլթանի սպանների ձեռքով:

Այնուհետև Սթենլին ձեռնարկեց Լուալաբայի ափերի հետազոտության գործը և հասավ մինչև նրա գետաբերանը: Նիանգվեում նրա վարձած հարյուր քառասուն բեռնակիրները և տասնինը մակույկները կազմում էին նրա արշավախմբի անձնակազմն ու նյութական մասը: Պետք էր սկզբի օրից պայքարել Ուգուգուի մարդակերների դեմ, ինչպես նաև մակույկները տեղափոխել գետի անանցանելի սահանքները շրջանցելու համար: Հասարակածի մոտ, այն կետում, որտեղ Լուալաբան թեքվում է դեպի հյուսիս-հյուսիս-արևելք, բնիկների հիսունչորս մակույկներ հարձակվեցին Սթենլիի փոքր նավատորմի վրա, բայց Սթենլին հաջողվեց նրանց փախուստի մատնել: Այնուհետև քաջարի ամերիկացին, հասնելով հյուսիսային լայնության երկրորդ աստիճանին՝ հաստատեց, որ Լուալաբան ուրիշ բան չէր, եթե ոչ Վերին Չաիրը կամ Կոնգո գետը, և նկատեց, որ, հետևելով նրա հոսանքին, ուղիղ դեպի ծովը կգնար: Այդպես էլ արեց՝ համարյա ամեն օր կռվելով գետափնյա ցեղերի դեմ: 1877 թ. հունիսի 3-ին, Մասասայի սահանքներով անցնելիս, նա կորցրեց իր ընկերներից մեկին՝ Ֆրանցիս Պոկոկին, իսկ ինքն էլ հուլիսի 18-ին իր մակույկով քշվեց մինչև Մբելո ջրվեժը և հրաշքով միայն ազատվեց մահից:

Վերջապես, օգոստոսի 6-ին Հենրի Սթենլին հասավ Նի Սանդա՝ ծովափից չորս օրվա հեռավորության վրա: Երկու օր հետո Բանցա-Մբուկսում ստացավ իրեն սպասող կենսամթերքը, որն ուղարկել էին Էմբոբայի երկու առևտրականներ, և նա կարողացավ վերջապես հանգստանալ ծովափի այդ փոքր քաղաքում, երեսունհինգ տարեկան հասակում արդեն ծերացած՝ հոգևածությունից և զրկանքներից, աֆրիկյան մայրցամաքը ամբողջովին անցնելուց հետո, մի ուղևորություն, որը իր կյանքից խլել էր երկու տարի ինն ամիս: Բայց Լուալաբայի ընթացքը ուսումնասիրվել էր մինչև Ատլանտյանը, և եթե Նեղոսը հյուսիսի մեծ զարկերակն էր, Չամբեզին՝ արևելյան մեծ զարկերակը, այժմ հայտնի էր, որ Աֆրիկայի արևմուտքում կար նաև երրորդ, աշխարհի ամենից մեծ գետերից մեկը՝ չորս հազար վեց հարյուր հիսուն կիլոմետր երկարությամբ: Այդ գետը, որ իր հոսանքի տարբեր մասերում կրում է Լուալաբա, Չաիր և Կոնգո անունները, Մեծ լճերի շրջանը միացնում է Ատլանտյան օվկիանոսին:

Սակայն այս երկու ուղեգծերի՝ Սթենլիի ուղեգծի և Քամերոնի ուղեգծի միջև գտնվող Անգոլայի նահանգը համարյա անձանոթ էր 1873 թ. այն միջոցին, երբ «Պիլգրիմը» կորել էր Աֆրիկայի ծովափում: Նրա մասին հայտնի էր միայն այն, որ Անգոլան արևմտյան գերեվաճառության բեմ էր ներկայացնում Վիետի, Կասանգայի և Կագոնգեի շուկաների շնորհիվ:

Ափից հարյուր մղոնից ավելի հեռու այդ շրջանն էր բերել Հարրիսը Դիկ Սենդին՝ հոգևածությունից և վշտից հյուժված կնոջ, մահամերձ երեխայի և մյուս նեգր ուղևորների հետ, որոնք գերեվաճառների ազահության գոհը պիտի լինեին:

Այո, դա Աֆրիկան էր, և ոչ թե Ամերիկան, որտեղ ո՛չ բնիկները, ո՛չ գազանները, ո՛չ էլ կլիման բոլորովին վտանգավոր չեն: Անդերի և ծովափի միջև ընկած բարգավաճ շրջանը չէր այդ, որտեղ կան բազմաթիվ ավաններ, որտեղ միսիոների հյուրընկալ դռները բաց են ուղևորների առաջ:

Իսկ Պերուի և Բոլիվիայի նահանգները շա՛տ հեռու էին, և «Պիլգրիմը» անկասկած կհասներ նրանց, եթե ոճրագործ մի ձեռք նրան չչեղեր ճանապարհից:

Սարսափելի Անգոլան էր այդ և ոչ թե ծովափի այն մասը, որը պորտուգալական իշխանությունների ուղղակի հսկողության տակ էր, գաղութի այն ներքին շրջանն էր, որտեղից անցնում են ստրուկների քարավանները՝ հավիլդարների մտրակի տակ:

Ի՞նչ գիտեր Դիկ Սենդն այդ երկրի մասին, որտեղ դավաճանությունը բերել էր նրան: Շատ քիչ բան, այնքանը, ինչ որ նրա մասին ասել էին XVII դարի միսիոներները, պորտուգալացի այն վաճառականները, որոնք երթևեկում էին Սան-Պաուլո դե Լուանդայից մինչև Չաիր, անցնելով Սան-Սալվադորով, այն, ինչ նկարագրել էր Լիվինգսթոնը 1853 թվի ուղևորության միջոցին, և այդքանը բավական էր, որպեսզի հուսահատվեր բարոյապես նրանից ավելի տկար մեկը:

Իսկապես որ դրությունը սոսկալի էր:

II. Հարրիսը և Նեգորոն

Անտառում Դիկ Սենդի և նրա ուղեկիցների վերջին դադարը անելու հաջորդ օրը երկու հոգի միմյանց հանդիպեցին երեք մղոն հեռավորության վրա, ըստ նախապես կայացած համաձայնության:

Այդ երկու հոգին Հարրիսն ու Նեգորոն էին: Հետագայում կտեսնենք, թե ինչպես էր պատահել, որ Անգոլայի ծովափում միմյանց պատահեցին Նոր Չելանդիայից վերադարձող պորտուգալացին և ամերիկացին, որն իր գերվաճառության գործերով հաճախ երթևեկում էր Արևմտյան Աֆրիկայի այս նահանգում:

Հարրիսն ու Նեգորոն նստել էին մեծ թզենու տակ, արագահոս գետակի ափին, որը հոսում էր պապիրուսի կրկնակ պատվարի միջով:

Խոսակցությունը նոր էր միայն սկսվել, քանի որ պորտուգալացին և ամերիկացին հենց նոր էին հանդիպել: Սկզբում նրանք խոսում էին վերջին ժամերին տեղի ունեցած իրադարձությունների մասին:

— Այդպես, Հարրիս,— ասաց Նեգորոն,— քեզ չհաջողվեց Անգոլայի ավելի հեռավոր վայրերը տանել «Նավապետ» Սենդի, ինչպես նրանք անվանում են այդ տասնհինգ տարեկան պատանուն, փոքր խումբը:

— Ոչ, բարեկամ,— պատասխանեց Հարրիսը,— և նույնիսկ զարմանալի է, որ ինձ հաջողվեց նրանց բերել ծովափից առնվազն հարյուր մղոն հեռավորության վրա: Վաղուց իմ պատանի բարեկամը՝ Դիկ Սենդը, կասկածանքով էր նայում ինձ, նրա կասկածները հետզհետե համոզմունքի էին փոխվում, և ճիշտն ասած...

— Հարյուր մղոն ևս, Հարրիս, և այդ մարդիկ հաստատ մեր ձեռքում կլինեին: Սակայն չպետք է նրանց բաց թողնել:

— Ինչպես կարող են փախչել մեզանից,— պատասխանեց Հարրիսը՝ ուսերը բարձրացնելով:— Կրկնում եմ, Նեգորո՛, ժամանակն էր, որ փախուստ տայի նրանցից: Ես իմ պատանի բարեկամի աչքերի մեջ կարդացի, որ պատրաստվում է մի գնդակ տեղավորել կրծքում, իսկ իմ ստամոքսը չի կարող մարսել այդ գնդակները:

— Լավ,— ասաց Նեգորոն,— ես էլ իմ հաշիվներն ունեմ այդ պատանու հետ...

— Դու հաշիվդ կմաքրես տոկոսներով, բարեկա՛մ: Ինչ վերաբերում է ինձ, ուղևորության առաջին օրերին ինձ հաջողվեց այս շրջանը նրան ընդունել տալ որպես Ատակամայի անապատ, դե, որտեղ ես եղել եմ նախապես. սակայն պատիկը պահանջում էր կաուչուկ և ճանճ-թռչուն, մայրը պահանջում էր խինա, իսկ կուզենը՝ անվերջ լուսատու ճանճեր էր որոնում... Դե՛, հասկանալի է, որ հնարագիտությունը սպառվեց, և մեծ դժվարությամբ ընծուղուները ջայլամների տեղ ընդունել տալուց հետո... դա մի գյուղ էր, Նեգորո, ես այլևս չգիտեի, թե ինչ հնարեմ. բացի այդ, ես տեսնում էի, որ իմ պատանի բարեկամը այլևս չէր հավատում իմ բացատրություններին: Այնուհետև մենք պատահեցինք փղերի հետքերի, որոնց միացան գետածիերը: Իսկ դու լավ գիտես, Նեգորո, որ գետածիեր և փղեր Ամերիկայում այնքան կան, ինչքան պատվավոր մարդիկ կան Բենգուելայի տանջանքի բանտում: Վերջապես ծերունի նեգրի խելքին փչեց ծառի տակ երևան հանել երկժանիներ և շղթաներ, որ ստրուկները թողել էին այնտեղ փախչելիս: Այդ նույն րոպեին մռնչաց առյուծը՝ լրացնելով այդ բոլորը, և հեշտ բան չէ առյուծի մռնչունը անցկացնել որպես անմեղ կատվի մլավոց: Ես հազիվ ժամանակ ունեցա ցատկել ձիուս և ծկել:

— Հասկանալի է,— պատասխանեց Նեգորոն:— Բայց և այնպես ես ավելի լավ կհամարեի մի հարյուր մղոն էլ հեռու տանել նրանց:

— Ամեն մարդ իր ձեռքից եկածը կանի, բարեկա՛մ,— պատասխանեց Հարրիսը:— Իսկ դու, որ քարավանին հետևում էիր ծովափից սկսած, լավ արեցիր, որ հեռու մնացիր: Նրանք զգում էին քո ներկայությունը: Ծունը՝ Դինգոն, այնքան էլ չի սիրում քեզ: Ի՞նչ ես արել այդ կենդանուն:

— Ոչինչ,— պատասխանեց Նեգորոն,— բայց շուտով նա մի գնդակ կստանա ճակատին:

— Ինչպիսին դու կստանայիր Դիկ Սենդից, եթե երևայիր նրա հրացանից երկու հարյուր մետր հեռավորության վրա: Պետք է ասել, որ լավ կրակող է պատանի բարեկամը, և յուրատեսակ քաջ տղա է:

— Ինչքան էլ քաջ լինի Հարրիս, նա թանկ կվճարի իր վիրավորանքների համար,— պատասխանեց Նեգորոն, որի դիմագծերը վայրագ տեսք ստացան:

— Լավ,— շշնջաց Հարրիսը,— բարեկամս, նույնն ես մնացել: Ճամփորդությունները քեզ չեն փոխել:

Մի րոպե լռելուց հետո ավելացրեց.

— Ի դեպ, Նեգորո, երբ քեզ այնքան անսպասելիորեն պատահեցի աղետի վայրի մոտ, Լոնգայի գետաբերանում, դու հազիվ ժամանակ ունեցար ինձ հանձնարարելու այդ ազնիվ մարդկանց, խնդրելով, որ ինչքան կարելի է նրանց հեռու տանեմ այդ ենթադրյալ Բոլիվիայում, բայց չասացիր, թե ինչ էիր արել այս վերջին տարիներին: Երկու տարին, մեր արկածախնդիր կյանքում, բավական երկար ժամանակ է, բարեկամ: Այն օրից սկսած, երբ դու ստրուկների քարավանի առաջնորդ նշանակվեցիր ծերունի Ալվեցի հաշվին, որի հնազանդ գործակալներն ենք մենք, դու հեռացար Կասանգայից, և քո մասին այլևս ոչինչ չլսվեց: Ես կարծում էի, թե որևէ տհաճություն ես ունեցել անգլիական պարեկային նավի հետ, և դու ցցի վրա ես բարձրացել արդեն:

— Բանը քիչ էր մնացել այդպես վերջանար, Հարրիս:

– Մի օր կլինի, Նեգորո՛:

– Շնորհակալություն:

– Ի՞նչ արած,– պատասխանեց Հարրիսը փիլիսոփայական անտարբերությամբ,– այդ մեր գործի անխուսափելի վախճանն է: Ով գերեվաճառությամբ է զբաղվում Աֆրիկայի ծովափում, պետք է աչքի առաջ ունենա, որ անկողնում չի մեռնելու... Ուրեմն քեզ ձերբակալեցի՞ն...

– Այո:

– Անգլիացիներ՞ը:

– Ոչ, պորտուգալացիները:

– Ապրանքը հանձնելուց առաջ, թե հետո,– հարցրեց Հարրիսը:

– Հետո...– պատասխանեց Նեգորոն՝ մի քիչ վարանելուց հետո:– Պորտուգալացիներն այժմ անհաշտ են: Այլևս ստրկություն չեն ուզում, թեև երկար ժամանակ լավ շահեցին այդ գործից: Ինձ մատնել էին, հետևեցին և ձերբակալեցին...

– Եվ դատապարտեցի՞ն...

– Ցմահ բանտարկության՝ Սան-Պաոլո դե Լոանդայում:

– Չար սատանա,– բացականչեց Հարրիսը,– ցմահ բանտարկությա՞ն. զևո՞ւն, տխուր տեղ այնպիսի մարդկանց համար, որոնք, ինչպես մենք, սովոր են բաց օդում ապրել: Ես կախադանը կնախընտրեի:

– Կախադանից փախչել չի կարելի,– պատասխանեց Նեգորոն,– միևնույն բանտից...

– Քեզ հաջողվեց փախչե՞լ...

– Այո, Հարրիս: Բանտարկվելուց միայն տասնհինգ օր հետո ինձ հաջողվեց պահվել Նոր Չելանդիայի Օքլենդ նավահանգիստը մեկնող նավի ամբարում: Ջրի տակառը և պահածոյի արկղը, որոնց արանքում խցկվել էի, ինձ ուտելիք և խմելիք տվեցին ուղևորության ամբողջ ընթացքում:

Օ՛հ, ես սաստիկ տանջվում էի, որ չէի կարողանում դուրս գալ, երբ նավը հեռացավ ափից: Բայց եթե անզգույշ լինեի և դուրս գայի, ինձ կրկին իսկույն նավամբարը կվերադարձնեին, և տանջանքը նույնը կլիներ: Բացի դրանից, Օքլենդ հասնելով՝ ինձ նորից կհանձնեին, անգլիական իշխանություններին և ի վերջո կվերադարձնեին Լոանդայի զևոանը. կամ գուցե կախեին, ինչպես դու ես ասում: Ահա թե ինչու ես գերադասեցի ճանապարհորդել ծպտված:

– Եվ առանց տոմսի,– բացականչեց Հարրիսը ծիծաղելով,– այդ մեկը ազնվությունն է, բարեկամ: Փորը կշտացնել և ձրի ճամփորդել...

– Այո,– շարունակեց Նեգորոն,– Բայց երեսուն օր փակված մնալ նավամբարում...

– Վերջապես անցած բան է, Նեգորո՛: Ուրեմն դու մեկնեցիր Նոր Չելանդիա՝ մարդիների երկիրը: Բայց չէ որ այնտեղ չմնացիր: Մի՞թե վերադարձը միևնույն պայմաններում եղավ:

– Ոչ, Հարրիս. դու պետք է իմանաս, որ այնտեղ ես միայն մի բանի մասին էի մտածում՝ վերադառնալ Անգոլա և վերսկսել գերեվաճառի գործը:

– Ճիշտ է, – պատասխանեց Հարրիսը, – մարդիկ սիրում են իրենց գործը... ըստ սովորության:

– Տասնութ ամիս շարունակ...

Այս վերջին խոսքերի հետ Նեգորոն հանկարծ բռնելով բարեկամի ձեռքը՝ ուշադրությամբ նայեց շուրջը:

– Հարրիս, – ասաց պորտուգալացին ցած ձայնով, – ինձ թվաց, թե ինչ-որ ձայն լսվեց պապիրոսի թփուտներում:

– Իսկապես, – ասաց Հարրիսը, հրացանը վերցնելով, պատրաստ կրակելու:

Նեգորոն և Հարրիսը ոտքի կանգնեցին, շուրջը նայեցին և մեծ ուշադրությամբ ականջ դրին:

– Ոչինչ չկա, – ասաց քիչ հետո Հարրիսը, – անձրևից հետո վարարած գետակն է աղմուկով հոսում: Երկու տարուց ի վեր, բարեկա՛մ, դու մոռացել ես անտառի աղմուկները, բայց նորից կվարժվես: Շարունակիր քո արկածների պատմությունը: Երբ ծանոթանամ քո անցյալին, ապա կխոսենք ապագայի մասին:

Նեգորոն և Հարրիսը նորից նստեցին թզնուտ տակ, և պորտուգալացին վերսկսեց ընդհատված պատմությունը:

– Տասնութ ամիս ես մնացի Օքլենդում. երբ ինձ փոխադրող նավը նավահանգիստ հասավ, ես կարողացա դուրս գալ առանց նկատվելու, բայց գրպանումս ոչ մի գրոշ, ոչ մի դոլլար չկար: Ապրելու համար անում էի ինչ որ պատահում էր...

– Նույնիսկ ազնիվ մարդու գո՞րծ, Նեգորո՛:

– Ճիշտ այդպես, Հարրի՛ս:

– Խե՛ղճ տղա:

– Ես շարունակ սպասում էի առիթի, որը, սակայն, ուշանում էր, երբ, վերջապես, «Պիլիգրիմը» եկավ Օքլենդի նավահանգիստը:

– Այն նավը, որը խրվեց Անգոլայի ծովա՞փը:

– Հենց դա, Հարրի՛ս, և որի վրա տիկին Ուելդոնը, երեխան և կուզենը պատրաստվում էին տեղ գրավել որպես ուղևորներ: Որպես նախկին ծովային, նույնիսկ որպես նավապետի օգնական՝ ստրուկներ փոխադրող նավի վրա, ինձ համար դժվար չէր լինի ծառայության մտնել որևէ նավի վրա... Ուրեմն ես ներկայացա «Պիլիգրիմի» նավապետին, սակայն անձնակազմը լրիվ էր. բարեբախտաբար, առագաստանավի խոհարարը թողել-հեռացել էր: Վատ ծովային է այն մարդը, որ չգիտե խոհարարություն անել, ուստի ես ներկայացա

որպես խոհարար: Ուրիշին չճարելու պատճառով ինձ ընդունեցին, և մի քանի օրից հետո «Պիլիգրիմը» հեռացավ Նոր Չելանդիայի ափերից:

— Բայց,— հարցրեց Հարրիսը,— համաձայն իմ պատանի բարեկամի պատմածի, «Պիլիգրիմը» ոչ մի նպատակ չունեւ Աֆրիկա հասնելու. ինչպե՞ս պատահեց, որ այստեղ ընկավ:

— Դիկ Սենդը մինչև այժմ էլ չի կարող այդ բանը հասկանալ և գուցե երբեք էլ չի հասկանա,— պատասխանեց Նեգորոն,— բայց քեզ կբացատրեմ, թե ինչպես տեղի ունեցավ այդ, Հարրի՛ս, և դու կարող ես կրկնել քո բարեկամին, եթե այդ քեզ հաճույք կպատճառի:

— Ինչպե՞ս չէ,— պատասխանեց Հարրիսը:— Խոսի՛ր, բարեկամս, խոսի՛ր:

— «Պիլիգրիմը»,— շարունակեց Նեգորոն,— գնում էր դեպի Վալպարեզո: Երբ ես նավ ստեցի, միայն Չիլի գնալու մասին էի մտածում, այդպիսով Նոր Չելանդիայի և Անգոլայի միջև ընկած տարածության կեսն անցած կլինեի, և մի քանի հազար մղոն կմոտենայի Աֆրիկայի ծովափին: Բայց այնպես պատահեց, որ Օքլենդից մեկնելուց երեք շաբաթ հետո նավապետ չուրը, որը ղեկավարում էր «Պիլիգրիմը», կետ որսալիս զոհվեց ամբողջ անձնակազմի հետ: Այդ օրը նավի վրա մնացին երկու ծովային՝ պատանին և խոհարար Նեգորոն:

— Եվ դո՞ւ դարձար նավի նավապետը,— հարցրեց Հարրիսը:

— Սկզբում այդպես էի մտածում անել, սակայն տեսա, որ ինձ չեն վստահում: Նավի վրա կային չորս ուժեղ ազատագրվածներ: Ես չէի կարող նավի տերը լինել և լավ մտածելուց հետո մնացի այն, ինչ որ էի մեկնելիս՝ «Պիլիգրիմի» խոհարարը:

— Ուրեմն պատահմամբ այդ նավն ընկավ Աֆրիկայի ծովափը:

— Ոչ, Հարրի՛ս,— պատասխանեց Նեգորոն,— այս ամբողջ պատմության մեջ պատահականը միայն այն էր, որ ես քեզ հանդիպեցի գերեվաճառության քո շրջագայություններից մեկի միջոցին, հենց ծովափի այն մասում, որտեղ ափ էր նետվել «Պիլիգրիմը»: Իսկ թե ինչպես Անգոլա հասանք, այդ եղավ իմ կամքով, իմ գաղտնի կամքով: Քո պատանի բարեկամը, որ դեռևս շատ մանուկ էր ծովագնացության մեջ, աշխարհագրական դիրքը կարողանում էր որոշել միայն լազով և կողմնացույցով: Եվ ահա մի գեղեցիկ օր լազը ծովի հատակը գնաց: Մի գիշեր կողմնացույցը սխալ ցուցումներ սկսեց տալ, և «Պիլիգրիմը», փոթորկից տարվելով, սխալ ուղղություն վերցրեց: Ուղևորության երկարությունը, որ անբացատրելի էր Դիկ Սենդի համար, նույնը կլինեի նաև ամենափորձառու ծովայինի համար: Պատանին առանց հասկանալու, նույնիսկ առանց կասկածելու, շրջանցեց Հորն հրվանդանը, բայց ես, Հարրիս, ես այն տեսա մշուշի մեջ: Եվ ահա կողմնացույցի սլաքը վերստացավ, իմ շնորհիվ, ճիշտ ուղղությունը, և նավը ահռելի մրրիկից տարվելով դեպի հյուսիս-արևելք խփվեց Աֆրիկայի ծովափին, ճիշտ Անգոլայի մոտ, որտեղ ես ուզում էի հասնել:

— Եվ ճիշտ այդ միջոցին, Նեգորո՛ւ,— պատասխանեց Հարրիսը,— դիպվածը ինձ բերեց այդ ափը՝ դիմավորելու քեզ և այդ ազնիվ մարդկանց առաջնորդելու երկրի ներսը: Նրանք կարծում էին, և չէին կարող չկարծել, թե Ամերիկայում են, և ինձ համար հեշտ էր այս նահանգը Ստորին Բոլիվիայի տեղ անց կացնել, որի հետ որոշ նմանություններ ունի:

– Այո, նրանք այդպես կարծեցին, ինչպես քո պատանի բարեկամը կարծեց, թե Չատկի կղզին է տեսնում, մինչդեռ իրականում Տրիստան դ'Ակունիայի մոտով էր անցնում:

– Ով էլ լիներ նրա տեղը, կսխալվեր, Նեգորո:

– Գիտեմ, Հարրիս, և ես, իհարկե, օգտվեցի նրա սխալից: Վերջապես ահա տիկին Ուելլոնը և նրա ընկերները գտնվում են ծովափից հարյուր մղոն հեռու, Աֆրիկայի խորքում, որտեղ ուզում էի քարշ տալ նրանց:

– Բայց,– պատասխանեց Հարրիսը,– նրանք այժմ գիտեն, թե որտեղ են գտնվում:

– Ի՞նչ նշանակություն ունի այդ ներկայումս,– բացականչեց Նեգորոն:

– Իսկ ի՞նչ ես մտադիր անել,– հարցրեց Հարրիսը:

– Ինչ եմ ուզում անել,– պատասխանեց Նեգորոն:– Այդ հարցին պատասխանելուց առաջ մի քանի տեղեկություններ տուր մեր տիրոջ՝ գերեվաճառ Ալվեցի մասին, որին չեմ տեսել երկու տարուց ի վեր:

– Օ՛, ծերունի սրիկան հիանալի է զգում իրեն,– պատասխանեց Հարրիսը,– և շատ կուրախանա քեզ տեսնելով:

– Որտե՞ղ է, Բիհեի շուկայո՞ւմ,– հարցրեց Նեգորոն:

– Ոչ, բարեկամ, մի տարի կլինի, որ Կազոնդեի առևտրական տանն է գտնվում:

– Իսկ գործերը լա՞վ են:

– Այո, սատանան տանի,– բացականչեց Հարրիսը,– թեև գերեվաճառությունը հետզհետե ավելի է դժվարանում, մանավանդ ծովափում: Պորտուգալական իշխանությունները մի կողմից, անգլիական հաճանավերը մյուս կողմից, խանգարում են արտահանությունը: Միայն Անգոլայի հարավում, Մոսամբիկեի շրջակայքում է հնարավոր սև ապրանքը բեռնել որոշ հաջողությամբ: Ուստի բոլոր բարաքներն այս միջոցին լեցուն են ստրուկներով, սպասելով նավերի, որոնք նրանց պետք է վերցնեն իսպանական գաղութների համար: Ստրուկներին Բենդուելայի կամ Սան Պաոլո դե Լոանդայի ճանապարհով տանելու մասին խոսք անգամ չի կարող լինել՝ ո՛չ նահանգապետները, ո՛չ էլ պորտուգալական պաշտոնյաները չեն ուզում համաձայնել: Պետք է ուրեմն ուղղվել դեպի ներքին ֆակտորիաները, ինչ որ մտածում է անել Ալվեցը: Նա կգնա Նիանգվեի և Տանգանիկայի կողմը՝ իր մահուղը փղոսկրի և ստրուկների հետ փոխելու: Գործերը շարունակում են շահավետ լինել Վերին Եգիպտոսում և Մոզամբիկի ծովափում, որը Մադագասկարին է մատակարարում: Բայց վախենում են, որ կգա ժամանակը, և գերեվաճառությունը կվերանա: Անգլիացիները մեծ հաջողություններ ունեն Աֆրիկայի խորքերում: Միսիոներները, առաջ են գնում և պայքարում են մեր դեմ: Լիվինգսթոնը, անիծված լինի այդ մարդը, լճերի շրջանը հետախուզելուց հետո, ասում են՝ գնում է դեպի Անգլիա: Բացի սրանից, խոսում են ոմն Քամբերոն անունով լեյտենանտի մասին, որը որոշել է Աֆրիկան անցնել արևելքից արևմուտք: Կարող է պատահել, որ նույն բանը անի նաև ամերիկացի Սթենլին: Այդ բոլոր այցելությունները վերջ ի վերջո կվնասեն մեր գործին, Նեգորո, և եթե մենք լավ գիտակցենք մեր շահերը, ապա այդ այցելություններից ոչ մեկը չի վերադառնա Եվրոպա՝ պատմելու այն ամենը, ինչ տեսել է Աֆրիկայում:

Այդ սրիկաներին լսելիս այն կարծիքն էր ստեղծվում, թե նրանք պատվավոր առևտրականներ են, որոնց գործերը առևտրական ճգնաժամը առայժմ խանգարել էր: Ո՞ւմ մտքով կանցներ, թե սրճի պարկերի կամ շաքարի հակերի փոխարեն մարդկային էակներ են ուղարկվում որպես ապրանք: Այդ գերեվաճառները բարության կամ անարդարության մասին ոչ մի գաղափար չունեն: Բարոյականի զգացումը նրանց մոտ միանգամայն բացակայում է, և եթե ունենային էլ, շուտով կկորցնեին՝ մասնակցելով գերեվաճառության դաժանություններին:

Սակայն Հարրիսը իրավացիորեն ասում էր, թե քաղաքակրթությունը հետզհետե մուռը էր գործում այս վայրենի շրջանները՝ այդ խիզախ ուղևորների հետևից, ուղևորներ, որոնց անունը սերտ կապված է հասարակածային Աֆրիկայի հայտնաբերման հետ: Նրանցից գլխավորը Լիվինգսթոնն է, այնուհետև Գրանդը, Բըրթոնը, Քամերոնը, Սթենլին, այդ հերոսները մարդկության բարերարների անմոռաց անուն կթողնեն:

Այս զրույցից Հարրիսն արդեն գիտեր, թե ինչ էին եղել Նեգորոյի կյանքի երկու տարիները: Գերեվաճառ Ալվեցի Նախկին գործակալը՝ դե Լոանգայի զննանի փախստականը, վերստին հայտնվում էր այնպես, ինչպես եղել էր, այսինքն՝ ընդունակ ամեն ինչի: Բայց թե Նեգորոն ինչ ծրագիր ուներ «Պիլիգրիմի» նավաբեկյալների նկատմամբ, Հարրիսը դեռևս ոչինչ չգիտեր, ուստի հարցրեց նրան.

— Իսկ այժմ, ասա՛, թե ի՞նչ ես մտադիր անել այդ մարդկանց:

— Ես նրանց երկու մասի կբաժանեմ, — պատասխանեց Նեգորոն այն մարդու նման, որի ծրագիրը վաղուց էր կազմված, — մի մասին կվաճառեմ որպես ստրուկ, իսկ մյուսներին...

Պորտուգալացին խոսքը չվերջացրեց. նրա վայրագ դիմագծերը ամեն ինչ ասում էին:

— Որո՞նց ես ուզում վաճառել, — հարցրեց Հարրիսը:

— Տիկին Ուելդոնին ընկերակցող նեգրերին, — պատասխանեց Նեգորոն: — Ծերունի Թոմը գուցե մեծ արժեք չունի, բայց մյուս չորսը հուժկու մարդիկ են և թանկ կարժենան Կազոնդեի շուկայում:

— Անտարակույս, Նեգորո՛, — պատասխանեց Հարրիսը: — Լավ կազմվածքի տեր չորս նեգրեր, որոնք սովոր են աշխատելու և չեն սմանվում երկրի խորքից եկած անտաշներին: Կասկած չկա, որ նրանց թանկ կձախես: Ամերիկայում ծնված և Անգոլայի շուկան ուղարկված ստրուկներ, դա հազվագյուտ ապրանք է: Բայց, — ավելացրեց ամերիկացին, — դու չասացիր. մի՞թե «Պիլիգրիմի» վրա դրամական որևէ գումար չկար:

— Օ՛հ, ընդամենը մի քանի հարյուր դոլլար, որը ես փրկեցի: Բարեբախտաբար, ապագայում որոշ եկամուտներ եմ սպասում...

— Ինչպիսի՞, բարեկա՛մ, — հետաքրքրությամբ հարցրեց Հարրիսը:

— Ոչինչ... — պատասխանեց Նեգորոն, որը կարծես զղջացել էր պետք եղածից ավելի ասած լինելու համար:

— Մնում է այժմ ձեռք գցել այդ ամբողջ թանկագին ապրանքը, — ասաց Հարրիսը:

– Դժվա՞ր գործ է, – հարցրեց Նեգորոն:

– Ոչ, բարեկամ: Այստեղից տասը մղոն հեռու: Կուանզայի ափին, ճամբար է դրել ստրուկների մի քարավան, որի առաջնորդն է արաբ Իբն-Խամիսը: Նա իմ վերադարձին է սպասում դեպի Կազոնդե շարժվելու համար: Քարավանին ուղեկցում են ավելի շատ զինվորներ, քան անհրաժեշտ է Դիկ Սենդին և նրա ընկերներին ձերբակալելու համար: Բավական է, որ Դիկ Սենդը մտածի դեպի Կուանզա գնալ...

– Բայց արդյո՞ք այդպես կանի, – հարցրեց Նեգորոն:

– Կասկած չկա, – պատասխանեց Հարրիսը, – որովհետև խելացի է. բայց չի կարող կասկածել իրեն սպասվող վտանգի մասին: Դիկ Սենդը չի կարող մտածել ծովափ վերադառնալ այն ճանապարհով, որը մենք միասին անցանք: Նա կմոլորվի ընդարձակ անտառի մեջ: Նա անկասկած, կփորձի, այդ բանում վստահ եմ, հասնել այն գետերից մեկին, որոնք դեպի ծովափ են հոսում, որպեսզի նրա հոսանքն ի վար գնա լաստով: Նա ուրիշ կերպ չի վարվի, ես նրան ճանաչում եմ, և այդպես էլ կանի:

– Այո... գուցե... – պատասխանեց Նեգորոն՝ մտածելով:

– Ոչ թե «գուցե», այլ «անկասկած» պետք է ասել, – շարունակեց Հարրիսը: Գիտե՞ս, Նեգորո՛, ես դրանում այնպես համոզված եմ, ոնց որ նրա հետ ժամադիր եղած լինենք Կուանզոյի ափերին:

– Դե՛ որ այդպես է, – պատասխանեց Նեգորոն, – մեկնենք: Ես ճանաչում եմ Դիկ Սենդին, նա ոչ մի ժամ չի ուշանա, պետք է կանխել նրան:

– Ճանապարհվենք, բարեկամ:

Հարրիսը և Նեգորոն վեր կացան, բայց նույն րոպեին այն աղմուկը, որը քիչ առաջ գրավել էր պորտուգալացու ուշադրությունը, կրկնվեց:

Նեգորոն կանգ առավ և բռնեց Հարրիսի ձեռքը:

Հանկարծ խուլ հաչոց լսվեց, և միաժամանակ մի շուն երևաց գետակի ափին՝ երախը բաց արած, հարձակման պատրաստվելով:

– Դինգոն, – գոռաց Հարրիսը:

– Ա՛, այս անգամ չես պրծնի իմ ձեռքից, – բացականչեց Նեգորոն:

Դինգոն ուզում էր նրա վրա հարձակվել, երբ Նեգորոն, Հարրիսի հրացանը վերցնելով, անմիջապես կրակեց, որին հաջորդեց մի երկար, ցավալի վնասոց ու Դինգոն անհայտացավ գետափի խիտ թփերի մեջ:

Նեգորոն իսկույն վազեց դեպի գետափ:

Արյան կաթիլները ներկել էին պապիրոսի ցողունները, և կարմիր հետքը ձգվում էր գետափի մանրախիճի վրայով:

– Վերջապես, անիծված շուն, հախիցդ եկա, – բացականչեց Նեգորոն:

Հարրիսը լուռ ականատես էր եղել այս տեսարանին:

- Նեգորո՛, մի՞թե շունը այդպես ասում էր քեզ, – ասաց Հարրիսը:
- Գուցե, Հարրիս, բայց արդեն վերջ տրվեց այդ ատելությանը:
- Իսկ ի՞նչ էր այդ ատելության պատճառը, բարեկամ:
- Է՛հ, հին հաշիվ է:
- Հին հաշի՞վ... – հարցրեց Հարրիսը:

Նեգորոն այլևս ոչինչ չասաց. Հարրիսը հասկացավ, որ պորտուգալացին լռել էր իր անցյալի մի քանի արկածների մասին և ինքն էլ չպնդեց:

Մի քանի րոպե հետո երկու բարեկամները հետևելով գետակի հոսանքին՝ անտառի միջով ուղղվեցին դեպի Կուանգա:

III. Ճանապարհին

Աֆրիկա՛: Այդ սարսափելի անունը մի րոպե իսկ չէր ջնջվում Դիկ Սենդի մտքից: Երբ պատանին վերհիշում էր վերջին մի քանի շաբաթների անցուդարձը, իրեն հարց էր տալիս, թե ինչպես էր պատահել, որ «Պիլիգրիմը» այդ վտանգավոր ծովափին էր խփվել, ինչպե՞ս էր Հորն հրվանդանը շրջանցել և մի օվկիանոսից մյուսն անցել: Ճիշտ է, նա այժմ հասկանում էր, թե ինչու, հակառակ առազաստանավի արագ ընթացքին. ցամաքն այնքան ուշ էր երևացել: Այն տարածությունը, որը պետք է անցնեին Ամերիկա հասնելու համար, կրկնապատկվել էր՝ հակառակ իր կամքին:

– Աֆրիկա՛, Աֆրիկա՛, – կրկնում էր պատանին:

Մինչդեռ հիշողության մեջ համառորեն վերականգնում էր անբացատրելի ուղևորության դեպքերը:

Դիկը հիշեց, թե ինչպես ջարդվեց առաջին կողմնացույցը, ինչպես լազի պարանը կտրվեց, որի հետևանքով հնարավոր չէր ստուգել «Պիլիգրիմի» արագությունը:

«Այո, – մտածում էր Դիկ Սենդը, – նավի վրա միայն մի կողմնացույց էր մնացել, որի ցուցումները չէի կարող ստուգել... հետո, մի գիշեր արթնացա ծերունի Թոմի ճիչից... Նեգորոն նավախելում էր... ընկել էր կողմնացույցի արկղի վրա... մի՞թե միտումնավոր չէր»:

Լույսն առկայծում էր Դիկ Սենդի մտքում, մատը ճշմարտության վրա էր գնում, վերջապես, հասկանում էր, թե ինչքան զգվելի էր Նեգորոյի վարմունքը, որի մատը խառն էր այն մի շարք «պատահարներին», որոնք պատճառ դարձան «Պիլիգրիմի» կորստյան և այնքան դաժանորեն վտանգեցին նրա ուղևորներին:

Բայց ո՞վ էր այդ չարագործը: Եղե՞լ էր ծովային, թեև միշտ ժխտում էր այդ: Ընդունա՞կ էր հղանալու այդ կեղտոտ դավադրությունը, որը պատճառ պետք է դառնար առազաստանավի՝ Աֆրիկայի ափն ընկնելուն:

Այսպես թե այնպես, եթե դեռևս որոշ մուֆ կետեր կային անցյալում, ներկան պարզ էր: Պատանու համար ավելի քան որոշ էր, որ գտնվում էր Աֆրիկայում և շատ հավանական է Անգոլայի չարագուշակ նահանգում, ծովափից ավելի քան հարյուր մղոն հեռու: Նրա համար պարզ էր նույնպես, որ Հարրիսը դավաճան էր: Այդ բոլորը հանգում էին այն ճշմարտության, որ ամերիկացին և պորտուգալացին վաղուց էին ծանոթ, որ ճակատագրական պատահմունքը նրանց միացրել էր այդ ծովափում, որ նրանք միասին էին սարքել դավադրությունը, որի հետևանքն այնքան աղետալի պետք է լիներ նավաբեկյալների համար:

Հարցն այն էր, թե ի՞նչ նպատակ ունեին այդ չարագործ միջոցառումները: Կարելի՞ էր ընդունել, որ Նեգորոյի նպատակն էր ձեռք գցել Թոմին և նրա ընկերներին ու վաճառել որպես ստրուկ գերեվաճառության այս երկրում: Հավանական էր նաև, որ պորտուգալացին ատելությամբ լցված Դիկ Սենդի նկատմամբ, ուզում էր վրիժառու լինել նրանից, բայց տիկին Ուելդոնը և փոքր երեխան. ի՞նչ էր ուզում այդ չարագործը նրանցից:

Եթե Դիկ Սենդը լսած լիներ Հարրիսի և Նեգորոյի խոսակցությունը, ապա կգիտենար իր անելիքը, տեղյակ կլիներ, թե ինչպիսի վտանգ էր սպառնում տիկին Ուելդոնին, նեգրերին և անձամբ իրեն:

Դրությունը սուկալի էր, սակայն պատանին չկորցրեց արիությունը: Նավապետ՝ նավի վրա, նա կմնար ղեկավար՝ ցամաքի վրա: Նրա վրա էր ընկնում տիկին Ուելդոնի, փոքրիկ Ջեկի, նեգրերի ազատագրման գործը: Նրա աշխատանքը նոր էր սկսվում, և նա կկատարեր մինչև վերջ:

Երկու կամ երեք ժամ Դիկ Սենդը մտքում անվերջ քննում էր ներկա և ապագա իրադարձությունների լավ ու վատը. այս վերջինները, ավա՛ղ ավելի շատ էին: Ապա պատանին վեր կացավ՝ հաստատակամ, վճռական:

Այդ միջոցին արևի առաջին ճառագայթները լուսավորում էին անտառի բարձր գագաթները: Բացի պատանուց և Թոմից, բոլորը քնած էին:

Դիկ Սենդը մոտեցավ ծերունի նեգրին և ասաց ցածր ձայնով.

— Թոմ, դուք ճանաչեցիք առյուծի մռնչյունը, դուք ճանաչեցիք գերեվաճառների երկժանիներն ու շղթաները, ուրեմն գիտեք, որ մենք գտնվում ենք Աֆրիկայում:

— Այո, պարո՛ն Դիկ, գիտեմ:

— Թոմ, այդ մասին ոչ մի խոսք ո՛չ տիկին Ուելդոնին, ո՛չ էլ ընկերներին: Միայն մենք պետք է գիտենանք, թե ինչպիսի վտանգ է սպառնում մեզ...

— Այո... միայն մենք երկուսով... այդպես պետք է... — պատասխանեց Թոմը:

— Թոմ, — շարունակեց պատանին — մենք պետք է աչալուրջ լինենք ավելի, քան երբևէ: Մենք թշնամու երկրում ենք գտնվում, և ինչպիսի՛ թշնամի, ինչպիսի՛ երկիր: Մեր ընկերներին կասենք միայն, որ Հարրիսը մեզ դավաճանեց, որպեսզի նրանք ևս զգույշ լինեն: Թող կարծեն, որ մեզ վրա կարող են հարձակվել թափառաշրջիկ բնիկներ, և այդքանը բավական է:

— Դուք կարող եք միանգամայն վստահ լինել իմ ընկերների քաջության և անձնվիրության վրա, պարո՛ն Դիկ:

– Գիտեմ, վատահ եմ՝ նույնիսկ ձեր առողջ դատողության և փորձառության վրա:
Դուք ինձ կօգնեք, չէ՞, սիրելի՛ թոմ:

– Միշտ և ամեն բանում, պարո՛ն Դիկ:

Դիկ Սենդը որոշել էր իր անելիքը, որին հավանություն տվեց ծերունի նեգրը:
Բարեբախտաբար Հարրիսի դավաճանությունը շուտ էր բացվել, նախքան գործի անցնելը, ուրեմն պատանին ու նրա ընկերները անմիջական վտանգի տակ չէին:
Արդարև, ստրուկների թողած իրերը և առյուծի անսպասելի մռնչունն ստիպել էին ամերիկացուն անհետանալ հանկարծ: Նա զգացել էր, որ դիմակը պատռված է, և փախել էր՝ հավանաբար չհասցնելով փոքրիկ խմբին տանել այնտեղ, որտեղ պետք է հարձակման ենթարկվեր: Ինչ վերաբերում է Նեգրոյին, որի ներկայությունը անկասկած զգացել էր Դինգոն՝ ուղևորության վերջին օրերին, միացած կլիներ Հարրիսին միասին գործելու համար: Համենայն դեպս հարձակումը տեղի կունենար միայն մի քանի ժամից հետո, պետք էր օգտվել հանգամանքից:

Միակ խնդիրն էր ծովափ հասնել ինչքան կարելի էր շուտ, և այդ ծովափը պիտի լիներ, ինչպես պատանին իրավամբ կարծում էր, Անգոլայի ծովափը: Ծովափ հասնելուց հետո Դիկ Սենդը մտածում էր ուղղվել դեպի հյուսիս կամ դեպի հարավ, հասնելու համար պորտուգալական հիմնարկները, որտեղ իր ընկերները ապահով կարող էին սպասել, մինչև որևէ միջոց գտնեին հայրենիք վերադառնալու:

Բայց ծովափ հասնելու համար պե՞տք է ետ դառնալ անցած ճանապարհով: Դիկ Սենդն այդ կարծիքին չէր, և այդ տեսակետից նրա ու Հարրիսի մտքերը համընկնում էին, վերջինս ճիշտ էր կանխագուշակել, որ հանգամանքները կստիպեին պատանուն ամենակարճ ճանապարհն ընտրել:

Արդարև, դժվար, նույնիսկ անխոհեմություն կլիներ վերսկսել անտառի միջով կատարվող այդ ծանր երթը, որը նրանց պիտի վերադարձներ նախկին տեղը: Բացի դրանից, Նեգրոյի մեղսակիցները ավելի հեշտությամբ կհետապնդեին նրանց: Միակ միջոցն էր՝ մի գետ գտնել և, առանց հետք թողնելու, նրա հոսանքով դեպի ծովափ գնալ: Այդ միջոցով միաժամանակ ավելի քիչ ենթակա կլինեին վայրի գազանների հարձակմանը, որոնք, բարեբախտաբար, հեռու էին մնացել մինչև այդ: Իսկ բնիկների հարձակումը, այդ պայմաններում, այնքան էլ վտանգավոր չէր լինի: Դիկ Սենդը և նրա ընկերները, որ հաստատուն լաստի վրա և լավ զինված լինեին, ավելի լավ կարող էին պաշտպանվել: Հարցը, ուրեմն, գետը գտնելն էր:

Պետք է ավելացնել նաև, որ, նկատի ունենալով տիկին Ուելդոնի և փոքրիկ Ջեկի առողջական վիճակը, փոխադրման այդ ձևն ամենից հարմարն էր: Ճիշտ է, երեխային տանելու համար մարդիկ չէին պակասում, Հարրիսի ձիու փոխարեն կարելի էր նույնիսկ ճյուղերից պատգարակ պատրաստել տիկին Ուելդոնի համար, սակայն այդպիսով հինգ նեգրերից երկուսը պետք է զբաղվեին այդ գործով, իսկ Դիկ Սենդը իրավամբ ուզում էր, որ իր բոլոր ընկերները ազատ լինեին հարձակման դեպքում պաշտպանվելու համար:

Բացի դրանից, գետի հոսանքով նավարկելու դեպքում Դիկ Սենդն իր տարերքի մեջ կլիներ:

Մտում էր ուրեմն իմանալ, թե արդյոք մոտակայքում կա՞ր որևէ նավարկելի գետ: Դիկ Սենդը կարծում էր, թե կա և ահա թե ինչու:

Այն գետի ակունքը, որը թափվում էր Ատլանտյան օվկիանոսը «Պիլիգրիմի» խորտակման վայրի մոտ, չէր կարող այդ նահանգի ո՛չ շատ հյուսիսում, ո՛չ շատ արևելքում լինել, քանի որ լեռնաշղթան, որը նրանք շփոթել էին Անդերի հետ, հորիզոնը փակում էր երկու կողմերից: Ուրեմն կա՛մ գետը իջնում էր այդ բարձրություններից, կա՛մ թեքվում էր դեպի հարավ, և երկու դեպքում էլ Դիկ Սենդը չէր ուշանա հասնել գետի հոսանքին: Գուցե և այդ գետից առաջ, իսկ դրան կարելի էր գետ անվանել, քանի որ ուղիղ օվկիանոսն էր թափվում, նրանք կհանդիպեին նրա վտակներից մեկին, որը բավական կլիներ փոքրիկ խմբի տեղափոխման համար: Համենայն դեպս մոտակայքում մի որևէ գետ պետք է լիներ:

Արդարև, ուղևորության վերջին մղոնների ընթացքում հողի բնույթը փոխվել էր: Բարձունքները ցածրանում և խոնավանում էին: Այս ու այնտեղ հոսում էին նեղ վտակներ, որոնք ցույց էին տալիս, թե հողի ներքին շերտերում ջրի առատ պաշար կար: Ուղևորության վերջին օրը ճանապարհն անցնում էր այդ գետակներից մեկի կողքով, որը նորից գտնելը ո՛չ դժվար էր, ո՛չ էլ շատ ժամանակ էր պահանջում: Հավանական է, որ չէր կարելի նրա հեղեղման հոսանքով նավարկել, բայց դժվար չէր լինի հասնել գետաբերանին՝ նավարկելով մի ավելի լայն, հետևապես ավելի նավարկելի վտակով:

Այդ էր այն շատ պարզ ծրագիրը, որի վրա կանգ առավ Դիկ Սենդը ծերունի Թոմի հետ խորհրդակցելուց հետո:

Լույսը բացվելու հետ բոլոր ուղևորները միմյանց հետևից արթնացան: Տիկին Ուելդոնը դեռևս քնած փոքրիկ Ջեկին հանձնեց Նանին: Տենդից գունաթափված երեխան խղճալի տեսք էր ստացել:

Տիկին Ուելդոնը մոտեցավ Դիկ Սենդին և ասաց ուղիղ նրա աչքերին նայելով:

— Դիկ, ո՞ր է Հարրիսը, չի երևում:

Պատանին մտածեց, որ իր ընկերներին հավատացնելով հանդերձ, թե Բուլվիայում են գտնվում, այնուամենայնիվ, չպետք է նրանից ծածկել ամերիկացու դավաճանությունը, ուստի և առանց վարանելու պատասխանեց.

— Հարրիսը այլևս մեզ մոտ չէ:

— Մի՞թե առաջ է անցել,— նորից հարցրեց տիկին Ուելդոնը:

— Հարրիսը փախավ, տիկին Ուելդոն,— պատասխանեց Դիկ Սենդը,— նա դավաճան էր և Նեգորոյի հետ համաձայնած՝ մեզ բերեց այստեղ:

— Ի՞նչ նպատակով,— հարցրեց տիկին Ուելդոնը:

— Չգիտեմ,— պատասխանեց Դիկ Սենդը,— այնքանը միայն գիտեմ, որ անհապաղ պետք է ծովափ վերադառնալ:

— Ուրեմն այդ մարդը... դավաճա՞ն էր,— կրկնեց տիկին Ուելդոնը,— ես այդ զգում էի, իսկ դու կարծում ես, թե Հարրիսը և Նեգորոն համախոհներ՞ են:

— Այո, տիկին Ուելդոն: Այդ չարագործը հետևում էր մեզ: Դիպվածը միացրեց այդ երկու սրիկաներին, և...

– Եվ հույս ունեմ, որ նրանք միմյանցից չեն բաժանվի, մինչև որ նրանց գտնեմ, – ասաց Հերկուլեսը: – Նրանցից մեկի գլուխը կջարդեմ՝ մյուսի գլխին խփելով, – ավելացրեց հսկան՝ ահարկու բռունցքը ցույց տալով:

– Իսկ իմ երեխա՞ն, – բացականչեց տիկին Ուելդոնը, – հույս ունեի, թե Սան-Ֆելիչեի հացիենտայում անհրաժեշտ ինամք կտայի նրան:

– Ձեկը կբուժվի, – պատասխանեց ծերունի Թոմը, – երբ ծովափի ավելի առողջարար շրջանը հասնենք:

– Դիկ, – հարցրեց կրկին տիկին Ուելդոնը, – դու վստա՞հ ես, թե Հարրիսը դավաճանեց մեզ:

– Այո, տիկին Ուելդոն, – պատասխանեց պատանին՝ աշխատելով խուսափել այդ մասին ավելի մանրամասն արտահայտվելուց, ուստի և շտապեց ավելացնել, ծերունի նեգրին նայելով. – Այս գիշեր ես և Թոմը երևան բերինք նրա դավաճանությունը, և եթե փախուստ տված չլինեիր իր ձիով՝ կսպանեի նրան:

– Ուրեմն այդ ֆերման...

– Ո՛չ մի ֆերմա, ո՛չ մի ավան, ո՛չ մի գյուղ չկա շրջակայքում, – պատասխանեց Դիկ Սենդը: – Տիկին Ուելդոն, կրկնում եմ, որ պետք է վերադառնալ ծովափ:

– Միևնույն ճանապարհով, Դի՛կ...

– Ոչ, տիկին Ուելդոն, որևէ գետի հոսանքով, որ մեզ ծովը կհասցնի՝ առանց հոգնեցնելու և առանց վտանգի: Եվս մի քանի մղոն ոտքով, և չեմ կասկածում, որ...

– Օ՛հ, ես ինձ լավ եմ գգում, Դի՛կ, – պատասխանեց տիկին Ուելդոնը, ծառանալով իր տկարության դեմ, – ես կքայլեմ ու կտանեմ երեխային...

– Մենք այստեղ ենք, տիկին Ուելդոն, – պատասխանեց Բաթը, – և ձեզ ևս կտանենք:

– Այո, այո... – ավելացրեց Օստինը, – ծառի երկու ճյուղ, տերևներից պատրաստված ներքևակ...

– Շնորհակալություն բարեկամներս, – պատասխանեց տիկին Ուելդոնը, – իսկ ես ուզում եմ քայլել... կքայլեմ: Մեկնե՛նք:

– Այո մեկնենք, – կրկնեց պատանին:

– Ձեկին տվեք ինձ, – ասաց Հերկուլեսը՝ Նանի գրկից վերցնելով երեխային, – երբ դատարկ եմ գնում, հոգնում եմ:

Ազնիվ նեգրը քնքշությամբ, առանց արթնացնելու իր հուժկու թևերի մեջ առավ փոքրիկ տղային:

Չենքերը ուշադրությամբ ստուգեցին, մնացած ուտելիքը մի հակի մեջ տեղավորեցին, մի հոգու բեռ անելու համար: Ակտեոնը հակը դրեց ուսին, այսպիսով մյուս նեգրերը կարող էին ազատ շարժումներ անել:

Կուզեն Բենեդիկտը, որի պողպատե երկար ազդրերը հոգնել չգիտեին, պատրաստ էր մեկնելու: Արդյոք նկատե՞լ էր Հարրիսի անհետանալը: Դժվար էր

պատասխանել, այդ խնդիրը այնքան էլ չէր հետաքրքրում նրան, մանավանդ որ այդ միջոցին իրեն հասած սոսկալի աղետի տպավորության տակ էր, բանն այն է, որ կուզեն Բենեդիկտը կորցրել էր իր ակնոցն ու խոշորացույցը:

Սակայն, բարեբախտաբար, Բաթը այդ թանկագին իրերը գտել էր գետնին՝ խոտերի մեջ, բայց Դիկ Սենդի խորհրդով պահել էր իր մոտ: Այդպիսով կարելի էր վստահ լինել, որ մեծ երեխան հանգիստ կմնա երթի միջոցին, քանի որ, ինչպես ասում են, քթից այն կողմը չէր տեսնում:

Այդպիսով, կանգնած Ակտեոնի և Օստիևի միջև, նրանցից չհեռանալու պատվերով, խեղճ Բենեդիկտը ոչ մի տրտուկ չհայտնեց. գնում էր շարքի մեջ, պարանով կապված կույրի նման:

Փոքրիկ խումբը հագիվ հիսուն քայլ էր արել, երբ ծերունի Թոմ ը կանգնեց՝ ասելով.

– Իսկ Դինգո՞ն:

– Իսկապես, Դինգոն չկա, – պատասխանեց Հերկուլեսը և հուժկու ձայնով մի քանի անգամ տվեց շան անունը:

Ոչ մի հաչոցի ձայն չլսվեց:

Դիկ Սենդը լուռ էր, շան բացակայությունը ցավալի էր, քանի որ փոքր խմբին կարող էր նախազգուշացնել որևէ անակնկալ վտանգի դեպքում:

– Չլինի՞ Դինգոն Հարրիսին և հետապնդում, – ասաց Թոմը:

– Հարրիսի՞ն, ոչ... – պատասխանեց Դիկ Սենդը, – Բայց կարող է Նեգրոյի հետքը գտած լինի. շունը զգում էր, որ խոհարարը հետևում է մեզ:

– Այդ անիծյալը կարող է սպանել նրան... – ասաց Հերկուլեսը:

– Եթե, սակայն, Դինգոն չկանխի ու չխեղդի նրան, – պատասխանեց Բաթը:

– Կարող է պատահել, – ասաց պատանին: – Բայց մենք չենք կարող Դինգոյին սպասել, եթե, ողջ է, խելացի կենդանին կգտնի մեզ. առաջ շարժվենք:

Շատ շոգ էր. վաղ առավոտվանից ծանր ամպերը ծածկել էին հորիզոնը: Օդում փոթորկի նշաններ կային: Հավանաբար օրը չէր վերջանա առանց ամպրոպի: Բարեբախտաբար, անտառը, որ այժմ թեև ավելի նոսր էր, որոշ չափով հովացնում էր գետինը: Այս ու այնտեղ, մացառուտների մեջ, ընդարձակ բացատներ էին առաջացել ծածկված բարձր և կոշտ խոտով: Որոշ տեղեր արդեն քարացած ծառի բները թափվել էին գետնին, որը ցույց էր տալիս այդ հողերի քարածխային բնույթը, ինչպես հաճախ պատահում է աֆրիկյան մայրցամաքում: Անտառի բացատների կանաչ գորգի վրա երևում էին կարմիր խոլորձները, դեղին և կապույտ իմբիրները, փարթամ և դալուկ լոբելիները, որոնց անընդհատ այցելում էին նրանց բեղմնավորող միջատները:

Ճամերը այլևս անանցանելի զանգված չէին, սակայն ավելի այլազան էին: Այնտեղ աճում էին յուղատու արմավենիներ, որոնք արժեքավոր յուղ էին տալիս, բամբակենիներ՝ ութից տասը ոտնաչափ բարձրությամբ ցողուններով: Կոպտալ կոչվող հոտավետ ձյուղը հոսում էր ծառերի խոռոչներից, որոնք որոշ միջատներ են փորում: Մի տեղ բարձրանում էր կիտրոնենին, մի ուրիշ տեղ նռնենին և բազմաթիվ այլ տեսակի թփեր, որոնք Կենտրոնական Աֆրիկայի այդ սարահարթի

հարուստ պտղաբերության ապացույց էին: Օդում զգալի էր վանիլի դուրեկան բուրմունքը, բայց չէր իմացվում, թե ինչ թփուտից էր առաջանում դա:

Բոլոր այդ ծառերը և տունկերը կանաչ ու դալար էին, թեև երաշտի շրջանն էր, և միայն հազվադեպ անձրևներ էին ոռոգում այդ փարթամ հողերը: Տենդի շրջանն էր, բայց, ինչպես նկատել էր Լիվինգսթոնը, նրանից կարելի է բուժվել փախչելով վարակի օջախից: Դիկ Սենդին հայտնի էր մեծ ճանապարհորդի այդ դիտողությունը և հույս ուներ, որ այդպես կլինեի նաև փոքրիկ Ջեյկի համար: Այդ մասին նա հայտնեց տիկին Ուելդոնին՝ նկատելով, որ տենդը չէր կրկնվել իր սովորական ժամանակին, և երեխան հանգիստ պառկել էր Հերկուլեսի գրկում:

Փոքրիկ խումբը առաջ էր գնում զգուշությամբ և արագ: Երբեմն գետնի վրա երևում էին մարդկանց և կենդանիների թարմ հետքեր: Մացառների և փշոտ թփերի տրորված կամ ջարդված ճյուղերը հնարավորություն էին տալիս ավելի հեշտ առաջ գնալ: Բայց ընդհանրապես բազմաթիվ խոչընդոտներ, որ պետք էր ճանապարհից վերացնել, ուշացնում էին փոքրիկ խմբին և դժգոհություն պատճառում Դիկ Սենդին: Միմյանց փաթաթված պատատուկները, որոնց իրավացիորեն համեմատել էին նավի կայմերի խճճված սարքին, զանազան թփեր, որոնք նմանվում էին դամասկոսյան կեռ սրերի՝ ծածկված երկար փշերով, հիսունից վաթսուն ոտնաչափ երկարությամբ օձաձև բույսեր, որոնք ընդունակ են շրջվելու, որպեսզի սուր փշերով խայթեն անցորդին: Նեգրերը տապարի հարվածներով կտրում էին բոլոր այդ արգելքները, բայց պատատուկները երևան էին գալիս անընդհատ, սկսած գետնի երեսից մինչև ամենաբարձր ծառերի գագաթը՝ փաթաթվելով նրանց:

Նահանգի այս մասում կենդանական աշխարհը նվազ հետաքրքիր չէր, քան բուսական աշխարհը: Մեծ թվով թռչուններ ճախրում էին խիտ սաղարթի մեջ, բայց հասկանալի է, որ ոչ մի պատճառ չունեին վախենալու, որ այդքան զգույշ և արագ գնացող մարդիկ նրանց վրա հրացան կուղղեն: Երևում էին մեծ խմբերով խայտահավեր, զանազան տեսակի սալամբներ, որոնց շատ դժվար էր մոտենալ, ինչպես նաև մի քանիսը այն թռչուններից, որոնց հյուսիսային ամերիկացիները նմանաձայնության պատճառով անվանել են «վիպ-պուր-ուլի», այս երեք բառերը ճշտությամբ արտահայտում են նրանց ճիչը: Դիկ Սենդն ու Թոմը իրավամբ կարող էին կարծել, թե գտնվում են Նոր աշխարհի որևէ շրջանում: Բայց ավա՞ղ, իրականությունը նրանց լավ հայտնի էր:

Մինչև այդ վայրի գագանները, որ այնքան վտանգավոր են Աֆրիկայում, չէին մոտեցել փոքրիկ խմբին: Առաջին անցուղում նորից երևացին ընձուղտներ, որոնց անշուշտ Հարրիսը ջայլամի տեղ կոչներ, այս անգամ, իհարկե, առանց հաջողության: Այդ արագավազ կենդանիները շտապ փախչում էին՝ վախեցած ամայի անտառում երևացող քարավանից, հեռվում, մարգագետինների սահմանի մոտ, երբեմն փոշու ամպ էր բարձրանում, որն առաջացնում էր գոմեշների նախիրը՝ արագ վազելով և ծանր բարձված սայլի աղմուկ բարձրացնելով:

Երկու մղոն տարածության վրա Դիկ Սենդը հետևում էր մի վտակի, որն անշուշտ ավելի ջրառատ գետի մեջ պետք է թափվեր: Նա շտապում, էր իր ընկերներին հասցնել դեպի ծովափ հոսող գետերից մեկին: Պատանին կարծում էր, թե այդպիսով վտանգն ու հոգնածությունը ավելի քիչ կլինեին:

Կեսօրի մոտ երեք մղոն անցել էին՝ առանց որևէ տիպի հանդիպումի: Ո՛չ Հարրիսի հետքն էր երևում, ո՛չ Նեգրոյի, Դինգոն նույնպես չկար:

Ժամանակն էր կանգ առնելու, հանգստանալու և մի բան ուտելու:

Հանգստի տեղ ընտրեցին բամբուկի պուրակի մեջ, որը բոլորովին պատսպարեց փոքրիկ խմբին:

Նախաճաշի պահին շատ քիչ էին խոսում: Տիկին Ուելդոնը երեխային վերցրել էր իր գիրկը, աչքը նրանից չէր հեռացնում և ոչինչ չէր կարողանում ուտել:

— Պետք է մի բան ուտել, տիկին Ուելդոն, — մի քանի անգամ կրկնեց Դիկ Սենդը: — Ի՞նչ կլինի վերջը, եթե ուժասպառ լինեք, կերե՛ք, կերե՛ք. մենք շուտով կշարունակենք առաջ գնալ, և գետի հոսանքը մեզ ծովափ կհասցնի առանց հոգնության:

Տիկին Ուելդոնը ուղիղ Դիկ Սենդի աչքերին էր նայում այն միջոցին, երբ նա խոսում էր: Պատանու աչքերի առույգ արտահայտությունը նրա բարոյական ուժն ու կամքն էին արտացոլում: Նրան նայելով, դիտելով իրեն այնքան նվիրված ազնիվ նեգրերին՝ ինքը, միաժամանակ կին և մայր, չէր ուզում դեռևս հուսահատվել: Եվ ինչո՞ւ լքվել, չէ՞ որ կարծում էր, թե հյուրընկալ երկրում է գտնվում: Հարրիսի դավաճանությունը չէր կարող, նրա կարծիքով, լուրջ հետևանքներ ունենալ: Դիկ Սենդը գուշակում էր նրա մտքերը և ստիպված էր գլուխը խոնարհել:

IV. Անգուլայի դժվարին ճանապարհներով

Այդ միջոցին փոքրիկ Ջեկը արթնացավ և թևերը փաթաթեց մոր վզին. նրա հայացքը ավելի պարզ էր, ջերմը չկրկնվեց:

— Ավելի լա՞վ ես գտնում քեզ, սիրելիս, — հարցրեց տիկին Ուելդոնը՝ հիվանդ երեխային իր կրծքին սեղմելով:

— Այո, մայրիկ, — պատասխանեց Ջեկը, — Բայց մի քիչ ծարավ եմ:

Սառը ջրից բացի ուրիշ ոչինչ չկար երեխային տալու. նա հաճույքով խմեց մի քանի կում:

— Որտե՞ղ է Դիկ բարեկամս, — հարցրեց երեխան:

— Այստեղ եմ, Ջեկ, — պատասխանեց Դիկ Սենդը՝ բռնելով նրա ձեռքը:

— Իսկ Հերկուլես բարեկա՞մս:

— Ներկա է Հերկուլեսը, պարո՞ն Ջեկ, — պատասխանեց հսկան՝ բարի դեմքը մոտեցնելով:

— Իսկ ձի՞ն, — հարցրեց փոքրիկ Ջեկը:

— Ձի՞ն. գնաց, պարո՞ն Ջեկ, — պատասխանեց Հերկուլեսը: — Հիմա ձին ես եմ. ես եմ քեզ տանում, մի՞թե դանդաղ եմ գնում:

— Ոչ, — պատասխանեց փոքրիկ Ջեկը, — Բայց ուրեմն այլևս ձեռքումս սանձ չե՞մ ունենա:

— Ոչինչ, սանձ կղնենք բերանս, եթե ուզում եք, — ասաց Հերկուլեսը՝ բաց անելով լայն բերանը, — և կարող եք քաշել ինչքան կուզեք:

– Դու գիտես, որ շատ մեղմ կքաշեմ:

– Իզուր, իմ բերանը ուժեղ է:

– Իսկ ո՞ր մնաց պարոն Հարրիսի ֆերման...– մի անգամ ևս հարց տվեց փոքրիկ տղան:

– Շուտով այնտեղ կհասնենք, սիրելիս,– պատասխանեց տիկին Ուելդոնը... – Այո... շուտով:

– Կուզե՞ք, որ ճամփա ելնենք,– ասաց Դիկ Սենդը, վերջ տալու համար այդ խոսակցությանը:

– Այո, Դիկ, մեկնենք,– պատասխանեց տիկին Ուելդոնը:

Ճամբարը հավաքեցին, և երթը սկսվեց միևնույն կարգով: Պետք եղավ անցնել պուրակի միջով՝ չկորցնելու համար գետակի հոսանքը: Ժամանակին այդտեղ արահետներ էին եղել, սակայն այժմ դրանք «մեռած» էին, ըստ բնիկների արտահայտության, այսինքն՝ մուլախոտերն ու փշերը ծածկել էին: Հարկ եղավ մեկ մղոն գնալ այդպիսի ծանր պայմաններում և երեք ժամ կորցնել: Նեգրերը աշխատում էին անընդհատ: Հերկուլեսը Ջեկին դնելով Նանի գիրկը՝ մասնակցեց աշխատանքին և ինչպե՞ս աշխատեց: Նա աղմկալից շնչում էր՝ «հա՛ն», «հա՛ն» անելով, կացինը բարձրացնում և իջեցնում էր այնպիսի թափով, որ բացատ էր առաջանում նրա առաջ, կարծես այդ հսկան լափող կրակ լիներ:

Բարեբախտաբար, այդ հոգնեցուցիչ աշխատանքը երկար չտևեց: Առաջին մղոնը անցնելուց հետո պուրակում մի լայն անցում հայտնվեց, որը շեղակի հասնում էր գետակին և շարունակվում էր գետափով: Փղերի արահետ էր դա, և այդ կենդանիները, որ հարյուրներով էին լինում, անկասկած, սովոր էին անցնել անտառի այդ մասով: Ահագին թանձրամորթների ոտքերը խոռոչներ էին առաջացրել անձրևներից թրջված հողի վրա:

Շուտով պարզվեց, որ արահետով ոչ միայն այս հսկայական կենդանիներն էին անցնում: Մարդիկ ևս շատ անգամ գնացել էին այդ ճանապարհով, բայց այնպես, ինչպես սպանդանոց են քշում կենդանիների հոտերը: Այս ու այնտեղ վայրի գազանների հոշոտած ոսկորներ, մարդկային կմախքներ էին թափված, որոնց վրա դեռևս երևում էին ստրուկների ոտնակապերը:

Կենտրոնական Աֆրիկայում գոյություն ունեն այդպիսի երկար ճանապարհներ, որոնց վրա թափված են մարդկային բեկորներ: Հարյուրավոր մղոններ են անցնում քարավանները, և ինչքա՛ն դժբախտներ են ընկնում ճանապարհին՝ գործակալների մտրակի հարվածից, հոգնածությունից և զրկանքից, հիվանդություններից: Ինչքա՛ն մարդկանց սպանում են իրենք գերեվաճառները, ուտելիքի պակասության պատճառով: Այո, երբ այլևս նրանց չեն կարողանում կերակրել, սպանում են հրացանի կրակոցով, սրով, դանակով, և այդ կոտորածները հազվադեպ չեն:

Ուրեմն պարզ էր, որ ստրուկների քարավաններ էին անցել այդ ճանապարհով: Մեկ մղոն տարածության վրա Դիկ Սենդը ու նրա ընկերները ամեն քայլափոխում դեմ էին առնում այս ու այն կողմ թափված ոսկորների: Մարդկանց երևալը վախեցրեց վիթխարի այծկիթներին, որոնք դանդաղ թռիչքով բարձրացան և ճախրում էին օդում:

Տիկին Ուելդոնը նայում էր առանց տեսնելու: Դիկ Սենդը դողում էր՝ մտածելով, որ դեռատի կինը կարող էր հարցեր տալ, իսկ պատանին հույս ուներ, որ նրան ծովափ կհասցնի՝ առանց հայտնելու, թե Հարրիսի դավաճանությունը իրենց մոլորեցրել էր աֆրիկյան մի նահանգում: Բարեբախտաբար, տիկին Ուելդոնը իրեն հաշիվ չէր տալիս իր շուրջը տեսածի մասին: Նա ինքը ուզեց գրկել երեխային, և քնած փոքրիկ Ջեկը կլանում էր նրա ամբողջ ուշադրությունը: Նանը քայլում էր նրա կողքից, և ո՛չ մեկը, ո՛չ մյուսը պատանուն չտվեցին այն սոսկալի հարցերը, որից նա այնքան վախենում էր: Իսկ ծերունի Թոմը գնում էր աչքերը գետնին հառած՝ նա շատ լավ էր հասկանում, թե ինչու անտառի այդ ուղու վրա մարդկային ոսկորներ են թափված:

Նրա ընկերները նայում էին աջ ու ձախ՝ զարմացած հայացքով, նրանց թվում էր, թե անցնում են անվերջանալի գերեզմանոցով, որտեղ երկրաշարժը տակնուվրա էր արել գերեզմանները, բայց անցնում էին լռելյայն:

Մինչ այս, մինչ այն, գետակի հունը խորանում և լայնանում էր, հոսանքը նվազ արագահոս էր դարձել: Դիկ Սենդը հույս ուներ, որ կամ գետակը շուտով նավարկելի կդառնա, կամ շատ չանցած կթափվի դեպի Ատլանտյանը հոսող ավելի մեծ գետի մեջ:

Պատանին հաստատապես որոշել էր՝ ինչ գնով էլ լինի հետևել այդ ջրի հոսանքին, ուստի չվարանեց հեռանալ արահետից, որը մի կողմ թեքվելով՝ հեռացավ գետակից:

Այդպիսով փոքրիկ խումբը մի անգամ ևս մտավ խիտ թավուտի մեջ: Ստիպված էին առաջ գնալ տապարի օգնությամբ՝ խճճված պատատուկների և մացառների միջով: Թեև այդ բույսերը խափանում էին ճանապարհը, սակայն անտառը ավելի նոսրացել էր, ծառերը ավելի հազվադեպ էին դարձել, միայն բամբուկի լայն խուրձերն էին բարձրանում խոտերի միջից և այնքան բարձր էին, որ նույնիսկ Հերկուլեսի գլուխը չէր հասնում նրանց գագաթին: Փոքր խմբի անցնելը միայն այդ ցողունների շարժումից էր երևում:

Այդ օրը կեսօրվա ժամը երեքի մոտ հողի բնույթը ամբողջովին փոխվեց: Անտառին հաջորդեցին ընդարձակ դաշտերը, որոնք ջրով ողողվում էին անձրևային եղանակին: Հողը, որ ավելի ճահճային էր, ծածկված էր խիտ մամուռով և հիանալի պտերներով:

Այդտեղ Դիկ Սենդը վերհիշեց Լիվինգսթոնի ուղևորական հուշերում կարդացածը: Քանի՞-քանի՞ անգամ խիզախ դոկտորը խրվել էր այդ նենգ ճահիճների մեջ և հազիվ կարողացել դուրս գալ:

— Չգուշացեք, բարեկամներս, — ասաց պատանին՝ խմբի առաջն անցնելով, — ոտքով շոշափեցեք գետինը, քայլը փոխելուց առաջ:

— Իսկապես, — պատասխանեց Թոմը, — կարծես այս հողը թրջվել է անձրևից, մինչդեռ ոչ մի կաթիլ անձրև չի եկել վերջին օրերը:

— Փոթորիկը հեռու չէ, — ասաց Բաթը:

— Առավել ևս պետք է շտապենք և անցնենք այս ճահիճը՝ փոթորիկը պայթելուց առաջ: Հերկուլես, վերցրեք փոքրիկ Ջեկին ձեր գիրկը: Բա՛թ, Օստի՛ն, տիկին Ուելդոնի կողքին մնացեք կարիքի դեպքում օգնելու համար, իսկ դուք, պարոն Բենեդիկտ... բայց ինչո՞վ եք զբաղված, պարո՛ն Բենեդիկտ:

– Ես խրվում եմ... – պատասխանեց կուզեն Բենեդիկտը, որ խորասուզվում էր ռոպեապես իր առաջ բացված ծուղակի մեջ:

Իսկապես էլ խեղճ մարդը ոտքը դրել էր տիղմոտ փոսի վրա և մինչև մեջքը խրվել էր կաշուն ցեխի մեջ: Նրան դուրս բերեցին այդ ցեխից, և չնայած ամբողջովին տղմաշաղախ էր եղել, սակայն գոհ էր, որ միջատներով թանկագին տուփը չէր վնասվել: Ակտեոնը կանգնեց նրա կողքին ձախորդ կարճատեսին որևէ նոր անկումից ետ պահելու համար:

Պետք է ասել, որ կուզեն Բենեդիկտը անհաջող փոս էր ընտրել: Երբ նրան դուրս բերեցին, այդ ցեխոտ հողից մեծ քանակությամբ պղպջակներ բարձրացան գետնի երես և պայթելով, խեղդող գազեր արձակեցին: Լիվինգսթոնը, որ մի քանի անգամ մինչև կուրծքը խրվել էր այդ տիղմի մեջ, այդ հողերը համեմատում էր խոշոր սպունգների հետ, որոնց վրա ոտք դնելիս ջրի բարակ հոսանքներ էին ցայտում: Այդ վայրերով անցնելը խիստ վտանգավոր էր:

Կես մղոն տարածություն Դիկ Սենդն ու նրա ուղեկիցները քայլում էին այդ սպունգանման հողի վրայով: Մի տեղ տիկին Ուելդոնը ստիպված էր կանգ առնել, մինչև սրունքի կեսը խրվել էր տիղմի մեջ: Հերկուլեսը, Բաթը և Օստինը, ցանկանալով նրան ազատել տղմոտ դաշտով անցնելու անախորժությունից ու հոգնությունից՝ բամբուկից պատգարակ պատրաստեցին, և երիտասարդ կինը համաձայնեց տեղ գրավել դրա վրա: Փոքրիկ Ջեկը նստեց նրա ծնկներին, և փոքր խումբը շտապեց հեռանալ այդ կործանարար վայրից:

Քայլելը դժվար էր: Ակտեոնը պինդ բռնել էր կուզեն Բենեդիկտին: Թոմը օգնում էր Նանին, որը առանց նրա աջակցության կխրվեր տիղմի մեջ: Մյուս երեք նեգրերը պատգարակն էին տանում: Դիկ Սենդը խմբի առջևից գնալով՝ հողն էր զննում: Շատ դժվարությամբ ոտք դնելու տեղ էին գտնում. պետք էր քայլել խիտ և կոշտ խոտերով ծածկված եզերքով, բայց հաճախ հենակետը փախչում էր ոտքի տակից, և մինչև ծունկը խրվում էին տիղմի մեջ:

Վերջապես, երեկոյան ժամը հինգի մոտ, ճահիճը վերջացավ, գետինը, շնորհիվ կավային բնույթին՝ բավականաչափ պնդացավ, սակայն խորքում դեռևս խոնավություն կար: Շատ հավանական է, որ այս հողերը գտնվում էին մոտակա գետերից ցածր մակարդակի վրա, և ջուրը ծծվում էր ծակոտկեն հողի մեջ:

Այդ միջոցին շոգն անտանելի էր դառնում, և դժվար կլիներ դիմանալ, եթե չլինեին խիտ, անձրևաբեր ամպերը, որոնք ծածկում էին արևի ճառագայթները: Հեռավոր շանթերը սկսում էին պատռել օդը, և ամպրոպի խուլ ձայնը դղրդում էր երկնքի խորքում: Ահարկու փոթորիկ էր սպասվում:

Բնական աղետները սուկայի են Աֆրիկայում, հեղեղանման անձրևներ, փոթորիկներ, որոնց չեն դիմանում ամենաուժեղ ծառերն իսկ, միմյանց հաջորդող շանթահարություն: Դիկ Սենդին հայտնի էր այդ բոլորը, ուստի և նա շատ մտահոգ էր: Չէր կարելի գիշերը բաց օդում անցկացնել, դաշտը ողողվելու վտանգի տակ էր, և ոչ մի բարձունք չկար, որի վրա հնարավոր լիներ պատսպարվել:

Բայց ինչպե՞ս կարելի էր պատսպարվել այս ամայի ցածրադիր հովտում, որտեղ ոչ մի ծառ, ոչ մի թուփ չկար:

Սակայն հյուսիսում քիչ բարձր բլուրները կարծես սահմանափակում էին ճահճոտ հովիտը: Կարծես հողամասի էջքի սահմանագիծը լիներ դա: Մի քանի ծառեր աղոտ լույսով երևում էին հորիզոնի՝ ամպերից գերծ ալելի լուսավոր ֆոնի վրա:

Այնտեղ, եթե ապաստարան էլ չճարվեր, փոքր խումբը գոնե ջրհեղեղի տակ ընկնելու վտանգի տակ չէր լինի: Այնտեղ էր գուցե փոքր խմբի փրկությունը:

– Առա՛ջ, բարեկամներս, առա՛ջ, – կրկնում էր Դիկ Սենդը, – երեք մղոն ևս, և մենք ավելի ապահով կլինենք, քան այս ցածրադիր վայրում:

– Դե՛, տղերք, ավելի աշխույժ, առա՛ջ, – բացականչում էր Հերկուլեսը:

Քաջարի նեգրի ձեռքից եթե գար, բոլորին կվերցնեք թևերի մեջ և մենակ կտաներ:

Այդ խոսքերը քաջալերում էին խիզախ մարդկանց և, չնայած հոգնածությանը, նրանք ավելի արագ էին առաջ գնում:

Երբ փոթորիկը պայթեց, նկատված վայրը դեռևս երկու մղոն հեռու էր: Անձրևը չէր սկսվել առաջին փայլատակումների հետ: Եվ դա ավելի երկյուղալի էր: Այդ միջոցին կատարյալ խավար էր տիրում, թեև արևը դեռևս մայր չէր մտել: Բայց գոլորշու գմբեթը ցածրանում էր հետզհետե և սպառնում էր փուլ գալ, որը տեղատարափ անձրև էր նշանակում: Կարմիր կամ կապույտ շանթերը ամեն տեղ պատռում էին երկինքը և անանցանելի կրակի ցանցով ծածկում ամբողջ տափաստանը:

Քսան անգամ Դիկը և նրա ընկերները կայծակնահար լինելուց ազատվեցին՝ ծառագուրկ տափաստանի վրա, ուղևորները միակ դուրս ցցված կետերն էին և իրենց վրա կարող էին ընդունել էլեկտրական լիցքի հարվածները: Ձեկը արթնանալով ամալի գոռոցի ձայնից՝ պահվեց Հերկուլեսի թևերի մեջ. թեև շատ էր վախենում խեղճ փոքրիկը: Բայց և այնպես չէր ուզում մորը ցույց տալ, որպեսզի նրան է՛լ ավելի չանհանգստացնի: Հերկուլեսը մեծ քայլեր անելով հանդերձ՝ նրան քաջալերում էր, ինչպես կարող էր:

– Չվախենաք, փոքրի՛կ Ձեկ, – կրկնում էր, – եթե կայծակը մոտենա, ես նրան մի ձեռքով երկու կտոր կանեմ, ես կայծակից ավելի ուժեղ եմ:

Իսկապես էլ, իսկայի ուժը մի քիչ վստահություն էր ներշնչում փոքրիկ Ձեկին:

Սակայն անձրևը շուտով կսկսվեր, և հեղեղը կթափվեր խտացած ամպերից: Ի՞նչ կլինեք տիկին Ուելդոնի և նրա ուղեկիցների վիճակը, եթե որևէ ապաստարան չճարվեր:

Դիկ Սենդը մի րոպե կանգ առավ Թոմի կողքին և ասաց.

– Ի՞նչ անենք, Թոմ:

– Շարունակենք առաջ գնալ, պարո՞ն Դիկ, – պատասխանեց Թոմը: – Չենք կարող այստեղ մնալ, շուտով անձրևից ճահիճ կառաջանա:

– Ճիշտ է, Թոմ, բայց որտե՞ղ ապաստան գտնենք, որտե՞ղ, թեկուզ մի խրճիթ...

Դիկ Սենդը հանկարծ ընդհատեց խոսքը, կուրացնող մի շանթ լուսավորել էր ամբողջ տափաստանը:

– Ի՞նչ եմ տեսնում, այնտեղ քառորդ մղոն հեռավորության վրա:

– Այո, ես նույնպես տեսա... – պատասխանեց ծերունի Թոմը, գլուխը շարժելով:

– Գուցե ճամբար է:

– Այո... գուցե... պարոն Դիկ... ճամբար կլինի... Բայց բնիկների ճամբար...

Նոր շանթի լույսի տակ ավելի պարզորոշ երևաց ճամբարը, որը գրավել էր ընդարձակ տափաստանի մի մասը:

Այնտեղ համաչափ շարքերով, տասներկուսից-տասնհինգ ոտնաչափ բարձրությամբ մի հարյուր կոնաձև վրաններ էին բարձրանում գետնից: Սակայն ոչ մի զինվոր չէր երևում: Արդյոք փոթորկից փախչելով՝ վրանների տակ էին քաշվել, թե՞ ճամբարը լքված էր: Առաջին դեպքում ո՛չ մի ուշադրություն չդարձնելով փոթորկի վտանգին՝ Դիկ Սենդը պետք է փախչեր հնարավորին չափ արագ, երկրորդ դեպքում՝ գուցե այնտեղ պատսպարան գտնեին:

«Հիմա կիմանամ», – ասաց պատանին ինքն իրեն և դառնալով ծերունի Թոմին՝ ասաց.

– Մնացեք այստեղ, ոչ ոք ինձ հետ չգա, ես կգնամ տեսնելու, թե ինչ բան է դա:

– Թույլ տվեք մեզանից մեկին ընկերանալ ձեզ, պարոն Դիկ:

– Ոչ. Թոմ, ես մենակ կգնամ և առանց նկատվելու կմոտենամ, իսկ դուք մնացեք այստեղ:

Փոքրիկ խումբը, որի առջևից գնում էին Դիկ Սենդը և Թոմը, կանգ առավ: Պատանին շուտով հեռացավ նրանցից և անհետացավ խավարի մեջ:

Անձրևի խոշոր կաթիլները արդեն սկսեցին թափվել:

– Ի՞նչ պատահեց, – հարցրեց տիկին Ուելդոնը՝ մոտենալով ծերունի նեգրին:

– Մի ճամբար երևաց, տիկին Ուելդոն, – պատասխանեց Թոմը, – մի ճամբար... կամ գուցե ավան, և մեր նավապետը գնաց ստուգելու նախքան մեզ այնտեղ առաջնորդելը:

Տիկին Ուելդոնը բավականացավ այդ պատասխանով:

Երեք րոպե հետո Դիկ Սենդը վերադարձավ:

– Եկե՛ք, եկե՛ք, – բացականչեց պատանին ուրախ ձայնով:

– Ճամբարում ոչ ոք չկա՞, – հարցրեց Թոմը:

– Ճամբար չէ, – պատասխանեց պատանին, – ոչ էլ ավան, – պարզապես մրջնանոցներ են որ կան:

– Մրջնանոց, – բացականչեց կուզեն Բենեդիկտը՝ այդ խոսքից աշխուժանալով:

– Այո, բայց տասներկու ոտնաչափ բարձրությամբ մրջնանոցներ, որտեղ կփորձենք մի կերպ տեղավորվել:

– Բայց այդ դեպքում, – ասաց կուզեն Բենեդիկտը, – դրանք մարտաշունչ կամ գիշատիչ տերմիտների բներ կլինեն. միայն այդ ճարտարագործ միջատները կարող են այդպիսի հսկա շենքեր կառուցել, որոնք ամենանշանավոր ճարտարապետների նախանձը կշարժեին:

– Տերմիտներ են, թե ոչ, պարոն Բենեդիկտ, – պատասխանեց Դիկ Սենդը, – միևնույն է, պետք է վռնդել և նրանց տեղը գրավել:

– Բայց նրանք մեզ կհռչոտեն և իրավացի կլինեն:

– Գնանք, գնանք...

– Բայց, սպասեցե՛ք, – կրկնեց կուզեն Բենեդիկտը, – ես կարծում էի, թե այս մրջնանոցները միայն Աֆրիկայում են լինում...

– Գնանք, – բացականչեց վերջին անգամ Դիկ Սենդը զայրացած՝ վախենալով, որ տիկին Ուելդոնը կլսեր միջատաբանի վերջին խոսքերը:

Փոքր խումբը շտապ հետևեց Դիկ Սենդին: Մուլագար քամի բարձրացավ, խոշոր կաթիլները թմբկահարում էին գետինը, մի քանի րոպե հետո տեղատարափը կսկսվեց:

Շուտով ուղևորները հասան այդ կոներից մեկին, և ինչքան էլ վտանգավոր լինեին տերմիտները, չպետք էր վարանել, և եթե չէր կարելի նրանց դուրս անել, պետք էր հարևան լինել:

Կոնի ստորոտը, որ կարմիր կավից էր շինված, նեղ անցք ուներ, որը չերկուլեսը մի քանի րոպեում լայնացրեց իր դանակով այնքան, որ կարող էր ներս մտնել նույնիսկ ինքը:

Ինչքա՛ն զարմացավ կուզեն Բենեդիկտը, որ մրջնանոցում ոչ մի տերմիտ չերևաց: Ուրեմն, կոնի բնակիչները հեռացե՞լ էին:

Անցքը լայնացնելով Դիկ Սենդն ու նրա ընկերները ներս սողոսկեցին, իսկ չերկուլեսը ամենից վերջը ներս մտավ: Այդ րոպեին անձրևը այնպիսի ուժով էր թափվում, որ կարծես ուզում էր հանգցնել կայծակը:

Բայց ուղևորների համար տեղատարափն այլևս վտանգավոր չէր. հաջող դիպվածը փոքր խմբին տվել էր այդ հաստատուն ապաստարանը, որն ավելի լավ էր, քան որևէ վրան, քան բնիկի հյուղակը:

Տերմիտների կոները, որ կառուցում են այնքան փոքր միջատները, ըստ լեյտենանտ Քամերոնի, նույնքան նշանավոր են, ինչքան Եգիպտոսի բուրգերը, որ կառուցել են մարդիկ:

Այդ նույնն է, որ ասենք, թե Էվերեստը՝ Հիմալայի ամենաբարձր գագաթը, մարդիկ են կառուցել:

V. Մրջնաբանության դաս՝ մրջնանոցում

Այդ միջոցին փոթորիկը մոլեգնում էր այնպիսի թափով, որը բացառիկ էր բարեխառն գոտիներում: Մեծ բախտ էր, որ Դիկ Սենդն ու նրա ընկերները գտել էին այդ պատսպարանը:

Արդարև անձրևը գալիս էր ոչ թե կաթիլներով, այլ հոսում էր առատ շիթերով, որոնք երբեմն փոխվում էին միաձուլյլ ջրի հոսանքի և թափվում որպես ջրվեժ, որպես մի Նիագարա: Երևակայեցեք մի ամբողջ ծովի ջուր պարունակող օդային

մի ավագան, որը շուռ է գալիս հանկարծակի: Այդպիսի հեղեղի հետևանքով հողը հեղեղատի է փոխվում, դաշտերը լճանում են, գետերը հորդում և ողողում ընդարձակ տարածությունները: Բանն այն է, որ, ի տարբերություն բարեխառն գոտիների, որտեղ փոթորկի ուժը հակառակ համեմատական է նրա տևողությանը, Աֆրիկայում, ինչքան էլ ուժեղ լինեն նրանք, օրեր են տևում:

Բարեբախտաբար, մրջևանոցի հաստ պատերից անձրևը չէր կարող ներս թափանցել: Հեղեղը կարող էր անցնել նրա վրայով, բայց ոչ մի կաթիլ ջուր ներս չէր ծծվի:

Դիկ Սենդի և նրա ընկերների առաջին գործը եղավ ծանոթանալ մրջևանոցի ներքին կառուցվածքին: Լապտերը վառեցին, և մրջևանոցը բավականաչափ լուսավորվեց: Կոնը, որի բարձրությունը ներսից տասներկու ոտնաչափ էր, տասնմեկ ոտնաչափ լայնություն ուներ, բացի վերևի մասից, որը կորանում էր շաքարի գլխի ձևով: Պատերի հաստությունն ամեն տեղ մոտավորապես մեկ ոտնաչափ էր, և կային դատարկ տարածություններ խցիկների հարկերի միջև:

Ինչքան էլ զարմանալի թվար միջատների փաղանգների այդպիսի ճարտար կառուցվածքների գոյությունը, այնուամենայնիվ, ճշմարտությունն այն է, որ այդպիսիները հաճախ են պատահում Աֆրիկայում: Անցյալ դարի հուլանդացի ճանապարհորդ Սմիթմենը, իր չորս ընկերներով, կարողացավ կանգնել այդ կոններից մեկի գագաթին: Լուսնդեում Լիվինգսթոնը բազմաթիվ այդպիսի մրջևանոցների պատահեց, որոնք կառուցված էին կարմիր կավից և որոնց բարձրությունը հասնում էր տասնհինգից քսան ոտնաչափի: Լեյտենանտ Քամերոնը շատ անգամ սխալվել և ճամբարի տեղ էր ընդունել Լիանգվեի տափաստանում բարձրացած կոների այդ կուտակումները: Նա նույնիսկ կանգ էր առել իսկական կոթողների ստորոտում, որոնց բարձրությունը ոչ թե քսան, այլ քառասունից հիսուն ոտնաչափի էր հասնում և հիշեցնում էին մայր եկեղեցիների զմբեթները: Մրջյունների ո՞ր տեսակի գործն էր այդպիսի սքանչելի մրջևանոցների կառուցումը:

— Ռազմատենչ տերմիտների,— առանց վարանելու պատասխանեց կուզեն Բենեդիկտը, հենց որ ծանոթացավ նրանց կառուցվածքի շինանյութի տեսակին:

Եվ իսկապես, պատերը, ինչպես ասացինք, կարմրավուն կավահողից էին շինված: Եթե կառուցված լինեին գորշ կամ սև հողից, ապա կարելի կլիներ վերագրել դրանք «կծող տերմիտներին»: Ինչպես երևում է՝ այս միջատներն այնպիսի վտանգավոր անուններ ունեն, որոնք դուր կգան կուզեն Բենեդիկտի նման երդվյալ միջատաբանին միայն:

Կոնի կենտրոնական մասը, որտեղ սկզբում տեղավորվել էր փոքր խումբը և որը կոնի ազատ տարածությունն էր կազմում, չէր կարող նրանց բոլորին ընդունել իր մեջ, սակայն միմյանց վրա դարսված հարկերում բավական թվով խցիկներ կային, որտեղ միջին հասակի մարդը կարող էր մի կերպ տեղավորվել: Պատկերացրեք բաց արած դարակներ, որոնց մեջ կան միլիոնավոր բջիջներ՝ տերմիտների համար: Այդ դարակները միմյանց վրա դարսված են ճիշտ այնպես, ինչպես շոգենավի խցիկներում քնելու համար հատկացված հարկերը: Վերևի հարկի այդ արկղերում տեղավորվեցին տիկին Ուելդոնը, փոքրիկ Ջեկը, Նանը և կուզեն Բենեդիկտը: Ներքևի հարկում կուչ եկան Օստինը, Բաթը, Ակտոնը, իսկ Դիկ Սենդը, Թոմը և Հերկուլեսը մնացին կոնի ներքևի մասում:

— Բարեկամներս,— ասաց պատանին նեգրերին,— գետինը սկսում է թրջվել, պետք է կավահող ցանել, բայց զգույշ մուտքը չփակեք, թե չէ շնչահեղձ կլինենք մրջևանոցում:

– Միայն մի գիշեր ենք մնալու այստեղ, – պատասխանեց ծերունի Թոմը:

– Աշխատենք լավ հանգստանալ: Չէ՞ որ տասն օրից ի վեր առաջին անգամն է, որ բացօթյա չենք քնում:

– Տա՛սը օր, – կրկնեց Թոմը:

– Ասենք, – ավելացրեց Դիկ Սենդը, – քանի որ այս կոնը ապահով ապաստարան է մեզ համար, գուցե վատ չէր լինի այստեղ մնալ մի ամբողջ օր: Այդ ժամանակամիջոցում ես կգնամ փնտրելու գետը, որը մեզ կտանի ծովափ, իսկ դա պետք է որ հեռու չլինի: Ես մտածում եմ նույնիսկ, որ մինչև լաստ պատրաստելը լավ կլինի չհեռանալ այս ապաստարանից: Փոթորիկն այստեղ չի հասնի մեզ: Դե, ուրեմն, գործի անցնենք, գետինը պնդացնենք և չորացնենք:

Դիկ Սենդի կարգադրություններն իսկույն կատարվեցին: Հերկուլեսը կացնի հարվածով քանդեց բջիջների առաջին հարկը, որը փխրուն կավից էր շինված: Եվ այդպիսով մի ոտնաչափից ավելի բարձրացրեց ճահճային գետինը, որի վրա կառուցված էր մրջնանոցը, իսկ Դիկ Սենդը ստուգեց օդի մուտքը կոնի ներսը:

Խոսք չկա, մեծ բարեբախտություն էր, որ տերմիտանոցը դատարկ էր. եթե այնտեղ մի քանի հազար մրջյուն լիներ, անկարելի կլիներ մնալը: Բայց հարց էր, թե վաղո՞ւց էին հեռացել այդ որկրամուլ ցանցաթևավորները, թե միայն վերջերս էին թողել իրենց բնակարանը: Ավելորդ չէր լինի զբաղվել այդ խնդրով:

Կուզեն Բենեդիկտն իրեն առաջադրեց զբաղվել այդ հարցով, քանի որ նրա համար այնքան զարմանալի էր այդ լքումը, և շուտով համոզվեց, որ գաղթը վերջին օրերին էր տեղի ունեցել:

Արդարև, իջնելով կոնի ստորին հարկը՝ միջատաբանը լապտերի լույսով սկսեց պրպտել մրջնանոցի ամենագաղտնի անկյունները և այդպիսով երևան բերեց տերմիտների «գլխավոր պահեստը», ինչպես ինքը անվանեց, այսինքն՝ մրջնանոցի այն մասը, որտեղ այդ ժրաջան միջատները ամբարում են գաղութի մթերքը:

Դա պատի մեջ փորված մի խոռոչ էր, արքայական բջջից ոչ հեռու, որը ոչնչացրել էր Հերկուլեսը աշխատանքի պահին, մատղաշ թրթուրներին հատկացված բջիջների հետ:

Այդ պահեստից կուզեն Բենեդիկտը հավաքեց որոշ քանակությամբ խեժի կտորներ և կիսապինդ բուսահյութ, որոնք նոր էին բերված դրսից:

– Ո՛չ, ո՛չ, – բացականչեց միջատաբանը, կարծես պատասխանելով որևէ հակաճառողի, – ոչ, մրջնանոցը վաղուց չէ, որ դատարկվել է:

– Ո՞վ է հակառակը պնդում, պարոն Բենեդիկտ, – պատասխանեց Դիկ Սենդը: – Վերջերս կամ ոչ, կարևորը մեզ համար այն է, որ տերմիտները հեռացել են, որպեսզի մենք նրանց տեղը գրավենք:

– Կարևորը, – պատասխանեց կուզեն Բենեդիկտը, – այն է, թե ինչո՞ւ են նրանք թողել, հեռացել: Երեկ, նույնիսկ այս առավոտ այդ հեռատես ցանցաթևավորները դեռևս այստեղ են եղել, քանի որ ահա նրանց բուսական հյութը, իսկ այս երեկո...

– Բայց ի՞նչ եք ուզում դրանով ասել, պարոն Բենեդիկտ, – հարցրեց Դիկ Սենդը:

– Այն, որ նախագագացումը նրանց դրդել է հեռանալ մրջնանոցից: Ոչ միայն տերմիտներից ոչ մեկը չի մնացել բջիջներում, այլև իրենց հետ տարել են նույնիսկ մատողաշ թրթուրները, որոնցից ոչ մեկը չէմ կարողանում գտնել: Ուստի, կրկնում եմ, այս բոլորն առանց պատճառի չէ կատարված. այդ շրջահայաց միջատները որևէ մոտալուտ վտանգ են զգացել:

– Նրանք նախատեսում էին, որ մենք կգրավենք իրենց բնակարանը, – պատասխանեց Հերկուլեսը ծիծաղելով:

– Ինչպե՞ս չէ, – առարկեց կուզեն Բենեդիկտը՝ վիրավորված ազնիվ նեգրի այդ պատասխանից: – Մի՞թե դուք ձեզ այնքան ուժեղ եք երևակայում, որ կարծում եք, թե կարող եք վտանգավոր լինել այդ քաջարի միջատների համար: Այդ ցանցաթևավորների մի քանի հազարը ձեզ կարճ ժամանակում կմախք կդարձնեն, եթե ձեզ մեռած վիճակում պատահեն:

– Մեռած վիճակում, այո՛, – պատասխանեց Հերկուլեսը, որը չէր ուզում տեղի տալ, – բայց ողջ վիճակում ես նրանց բոլորին կճգմեմ:

– Դուք կճգմեք հարյուր հազարին, հինգ հարյուր հազարին, մեկ միլիոնին, – առարկեց կուզեն Բենեդիկտը ոգևորվելով, – բայց ո՛չ մեկ միլիարդին, և այդ մեկ միլիարդը ձեզ կհոշոտեն, կենդանի լինեիք, թե, մեռած մինչև վերջին մասնիկը:

Այս վիճաբանության ընթացքում, որը այնքան էլ աննպատակ չէր, Դիկ Սենդը մտածում էր կուզեն Բենեդիկտի վերջին դիտողության մասին: Ոչ մի կասկած չկար, որ գիտնականը բավականաչափ ծանոթ էր տերմիտների բարքերին և չէր կարող սխալվել: Եթե նա պնդում էր, թե բնագործ նրանց դրդել էր թողնել հեռանալ մրջնանոցից, գուցե իսկապես վտանգավոր էր այնտեղ մնալը:

Սակայն քանի որ հարց չէր կարող լինել թողնել այդ ապաստարանը այն թուպին, երբ փոթորիկը շարունակվում էր չտեսնված ուժով, Դիկ Սենդը ավելորդ համարեց նոր բացատրություն պահանջել մի խնդրի մասին, որը բավականաչափ պարզ էր, և բավականացավ պատասխանելով.

– Թող այդպես լինի, պարո՛ն Բենեդիկտ, եթե տերմիտներն իրենց մթերքը թողել են այստեղ, չմոռանանք, որ մենք ևս մեր պաշարն ենք բերել, և ընթերնք: Վաղը, փոթորիկը վերանալուց հետո, կտեսնենք, թե ինչ պետք է անել:

Այնուհետև պատրաստվեցին երեկոյան ընթրիքի, քանի որ ինչքան էլ հոգևած լինեին, այնուամենայնիվ, ախորժակը կորցրած չէին լինի այդ անխոնջ քայլողները: Ընդհակառակն, մեծ ախորժակով կերան պահածոները, որոնք դեռ ես երկու օր կբավարարեին նրանց: Պաքսիմատը չէր փչացել խոնավությունից, և մի քանի թուպե լսվում էր, թե ինչպես է այն խրթխրթում Դիկ Սենդի և նրա ընկերների ատամների տակ: Հերկուլեսի ծնոտներն աշխատում էին աղորիքի նման: Հսկան ոչ թե կրծում էր, այլ ջարդում:

Միայն տիկին Ուելդոնն էր, որ հազիվ ձեռք տվեց ընթրիքին, այն էլ որովհետև Դիկ Սենդը շատ էր խնդրում, որ մի բան ուտի: Պատանուն թվում էր, թե այդ քաջ կինը սովորականից ավելի մտազբաղ և ավելի տխուր էր: Սակայն նրա փոքրիկ Ձեկը ավելի լավ էր զգում իրեն, տենդը չէր կրկնվել, և այդ միջոցին երեխան քնած էր մոր աչքի առաջ՝ հագուստներով լավ փափկացրած բջիջի մեջ: Դիկ Սենդը չգիտեր, թե ինչին վերագրել տիկին Ուելդոնի այդ վիատությունը:

Ավելորդ է ասել, թե կուզեն Բենեդիկտը մեծ ախորժակով կերավ, ոչ թե այն պատճառով, որ ուտելիքի որակը կամ քանակը դուր էր եկել նրան, ոչ, այլ որովհետև հարմար առիթ էր գտել տերմիտների մասին միջատաբանական դասախոսություն կարդալու: Ա՛հ, եթե կարողանար մի տերմիտ, միայն մեկ հատ գտնել այդ լքված մրջնանոցում. բայց իզուր, ոչինչ չկար:

— Այս հիանալի միջատները, — ասաց նա, առանց ուշադրություն դարձնելու լսում են իրեն, թե ոչ, — այս հրաշալի տերմիտները պատկանում են ցանցաթևավորների զարմանալի կարգին. նրանց շոշափուկները գլխից ավելի երկար են, ստորին ծնոտը դուրս ցցված, ստորին թևերի ընդհանրապես հավասար վերնաթևերին: Հինգ ստորաբաժանում ունի այս կարգը. կարիճաճանճերը, մրջնառյուծները, ոսկեաչքավորները և տերմիտները: Ավելորդ է ասել, որ այն միջատները, որոնց բնակարանը մենք գրավել ենք ապօրինի կերպով, տերմիտներն են:

Այդ թուպեին Դիկ Սենդը ուշադրությամբ լսում էր կուզեն Բենեդիկտին: Տերմիտների այս բնակավայրը արդյոք չէ՞ր արթնացրել միջատաբանի մեջ այն միտքը, որ գուցե գտնվում են աֆրիկյան մայրցամաքում, առանց իմանալու, թե ճակատագրի ինչպիսի բերումով է հասել այնտեղ: Պատանին խիստ մտահոգված էր դրանով:

Գիտնականը, նստած իր սիրած երիվարին, շարունակում էր սրարշավ առաջ գնալ:

— Այդ տերմիտները, — շարունակեց նա, — բնորոշ են ոտնաթաթի չորս շոշափուկներով, եղջերային շատ ուժեղ ծնոտներով: Գոյություն ունեն մանտիսպ, ռաֆիդի, տերմիտ տեսակները, որոնք հաճախ հայտնի են սպիտակ մրջյուն անունով: Այս մրջյունը ևս ունի ստորաբաժանումները, ինչպես կորստաբեր տերմիտը, դեղնալանջ տերմիտը, լուսատու տերմիտը, կծողը, քանդողը...

— Իսկ ո՞ր տեսակին են պատկանում այս կոնը կառուցող տերմիտները, — հարցրեց Դիկ Սենդը:

— Ռազմատենչ տերմիտներ են սրանք, — պատասխանեց կուզեն Բենեդիկտը և այդ անունն արտասանեց այնպիսի շեշտով, ինչպես կարտասաներ մակեդոնացիների կամ հնագույն ժամանակի ռազմական արիությանը նշանավոր մի ուրիշ ցեղի անունը: — Այո, ռազմատենչ: Հերկուլեսի և թզուկի միջև տարբերությունը ավելի քիչ է, քան այդ միջատների ամենամեծի և ամենափոքրի միջև: Եթե նրանց մեջ կան հինգ միլիմետր երկարությամբ բանվորներ, տասը միլիմետր երկարությամբ զինվորներ, քսան միլիմետր երկարությամբ արուններ և եգեր, նրանց մեջ կա նաև շատ ավելի հետաքրքիր մի ցեղ «սիրաֆու», սրանց երկարությունը կեսմատնաչափ է, և ծնոտը փոխարինված է արցանով, գլուխն ավելի խոշոր է, քան մարմինը, ինչպես շնածկանը: Սրանք էլ միջատների շնածկներն են, և եթե սիրաֆուն ու շնածուկը կռվի բռնվեն, ես գրագ կգամ հոգուս սիրաֆուի:

— Իսկ ընդհանրապես որտե՞ղ են գտնվում այդ սիրաֆուները, — հարցրեց Դիկ Սենդը:

— Աֆրիկայում, — պատասխանեց կուզեն Բենեդիկտը, — կենտրոնական և հարավային նահանգներում: Աֆրիկյան գերազանցապես մրջյունների երկիր է: Պետք է կարդալ, թե ինչ է ասում Լիվինգսթոնը վերջին հիշողություններում, որը մեզ հասցրեց Սթենլին: Ինձանից ավելի բախտավոր էր դոկտորը, որովհետև նա ականատես էր եղել սև մրջյունների և կարմիր մրջյունների բանակների միջև տեղի ունեցած կատաղի ճակատամարտին: Այս վերջինները, որոնց կոչում են

«դրիվերս», իսկ բնիկների սիրաֆու, հաղթող հանդիսացան: Մյուսները՝ «չունգունները», խիզախ դիմադրությունից հետո փախուստ տվեցին, իրենց հետ տանելով ձվերը և ձագերը: Երբեք, — ասում է Լիվինգսթոնը, — երբեք ռազմական ոգին ավելի բարձր չի եղել ո՛չ մարդկանց, ո՛չ կենդանիների մոտ: Իրենց ուժեղ ծնոտներով, որոնք պոկում են մարմնի խայթված տեղը, սիրաֆուները սարսափեցնում են ամենաքաջ մարդուն անգամ: Ամենամեծ կենդանիներն իսկ՝ առյուծը, փիղը, փախչում են նրանցից: Նրանց ոչինչ չի կասեցնում. ո՛չ պատվարները, ո՛չ ծառերը, որոնց վրա բարձրանում են մինչև գագաթը, ո՛չ գետերը, որոնց վրայով անցնում են իրենց սեփական մարմնից առկախ կամուրջ կառուցելով մեկը մյուսին կառչած: Աֆրիկյան մի ուրիշ ճանապարհորդ Դյու Շայուն, ականատես է եղել այդ մրջյունների մի գաղութի անցնելուն, որը տևել է տասներկու ժամ. և այն էլ ինչպիսի՜ արագությամբ: Չարմանալի չի, որ նրանք անթիվ-անհամար են: Այդ միջատների բեղմնավորումը ապշեցուցիչ է, իսկ ինչ վերաբերում է մեր ռազմատենչ տերմիտներին, հաստատված է, որ նրանց էզր կարող է օրական մինչև վաթսուս հազար ձու ածել: Այդպիսով, այդ ցանցաթևավորները բնիկներին սննդարար ուտելիք են ծառայում: Տապակած մրջյունից ավելի համեղ ի՞նչ կարող է լինել աշխարհում:

— Իսկ դուք կերե՞լ եք, պարո՞ն Բենեդիկտ, — հարցրեց Հերկուլեսը:

— Երբեք, — պատասխանեց գիտնական պրոֆեսորը, — Բայց կուտեմ:

— Որտե՞ղ:

— Այստեղ:

— Մենք Աֆրիկայում չենք, — շտապեց ասել Թոմը:

— Ոչ... ոչ... — պատասխանեց Բենեդիկտը, — սակայն մինչև այսօր ռազմաշունչ տերմիտները և նրանց մրջնային ավանները միայն աֆրիկյան մայրցամաքում են նկատված: Օ՛ր, այդ ճանապարհորդները ինչ վատ տեսողություն ունեն: Ասենք, այդպես ավելի լավ է, իմ գործին կգա: Ես արդեն մի ցեցե գտա Ամերիկայում: Այդ փառքին կավելացնեմ նաև ռազմաշունչ տերմիտների հայտնագործումը Նույն վայրում: Ինչպիսի նյութ հիշողությունների համար, որոնք սենսացիա կառաջացնեն գիտական Եվրոպայում, ու գուցե այդ առթիվ մի գիրք լույս կտեսնի՝ քարտեզներով և նկարազարդ...

Պարզ էր, որ կուզեն Բենեդիկտը դեռևս գլխի չէր ընկել, թե որտեղ է գտնվում: Խեղճ մարդը և նրա բոլոր բարեկամները, բացառությամբ Դիկ Սենդի և Թոմի, կարծում էին և պետք է կարծեին, թե գտնվում են այնտեղ, որտեղ չեն: Անհրաժեշտ էին ուրիշ իրադարձություններ, գիտական կամ հայտնագործություններից ավելի լուրջ դեպքեր, որպեսզի հասկանային իրենց սխալը:

Երեկոյան ժամը ինն էր: Կուզեն Բենեդիկտը երկար խոսեց, նկատե՞ց արդյոք, թե ունկնդիրները բջիջներին կռթնած քնել էին հետզհետե, միջատաբանական դասախոսության միջոցին: Իհարկե ոչ: Նա դասախոսում էր իր համար: Դիկ Սենդը այլևս հարցեր չէր տալիս և անշարժ նստել էր, թեև քնած չէր: Իսկ Հերկուլեսը թեև բոլորից ավելի էր դիմացել, սակայն հոգևածությունը նրան էլ հաղթեց, և նա փակեց աչքերը ու աչքերի հետ՝ նաև ականջները:

Կուզեն Բենեդիկտը որոշ ժամանակ դեռ շարունակեց դատողություններ անել, սակայն քունը նրան էլ հաղթեց, գիտնականը բարձրացավ կոնի ամենաբարձր հարկը, որտեղ իր համար հարկաբաժին էր ընտրել:

Խոր լռություն տիրեց մրջնանոցում, իսկ դրսում փոթորիկը շարունակում էր մոլեգնել, աղմկելով և հուր ու բոց արձակելով: Ոչ մի նշան չկար, թե բնության աղետը վերջ կունենար:

Լապտերը հանգել էր: Կոնի մեջ կատարյալ խավար էր տիրում:

Բոլորը քնած էին, անկասկած: Միայն Դիկ Սենդըն էր, որ չէր կարողանում քնել և հանգստանալ, որը նրան այնքան անհրաժեշտ էր: Պատանին խորասուզված էր մտքերի մեջ, նա մտածում էր իր ընկերների մասին, որոնց ուզում էր փրկել՝ ինչ գնով էլ լիներ, «Պիլիգրիմի» խորտակումով չէին վերջացել նրանց դաժան փորձությունները, և նոր, ավելի ևս սոսկալի վտանգներ էին սպասում նրանց, եթե բնիկների ձեռքն ընկնեին:

Իսկ ինչպե՞ս խուսափել այդ վտանգից, որն ամենավատը կլիներ ծովափ վերադառնալու ճանապարհին: Պարզ էր, որ Հարրիսն ու Նեգրոն նրանց քարշ էին տվել հարյուր մղոն Անգոլայի խորքը չար դիտավորությամբ: Բայց ի՞նչ էր այդ չարագործ պորտուգալացու նպատակը: Ումի՞ց էր ուզում վրեժ լուծել: Պատանին մտքում միշտ կրկնում էր, թե միայն ինքն էր նրան հետապնդել և ահա նա վերհիշում էր «Պիլիգրիմի» վրա տեղի ունեցած բոլոր դեպքերը, խորտակված նավի և Նեգրերի հանդիպումը, կետորսությունը, նավապետ Հուլի և անձնակազմի անհետ կորչելը:

Այդ դեպքերի հետևանքով Դիկ Սենդըն տասնհինգ տարեկան հասակում նավապետ էր դարձել մի նավի, որի կողմնացույցն ու լազը շատ շուտով մեջտեղից վերացան Նեգրոյի ոճրագործ ձեռքով: Պատանին վերհիշում էր, թե ինչպես էր իրեն հպատակեցրել լաիրշ խոհարարին՝ սպառնալով նրան բանտարկել կամ ատրճանակով գնդակահարել: Ա՛խ, ինչո՞ւ էր ձեռքը վարանել այդ թույլին: Ինչ լավ կլիներ, եթե Նեգրոյի դիակը ծովը, նետած լինեին, ինչքա՞ն աղետալի դեպքեր տեղի չէին ունենա:

Այդ մտքերով էր տարված պատանին: Այնուհետև մի թույլ նա վերհիշեց այն փոթորիկը, որը վերջ տվեց «Պիլիգրիմի» ուղևորությանը: Այդ միջոցին երևան եկավ դավաճան Հարրիսը, և Ամերիկայի հարավային նահանգը փոխվեց հետզհետե: Բոլիվիան դարձավ ահռելի Անգոլա՝ իր ջերմոտ կլիմայով, գիշատիչ գազաններով, է՛լ ավելի վայրագ բնիկներով: Պիտի կարողանա՞ր փոքր խումբը այդ վտանգներից խուսափել դեպի ծովափ վերադարձին: Այն գետը, որը Դիկ Սենդըն փնտրում էր և հույս ուներ գտնել, կտանե՞ր ծովեզերք ավելի ապահով և ավելի հանգիստ: Այդ մասին չէր ուզում կասկածել, քանի որ լավ գիտեր, թե հարյուր մղոն ճանապարհ գնալ այդ անհյուրընկալ շրջանում, անընդհատ վտանգների մեջ, անհնար էր:

«Բարեբախտաբար, — ասում էր ինքն իրեն, — տիկին Ուելդոնը և բոլորը չգիտեն, թե ինքա՞ն լուրջ է դրուբյունը: Ծերունի Թոմը և ես միայն գիտենք, որ Նեգրոն մեզ բերեց նետեց Աֆրիկայի ծովափը, որ Հարրիսը մեզ տարավ Անգոլայի խորքերը»:

Դիկ Սենդըն այս ճնշող մտքերով էր տարված, երբ զգաց, որ մեկի շունչը շոյում է իր ճակատը: Մեկի ձեռքը հենվեց իր ուսին, և մի հուզված ձայն շշնջաց իր ականջին.

— Ես ամեն ինչ գիտեմ, խեղճ Դիկ, բայց չհուսահատվես. աստված կարող է դեռ փրկել մեզ: Թող նրա կամքը լինի:

VI. Ջրասույզ գանգը

Այս անսպասելի հայտնությունը Դիկ Սենդը ոչինչ չէր կարող պատասխանել, մանավանդ որ տիկին Ուելդոնը իսկույն վերադարձել էր փոքրիկ Ձեկի մոտ:

Պարզ էր, որ դրանից ավելին չէր ուզում ասել, իսկ պատանին քաջություն չէր ունենա նրան ետ պահել:

Այդպես ուրեմն, տիկին Ուելդոնը գլխի էր ընկել: Ճանապարհի գանազան դեպքերը լուսավորել էին նրա միտքը ևս, գուցե, նաև «Աֆրիկա...» անունը, որն այնքան ձախորդ կերպով նախորդ օրը արտասանել էր կուզեն Բենեդիկտը:

«Տիկին Ուելդոնը ամեն բան գիտեր,— ինքն իրեն կրկնում էր Դիկ Սենդը:— Էհ, թող այդպես լինի, գուցե այդպես ավելի լավ է: Քաջարի կինը չի հուսահատվում, ուրեմն ես էլ չպետք է հուսահատվեմ»:

Դիկ Սենդն այժմ անհամբեր լույսի բացվելուն էր սպասում, որպեսզի կարողանար հետախուզել տերմիտների ավանի շրջակայքը: Ատլանտյանը թափվող մի գետ և նրա արագահոս ընթացքը, ահա թե ինչ էր պետք նրան, որպեսզի կարողանար տեղափոխել փոքր խումբը, և նախագագուցումը նրան ասում էր, որ այդ գետը հեռու չպետք է լիներ: Այժմ ամեն բանից ավելի պետք էր խուսափել բնիկներին հանդիպելուց, որոնք գուցե փոքր խմբին հետապնդում էին Հարրիսի և Նեգրոյի առաջնորդությամբ:

Սակայն լույսը դեռևս չէր բացվում: Ոչ մի շող չէր թափանցում կոնի ստորին անցքից: Ամպրոպի դրոշմունքը, որը խուլ կերպով լսվում էր կոնի հաստ պատերի միջով, ցույց էր տալիս, որ փոթորիկը չէր հանդարտվում: Ականջ դնելով Դիկ Սենդը լսում էր, թե ինչպիսի ուժով էր անձրևը թափվում մրջնանոցի հիմքին, և որովհետև անձրևի խոշոր կաթիլները այլևս չէին խփվում կարծր հողին, ուրեմն կարելի էր եզրակացնել, թե ամբողջ տափաստանը ողողվել էր ջրով:

Ժամը մոտավորապես տասը կլիներ: Այդ միջոցին Դիկ Սենդը զգաց, թե ինչպես եթե ոչ իսկական քուն, ապա մի տեսակ թմրություն էր իջնում իր վրա: Այսպես թե այնպես, նա մի քիչ կհանգստանար: Սակայն այդ իսկ թույլին հիշեց, որ գետին թափված կավահողը եթե թրջվեր, մուտքը կարող էր փակվել: Այդ դեպքում օդը կդադարեր ներս հոսել, իսկ տասը հոգու շնչառությունը կարող էր օդը հագեցնել ածխաթթու գազով:

Ուստի Դիկ Սենդը իջավ հատակին, որը ծածկված էր բջիջների առաջին հարկի կավահողով:

Անցքի շուրջը հողը դեռևս բոլորովին չոր էր, իսկ անցքը՝ միանգամայն բաց: Օդը հեշտությամբ ներս էր հոսում, նրա հետ նաև ամպրոպից առաջացած մի քանի վառ շողեր, ամպրոպ, որը չէր կարողանում հանգստացնել հեղեղանման անձրևը:

Դիկ Սենդը տեսավ, որ ամեն ինչ կարգին է: Թվում էր, թե ոչ մի անմիջական վտանգ չէր սպառնում այս «մարդ-տերմիտներին», որոնք տիրացել էին ցանցաթևավորների այդ գաղութին: Պատանին մտածեց մի քիչ կազդուրվել մի քանի ժամ քնելով, քանի որ արդեն զգում էր հոգնածության ազդեցությունը:

Միայն թե զգուշության համար Դիկ Սենդը պառկեց կոնի հատակին թափված կավահողի շերտի վրա, մուտքի մոտ: Այդպիսով ոչ մի դեպք տեղի չէր ունենա

դրսում, որին ինքն առաջինը իրագրել չլինել, բացի դրանից, արշալույսի հետ միաժամանակ արթնանալով կսկսեր հարթավայրի հետախուզությունը:

Դիկ Սենդը պառկեց՝ գլուխը հենած պատին, հրացանը ձեռքի տակ, և գրեթե անմիջապես քնեց:

Թե ինչքան տևեց այդ նիդը՝ նա չէր կարող ասել, երբ հանկարծ արթնացավ ինչ-որ թացություն զգալով:

Պատանին խիստ անհանգստացած իսկույն ոտքի կանգնեց՝ տեսնելով, որ ջուրը լցվում է մրջնանոցը և այնքան արագ, որ մի քանի րոպեում հասավ Թոմի և Հերկուլեսի գրաված հարկին: Նրանց արթնացրեց Դիկ Սենդը և հայտնեց նոր բարդության մասին:

Լապտերը նորից վառեցին, և կոնի ներսը լուսավորվեց: Ջուրը կանգ էր առել մոտավորապես հինգ ոտնաչափ բարձրության վրա և այլևս չէր բարձրանում:

— Ի՞նչ պատահեց, Դիկ, — հարցրեց տիկին Ուելդոնը:

— Ոչինչ, — պատասխանեց պատանին, — կոնի ստորին մասը ողողվեց: Հավանական է, որ փոթորկի միջոցին հարևան գետերից մեկը հորդացել է և ափերից դուրս եկել:

— Լավ, — ասաց Հերկուլեսը, — այդ ցույց է տալիս, որ գետը մոտ է մեզ:

— Այո, — պատասխանեց Դիկ Սենդը, — և այդ գետը մեզ կտանի ծովափ: Հանգստացեք ուրեմն, տիկին Ուելդոն, ջուրը մինչև ձեզ չի հասնի, ոչ էլ փոքրիկ Ջեկին, Նանին և պարոն Բենեդիկտին:

Տիկին Ուելդոնը չպատասխանեց, իսկ կուզենը քնել էր իսկական տերմիտի նման:

Այդ միջոցին նեգրերը, թեքված ջրի մակերեսի վրա, որն արտացոլում էր լապտերի լույսը, սպասում էին, որ Դիկ Սենդը, որ այդ միջոցին ջրի բարձրությունն էր չափում, կարգադրեր, թե ինչ պետք է անել:

Դիկ Սենդը ուտելիքն ու զենքերը ապահով տեղ դնելուց հետո լռել էր:

— Ջուրը ներքևի անցքի՞ց ներս լցվեց, — հարցրեց Թոմը:

— Այո, — պատասխանեց Դիկ Սենդը, — և դրսի օդը ներս չի հոսում:

— Մի՞թե չի կարելի պատի մեջ նոր անցք բաց անել ջրի մակերեսից բարձր, — հարցրեց ծերունի նեգրը:

— Անկասկած... Թոմ, բայց եթե կոնի ներսում ջրի բարձրությունը հինգ ոտնաչափ է, ուրեմն դրսում գուցե վեց է կամ յոթ... գուցե և ավելի...

— Կարծո՞ւմ եք, Դիկ:

— Այո, Թոմ, կարծում եմ, որ ջուրը, մրջնանոցի ներսում բարձրանալով պետք է օդը խտացրած լինի վերևի մասում, այժմ այդ խտացած օդը արգելք է լինում, որ ջուրը ավելի բարձրանա: Իսկ եթե պատի մեջ նոր անցք բաց անենք, որից օդը դուրս կհոսի, այդ դեպքում կամ ջուրը նորից կբարձրանա մինչև հասնի դրսի ջրի մակերեսին, կամ, եթե անցքից ավելի է բարձրացել, կբարձրանա մինչև այն կետը,

որտեղ ճնշված օդը նորից նրան կկասեցնի: Մենք այստեղ նմանվում ենք ջրասույզ զանգում աշխատողների:

– Ի՞նչ պետք է անենք ուրեմն:

– Պետք է լավ մտածենք գործի անցնելուց առաջ, – պատասխանեց Դիկ Սենդը: – Անզգուշությունը մեզ կորստի կմատնի:

Կոնը ջրասույզ զանգի հետ համեմատելով՝ նա ճիշտ դիտողություն էր արել: Այն տարբերությամբ, որ ջրասույզ զանգում օդն անընդհատ նորոգում են պոմպերը, ջրի տակ եղողները հանգիստ շնչում են և նեղվում են միայն երկար ժամանակ ճնշված օդում մնալուց:

Սակայն այստեղ, բացի այդ անպատեհություններից, կոնի տարածությունը արդեն կրճատվել էր մեկ երրորդով, իսկ օդը կարելի էր նորոգել միայն այն դեպքում, եթե որևէ անցքից հաղորդակցություն բացվեր դրսի հետ:

Հնարավոր էր, առանց Դիկ Սենդի հայտնած վտանգին ենթարկվելու, բաց անել այդ անցքը, և դրությունը մի՞թե չէր ծանրանա այդպիսով:

Իսկ այժմ կասկածից դուրս էր, որ ջուրը կանգնած էր այնպիսի բարձրության վրա, որից ավելի կբարձրանար միայն երկու պատճառով՝ եթե նոր անցք բաց անեին և դրսի ջրի բարձրությունը ավելի լիներ կամ եթե դրսի ջուրը շարունակեր բարձրանալ: Այդ երկու դեպքերում ևս կոնի ներսում միայն մի փոքր տարածություն կմնար, որտեղ օդը չթարմանալով՝ ավելի ևս կխտանար:

Հարց էր, թե արդյոք մրջևանոցը չէ՞ր կարող պոկվել գետնից և տապալվել ողողման հետևանքով, մի բան, որը չափազանց վտանգավոր դրություն կստեղծեր կոնի ներսում եղողների համար: Այդպիսի վտանգ չէր երևում, քանի որ կոնի հիմքը շատ էր խորացել հողի մեջ, ինչպես ջրշների տնակը:

Ուրեմն ամենից ավելի հավանական վտանգն այն էր, որ փոթորիկը երկար տևելով՝ ողողումը ավելի ուժեղանար: Եթե դրսի ջրի բարձրությունը հասներ երեսուն ոտնաչափի, այդ դեպքում կծածկեր տասնութ ոտնաչափ բարձրություն ունեցող կոնը, և ներսի օդը կխտանար մեկ մթնոլորտային ճնշումով:

Ուրեմն, լավ կշռադատելուց հետո Դիկ Սենդը եկավ այն եզրակացության, որ վտանգ կար, թե ողողումը շատ մեծ չափերի կհասներ, քանի որ միայն հեղեղանման անձրևից չէ, որ բարձրանում էր հարթավայրի ջուրը, շատ հավանական է, որ մոտակա գետերից մեկնումեկը հեղեղից մեծանալով՝ հորդացել և տարածվել էր դաշտի վրա, որը գետի հունից ավելի ցածր: Եր: Եվ ո՞վ կարող էր երաշխավորել, որ մրջևանոցը ամբողջովին չէր ողողվի ջրով, և այլևս հնարավոր չէր լինի նրանից դուրս գալ նույնիսկ գագաթի կամարից, որը կարելի էր քանդել անմիջապես և առանց դժվարության: Դիկ Սենդը, չափազանց անհանգստացած՝ հարց էր տալիս, թե ինչ պետք էր անել: Սպասե՞լ, թե շտապեցնել դրության լուծումը, իրերի վիճակին ծանոթանալուց հետո:

Այդ ժամանակ առավոտյան երեքն էր: Կոնի ներսում բոլորը անշարժ և լուռ ականջ էին դնում: Դրսի աղմուկը շատ թույլ էր հասնում փակված անցքի միջով: Բայց և այնպես չդադարող դղրոյունը վկայում էր, որ տարերքի պայքարը չէր վերջացել:

Այդ միջոցին ծերունի Թոմը հայտնեց, որ ջրի մակարդակը հետզհետե բարձրանում է:

– Ճիշտ է,– պատասխանեց Դիկ Սենդը,– և եթե բարձրանում է, ու եթե օդը չի կարողանում դուրս պրծնել, ուրեմն դրսի ջուրը բարձրանում և հետզհետե խտացնում է այն:

– Առայժմ ջրի բարձրացումը աննշան է,– ասաց Թոմը:

– Անկասկած,– պատասխանեց Դիկ Սենդը, բայց որտե՞ղ կանգ կառնի ջուրը:

– Պարոն Դիկ,– հարցրեց Բաթը,– ուզո՞ւմ եք մրջևանոցից դուրս գամ, կսուզվեմ ջրի մեջ և կաշխատեմ անցքից դուրս սահել...

– Ուզում եմ ես ինքս կատարել այդ փորձը,– պատասխանեց Դիկ Սենդը:

– Ոչ, պարոն Դիկ, ոչ,– առարկեց ծերունի Թոմը,– թույլ տվեք՝ որդիս կատարի այդ գործը, և վստահ եղեք նրա վրա, իսկ եթե պատահի՝ նա չվերադառնա... Ձեր ներկայությունը անհրաժեշտ է այստեղ: Չմոռանանք տիկին Ուելդոնին և փոքրիկ Ջեկին,– ավելացրեց ցածր ձայնով:

– Թող այդպես լինի,– պատասխանեց Դիկ Սենդը:– Գնացե՛ք, Բա՛թ: Եթե մրջևանոցը ամբողջովին ջրի տակ է, չփորձեք վերադառնալ, այդ դեպքում մենք ևս կաշխատենք դուրս գալ հետևելով ձեր օրինակին: Բայց եթե կոնը շարունակում է ջրից դուրս մնալ, խփեք գագաթին ձեզ հետ վերցրած տապարով. մենք ձեզ կլսենք, և ձեր տված նշանի համաձայն կսկսենք քանդել մեր կողմից: Հասկանալի՞ է:

– Այո, պարոն Դիկ,– պատասխանեց Բաթը:

– Գնա՛, տղա՛ս,– ավելացրեց ծերունի Թոմը՝ սեղմելով որդու ձեռքը:

Բաթը, խոր շնչառությամբ օդի պաշար հավաքելով՝ խորասուզվեց ջրի մեջ, որի բարձրությունը այդ միջոցին հիևզ ոտնաչափից ավելի էր: Բավական դժվար գործ էր այդ, քանի որ պետք է փնտրեր և գտներ ներքևի անցքը, այնտեղից դուրս սողոսկեր և հետո դրսում դուրս գար ջրի երեսը: Այդ գործողությունը արագ կատարում էր պահանջում:

Անցավ մոտավորապես կես ընթացք. Դիկ Սենդի կարծիքով Բաթը դուրս եկած պետք է լիներ, երբ նեգրը հետ եկավ:

– Ինչու վերադարձաք,– բացականչեց Դիկ Սենդը:

– Անցքը փակված է կավահողի կտորներով,– պատասխանեց Բաթը, երբ մի քիչ շունչ առավ:

– Փակվա՞ծ,– կրկնեց Թոմը:

– Այո,– պատասխանեց Բաթը:– Ձուրը, ինչպես երևում է, փափկացրել է կավը... Ես ձեռքով շոշափեցի պատի շուրջը... անցքը չկա:

Դիկ Սենդը գլուխը շարժեց: Ինքն ու ընկերները հերմետիկորեն փակված էին կոնի մեջ, որը գուցե ընկղմվեր ջրի տակ:

– Եթե անցքը փակվել է,– ասաց Հերկուլեսը,– պետք է նորը բաց անել:

– Սպասեցեք,– պատասխանեց պատանին, կանգնեցնելով Հերկուլեսին, որ տապարը ձեռքին՝ պատրաստվում էր ջուրը մտնել:

Դիկ Սենդը մի քանի թույլ մտածելուց հետո ասաց.

– Պետք է այլ միջոց հնարել: Ամբողջ հարցն այն է, թե ջուրը ամբողջովին ծածկո՞ւմ է մրջևանոցը, թե ոչ: Եթե մի փոքր անցք բաց անեինք կոնի գագաթին, հարցը կլուծվեր: Բայց այդ դեպքում ջուրը կարող է ամբողջովին ողողել այն, և մենք կկորչենք: Պետք է ուրեմն զգուշությամբ գործել...

– Բայց և արագ, – պատասխանեց Թոմը:

Իսկապես ջուրը հետզհետե բարձրանում էր: Այդ միջոցին վեց ոտնաչափի էր հասնում ջրի բարձրությունը կոնի ներսում: Բացառությամբ տիկին Ուելդոնի, նրա որդու, կուզեն Բենեդիկտի և Նանի, որոնք վերևի հարկերն էին քաշվել, մյուսներն այժմ ջրի մեջ էին մինչև մեջքը:

Պետք է ուրեմն շտապել, ինչպես առաջարկում էր Դիկ Սենդը:

Որոշվեց կավահողի պատի մեջ մի նոր անցք բաց անել ջրի մակերեսից մեկ ոտնաչափ, այսինքն՝ գետնից յոթ ոտնաչափ բարձրությամբ:

Եթե այդ անցքի միջոցով կոնի օդը հաղորդակցության մեջ մտներ դրսի օդի հետ, ուրեմն կոնը ջրից դուրս էր գտնվում: Եթե ընդհակառակն, այդ անցքը բացվեր դրսի ջրի մակերեսից ցածր աստիճանի վրա, այդ դեպքում ջուրը ներս կխուժեր, և հարկ կլիներ իսկույն փակել անցքը, հակառակ դեպքում ջուրը արագորեն կբարձրանար մինչև կոնի գագաթը: Փակելով այդ անցքը՝ պետք է բաց անեին նորը, մի ոտնաչափ ավելի բարձր, և այդպես շարունակաբար: Բայց եթե վերջապես կոնի ամենաբարձր կետում ևս դրսի օդին չհանդիպեին, ուրեմն դրսում ջուրը բարձրացել էր տասնհինգ ոտնաչափից ավելի, և տերմիտների ամբողջ բնակավայրը ջրի տակ էր մնացել: Այդ դեպքում ի՞նչ հույս կունենային մրջևանոցում բանտարկվածները խուսափելու ամենասուկալիի, շնչահեղձ լինելուց:

Դիկ Սենդը զգում էր այդ բոլորը, սակայն սառնասրտությունը ոչ մի թույլ չկորցրեց: Պատանին լավ կշռադատել էր կատարելիք փորձի բոլոր հետևանքները: Բացի դրանից, ավելի երկար սպասել չէր կարելի: Հեղձամահ լինելն անխուսափելի էր այս նեղ տեղում, որը ամեն թույլ ավելի էր փոքրանում և որը արդեն հագեցել էր ածխաթթվով:

Պատը ծակելու ամենալավ գործիքը, որը կարող էր գործածել Դիկ Սենդը, հրացանի շամփուրն էր, որի ծայրին փողը մաքրելու համար գայլիկոն էր սարքված: Արագ պտտելով այդ գայլիկոնը, կավահողը կծակեին և հետզհետե կբացեին անցքը, որի տրամագիծը հավասար կլիներ ձողիկի տրամագծին, բայց այդքանը բավական կլիներ, որ դրսի օդը ներս հոսեր:

Հերկուլեսը, լապտերը բարձր պահած՝ լուսավորում էր Դիկ Սենդին: Դեռևս մի քանի մոմ կար, և հավանական էր, որ ավելին պետք չէր լինի:

Գործողությունը սկսվելուց մի թույլ հետո շամփուրը հեշտությամբ խրվեց պատի մեջ, և անմիջապես բավական խուլ աղմուկ լսվեց, որը նման էր ջրից դուրս պրծնող օդի պղպջակների հանած աղմուկին: Օդը դուրս էր հոսում, միաժամանակ ջրի մակերեսը բարձրացավ կոնի մեջ և կանգ առավ անցքի մոտ, ուրեմն անցքը շատ ցած, այսինքն՝ դրսի ջրի մակերեսից ցած էր բացված:

– Պետք է նորը բաց անել, – սառնասրտորեն ասաց պատանին, մի բուռ կավահողով իսկույն փակելով անցքը:

Ջուրը նորից կանգ էր առել կոնի մեջ, սակայն ազատ մնացած տարածությունը պակասել էր ուր մատնաչափով: Շնչառությունը դժվարանում էր, քանի որ թթվածինն սկսում էր պակասել: Այդ բանը երևում էր նաև լապտերի լույսից, որը կարմրում և փայլի մի մասը կորցնում էր:

Առաջին անցքից մի ոտնաչափ բարձր Դիկ Սենդը սկսեց երկրորդը բաց անել միևնույն ձևով: Եթե այս անգամ էլ անհաջող լիներ փորձը, ջուրը կրկին կբարձրանար կոնի ներսում... բայց պետք էր ռիսկ անել...

Այն միջոցին, երբ Դիկ Սենդը աշխատեցնում էր գայլիկոնը, հանկարծ լսվեց կուզեն Բենեդիկտի ձայնը, որ բացականչում էր.

– Դե՛, իհարկե... ահա... թե ինչու...

Հերկուլեսը լապտերը բարձրացրեց և լույսը կուզեն Բենեդիկտին ուղղեց, որի դեմքը մեծ գոհունակություն էր արտահայտում:

– Այո, – կրկնեց միջատաբանը, – ահա թե ինչու այս խելացի տերմիտները փախել են մրջնանոցից: Նրանք նախազգացել էին հեղեղումը: Օ՛, բնագոյը, բարեկամներս, բնագոյը: Իսկ տերմիտները մեզանից ավելի խելոք դուրս եկան:

Եվ այդքանը եղավ այն ամբողջ մասնակցությունը, որ ցույց տվեց կուզեն Բենեդիկտը ներկա դրությամբ:

Այդ միջոցին Դիկ Սենդը ետ քաշեց ձողիկը, որը ծակել էր պատը: Մի սուլոց լսվեց, և ջուրը նորից մի ոտնաչափ բարձրացավ կոնի մեջ... Անցքը չէր դուրս եկել դրսի ազատ օդի մեջ:

Դրությունը ահռելի էր: Տիկին Ուելդոնը, որին արդեն գրեթե հասել էր ջուրը, փոքրիկ Ջեկին բարձրացրել էր իր ձեռքերով: Բոլորը շնչահեղձ էին լինում այդ նեղ տեղում, նրանց ականջները տզզում էին, լապտերն արդեն աղոտ լույս էր արձակում:

– Մի՞թե կոնը ամբողջովին ջրի տակ է, – շշնջաց Դիկ Սենդը:

Պետք էր պարզել այդ հարցը և այդ նպատակով երրորդ անցքը բաց անել կոնի գագաթի ամենաբարձր կետում:

Բայց այս անգամ հետևանքը կլիներ շնչահեղձություն, անհապաղ մահ, եթե այս վերջին փորձը ևս անհաջող լիներ: Ներսում մնացած օդը դուրս կհոսեր վերևի անցքից, և ջուրը ամբողջովին կլցվեր կոնի մեջ:

– Տիկին Ուելդոն, – ասաց Դիկ Սենդը, – ձեզ հայտնի է մեր վիճակը, եթե դանդաղենք, շնչելու օդը կվերջանա, եթե երրորդ փորձը ձախողվի, ջուրը կլցնի ամբողջ այս ազատ տարածությունը: Մեզ միայն մի հույս է մնում, որ կոնի գագաթը դուրս մնացած լինի ջրի մակերեսից: Պետք է վերջին փորձն անել, ի՞նչ է ձեր կարծիքը:

– Արա՛, Դի՛կ, – պատասխանեց տիկին Ուելդոնը:

Այդ միջոցին լապտերը հանգավ թթվածնի պակասության պատճառով: Տիկին Ուելդոնն ու նրա ուղեկիցները խոր մթության մեջ թաղվեցին:

Դիկ Սենդը բարձրացել էր Հերկուլեսի ուսերի վրա, որը կառչել էր կողքի խոռոչներից մեկին, և որի գլուխն էր միայն ջրից դուրս մնացել: Տիկին Ուելդոնը, Ջեյը, կուզեն Բենեդիկտը կուչ էին եկել բջիջների վերջին հարկում:

Դիկ Սենդը սկսեց ծակել պատը, և ձողիկը արագորեն խրվեց կավահողի մեջ: Այդտեղ պատը ավելի հաստ և ավելի կարծր լինելով ավելի դժվար էր ծակվում: Դիկ Սենդը շտապում էր և սաստիկ անհանգիստ էր, քանի որ այդ նեղ անցքից էր կախված բոլորի լինելը չլինելը:

Հանկարծ մի սուր սուլոց լսվեց: Խտացած օդը դուրս խուժեց... բայց լույսի ճառագայթը ներս թափանցեց պատի արանքից: Ջուրը միայն ութ մատնաչափ բարձրացավ ու կանգ առավ, և կարիք չեղավ, որ Դիկ Սենդը փակի բացած անցքը: Ներսի և դրսի ջրերի մակերեսների միջև հավասարակշռություն էր հաստատվել: Կոնի գագաթը ջրից դուրս էր մնացել: Տիկին Ուելդոնը և նրա ուղեկիցները փրկված էին:

Անմիջապես, բոլորի միահամուռ ուռայից հետո, որտեղ տիրապետողը Հերկուլեսի ձայնն էր, դանակները գործի դրվեցին, և կոնի առաստաղը հետզհետե քանդվեց: Անցքը լայնանալով մաքուր օդը ներս խուժեց, և միաժամանակ ներս սահեցին ծագող արևի առաջին ճառագայթները: Կոնի գագաթը բացվելուց հետո արդեն հեշտ էր կանգնել նրա պատերի վրա և գտնել ամենայն հեղեղումից զերծ մնացած որևէ ապաստարանի հասնելու միջոցը:

Նախ Դիկ Սենդը ինքը բարձրացավ կոնի գագաթը... ու մի ճիչ արձակեց:

Այդ ժամանակ մի առանձնահատուկ ձայն, որ շատ ծանոթ է աֆրիկյան ճանապարհորդներին՝ նետերի սուլոցը, լսվեց օդում...

Դիկ Սենդը կարողացել էր տեսնել մրջնանոցից հարյուր քայլաչափ հեռու մի ճամբար, իսկ տասը քայլաչափ հեռու, ողողված հովտի վրա՝ բնիկներով բեռնավորված երկար նավակներ:

Այդ նավակներից մեկից էր արձակվել նետերի խուրձը այն թուպեին, երբ պատանու գլուխը երևացել էր անցքից:

Դիկ Սենդը երկու խոսքով ամեն ինչ ասաց իր ընկերներին:

Նա վերցրեց հրացանը և Հերկուլեսի, Ակտեոնի, Բաթի ընկերակցությամբ կրկին երևաց կոնի ծայրին: Եվ բոլորը միասին կրակեցին նավակներից մեկի վրա:

Բնիկներից շատերն ընկան և գոռում-գոչումը՝ ընկերացած կայծքարի հարվածներին, եղավ նրանց հրացանների համազարկի պատասխանը:

Բայց ի՞նչ կարող էին անել Դիկ Սենդը և նրա ընկերները՝ ամեն կողմից իրենց շրջապատող հարյուրավոր աֆրիկացիների դեմ:

Մրջնանոցը գրավվեց գրոհով: Տիկին Ուելդոնին, երեխային, կուզեն Բենեդիկտին և մյուսներին հափշտակեցին և առանց ժամանակ տալու որևէ խոսք ասելու կամ վերջին անգամ միմյանց ձեռք սեղմելու, նրանց բաժանեցին իրարից՝ անկասկած նախապես ստացած հրամանի համաձայն:

Նավակներից մեկը տարավ տիկին Ուելլոնին, փոքրիկ Ջեյկին և կուզեն Բենեդիկտին: Դիկ Սենդը տեսավ, որ նրանք անհետացան ճամբարում:

Իսկ իրեն, Նանին, ծերունի Թոմին, Հերկուլեսին, Բաթին, Ակտեոնին և Օստինին նետեցին մի ուրիշ նավակ, որն ուղղվեց բլրի մի ուրիշ կողմը:

Քսան բնիկներ կային այդ նավակում, իսկ հինգ նավակ հետևում էին նրան: Դիմադրել հնարավոր չէր, բայց և այնպես Դիկ Սենդն ու նրա ընկերները փորձեցին դիմադրել, վիրավորելով քարավանի մի քանի զինվորների, և անշուշտ իրենք էլ կզոհվեին, եթե խիստ հրաման չլիներ՝ խնայել նրանց կյանքը:

Մի քանի թուփերում նավակները ափ հասան, բայց այն թուփին, երբ նրանց նավակը մոտեցել էր ցամաքին, Հերկուլեսը մի անդիմադրելի ուստյունով դուրս թռավ: Բնիկներից երկուսը նրա վրա ընկան, բայց հսկան հրացանը լախտի նման շարժելով՝ այնպես հարվածեց, որ երկու բնիկները գետին տապալվեցին՝ ջախջախված գանգերով:

Մի թուփ հետո Հերկուլեսը անհետացավ ծառերի հետևը, գնդակների տարափի տակ, այն թուփին, երբ Դիկ Սենդը և նրա ընկերները ցամաք դուրս բերվելով շղթայվեցին ստրուկների նման:

VII. Ճամբար Կուանգա գետի ափին

Ողողումից հետո, որը լճի էր վերածել այն հովիտը, որտեղ գտնվում էր տերմիտների ավանը, երկրի տեսքը բոլորովին փոխվել էր: Քսանի չափ մրջնանոցներ ջրից դուրս էին ցցել իրենց գագաթները, դրանք միակ բարձունքներն էին այս ընդարձակ ավազանի մեջ:

Կուանգա գետը հունից դուրս էր եկել գիշերը, փոթորկից վարարած վտակների ավելացած ջրի պատճառով:

Կուանգան՝ Անգոլայի գետերից մեկը, թափվում էր Ատլանտյան օվկիանոսը «Պիլիգրիմի» աղետի վայրից հարյուր մղոն հեռու: Այդ գետն է, որ լեյտենանտ Քամերոնը անցավ մի տարի հետո, Բենգուելյա հասնելուց առաջ: Կուանգային վիճակված էր լինել պորտուգալական գաղութի այդ շրջանի ներքին փոխադրական միջոցը: Նավերը բարձրանում են գետի ստորին մասով և տասը տարի չանցած կբարձրանան նաև վերին հոսանքը:

Դիկ Սենդը միանգամայն խելացի էր շարժվել, երբ դեպի հյուսիս հոսող նավարկելի գետ էր փնտրել: Այն գետակը, որին նա հետևել էր, Կուանգան էր թափվում: Եթե չլիներ այդ հանկարծակի հարձակումը, որից ոչ մի բանով նախագգուշացված չէր, նա այդ գետը կգտներ մեկ մղոնի վրա, նրա ընկերները և ինքը հեշտությամբ լաստ պատրաստելով կնավարկեին, և շատ հավանական է, որ Կուանգա գետի հոսանքով կիջնեին մինչև պորտուգալական բնակավայրերը, որտեղ կանգ են առնում շոգենավերը: Այնտեղ նրանք փրկված կլինեին:

Սակայն իրերը այլ կերպ դասավորվեցին:

Դիկ Սենդի տեսած ճամբարը հաստատված էր այդ մրջնանոցի հարևան բարձունքի վրա, այն մրջնանոցի, որտեղ, ասես թակարդի մեջ, չար բախտը բերել ձգել էր նրանց: Այդ բլրի գագաթին բարձրանում էր մի ահագին ժանտաթգենի, որն

իր տարածված ճյուղերի տակ հեշտությամբ կտեղավորեր հինգ հարյուր մարդ: Ով չի տեսել Կենտրոնական Աֆրիկայի այդ հսկա ծառերը, չի կարող գաղափար ունենալ նրանց մասին: Նրանց ճյուղերը այնպիսի անտառ են առաջացնում, որ կարելի է մոլորվել այնտեղ: Մի քիչ ավելի հեռու, խոշոր հնդկաթզենիներից այնպիսիները, որոնց սերմերը չեն վերափոխվում պտղի, լրացնում էին այդ ընդարձակ տեսարանի շրջանակը:

Այդ ժանտաթզենու տակ կանգ էր առել մի ամբողջ քարավան, այն քարավանը, որի մասին Հարրիսը հայտնել էր Նեգրոյին: Այդ բազմաթիվ նեգրերը, որոնց հափշտակել էին Ալվեցի գործակալները նրանց բնակավայրերից, գնում էին դեպի Կազոնդեի շուկան: Այնտեղից, ըստ կարիքի, նրանք կուղարկվեին կամ արևմտյան ծովափի բարաքները, կամ Նիանգվե՝ Մեծ լճերի շրջանը, որպեսզի նորից ուղարկվեին կամ Վերին Եգիպտոս և կամ Չանգիբարի ֆակտորիաները:

Ճամբար հասնելուց անմիջապես հետո Դիկ Սենդի և նրա ընկերների հետ վարվեցին այնպես, ինչպես ստրուկների հետ:

Նեգրական ծագում ունեցող ծերունի Թոմի, նրա որդու, Օստինի, Ակտեոնի և խեղճ Նանի հետ, թեև նրանք աֆրիկյան ցեղին չէին պատկանում, վարվում էին այնպես, ինչպես բնիկ ստրուկների հետ: Նրանց զինաթափ անելուց հետո, հակառակ նրանց համառ դիմադրության, ամեն մի գույգի վզերին անցկացրին կալանդ՝ վեց ոտնաչափ երկարությամբ մի ձող, որի երկու ծայրերը կորացած էին և ամրացած երկաթե կեռով: Այդպիսով նրանք ստիպված էին քայլել մի շարքի վրա, մեկը մյուսի հետևից, առանց մի քայլ աջ կամ ձախ թեքվելու: Ավելի ապահով լինելու համար ծանր շղթայով կապել էին նրանց մեջքից: Ազատ էին մնում միայն նրանց ձեռքերը՝ բռն տանելու, և ոտքերը քայլելու, բայց ոչ փախչելու համար: Այդ ձևով նրանք հարյուրավոր մղոններ պետք է կտրեին՝ հավիլդարի մտրակի հարվածների տակ:

Մի կողմ քաշված, ընկճված՝ նեգր զինվորների դեմ մղած պայքարի առաջին տպավորությունից, նրանք պառկել էին գետնի վրա և ոչ մի շարժում չէին անում: Ինչպես չէին կարողացել փախչել Հերկուլեսի հետ: Բայց և այնպես ի՞նչ հույս կարող էր ունենալ փախստականը: Ինչքան էլ ուժեղ լինեք, ի՞նչ կլինեք նրա դրոշմները այդ անհյուրընկալ երկրում, որտեղ քաղցը, մեկուսացումը, վայրի գազանները, բնիկները, ամեն ինչ նրա դեմ էին: Մի՞թե շուտով Հերկուլեսը չէր նախանձի իր ընկերների վիճակին, թեև վերջիններս էլ ոչ մի ներողամտություն չէին կարող սպասել քարավանի պետերից՝ ազգությամբ արաբ կամ պորտուգալացի, որոնց լեզուն նրանք չէին հասկանում, և որոնք նրանց հետ կապ էին պահպանում միայն սպառնալի հայացքներով և շարժումներով:

Դիկ Սենդին չէին կապել որևէ ուրիշ ստրուկի հետ: Որպես սպիտակամորթի, անկասկած, չէին համարձակվել նրան էլ ենթարկել ընդհանուր ռեժիմին: Չինաթափ էին արել, բայց ձեռքերն ու ոտքերը ազատ էին թողել, սակայն հավիլդարներից մեկը հատկապես նրան էր հսկում: Պատանին դիտում էր ճամբարը և ամեն րոպե սպասում, որ ահա, մի տեղից կերևան Նեգրոն և Հարրիսը... բայց այդ հույսը չիրականացավ: Սակայն նա ոչ մի կասկած չուներ, որ այդ չարագործներն էին կազմակերպել մրջնանոցի վրա կատարված հարձակումը:

Այդ պատճառով էլ նա մտածում էր, թե տիկին Ուելդոնին, փոքրիկ Ջեկին և կուզեն Բենեդիկտին տարած կլինեին մյուսներից անջատ՝ ամերիկացու կամ պորտուգալացու կարգադրությամբ և այս վերջիններից ո՛չ մեկին, ո՛չ մյուսին չտեսնելով, ինքն իրեն ասում էր, թե երկու դավադիրները գուցե ուղեկցում էին իրենց զոհերին: Ո՛ր էին տանում նրանց: Ի՞նչ կանեին նրանց. ահա պատանու

ամենածանր հոգսը: Դիկ Սենդը մոռանում էր իր սեփական վիճակը և մտածում միայն տիկին Ուելչոնի և Նրա հարազատների մասին:

Վիթխարի ժանտաթզենու տակ բանակած ճամբարը ութ հարյուր հոգուց պակաս էր, որոնցից հինգ հարյուրը երկու սեռի ստրուկներ, երկու հարյուր զինվորներ, մեկ հարյուրն էլ բեռնակիրներ, ավարառուներ, պահակներ, հավիլդարներ, գործակալներ կամ պետեր էին:

Պետերը բնիկ արաբ կամ պորտուգալացիներ էին: Դժվար է երևակայել, թե ինչպիսի դաժան վերաբերմունք ունեին այս ոչ մարդկային արարածները իրենց կալանավորների նկատմամբ: Նրանց ծեծում էին անընդհատ, իսկ այնպիսիներին, որոնք ընկնում էին ուժասպառ ու հյուծված, շուկա հանելու անպետք վիճակում, վերջացնում էին հրացանի կրակոցով կամ դանակի հարվածներով: Կալանավորներին պահում էին սարսափի տակ, բայց այդ սիստեմի հետևանքն այն էր լինում, որ քարավանը տեղ հասնելիս, ստրուկների հիսուն տոկոսը պակասում էր ընդհանուր թվից. դրանց մի մասին հաջողվում էր փախչել ճանապարհին, իսկ մյուս մասի ոսկորները թափվում էին ճանապարհի երկարուղյամբ:

Պարզ էր, որ եվրոպական ծագում ունեցող գործակալները, մեծ մասամբ պորտուգալացիներ, սրիկաներ էին՝ իրենց երկրից արտաքսվածներ, դատապարտվածներ, բանտից փախածներ, կախաղանից պրծած նախկին գերեվաճառներ, մի խոսքով, մարդկության տականքն էին: Այդպիսիք էին Նաև Նեգորոն և Հարրիսը, որոնք այժմ ծառայության մեջ էին Կենտրոնական Աֆրիկայի ամենահայտնի գերեվաճառներից մեկի՝ Խոզե-Անտոնիո Ալվեցի մոտ, որի մասին հետաքրքիր տեղեկություններ է տվել Քամերոնը:

Կալանավորներին ուղեկցող զինվորները ընդհանրապես գերեվաճառների հաշվին ապրող բնիկներ էին: Սակայն այդ ավարառությունը միայն գերեվաճառների մենաշնորհը չէր: Նեգր թագավորները նույնպես միմյանց դեմ վայրագ պատերազմ էին մղում միևնույն նպատակով, որի հետևանքով պարտված չափահաս մարդկանց, կանանց և երեխաներին ստրկացնելով հաղթողները նրանց վաճառում էին գերեվաճառներին մի քանի մետր չթի, վառողի, հրազենի, վարդագույն կամ կարմիր հուլունքի և հաճախ նույնիսկ, ինչպես ասում է Լիվինգսթոնը, սովի տարիներին եգիպտացորենի մի քանի հատիկի փոխարեն:

Ծերունի Ալվեցի քարավանին ուղեկցող զինվորները ստույգ գաղափար կարող էին տալ աֆրիկյան բանակի մասին:

Դա նեգր բանդիտների մի խուժան էր՝ կիսամերկ, զինված կայծքարե հրացաններով, որոնց փողին հագցված էին բազմաթիվ պղնձե օղակներ: Այդպիսի պահակախմբի հետ, որին միանում են նրանցից ոչ պակաս բանդիտ-ավարառուները, գործակալները հաճախ մեծ վեճեր էին ունենում: Նրանք շատ անգամ չէին կատարում գործակալների հրամանները, իրենք էին որոշում դադարների տեղն ու ժամը, սպառնում էին հեռանալ և հազվադեպ չէ, որ գերեվաճառները ստիպված էին լինում տեղի տալ այդ հրոսակների պահանջներին:

Թեև ստրուկները, տղամարդ կամ կին, ընդհանրապես պարտավոր են բեռներ տանել քարավանի երթի միջոցին, բայց և այնպես կան որոշ թվով «բեռնակիրներ», որոնց առհասարակ կոչում են «պագացի»: Նրանց վրա բարձում են թանկագին իրերի հակերը, գլխավորապես փղոսկրը: Երբեմն փղերի ատամների մեծությունը այնպիսի չափերի է հասնում, որ նրանց մեջ երեսուն կիլոգրամ քաշ ունեցողներ են

պատահում, ուստի պետք էր լինում երկու պագացի դրանք մինչև ֆակտորիա տանելու համար, որտեղից այդ թանկագին ապրանքը ուղարկվում էր Խարթումի, Չանգիբարի և Նաթալի շուկաները: Տեղ հասնելով՝ այդ պագացիներին վճարում են պայմանավորված վարձը, որը լինում է մի քանի մետր չիթ կամ «մերիկանի» կոչված բամբակե հյուսվածքը, մի քիչ վառող, մի բուռ խեցի, որը այդ երկրում որպես դրամ է գործածվում, մի քանի հուլունք կամ նույնիսկ այն ստրուկները, որոնց դժվար է վաճառել, եթե գերեվաճառը ուրիշ դրամ չունի վճարելու:

Այդ քարավանի հինգ հարյուր հոգու մեջ հասակն առած քիչ տղամարդիկ կային: Դրա պատճառն այն էր, որ ավարառությունը վերջացնելուց և գյուղը հրկիզելուց հետո քառասունից բարձր բոլոր տղամարդկանց անխնա կոտորում են կամ մոտակա ծառերից կախում: Միայն երկու սեռի երիտասարդներն ու երեխաներն են հատկացվում շուկա հանելու նպատակին: Այդ մարդորսություններից հետո տասից մեկը հազիվ է կենդանի մնում: Այդպես է բացատրվում այն ահռելի մարդագրկությունը, որն անապատների է վերածում հասարակածային Աֆրիկայի ընդարձակ տարածությունները:

Այդ քարավանի չափահասների ու երեխաների «հագուստը» կազմված էր ծառի կեղևից պատրաստված քուրջի կտորից, որը տեղական լեզվով «մբուզու» էր կոչվում: Այդպիսով, աներևակայելի ողբալի էր մարդկային արարածների այդ հոտի վիճակը: Հոտը կազմված էր կանանցից, որոնց մարմինները ծածկված էր հավիլդարների մտրակի հարվածներից առաջացած վերքերով, վտիտ, նիհար, արնոտ ոտքերով երեխաներից, որոնց մայրերը փորձում էին տանել բեռի հետ միասին, երիտասարդներից, որոնք ամրացված էին աքսորական շղթայից ավելի տանջալի երկժանի ձողին: Այո, այդ գրեթե կիսամեռ արարածների, այդ «Էբենուսե կմախքների» տեսքը նույնիսկ վայրի գազանների գուրքը կշարժեր, սակայն այդքան թշվառության դեմ անզգա էին մնում քարսիրտ արաբները և պորտուգալացիները, վերջիններս, եթե հավատանք լեյտենանտ Քամերոնին, շատ ավելի դաժան են /Ահա թե ինչ է ասում Քամերոնը. «Որպեսզի ձեռք բերվեն այս հիսուն կանայք, որոնք իբր թե պատկանում էին Ալվեցին, տասը ավան ավերվեցին... Տասը ավան, որոնցից յուրաքանչյուրը հարյուրից երկու հարյուր բնակիչ ուներ, ընդհանուր թվով՝ հազար հինգ հարյուր հոգի, նրանցից մի քանիսը կարողացել էին փախչել, բայց մեծ մասը, գրեթե բոլորը, ոչնչացան բոցերի մեջ, սպանվեցին պաշտպանելով իրենց ընտանիքը, կամ քաղցից մեռան ջուղկներում, կամ վայրի գազանները վերջ տվին նրանց տանջանքներին: ... Այս ոճիրները, որոնք տեղի են ունեցել Աֆրիկայի կենտրոնում այն մարդկանց կողմից, որոնք քրիստոնյա անուն են կրում և պորտուգալացի են համարվում, անհավատալի կթվար քաղաքակիրթ երկրների բնակիչներին: Անկարելի է, որ Լիսաբոնի կառավարությունը տեղեկություն չունենա այն վայրագությունների մասին, որոնք գործադրված են իր դրոշակը կրող մարդկանց կողմից, և սրանք պարծենում են, որ նրա հպատակներն են»: («Աշխարհի շուրջը») Հ. Գ. Պորտուգալիայում խիստ բողոքներ կան Քամերոնի այս հավաստումների դեմ: /:

Ավելորդ է ասել, թե՛ երթի և թե՛ դադարների միջոցին կալանավորները խիստ հսկողության տակ էին լինում: Ուստի Դիկ Սենդը հասկացավ, որ փախչելու փորձ իսկ չպետք է աներ: Ուրեմն ինչպե՞ս վերստին տեսնի տիկին Ուելդոնին: Ոչ մի կասկած չկար, որ նրան և երեխային տարել էր Նեգորոն: Թե ինչ նպատակով պորտուգալացի երիտասարդ կնոջը բաժանել էր նրա ուղեկիցներից է դեռևս պարզ չէր պատանու համար, սակայն նա չէր կարող կասկածել, թե Նեգորոյի մատը խառը չէ այդ գործին, և նրա սիրտը կծկվում էր, երբ մտածում էր տիկին Ուելդոնին սպասող վտանգների մասին:

«Ա՛խ,— ասում էր նա ինքն իրեն,— երբ մտածում եմ, թե այդ երկու չարագործները՝ թե՛ մեկը և թե՛ մյուսը, իմ հրացանի առաջ էին կանգնած, և ես չսպանեցի՝ նրանց...»:

Այդ միտքն էր, որ հաճախ այնքան համառորեն կրկնվում էր Դիկ Սենդի գլխում: Ինչքա՛ն դժբախտություններ կվերացաներ մեջտեղից Հարրիսի և Նեգորոյի մահը, արդարացի մահը: Ինչքա՛ն դժբախտություններ պակաս կլինեին նրանց համար, որոնց մարդկային մսի այդ միջնորդները ստրուկներ էին դարձրել:

Տիկին Ուելդոնի և փոքրիկ Ջեկի վիճակի բոլոր սարսափները իսկույն ներկայանում էին Դիկ Սենդի առջև: Ո՛չ մայրը, ո՛չ զավակը ոչ մի հույս չէին կարող ունենալ կուզեն Բենեդիկտի վրա: Խեղճ մարդը հազիվ իր գլուխը պահեր: Անտարակույս, երեքին էլ քարշ էին տալիս Անգուլայի որևէ հեռավոր շրջանը, բայց ո՞վ էր տանում դեռևս հիվանդ երեխային:

«Մայրը, այո, մայրը,— կրկնում էր Դիկ Սենդը,— նա ուժերը վերստացած կլինի երեխայի համար: Նա արած կլինի այն, ինչ որ անում են այս դժբախտ ստրուկները, և ճանապարհին կընկնի նրանց նման: Ա՛խ, եթե աստված տա այդ չարագործների դեմ-դիմաց կանգնեմ, ես գիտեմ...»:

Բայց պատանին կալանավոր էր: Նրան մի գլուխ էին հաշվում այս նախիրի մեջ, որը հավիլդարները քշում էին Աֆրիկայի խորքերը: Դինգոն էլ այդտեղ չէր, որպեսզի կարողանար Նեգորոյի հետքը գտնել, հայտներ նրա մոտենալը: Միայն Հերկուլեսը կարող էր օգնության հասնել տիկին Ուելդոնին, բայց մի՞թե այդպիսի հրաշք կարելի էր հուսալ:

Դիկ Սենդը, այնուամենայնիվ, կառչում էր այդ մտքից: Կրկնում էր մտքում, որ հուժկու Նեգրը ազատ է: Նրա անձնվիրության նկատմամբ ոչ մի տարակույս չէր կարող լինել: Ինչ որ մարդկային ուժերից վեր չէր՝ Հերկուլեսը կաներ տիկին Ուելդոնի համար: Այո, Հերկուլեսը կփորձեր գտնել նրանց հետքերը և հարաբերության մեջ մտնել նրանց հետ կամ եթե այդ հետքը չգտներ, կփորձեր հաղորդակցվել իր՝ Դիկ Սենդի հետ և գուցե իրեն փախցներ, ազատեր: Գիշերվա դադարներին, իր նման սև ստրուկներին խառնվելով գուցե կարողանար զինվորների զգոնությունը խաբել, հասնել իր մոտ, քանդել կապերը, տանել անտառ, և երկուսով միասին ազատ լինելով ինչե՛ր չէին կարող անել տիկին Ուելդոնի փրկության համար: Այնուհետև գետի հոսանքով կարող էին հասնել միևնույն ծովափ, որից հետո Դիկ Սենդը հաջողության նոր շանսերով և դժվարությունների ավելի մեծ ծանրությամբ վերստին կձեռնարկեր իր ծրագրի իրագործմանը, որը, դժբախտաբար, ընդհատվեց բնիկների հարձակումով:

Այդպիսով, պատանին հաջորդաբար մեկ հուսահատվում էր, մեկ հուսադրվում. բայց ավելի շուտ նա չէր ընկճվում շնորհիվ անսպառ եռանդի, և շարունակ իրեն պատրաստ էր պահում ամենափոքր պատեհ առիթից օգտվելու համար:

Նախ և առաջ պետք էր տեղեկանալ, թե դեպի ո՞ր շուկան էին տանում գործակալները ստրուկների քարավանը: Դեպի Անգուլայի ֆակտորիանե՞րը, և մի քանի էտապով կհասնեի՞ն, թե դեռևս մի քանի հարյուր մղոն տեղ պետք է գնային Կենտրոնական Աֆրիկայի ճանապարհներով: Գերեվաճառների գլխավոր շուկան Նիանգվեն էր, որը գտնվում է աֆրիկյան մայրցամաքը երկու հավասար մասի բաժանող միջօրեականի այն կետում, որտեղ տարածվում է Մեծ լճերի շրջանը, և որտեղ այդ միջոցին գտնվում էր Լիվինգսթոնը: Սակայն Կուանգայից մինչև այդ շուկան երկար էր ճանապարհը, ամիսների խնդիր էր այնտեղ հասնելը:

Ահա թե ինչու էր Դիկ Սենդին ամենից ավելի մտահոգում դա, քանի որ Նիանգվե հասնելուց հետո, եթե Նույնիսկ տիկին Ուելդոնը, Հերկուլեսը, մյուս Նեգրերը և ինքը կարողանային փախչել, ապա ինչքա՞ն դժվար, եթե ոչ անհնարին, կլիներ ծովափ վերադառնալ այնքան վտանգների միջով:

Սակայն Դիկ Սենդը շուտով համոզվեց, որ քարավանը չէր ուշանա տեղ հասնել: Թեև չէր հասկանում քարավանի պետերի խոսած լեզուն, որը կամ արաբերեն էր, կամ աֆրիկյան ինչ-որ բարբառ, բայց և այնպես նկատեց, որ խոսակցության ընթացքում հաճախ այդ շրջանի կարևոր մի շուկայի անունն էին տալիս: Խոսքը Կազոնդեի մասին էր, և նրան քաջ հայտնի էր, որ այնտեղ ստրուկների մեծ առևտուր էր լինում: Պատանին, բնականորեն, մտածեց, թե այդ շուկայում կվճռվեր կալանավորների բախտը՝ կամ ի նպաստ այդ շրջանի թագավորի, կամ երկրի հարուստ գերեվաճառներից մեկի: Մեզ հայտնի է, որ նա չէր սխալվում:

Պետք է ասել, որ Դիկ Սենդը ծանոթ լինելով ժամանակակից աշխարհագրության տվյալներին՝ բավական ճիշտ տեղեկություններ ուներ Կազոնդեի մասին: Սան-Պաուլո դե Լուանգայից մինչև այդ քաղաքը եղած տարածությունը չորս հարյուր մղոնից ավելի չէր, և, հետևապես, Կուանգա գետի ափին տրված ճամբարից մինչև այդ շուկան հեռավորությունը ամենաշատը երկու հարյուր հիսուն մղոն կլիներ: Դիկ Սենդն այդ հաշիվները մոտավոր տվյալներով էր անում՝ հիմք ունենալով այն ճանապարհը, որն անցել էր փոքր խումբը Հարրիսի առաջնորդությամբ: Սովորական պայմաններում այդ տարածությունը կարելի էր անցնել տասից տասներկու օրում: Սակայն նկատի ունենալով արդեն երկար ճանապարհ անցած քարավանի հոգևած վիճակը՝ պետք էր կրկնապատկել այդ ժամանակը, ուրեմն կարելի էր ասել, թե երեք շաբաթում քարավանը կհասներ Կազոնդե: Դիկ Սենդը շատ էր ցանկանում այդ խոհերին մասնակից դարձնել նաև Թոմին և մյուս ընկերներին: Նրանց համար որոշ թեթևացում կլիներ, եթե իմանային, թե իրենց չէին քարշ տա Կենտրոնական Աֆրիկա, այն չարագույժ շրջանները, որտեղից դուրս գալու ոչ մի հույս չկա: Բավական էր նրանց մոտով անցնելիս երկու թռուցիկ խոսք բաց թողնել, որպեսզի նրանք տեղյակ լինեին իրերի դրությանը: Հնարավոր էր արդյոք այդ բանը:

Թոմը և Բաթը, դիպվածը միացրել էր հորը և որդուն, Ակտեոնը և Օստինը գույգ-գույգ միմյանց կապված, գտնվում էին ճամբարի աջ ծայրին: Մի հավիլդար և տասներկու զինվոր հսկում էին նրանց:

Դիկ Սենդը, որ կաշկանդված չէր և կարող էր ազատ շարժվել, որոշեց քիչ-քիչ մոտենալ իր ընկերներին, որոնք հիսուն քայլի վրա էին գտնվում: Այդպես էլ սկսեց շարժվել:

Շատ հավանական է, որ ծերունի Թոմը գուշակեց Դիկ Սենդի միտքը: Ցածր ձայնով նախազգուշացրեց ընկերներին, որ ուշադիր լինեն: Նրանք տեղից չշարժվեցին, բայց այնպիսի դիրք ստացան, որ կարողանան լսել:

Քիչ հետո Դիկ Սենդը անտարբեր դեմքով քսանհինգ քայլի չափ առաջ գնաց: Իր կանգնած տեղից նա կարող էր բղավել և լսելի լինել Թոմին, տալով Կազոնդեի անունը, ինչպես նաև ասել, թե մոտավորապես ինչքան կտևեր ուղևորությունը: Սակայն ավելի լավ էր լրացնել տեղեկությունները և նրանց հետ համաձայնեցնել, թե ուղևորության ընթացքում ինչ դիրք բռնեն: Պատանին շարունակեց մոտենալ, նրա սիրտը արդեն արագ բաբախում էր, արդեն մոտեցել էր և միայն մի քանի քայլ էր մնացել նպատակին հասնելու համար, երբ հավիլդարը կարծես գուշակելով նրա մտադրությունը՝ հարձակվեց պատանու վրա: Այդ խելագարի բարձրացրած աղաղակի վրա տասը զինվորներ վազեցին և Դիկ Սենդին կոպտորեն ետ քշեցին, իսկ Թոմին և մյուսներին քշեցին ճամբարի մյուս ծայրը:

Սաստիկ զայրացած Դիկ Սենդը հարձակվեց հավիլդարի վրա, կարողացավ նրա ձեռքից խլել հրացանը և փորձեց շարդել, սակայն յոթ կամ ութ զինվոր միանգամից հարձակվեցին, և նա ստիպված էր տեղի տալ: Կատաղած զինվորները կսպանեին նրան, եթե քարավանի պետերից մեկը՝ բարձրահասակ, վայրագ դեմքով մի արաբ, նրանց չկասեցներ: Այդ արաբը այն Իբն Խամիսն էր, որի մասին խոսել էր Հարրիսը: Նա մի քանի խոսք ասաց, որը Դիկ Սենդը չկարողացավ հասկանալ, իսկ զինվորները, ստիպված լինելով ձեռքից բաց թողնել որսը՝ հեռացան:

Պարզ էր, որ մի կողմից խստիվ արգելված էր պատանուն հարաբերություն ունենալ իր ընկերների հետ և մյուս կողմից պատվիրված էր, որ նրա կյանքին ոչ մի վտանգ չհասնի: Ո՞վ կարող էր այդպիսի կարգադրություններ անել, եթե ոչ Հարրիսը և Նեգորոն:

Այդ բոլորին, ամսի 19-ի առավոտյան ժամը ինն էր, հնչեցին եղջերափողի զիլ և թմբուկի բամբ ձայները. դադարը վերջանում էր:

Բոլորը՝ պետ, զինվոր, բեռնակիր, ստրուկ, իսկույն ոտքի կանգնեցին: Բեռի հակերը վերցնելով կալանավորներից մի քանի խումբ կազմեցին, հավիլդարի ղեկավարությամբ, որը պարզեց խայտաբղետ մի դրոշակ:

Մեկնումի նշանը տրվեց: Սկսվեց մի երգ, բայց այդ երգը ոչ թե հաղթողների, այլ պարտվողների միամիտ հավատով համակված երգ էր, որով այդ դժբախտ մարդիկ ծառանում էին իրենց կեղեքիչների և դահիճների դեմ.

«Դուք ինձ քշում եք ստրկության, ուժը ձեր ձեռքումն է, բայց ես շուտով կմեռնեմ. մահը կփրկի տանջանքից: Սակայն ես մեռած տեղից էլ կբարձրանամ ու կսպանեմ ձեզ»:

VIII. Դիկ Սենդի հուշատետրից

Թեև նախորդ օրվա փոթորիկը հանդարտվել էր, սակայն եղանակը դեռևս շատ խառն էր: Այդ միջոցին սկսվում էր «մագիկան»՝ աֆրիկյան անձրևային եղանակների երկրորդ շրջանը: Հատկապես գիշերները անձրևային կլիմեին մեկ, երկու կամ երեք շաբաթ, որի հետևանքով ավելի կոժվարանար քարավանի խղճալի դրությունը:

Այդ օրը քարավանը մեկնեց ամպամած եղանակով և Կուանգա գետից հեռանալուց հետո գրեթե ուղիղ դեպի արևելք շարժվեց:

Մի հիսնյակ զինվոր գնում էր առջևից, մոտավորապես հարյուրական՝ կողքերից, իսկ մնացածը՝ հետևից: Այդ պայմաններում փախչելը շատ դժվար էր, եթե նույնիսկ կալանավորները շղթայակապ չլինեին: Կանայք, երեխաները, տղամարդիկ գնում էին խառնիխուռն, իսկ հավիլդարները նրանց շտապեցնում էին մտրակի հարվածներով: Այնպիսի խեղճ մայրեր կային, որոնք քայլելիս կերակրում էին կրծքի երեխային, իսկ ազատ ձեռքով էլ մյուսին տանում, ոմանք էլ մերկ, ոտաբոբիկ երեխաներին էին քարշ տալիս սրածայր խոտերով ծածկված գետնի վրայով:

Քարավանի պետը՝ այդ վայրագ Իբն Խամիսը, որ միջամտել էր Դիկ Սենդի և հավիլդարի կռվին, հսկում էր այդ ամբողջ հոտի վրա, երկար շարքի մի ծայրից

մյուսը գնալ-գալով: Նրա գործակալներն ու ինքը շատ քիչ էին զբաղվում կալանավորների խղճուկ վիճակով, նրանց համար շատ ավելի նշանակություն ունեին զինվորները, որոնք լրացուցիչ ուսուցիչ էին պահանջում, կամ պագացիները՝ բեռնակիրները, որոնք կանգ առնել էին ուզում: Այդ հողի վրա հաճախ վեճեր էին ծագում, որոնք նույնիսկ կռվով էին վերջանում: Ստրուկները կրում էին նաև հավիլոթարների մշտական զայրույթից առաջացող պատիժը: Անընդհատ լսվում էր մի կողմից սպառնալիքը, մյուս կողմից վշտի աղաղակը, և վերջին շարքերում քայլողները կոխոտում էին առաջինների արյունով ներկված հողը:

Դիկ Սենդի ընկերները, որոնք խիստ հսկողության տակ էին առաջին շարքերում, ոչ մի հարաբերություն չէին կարող ունենալ նրա հետ:

Նրանք գնում էին միմյանց հետևից, վզերը անցկացրած այն ծանր երկժանու մեջ, որը գլխի ոչ մի շարժում չէր թույլատրում: Մտրակը նրանց նկատմամբ նույնքան անխնա էր, ինչքան նրանց մյուս դժբախտ ընկերների նկատմամբ:

Բաթը, կապված իր հոր հետ, քայլում էր նրա առջևից, աշխատելով չցնցել լուծը, ոտքը դնելով գետնի վրա մեծ զգուշությամբ, որպեսզի հայրը կարողանա ավելի հանգիստ քայլել: Մեկ-մեկ, երբ հավիլոթարը մի քիչ ետ էր մնում, Բաթը մի քաջալերական խոսք էր ասում, որից մի քանիսն էր միայն լսում ծերունի Թոմը: Որդին նույնիսկ դանդաղեցնում էր քայլերը, երբ զգում էր, թե Թոմը հոգնել էր: Չավակի համար տանջանք էր, որ չէր կարողանում գլուխը դարձնել այնքան սիրելի հոր կողմը: Ճիշտ է, Թոմը ավելի բախտավոր էր, որ կարողանում էր տեսնել տղային, բայց ինչպիսի գնով էր այդ բախտավորությունը: Քանի՞-քանի՞ անգամ արցունքի խոշոր կաթիլները կաթել էին աչքերից, երբ հավիլոթարի մտրակը իջել էր Բաթի վրա: Նրա համար այդ ավելի վատ էր, քան եթե այդ հարվածներն ինքն ընդուներ:

Օստինը և Ակտենը մի քանի քայլ հետևում էին՝ կապված միմյանց և խոշտանգվում էին ամեն թույլ: Ա՛խ, ինչքա՛ն նախանձում էին նրանք չերկուլեսին: Ինչպիսի վտանգների էլ ենթարկված լինել նա այս վայրենի երկրում, գոնե կկարողանար գործադրել իր ուժը և պաշտպանվել:

Իրենց գերության առաջին թույլների ծերունի Թոմն ընկերներին վերջապես հայտնել էր ամբողջ ճշմարտությունը: Ամենամեծ զարմանքով նրանք տեղեկացան, որ Աֆրիկայում են գտնվում, որ Նեգորոյի և Հարրիսի կրկնակի դավաճանությունը նրանց նախ բերել էր այնտեղ, հետո էլ ներս քաշել, և որ ոչ մի ներողամտություն չէր կարելի սպասել իրենց տերերից:

Պակաս վատ չէին վարվում նաև Նանի հետ: Նա գնում էր կանանց խմբի հետ, քարավանի մեջտեղում: Նրան շղթայել էին երկու երեխայի տեր մոր հետ. երեխաներից մեկը ծծկեր էր, մյուսը՝ երեք տարեկան և հագիվ կարողանում էր քայլել: Նանը, խղճալով նրանց, հանձն էր առել այդ փոքրիկի խնամքը, և խեղճ ստրկուհին արցունքն աչքերին շնորհակալություն էր հայտնել: Այդպիսով Նանը գրկել էր երեխային՝ ազատելով նրան ոչ միայն հոգնածությունից, որին չէր դիմանա, այլև հավիլոթարի հարվածներից: Բայց երեխան ծանր բեռ էր պառավ նանի համար, խեղճ կինը վախենում էր, թե ուժերը շուտով կդավաճանեին և այդ թույլների մտածում էր փոքրիկ Ջեկի մասին: Նա նրան պատկերացնում էր մոր գրկում, հիվանդությունից նիհարած, բայց և այնպես ծանր կլինել տիկին Ուելդոնի թույլ թևերի համար: Որտե՞ղ էր նա այժմ: Ի՞նչ վիճակում էր: Պառավ աղախինը կտեսնե՞ր նրան արդյոք:

Դիկ Սենդին դրել էին քարավանի վերջում: Նա չէր կարողանում տեսնել ո՛չ Թոմին, ո՛չ մյուս նեգրերին, ո՛չ էլ Նանին: Երկար քարավանի գլուխն էր կարողանում տեսնել միայն, երբ անցնում էին հարթավայրով: Նա քայլում էր՝ տխուր մտքերին անձնատուր եղած, որից սթափեցնում էին գործակալների ճիչերը: Նա ո՛չ իր մասին էր մտածում, ո՛չ էլ այն դժվարությունների, որոնց դեռ պետք է ենթարկվեր, ո՛չ այն տանջանքների մասին, որ գուցե Նեգրոն վերապահել էր նրան: Միայն տիկին Ուելդոնի մասին էր մտածում: Պատանին իգուր էր գետնին, արահետների փշերի վրա, ծառերի ցածր ճյուղերին, փնտրում նրանից որևէ հետք: Դիկին հայտնի էր, որ բացի այդ ճանապարհից, Կուանգայից դեպի Կազոնդե, ուրիշ ճանապարհով տարած չէին լինի նրան: Ամեն ինչ կտար, որպեսզի որևէ նշան գտներ, որը ցույց տար, թե տիկին Ուելդոնը գնում էր այնտեղ, ուր տանում էին իրենց:

Այդպես էր պատանու և նրա ընկերների ֆիզիկական և բարոյական վիճակը: Բայց ինչպիսի վտանգի էլ որ ենթարկված լինեին նրանք, ինչքան էլ մեծ լինեին նրանց տանջանքը, այնուամենայնիվ, շատ ավելի խղճում էին կալանավորներին, տեսնելով այդ տխուր խմբի թշվառությունը և նրանց տերերի ըմբոստացնող կոպտությունը: Ավա՛ղ, ոչինչ չէին կարող անել, որպեսզի օգնության հասնեն առաջիններին և դիմադրեն մյուսներին:

Կուանգայից արևելք ընկած ամբողջ շրջանում, մոտավորապես քսան մղոն տարածության վրա, անտառ էր միայն: Սակայն ծառերը, կամ ոչնչացվելով այդ շրջանի բազմաթիվ վնասատու միջատներից, կամ գետին տապալվելով փղերի կողմից դեռևս մատղաշ հասակում, այդտեղ ավելի ցանցառ էին, քան ծովափի հարևան շրջանում: Համենայն դեպս, այդ անտառով առաջ գնալն ավելի հեշտ կլինեին, քան թփուտներով ծածկված տարածություններով: Արդարև, մեծ քանակությամբ բամբակի թփեր կային, յոթից ութ ոտնաչափ բարձրությամբ, որոնց բամբակից սև և սպիտակ գծավոր տեղական չիթ էին պատրաստում շրջանի ներքին մասերի համար:

Տեղ-տեղ հողը խիտ ջուռալիների էր փոխվում, որտեղ քարավանը բուրրովին կորչում էր: Պետք էր շատ լավ ծանոթ լինել տեղանքին բամբուկի լաբիրինթոսում չմոլորվելու համար:

Ամեն օր քարավանը մեկնում էր արևածագին և մի ժամ դադար առնում կեսօրին: Բաց էին անում մի քանի հակ մանիոկ և այդ ուտելիքը մեծ խնայողությամբ բաժանում ստրուկներին: Երբեմն տալիս էին նաև պատատ կամ այծի ու հորթի միս, եթե զինվորները անցնելիս թալանել էին որևէ բնակավայր:

Սակայն ստրուկներն այնքան հոգնած էին լինում և հանգիստը այնքան աննշան էր, որ ուտելիքը բաժանելու ժամին կալանավորները հագիվ էին կարողանում ուտել: Այդպիսով, Կուանգայից մեկնելուց ութ օր հետո մոտավորապես քսանը ընկել էին ճանապարհին՝ կեր լինելու համար վայրի գազաններին, որոնք թրև էին գալիս քարավանի հետևից: Առյուծները, հովազները և ընձառյուծները սպասում էին անխուսափելի զոհերին, և ամեն երեկո, արևի մայր մտնելուց հետո, նրանց մռնչունը լսվում էր այնքան մոտիկից, որ անմիջական հարձակում էր սպասվում:

Լսելով այդ մռնչունը, որն ավելի ահավոր էր դառնում խավարի մեջ, Դիկ Սենդը սարսափով էր մտածում այն վտանգների մասին, որոնց կարող էր ենթարկվել Հերկուլեսը անտառում: Եվ սակայն, եթե փախչելու առիթը ներկայանար, ոչ մի ռոպե նա չէր վարանի օգտվել այդ առիթից:

Ահա Դիկ Սենդի մի քանի հուշերը, որ նա գրել է Կուանգայից մինչև Կազոնդե տանող ճանապարհին: Քսանհինգ «երթ» պետք եղավ կտրելու համար երկու

հարյուր հիսուն մղոն ճանապարհը. «երթը» գերեվաճառների լեզվով նշանակում է տասը մղոն, գիշերվա և ցերեկվա դադարով:

Ապրիլի 25-ից 27: Անցնում ենք մի գյուղի մոտով, որը շրջապատված է ութից տասը ոտնաչափ բարձրությամբ եղեգնյա ցանկապատով: Եգիպտացորենի, բակլայի, սորգոյի և զանազան գետնանուշերի դաշտեր: Երկու նեգր են բռնում և ստրկացնում: Տասնհինգ սպանված: Բնակչությունը փախչում է:

Հաջորդ օրն անցնում ենք մի արագահոս, լայն գետ: Շարժական կամուրջ, կազմված՝ պատատուկներով միմյանց միացած ծառերի բներից: Կիսաքանդ սյուներ: Միևնույն երկժանուն կապված երկու կանայք սայթաքում են և ընկնում ջուրը: Մեկի գրկում երեխա կար: Ջուրը վշշում է և ներկվում արյունով: Կոկորդիլոսները սողոսկում են կամուրջի տախտակների արանքում: Անզգույշ մի քայլ և ուղիղ լայն բացված երախի մեջ...

Ապրիլի 28: Անցնում ենք անտառով: Բարձրադիր ծառեր, որոնք պորտուգալացիները անվանում են «երկաթի»:

Ուժեղ անձրև է գալիս: Հողը փափկել է, քայլելը չափազանց դժվարացել:

Քարավանի կենտրոնում նկատեցի խեղճ Նանին՝ գրկում մի նեգր երեխա: Շատ դժվար է քայլում: Նրա հետ կապված ստրկուհին կաղում է, և արյունը հոսում է ուսի մտրակից բացված վերքից:

Գիշերը դադար ենք առնում սպիտակ ծաղիկներով և կանաչ սաղարթով զարդարված մի հսկա բաոբաբի տակ:

Գիշերը մռնչում են առյուծներն ու ընձառյուծները: Բնիկներից մեկը կրակում է հովազի վրա: Ի՞նչ է անում Հերկուլեսը...

Ապրիլի 29 և 30: Աֆրիկյան, այսպես կոչված, ճմռան առաջին ցրտերը: Առատ ցող է իջնում: Նոյեմբերին սկսվում է, ապրիլին վերջանում անձրևային եղանակը: Դաշտը դեռևս ողողված է: Արևելյան քամին իր հետ ճահճային տենդ է բերում:

Ոչ մի նշան տիկին Ուելդոնից և պարոն Բենեդիկտից: Բացի Կազոնդեից ո՞ր կարող են տանել նրանց: Նրանք այս ճանապարհով գնացած կլինեն և մեզանից առաջ անցած:

Անհանգստությունը կրծում է ինձ: Փոքրիկ Ջեկի ջերմը կրկնված կլինի այս վատառողջ շրջանում: Արդյոք ապրո՞ւմ է դեռ...

Մայիսի 1-ից մինչև 6-ը: Մի քանի օր առաջ ենք գնում ընդարձակ դաշտերով, որոնք դեռևս չեն չորացել: Ջուրը երբեմն մինչև գոտկատեղն է հասնում: Բյուրավոր տզրուկներ են կաչում մեր մարմիններին: Այնուամենայնիվ, պետք է քայլել: Ջրից դուրս պրծած մի քանի բարձունքների վրա՝ լոտոսներ և պապիրուսներ: Ջրի հատակին այլ տեսակի բույսեր՝ կաղամբի լայն տերևներով, որոնց խփվում է ոտքը, և շատերը վայր են ընկնում:

Այս ջրերում վխտում են մեծ քանակությամբ լոքոյի տեսակին պատկանող փոքր ձկներ, որոնց բնիկները որսում են սակառներով և վաճառում քարավաններին:

Գիշերելու համար ոչ մի տեղ չի ճարվում: Ողողված դաշտը վերջ չունի: Պետք է քայլել խավարի մեջ: Վաղը քարավանից շատերը կպակասեն: Ինչպիսի՞ թշվառություն: Երբ մարդիկ ընկնում են, այլևս չեն ուզում վեր կենալ: Մի քանի

րոպե ևս մնալ այդ ջրերի տակ, և ամեն ինչ կվերջանա: Հավիլդարի գավազանը մեզ չի հասնի խավարի մեջ:

Այո, բայց տիկին Ուելդոնն ու որդին: Ես իրավունք չունեմ նրանց լքելու: Ես կդիմանամ մինչև վերջ: Այո է իմ պարտականությունը:

Ահռելի ճիչեր են լսվում գիշերվա խավարի մեջ: Քսանի չափ գինվորներ ծյուրալի ճյուղեր կտրեցին ծառից, որի բունը ջրից դուրս էր մնացել: Մթուքյան մեջ մի աղոտ լույս է տարածվում: Ահա իմ լսած ճիչերի պատճառը. կոկորդիլոսները հարձակվել են քարավանի վրա, նրանցից տասը կամ տասնհինգը մոտեցել էին քարավանին: Նրանք հափշտակեցին կանանց ու երեխաների և քարշ տվին մինչև իրենց «արածելու վայրը»: Այդպես է անվանում Լիվինգսթոնը այն խոր անցքերը, որտեղ այս երկկենցաղները տանում են իրենց որսը խեղդելուց հետո, որպեսզի նեխի, նոր միայն ուտեն:

Ես զգացի այդ կոկորդիլոսներից մեկի բիրտ շփումը իմ մարմնին: Կողքիս կանգնած մի պատանի ստրուկի կոկորդիլոսը դուրս քաշեց վզին անցկացված երկժանուց, որը ջարդվեց: Հուսահատություն, ինչ ճիչեր, ցավի ինչպիսի աղաղակներ: Դեռևս ականջներումս հնչում են այդ բոլորը:

Մայիսի 7 և 8: Հաջորդ օրը հաշվեցին զոհերը: Քսան ստրուկ էր անհետացել:

Արևը ծագելուն պես հետաքրքրվեցի, թե ինչ էին եղել Թոմը և նրա ընկերները: Ի՞նչ լավ է, որ բոլորն էլ ողջ են: Բայց իսկապե՞ս լավ է: Մի՞թե՞ ավելի բախտավոր չէ նա, որը մի անգամ ընդմիջտ ազատվում է այս տանջանքներից:

Թոմը քարավանի առջևից է գնում: Այն րոպեին, երբ Բաթը սայթաքեց, վզակապը շեղ դիրք ստացավ, և Թոմը նկատեց ինձ: Ես իզուր փնտրեցի նանին: Մի՞թե խառնվել էր կենտրոնի խմբին, թե՞ կորավ այս սուկալի գիշերվա մեջ:

Հաջորդ օրը անցանք ողողված դաշտի սահմանը՝ քսանչորս ժամ մեջը մնալուց հետո: Դադար տրվեց մի բլրի վրա: Արևը մի քիչ չորացրեց մեզ: Մի քիչ բան կերանք, բայց ի՞նչ ողորմելի ուտելիք: Մի քիչ մանիոկ, մի քանի բուռ եգիպտացորեն: Խմելու ջուրը պղտոր է, կեղտոտ: Կալանավորները պառկել են գետնի վրա, բայց քանիսը վեր չեն կենա:

Ո՛չ: Չի կարող պատահել, որ տիկին Ուելդոնը և երեխան այդքան տանջանքների ենթարկված լինեն: Երանի ուրիշ ճանապարհով Կազոնդե գնացած լինեն: Խեղճ կինը չէր դիմանա այսքան տանջանքների...

Քարավանում ջրծաղկի «նդուե», ինչպես ասում են բնիկները, դեպքեր կան: Հիվանդները չեն կարող շարունակել ճանապարհը: Մի՞թե նրանց կթողնեն այստեղ:

Մայիսի 9: Արևածագի հետ քարավանը առաջ շարժվեց: Ետ մնացողներ չկան: Հավիլդարի մտրակը իսկույն ոտքի կանգնեցրեց այն բոլորին, որոնց ընկճել էին հոգնածությունն ու հիվանդությունը: Այդ ստրուկները արժեք ունեն: Ստրուկը դրամ է: Գործակալները չեն թողնի, որ ետ մնան, քանի դեռ ուժ կա նրանց վրա: Ինձ շրջապատում են կենդանի կմախքներ: Նրանք նույնիսկ բավականաչափ ծայն չունեն, որպեսզի կարողանան տնջալ:

Վերջապես տեսա նանին: Ցավալի է նայել նրան: Գրկի երեխան անհետացել է: Այժմ նա բոլորովին մենակ է: Այդպես ավելի լավ է նրա համար, բայց շղթան դեռ մեջքին է, որի ծայրը ուսն է գցել:

Շտապեցի նրա մոտ հասնել: Կարծես ինձ չճանաչեց: Մի՞թե այդքան փոխվել եմ:

– Նա՛ն, – ասացի ես:

Խեղճ աղախինը երկար նայեց ինձ և վերջապես ասաց.

– Այդ դո՞ւք եք, պարո՛ն, պարո՛ն Դիկ... Իսկ ես... շուտով կմեռնեմ...

– Ոչ, ոչ. արիացեք, – պատասխանեցի ես, մինչդեռ աչքերս խոնարհում էի՝ չտեսնելու համար այդ դժբախտ կնոջ ուրվականը:

– Այո, կմեռնեմ և այլևս չեմ տեսնի սիրելի տիրուհուս, ոչ էլ փոքրիկ Ջեկիս: Տե՛ր աստված, խղճա ինձ...

Ես ուզեցի նեցուկ լինել թշվառ կնոջը, որի ամբողջ մարմինը դողում էր պատառոտված հագուստի տակ: Ինձ համար լավ կլիներ կապվել նրան և թեթևացնել շղթան, որի ամբողջ ծանրությունն իր վրա էր կրում նա ընկերուհու մահից հետո:

Մի ուժեղ ձեռք ինձ մի կողմ հրեց, և դժբախտ Նանին, մտրակի հարվածի տակ, քշեցին ստրուկների խմբի մեջ: Ես ուզեցի հարձակվել այդ բռի մարդու վրա... Բայց արաբ պետը երևաց, ձեռքիցս բռնեց և ինձ պահեց, մինչև որ ամբողջ քարավանն առաջ անցավ:

Այնուհետև ասաց.

«Նեգորո՛»:

Նեգորո՛: Ուրեմն պորտուգալացու կարգադրությամբ էր գործում այդ մարդը: Իսկ ի՞նչ վիճակ էր սպասում ինձ:

Մայիսի 10: Այսօր անցանք երկու բոցավառ գյուղերի կողքով: Խրճիթները վառվում են ամեն տեղ: Դիակներ են կախված ծառերից, որոնց հրդեհը ինայել է: Բնակչությունը փախել է: Արտերը ավերված են: Գյուղերը թալանվել են, գուցե երկու հարյուր հոգի են զոհվել մի երկվեցյակ ստրուկ ձեռք բերելու համար:

Երեկոն վրա հասավ: Գիշերային դադար: Ճամբար դրվեց բարձր ծառերի տակ: Անտառի եզրին բարձր խոտեր ու թփեր են աճում:

Մի քանի կալանավոր վզակապը ջարդելով փախել են նախորդ օրը: Նրանց բռնեցին և անխնա պատժեցին: Չինվորների և հավիլդարների հսկողությունը կրկնապատկվում է:

Գիշեր է: Առյուծները և բորենիները մռնչում են: Հեռվից գետածիների աղմուկ է գալիս: Մոտակայքում անպատճառ լիճ կամ գետ կա:

Հակառակ հոգնածության, չեմ կարողանում քնել: Այնքան բաների մասին եմ մտածում:

Բացի դրանից, ինձ թվում է, թե ինչ-որ բան է շարժվում խոտերի մեջ: Գուցե որևէ գազան: Մի՞թե կհանդգնի ճամբար մտնել:

Ականջ եմ դնում: Ոչ մի ձայն: Ինչպես չէ. ինչ-որ կենդանի է անցնում եղեգների միջով: Իսկ ես անզեն եմ: Բայց և այնպես կպաշտպանվեմ: Օգնության կկանչեմ: Իմ կյանքը գուցե անհրաժեշտ է տիկին Ուելլոնին, իմ ընկերներին:

Նայում եմ խոր մթության մեջ: Լուսին չկա: Գիշերը չափազանց սև է:

Ահա երկու աչքեր, որոնք փայլում են խավարի մեջ, պապիրուսների արանքում, բորենու կամ ընձառյուծի աչքեր: Ահա նրանք անհետացան... և որից երևացին... Վերջապես խոտը խշխշաց: Ինչ-որ կենդանի հարձակվեց վրաս...

Ուզում եմ ճչալ, օգնություն կանչել...

Բարեբախտաբար զսպում եմ ինձ...

Աչքերիս չեմ հավատում... Դինգոն է... Դինգոն ինձ մոտ... Քաջ Դինգո... Ինչպե՞ս հասավ ինձ: Ինչպե՞ս գտավ: Ա՛հ, բնագոյն... Միայն բնագոյն կարելի է բացատրել հավատարմության այդպիսի հրաշքները: Դինգոն ձեռքերս է լիզում: Ա՛հ, իմ լա՛վ շուն, իմ միակ բարեկամ: Ուրեմն քեզ չէի՞ն սպանել...

Ես նրան շոյում եմ: Նա ինձ հասկանում է: Ինչպես կուզեր հաչել ուրախությունից...

Ես նրան հանգստացնում եմ: Ոչ ոք չպետք է լսի նրա ձայնը: Թող նա հետևի քարավանին առանց նկատվելու և գուցե... Բայց ի՞նչ է պատահել... Դինգոն համառորեն վիզը ձեռքերիս է քսում: Կարծես ուզում է ասել. «Փնտրիր, փնտրիր...» փնտրում եմ և ինչ-որ բան է գալիս ձեռքիս տակ, նրա վզին կապված... եղեգնի մի կտոր է անցկացված վզակապի վրա, որտեղ փորագրված են Ս. Վ. տառերը, որոնց գաղտնիքը դեռևս անբացատրելի է մնում մեզ համար:

Այո... Ես պոկեցի եղեգնը... ջարդեցի, միջից մի երկտող դուրս եկավ...

Բայց... Ինչպե՞ս կարողամ երկտողը: Պետք է սպասել լույսը բացվելուն... Ես ուզում եմ պահել Դինգոյին, բայց լավ շունը, ձեռքերս լիզելով՝ կարծես շտապում է հեռանալ ինձնից... Նա հասկացել է, որ իր միսիան վերջացել է... Կողքի ցատկելով՝ առանց աղմուկի Դինգոն անհետացավ խոտերի մեջ: Երանի չընկնի առյուծի կամ բորենու ճանկը:

Դինգոն անշուշտ վերադարձավ իրեն ուղարկողի մոտ:

Երկտողը, որ չեմ կարողանում կարդալ դեռևս, այրում է ձեռքս: Ո՞վ է գրել: Տիկին Ուելլոնինը, Հերկուլե՞սը: Ինչպե՞ս պատահեց, որ հավատարիմ կենդանին, որին մեռած էինք կարծում, հանդիպեց մեկին կամ մյուսին: Ի՞նչ կասի ինձ այդ երկտողը: Փախուստի ծրագիր, թե՞ տեղեկություններ ինձ այնքան սիրելի անձանց մասին: Ինչ էլ որ լինի, այս դեպքը ինձ անչափ հուզեց և վերջ տվեց տանջանքներին:

Ա՛խ, երբ պետք է լույսը բացվի:

Ես անհամբերությամբ հորիզոնն եմ դիտում լույսի շողը տեսնելու համար: Աչք չեմ կարողանում փակել: Դեռևս լսվում է գազանների մռչյունը: Խե՛ղճ Դինգո, կազատվե՞ս նրանցից:

Վերջապես սկսում է լուսանալ, գրեթե առանց արշալույսի, ինչպես լինում է արևադարձային լայնության տակ: Աշխատում եմ ոչ ոք չտեսնի ինձ...

Փորձում եմ կարդալ... Դեռևս ոչինչ չի երևում:

Վերջապես կարդացի երկտողը. Հերկուլեսն էր գրել:

Գրված է մի կտոր թղթի վրա, մատիտով...

Ահա թե ինչ է գրված.

«Տիկին Ուելդոնին տարան փոքրիկ Ջեկի հետ՝ պատգարակով: Հարրիսը և Նեգորոն ընկերակցում են Նրանց: Նրանք քարավանից առաջ են անցել երեք կամ չորս երթով. կուզեն Բենեդիկտը Նրանց հետ է: Ես չկարողացա հաղորդակցվել Նրա հետ: Ես գտա Դինգոյին, որը վիրավորված էր հրացանի գնդակից... Բայց բուժված: Հույս ունեցեք, պարոն Դիկ: Ես բոլորի մասին մտածում եմ և փախուստի դիմեցի ձեզ ավելի օգտակար լինելու համար:

Հերկուլես»:

Ա՛խ, տիկին Ուելդոնը և որդին կենդանի են: Փառք ասածուն: Նրանք մեզ նման չեն տանջվում ճանապարհի ծանր պայմաններից: Կիտանդան չոր խոտից շինված մի տեսակ պատգարակ է, կախված երկար բամբուկից, որը տանում են երկու հոգի իրենց ուսերի վրա: Պատգարակը ծածկված է կերպասի վարագույրով: Ուրեմն տիկին Ուելդոնը և փոքրիկ Ջեկը պատգարակով են գնում: Ի՞նչ է Հարրիսի և Նեգորոյի նպատակը: Այդ չարագործները Նրանց Կազոնդե են տանում, անկասկած, այո... այո... Ես Նրանց կգտնեմ: Ա՛խ, այս ամբողջ թշվառության մեջ ի՞նչ լավ լուր բերեց ինձ Դինգոն:

Մայիսի 11-ից 15: Քարավանը շարունակում է ճանապարհը: Կալանավորները ավելի ու ավելի դժվարությամբ են քարշ գալիս: Մեծամասնության ոտքերի տակ արյան հետքեր են մնում: Իմ հաշվով դեռևս տասն օր պետք է Կազոնդե հասնելու համար: Քանի՞սը այլևս չեն տանջվի մինչև այնտեղ հասնելը: Բայց ես պետք է հասնեմ և կհասնեմ:

Սարսափելի է: Քարավանում այնպիսիները կան, որոնց մարմինը ամբողջովին վերքերով է ծածկված: Նրանց կապկապող պարանները մտնում են մարմնի մեջ:

Երեկվանից ի վեր մի մայր թևերի մեջ պահել է քաղցից մեռած երեխային... չի ուզում Նրանից բաժանվել:

Ճանապարհը ծածկված է դիակներով:

Ջրծաղիկը մոլեգնում է Նոր թափով:

Մենք անցանք մի ծառի կողքից, որից ստրուկներ էին կապել և թողել, որ մեռնեն քաղցից:

Մայիսի 16-ից 24: Ես գրեթե ուժասպառ եմ եղել, բայց իրավունք չունեմ տկարանալու: Անձրևները բոլորովին դադարեցին: Մենք օրերով «ծանր երթեր» ենք անում: Ստիպում են առաջ գնալ նաև կեսօրից հետո: Պետք է ավելի արագ քայլել, իսկ ճանապարհը բարձրանում է բավական թեք զառիվերով:

Անցնում ենք խիստ կոշտ և բարձր խոտերի միջով: «Նիասի» է կոչվում այդ խոտը, որի ցողունը ճեղքում է մարդու դեմքը, իսկ ծակող սերմերը մտնում են մաշկի մեջ: Բարեբախտաբար, դիմացկուն կոշիկներս դեռևս պահում են ինձ:

Գործակալներն սկսել են ճանապարհին թողնել քայլել չկարողացող հիվանդ ստրուկներին: Բացի դրանից, ուտելիքը սկսում է պակասել: Թե՛ գինվորները և թե՛ բեռնակիրները կըմբոստանային, եթե նրանց ուտելիքը պակասեցնեին: Չեն համարձակվում նրանցից որևէ բան կրճատել, վա՛յ կալանավորներին:

— Թող միմյանց միս ուտեն,— ասաց պետը:

Պատահում է, որ դեռևս ուժեղ երիտասարդ ստրուկներ մեռնում են առանց որևէ հիվանդության նշանի: Հիշում եմ, թե ինչ է ասել Լիվինգսթոնը այդ առթիվ. «Այդ դժբախտ մարդիկ գանգատվում են սրտից, ձեռքը դնում են կրծքին և ընկնում: Պարզապես սիրտն է պայթում: Այս երևույթը հատուկ է ազատ ապրող մարդկանց, որոնք ստրկացվում են, առանց այդ կյանքին պատրաստ լինելու»:

Այսօր հավիլդարները տապարով կոտորեցին քսան կալանավորների, որոնք այլևս չէին կարողանում քարշ գալ: Արաբ պետը բոլորովին դեմ չեղավ այդ կոտորածին:

Տեսարանը սոսկալի էր: Պառավ Նանը ընկավ դանակի հարվածից՝ այդ ահռելի սպանդի պահին... Անցնելիս ես պատահեցի նրա դիակին: Չեմ կարող նույնիսկ քրիստոնյայի պես թաղել նրան...

Այդ առաջին զոհն է «Պիլիգրիմի» փրկվածներից: Խե՛ղճ կին: Խե՛ղճ Նան:

Ամեն գիշեր Դինգոյին եմ սպասում: Բայց նա չի վերադառնում: Մի՞թե դժբախտությունն պատահեց նրան, կամ գուցե չերկուլեսին: Ո՛չ... ո՛չ... Չեմ ուզում հավատալ... Այս լուրջությունը, որ այնքան երկար է թվում ինձ, մի բան է միայն ապացուցում, այն, որ չերկուլեսը ոչ մի նորություն չունի ինձ հաղորդելու: Ճիշտ է, նա պետք է զգույշ և աջալուրջ լինի:

IX. Կազոնդե

Մայիսի 26-ին ստրուկների քարավանը հասավ Կազոնդե: Այս վերջին ասպատակության միջոցին կալանավորված ստրուկների հիսուն տոկոսը ընկավ ճանապարհին: Այնուամենայնիվ, գերեվաճառները շահավետ գործ էին արել. ստրուկների պահանջը ավելանում էր, իսկ նրանց արժեքը բարձրանում աֆրիկյան շուկաներում:

Անգուլան այդ միջոցին նեգրերի մեծ առևտուր էր անում: Սան-Պաուլո դե Լուանգայի կամ Բենգուելայի պորտուգալական իշխանությունները դժվարությամբ էին կարողանում դրա առաջն առնել, քանի որ քարավանները ուղղվում էին դեպի աֆրիկյան մայրցամաքի ներսը: Ծովեզերքի բարաքները լցված էին կալանավորներով: Այն մի քանի նեգր փոխադրող նավերը, որոնք կարողանում էին անցնել ծովափի պահականավերի միջից, չէին բավարարում ստրուկներին Ամերիկայի իսպանական գաղութները տանելու համար:

Կազոնդեն, որը գտնվում էր Կուանգայի գետաբերանից երեք հարյուր մղոն հեռավորության վրա, գլխավոր «լակոնիներից» մեկն էր, այդ շրջանի ամենակարևոր շուկան: Նրա ընդարձակ հրապարակի՝ «ջիտոկայի» վրա են կատարվում գործառնությունները. այնտեղ են ստրուկներին ցուցադրում և վաճառում: Այնտեղից է, որ քարավանները մեկնում են դեպի Մեծ լճերի շրջանները:

Կազմողներն, ինչպես Կենտրոնական Աֆրիկայի բոլոր քաղաքները, բաժանվում է երկու մասերի. մեկը՝ արաբ, պորտուգալացի կամ բնիկ առևտրականների թաղամասը իր բարաքներով, մյուսը՝ նեգր թագավորի աթոռանիստը. սա մի որևէ արյունարբու հարբեցող թագակիր է, իշխում է ահաբեկումով և ապրում է գերեվաճառների մատուցած առատ հարկերով:

Կազմողների առևտրական թաղամասն այդ միջոցին պատկանում էր խոզե-Անտոնիո Ալվեցին, որի մասին խոսք էր եղել նրա գործակալների՝ Նեգրոյի և Հարրիսի միջև: Այնտեղ էր այդ գերեվաճառի գլխավոր գրասենյակը, որի մի մասնաճյուղը գտնվում էր Բիհեում, իսկ երկրորդը՝ Կասանգայում, Բենգուելայի շրջանում, որտեղ Քամերոնը նրան պատահեց մի քանի տարի հետո:

Քաղաքի գլխավոր փողոցի երկու կողմում բարձրանում էին հարթ տանիքներով, կավաշեն պատերով տներ՝ «տեմբեներ», որոնց քառակուսի բակերը որպես գոմ էին գործածվում, փողոցի ծայրին ընդարձակ «չիտոկան» էր՝ հրապարակը՝ շրջապատված բարաքներով. այդ բնակարանների առաջ բարձրանում էին մի քանի հսկա բանիաններ, փարթամորեն զարգացող ճյուղերով, հովհարանման արմավենիներ՝ բարձր գագաթներով, փողոցում վխտում էին մի քանի տասնյակ գիշատիչ թռչուններ, որոնք քաղաքի միակ աղբամաքիչներն էին. ահա Կազմողների առևտրական թաղամասը:

Այդ թաղամասից ոչ հեռու հոսում է Լուհի գետը, որը հավանորեն Կոնգոյի մի վտակն էր:

Կազմողների թագավորի աթոռանիստը, որ կից էր առևտրական թաղամասին, կեղտոտ խրճիթների մի խառնակույտ էր՝ տարածված մեկ քառակուսի մղոնի վրա: Այդ հյուղակներից մի քանիսի առաջը բաց էր, մյուսները շրջապատված էին եղեգնի ցանկապատով կամ թփավոր թզենիներով: Պապիրուսներից առաջացած ցանկապատը շրջապատում էր ստրուկներին հատկացված երեսուկի չափ տնակները. մի խումբ հյուղակներ կանանց համար, մանիոկի պլանտացիաների մեջ կորած մի քիչ ավելի ընդարձակ և ավելի բարձր «տեմբեն», ահա և Կազմողների թագավորի աթոռանիստը: Մուանի Լուևգա անունով հիսուն տարեկան մի մարդ էր նա և արդեն վատնել էր իր նախորդներից ստացած ժառանգությունը: Նա հազիվ չորս հազար զինվոր ուներ, մինչդեռ պորտուգալացի առաջին գերեվաճառների զինվորների թիվը քսան հազարի էր հասնում: Նա չէր կարող առաջվա նման օրական քսանհինգից երեսուն ստրուկ զոհել աստվածներին:

Այդ թագավորը ժամանակից շուտ ծերացած, մաշված էր անառակությունից, այրված թունդ խմիչքներից, մի դաժան խելառ, որն իր քմահաճույքի համար խեղում և հաշմանդամ էր դարձնում իր հպատակներին, սպաներին կամ միևնույններին, կտրելով ոմանց քիթն ու ականջը, ուրիշների ոտքն ու ձեռքը, նրա մահը ոչ ոքի վիշտ չէր պատճառի:

Միայն մի մարդ կար Կազմողներում, որը գուցե կորուստ կունենար Մուանի Լուևգայի մահով: Գերեվաճառ խոզե-Անտոնիո Ալվեցն էր այդ մարդը, որ միշտ համերաշխ էր գործում ամբողջ շրջանին գերիշխող այդ հարբեցողի հետ: Գերեվաճառը վախենում էր, որ նրանից հետո, եթե նրա առաջին կնոջ՝ Մուանայի թագակրությունը հաստատվի, Մուանի Լուևգայի պետության վրա կհարձակվի հարևան մրցակիցը՝ Ուկուզուկի թագավորներից մեկը: Վերջինս, որ ավելի երիտասարդ էր, ավելի ակտիվ, արդեն գրավել էր Կազմողներին պատկանող մի քանի ավաններ և իրեն կողմնակից ուներ մի ուրիշ գերեվաճառ՝ Ալվեցի հակառակորդ Տիպո-Տիպոն, զտարյուն մի արաբ, որը շուտով Քամերոնին այցելության կգնար Նիանգվեում:

Ահա մի քանի խոսքով, թե ինչ էր իրենից ներկայացնում Ալվեցը նեգրական այդ պետության իսկական տիրակալը:

Խոզե-Անտոնիո Ալվեցը արդեն տարիքն առած մարդ էր՝ «մսունգու», այսինքն՝ սպիտակամորթ չէր, ինչպես կարելի էր կարծել: Նա միայն անունով էր պորտուգալացի, որ յուրացրել էր անշուշտ առևտրական նպատակներով: Նա իսկական նեգր էր, որին ճանաչում էին բոլոր գերեվաճառները, և անունը Կենդել էր: Ծնվել էր Կուանգա գետի ափին, Դոնդոյում, իր գործունեությունն սկսել էր որպես գերեվաճառության հասարակ միջնորդ և հասել էր հայտնի գերեվաճառի դիրքին, այսինքն՝ դարձել էր պատվավոր մարդու դիմակով մի իսկական ծերուկ սրիկա:

Այդ նույն Ալվեցին էր, որ Քամերոնը պատահեց 1874 թ. վերջերին Կասսոնի մայրաքաղաք Կիլեմբայում: Գերեվաճառը նրան վերցրեց իր քարավանի հետ մինչև Բիհեի գրասենյակը՝ յոթ հարյուր մղոն տեղ:

Ստրուկների քարավանը, հասնելով Կազոնդե, կանգ առավ մեծ հրապարակում:

Մայիսի քսանվեցն էր: Ուրեմն Դիկ Սենդի հաշիվները ճիշտ դուրս եկան: Ուղևորությունը տևել էր երեսուկուսուկու օր, սկսած այն օրից, երբ քարավանը մեկնել էր Կուանգայի ափերից: Ամենադաժան տանջանքների հինգ շաբաթ, որպիսին երբևիցե վիճակված է եղել մարդկային էակներին:

Կեսօր էր, երբ քարավանը Կազոնդե մտավ: Թմբուկները խփում էին, եղջերափողի սուր ձայնը հնչում էր հրացանների կրակոցի մեջ: Քարավանի զինվորները հրացան էին կրակում օդում, իսկ Խոզե-Անտոնիո Ալվեցի սպասավորները պատասխանում էին մեծ ոգևորությամբ: Բոլոր այդ ավազակները ուրախ էին, որ չորս ամսվա բացակայությունից հետո տեսնում էին միմյանց: Նրանք, վերջապես, կկարողանային հանգստանալ և կորցրած ժամանակը շահել անառակության և հարբեցողության մեջ:

Կալանավորները, որոնց մեծ մասը ուժասպառ էր եղել, ընդամենը երկու հարյուր հիսուն հոգի էին: Անասունների պես քշվելուց հետո այժմ նրանց լցնում էին այնպիսի բարաքներ, որոնց մեջ Ամերիկայի ֆերմերները անասուններն իսկ չէին պահի: Այնտեղ նրանց սպասում էին հազար երկու հարյուրից մինչև հազար հինգ հարյուր ուրիշ կալանավորներ, որոնք երկու օր հետո պետք է ցուցադրվեին Կազոնդեի շուկայում: Այդ բարաքները լցվեցին քարավանի ստրուկներով: Նրանց ծանր երկժանիները վերցրին, բայց շղթաներից չազատեցին:

Բեռնակիրները մնացին հրապարակում՝ դատարկելով փողոսի բեռը, որ պետք է գնեին Կազոնդեի առևտրականները: Այնուհետև ստանալով իրենց վարձը՝ մի քանի մետր չիթ կամ ավելի թանկագին որևէ կերպաս, նրանք կվերադառնային՝ միանալու մի ուրիշ քարավանի:

Այսպիսով ծերուկի Թոմը ու նրա ընկերները ազատվեցին այն ծանր լծից, որը կրել էին ամբողջ հինգ շաբաթ, Բաթը և հայրը, վերջապես, ընկան միմյանց գիրկ: Բայց հազիվ էին համարձակվում խոսել: Բացի հուսահատական խոսքերից, ուրիշ ի՞նչ կարող էին ասել միմյանց, Բաթը, Ակտեոնը, Օստինը, երեքն էլ հուժկու, ծանր աշխատանքի սովորած մարդիկ, կարողացել էին դիմանալ հոգևածությանը, սակայն զրկանքից թուլացած ծերուկի Թոմը ուժասպառ էր եղել: Եթե մի քանի օր ևս շարունակվեր այդ ուղևորությունը, կասկած չկար, որ նրա դիակը, պառավ Նանի դիակի նման, վայրի գազանների կեր կդառնար:

Կազմողն հասնելուց անմիջապես հետո չորս նեգրերին ևս տեղավորեցին մի նեղ բարաքի մեջ և դուռը անմիջապես փակեցին վրաները: Մի քիչ բան ուտելով՝ նրանք սպասում էին գերեվաճառի այցելությանը, որին ուզում էին հայտնել, թեև իզուր, իրենց ամերիկացի լինելը:

Դիկ Սենդը մնացել էր հրապարակում մի հավիլդարի հատուկ հսկողության տակ:

Նա վերջապես Կազմողնում էր և կասկած չունեի որ նախապես այնտեղ էին հասել տիկին Ուելդոնը, փոքրիկ Ջեյը և կուզեն Բենեդիկտը: Քաղաքի զանազան թաղերից անցնելիս նա հայացքով փնտրել էր նրանց, ուշադրությամբ նայել էր հյուղակների ներսը, այդ միջոցին գրեթե ամայի հրապարակը:

Տիկին Ուելդոնը չկար:

«Մի՞թե այստեղ չեն բերել, — ինքն իրեն հարց տվեց Դիկ Սենդը: — Որտե՞ղ է ուրեմն: Ոչ, Հերկուլեսը սխալված չի կարող լինել: Ճիշտ է, որ Հարրիսը և Նեգորոն նրանց նկատմամբ գաղտնի ծրագրեր են ունեցել... բայց նրանք չեն երևում...»:

Դիկ Սենդը չափազանց մտահոգ էր:

Կարող էր պատահել, որ տիկին Ուելդոնը բանտում էր, և չէր կարելի նրան տեսնել, դա հասկանալի էր, բայց Հարրիսը և Նեգորոն, մանավանդ այս վերջինը, պետք է շտապեին տեսնել պատանու, որն այժմ նրանց իշխանության տակ էր, թեկուզ իրենց հաղթանակով հրճվելու, նրան անպատվելու, տանջելու, վերջապես վրեժ լուծելու համար: Քանի որ այստեղ չէին, պե՞տք էր եզրակացնել, թե մի ուրիշ ուղղության էին հետևել, և տիկին Ուելդոնին Կենտրոնական Աֆրիկայի մի ուրիշ շրջանը քարշ տվել: Թեկուզ ամերիկացու և պորտուգալացու ներկայությունը նրա համար տանջանք լիներ, այնուամենայնիվ, Դիկ Սենդը այժմ այդ էր ցանկանում: Հարրիսի և Նեգորոյի ներկայությունը Կազմողնում նրան վստահություն կներշնչեր, որ տիկին Ուելդոնը և որդին նույնպես այնտեղ էին:

Դիկ Սենդը մտածում էր նաև, որ այն գիշերից հետո, երբ Դինգոն բերել էր Հերկուլեսի երկտողը, շունը այլևս չէր երևացել: Պատասխանը, որ համենայն դեպս նա շտապ պատրաստել էր, որով պատանին Հերկուլեսին հանձնարարում էր միայն տիկին Ուելդոնի մասին մտածել, աչքից չկորցնել նրան և իրագրել պահել անցուդարձի մասին, այդ պատասխանը չէր կարողացել ուղարկել: Այն, ինչ որ Դինգոն կարողացել էր մի անգամ կատարել, այսինքն՝ սողոսկել մինչև քարավանի շարքերը, ինչո՞ւ Հերկուլեսը երկրորդ անգամ չէր փորձում կատարել տալ:

Մի՞թե հավատարիմ շունը կորել էր որևէ անհաջող գործում, թե գուցե Հերկուլեսը, շարունակելով հետևել տիկին Ուելդոնի հետքերին, ինչպես ինքը կաներ, եթե նրա տեղը լիներ, Դինգոյի ուղեկցությամբ առաջացել էր Աֆրիկայի անտառապատ սարահարթի խորքերը որևէ ֆակտորիա հասնելու հույսով:

Ի՞նչ կարող էր հուսալ Դիկ Սենդը, եթե իսկապես, ո՛չ տիկին Ուելդոնը, ո՛չ նրա հափշտակիչները այստեղ չէին: Նա այնքան վստահ էր, թեկուզև անհիմն, թե նրանց կգտներ Կազմողնում, որ նրանց չտեսնելով, սկզբում մեծ հարված ստացավ: Այնպես հուսահատվեց, որ չկարողացավ զսպել իրեն: Իր կյանքը, եթե այլևս չէր կարող օգտակար լինել նրանց, որոնց այնքան սիրում էր նա, ոչինչ չարժեր, և նրան մնում էր միայն մեռնել: Բայց այդպես մտածելով՝ Դիկ Սենդը սխալվում էր իր իսկ նկատմամբ: Այդ փորձությունների հարվածի տակ երեխան տղամարդ էր դարձել, և հուսահատությունը նրա մոտ կարող էր լինել մարդկային թուլությանը մի պատահական հատուկում: Նվազախմբի ուժեղ համերգ ու գոռում գոչուն սկսվեց այդ միջոցին: Դիկ Սենդը, որին թողել էին չիտոկայի փոշու մեջ,

ոտքի ցատկեց: Ամեն մի նոր դեպք նրան կարող էր դնել այն մարդկանց հետքի վրա, որոնց նա փնտրում էր: Քիչ առաջվա հուսահատությունը չքացավ: Դիկը նորից պատրաստ էր պայքարի:

— Ալվե՛ց, Ալվե՛ց,— միաբերան աղաղակում էր բնիկներից ու զինվորներից կազմված ամբոխը, որ հավաքվել էր մեծ հրապարակի վրա: Այն մարդը, որից կախված էր այդքան դժբախտ արարածների վիճակը, վերջապես գալիս էր: Կարող էր պատահել, որ նրա գործակալները՝ Հարրիսն ու Նեգորոն, նրա հետ էին: Դիկ Սենդը ոտքի էր կանգնել աչքերը մեծ-մեծ բաց արած, ռունգները լայնացած: Տասնհինգ տարեկան այդ պատանուն երկու դավաճանները կգտնեին իրենց առաջ ուղիղ կանգնած, անհողողող, ուղիղ նրանց աչքերին նայելիս: «Պիլիգրիմի» նավապետը երբեք չէր դողա նավի նախկին խոհարարի առջև:

Խուճապով ու հնամաշ վարագույրով ծածկված մի պատգարակ երևաց գլխավոր փողոցի ծայրին: Մի ծերուկ նեգր իջավ միջից: Գերեվաճառ Խոզե-Անտոնիո Ալվեցն էր դա:

Մի քանի սպասավոր ուղեկցում էին նրան մեծ հանդիսավորությամբ:

Ալվեցի հետ միաժամանակ երևաց նրա բարեկամը, Բիհեի մայրի որդին՝ Կոիմբրան, որը, ըստ լեյտենանտ Քամերոնի, հայտնի խաբեբա էր ամբողջ շրջանում՝ փնթի, թափթփված, դուրս ընկած աչքերով կոշտ ու խառնիխուռն մազերով, ցնցոտիանման շապիկով և խոտից հյուսված շրջագգեստով: Կարծես մի ահռելի վիճակ լիներ նա ծղոտե քրքրված գլխարկի տակ: Այդ Կոիմբրան Ալվեցի խորհրդատուն էր, նրա չար ոգին, ավարառությունների կազմակերպիչը և գերեվաճառին ծառայող ավագակների արժանավոր հրամանատարը:

Իսկ ինքը՝ գերեվաճառը, իր մտերիմ ընկերոջից ավելի ներկայանալի էր, խրախճանքից վերադարձող ծեր թուրքի իր հագուստով:

Դիկ Սենդը մեծ հուսահատության մատնվեց՝ Ալվեցի կողքին չտեսնելով ո՛չ Հարրիսին, ո՛չ Նեգորոյին: Մի՞թե Դիկ Սենդը պետք է հրաժարվեր նրանց Կազոնդեում տեսնելու հույսից:

Այդ միջոցին քարավանի պետը՝ արաբ Իբն Խամիսը, Ալվեցի և Կոիմբրայի ձեռքն էր սեղմում և նրանցից ջերմ շնորհավորանքներ ստանում: Ճիշտ է, քարավանից պակասած հիսուն տոկոս ստրուկների լուրը հաճելի չէր Ալվեցին, և նա դեմքը թթվացրեց, բայց ընդհանուր առմամբ գործի վախճանը հաջող էր: Բարաքներում այդ միջոցին գտնված մարդկային ապրանքով նա կարող էր բավարարել ներքին շուկաների պահանջը և ստրուկները փոխել փողոսկրի, ինչպես նաև, պղնձի հետ, որը արտահանվում է Աֆրիկայի կենտրոնը:

Շնորհակալ էին նաև հավիլդարներից. ինչ վերաբերում է բեռնակիրներին՝ գերեվաճառը հրամայեց, որպեսզի նրանց վարձը վճարվի անմիջապես:

Խոզե-Անտոնիո Ալվեցը և Կոիմբրան խոսում էին մի տեսակ պորտուգալական ժարգոնով, որը խառն էր բնիկների բարբառից վերցրած խոսքերով, և Լիսաբոնի բնակիչը դժվարությամբ կհասկանար: Դիկ Սենդը նույնպես ոչինչ չէր հասկանում այդ «առևտրականների» խոսակցությունից: Արդյո՞ք հարց չէր եղել իր և ուղեկիցների մասին, որոնք այնքան դավաճանորեն միացվել էին քարավանի ստրուկներին: Պատանու կասկածն այդ մասին բոլորովին ցրվեց, երբ արաբ Իբն Խամիսի նշանով հավիլդարներից մեկն ուղղվեց դեպի այն բարաքը, որտեղ բանտարկվել էին Թոմը, Օստինը, Բաթը և Ակտենը:

Դրանից անմիջապես հետո չորս ամերիկացիներին բերեցին Ալվեցի առաջ: Դիկ Սենդը մոտեցավ զգուշությամբ. նա չէր ուզում որևէ բան կորցնել այդ տեսարանից:

Խոզե-Անտոնիո Ալվեցի դեմքը փայլեց, երբ տեսավ այդ ամրակազմ նեգրերին, որոնց բնական կայտառությունը կվերադառնար հանգիստ և լավ, առատ սնունդ տալուց քիչ հետո: Գերեվաճառը արհամարհական հայացք զցեց միայն ծերունի Թոմի վրա, որի տարիքը նվազեցնում էր նրա արժեքը, բայց մյուս երեքը թանկ կվաճառվեին Կազոնդեի առաջիկա տոնավաճառում:

Հիշողության մեջ հավաքելով այն մի քանի անգլերեն բառերը, որ կարողացել էին սովորեցնել Հարրիսի նման ամերիկացի գործակալները՝ ծերունի կապիկը հեզնական շեշտով բարի գալուստ մաղթեց նոր ստրուկներին:

Թոմը հասկացավ գերեվաճառի այդ խոսքերի իմաստը. նա մոտեցավ և ցույց տալով ընկերներին և իրեն՝ ասաց.

— Մենք ազատ մարդիկ ենք, Ամերիկայի քաղաքացիներ:

Ալվեցը անշուշտ հասկացավ և դեմքին ուրախ ծամածռություն տալով՝ ասաց.

— Այո... այո... ամերիկացիներ, բարի գալուստ... բարի գալուստ:

— Բարի գալուստ. — ավելացրեց Կոիմբրան:

Բիհեի մեծավորի տղան մոտեցավ Օստինին և այնպես, ինչպես կենդանիներն են զննում, նրա կուրծքը, ուսերը շոշափելուց հետո ուզում էր բերանը բաց անել ատամները տեսնելու համար:

Սակայն այդ միջոցին սինյոր Կոիմբրան բռունցքի այնպիսի հարված ստացավ դեմքին, որպիսին երբեք չէր ստացել ոչ մի իշխանի որդի:

Ալվեցի մտերիմը գլորվեց տասը քայլ հեռավորության վրա: Չինվորներից մի քանիսը հարձակվեցին Օստինի վրա, և գուցե այդ հանդուգն քայլը թանկ նստեր նրան, եթե Ալվեցը զինվորներին չկասեցնեք ձեռքի շարժումով: Գերեվաճառը կուշտ ծիծաղում էր իր բարեկամի այդ ճախորդ պատահարի վրա, որը նրա բերանում մնացած հինգ կամ վեց ատամներից երկուսը ջարդեց:

Խոզե-Անտոնիո Ալվեցը չէր հանդուրժի, որ խեղանդամ դարձնեին իր ապրանքը: Բացի դրանից, նա ուրախ մարդ էր և բավական ժամանակ է, որ այդքան կուշտ չէր ծիծաղել:

Նա միսիթարեց շփոթված Կոիմբրային, որը վեր կենալով եկավ կանգնեց գերեվաճառի կողքին, սպառնական շարժում անելով հանդերձ հանդուգն Օստինին:

Այդ միջոցին մի հավիլդար հրեց Դիկ Սենդին և կանգնեցրեց Ալվեցի առաջ:

Վերջինս ակներևաբար գիտեր, թե ո՛վ է պատանին, որտեղից է գալիս և ինչպես է ձերբակալված Կոանգայի ճամբարում:

Ուստի չար արտահայտությամբ նրան նայելուց հետո ասաց վատ անգլերենով.

— Փոքրիկ յանկի:

– Այո, յանկի, – պատասխանեց Դիկ Սենդը: – Ի՞նչ եք ուզում իմ ընկերներից և ինձանից:

– Յանկի, յանկի, փոքրիկ յանկի, – կրկնում էր Ալվեցը:

Չէ՞ր հասկացել, թե՞ չէր ուզում հասկանալ իրեն տրված հարցը:

Դիկ Սենդը երկրորդ անգամ հարց տվեց իր ընկերների և իր վերաբերմամբ: Միևնույն ժամանակ նա խոսքն ուղղեց Կոիմբրային, որի դեմքը ինչքան էլ որ այլափոխված էր սպիրտային խմիչքներից, ցույց էր տալիս, թե բնիկ աֆրիկացի չէ: Կոիմբրան կրկնեց սպառնական շարժումը, որ արդեն արել էր Օստինին, և չպատասխանեց:

Այդ միջոցին Ալվեցը տաք-տաք խոսում էր արաբ Իբն Խամիսի հետ՝ հավանորեն Դիկ Սենդին և նրա ընկերներին վերաբերող գործերի մասին: Անկասկած նրանց նորից կբաժանեին միմյանցից, և ո՞վ գիտե, թե մեկ էլ ե՞րբ առիթ կներկայանար մի քանի խոսք փոխանակելու:

– Բարեկամներս, – ասաց Դիկ Սենդը կիսաձայն և որպես թե ինքն իրեն էր խոսում, – մի քանի խոսք միայն: Դինգոյի միջոցով ես մի գրություն ստացա Հերկուլեսից. նա հետևում էր քարավանին: Հարրիսը և Նեգորոն տանում են տիկին Ուելդոնին, փոքրիկ Ջեկին և պարոն Բենեդիկտին: Ո՞ւր: Չգիտեմ: Բայց կարող է պատահել, որ նրանք Կազոնդեում են: Համբերություն, քաջություն, պատրաստ կացեք ամեն մի առիթից օգտվելու համար:

– Իսկ Նա՞նը, – հարցրեց Թոմը:

– Նանը մեռավ:

– Առաջինը...

– Եվ վերջինը... – պատասխանեց Դիկը, – քանի որ մենք շուտով...

Այդ միջոցին մի ձեռք իջավ նրա ուսին, և միաժամանակ լսվեց նրան շատ ծանոթ, սիրալիկ շեշտով ձայնը.

– Ահա և իմ պատանի բարեկամը, եթե չեմ սխալվում: Ուրախ եմ նրան տեսնելու:

Դիկ Սենդը ետ դարձավ:

Հարրիսը կանգնած էր իր առաջ:

– Որտե՞ղ է տիկին Ուելդոնը, – բացականչեց Դիկ Սենդը՝ մի քայլ անելով դեպի ամերիկացին:

– Ավա՛րդ, – պատասխանեց Հարրիսը՝ ձայնը կեղծելով, – խեղճ մայր, ինչպե՞ս կարող էր ապրել...

– Մեռա՛վ, – բացականչեց Դիկ Սենդը: – Իսկ երեխա՞ն...

– Խե՛ղճ փոքրիկ, – պատասխանեց Հարրիսը միևնույն շեշտով, – նա չդիմացավ ծանր փորձություններին...

Այդպես ուրեմն. Դիկ Սենդի ամենասիրելիները չկային: Ի՞նչ տեղի ունեցավ նրա մեջ: Բարկության անդամադրելի մի շարժումով, վրիժառության անգուսպ պահանջով Դիկ Սենդը հարձակվեց Հարրիսի վրա, ամերիկացու գոտուց խլեց դանակը և խրեց նրա սիրտը:

– Անիծվե՛ս, – գոռաց Հարրիսը և ընկավ:

Հարրիսը մեռած էր:

X. Տոնավաճառ

Դիկ Սենդի հարվածն այնքան շեշտակի էր, որ ոչ ոք չկարողացավ առաջն առնել: Մի քանի բնիկներ հարձակվեցին նրա վրա և կսպանեին, եթե վրա չհասներ Նեգորոն:

Պորտուգալացու մի նշանի վրա բնիկները ետ քաշվեցին՝ վերցնելով և տանելով Հարրիսի դիակը: Ավելցը և Կոմբրան պահանջեցին անմիջապես մահապատժի ենթարկել Դիկ Սենդին, սակայն Նեգորոն ցածր ձայնով նրանց ասաց, թե ոչինչ չեն կորցնի, եթե մահապատժը հետաձգեն մի քանի օրով, և հրամայեց պատանու ն տանել, հանձնարարելով, որ ոչ մի բույս աչք չհեռացնեն նրանից:

Դիկ Սենդը վերջապես տեսել էր Նեգորոյին՝ առաջին անգամ ծովափից մեկնելուց հետո: Նա լավ գիտեր, որ այդ չարագործն էր «Պիլիգրիմի» կործանման միակ պատճառը: Նա նրան ատում էր է՛լ ավելի, քան նրա մեղսակցին: Բայց և այնպես ամերիկացուն սպանելուց հետո ոչ մի խոսք չուզեց ուղղել Նեգորոյին:

Հարրիսն ասել էր, թե տիկին Ուելդոնը և երեխան վախճանվել էին... Այժմ նրան ոչինչ չէր հետաքրքրում, ոչ նույնիսկ այն, թե ինչ կանեն իրեն: Թե ո՞ւր կտանեն իրեն, շատ քիչ էր հետաքրքրվում դրանով:

Ամուր շղթայելով՝ Դիկ Սենդին զցեցին առանց լուսամուտ մի բարաք, մի տեսակ զնդան, որտեղ Ավելցը բանտարկում էր ըմբոստություն կամ բռնություն գործադրելու համար մահվան դատապարտված ստրուկներին: Այդ զնդանում պատանին այլևս ոչ մի հարաբերություն չէր կարող ունենալ դրսի աշխարհի հետ, բայց այդ նրան ցավ չպատճառեց: Նա լուծել էր իր սիրեցյալների վրեժը, որոնք այլևս գոյություն չուներին: Այժմ ինչ էլ որ լիներ նրան սպասող վիճակը՝ նա ամեն ինչի պատրաստ էր:

Նա մտածեց, որ եթե Նեգորոն չթողեց բնիկներին պատժել Հարրիսի սպանողին, այդ նրա համար էր, որ նա ուզում էր իրեն ենթարկել այնպիսի ահռելի տանջանքների, որոնց գաղտնիքը միայն բնիկները գիտեն: Տասնհինգամյա նավապետը նավի խոհարարի իշխանության տակ էր. միայն Հերկուլեսն էր պակասում, որպեսզի Նեգորոյի վրեժը կատարյալ լիներ:

Երկու օր հետո, մայիսի 28-ին, բացվեց տոնավաճառը, մեծ «լակոնին», որտեղ պետք է միմյանց հանդիպեին ներքին շրջանների գլխավոր ֆակտորիաների գերեվաճառները և հարևան նահանգների բնիկները: Անգուլայի այդ շուկան հատկապես ստրուկների վաճառքի համար չէր, այլ բերքառատ Աֆրիկայի բոլոր արտադրանքները պիտի բերվեին այնտեղ արտադրողների հետ միասին:

Առավուտից սկսած աշխուժություն էր տիրում Կազունդեի ընդարձակ չիտոկայում: Այդտեղ հավաքվել էին չորսից հինգ հազար մարդ չհաշված խոզե-Անտոնիո Ալվեցի ստրուկները, որոնց մեջ էին Թոմը և Նրա ընկերները: Այդ խեղճ մարդիկ հենց այն պատճառով, որ օտար ցեղից էին, շատ ավելի թանկ էին գնահատվում մարդկային մսի միջնորդների կողմից:

Ալվեցը տոնավաճառի գլխավոր դեմքն էր. Կոիմբրայի ընկերակցությամբ Նա առաջարկում էր ստրուկների խմբեր, որոնցից ներքին շրջաններից եկած գերեվաճառները քարավան պետք է կազմեին: Այդ գերեվաճառների մեջ աչքի էին ընկնում Տանգանիկայի գլխավոր շուկայի՝ Ուլչիջիի մի քանի խառնածիններ և առևտրի այս ճյուղում խառնածիններին գերազանցող արաբներ:

Բնիկները նույնպես մեծ թվով էին երևում այդտեղ՝ երեխաներ, տղամարդիկ, կանայք. այդ կանայք մուլի գերեվաճառներ էին և առևտրական գործում կարող էին մրցել սպիտակամորթ սեռակիցների հետ: Մեծ քաղաքների շուկաներում, նույնիսկ տոնավաճառի օրը, այդքան աղմուկ և այդքան գործարքներ չեն լինում: Քաղաքակրթվածների մոտ վաճառելու կարիքը գուցե գերազանցում է գնելու ցանկությանը: Աֆրիկայի վայրենիների մոտ առաջարկությունը կատարվում է նույնքան եռանդով, որքան պահանջը:

Երկսեռ բնիկների համար լակոնիկ տոնի օր է, և եթե այդ օրը նրանց վրա չէր երևում իրենց ամենագեղեցիկ հագուստները, որովհետև այդպիսիք չունեին, համենայն դեպս պճնվել էին ամենագեղեցիկ զարդերով: Տղամարդկանց մազերը բաժանված էին չորս մասի և սանրված էին շիկոնի ձևով: Մի քանիսը ծամերը բաժանել էին մանր հյուսերի և կախ արել մկան պոչի նման, իսկ գազաթին՝ կանգնեցրել կարմիր փետուրների մի փունջ: Ուրիշները մազերը օծել էին կարմիր կավահողով և ձեթով: Բնական և կեղծ մազերի այդ գանազան ձևերը զարդարվել էին երկաթե և փղոսկրե բազմաթիվ ծամկալներով և ձողիկներով: Մի քանի պճնամուկներ չբավարարվելով դրանցով՝ մազերը զարդարել էին գույնզգույն հուլունքներով, իսկ այդ խայտաբղետ նախշի մեջտեղը խրել էին դանակ՝ քանդակներով նախշած փղոսկրե կոթով: Կանանց գլխի մազերը բաժանված էին կեռասի մեծությամբ ոլորների, գանգուրների, խոպոպիկների և այդպիսով խառնաշփոթ պատկեր էին առաջացնում: Նրանցից մի քանիսը, ավելի պարզերը, գուցե և ավելի գեղեցիկները, մազերը հյուսել էին և զցել ուսերին անգլիական ձևով, իսկ ուրիշները՝ ֆրանսիական ձևով, այսինքն՝ ճակատի վրա կտրած: Եվ գրեթե միշտ այդ խռիվ ծամերը առատորեն օծում էին ճարպով, կավահողով և կամ փայլող նկուլայով՝ սանդալի ծառի ձյուրե հյութով, այնպես որ այդ պճնամուկ կանանց գլուխը կարծես կղմինդրով ծածկված լիներ:

Չպետք է, սակայն, կարծել թե այդ ճոխ արդուզարդը բնիկների միայն մազերին է վերաբերում: Ինչի՞ էին պետք ականջները, եթե չպետք է կախես թանկագին փայտե ձողիկներ, քանդակած պղնձե օղակներ, եգիպտացորենի ծղոտից հյուսված շղթաներ, որոնք ականջներն առաջ են մղում, կամ սևամեջ դոմիկներ, որոնք որպես ծխատուփ են ծառայում, այդ բոլորը երբեմն այնպես էին ծանրաբեռնում ականջի բլթակը, որ շատ անգամ մինչև ուսերն էր հասնում: Պետք է ասել, որ աֆրիկյան վայրենիները գրպան չունեն և ինչպե՞ս ունենան: Ուստի նրանք դանակները, ծխամորճերը և մյուս գործածական իրերը տեղավորում են որտեղ պատահի և ինչպես կարողանում են: Ինչ վերաբերում է վզին, թևերին, ձեռքերին, ազդրերին և մարմնի այլ մասերին, դրանք անխուսափելիորեն հատկացվում են պղնձե կամ բրոնզե ապարանջաններին, մեջտեղից կիսված և փայլուն կոճակներով զարդարված եղջյուրներին, կարմիր հուլունքների շարքերին, որոնք կոչվում են սամե-սամե կամ «տալակա» և որոնք խիստ ընդունված էին այդ ժամանակ: Այնպես որ առատորեն ցուցադրված այդ զարդերով տեղացի հարուստները շրջիկ սրբատուփի տեսք ունեին:

Բացի դրանից, եթե բնությունը բնիկին ատամներ է տվել, մի՞թե նրա համար չէ, որպեսզի սրեն, կարճացնեն և զանազան ձևեր տան դրանց: Եթե մատների ծայրերին եղունգ կա, մի՞թե նրա համար չէ, որ անչափ երկարեն, որի հետևանքով ձեռքը կարելի չլինի գործածել: Եթե մարդու մարմինը ծածկված է սև կամ թուփ մաշկով, մի՞թե նրա համար չէ, որ այն նախշեն «տեմբո»-յով. մարմնի վրա նկարեն ծառեր, թռչուններ, կիսալուսիններ, լիալուսիններ կամ այնպիսի ավեծածան գծեր, որոնք Լիվինգսթոնը հին Եգիպտոսի նկարներին է նմանեցնում: Հայրերի մարմնի այդ դաջվածքները, որոնք մաշկի վրա նկարում են՝ մի տեսակ կապույտ նյութ ներարկելով մարմնի մեջ, հար և նման «վերատպվում» են երեխաների մարմնի վրա և այդպիսով կարելի է լինում ճանաչել, թե ո՞ր ցեղին կամ ո՞ր ընտանիքին են պատկանում նրանք: Ավելի լավ չէ՞ տոհմանշանը դաջել կրծքին, եթե հնարավոր չէ նկարել կառքի դռան վրա:

Այդպիսին էր զարդարանքի բաժինը բնիկ մոդայասերների մոտ: Ինչ վերաբերում է հագուստին, ապա տղամարդկանցը քարայծի մորթուց կարած մի գոգնոց էր, որը իջնում էր մինչև ձկները, կամ խոտից հյուսված մի շրջազգեստ՝ աչք ծակող գույներով. իսկ կանանց հագուստը ապակե հուլունքներով եզերված կանաչ շրջազգեստ էր՝ զարդարված մետաքսե գույնզգույն կտորներով և հուլունքներով զարդարված գոտիով:

Հասկանալի է, որ այստեղ խոսքը միայն նեգր բարձր խավի մասին էր: Մյուսները, առևտրական կամ ստրուկ, գրեթե կիսամերկ էին: Կանայք մեծ մասամբ բեռնակիրներ էին և շուկա էին գալիս՝ ուսերի վրա մեծ կողովներ դրած, որոնք պահում էին ճակատից անցկացրած կաշվե փոկով: Շուկա հասնելուց և տեղ գրավելուց հետո ապրանքը դատարկում էին և նստում դատարկ կողովի մեջ:

Այդ երկրի զարմանալի բերքատվության հետևանքով լակոնի էր հորդում մեծ քանակությամբ առաջնակարգ սննդամթերք: Այնտեղ առատորեն ցուցադրվում էր բրինձ, որը մեկին հարյուր բերք է տալիս, եգիպտացորեն, որից երեք բերք է ստացվում ութ ամսվա մեջ և մեկից երկու հարյուր է հավաքվում, սուսում, Ուրուայի պղպեղ, որ Կայենայի պղպեղից թունդ է, մանիոկա, սորգո, մուսկատ, ադ, արմավենու ձեթ: Շուկայում միմյանց կողքին թափվել էին հարյուրավոր այծեր, խոզեր, անբուրդ ոչխարներ, զանազան տեսակի թռչուններ, ձկներ և այլն: Բրդեղենի համաչափությունն ու վառ գույնը աչք էր շլացնում: Փոքրիկ նեգրերը զանազան տեսակի խմիչքներ էին վաճառում և իրենց զիլ ձայնով գրավում հաճախորդներին. այդ խմիչքներն էին պոմբե կոչվող բանանի թունդ և շատ գործածվող գինին, բանանի պտուղից պատրաստված քաղցր գարեջուրը՝ «մալոֆուն», «հիդրոմել» կոչվող հեղուկը, որը խառնուրդ է մեղրի ու ջրի, և որի խմորումը կատարվում է գարով:

Բայց Կազոնդեի տոնավաճառը ամենից ավելի հետաքրքիր դարձնողը կտորեղենի և փղոսկրի առևտուրն էր:

Կարելի էր հաշվել հազարավոր հակերով «մերիկանի»՝ կոշտ չիթը, որ եկել էր Մասսաչուսեթսի Սալեմ քաղաքից, «կանիկին», «սոհարին» և այլն, բոլորը զանազան չափսի, գույնի, տարբեր տեսակի նկարներով, գծավոր, քառակուսիներով և այլն, երեք յարդի գինը յոթ դոլարից մինչև ութսուն դոլար՝ եթե ոսկեճամուկ է:

Ինչ վերաբերում է փղոսկրին, մեծ քանակությամբ ստացվում էր Կենտրոնական Աֆրիկայի բոլոր շրջաններից՝ ուղարկվելու համար Խարթում, Չանգիբար կամ Նաթալ, և բազմաթիվ էին այն վաճառականները, որոնք առևտրի միայն այդ ճյուղով էին զբաղվում:

Կարելի՞ է պատկերացնել, թե ինչքան փոքր պետք է սպանել, ստանալու համար այն հինգ հարյուր հազար կիլոգրամ փղոսկրը, որն ամեն տարի արտահանության միջոցով Եվրոպայի և հատկապես Անգլիայի շուկան է դուրս բերվում: Քառասուն հազար փղի ոսկոր միայն Մեծ Բրիտանիայի կարիքներին է հարկավոր: Աֆրիկայի արևմտյան ծովափը միայն այս թանկագին նյութից արտադրում է հարյուր քառասուն տոննա:

Փղի մի զույգ ժանիքի միջին ծանրությունը տասը կիլոգրամ է, որը 1874 թ. արժեր մինչև հազար հինգ հարյուր ֆրանկ, բայց պատահում են այնպիսիները, որոնց քաշը հասնում է հարյուր վաթսուհինգ ֆունտի: Հատկապես Կազոնդեի շուկայում փղոսկրի գնորդները կգտնեն հիանալի փղոսկր՝ անթափանց, փայլուն, հեշտ հղկելի, թխակեղև, սպիտակությունը պահող և ժամանակի ընթացքում չդեղնող, ինչպես ուրիշ շրջանների փղոսկրը:

Այժմ երկու խոսք այն մասին, թե ինչպե՞ս էին կատարվում առևտրական գործողությունները գնորդի և վաճառողի միջև: Դրամական ի՞նչ միավոր էր գործածվում: Արդեն ասել ենք, որ Աֆրիկայի առևտրականների համար դրամական միավորը ստրոկկն էր:

Իսկ բնիկները որպես դրամ գործածում էին Վենետիկում պատրաստված ապակե հուլունքները, որոնց կանաչավուն-սպիտակները «կաչոկոլո» են կոչվում, սևերը՝ «բուբուկու», վարդագույնները՝ «սիկունդերեչե»: Տասը շարք այդ հուլունքները կամ «խեթները», որոնք երկու անգամ պարանոցի շուրջը կարող են փաթաթվել, «ֆունդո» են կոչվում և մեծ արժեք ունեն: Այդ մարգարիտների ամենասովորական չափը «ֆրագիլահն» է, որը երեսուհինգ կիլոգրամ քաշ ունի: Լիվինգսթոնը, Քամերոնը, Սթենլին իրենց հետ միշտ մեծ քանակությամբ վերցնում էին այդ դրամից: Բացի այս դրամից, տեղական շուկաներում գործածվում էին նաև տարբեր նյութերից պատրաստված դրամական միավորներ: Իսկ մարդակեր ցեղերը որոշ արժեք էին տալիս մարդկային ատամներին: Լակոնիում որևէ բնիկի վզից կախված կարելի էր տեսնել այդպիսի ատամներից կազմված մանյակ, որի տերերին անկասկած կերել էր այդ վայրենին, սակայն ատամներն սկսում էին արժեքագրվել:

Այդպիսին էր այս մեծ տոնավաճառի տեսքը: Կեսօրվա դեմ շարժումը գազաթնակետին էր հասել, աղմուկը խլացուցիչ դարձել: Ուշադրության չարժանացող վաճառողների կատաղությունը, թանկ գնած գնորդի զայրույթը հնարավոր չէ արտահայտել: Հաճախակի կռիվներ էին ծագում, և շատ հասկանալի է, որ ոստիկաններ չկային, որպեսզի այդ աղմկող ամբոխի մեջ կարգ վերահաստատեն:

Կեսօրի մոտ Ալվեցը հրամայեց հրապարակ բերել այն ստրոկկներին, որոնցից ուզում էր ազատվել: Այդպիսով շուկայի ամբոխի վրա ավելացավ ևս ամեն տարիքի երկու հազար դժբախտ մարդ, որոնց գերեվաճառը բարաքներում պահում էր մի քանի ամսից ի վեր: Այդ «պահեստի ապրանքը» վատ վիճակում չէր: Երկար հանգիստը, բավարար ուտելիքը բարձրացրել էին ստրոկկների շուկայական գինը: Իսկ վերջին եկողները չէին կարող համեմատվել նրանց հետ: Եթե մի ամիս բարաքներում մնային, անշուշտ ավելի մեծ շահով կվաճառվեին, բայց արևելյան ծովափի պահանջը այնքան մեծ էր, որ Ալվեցը որոշեց նրանց ցուցադրել այնպես, ինչպես կային:

Այդ, իհարկե, դժբախտություն էր Թոմի և Նրա երեք ընկերների համար:

Հավիտարները նրանց քշեցին և բերեցին հրապարակ: Նրանք պիտի շղթայված էին, և նրանց հայացքից երևում էր, թե ինչպե՞ս էին կատաղել, ինչպիսի՞ ամոթ էին զգում:

– Պարոն Դիկը չի երևում, – ասաց Բաթը՝ հրապարակը դիտելուց հետո:

– Ոչ, – պատասխանեց Ակտեռնը, – նրան չեն վաճառի:

– Նրան կսպանեն, եթե դեռևս չեն սպանել, – ավելացրեց ծերունի նեգրը: – Իսկ մեզ միայն մի հույս է մնում, այն, որ միևնույն գերեվաճառք բուլոքիս միասին գնի, մեզ համար միսիթարություն կլինի, որ չբաժանվենք իրարից:

– Ինչքան ծանր կլինի ինձ համար, որ դու ինձանից հեռու լինես և որպես ստրուկ աշխատես... Խեղճ ծերունի հայրս, – բացականչեց Բաթը, որի դեմքը ողողված էր արցունքով:

– Ոչ... – ասաց Թոմը, – մեզ չեն բաժանի, և գուցե կարողանանք...

– Ա՛խ, եթե Հերկուլեսը այստեղ լինե՛ր, – բացականչեց Օստինը:

Սակայն հսկա նեգրը չէր երևացել: Դիկ Սենդին տեղեկություններ տալուց հետո ոչ մի լուր չկար ո՛չ Դինգոյի, ո՛չ նրա մասին: Պե՞տք էր, ուրեմն, նախանձել նրա վիճակին: Իհարկե այո, որովհետև, եթե Հերկուլեսը վախճանվել էր, գոնե ստրուկի շղթան չէր կրել իր վրա:

Այդ միջոցին վաճառքը սկսվել էր: Ավելցի գործակալները տղամարդկանց, կանանց, երեխաների խմբեր էին ման ածում բազմության մեջ՝ առանց ուշադրություն դարձնելու, թե բաժանում են մայրերին երեխաներից: Մի՞թե կարելի էր այդպես անվանել այդ դժբախտներին, որոնց հետ վարվում էին այնպես, ինչպես տնային կենդանիների հետ: Թոմին և նրա ընկերներին տանում էին մի գնորդից մի ուրիշի մոտ: Գործակալներից մեկը քայլում էր նրանց առջևից և բարձր ձայնով հայտնում նրանց խմբի արժեքը: Կենտրոնական նահանգների խառնածին կամ արաբ միջնորդները մոտենում ու զննում էին, բայց նրանց մոտ չէին գտնում աֆրիկյան ցեղի հատուկ նշանները, որ այդ ամերիկացիները փոխել էին երկրորդ սերնդից հետո: Սակայն այդ ուժեղ և խելացի նեգրերը, որ այնքան տարբեր էին Չամբեզիի և Լուալաբայի ավերից եկած նեգրերից, մեծ արժեք էին ներկայացնում նրանց աչքին: Նրանց մարմինը շոշափում, դարձնում էին ետ ու առաջ, նայում ատամները, ինչպես անում են ձիեր առնող-վաճառողները: Ձեռնափայտը նետում էին հեռուն ու նրանց պարտավորեցնում գնալ բերել, որպեսզի իմանան նրանց շարժվելու արագությունը:

Այդպես էր բուլոքի համար կիրառվող մեթոդը, և բուլոքը պետք է ենթարկվեին այդ ստորացուցիչ փորձերին: Թող չկարծվի, թե այդ դժբախտ մարդիկ անտարբեր էին այդպիսի ստոր վերաբերմունքի հանդեպ: Ոչ: Բացի երեխաներից, որոնք չէին կարող հասկանալ, թե ինչ աստիճան էին ստորացնում իրենց, բուլոք տղամարդիկ ու կանայք մեծ ամոթ էին զգում: Բացի դրանից, նրանց անվերջ հայիոյում և ծեծում էին: Կիսահարբած Կիոմբրան և Ավելցի գործակալները նրանց հետ վարվում էին ծայր աստիճան կոպտությամբ, իսկ նոր տերերը, որոնք նրանց գնում էին փողոսկրով, կտորեղենով կամ մարգարիտով, ավելի լավ վերաբերմունք չէին ցույց տալիս: Բռնությամբ միմյանցից բաժանելով, մորը՝ երեխայից, ամուսնուն՝ կնոջից, եղբորը՝ քրոջից, թույլ չէին տալիս ո՛չ վերջին հրաժեշտը, ո՛չ վերջին համբույրը, միևնույն այդ շուկայում նրանք վերջին անգամ էին իրար տեսնում:

Արդարև գերեվաճառության կարիքները պահանջում էին, որ ստրուկները, ըստ իրենց սեռի, տարբեր նշանակում ստանան: Տղամարդկանց գնորդները ուրիշ գերեվաճառներ էին, կանանցը՝ ուրիշ: Այս վերջինները, մահմեդականների բազմակնության սովորության հետևանքով, տարվում էին արաբական երկրները և այնտեղ փոխանակվում փղոսկրի հետ: Իսկ տղամարդիկ հատկացվում էին ծանր աշխատանքի, տարվում ծովեզերքի ֆակտորիաները և արտահանվում կամ իսպանական գաղութները, կամ Մասկատի և Մադագասկարի շուկաները: Այդ ընտրությունը սրտաճմլիկ տեսարաններ էր առաջացնում բաժանվողների միջև, նրանք հեռանում էին միմյանցից և կմեռնեին, առանց այլևս մեկը մյուսին տեսնելու:

Թոմը և նրա ընկերները ևս իրենց հերթին պետք է ենթարկվեին ընդհանուր օրենքին: Բայց, ճիշտն ասած, նրանք չէին վախենում այդ հավանականությունից: Նրանց համար ավելի լավ էր արտահանվել ստրուկների որևէ գաղութ: Այնտեղ գոնե հույս կունենային բողոքել և պարզել իրենց դրությունը: Իսկ եթե մնային Աֆրիկայի կենտրոնական որևէ շրջանում, նրանց համար ազատվելու ամեն հույս ընդմիշտ կորած կլիներ:

Եղավ այնպես, ինչպես իրենք էին ցանկանում: Նույնիսկ միմյանցից չբաժանվելու անսպասելի բախտին արժանացան: Նրանց խմբի համար Ուջիջիի մի քանի գերեվաճառների մեջ մեծ պայքար տեղի ունեցավ: Խոզե-Անտոնիո Ալվեցը ուրախությունից ձեռքերն էր շփում: Չորս նեգրերի արժեքը բարձրանում էր: Ամեն մեկն ուզում էր ինքը տեր լինել Կազոնդեի շուկայի համար անսովոր այդ թանկարժեք ստրուկներին, որոնց անցյալի մասին Ալվեցը լռություն էր պահում, իսկ Թոմը և նրա ընկերները, տեղական լեզուն չիմանալով, չէին կարողանում իրենց բողոքը հայտնել:

Նրանց տեր դարձավ մի հարուստ գերեվաճառ արաբ, որը մի քանի օր հետո նրանց կտաներ Տանգանիկա լճի ափը, որտեղից անցնում են ստրուկները, իսկ այնտեղից՝ դեպի Չանգիբարի ֆակտորիաները:

Կհասնեի՞ն մինչև այնտեղ Կենտրոնական Աֆրիկայի ամենավատառոջ ու ամենավտանգավոր շրջաններից անցնելով: Հազար հինգ հարյուր մղոն պետք է անցնեին այդպիսի պայմաններում, գանազան տեղական իշխողների միմյանց դեմ վարած կռիվների միջով, մահացու կլիմայի պայմաններում: Ե՛րբունի Թոմը կկարողանա՞ր դիմանալ այդպիսի տանջանքի: Չէ՞ր ընկնի արդյոք ճանապարհին, պառավ Նանի նման:

Սակայն խեղճ նեգրերը միմյանցից բաժանված չէին: Նրանց համար այնքան ծանր չէր թվում այն շղթան, որը բոլորին միասին կապեց: Արաբ առևտրականը նրանց առանձին բարաքի մեջ դնել տվեց: Պարզ էր, որ նա հատուկ ուշադրություն կդարձներ այդ ապրանքին, որից մեծ շահ կստանար Չանգիբարի շուկայում:

Թոմը, Բաթը, Ակտեոնը և Օստինը հեռացան հրապարակից և ոչինչ չտեսան այն տեսարանից, որով պիտի վերջանար Կազոնդեի տոնավաճառը:

XI. Կազոնդեի թագավորին մատուցված պուևնը

Երեկոյան ժամը յոթն էր, երբ գլխավոր փողոցի ծայրին լսվեց թմբուկների, ծնծղաների և աֆրիկյան այլ երաժշտական գործիքների աղմկալի ձայնը: Իրարանցումը այդ միջոցին կրկնապատկվեց շուկայի բոլոր անկյուններում:

Կեսօրվա տուրուդմբոցները, ճիչերն ու վեճերը չէին կտրել այդ գազազած առևտրականների ձայները, ոչ էլ հոգևեցրել նրանց: Դեռևս բավական թվով ստրուկներ էին մնում չծախված: Գերեվաճառները միմյանց հետ վիճում էին և ստրուկների գները սակարկում այնպիսի եռանդով, որի մասին Լոնդոնի բորսան իսկ անկատար գաղափար կտա:

Բայց երբ սկսվեց այդ աններդաշնակ համերգը, ամեն գործողություն կանգ առավ, և գոռգոռացողները կարողացան մի քիչ շունչ քաշել:

Բանն այն է, որ Կազոնդեի թագավորը՝ Մուլանի Լուևզան, բարեհաճել էր իր այցելությամբ պատվել մեծ տոնավաճառը: Կանանց, «պաշտոնյաների», զինվորների և ստրուկների մի բազմաթիվ շքախումբ հետևում էր նրան: Ալվեցը և մյուս գերեվաճառները դիմավորեցին նրան և բացառիկ հարգանքներ մատուցեցին, որոնց հանդեպ այնքան զգայուն էր այդ ապուշ թագակիրը:

Մուլանի Լուևզան, որ գալիս էր հնամաշ պատգարակով, ցած իջավ հրապարակի մեջտեղը՝ մի տասնյակ ստրուկների օգնությամբ:

Այդ թագավորը հիսուն տարեկան էր, բայց արտաքինով կարծես ութսունամյա ծերունի լիներ: Պատկերացրեք խոր ծերության հասած մի կապիկ: Նրա գլուխը ծածկված էր մի տեսակ խույրով, զարդարված ընծառյուծի կարմիր ներկված ճիրաններով և սպիտակամազ փնջով. այդ էր Կազոնդեի վեհապետի թագը: Նրա գոտուց կախ էր ընկած քարայծի մորթուց պատրաստված մարգարտաշար երկու շրջագգեստ, որն ավելի կոշտ էր, քան դարբնի գոգնոցը: Կրծքի վրայի բազմաթիվ նախշերը վկայում էին նրա հնագույն ցեղի պատկանելի, և եթե հավատ ընծայվի այդ վկայության, Մուլանի Լուևզաների տոհմային ծագումը կորչում էր պատմության խավարի մեջ: Նորին վեհափառության կոճերի, ձեռքերի, թևերի վրա փաթաթված էին թանկագին քարերով զարդարված պղնձե ապարանջաններ, իսկ ոտքերին հագել էր լակեյի դեղնագույն երկարավիզ կոշիկներ, որը Ալվեցն էր նվեր տվել մի քսան տարի առաջ: Ավելացրեք ձախ ձեռքում բռնած արծաթապատ գլխով մեծ գավազանը, աջ ձեռքում՝ մարգարտաշար կրթով ճանճքիկը, գլխի վերևում՝ խուլնացած ու հնացած հովանոցը, որը կարծես ծաղրածուի անդրավարտիքից լիներ կարված, վերջապես՝ վզից կախված խոշորացույցը և քթին դրած ակնոցը, որ կուզեն Բենեդիկտին այնքան հարկավոր էր և որը հանեցին Բաթի գրպանից, կստանաք նորին վսեմության պատկերը, որը դրդացնում էր երկիրը՝ հարյուր մղոն շառավիղով տարածության վրա:

Մուլանի Լուևզան նրանով իսկ, որ նստած էր գահի վրա, երկնային ծագում էր վերագրում իրեն և հպատակներին, որոնք կասկածանքով էին վերաբերվում դրան, ուղարկում էր մյուս աշխարհը, որպեսզի ստուգեն: Նա ասում էր, թե երկնային ծագման շնորհիվ ոչ մի բանով կապված չէ երկրային կարիքներին, իսկ եթե ուտում էր, ուրեմն, այդպես էր ցանկանում, խմում էր, որովհետև հաճույք էր զգում: Պետք է ասել, թե նրա խմածից ավելին անկարելի էր խմել: Նրա մինիստրները, պաշտոնյաները, որոնք անբուժելի հարբեցողներ էին, իր համեմատությամբ ժուժկալներ էին: Նա ծայր աստիճան ակոհոլով ներծծված մի վեհափառ էր և անվերջ թաթախվում էր թունդ գարեջրով, պոմբեով և մի տեսակ օղիով, որը նրա համար առատորեն հայթայթում էր Ալվեցը:

Այդ Մուլանի Լուևզան իր կանանոցում ուներ ամեն տարիքի և կարգի կանայք, որոնց մեծ մասը ընկերացել էին նրան լակոնի կատարած այցելության պահին: Մուլանան՝ նրա առաջին կինը, որին թագուհի էին կոչում, քառասուն տարեկան մեգերա էր՝ թագավորական արյունով: Մուլանան հագել էր խայտաբղետ կտորից կարած ինչ-որ վերնագգեստ, խոտից գործած, հովուկներով զարդարված մի

շրջագգեստ, ապարանջաններ ամեն տեղ, ուր կարելի է դնել, գանգրացված սանրվածքը, որը ահագին շրջանակ էր կազմում փոքր գլխի վրա, մի խոսքով՝ կատարյալ հրեշ: Մյուս կանայք, որոնք թագավորի քրոջ կամ եղբոր աղջիկները կամ քույրերն էին, թեև այդքան ճոխ չէին պնդված, բայց ավելի երիտասարդ էին, գնում էին թագուհու հետևից և պատրաստ էին իշխանավորի առաջին իսկ նշանին կատարել կահկարասու պարտականությունը: Իսկապես, այդ դժբախտ արարածներին ուրիշ կերպ չէր կարելի անվանել: Եթե թագավորը նստել էր ուզում, կանանցից երկուսը գետին էին կռանում և որպես նստարան ծառայում, իսկ ուրքերը դնում էր ուրիշ կանանց վրա, որոնք որպես գորգ փռվում էին գետնին:

Մուսնի Լուսգայից հետո գալիս էին նաև նրա պաշտոնյաները, սպաները և վիուկները: Նախ և առաջ աչքի էր ընկնում այն երևույթը, որ այդ վայրենիները, որոնք քայլելիս շարժվում էին իրենց տիրոջ նման, զրկված էին մարմնի որևէ մասից՝ մեկը ականջից, մի ուրիշը՝ աչքից, երրորդը՝ քթից, չորրորդը՝ ձեռքից: Ոչ մեկը լրիվ կազմով չէր: Այդ նրանից էր, որ Կազունդեում երկու տեսակ պատիժ էր կիրառվում՝ անդամահատություն կամ մահապատիժ, և դա կախված էր թագավորի քմահաճույքից: Ամենափոքր հանցանքի համար հեռացնում էին որևէ անդամը, իսկ ավելի մեծ հանցանք գործողների ականջներն էին կտրում, որպեսզի չկարողանան օդեր կախել:

Երկրի շրջանների՝ «կիլոլոների» պետերը, որոնք իշխում էին ժառանգաբար կամ նշանակվում չորս տարով, իրենց գլխին դնում էին գերի մորթուց պատրաստած թասակ, նրանց միակ հագուստը կարմիր ժիլետն էր, ձեռքում բռնում էին երկար գավազան, որի մի ծայրը օծված էր կախարդական հյուլթերով:

Ինչ վերաբերում է զինվորներին, նրանց հարձակողական և պաշտպանողական զենքերն էին՝ փայտե աղեղ, պահեստի լարով հանդերձ, օծալեզու դանակ, լայն և երկար տեգ, փորագրություններով զարդարված արմավենու փայտից վահան: Իսկ նրանց բուն համագգեստը բացարձակապես ոչինչ չէր պակասեցնում նորին վեհափառության գանձարանից:

Վերջապես թագավորի շքախմբի վերջին շարքերում գալիս էին պալատական վիուկներն ու նվագածուները:

Վիուկները՝ «մգանգաները», միաժամանակ այդ երկրի բժիշկներն են: Այդ վայրենիները կուրորեն հավատում են գերբնական, դյուբական ուժերի, ֆետիշներին՝ սպիտակ և կարմիր կավահողե դիմանկարներին, այլանդակ կենդանիների և տղամարդկանց ու կանանց դեմքերը ներկայացնող փայտե արձանիկներին: Պետք է ասել, որ այդ վիուկները նույնպես անդամագրկված էին, ինչպես մյուս պալատականները: Կասկած չկա, որ վեհապետը այդ ձևով էր վարձատրում նրանց անհաջող բուժումների համար:

Տղամարդ ու կին նվագածուները խլացուցիչ ճոռիկներ էին թափահարում, աղմկալի թմբուկներ թնդացնում կամ թրթռացնում «մարիմբա» կոչվող, կաուչուկի կլոր գլխով վերջավորվող փայտե ձողիկներ: Այդ բոլորը անտանելի խլացուցիչ էր, բայց աննկատելի՝ աֆրիկացու ականջներ ունեցողների համար:

Արքայական այդ թափորը կազմող բազմության վրա ծածանվում էին մի քանի դրոշակներ և նշանատախտակներ: Չինվորները տանում էին բարձր տեգերի վրա ցցված՝ Մուսնի Լուսդայի հաղթած պետերի սպիտակած գանգերը:

Երբ թագավորը պատգարակից դուրս եկավ, բոլոր կողմերից օվացիա սարքեցին նրա պատվին: Քարավանի զինվորները կրակեցին իրենց հնացած հրացանները, որոնց թույլ որոտը չէր խլացնում ամբոխի գոռում-գոչունը: Հավիլդարները իրենց

սև դունչը կինոբարի փոշով (որ կրում էին մի քսակի մեջ) տրորելուց հետո երկրպագեցին թագավորին: Այնուհետև Ալվեցը իր հերթին առաջանալով՝ թագավորին մատուցեց մի ծրար թարմ ծխախոտ՝ «հանգստացնող խոտ», ինչպես ասում են այդ երկրում, և իսկապես թագավորը խիստ կարիք ուներ հանգստանալու, քանի որ հայտնի չէ, թե ինչու շատ վատ էր տրամադրված:

Ալվեցի հետ միաժամանակ Կոիմբրան, Իբն Խամիսը և արաբ կամ խառնածին մյուս գերեվաճառները եկան իրենց նվիրվածությունը հայտնելու Կազոնդեի հզոր վեհապետին: «Մարհաբա» ասում էին արաբները, որ Կենտրոնական Աֆրիկայի լեզվով բարի գալուստ է նշանակում, մի քանիսը ծափ էին տալիս և մինչև գետին խոնարհվում, ուրիշները դեմքը ցեխոտում էին և այդ զգվելի վեհապետին ամենախոր հարգանք մատուցում:

Մուանի Լուևգան հազիվ էր նայում այդ ամբոխին և քայլում էր ոտքերը լայն բաց արած, կարծես թե հողը շարժվում էր նրա ոտքերի տակ: Նա քայլեց այդպես կամ ավելի շուտ գլորվեց ստրուկների խմբավորումների մեջ, և եթե գերեվաճառները վախենում էին, թե խելքին կփչեր յուրացնել կալանավորներից մի քանիսին, վերջիններս նույնպես սոսկում էին, որ կընկնեն այդ մարդու իշխանության տակ:

Նեգորոն ոչ մի բան չէր հեռանում Ալվեցից և նրա ընկերակցությամբ իր հարգանքներն էր մատուցում թագավորին: Երկուսն էլ խոսում էին բնիկների լեզվով, եթե իհարկե խոսակցություն կարելի է անվանել զրույցը, որին Մուանի Լուևգան մասնակցում էր միավանկ հնչյուններով, որոնք հազիվ էին դուրս գալիս այդ հարբածի շրթունքներից: Նրա խոսակցությունը դառնում էր միայն օդու շուրջը: Ալվեցից պահանջում էր նորոգել իր պաշարը, որը վերջացել էր անխնա գինարբուքների հետևանքով:

– Լուևգա թագավորը թանկագին հյուր է Կազոնդեի տոնավաճառում, – ասաց գերեվաճառը:

– Ծարավ եմ, – պատասխանեց վեհապետը:

– Թագավորն իր բաժինը կստանա տոնավաճառի եկամտից, – ավելացրեց Ալվեցը:

– Խմի՛չք, – կրկնում էր Մուանի Լուևգան:

– Նեգորո բարեկամս ուրախ է, որ թագավորին տեսնում է Կազոնդեում երկար բացակայությունից հետո:

– Խմի՛չք, – դարձյալ կրկնեց հարբեցողը, որի ամբողջ մարմնից ավլոհողի զգվելի հոտ էր փչում:

– Պոմբե՞, թե մեղրաջուր, – բացականչեց խոզե-Անտոնիո Ալվեցը, հասկանալով, թե ինչ էր ցանկանում Մուանի Լուևգան:

– Ոչ... ոչ... – պատասխանեց արքան... – ոգելից ըմպելիքի ամեն մի կաթիլի համար իմ բարեկամ Ալվեցին կտամ...

– Մի կաթիլ սպիտակամորթի արյուն, – բացականչեց Նեգորոն՝ խորհրդավոր ակնարկ անելով Ալվեցին, որը հասկացավ, թե ինչ էր ուզում ասել Նեգորոն, և գլխով հավանություն տվեց:

– Սպիտակամորթի արյո՛ւն, լավ, սպանել սպիտակամորթին, – ասաց Մուանի Լուևզան, որի վայրենի բնագոյը արթնացավ պորտուգալացու առաջարկի առթիվ:

– Մի սպիտակամորթ սպանեց Ալվեցի գործակալին, – շարունակեց Նեգորոն:

– Այո... գործակալ Հարրիսին, – ավելացրեց գերեվաճառը, – և պետք է լուծել նրա վրեժը:

– Այո սպիտակամորթին ուղարկել Վերին Չաիրի շրջանը, Մասնագո թագավորին: Ասուաները նրան կտոր-կտոր կանեն և ողջ-ողջ կուտեն: Նրանք չեն մոռացել մարդու մսի համը, – բացականչեց Մուանի Լուևզան:

Իսկապես, այդ Մասնագոն մարդակերների մի ցեղի թագավորն էր, և դժբախտաբար, իրականություն է, որ Կենտրոնական Աֆրիկայի մի շարք շրջաններում մարդակերությունը դեռևս բացահայտորեն շարունակվում է: Լիվինգսթոնը այդ մասին խոսում էր իր ուղևորական հուշերում: Լուևզաբայի ափերին ապրող մանիեմաները ոչ միայն ուտում են կռվի դաշտում սպանված մարդկանց, այլև ստրուկներ են գնում ուտելու համար, ասելով. «Մարդու միսը մի քիչ աղի է և համեմունքի քիչ կարիք ունի»: Այդ մարդակերներին Քամերոնը ևս պատահել է Մոենե Բուզգայի մոտ, որտեղ մարդկանց դիակներն ուտում են մի քանի օր հոսող ջրի մեջ պահելուց հետո միայն: Սթենլին Լուևզաբայի Ուկուզուի բնակիչների մոտ պատահել է մարդակերության դեպքերի, որ անշուշտ շատ է տարածված կենտրոնի ցեղերի մոտ:

Ինչքան էլ դաժան լիներ Դիկ Սենդի նկատմամբ թագավորի առաջարկը, բայց և այնպես Նեգորոյի ուզածն այդ չէր: Նա չէր ուզում ձեռքից բաց թողնել իր զոհին:

– Այստեղ սպանեց սպիտակը մեր ընկերոջը՝ Հարրիսին, – ասաց Նա:

– Այստեղ էլ պետք է մեռնի, – ավելացրեց Ալվեցը:

– Որտեղ ուզում ես, Ալվեց, – պատասխանեց Մուանի Լուևզան, – բայց մի պայմանով՝ մի կաթիլ հրե ջուր մի կաթիլ արյան փոխարեն:

– Այո, – պատասխանեց գերեվաճառը, – հրե ջուր, և այսօր կտեսնես, որ այդ խմիչքը արժանի է այդ անվան: Մենք կբոցավառենք այդ հեղուկը: Խոզե-Անտոնիո Ալվեցը պունջ կմատուցի Մուանի Լուևզա թագավորին...

Հարբեցողը խփեց իր բարեկամի՝ Ալվեցի ձեռքին: Ուրախությունից չէր կարողանում զսպել իրեն: Նրա կանայք, պալատականները մասնակցում էին նրա խանդավառությանը. ոչ մի անգամ չէին տեսել օդու բռնկումը և անկասկած հույս ունեին խմել բոցավառ հեղուկից:

Խե՛ղճ Դիկ Սենդ, ինչպիսի ահավոր տանջանք էր սպասում նրան: Երբ մտածում ես հարբեցողության սոսկալի և այլանդակ հետևանքների մասին քաղաքակրթված երկրներում, հասկանալի է դառնում, թե ինչ աստիճանի կհասցնի դա վայրենի մարդկանց:

Պարզ էր, սպիտակամորթին տանջանքի ենթարկելը տիպիկ չէր լինի ոչ մի բնիկի, ոչ նրանց նման Նեգո Խոզե-Անտոնիո Ալվեցին, սևամորթ խառնածին Կոմբերային, ոչ Նեգորոյին, որը դաժան ատելությանը էր լցված իր գույնի մարդկանց հանդեպ:

Իջել էր երեկոն, անվերջալույս երեկոն, և շուտով ցերեկվան անմիջապես կհաջորդեր գիշերը ակոհովի բոցավառման հարմար պահը:

Իսկապես, հաղթական միտք էր հղացել Ալվեցը՝ նորին վեհափառությանը օղի մատուցել ուրիշ ձևով: Մուանի Լուևզան արդեն սկսել էր ձանձրանալ օղուց և գտնում էր, թե բավականաչափ չի արդարացնում իր անունը: Գուցե բոցավառված ու կիզիչ օղին ախորժալիորեն կգրգռեր նրա անզգայացած լեզուն:

Այդպիսով, երեկոյան ծրագիրը պարունակում էր նախ պունջ, այնուհետև՝ սպիտակ մարդու տանջանք:

Դիկ Սենդը, պինդ փակված մուրճ բանտում, դուրս կգար այդտեղից մահապատժի ենթարկվելու համար միայն: Մյուս ստրուկները, վաճառված կամ ոչ, վերստին փոխադրվեցին բարաքները: Չիտոկայում մնացել էին միայն գերեվաճառները, հավիլդարները, զինվորները, որոնք պատրաստ էին պունջի իրենց բաժինն ստանալ, եթե թագավորն ու պալատականները մի բան թողնեին նրանց:

Խոզե-Անտոնիո Ալվեցը, Նեգրոյի խորհրդով, ամեն ինչ պատրաստել էր:

Գերեվաճառը բերեց և հրապարակի մեջտեղը դնել տվեց մի պղնձե կաթսա՝ մոտավորապես երկու հարյուր լիտր տարողությամբ: Կաթսայի մեջ լցրին մի քանի տակառ վատ տեսակի, բայց թունդ սպիրտ, որին առատորեն ավելացրին պղպեղ և զանազան տեսակի համեմունքներ վայրենիների այդ պունջը է՛լ ավելի թունդացնելու համար:

Բոլոր ներկաները շրջապատել էին թագավորին: Մուանի Լուևզան օրորվելով մոտեցավ կաթսային: Թվում էր, թե այդ օղին նրան կախարդել էր, և նա պատրաստվում էր կաթսայի մեջ նետվել:

Ալվեցը ետ պահեց նրան և ձեռքը տվեց վառված պատրույգը՝ գոհունակության ծամածռությամբ «կրա՛կ» բացականչելով:

— Կրակ, — կրկնեց Մուանի Լուևզան՝ հեղուկը խառնելով պատրույգի ծայրով:

Պետք էր տեսնել, թե ինչպես հեղուկը բռնկվեց, և կապույտ բոցերը թռչկոտեցին կաթսայի երեսին: Ալկոհոլը ավելի թունդ դարձնելու համար Ալվեցը մի քանի բուռ աղ էր խառնել, որի հետևանքով կաթսայի մոտ եղողների դեմքը այնպիսի կապարագույն կերպարանք ստացավ, որպիսին մարդու երևակայությունն ուրվականներին է վերագրում: Նեգրերը նախօրոք հարբած լինելով՝ սկսեցին բղավել, շարժումներ անել և միմյանց ձեռք բռնած՝ մի մեծ շրջան կազմեցին Կազնդեի թագավորի շուրջը:

Ալվեցը մետաղե մեծ շերտիք ձեռքին՝ խառնում էր հեղուկը, որը դժգույն ցուլքեր էր արձակում այդ խելահեղ կապիկների վրա:

Մուանի Լուևզան մոտեցավ կաթսային և գերեվաճառի ձեռքից խլելով շերտիքը, կոխեց կաթսայի մեջ, ապա բոցավառ պունջով լցված շերտիքը կաթսայից հանելով՝ մոտեցրեց շրթունքներին:

Բայց ինչպիսի՜ աղաղակ բարձրացրեց Կազնդեի արքան:

Բոպեական բռնկում էր տեղի ունեցել: Թագավորը այրվում էր նավթի շշի նման: Թեև կրակը մեծ շերտություն չէր առաջացնում, բայց և այնպես այրում էր անխնա:

Այդ տեսարանի առաջ բնիկների պարը իսկույն դադարեց:

Մուլանի Լուսնգայի մինիստրներից մեկը նետվեց վեհապետի կրակը հանգցնելու, սակայն տիրոջ նման բոցավառվեց ինքն էլ:

Այդ հաշվով Մուլանի Լուսնգայի բոլոր պալատականները ամբողջովին ենթակա էին այրման:

Ավելցը և Նեգորոն չգիտեին, թե ինչպես օգնության հասնեն Նորին վսեմությանը: Սարսափած կանայք փախուստ տվեցին: Ինչ վերաբերում է Կոիմբրային, ապա նա ևս ծլկեց՝ գիտենալով, որ ինքը նույնպես կբոցավառվի:

Թագավորը և մինիստրը ընկնելով գետին՝ ջղաձգվում էին ահռելի ցավերից:

Ալկոհոլով խորապես հագեցած մարմինների այրումը միայն թեթև և կապտավուն բոց է առաջացնում, որը ջրից չի հանգչում: Եթե նույնիսկ դրսից հաջողվեր հանգցնել, այրումը կշարունակվեր ներսից: Երբ ալկոհոլը թափանցել է բոլոր հյուսվածքների մեջ, ոչ մի հնար չկա կանգնեցնելու այրումը:

Մի քանի րոպե հետո Մուլանի Լուսնգան և նրա բարձր պաշտոնյան անշնչացել էին, բայց շարունակում էին այրվել: Քիչ հետո այնտեղ, որտեղ նրանք թավալվել էին, միայն ածուխ, մեկ կամ երկու ողնաշարի կտոր, մատներ էին մնացել:

Ահա այն բոլորը, ինչ որ մնացել էր Կագոնդեի թագավորից և նրա մինիստրից:

XII. Թագավորի թաղումը

Հաջորդ օրը, մայիսի 29-ին, Կագոնդե քաղաքը արտասովոր տեսք էր ստացել: Սարսափած բնիկները փակված էին իրենց խրճիթներում: Նրանք կյանքում չէին տեսել, որ երկնային ծագում ունեցող թագավորը և նրա մինիստրը մեռնեն այդպիսի սոսկալի մահով: Առաջին անգամ չէր, որ նրանք իրենց նմաններին այրել էին խարույկի վրա, և նրանցից ամենածերերը չէին կարող մոռանալ, թե խոհարարական ինչպիսի նախապատրաստություններ էին արել մարդակերությունից առաջ: Նրանք լավ գիտեին, որ մարդկային մարմինը շատ դժվար է այրվում, և ահա նրանց թագավորն ու մինիստրը այրվեցին իրենք իրենց: Նրանց համար ինչ-որ անբացատրելի բան կար այստեղ:

Խոզե-Անտոնիո Ավելցը տանից դուրս չէր գալիս: Նա վախենում էր, որ պատահած դեպքի պատասխանատվությունն իր վրա կգցեն: Նեգորոն նրան բացատրել էր, թե ինչ էր տեղի ունեցել, խորհուրդ տալով, որ զգուշանա իր անձի նկատմամբ: Մուլանի Լուսնգայի մահվան պատճառն իրեն վերագրելը վատ հետևանքներ կարող են ունենալ, որից դժվար կլիներ անվնաս մնալ:

Սակայն Նեգորոն մի լավ միտք հղացավ: Նրա խորհրդով Ավելցը սկսեց լուր տարածել, թե Կագոնդեի վեհապետի մահը գերբնական բան էր, մահ, որը մեծ Մանիտուն վերապահում է միայն իր ընտրյալներին: Մնապաշտ բնիկները հեշտությամբ հավատացին այդ ստին: Թագավորի և նրա մինիստրի մարմնից դուրս եկած կրակը սուրբ հայտարարվեց: Մտում էր միայն պատվել Մուլանի Լուսնգային՝ աստվածների շարքը դասված մարդուն արժանի հուղարկավորությամբ:

Այդ հուղարկավորությունը և նրա հանդիսավորությունը, որը հատուկ է աֆրիկյան ցեղերին, հարմար առիթ էր ընձեռում Նեգորոյին՝ որոշ դեր խաղալ տալ Դիկ

Սենդին և վրեժ լուծել նրանից: Դժվար հավատային, թե ինչքան արյուն կթափվեր Մուանի Լուսգայի մահվան առթիվ, եթե Կենտրոնական Աֆրիկայի ճանապարհորդները, հատկապես Քամերոնը, չնկարագրեին այնպիսի դեպքեր, որոնց ճշմարտությունը չի կարելի կասկածի տակ դնել:

Կազոնդեի թագավորի բնական ժառանգը Մուանա թագուհին էր: Առանց հապաղելու ձեռնարկելով հուղարկավորության հանդեսը՝ նա գերագույն իշխանության ակտ էր կատարում և այդպիսով կարող էր հեռու պահել մրցակիցներին, որոնց մեջ էր նաև Ուկուզի թագավորը, որը ձգտում էր Կազոնդեի թագավորությանը: Բացի դրանից, Մուանան թագուհի դառնալով՝ խուսափում էր այն դաժան բախտից, որը վերապահված էր հանգուցյալի մյուս կանանց, և միաժամանակ ազատվում էր ավելի երիտասարդներից, որոնք միշտ դժգոհության առիթ էին տալիս իրեն: Այս դեպքը առանձնապես համապատասխանում էր այդ մեզերայի վայրագ բնավորությանը: Հետևաբար, եղջերափողի և թմբուկի ձայնով հայտարարեց, թե հանգուցյալ թագավորի հուղարկավորությունը տեղի կունենա հաջորդ օրը՝ հավուր պատշաճի արարողություններով:

Ոչ մի բողոք չլսվեց ո՛չ պալատականների մեջ, ո՛չ էլ տեղական հասարակ դասի մեջ: Ավելցը և մյուս գերեվաճառները վախենալու ոչինչ չունեին Մուանա թագուհու գահ բարձրանալուց: Կաշառքով և շողոքորթությամբ նրանք կկարողանային թագուհուն հեշտությամբ իրենց ազդեցության տակ առնել: Այդպիսով, թագավորական ժառանգությունը փոխանցվեց առանց դժվարության: Սարսափ էր տիրում միայն կանանոցում և շատ հասկանալի պատճառով:

Հուղարկավորության նախապատրաստական աշխատանքները սկսվեցին նույն օրը:

Կազոնդեի մեծ փողոցի ծայրին հոսում էր Կուանգոյի վտակը, մի խոր և արագահոս գետակ: Այդ գետակի հոսանքի ուղղությունը պետք է փոխեին, ջուրը հունից դուրս բերելու համար. այդ հունի մեջ էլ պետք է փորեին թագավորական գերեզմանը, իսկ թաղումից հետո գետը պիտի վերադարձվեր իր նախկին հունը:

Բնիկները մեծ ոգևորությամբ սկսեցին կառուցել մի ամբարտակ, որը ժամանակավորապես գետի ուղղությունը կփոխեր նոր ուղղությամբ, Կազոնդեի դաշտի միջով: Հուղարկավորության ծեսի վերջին պատկերից հետո այդ ամբարտակը կքանդեին, և հոսանքը կմտներ իր նախկին հունը:

Նեգորոն Դիկ Սենդին հատկացրել էր լրացնելու այն զոհերի թիվը, որոնք պետք է զոհվեին թագավորի գերեզմանի վրա: Նա վկա էր եղել պատանու անդիմադրելի զայրույթին, երբ Հարրիսը նրան հաղորդել էր տիկին Ուելլոնի և փոքրիկ Ջեկի մահվան լուրը: Նեգորոն ստոր սրիկա լինելով խուսափեց իր մեղսակցի բախտից: Բայց այժմ, ոտքն ու ձեռքը պինդ կապած բանտարկյալից, ենթադրում էր, թե վախենալու պատճառ չունեի, ուստի որոշեց այցելել նրան: Նեգորոն այն չարագործներից էր, որոնք չեն բավարարվում իրենց զոհի տանջանքով. նրանք պետք է հրճվեին նաև նրանց տանջանքներին ականատես լինելով:

Այդպես ուրեմն, կեսօրվա մոտ նա գնաց այն բարաքը, որտեղ պահում էին Դիկ Սենդին՝ հավիլդարի հսկողության տակ. այնտեղ, պինդ կապված, պատանին պառկել էր գետնին, և գրեթե ոչ մի ուտելիք չէր ստացել վերջին քսանչորս ժամում: Տկարացած անցյալի օրերի տանջանքներից, չարչարվելով իրեն սեղմող կապանքներից, որոնք մարմնի մեջ էին մտնում, նա հագիվ էր կարողանում շրջվել, սպասելով մահվան, որը ինչքան էլ դաժան լինեի, վերջ կդներ այնքան ցավերին:

Սակայն տեսնելով Նեգորոյին՝ նրա ամբողջ մարմնով մի սարսուռ անցավ, բնագործն ճիգ արեց կտրելու կապանքները, որոնք արգելք էին լինում հարձակվելու այդ չարագործի վրա և նրա հաշիվը մաքրելու: Սակայն նույնիսկ Հերկուլեսը չէր կարող կտրել այդ կապերը: Դիկ Սենդը հասկացավ, որ նոր պայքար է սկսվում իրենց երկուսի միջև և սառնասրտությունը վերստանալով՝ բավականացավ ուղիղ Նեգորոյի աչքերին նայելով, որոշելով ոչ մի պատասխանի չարժանացնել նրան, ինչ էլ որ ասեր:

— Ես իմ պարտքը համարեցի, — ասաց Նեգորոն որպես առաջաբան, — գալ և վերջին անգամ ողջունել իմ պատանի նավապետին և նրան հայտնել, թե ինչքան ցավալի է, որ նա այստեղ այլևս չի հրամայում այնպես, ինչպես հրամայում էր «Պիլիգրիմի» վրա:

Տեսնելով, որ Դիկ Սենդը չի պատասխանում, ավելացրեց:

— Ինչպե՛ս, նավապե՛տ, մի՞թե չեք ճանաչում ձեր նախկին խոհարարին: Մինչդեռ նա եկել է ձեր հրամանները լսելու և հարցնելու, թե ինչ պետք է ձեզ մատուցել նախաճաշին:

Միևնույն ժամանակ Նեգորոն ոտքով կոպտորեն հրեց գետնին տարածված պատանուն:

— Բացի դրանից, — ավելացրեց Նեգորոն, — կուզեի մի ուրիշ հարց տալ ձեզ, պատանի՛ նավապետ: Կարո՞ղ եք վերջապես ինձ բացատրել, թե ինչպես եղավ, որ փոխանակ մոտենալու ամերիկյան ծովափին, Անգլիայի ծովափը հասաք, որտեղ և գտնվում եք այժմ:

Դիկ Սենդը իրապես այլևս կարիք չունեի պորտուգալացու խոսքերին՝ հասկանալու համար, որ ինքը լավ էր գուշակել, երբ վերջապես իմացել էր, որ «Պիլիգրիմի» կողմնացույցն այդ դավաճանն էր խախտել: Բայց Նեգորոյի հարցը ինքնին խոստովանություն էր: Նրա պատասխանը դարձյալ արհամարհական լռությունը եղավ:

— Խոստովանեցեք, նավապե՛տ, — շարունակեց Նեգորոն, — որ ձեզ համար բարեբախտություն էր, որ նավի վրա գտնվում էր մի ծովային, իսկական ծովային: Որտե՞ղ կլինեիք առանց նրան, աստվա՛ծ իմ: Փոխանակ խորտակվելու որևէ ժայռի վրա, որտեղ փոթորիկը կնետեր մեզ, նրա շնորհիվ դուք հասաք մի հյուրընկալ նավահանգիստ, և եթե որևէ մեկին պարտական եք ապահով վայր հասնելու համար, այդ այն ծովայինն է, որին դուք իզուր արհամարհում եք, պատանի՛ տերս:

Այդպես խոսելով Նեգորոն, որի առերես սառնասրտությունը մեծ ջանքի հետևանք էր,՝ մոտեցել էր Դիկ Սենդին: Նրա դեմքը միանգամից կատաղի տեսք ստացավ: Նա այնքան մոտեցավ պատանու դեմքին, որ կարծես ուզում էր պատառոտել նրան: Այդ սրիկայի վայրագությունը վերջապես պայթեց:

— Ամեն մարդ իր ժամն ունի, — բացականչեց հանկարծ՝ ծայրահեղորեն գազազած իր զոհի հանդարտությունից ու լռությունից: — Այսօր ես եմ հրամայողը, ես եմ տերը: Ձախորդ նավաստու քո կյանքն իմ ձեռքում է:

— Առ իմ կյանքը, — պատասխանեց Սենդը՝ առանց հուզվելու, — բայց լավ իմացիր, որ աստված կպատժի բոլոր ոճիրների համար, և հեռու չէ քո պատժի ժամը:

– Մենք այդ դեռ կտեսնենք, – գոռաց Նեգորոն: – Գուցե որևէ օգնության հո՞լյս ունես: Օգնություն Կազոնդեում, որտեղ Ալվեցը և ես ամենակարող ենք, դա խելագարություն է: Գուցե դու կարծում ես, թե քո ընկերները՝ այդ ծերունի Թոմս ու մյուսները, դեռևս այստեղ են: Սխալվում ես: Վաղուց է, որ նրանք վաճառվել են ու մեկնել Չանգիբար և շատ բախտավոր կլինեն, եթե ճանապարհին չմնան:

– Իսկ Հերկուլեսը ազատ է:

– Հերկուլե՞սը, – բացականչեց Նեգորոն՝ ոտքը գետին խփելով, – վաղուց նրան պատառոտել են առյուծներն ու հովազները, և ես միայն ցավում եմ, որ նրանք կանխեցին իմ վրեժը:

– Եթե Հերկուլեսը մեռած է, – պատասխանեց Դիկ Սենդը, – Դինգոն ողջ է և Դինգոյի նման շունը ավելի քան բավական է քեզ նմանի հախից գալու համար: Ես քեզ շատ լավ եմ ճանաչում, Նեգորո, դու վախկո՛տ ես: Դինգոն քեզ է փնտրում ու կգտնի, վերջը դու նրա ատամներին զոհ կդառնաս:

– Սրիկա՛, – բացականչեց պորտուգալացին՝ սաստիկ գայրացած: – Դինգոն սպանվեց իմ գնդակից. Դինգոն ընկավ այնպես, ինչպես մեռան տիկին Ուելդոնը և նրա որդին, մեռան, ինչպես կմեռնեն «Պիլիգրիմի» բոլոր ողջ մնացածները...

– Ինչպես դու կմեռնես շատ չանցած, – պատասխանեց Դիկ Սենդը, որի հանդարտ հայացքից պորտուգալացու դեմքը պատի նման սպիտակել էր:

Նեգորոն այլևս չկարողացավ զսպել իրեն՝ քիչ էր մնացել խոսքից գործի անցներ և իր ձեռքերով խեղդեր անգեն բանտարկյալին: Արդեն հարձակվել էր նրա վրա և նրան ցնցում էր կատաղորեն, երբ հանկարծ մի միտք կանգնեցրեց նրան: Նա հասկացավ, որ եթե սպաներ իր զոհին, ամեն ինչ կվերջանար, և այդպիսով նրան կազատեր քսանչորս ժամվա տանջանքներից, որ նրա համար էր վերապահել: Պորտուգալացին ոտքի կանգնեց, մի քանի խոսք ասաց անշարժ կանգնած հավիլդարին, պատվիրեց խստորեն հսկել բանտարկյալին և դուրս եկավ բարաքից:

Փոխանակ ընկճվելու Դիկ Սենդը վերստացավ իր բարոյական ուժը: Նրա ֆիզիկական ուժը բարերար հակահարված ստացավ և միաժամանակ հաղթանակեց: Նեգորոն, կատաղության րոպեին նրա վրա հարձակվելիս երևի մի քիչ թուլացրել էր կապերը, որոնք մինչև այդ ամեն մի շարժում անհնար էին դարձնում: Հավանական է, քանի որ Դիկ Սենդը նկատեց, որ կարողանում է ավելի ազատ շարժվել, քան մինչև դահճի գալը: Պատանին իրեն ավելի թեթև էր զգում և մտածում էր, թե գուցե կկարողանա առանց մեծ դժվարության թևերը հանել կապանքից: Թեև ամեն կողմից պինդ փակված բանտում ձեռքերի ազատ արձակելը չնչին թեթևություն կլիներ, բայց կյանքում լինում են այնպիսի րոպեներ, երբ ամենափոքր հանգստությունն իսկ անգնահատելի է:

Ճիշտ է, որ Դիկ Սենդը ոչ մի հույս չուներ: Ոչ մի մարդկային օգնություն չէր կարող գալ դրսից և ումի՞ց պետք է գար: Նա համակերպվել էր: Ճիշտն ասած՝ պատանին այլևս ապրել չէր ուզում: Նա մտածում էր այն բոլորի մասին, որոնք մեռել էին արդեն, և ինքն էլ էր ցանկանում միանալ նրանց: Նեգորոն կրկնել էր այն, ինչ որ ասել էր Հարրիսը. տիկին Ուելդոնը և փոքրիկ Ջեկը չէին դիմացել: Շատ հավանական է, որ Հերկուլեսը, ենթարկված լինելով անչափ վտանգների, նույնպես մեռել էր սարսափելի մահով: Թոմը և ընկերները արդեն հեռու էին և ընդմիշտ կորած իր համար: Դիկ Սենդը պետք է հավատար դրան:

Ժամեր անցան: Եկավ գիշերը: Արևի ճառագայթները, որ պատի ճեղքերից ներս էին թափանցում, հետզհետե անհետացան: Չիտոկայի վերջին աղմուկները, որ նախորդ օրվա ահռելի իրարանցումից հետո խիստ թույլ էին, բուրբուրվին դադարեցին: Բանտի ներսում խավարը տիրապետեց: Զիչ հետո ամեն ինչ խաղաղվեց Կազոնդե քաղաքում:

Դիկ Սենդը քնեց կազդուրիչ քնով՝ մոտավորապես երկու ժամ և արթնացավ ավելի կայտառացած: Նրան հաջողվեց կապերից ազատել մի ձեռքը, որի ուռուցքը մի քիչ իջել էր, և մեծ բավարարություն ստացավ՝ կարողանալով երկարել և ծալել թևը:

Գիշերվա կեսը կլիներ: Հավիլդարը խոր քնի մեջ էր խմած մի շիշ օդու ազդեցությամբ, պրկված ձեռքով դեռևս սեղմելով շշի վիզը: Վայրենին շիշը դատարկել էր մինչև վերջին կաթիլը: Դիկ Սենդը հանկարծ մտածեց խլել բանտապահի զենքերը, որոնք նրան օգտակար կարող էին լինել փախչելու դեպքում, սակայն այդ թույլին նրան թվաց, թե ճանկոտում են բարաքի դռան ներքևը: Ազատված ձեռքի օգնությամբ նրան հաջողվեց սողալով հասնել մինչև դուռը, առանց արթնացնելու հավիլդարին:

Դիկ Սենդը չէր սխալվել: Ճանկոտոցը շարունակվում էր և ավելի պարզորոշ: Թվում էր թե դրսից փորում են հողը դռան տակ: Կենդանի՞ էր, թե՞ մարդ:

«Հերկուլե՛սը, երանի Հերկուլեսը լիներ», – մտածեց պատանին:

Պատանին նայեց պահապանին, որը խոր քնի մեջ թաղված լինելով ոչ մի շարժում չէր անում: Դիկ Սենդը շուրթերը մոտեցնելով դռան ճեղքին՝ ռիսկ արեց Հերկուլեսի անունը շշնջալ: Խուլ հաչոցի նմանվող մի ողբ լսվեց դրսից:

«Հերկուլեսը չէ, – մտածեց Դիկ Սենդը, – Դինգոն է: Նա իմ հետքը գտավ և եկավ մինչև այստեղ: Արդյո՞ք նորից լուր է բերել Հերկուլեսից: Եթե Դինգոն կենդանի է, ուրեմն Նեգրոն ստեց, և գուցե...»:

Այդ միջոցին դռան տակից երևաց մի թաթ, որը Դիկ Սենդը բռնեց, նա ճանաչեց Դինգոյի թաթը: Բայց եթե գրություն կար, ապա կապված կլիներ շան վզակապին: Ի՞նչ աներ: Մի՞թե հնարավոր էր այնքան լայնացնել ծակը, որ Դինգոն կարողանար գլուխը ներս կոխել: Համենայն դեպս պետք էր փորձել:

Բայց այն թույլին, երբ Դիկ Սենդը սկսել էր հողը փորել եղունգներով, հրապարակում տեղական շների հաչոց լսվեց. նրանք զգացել էին օտար շան ներկայությունը, և այժմ հավատարիմ շանը մնում էր փախուստ տալ: Մի քանի կրակոց լսվեց: Հավիլդարը աչքերը բաց արեց: Դիկ Սենդը փախչելու մտքից հրաժարվելով, որովհետև ազդանշանը տրվել էր, կրկին իր անկյունը քաշվեց և, սրտամաշ սպասումից հետո, տեսավ լույսի բացվելը, որը նրա համար վերջինը կլիներ:

Ամբողջ օրը գերեզմանափորները մեծ եռանդով աշխատանքն առաջ էին տանում: Դրան մասնակցում էին մեծ թվով բնիկներ՝ Մուլանա թագուհու առաջին մինիստրի ղեկավարությամբ: Ամեն ինչ պետք է պատրաստ լիներ նշանակված ժամին, անդամազրկության սպառնալիքի տակ, որովհետև նոր վեհապետը կետ առ կետ հետևել էր հանգուցյալ թագավորի թաղման նախապատրաստությանը:

Գետակի ջրերի ընթացքը փոխելուց հետո բաց արված հունի մեջ տասը ոտնաչափ խորությամբ, հիսուն ոտնաչափ երկարությամբ և տասը ոտնաչափ լայնությամբ փոս փորեցին:

Օրվա վերջում բացված փոսի մեջ գցեցին Մուանի Լուսգայի ստրուկներից ջոկված կանանց: Սովորաբար այդ դժբախտ կանանց թաղում են ողջ-ողջ: Սակայն այս տարօրինակ, գուցե և հրաշագործ, մահվան առթիվ որոշված էր այս անգամ այդ կանանց ջրախեղդ անել իրենց տիրոջ մոտ:

Երկրի սովորությունը պահանջում է, որ հանգուցյալ թագավորը գերեզման իջեցնելուց առաջ հագած լինի իր ամենաճոխ հագուստները, սակայն այս անգամ, քանի որ արքայական անձնավորությունից միայն մի քանի անձինք կտորներ էին մնացել, պետք եղավ ուրիշ միջոցի դիմել: Ուռենու ոստերից մի խրտվիլակ պատրաստեցին, որը բավականաչափ և գուցե ավելի ներկայացնում էր Մուանի Լուսգային, և դրա մեջ դրին այրումից մնացած բեկորները: Խրտվիլակին հագցրին թագավորական հագուստները, ինչպես գիտենք, այդ քուրջերը մեծ արժեք չունեին, չմոռանալով նաև կուզեն Բենեդիկտի ակնոցը: Այդ դիմակահանդեսում ինչ-որ դաժան խեղկատակություն կար:

Թաղման ծիսակատարությունը տեղի պիտի ունենար ջահերի լույսի տակ, մեծ հանդիսավորությամբ: Կազմակերպում էր Կազմակերպությունը, բնիկ թե ոչ, պետք է ներկա լինեին:

Արդեն երեկո էր: Մի երկար թափոր իջավ գլխավոր փողոցով, սկսած չիտոկայից մինչև թաղման վայրը: Գոռում-գոչունը, սգապարերը, վիճակների վայնասունը, երաժշտական գործիքների աղմուկը, զինանոցի հին հրացանների կրակոցները ոչ մի թուպե չէին դադարում:

Խոզե-Անտոնիո Ալվեցը, Կոմբերան, Նեգորոն, արաբ գերեզմանները, նրանց հավիլդարները միացել էին Կազմակերպության շարքերին: Ոչ ոք դեռևս մեծ հրապարակից դուրս չէր եկել: Մուանա թագուհին թույլ չէր տալիս հեռանալ, և անզգույշ բան կլինեին չհնազանդվել թագուհուն, որը նոր էր վարժվում ինքնակալի գործին:

Պատգարակի վրա դրված թագավորի մարմինը գտնվում էր թափորի վերջին շարքերում: Նրան շրջապատել էին երկրորդ կարգի կանայք, որոնցից մի քանիսը նրան պետք է ընկերանային մինչև մյուս աշխարհը: Մուանա թագուհին շքեղ հագուստներով գնում էր, այսպես ասած, դիակառքի հետևից: Կատարյալ խավար էր տիրում, երբ թագավորը հասավ գետակի ափը, բայց ծյուրի ջահերը ամբոխի վրա լույսի վառ ցուլքեր էին թափում:

Այդ լույսի տակ գերեզմանափոսը որոշակի երևաց, որի հատակին միմյանց վրա թափված էին զոհերի սև մարմինները, դեռևս ողջ, քանի որ շարժվում էին գետնին ամրացրած շղթաների տակ: Հիսուն ստրկուհի սպասում էին այդտեղ, որպեսզի ջրի հոսանքը թափվեր նրանց վրա. նրանց մեծ մասը երիտասարդ բնիկներ էին, ոմանք համակերպված և լուռ, մյուսները մի քիչ հեծեծալով:

Թագուհին ինքն էր ընտրել այն կանանց, որոնք պետք է զոհվեին, և նրանք պճնվել էին կարծես ինչույքի գնալու համար:

Կանանցից մեկը, որ երկրորդ թագուհու տիտղոսն էր կրում, ոտքերով և ձեռքերով կուչ էր եկել, որպես արքայական բազմոց ծառայելու, ինչպես անում էր թագավորի կենդանության ժամանակ, երրորդ թագուհին պահում էր խրտվիլակը, իսկ չորրորդը պառկել էր նրա ոտքերի տակ որպես բարձ:

Խրտվիլակի առաջ, փոսի ծայրին, կարմիր ներկված մի սյուն էր կանգնած: Այդ սյանը մի սպիտակամորթ էր կապված, որը նույնպես այդ արյունահեղ հողարկավորության զոհերից մեկը պետք է լինեին:

Այդ սպիտակամորթը Դիկ Սենդն էր: Նրա կիսամերկ մարմնի վրա երևում էին խոշտանգումի նշանները, որոնց նա ենթարկվել էր Նեգորոյի հրամանով: Կապված այդ սյանը՝ պատանին սպասում էր մահվան, համոզված լինելով, որ փրկության ոչ մի հույս չկար...

Սակայն ամբարտակը քանդելու ժամանակը դեռևս չէր հասել:

Թագուհու հրամանով թագավորի ոտքերի տակ պառկած չորրորդ կնոջը սրախողխող արեց Կազոնդեի դահիճը, և նրա արյունը հոսեց փոսի մեջ: Այսպիսով՝ սկսվեց սոսկալի կոտորածը: Հիսուն ստրկուհիներն ընկան մարդասպանների դանակից: Գետի հունը ծածկվեց արյան այլակներով:

Ամբողջ կես ժամ զոհերի ճիչերը խառնվում էին հանդիսատեսների ողբ ու կոծին, և իզուր կլինեք այդ ամբոխի մեջ բողոքի կամ գուրթի գոնե մի նշույլ սպասել:

Վերջապես Մուլանա թագուհին նշան արեց, և ջուրը պահող ամբարտակը քիչ-քիչ սկսեց քանդվել: Չոհերի տանջանքն ավելի երկարացնելու նպատակով ջուրը բաց թողեցին բարակ հոսանքով:

Ջուրը նախ և առաջ խեղդեց փոսի հատակում գտնվող ստրուկների սև զանգվածը: Սոսկալի և հուսահատ գալարումներ սկսեցին այդ կենդանի զոհերը, որոնք պայքարում էին դեռևս շնչահեղձության դեմ: Դիկ Սենդը մինչև ծնկները խորասուզված ջրի մեջ վերջին ճիգն էր անում կտրելու կապերը:

Բայց ջուրը բարձրանում էր: Վերջին զոհերի գլուխները անհետացան հոսանքի մեջ, որը ստանում էր իր նախկին ընթացքը, և քիչ հետո ոչ մի հետք, ոչ մի նշան ցույց չէր տալիս, թե այդ գետի հատակին մի գերեզման կար, որտեղ հարյուր զոհեր ոչնչացել էին Կազոնդեի թագավորի հիշատակը հավերժացնելու համար:

Գրիչը կիրաժարվեք նկարագրել այս պատկերները, եթե ճշմարտության հոգսը չհարկադրեք նկարագրել դրանք իրենց իսկությամբ: Մարդը դեռևս զարգացման ցածր մակարդակի վրա է այդ տխուր երկրներում:

Իսկ այդ մասին չիմանալը այլևս անթույլատրելի է:

XIII. Ֆակտորիայի ներքին կյանքը

Հարրիսը և Նեգորոն ստել էին՝ ասելով թե տիկին Ուելդոնը և փոքրիկ Ջեկը վախճանվել են: Երիտասարդ կինը, երեխան և կուզեն Բենեդիկտը այդ միջոցին Կազոնդեում էին գտնվում:

Մրջնանոցի վրա տեղի ունեցած հարձակումից հետո Հարրիսն ու Նեգորոն մի տասնյակ զինվորների ուղեկցությամբ նրանց հեռացրին Կուլանգայի ճամբարից:

Տիկին Ուելդոնին և փոքրիկ Ջեկին նստեցրին մի պատգարակի՝ «կիտանգայի» մեջ: Ինչպե՞ս բացատրել Նեգորոյի նման մարդու այդ հոգատարությունը: Տիկին Ուելդոնը բան չէր հասկանում:

Կուլանգայից մինչև Կազոնդե ուղևորությունը կատարվեց արագ և հանգիստ: Կուզեն Բենեդիկտը, որը կրած նեղություններից կարծես բոլորովին չէր ազդվել,

լավ էր քայլում և որովհետև թողնում էին, որ աջ ու ձախ թրև գա, գանգատվելու ոչ մի պատճառ չունեն: Այդպիսով, փոքրիկ խումբը Կազունդե հասավ Իբն Խամիսի քարավանի հասնելուց ութ օր առաջ: Տիկին Ուելդունին, Երեխային և կուզեն Բենեդիկտին փակեցին Ալվեցի հիմնարկում:

Շտապենք ասել, որ փոքրիկ Ջեկը շատ ավելի լավ էր զգում իրեն: Ճահճային շրջանն անցնելուց հետո, որտեղ հիվանդացել էր ջերմով, նրա վիճակը հետզհետե լավացավ, և այժմ առողջ էր, խոսք չէր կարող լինել, որ նրանք չէին կարող քարավանի հետ ուղքով գնալ: Բայց այն պայմաններում, որ կատարվեց այս ուղևորությունը, և տրված որոշ խնամքի շնորհիվ, նրանք բավարար վիճակում էին՝ գոնե ֆիզիկապես:

Ինչ վերաբերում է մյուս ուղեկիցներին՝ տիկին Ուելդունը նրանցից ոչ մի լուր չունեն: Հերկուլեսի անտառ փախչելը տեսնելուց հետո նրա մասին ոչ մի տեղեկություն չէր ստացել: Իսկ Դիկ Սենդի մասին մտածելիս նա իրեն հանգստացնում էր այն մտքով, թե քանի որ Հարրիսը և Նեգորոն նրանից հեռու էին և չէին կարող նրան վնասել, որպես սպիտակամորթ, թերևս տանջանքից ազատվեր: Ինչ վերաբերում է Նանին, Թոմին, Բաթին, Օստինին և Ակտեոնին, որպես նեգրեր, շատ պարզ էր, որ նրանց հետ կվարվեին ինչպես ստրուկների: Խեղճ մարդիկ, նրանք ամենևին ոտք չափտի դնեին Աֆրիկա, դավաճանությունն էր նրանց բերել այնտեղ:

Երբ Իբն Խամիսի քարավանը Կազունդե հասավ, տիկին Ուելդունը, ոչ մի հարաբերություն չունենալով դրսի աշխարհի հետ, ոչինչ չիմացավ այդ մասին:

Տոնավաճառի աղմուկը նույնպես ոչ մի բան չիմացրեց նրան: Նա չիմացավ, որ Թոմը և նրա ընկերները վաճառվել էին Ուլջիջի մի առևտրականի և մոտ օրերը կմեկնեին Կազունդեից: Նրան հայտնի չէր ո՛չ Հարրիսի սպանվելը, ո՛չ Մուլանի Լուկա թագավորի մահը, ո՛չ թագավորական թաղումը, որի գոհերի թվումն էր նաև Դիկ Սենդը: Այսպիսով, դժբախտ կինը մենակ էր Կազունդեում, գերեվաճառների իշխանության տակ, Նեգորոյի ճիրանների մեջ, և նրանից ազատվելու համար չէր էլ կարող մտածել մահվան մասին, քանի որ երեխան իր հետ էր:

Այդպիսով, տիկին Ուելդունը չգիտեր, թե ինչ է սպասում իրեն: Կուլանգայից մինչև Կազունդե կատարած ուղևորության միջոցին Հարրիսը և Նեգորոն ոչ մի խոսք չէին ուղղել իրեն: Կազունդե հասնելուց հետո նրանցից ոչ մեկին չէր տեսել և չէր կարող դուրս գալ պարսպից, որը շրջափակում էր հարուստ գերեվաճառի հիմնարկը:

Հարկ կա՞ ասելու, թե տիկին Ուելդունը ոչ մի օգնություն չէր ստացել իր մեծ երեխայից՝ կուզեն Բենեդիկտից, մի բան, որ շատ հասկանալի է:

Երբ հարգելի գիտնականը իմացավ, թե ամերիկյան մայրցամաքում չէր գտնվում, ինչպես ինքը կարծում էր, բոլորովին էլ չհետաքրքրվեց, թե ինչպես էր տեղի ունեցել այդ: Ոչ, նրա առաջին զգացումը հիասթափությունը եղավ: Արդարև, այն միջատները, որ նա կարծում էր, թե ինքը առաջինն է գտել Ամերիկայում, այդ ցեցեները և մյուսները պարզապես աֆրիկյան ցանցաթևավորներ էին, և իրենից շատ առաջ այնքան բնագետներ գտել էին իրենց հայրենիքում: Ուրեմն պետք էր հրաժարվել իր անունը այդ միջատներին տալուց: Իսկապես. ի՞նչ զարմանալու բան կար, որ կուզեն Բենեդիկտը աֆրիկյան միջատների հավաքածու կազմեր, քանի որ գտնվում էր Աֆրիկայում: Սակայն հուսախաբության առաջին րոպեն անցնելուց հետո կուզեն Բենեդիկտը մտածեց, որ «փարավոնների երկիրը», դեռևս այդպես էր կոչում նրան, միջատաբանական անհամար հարստություն ուներ, և եթե «ինկերի երկրում» չէր գտնվում, ապա փոխարենը մի ուրիշ երկրում լինելուց ոչինչ չէր կորցնում ինքը:

«Է՛հ,— մտածում էր նա, և նույնիսկ կրկնում տիկին Ուելլոնին, որը նրան չէր էլ լսում,— այստեղ է գնալուկմանտիկորների, այդ մազավոր երկարթաթանհների հայրենիքը, որոնց ամենից ավելի աչքի ընկնողը պալարային մանտիկորն է: Այստեղ ոսկեբիծ գնալուկի, գվինեական և դարանական գողիաթ բզեզների երկիրն է, որոնց ոտքերը փշավոր են. սա երկիրն է բծավոր անթիդի՝ մեղունների, որոնք իրենց ձվերը դնում են խխունջների դատարկ խեցիների մեջ, հայրենիքն է սրբազան բզեզների, որոնց Վերին Եգիպտոսի բնակիչները պաշտում էին որպես աստվածների: Այստեղ են ծնվել «Սֆինքս» կոչվող թիթեռները, որոնք անվանվում են նաև «Մեռած գլխանիներ»: Դրանք այժմ տարածված են ամբողջ Եվրոպայում, ինչպես նաև «բիզոնյան ճանճերը», որոնց խայթոցից այնքան վախենում են սենեգացիները: Այո, այստեղ հիանալի միջատներ կարելի է գտնել, և կգտնեմ, եթե այս ազնիվ մարդիկ թույլ տան»:

Հայտնի է, թե ովքե՛ր էին այդ «ազնիվ» մարդիկ, որոնց դեմ բողոքելու ոչ մի պատճառ չունեի կուզեն Բենեդիկտը: Չէ՞ որ միջատաբանը որոշ ազատություն էր ստացել Հարրիսից և Նեգորոյից, մինչդեռ Դիկ Սենդը նրան ազատությունից բոլորովին զրկել էր Կուանգայի ափերին ճանապարհորդելիս: Միամիտ գիտնականը խիստ զգացված էր այդ վերաբերմունքից:

Վերջապես, կուզեն Բենեդիկտը ամենից բախտավոր միջատաբանը կլինեի, եթե այնպիսի կորուստ չունենար, որը երբեք չէր կարող մոռանալ: Նրա ուսից առաջվա նման կախված էր թիթեղե տուփը, բայց ակնոցը այլևս չկար քթի վրա, իսկ խոշորացույցը վզից կախված չէր: Ինչպե՞ս կարող է բնագետը առանց խոշորացույցի և առանց ակնոցի լինել: Բայց կուզեն Բենեդիկտին վիճակված չէր վերստին տեսնել իր օպտիկական գործիքները, քանի որ նրանք թաղված էին արքայի խրտվիլակի հետ: Այդպիսով, երբ նա որևէ միջատ էր գտնում, ստիպված էր լինում ուղղակի իր աչքը մտցնել, որպեսզի կարողանար բնորոշել միջատի ամենատարրական առանձնահատկությունները: Է՛հ, ինչ վիշտ էր դա կուզեն Բենեդիկտի համար, և նա պատրաստ էր, ինչ գնով էլ լինի, ձեռք գցել մի ակնոց, սակայն այդ ապրանքից ոչ մի հատ չկար Կազոնդեի շուկայում: Այսպես թե այնպես, կուզեն Բենեդիկտը կարող էր ազատ ելումուտ անել Խոզե-Անտոնիո Ալվեցի հիմնարկում, որովհետև գիտեին, որ նա անընդունակ է փախուստ տալու: Բացի դրանից, բարձր ցանկապատը ֆակտորիան բաժանում էր քաղաքի մյուս թաղամասերից, և հեշտ չէր նրա վրայից անցնելը: Ցանկապատը մեկ մղոն շրջագծից պակաս չէր, և այդ հսկայական տարածության վրա բարձրանում էին ծառեր, թփեր, բարձր խոտեր, բարաքներ, խրճիթներ և տնակներ, հոսում էին մի քանի առուներ. այդքանը բավական էր, որպեսզի այդտեղ հավաքվեն մայրցամաքի ամենահազվագյուտ միջատները, որոնք կուզեն Բենեդիկտին եթե չէին հարստացնի, գոնե բախտավոր կդարձնեին:

Եվ իսկապես, նա հայտնաբերեց մի քանի վեցոտանիներ ու քիչ էր մնացել, որ նրանց դիտելիս բոլորովին զրկվեր տեսողությունից, բայց վերջապես նա հարստացրեց հավաքածուն և դրեց հիմքերը մի մեծ աշխատության՝ աֆրիկյան միջատաբանության վերաբերյալ: Եթե կարողանար գտնել մի նոր միջատ և իր անունով կոչել, այլևս ոչ մի բան չէր ցանկանա այս աշխարհում:

Եթե Ալվեցի հիմնարկը բավականաչափ մեծ էր կուզեն Բենեդիկտի գիտական էքսկուրսիաների համար, ապա անսահման էր երևում փոքրիկ Ջեկին, որը կարող էր այնտեղ շրջել բոլորովին ազատ: Բայց այդ երեխան շատ քիչ էր հետաքրքրվում իր տարիքի խաղերով: Նա քիչ էր հեռանում մոր կողքից, որը նրան մենակ չէր թողնում և վախենում էր որևէ դժբախտությունից: Փոքրիկ Ջեկը հաճախ խոսում էր հոր մասին, որին վաղուց չէր տեսել և ցանկանում էր վերադառնալ նրա մոտ: Նա տեղեկություններ էր հարցնում բոլորի՝ պառավ Լանի, բարեկամ Հերկուլեսի,

Բաթի, Օստինի, Ակտեոնի կամ Դինգոյի մասին, որը ինչպես երևում է՝ նույնպես մոռացել էր իրեն: Նա ուզում էր նորից տեսնել Դիկ Սենդին: Նրա վառ երևակայությունը այժմ միայն հիշողություններով էր ապրում: Այդ հարցերին տիկին Ուելդոնը պատասխանում էր միայն նրան կրծքին սեղմելով, համբուրելով: Միակ բանը, որ կարող էր անել, այն էր, որ լաց չէր լինում երեխայի առաջ:

Սակայն տիկին Ուելդոնը նկատեց, որ եթե ճանապարհին նրա հետ վատ չէին վարվել, այստեղ Ալվեցի հիմնարկում ևս այդ վերաբերմունքը չէր փոխվել: Այժմ ֆակտորիայում մնացել էին միայն գերեզմանո՞ւ ստրուկներն ու ծառաները: Մյուսները, որոնք կապված էին նրա առևտրի հետ, ուղարկված էին չիտոկայի բարաքները և վաճառվել էին ներքին շուկաների միջնորդներին: Այժմ հիմնարկի պահեստները մինչև բերանը լցված էին կտորեղենով և փղոսկրով: Կտորեղենը հատկացված էր փոխանակման կենտրոնական շրջաններում, իսկ փղոսկրը՝ արտահանելու մայրցամաքի գլխավոր շուկաները:

Մի խոսքով, քիչ մարդ էր մնացել Ալվեցի հիմնարկում: Տիկին Ուելդոնը փոքրիկ Ջեկի հետ առանձին հյուղակում էր ապրում, իսկ կուզեն Բենեդիկտը՝ մի ուրիշում: Նրանք ոչ մի կապ չունեին գերեզմանո՞ւ սպասավորների հետ: Ուտում էին ընդհանուր ճաշից: Ուտելիքը՝ այժմի կամ ոչխարի միս, բանջարեղեն, մանիոկա, սարգո, թարմ միրգ, բավարար էր: Մի երիտասարդ ստրուկի՝ Հալիման, հատկապես նշանակված էր տիկին Ուելդոնին ծառայելու, իր գիտցած ձևով ու ինչքան կարողանում էր, արտահայտում էր թե՛ն վայրենի, բայց և այնպես անկեղծ անձնվիրություն:

Տիկին Ուելդոնը շատ քիչ էր տեսնում Խոզե-Անտոնիո Ալվեցին, որը հիմնարկի գլխավոր տանն էր ապրում, իսկ Նեգորոյին բոլորովին չէր տեսնում, քանի որ նա ապրում էր դրսում, և նրա բացակայությունը բավական անբացատրելի էր:

Այդ երևույթը զարմացնում և միաժամանակ անհանգստացնում էր երիտասարդ կնոջը:

«Ի՞նչ է նրա ուզածը, ի՞նչ է սպասում, — մտածում էր տիկին Ուելդոնը: — Ինչո՞ւ մեզ քարշ տվեց Կազոնդե»:

Այդպես անցան այն տասն օրերը, որոնք նախորդեցին Իբն Խամիսի քարավանի տեղ հասնելուն, այսինքն հուղարկավորության ծիսակատարությունից չորս օր առաջ և, վերջապես, վեց օր էլ նրանից հետո:

Այդքան մտատանջությունների մեջ տիկին Ուելդոնը չէր կարողանում մոռանալ, որ իր ամուսինը ծանր հուսահատության մեջ ընկած կլինե՞ր՝ իզուր սպասելով կնոջ և զավակի Սան Ֆրանցիսկո վերադարձին: Պարոն Ուելդոնը չէր կարող գիտենալ, թե իր կինը չարաբաստիկ միտք էր ունեցել ճանապարհորդել «Պիլիգրիմով» և անկասկած կարծում էր, թե ուղևորվել էր Խաղաղօվկիանյան ընկերության շոգենավերից մեկով: Այդ շոգենավերը հասնում էին կանոնավոր կերպով, բայց ո՛չ տիկին Ուելդոնը, ո՛չ Ջեկը, ոչ կուզեն Բենեդիկտը չկային այդ նավերի վրա: Բացի դրանից՝ «Պիլիգրիմ» ևս պետք է արդեն վերադարձած լիներ, մինչդեռ առազաստանավը չէր երևում, և Ջեյմս Ուելդոնը ստիպված էր նրան դասել անհետ կորած նավերի շարքին: Ինչպիսի ծանր հարված կստանար նա այն օրը, երբ Օքլենդի իր գործակատարներից տեղեկություն ստանար, թե տիկին Ուելդոնը մեկնել էր «Պիլիգրիմ» առազաստանավով: Ի՞նչ կաներ նա: Չէ՞ր հավատա, թե իր կինը և զավակը կորել էին ծովի մեջ: Այդ դեպքում որտե՞ղ կփնտրեր նրանց: Անշուշտ Խաղաղ օվկիանոսի կղզիների վրա, գուցե ամերիկյան մայրցամաքում, բայց երբեք, ոչ, երբեք նրա մտքից չէր անցնի, որ տիկին Ուելդոնը կարող էր ընկած լինել դաժան Աֆրիկայի ափը:

Այդպես էր մտածում տիկին Ուելդոնը: Բայց կարող էր փորձել: Փախչել: Ինչպե՞ս: Նրան հետևում էին մոտիկից: Բացի դրանից, փախչել, նշանակում էր թափառել խիտ անտառներում, հազարավոր վտանգների մեջ, ձեռնարկել երկու հարյուր կիլոմետրից ավելի տևող ուղևորություն ծովափ հասնելու համար: Բայց և այնպես տիկին Ուելդոնը վճռել էր այդպես անել, եթե ուրիշ որևէ միջոց չկար իր ազատությունը ձեռք բերելու համար: Սակայն նախ և առաջ նա ուզում էր որոշակի իմանալ Նեգորոյի մտադրությունը:

Վերջապես հասավ այդ օրը, և նա տեղեկացավ:

Հունիսի 6-ին, Կազոնդեի թագավորի թաղումից երեք օր հետո, Նեգորոն եկավ ֆակտորիա, ուր ոտք չէր դրել վերադառնալուց հետո և ուղիղ գնաց այն հյուղակը, որտեղ ապրում էր իր բանտարկյալը:

Տիկին Ուելդոնը մենակ էր: Կուզեն Բենեդիկտը գիտական էքսկուրսիայի էր գնացել: Փոքրիկ Ջեկը, Հալիմայի հսկողության տակ, խաղում էր հիմնարկի բակում:

Նեգորոն հյուղակի դուռը հրեց և առանց այլևայլության ասաց.

— Տիկին Ուելդոն, Թոմը և նրա ընկերները վաճառվեցին Ուջիջիի առևտրականներին:

— Աստված նրանց պահապան,— տիկին Ուելդոնը լռիկ սրբեց արցունքը:

— Նանը մեռավ ճանապարհին, Դիկ Սենդը վախճանվեց...

— Նանը մեռա՛վ, Դիկ Սենդը նույնպես... — բացականչեց տիկին Ուելդոնը:

— Այո, արդարությունը պահանջում էր, որ ձեր տասնհինգամյա նավապետը զոհվեր Հարրիսին սպանելու համար,— շարունակեց Նեգորոն:— Դուք այժմ մենակ եք Կազոնդեում, տիկին, բոլորովին մենակ, «Պիլիգրիմի» նախկին խոհարարի իշխանության տակ, հասկացե՛ք:

Այն, ինչ որ ասում էր Նեգորոն Թոմի և նրա ընկերների մասին, շատ ճիշտ էր: Ծերունի նեգորը, նրա որդին՝ Բաթը, Ակտեոնը և Օստինը նախորդ օրը մեկնել էին Ուջիջի, գերեվաճառի քարավանով, առանց տիկին Ուելդոնին տեսնելու մխիթարանքն ունենալու, առանց նույնիսկ իմանալու, թե իրենց դժբախտության ընկերը Կազոնդեում Ալվեցի հիմնարկում էր գտնվում: Նրանք գնում էին լճերի շրջանը, հարյուրավոր մղոն երկարությամբ ճանապարհով, և շատ քիչ մարդկանց էր հաջողվում տեղ հասնել, շատ քչերն էին այնտեղից վերադառնում:

— Ի՞նչ եք ուզում ասել,— շնչաց տիկին Ուելդոնը նայելով Նեգորոյին:

— Տիկին Ուելդոն,— շարունակեց պորտուգալացին խիստ ձայնով,— ես կարող էի ձեզանից վրեժ լուծել այն վատ վերաբերմունքի համար, որին ենթարկվեցի «Պիլիգրիմի» վրա: Բայց Դիկ Սենդի մահով ես ինձ բավարարված եմ համարում: Այժմ ես առևտրական եմ դառնում, և ահա թե ինչ է իմ նպատակը:

Տիկին Ուելդոնը շարունակում էր նրան նայել, առանց մի խոսք արտասանելու:

– Դուք, – շարունակեց պորտուգալացին, – ձեր զավակը և այն տխմարը, որ ճանճերի հետևից է վազում, դուք երեքով առևտրական արժեք եք ներկայացնում, որը կարող եմ ես օգտագործել: Այսինքն, ես ուզում եմ ձեզ վաճառել:

– Ես ազատ ցեղի քաղաքացի եմ, – պատասխանեց տիկին Ուելդոնը անհողդողդ ձայնով:

– Դուք ստրուկ կլինեք, եթե ես ցանկանամ:

– Իսկ ո՞վ կգնի սպիտակամորթին:

– Կա մի մարդ, որը կվճարի այնքան, ինչքան ես պահանջեմ:

Տիկին Ուելդոնը մի րոպե գլուխը խոնարհեց, որովհետև գիտեր, թե ամեն ինչ հնարավոր էր այս զարհուրելի երկրում:

– Լսեցի՞ք իմ ասածը, – հարցրեց Նեգորոն:

– Ո՞վ է այն մարդը, որին ուզում եք ինձ վաճառել, – պատասխանեց տիկին Ուելդոնը:

– Ձեզ վաճառել կամ վերստին վաճառել... գոնե ես այդպես եմ ենթադրում, – ավելացրեց պորտուգալացին հեզնական ծիծաղով:

– Այդ մարդու անո՞ւնը, – հարցրեց տիկին Ուելդոնը:

– Այդ մարդը... Ջեյմս Ուելդոնն է՝ ձեր ամուսինը:

– Իմ ամուսի՛նը, – բացականչեց տիկին Ուելդոնը՝ չհավատալով լսածին:

– Նույն ինքը, տիկին Ուելդոն, ձեր ամուսինը, որին ուզում եմ ոչ թե հանձնել, այլ վաճառել իր կնոջը, երեխային և զարմիկին՝ որպես հավելված:

Տիկին Ուելդոնը ինքն իրեն հարց էր տալիս, թե արդյոք Նեգորոն թակարդ չի՞ լարում իր դեմ: Սակայն նա զգաց, որ «Պիլիգրիմի» խոհարարը շատ լուրջ էր խոսում: Նրա նման մի սրիկայի, որի համար դրամը ամեն բան է, կարելի է վստահել, երբ խնդիրը առևտրական գործի մասին է, իսկ այս գործը շատ շահավետ գործ էր:

– Իսկ ե՞րբ եք մտադիր կատարել այդ գործողությունը, – հարցրեց տիկին Ուելդոնը:

– Ինչքան կարելի է շուտ:

– Որտե՞ղ:

– Այստեղ իսկ, Ջեյմս Ուելդոնը չի վարանի մինչև Կազոնդե գալ իր կնոջ և երեխային գտնելու համար:

– Ո՛չ, չի վարանի, բայց ո՞վ նրան կհայտնի այդ մասին:

– Ինքս կգնամ Սան Ֆրանցիսկո, կգտնեմ Ջեյմս Ուելդոնին. ես անհրաժեշտ գումարն ունեմ ճանապարհաճախսի համար:

– «Պիլիգրիմից» գողացած դրամը:

– Այո... այդ դրամը... ինչպես նաև այլ գումար,— անամոթաբար պատասխանեց Նեգորոն:— Բայց ես ուզում եմ ձեզ վաճառել շուտ, վաճառել թանկ գնով: Կարծում եմ, թե Ջեյմս Ուելլոնը չի մերժի վճարել հարյուր հազար դոլլար...

– Չի մերժի, եթե կարողանա վճարել,— պատասխանեց սառնորեն տիկին Ուելլոնը:— Սակայն ամուսինս, որին դուք անկասկած կասեք, թե ես բանտարկված եմ Կենտրոնական Աֆրիկայի Կազնդե քաղաքում...

– Անկասկած:

– Ամուսինս ձեզ չի հավատա առանց ապացույցի և այնքան անզգույշ չի լինի, որ միայն ձեր խոսքին վստահելով Կազնդե գա:

– Կգա, — ասաց Նեգորոն, — եթե ես նրան տանեմ ձեր ձեռքով գրված մի նամակ, որով դուք կնկարագրեք ձեր դրուժությունը, ինձ կներկայացնեք որպես վայրենիների ձեռքից փախած մի հավատարիմ ծառայի:

– Երբեք իմ ձեռքը այդպիսի նամակ չի գրի,— ավելի սառնորեն պատասխանեց տիկին Ուելլոնը:

– Դուք մերժում եք:

– Մերժում եմ:

Այն միտքը, թե ինչպիսի վտանգների կենթարկվելու ամուսինը մինչև Կազնդե հասնելը, պորտուգալացու խոստումների վստահելի չլինելը, փրկագինը վճարելուց հետո Ջեյմս Ուելլոնին ձեռքից բաց չթողնելու հավանականությունը, բոլոր այս պատճառները աչքի առաջ ունենալով՝ տիկին Ուելլոնը, մոռանալով նույնիսկ զավակին, առանց տատանվելու մերժեց Նեգորոյի առաջարկը:

– Դուք կգրեք այդ նամակը... — ասաց Նեգորոն:

– Ոչ... — դարձյալ կրկնեց տիկին Ուելլոնը:

– Օ՛, զգուշացեք, — բացականչեց Նեգորոն:— Դուք այստեղ մենակ չեք, ձեր զավակն էլ ձեզ նման իմ իշխանության տակ է, և եթե ուզեմ...

Տիկին Ուելլոնը ուզում էր պատասխանել, թե չի կարող այդպիսի նամակ գրել: Նրա սիրտը խփում էր պայթելու աստիճան, չէր կարողանում ոչ մի խոսք ասել:

– Տիկին Ուելլոն, — ասաց Նեգորոն, — մտածեք իմ առաջարկի մասին: Ութ օրից հետո դուք ինձ կհանձնեք Ջեյմս Ուելլոնին ուղղված նամակը կամ կզոջաք:

Այդ խոսքերից հետո պորտուգալացին հեռացավ՝ զսպելով բարկությունը: Սակայն պարզ էր, որ ոչ մի բանի առաջ կանգ չէր առնի նա տիկին Ուելլոնին իրեն ենթարկելու համար:

XIV. Մի քանի տեղեկություններ դոկտոր Լիվինգսթոնի մասին

Մենակ մնալուց հետո տիկին Ուելլոնի առաջին միտքն այն էր, որ Նեգորոն ութ օրից առաջ չէր ներկայանա վերջնական պատասխան ստանալու: Ուրեմն բավականաչափ ժամանակ կար, որպեսզի խորհեր և որոշում կայացներ: Որ պորտուգալացին իր ասածը կաներ, այդ մասին խոսք չէր կարող լինել, բայց այն «առևտրական արժեքը», որով Նեգորոն որակում էր տիկին Ուելլոնին, անշուշտ կպաշտպաներ վերջինիս, և նրան կպահպաներ, ժամանակավորապես գոնե, ամեն տեսակի վտանգներից: Գուցե երիտասարդ կինը կգտներ այնպիսի մի միջոց, որը նրան հնարավորություն կտար վերադառնալ ամուսնու մոտ՝ առանց Ջեյմս Ուելլոնին պարտավորեցնելու Կազոնդե գալ: Կասկած չկար, որ կնոջից ստանալով Նեգորոյի պահանջած նամակը, Ջեյմս Ուելլոնը անմիջապես կմեկներ, առանց ուշադրություն դարձնելու Աֆրիկայի վտանգավոր շրջաններում կատարվելիք ճանապարհորդության դժվարություններին: Բայց հասնելով Կազոնդե և Նեգորոյին վճարելով հարյուր հազար դոլարի գումարը, ի՞նչ ապահովություն կար, որ Ջեյմս Ուելլոնին, նրա կնոջը, զավակին և կուզեն Բենեդիկտին կթողնեին հայրենիք վերադառնալ: Մուսնա թագուհու քմահաճույքը մի՞թե չէր կարող արգելք լինել նրանց վերադարձին: Բայց տիկին Ուելլոնի և իր հարազատների «հանձնումը» միթե՞ ավելի լավ պայմաններում չէր կատարվի, եթե այդ գործողությունը տեղի ունենար ծովափում, որոշ նավահանգստում, այդպիսով Ջեյմս Ուելլոնը չէր ենթարկվի ո՛չ մինչև Կազոնդե ճամփորդելու վտանգներին, ո՛չ էլ վերադարձի դժվարություններին, եթե չասենք անկարելիություններին:

Ահա թե ինչի մասին էր մտածում տիկին Ուելլոնը: Ահա թե ինչու սկզբից և եթե մերժեց Նեգորոյի առաջարկը և նրան հանձնել ամուսնուն ուղղված նամակը: Նա մտածում էր նույնպես, որ եթե Նեգորոն ութ օրով հետաձգեց իր երկրորդ այցելությունը, այդ անշուշտ այն պատճառով էր, որ այդքան ժամանակ էր պետք նրան մեկնել պատրաստվելու համար, այլապես նա ավելի շուտ կգար իր սպառնալիքը իրականացնելու:

«Իսկապե՞ս ուզում է երեխային բաժանել ինձանից»,— շնչաց երիտասարդ կինը:

Այդ միջոցին Ջեկը հյուղակ մտավ, և բնագրական շարժումով մայրը բռնեց նրան, կարծես այդ միջոցին Նեգորոն եկել էր նրան խլելու իրենից:

— Դու մեծ վի՞շտ ունես, մայրիկ,— հարցրեց փոքրիկ տղան:

— Ոչ, սիրելի Ջեկ, ոչ,— պատասխանեց տիկին Ուելլոնը,— ես հայրիկիդ մասին էի մտածում, շա՞տ ես ուզում նրան տեսնել:

— Ա՛խ, այո, մայրիկ, կգա՞ այստեղ:

— Ոչ... ոչ: Հայրիկը չպետք է գա այստեղ:

— Ուրեմն մե՞նք կգնանք նրա մոտ:

— Այո, Ջեկ:

— Իմ բարեկամ Դիկի հե՞տ... Հերկուլե՞սն էլ... ծերունի Թո՞մս էլ...

— Այո... այո...— պատասխանեց տիկին Ուելլոնը՝ գլուխը կախելով, որպեսզի ցույց չտա արցունքները:

— Հայրիկից նամա՞կ ստացար,— հարցրեց փոքրիկ Ջեկը:

— Ոչ, սիրելիս:

– Ուրեմն դո՞ւ կգրես նրան:

– Այո... այո... գուցե... – պատասխանեց տիկին Ուելդոնը:

Առանց իմանալու՝ փոքրիկ Ջեկը մոր վշտերն էր փորփրում, իսկ նա, չկարողանալով այլ կերպ պատասխանել, համբույրներով ծածկում էր տղայի դեմքը:

Պետք է ասել, որ տիկին Ուելդոնը մի ուրիշ պատճառ ևս ուներ մերժելու Նեգրոյի առաջարկը: Դեռատի կինը գուցե կարողանար փրկվել առանց ամուսնու միջամտության և նույնիսկ հակառակ Նեգրոյի կամքին: Դա շատ փոքր, շատ անորոշ հույս էր, բայց այդ հույսը կար:

Բանն այն էր, որ մի քանի օր առաջ տիկին Ուելդոնը պատահմամբ լսել էր խոսակցության կցկտուր բառեր, և նրա մեջ հույսի նշույլ էր ծագել, որ մոտ ապագայում կարող էր անսպասելի օգնություն հասնել իրեն:

Ավվեցը և Ուշիջիի խառնածիկներից մեկը խոսակցում էին տիկին Ուելդոնի հյուղակից մի քանի քայլ հեռու: Չարմանալի չէր, որ այդ «հարգելի» վաճառականների խոսակցությունը նեգրերի վաճառքի շուրջն էր դառնում: Մարդկային առևտրի երկու միջնորդները գործի մասին էին խոսում: Նրանք վիճում էին իրենց առևտրի հեռանկարների մասին և անհանգստանում էին այն միջոցառումներից, որ անգլիացիները ձեռք էին առել ոչնչացնելու այդ առևտուրը ոչ միայն դրսում, ռազմական վերի միջոցով, այլև երկրի ներսում, միսիոներների և ճանապարհորդների միջոցով:

Խոզե-Անտոնիո Ավվեցը գտնում էր, որ այդ առաջին խիզախ հետախույզները մեծ վնաս կարող էին հասցնել առևտրական գործողությունների ազատությանը: Ավվեցի խոսակիցը միանգամայն համաձայն էր նրա հետ, և նրա կարծիքով այդ բոլոր այցելուները պետք է ընդունվեին հրացանի կրակոցով:

Պետք է ասել, որ երբեմն այդպես էլ արվում էր, բայց վաճառականներին խիստ դուր չէր գալիս, որ այդ հետաքրքրասերներից սպանված մի քանիսին հաջորդում էին նորերը, որոնք հայրենիք վերադառնալով, «չափազանցրած գույներով», ինչպես ասում էր Ավվեցը, նկարագրում էին գերեվաճառության սարսափները և իհարկե մեծ վնաս հասցնում առանց այն էլ վարկաբեկված առևտրին:

Խառնածիկը գտնում էր և տրտնջում, որ այդ վնասը զգալի էր հատկապես Նիանգվեի, Ուշիջիի, Չանգիբարի և Մեծ լճերի ամբողջ շրջանի համար: Այդ վայրերը հաջորդաբար եկել էին Սպլիքը, Գրանդը, Լիվինգսթոնը, Սթենլին և ուրիշներ: Իսկական արշավանք էր այդ: Շուտով ամբողջ Անգլիան ու ամբողջ Ամերիկան կգրավեին մայրցամաքը:

Ավվեցը անկեղծորեն վշտակցում էր կուլեգային և խոստովանում, որ Աֆրիկայի արևմտյան շրջանները մինչև այժմ ավելի քիչ էին տուժել այդ տեսակետից, այսինքն՝ այցելուներ ավելի քիչ էին ընդունել, սակայն ուղևորների համաճարակը սկսել էր տարածվել: Եթե Կազնոնը դեռևս չէր ենթարկվել այդ վտանգին, միևնույնը չէր կարելի ասել Կասանդայի և Բիհեի մասին, որտեղ Ավվեցը մասնաճյուղեր ուներ: Ընթերցողը անշուշտ հիշում է, որ Հարրիսը Նեգրոյին ասել էր լեյտենանտ Քամերոնի մասին, որը կարող էր համարձակվել Աֆրիկան անցնել մի ծայրից մյուսը և Չանգիբարից մտնելով Անգոլայից դուրս գալ:

Գերեվաճառը իրավացի էր. իսկապես հայտնի է, որ մի քանի տարի հետո Քամերոնը հարավում, Սթենլին հյուսիսում հետախուզեցին Աֆրիկայի դեռևս քիչ ուսումնասիրված արևմտյան վայրերը, նկարագրեցին գերեվաճառության հրեշազոր ծովայինները, դիմակազերծ արեցին օտար գործակալների հանցագործ մեղսակցությունը՝ պատասխանատու ճանաչելով գերեվաճառներին:

Քամերոնի և Սթենլիի հետազոտությունների մասին ո՛չ Ալվեցը, ո՛չ խառնածինը չէին կարող դեռևս տեղեկություն ունենալ, բայց այն, ինչ որ գիտեին, ինչ որ ասացին, ինչ որ տիկին Ուելդոնը լսեց և ինչ որ խոշոր նշանակություն ուներ նրա համար, մի խոսքով այն պատճառը, որով նա մերժել էր անմիջապես ենթարկվել Նեգրոյի պահանջին, հետևյալն էր:

Շատ հավանական էր, որ մոտ ապագայում դոկտոր Լիվինգսթոնը հասներ Կազոնդե:

Լիվինգսթոնի և նրա ուղեկիցների ներկայությունը, մեծ ճանապարհորդի խոշոր ազդեցությունը Աֆրիկայում, Անգոլայի պորտուգալական իշխանությունների նրան ցույց տալիք աջակցությունը կարող էին ազատ արձակել տալ տիկին Ուելդոնին և նրա հարազատներին, հակառակ Նեգրոյի, հակառակ Ալվեցի ցանկության: Գուցե այդպիսով նա կկարողանար շատ չանցած հայրենիք վերադառնալ, և կարիք չլիներ, որ Ջեյմս Ուելդոնը կյանքը վտանգեր այնպիսի ուղևորությամբ, որը վատ հետևանք միայն կարող էր ունենալ:

Բայց մի՞թե հավանական էր, թե դոկտոր Լիվինգսթոնը մոտիկ ապագայում կայցելեր մայրցամաքի այդ շրջանը: Այո, որովհետև այդ ուղեգծին հետևելով նա կկարողանար լրացնել կենտրոնական Աֆրիկայի հետազոտությունը:

Դոկտոր Լիվինգսթոնը ծնվել էր Անգլիայի Լենարկ կոմսության Բլենթայր ավանում, թեյի առևտրականի ընտանիքում՝ 1813 թ. մարտի 13-ին: Ուսումնական համառ աշխատանքների շնորհիվ նա դարձավ աստվածաբան և բժիշկ: 1840 թ. նա հասավ Կապչտադոտ, նպատակ ունենալով հարավային Աֆրիկայում միանալ միսիոներ Մոֆատին:

Ապագա ճանապարհորդը Կապչտադոտից գնաց բեշուանների երկիրը, որը հետազոտեց առաջին անգամ, վերադարձավ Կուրուման, ամուսնացավ Մոֆատի աղջկա հետ, որը պիտի դառնար նրա կորովի ընկերուհին:

Իսկ 1843 թվին Լիվինգսթոնը մի միսիոն (քրիստոնեական համայնք) հիմնեց Մաբոցայում:

Չորս տարի հետո Լիվինգսթոնը հաստատվեց Կուլբենգում, որը գտնվում էր Բեշուանայի շրջանում, Կուրումանից քսանհինգ մղոն հյուսիս:

Երկու տարի հետո, 1849 թ., Լիվինգսթոնը Կուլբենգից հեռացավ իր կնոջ, երեք երեխաների և երկու բարեկամների՝ Օսվելի և Մուրրեյի հետ: Նույն տարվա օգոստոսի 1-ին նա հայտնաբերեց Նգամի լիճը և վերադարձավ Կուլբենգ՝ իջնելով Չուգա գետի հոսանքով:

Այդ ուղևորության միջոցին Լիվինգսթոնը, որին խանգարում էին բնիկները, չկարողացավ անցնել Նգամին: Երկրորդ փորձը նույնպես անհաջող անցավ, իսկ երրորդը հաջողվեց: Շարունակելով ուղևորությունը դեպի հյուսիս, ընտանիքի և Օսվելի ընկերակցությամբ, ենթարկվելով ահռելի տանջանքների, զրկված՝ ուտելիքից, խմելու ջրից, վտանգելով իր և ընտանիքի կյանքը՝ կարողացավ հասնել մակալոլոների երկիրը, որոնց պարագլուխը՝ Չեբիթուանեն, միացավ նրան:

Լինիանտիում: 1851 թ. հունիսի վերջին հայտնաբերեց Չամբեգին և վերադարձավ Կապուտադոս, որպեսզի ընտանիքը ուղարկի Անգլիա:

Աներկյուղ Լիվինգսթոնը ուզում էր միայն իր կյանքը վտանգել ձեռնարկելիք հանդուգն ճանապարհորդության ընթացքում:

Այս անգամ նա ծրագրել էր Կապուտադոսից մեկնելով՝ շեղակի կտրել Աֆրիկան հարավից արևմուտք, Սան-Պաուլո դե Լուանդա հասնելու համար:

Դոկտորը մեկնեց մի քանի բնիկների հետ 1852 թ. հունիսի 3-ին: Հասավ Կուրուման և անցավ Կալահարի անապատով: Դեկտեմբերի 31-ին մտավ Լիտուբարուբա և բեշուանների երկիրը, որն այդ միջոցին քարուքանդ էին արել բուրերը՝ հոլանդական նախկին գաղութաբնակները, որոնք տիրապետում էին Կապուտադոսին Անգլիայի գրավումից առաջ:

Լիվինգսթոնը Լիտուբարուբայից հեռացավ 1853 թ. հունվարի 15-ին, հասավ բամագուատոների երկիրը և մայիսի 23-ին հասավ Լինիանտի, որտեղ մակալուլոների երիտասարդ թագավորը՝ Սեկելետուն, մեծ պատվով ընդունեց նրան:

Այնտեղ Լիվինգսթոնը երկար մնաց վտանգավոր ջերմի պատճառով, սկսեց ուսումնասիրել շրջանի բարքերը և առաջին անգամ կարողացավ ստուգել գերեվաճառության պատճառած վնասները Աֆրիկայում:

Մի ամիս հետո նա ցած իջավ խոբե գետի հոսանքով, հասավ Չամբեգի, մտավ Նանիելե, այցելեց Կատոնգան և Լիբոնտան, հասավ Չամբեգիի և Լիրայի միացման կետին, ծրագրեց այդ գետի ընթացքով բարձրանալ մինչև արևմտյան պորտուգալական գաղութները և այդ ուղևորությանը պատրաստվելու նպատակով վերադարձավ Լինիանտի՝ ինը շաբաթ բացակայելուց հետո:

1853 թ. նոյեմբերի 11-ին դոկտորը, քանիև մակալուլոների ուղեկցությամբ, դուրս եկավ Լինիանտիից և դեկտեմբերի 27-ին հասավ Լիրայի գետաբերանին: Այդ գետի ընթացքով բարձրացավ մինչև Բալոնգայի շրջանը, այնտեղ, որտեղ Լիբա գետն է թափվում արևելքից հոսող Մակոնդոն: Առաջին անգամն էր, որ մի սպիտակամորթ մտնում էր այդ շրջանը:

Հունվարի 14-ին Լիվինգսթոնը մտավ բալոնդանների ամենահզոր ինքնակալի՝ Շինտեի աթոռանիստը և լավ ընդունվեց նրա կողմից, իսկ նույն ամսի 26-ին Լիբան անցնելով գնաց Կոտեմա թագավորի մոտ: Այնտեղ ևս լավ ընդունելություն գտնելով փոքրիկ խումբը փետրվարի 20-ին մեկնեց և կանգ առավ Դիլուլո լճի ափին:

Այդ կետից էլ սկսվեցին անհաջողությունները. դժվարանցանելի մի երկիր, բնիկների պահանջները, տեղական ցեղերի հարձակումները, իր ընկերների ընդվզումը, մահվան սպառնալիքը, այդ բոլորը դավադրում էին Լիվինգսթոնի դեմ, և նրա փոխարեն՝ ավելի թույլ կամքի տեր մեկը կարող էր հուսալով: Դոկտորը դիմադրեց և ապրիլի 4-ին հասավ Կուանգոյի ափը՝ մի ընդարձակ գետ, որը շրջանցում է պորտուգալական գաղութների արևելյան սահմանը և թափվում է Չաիր (Կոնգո) գետը:

Վեց օր հետո Լիվինգսթոնը հասավ Կասանգա, որտեղ նրան պատահեց գերեվաճառ Ալվեցը, և մայիսի 31-ին հասավ Սան-Պաուլո դե Լուանդա: Առաջին անգամ, երկու տարվա ճանապարհորդությունից հետո, Աֆրիկան կտրել էին շեղակի, հարավից դեպի արևմուտք:

Նույն տարվա սեպտեմբերի 24-ին Դավիդ Լիվինգսթոնը հեռացավ Լոանդայից: Նա հետևեց Կուանգա գետի աջ ափին, գետ, որն այնքան ճակատագրական էր եղել Դիկ Սենդի և նրա ուղեկիցների համար, հասավ Լոմբեի Կուանգայի մեջ թափվելու կետին՝ հանդիպելով ստրուկների բազմաթիվ քարավանների, կրկին անցավ Կասանգան, մեկնեց փետրվարի 20-ին, անցավ Կուանգո գետը և Չամբեզի հասավ Կավավայում: Հունիսի 8-ին նորից հասավ Դիլոլո լճին, նորից տեսավ Շինտե թագավորին, հետևեց Չամբեզի ափերին, մտավ Լինիանտի և այնտեղից դուրս եկավ 1855 թ. նոյեմբերի 3-ին:

Այս նոր ուղևորությունը դոկտորին հասցրեց արևելյան ծովափին, և այդպիսով նա ամբողջովին վերջացրեց Աֆրիկյան արևմուտքից արևելք անցնելու ծրագիրը:

Այցելելով հռչակավոր Վիկտորիա ջրվեժը՝ «Որոտաձայն, ծուխը», Դավիդ Լիվինգսթոնը հեռացավ Չամբեզիից և ուղղվեց դեպի հյուսիս-արևելք: Անցավ բակոտաների երկրով, որի բնակիչները բթացել էին կանեփ ծխելով, այցելեց շրջանի հզոր պետին՝ Սեմալեմբուեին, անցավ Կաֆուե գետը, կրկին անգամ Չամբեզին, այցելեց Մբուրումա թագավորին, տեսավ պորտուգալական հին քաղաքի՝ Չումբոյի ավերակները, 1856 թ. հունվարի 17-ին հանդիպեց Մպենդե ցեղապետին, որն այդ միջոցին կռվում էր պորտուգալացիների դեմ, վերջապես մարտի 2-ին հասավ Տետե, Չամբեզիի ափին, ահա այդ ուղեծրի գլխավոր էտապները: Ապրիլի 22-ին Լիվինգսթոնը հեռացավ մի ժամանակ հարուստ Տետեից, իջավ մինչև գետի դելտան և մայիսի 20-ին Քիլիմանեում հասավ նրա գետաբերանին՝ Կապչտադոսից դուրս գալուց չորս տարի հետո: Հունիսի 22-ին նա շոգենավով մեկնեց Մորիս և Անգլիա վերադարձավ տասնվեց տարվա բացակայությունից հետո:

Նրան ընդունեցին մեծ հանդիսավորությամբ. պարգևատրվեց Փարիզի Աշխարհագրական ընկերության մրցանակով, Լոնդոնի Աշխարհագրական ընկերության մեծ մեդալով: Նրա տեղ մի ուրիշը գուցե կմտածեր, թե արժանի է հանգստանալու. բայց դոկտորը այդպես չէր մտածում և 1858 թ. մարտի 1-ին, իր Չառլզ եղբոր, կապիտան Բետինդֆիլդի, Քերկ և Մելլեր դոկտորների, Թորնթոնի և Բեյնսի ուղեկցությամբ մայիսին հասավ Մոզամբիկի ծովափը՝ նպատակ ունենալով ուսումնասիրել Չամբեզիի ավազանը:

Այդ ուղևորության մասնակցողներից ոչ բոլորը վերադարձան հայրենիք:

«Մա-Ռոբերտ» փոքրիկ շոգենավը հետազոտողներին հնարավորություն տվեց մեծ գետի ընթացքով բարձրանալ: Նրանք Տետե հասան սեպտեմբերի 8-ին: Հետազոտեցին Չամբեզիի ստորին հոսանքը և նրա ձախ վտակ Շիրեն, 1859 թ. ապրիլին այցելեցին Շիրուա լիճը, հետազոտեցին Մանդանյայի շրջանը, հայտնաբերեցին Նիասան՝ սեպտեմբերի 10-ին, վերադարձան Վիկտորիա ջրվեժը՝ 1860 թ. օգոստոսի 9-ին: Էքսկուրսիա կատարեցին «Պիոներ» շոգենավով մարտ ամսին, վերադարձան Նիասա լիճը 1861 թ. և այնտեղ մնացին մինչև հոկտեմբերի վերջը: 1862 թ. հունվարի 30-ին եկավ տիկին Լիվինգսթոնը և մի երկրորդ շոգենավ՝ «Լեդի Նիասան». սրանք էին այս նոր արշավախմբի առաջին տարիների գլխավոր իրադարձությունները: Այդ միջոցին Մակենզիի եպիսկոպոսը և միսիոներներից մեկը կլիմայական փոփոխություններից մահացել էին, իսկ ապրիլի 27-ին ամուսնու ձեռքերի վրա վախճանվեց տիկին Լիվինգսթոնը:

Մայիս ամսին դոկտորը նորից ձեռնարկեց Ռուվումայի հետազոտությունը, իսկ նոյեմբերի վերջերին մտավ Չամբեզի, բարձրացավ Շիրե գետի ընթացքով: 1863 թ. ապրիլին մեռավ նրա ուղեկից Թորնթոն, իսկ Չառլզ եղբորը և դոկտոր Քերկին, որոնք ուժասպառ էին եղել հիվանդություններից, ուղարկեց Եվրոպա և նոյեմբերի

10-ին, երրորդ անգամ, հասավ Նիասա և ավարտեց լճի ջրագրության աշխատանքը: Երեք ամիս հետո վերադարձավ Չամբեզի, անցավ Չանգիբարը և 1864 թ. հուլիսի 10-ին, հինգ տարվա բացակայությունից հետո, հասավ Լոնդոն և հրատարակեց «Չամբեզիի և նրա վտակների հետազոտությունը» աշխատությունը:

1866 թ. հունվարի 28-ին Լիվինգսթոնը նորից Չանգիբար վերադարձավ, այդ նրա չորրորդ ուղևորությունն էր:

Օգոստոսի 8-ին, ականատես լինելով այդ շրջանում տեղի ունեցած գերեվաճառության զարհուրելի տեսարաններին, դուրս գալով այս անգամ իր հետ ունենալով միայն մի քանի սիփախներ և նեգրեր, վերադարձավ Նիասայի ափերը՝ Մոկալաոգե:

Վեց շաբաթ հետո նրա ուղեկիցներից շատերը փախան, վերադարձան Չանգիբար և այնտեղ սուտ լուր տարածեցին, թե Լիվինգսթոնը մեռել է: Սակայն նա չհուսահատվեց և չնահանջեց: Նա ցանկանում էր այցելել Նիասայի և Տանգանիկայի միջև ընկած շրջանը: Դեկտեմբերի 10-ին, մի քանի բնիկների ուղեկցությամբ, անցավ Լուանգուա գետը և 1867 թ. ապրիլի 2-ին հայտնաբերեց Լիեմբան: Այնտեղ նա ծանր հիվանդացավ և հազիվ ազատվեց մահից: Առողջանալուց անմիջապես հետո օգոստոսի 30-ին հասավ Մոեբո լիճը և հետազոտեց նրա հյուսիսային ափը, նոյեմբերի 21-ին մտավ Կազեմբե քաղաքը և այնտեղ մնաց քառասուն օր, որի ընթացքում երկու անգամ ուսումնասիրեց Մոեբո լիճը:

Կազեմբեից Լիվինգսթոնն ուղղվեց դեպի հյուսիս Տանգանիկա լճի ափին գտնվող Ուչիչի կարևոր քաղաքը հասնելու նպատակով: Գետի վարարելու և իր ուղեցույցների փախչելու պատճառով նա ստիպված եղավ վերադառնալ Կազեմբե, իջավ դեպի հարավ հունիսի 6-ին և վեց շաբաթ հետո հասավ Բանգուելո մեծ լճին: Այնտեղ մնաց մինչև օգոստոսի 9-ը և փորձեց կրկին վերադառնալ դեպի Տանգանիկա:

Ինչպիսի՞ ճանապարհորդություն: 1869 թ. հունվարի 7-ից սկսած դուրս գալով այնքան ուժասպառ էր եղել, որ ստիպված էին նրան ձեռքերի վրա տանել: Փետրվար ամսին վերջապես նա հասավ լճին և մտավ Ուչիչի քաղաքը, որտեղ գտավ Կալկաթայի Արևելյան ընկերության կողմից նրան ուղարկված իրերը:

Լիվինգսթոնին այժմ միայն մի միտք էր զբաղեցնում, հասնել Նեդոսի ակունքը՝ բարձրանալով Տանգանիկայից դեպի հյուսիս: Սեպտեմբերի 21-ին դուրս գալով մարդակերների Մանիուեմայի շրջանի Բամբարե կենտրոնում էր. այնուհետև հասավ Լուալաբա գետը, որը, Քամերոնի կարծիքով և Սթենլիի հաստատումով, պարզվեց, որ Չաիր կամ Կոնգո գետն էր: Մամոհելայում դուրս գալով ութսուն օր հիվանդացավ, նրա մոտ մնացել էին միայն երեք սպասավոր: 1871 թ. հուլիսի 21-ին Լիվինգսթոնը, վերջապես, կարողացավ մեկնել Տանգանիկա և հոկտեմբերի 23-ին միայն մտավ Ուչիչի: Բայց նա արդեն կմախք էր դարձել:

Սակայն այդ թվականից առաջ ոչ մի լուր չկար դուրս գալիս մասին: Եվրոպայում նրան մեռած էին կարծում: Նա ինքը ոչ մի հույս չուներ դրսից որևէ օգնություն ստանալու:

Ուչիչի գալուց տասնմեկ օր հետո, նոյեմբերի 3-ին, հրացանի որոտներ լսվեցին լճից քառորդ մղոն հեռավորության վրա: Դուրս գալով այնտեղ շտապեց: Մի սպիտակամորթ կանգնած էր նրա առաջ:

– Դոկտոր Լիվինգսթոն, եթե չեմ սխալվում:

– Այո,– պատասխանեց վերջինս՝ գլխարկը բարձրացնելով և բարեհոգի ժպիտը դեմքին:

Նրանք ջերմորեն միմյանց ձեռք սեղմեցին:

– Ես ինձ բախտավոր եմ զգում ձեզ պատահելուս համար,– ասաց սպիտակամորթը:

– Ես ևս բախտավոր եմ, որ ձեզ ընդունում եմ այստեղ,– ասաց Լիվինգսթոնը:

Սպիտակամորթը «Նյու-Յորք հերալդի» լրահավաք ամերիկացի Սթենլին էր, որը թերթի խմբագրության հանձնարարությամբ Աֆրիկա էր եկել Դավիդ Լիվինգսթոնին որոնելու համար:

1870 թ. հոկտեմբերին այդ ամերիկացին, առանց մի թույլ վարանելու, առանց ավելորդ խոսքերի, հերոսի նման Բոմբեյից մեկնել էր Չանգիբար և մոտավորապես Սփիքի և Բերթոնի ուղեգծին հետևելով՝ անհամար տանջանքներից հետո, մի քանի անգամ կյանքը վտանգելով վերջապես Ուլչիջի էր հասել:

Երկու ճանապարհորդները բարեկամանալով էքսկուրսիա կազմակերպեցին դեպի Տանգանիկայի հյուսիսային ափը: Նավակ նստելով հասան մինչև Մագալայի հրվանդանը և մանրամասն ուսումնասիրությունից հետո եկան այն եզրակացության, որ մեծ լճից բխում է Լուալաբայի վտակներից մեկը: Այդ նույն բանը հաստատեցին նաև Քամերոնը և Սթենլին մի քանի տարի հետո: Դեկտեմբերի 12-ին Լիվինգսթոնը և նրա ընկերը վերադարձան Ուլչիջի:

Սթենլին պատրաստվեց մեկնելու: Դեկտեմբերի 22-ին, տասներկու օր ճանապարհորդելուց հետո, դոկտորը և Սթենլին հասան Ուրիմա, իսկ փետրվարի 23-ին մտան Կուլիարա:

Մարտի 12-ը հրաժեշտի օր եղավ:

– Դուք այնպիսի գործ կատարեցիք,– ասաց դոկտորն իր ընկերոջը,– որը քչերը կկատարեին, և կատարեցիք շատ ավելի լավ, քան մի քանի մեծ ճանապարհորդներ: Ես երախտապարտ եմ և ի սրտե հաջողություն եմ ցանկանում ձեզ: Աստված ձեզ առաջնորդ:

– Իմ կողմից նույնպես հաջողություն եմ մաղթում ձեզ և ցանկանում եմ, որ ողջ և առողջ վերադառնաք հայրենիք,– Լիվինգսթոնի ձեռքը սեղմելով ասաց Սթենլին, և երեսը դարձնելով ետ քաշվեց արցունքը ցույց չտալու համար, ապա խեղդված ձայնով ասաց.

– Ցտեսություն, դոկտոր, սիրելի՛ բարեկամ:

– Ցտեսություն,– պատասխանեց թույլ ձայնով Լիվինգսթոնը:

Սթենլին մեկնեց և 1872 թ. հուլիսի 12-ին հասավ Մարսել:

Լիվինգսթոնը շարունակեց իր հետազոտությունները: Օգոստոսի 25-ին, հինգ ամիս Կուլիարայում մնալուց հետո, իր երեք նեգր սպասավորների՝ Սուզիի, Շումայի և

Ամողայի, Ջակոբ Ուենրայթի և Սթենլիի ուղարկած քառասունվեց բնիկների ուղեկցությամբ ճանապարհվեց դեպի Տանգանիկայի հարավը:

Մի ամիս հետո քարավանը հասավ Մրուրա՝ երաշտի հետևանքով առաջացած փոթորիկի միջոցին: Այնուհետև սկսեցին անձրևները, բնիկների վատ վերաբերմունքը, բեռնակիր անասունների սատկելը՝ ցեցեի խայթոցի հետևանքով: 1873 թ. հունվարի 24-ին փոքրաթիվ խումբը Չիտունկեում էր: 1873 թ. հունվարի 27-ին, Բանգուելո լճի արևելյան ափը շրջանցելուց հետո, Լիվինգսթոնը գնաց դեպի Չիտամբո ավանը:

Ահա այն կետը, որտեղ նրան թողել էին մի քանի գերեվաճառներ, ահա թե ինչ էին լսել նրանցից Ալվեցը և Ուջիջիի խառնածինը: Նրանք շատ իրավացիորեն մտածում էին, թե դոկտորը լճի հարավային մասը ուսումնասիրելուց հետո կանցներ Լոանդան և արևմտյան մասում նոր անձանոթ շրջաններ կփնտրեր: Շատ բնական է, որ այդքանով չբավականանալով՝ դոկտորը կգնար դեպի Անգուա, կայցելեր գերեվաճառությամբ վարակված այդ շրջանները, կհասներ Կագոնդե, այդ կլիներ այն ուղեգիծը, որին հավանաբար կհետևեր Լիվինգսթոնը: Այդպիսով՝ տիկին Ուելլոնը կարող էր հույս ունենալ, որ մեծ ճանապարհորդը մոտիկ ապագայում Կագոնդե կհասներ, քանի որ հունիսի սկզբին արդեն երկու ամիս կլիներ, որ նա հասել էր Բանգուելո լճի ափը:

Եվ ահա հունիսի 13-ին, այն օրվա նախօրյակին, երբ Նեգորոն պետք է ներկայանար տիկին Ուելլոնին՝ պահանջելու հազար դոլարի վերաբերյալ նամակը, մի տխուր լուր տարածվեց, որը Ալվեցին և մյուս գերեվաճառներին մեծ ուրախություն պատճառեց:

1873 թ. մայիսի 1-ի արշալույսին մեռել էր դոկտոր Դավիդ Լիվինգսթոնը:

Իսկապես, ապրիլի 29-ին փոքրիկ քարավանը հասել էր Չիտամբո ավանը՝ նույն լճի հարավում: Դոկտորին բերել էին պատգարակով: Ամսի 30-ի գիշերը, ծանր ցավի ազդեցության տակ, նա արտաբերեց հազիվ լսելի այս տրտունջը. «Օ՛, աստված իմ, աստված իմ», և նիրհեց:

Մի ժամ հետո դոկտորը կանչեց սպասավոր Սուզին, ինչ-որ դեղորայք ուզեց ու տկար ծայնով շշնջաց.

— Լավ, այժմ կարող եք գնալ:

Առավոտյան ժամը չորսին Սուզին և հետևորդներից հինգ հոգի մտան դոկտորի հյուղակը:

Դավիդ Լիվինգսթոնը, չոքած անկողնի առաջ, գլուխը ձեռքերին հենած՝ կարծես աղոթում էր:

Սուզին մեղմորեն մատը նրա դեմքին դրեց. դեմքը բուրբուրվին սառն էր:

Դավիդ Լիվինգսթոնը վախճանվել էր:

Ինն ամիս հետո հավատարիմ ծառաները, անլսելի դժվարությունների գնով, նրա մարմինը տեղափոխեցին Չանգիբար, և 1874 թ. ապրիլի 12-ին նա թաղվեց Վեստմինստերյան աբբայությունում, Անգլիայի թագավորների և անվանի մարդկանց շարքում:

XV. Թե ուր կարող է տանել Մանտիկորը

Խեղդվողը շյուղից էլ է կամջում: Ինչքան էլ թույլ ցուլա հույսի ճառագայթը, դատապարտվածին շլացուցիչ է թվում:

Այդպես էր նաև տիկին Ռելիդոնի համար, և հասկանալի է, թե ինչ զգաց նա, երբ Ալվեցի բերանից լսեց, որ Լիվինգսթոնը վախճանվել էր Բանգուելոյի փոքրիկ ավանում: Նրան թվաց, թե այժմ ինքն ավելի մենակ ու դժբախտ է, քան երբևէ: Կապը քաղաքակիրթ աշխարհի հետ կտրված էր: Ազատարար շյուղը փախավ ձեռքից, հույսի նշույլը չքացավ աչքերից: Թոմը և նրա ընկերները Կազոնդեից մեկնել էին դեպի Մեծ լճերի շրջանը: Հերկուլեսից ոչ մի լուր չկար: Տիկին Ռելիդոնը ոչ ոքից օգնություն չէր կարող սպասել... Պետք էր ուրեմն ընդունել Նեգորոյի առաջարկը՝ փորձելով մեղմացնել պայմանները և ապահովել գործի հաջող վախճանը:

Հունիսի 14-ին, նշանակված օրը, Նեգորոն ներկայացավ տիկին Ռելիդոնին:

Պորտուգալացին սովորականի նման, ինչպես ինքն էր ասում, գործնական եղավ, ոչ մի գիշում չարեց փրկանքի գումարից, որի մասին բանտարկյալը նույնիսկ չվիճեց: Սակայն տիկին Ռելիդոնը նույնպես գործնական եղավ ասելով.

— Եթե ուզում եք, որ գործը գլուխ գա, անընդունելի պայմաններ չառաջարկեք: Ձեր որոշած փրկանքի գումարի փոխարեն մեր ազատությունը կարելի է ստանալ, առանց ամուսնուս այս երկիրը գալու, որտեղ դուք լավ գիտեք, թե ինչ վտանգի է ենթարկվում սպիտակամորթը: Ուստի, ոչ մի գնով ես համաձայն չեմ, որ նա գա այստեղ:

Մի քանի րոպե վարանելուց հետո Նեգորոն զիջեց, և որոշվեց, որ Ձեյմա Ռելիդոնը չէր հասնի մինչև Կազոնդե: Պայմանավորվեցին, որ տիկին Ռելիդոնի ամուսինը շոգենավով կգար Մոսամեդես՝ Անգոլայի հարավային ծովափի նավահանգիստը, որտեղ հաճախ գալիս են գերի տեղափոխող նավերը, և որը լավ ծանոթ էր Նեգորոյին: Այդ նավահանգիստը կգար Ձեյմա Ռելիդոնը՝ Նեգորոյի ուղեկցությամբ, և նախապես որոշված ժամկետին Ալվեցի գործակալներն այնտեղ կտանեին նաև տիկին Ռելիդոնին, Ձեյկին և կուզեն Բենեդիկտին: Փրկանքի գումարը կվճարվեր այդ գործակալներին բանտարկյալների հանձնումից հետո, իսկ Նեգորոն, որը տիկին Ռելիդոնի նկատմամբ միանգամայն պատվավոր մարդու դերի մեջ կլիներ, կանհետանար շոգենավի նավահանգիստ հասնելուց հետո:

Պայմանի այս կետը շատ կարևոր նշանակություն ուներ տիկին Ռելիդոնի համար: Այդպիսով իր ամուսինը չէր ենթարկվի մինչև Կազոնդե կատարելիք ուղևորության, փրկագինը վճարելուց հետո այնտեղից դուրս գալ չկարողանալու և վերադարձի վտանգների: Ինչ վերաբերում է վեց հարյուր մղոն տարածությանը, որը պետք է անցներ տիկին Ռելիդոնը Կազոնդեից Մոսամեդես հասնելու համար, նրան չէր վախեցնում, մանավանդ, որ Ալվեցի շահը պահանջում էր, քանի որ ինքն էլ էր շահագրգռված այդ գործում, որ բանտարկյալները ողջ և առողջ տեղ հասնեին:

Համաձայնությունը կայացավ: Տիկին Ռելիդոնը նամակ գրեց իր ամուսնուն՝ Նեգորոյին իր հավատարիմ ծառան ներկայացնելով, և որպես թե նա կարողացել էր փախչել բնիկների ձեռքից: Նեգորոն վերցրեց նամակը, վստահ լինելով, որ Ձեյմա Ռելիդոնը չէր հապաղի շուտով նրան հետևել դեպի Մոսամեդես, և հաջորդ օրը, քսանի չափ նեգրերի ուղեկցությամբ, դեպի հյուսիս ուղղվեց: Ինչո՞ւ այդ

ուղղությամբ գնաց: Երևի մտադիր էր Կոնգոյի գետաբերանում խարխիս նետած նավերից մեկնումենկը նստել և այդպիսով խուսափել պորտուգալական իշխանություններից ու բանտերից, որոնց հյուրն էր եղել մի ժամանակ՝ իր կամքին հակառակ: Հավանական է, որ այդպես էր: Համենայն դեպս, այդպիսի բացատրություն տվեց նա Ալվեցին:

Նրա մեկնումից հետո տիկին Ուելդոնն իր կյանքն այնպես դասավորեց, որ ինչքան կարելի էր աննկատ անցնեին օրերը Կազոնդեում: Ամենալավ պայմաններում առնվազն երեքից չորս ամիս կտևեր Նեգորոյի գնալը և վերադարձը:

Տիկին Ուելդոնը մտադիր չէր հեռանալ ֆակտորիայից: Երեխան, կուզեն Բենեդիկտը և ինքը համեմատաբար իրենց ապահով էին զգում այնտեղ: Հալիմայի հոգատարությունը մի քիչ մեղմացնում էր այդ մեկուսացման խստությունները: Բացի դրանից, հավանական էր, որ գերեվաճառը չէր թույլ տա նրան հեռանալ հիմնարկից: Այն խոշոր գումարը, որ նա պետք է ստանար բանտարկյալի փրկանքից, արժեր, որ նրան խիստ հսկողության տակ պահեին: Բարենպաստ էր նաև այն, որ Ալվեցը ստիպված չէր Կազոնդեից հեռանալ Բիեի և Կասանգայի մյուս ֆակտորիաները այցելելու համար: Կոիմբրան նրան փոխարինում էր ասպատակությունների գործում, և նա զոջալու ոչ մի պատճառ չունեի, որ այդ հարբեցողը բացակայում է:

Պետք է ասել նաև, որ մեկնելուց առաջ Նեգորոն Ալվեցին հատկապես հանձնարարել էր առանձին ուշադրություն դարձնել տիկին Ուելդոնի վրա: Պետք էր նրան խիստ հսկողության տակ պահել, քանի որ տեղեկություն չկար, թե ինչ էր եղել Հերկուլեսը: Եթե նա չէր մահացել Կազոնդեի այդ դաժան շրջանում, գուցե կփորձեր մոտենալ բանտարկյալին և ազատել նրան Ալվեցի ճանկերից: Գերեվաճառը շատ լավ հասկացել էր, որ տիկին Ուելդոնի կատարյալ մեկուսացումից էր կախված խոշոր գումարի ստացումը, և նա պատասխանատու էր տիկին Ուելդոնի համար, ինչպես՝ իր սեփական դրամարկղի համար:

Բանտարկյալ կնոջ կյանքը շարունակվում էր միևնույն միօրինակությամբ: Ֆակտորիայի պատերից ներս նույն կյանքն էր, ինչպես դրսի բնիկների մոտ: Ալվեցը խստությամբ պահում էր բնիկների սովորությունները: Ֆակտորիայի կանայք աշխատում էին այնպես, ինչպես քաղաքի կանայք, կատարելով իրենց ամուսինների և տերերի բոլոր կամայականությունները՝ բրինձը թակում էին փայտե մեծ սանդի մեջ մինչև կատարյալ թեփազրկումը, եգիպտացորեն էին մաքրում և մանրահատիկ ձավար ստանում տեղական լեզվով «մթելե» կոչված ապուրը պատրաստելու համար, սորգո (կորեկի մի տեսակ) էին քաղում, որի հասունացումը հանդիսավոր կերպով նշել էին այդ ժամանակ, հոտավետ ձեթ ստանում «մպաֆու» կոչված կորիզավոր հատապտուղից (մի տեսակ ձիթապտուղ, որի յուղը շատ թանկագին անուշահոտություն է բնիկների համար), բամբակ էին մանում և թել ստանում տեղական տնայնագործական դազգահի միջոցով, փայտե թակոցով ծառի կեղևից կերպաս պատրաստում, մանիոկայի արմատներ քաղում և հողը մշակում զանազան բույսեր ցանելու համար, որոնցից ստանում են կասավ, մանիոկա (որից ստանում են այլուր), բակլա, (որի «մոզիցանե» կոչված տասնհինգ մատնաչափ պատիճները ստացվում են քսան ոտնաչափ բարձրություն ունեցող ծառերից), գետնանուշի յուղ, «չիլոբե» կոչված բաց կապտավուն ոլոռ (որի ծաղիկները հիշեցնում են սորգոյի շիլայի մի քիչ անդուրեկան հոտը), տեղական սուրճ, շաքարեղեգ (որի հյութից օշարակ են պատրաստում), սխտոր, սուսում, վարունգ (որի հատիկները խորովում են շագանակի նման), ոգելից խմիչքներ էին պատրաստում բանանի «մալոֆու», «պոմբե» և այլ թունդ խմիչքներ. ընտանի կենդանիներին էին խնամում. կովերը թույլ էին տալիս իրենց կթել միայն նորածնի կամ տիկը դարմանով լցված հորթի ներկայությամբ, պահում էին կարճ եղջյուրանի երինջներ, որոնցից ոմանք մի

սապատանի են, այծեր, որոնց միսն ուտում են և փոխանակման կարևոր նյութ են ծառայում ինչպես դրամը, ինչպես ստրուկները. վերջապես՝ պահում են տնային թռչուններ, խոզեր, ոչխարներ և այլն. այս երկար թվարկումը ցույց է տալիս, թե ինչպիսի ծանր աշխատանք է ընկած թույլ սեռի վրա աֆրիկյան մայրցամաքի այս վայրի շրջաններում:

Այդ ժամանակ տղամարդիկ ծխախոտ կամ կանեփ էին ծխում, փղի և գոմշի որսորդության գնում, գերեվաճառների հաշվին ասպատակության մասնակցում: Եգիպտացորենի կամ ստրուկների հավաքումը միևնույն բանն էր, այն տարբերությամբ, որ դրանք որոշակի սեզոնում են կատարվում:

Ֆակտորիայի բոլոր աշխատանքներից միայն կանանց բաժինն էր ծանոթ տիկին Ուելդոնին:

Երբեմն երիտասարդ կինը կանգ էր առնում նրանց մոտ, նայում նրանց աշխատանքին, միևնույն նրան պատասխանում էին անճոռնի ծամաձողություններով: Նրանց ցեղական բնագոյն դրողում էր ատել սպիտակամորթին և ոչ մի կարեկցանք չէին զգում նրա հանդեպ: Միայն Հալիման էր բացառություն կազմում, և տիկին Ուելդոնը, բնիկների լեզվից մի քանի բառ հասկանալով, ի վերջո, կարողացավ մի քանի խոսք փոխանակել երիտասարդ ստրկուհու հետ:

Փոքրիկ Ջեկը հաճախ ընկերանում էր մորը, երբ վերջինս զբոսնում էր ֆակտորիայի ներսում, բայց շատ կուզենար դուրս գալ, չնայած որ այնտեղ մի ահագին բառբաբի վրա կային արագիլի մի տեսակի՝ մարաբուի բներ, շինված մի քանի ծղոտներից, շիկակարմիր լանջով և պարանոցով սուփմանգաների բներ, ինչպես նաև «այրիներ», որոնք թալանում են խոզանները իրենց ընտանիքը պահելու համար, «կալաոսներ»՝ իրենց դուրեկան երգեցողությամբ, կարմիր պոչանի բաց մոխրագույն թուփակներ, որոնց բնիկները «ռոուս» են կոչում, և իրենց անունը տալիս նաև թափառական ցեղերի պետերին. միջատակեր «տրուզոսներ», որոնք կնմանվեին մոխրագույն վշտահավերի, եթե խոշոր կարմիր կտուց ունենային:

Ինչ վերաբերում է կուզեն Բենեդիկտին, նա իրեն միշտ լավ էր զգում այնտեղ, որտեղ միջատներն անպակաս էին: Նա բախտ ունեցավ ֆակտորիայում գտնել մի փոքրիկ մեղու, մի պարագիտ պիծակ, որն իր բջիջները սարքում է փայտի ճճեկեր անցքերում, և, ինչպես կկուռ, ձվերն ածում է ուրիշների բներում: Պիծակները անպակաս էին առվակների եզրին և նրան կծում էին անճանաչելի դարձնելու աստիճան: Եվ երբ տիկին Ուելդոնը նրան նկատողություն էր անում, որ նա թույլ էր տալիս այդ վնասակար միջատներին այլանդակել իրեն, նա պատասխանում էր՝ միաժամանակ արևոտելու չափ քորվելով:

— Դա նրանց բնագոյն է, զարմուհի Ուելդոն, նրանց բնագոյն, և չպետք է նրանց մեղադրել:

Վերջապես մի օր, հունիսի 17-ին, կուզեն Բենեդիկտը քիչ էր մնացել, որ միջատաբաններից ամենից բախտավորը դառնար: Բայց այդ դեպքը, որ անսպասելի հետևանքներ ունեցավ, արժե պատմել ավելի մանրամասն:

Մոտավորապես առավոտյան ժամը տասնմեկն էր: Անտանելի շոգը ֆակտորիայի բնակիչներին ստիպել էր հյուղակներում մնալ, և Կագոնդեի փողոցներում ոչ մի բնիկ չէր երևում:

Տիկին Ուելդոնը ննջում էր քնած փոքրիկ Ջեյի կողքին: Կուզեն Բենեդիկտը ևս ենթարկվելով արևադարձային շոգի ազդեցությանը՝ հրաժարվել էր այնքան հաճելի որսորդությունից, շարունակելով սակայն խիստ զգայուն լինել, քանի որ կեսօրվա արևի ճառագայթների մեջ բզզում էին անհամար քանակությամբ միջատներ: Ուրեմն, ինչպես սասցինք, կուզեն Բենեդիկտը ևս քաշվել էր իր հյուղակը, թեև մեծ դժկամությամբ, և քունը սկսել էր տիրել նրան այդ ականա ցերեկային հանգստի ժամին:

Հանկարծ, այն միջոցին, երբ աչքերը կիսով չափ փակվել էին, ինչ-որ բզզոց լսվեց, որն առաջանում է միջատների թևաբախումից:

— Վեցոտանի,— բացականչեց կուզեն Բենեդիկտը՝ իսկույն արթնանալով և հորիզոնականից ուղղահայաց դիրք ընդունելով:

Որ հյուղակում տզգացողը վեցոտանի էր՝ ոչ մի կասկած չէր կարող լինել: Թեև կուզեն Բենեդիկտը շատ կարճատես էր, բայց լսողությունը շատ սուր էր, այն աստիճան, որ միջատին կարողանում էր ճանաչել նրա բզզոցի ձայնից, և այս անգամ նրան թվաց, թե այս բզզոցը անձանոթ էր իրեն:

«Տեսնես ի՞նչ վեցոտանի է»,— մտածեց կուզեն Բենեդիկտը:

Եվ ահա միջատաբանը փորձեց տեսնել միջատին, մի բան, որ շատ դժվար էր առանց ակնոցի, սակայն նա աշխատում էր ճանաչել թևերի թրթռոցից:

Միջատաբանի բնագողը նրան ազդարարում էր, որ անսպասելիորեն խրճիթ մտած այդ միջատը սովորական միջատներից չէր:

Կուզեն Բենեդիկտը, տեղից վեր կացած, ոչ մի շարժում չէր անում: Արևի մի քանի ճառագայթ էին ընկնում նրա վրա: Այդ լույսի տակ նա տեսավ օդում թռչող մի մեծ սև կետ, բայց ոչ այնքան մոտիկից, որ կարողանար ճանաչել նրան: Կուզեն Բենեդիկտը շունչը բռնել էր, և եթե նույնիսկ դեմքի կամ ձեռքի որևէ մասը խայթեին, որոշել էր ոչ մի այնպիսի շարժում չանել, որը պատճառ դառնար վեցոտանու փախուստին:

Վերջապես տզգացող միջատը, երկար նրա շուրջը պտույտ գալուց հետո, եկավ նստեց նրա գլխին: Կուզեն Բենեդիկտի բերանը մի րոպե լայնացավ, կարծես ծիծաղելու համար, և այն էլ ինչպիսի՞ ծիծաղ: Նա զգում էր, թե ինչպես թեթև կենդանին վազում է մազերի վրա: Անդիմադրելի ցանկություն զգաց ձեռքը գլուխը տանելու, բայց զսպեց իրեն և լավ արեց:

«Ոչ, ոչ,— մտածեց միջատաբանը,— կարող եմ փախցնել կամ ավելի վատը՝ կարող եմ վնասել նրան: Թողնենք, որ ավելի մատչելի դառնա: Ահա սկսեց քայլել: Ցած է իջնում: Չգում եմ, որ նրա փոքրիկ թաթերը քայլում են գանգիս վրա: Թվում է թե բավական խոշոր վեցոտանի է: Երանի իջներ մինչև քթիս ծայրը, աչքերս շլացնելով գուցե կարողանայի տեսնել և որոշել, թե ո՞ր ցեղին, տեսակին կամ կարգին է պատկանում»:

Այդպես էր մտածում կուզեն Բենեդիկտը: Իսկ նրա դուրս ցցված գագաթից մինչև երկար քիթը բավական տարածություն կար: Բայց մի՞թե այդ քմահաճ կենդանին ուրիշ ճանապարհ չէր ընտրի, օրինակ՝ դեպի ականջները կամ գագաթի կողմը և, այդպիսով, հեռանար գիտնականի տեսողությունից: Կարող էր ամեն րոպե նորից թողնել հեռանալ հյուղակից, վերադառնալ արևի ճառագայթների տակ, որտեղ, անկասկած, անց էր կացնում իր կյանքը տոհմակիցների հետ, որոնք նրան հրավիրում էին իրենց մոտ:

Կուզեն Բենեդիկտը մտածում էր այս բոլորի մասին: Միջատաբանն իր կյանքում անկասկած այսպիսի հուզումնալի թուզներ չէր ապրել: Մտածել, թե մի նոր ցեղի, տեսակի կամ գոնե նոր կարգի աֆրիկյան վեցոտանի կանգնած էր իր գլխի վրա, և ինքը չէր կարողանա նրան մոտիկից տեսնել, եթե վեցոտանին չբարեհաճեր զբոսնել աչքերից առնվազն մի մատնաչափ հեռավորության վրա:

Սակայն կուզեն Բենեդիկտի ցանկությունը կատարվեց: Միջատը, կիսով չափ ցցված մազերի վրա քայլելուց հետո, որոնք նրա համար որևէ վայրի մացառուտ էին, սկսեց ցած իջնել կուզեն Բենեդիկտի գագաթից, և միջատաբանը կարող էր, վերջապես, հուսալ, որ կհասներ մինչև քթի ծայրը: Իսկ այնտեղ հասնելուց հետո մի՞թե ավելի ցած չէր իջնի:

«Եթե ես լինեի նրա տեղը, կիջնեի», – մտածում էր հարգելի գիտնականը:

Իսկ ավելի ճիշտն այն էր, որ, ով էլ որ լիներ կուզեն Բենեդիկտի տեղը, մի ուժգին ապտակ կհասցներ ճակատին, ճզմելու կամ առնվազն փախցնելու համար անտանելի միջատին: Չգալ, որ վեց թաթեր շարժվում են մաշկի վրա, չխոսելով խայթվելու վտանգի մասին, պետք է ընդունել, որ իսկական հերոսությունն էր: Այն սպարտացին, որը թողնում էր աղվեսը պատառոտի իր կուրծքը կամ մատների արանքում շիկացած կրակ պահող հռոմեացին ավելի սառնասիրտ չէին, քան կուզեն Բենեդիկտը, որն անկասկած այդ հերոսներից էր սերված:

Միջատը քսան փոքր շրջաններ գործելուց հետո հասավ քթի ծայրը: Մի թույլ վարանում տեղի ունեցավ, որի հետևանքով կուզեն Բենեդիկտի ամբողջ արյունը դեպի սիրտը խուժեց: Վեցոտանին արդյոք աչքերից վերև կբարձրանա՞ր, թե ցած կիջներ:

Միջատը ցած իջավ: Կուզեն Բենեդիկտը զգաց, որ նրա մազոտ թաթերը դեպի քթարմատն էին առաջանում: Վեցոտանին ո՛չ աչք թեքվեց, ո՛չ ծախ և կանգ առավ դողդողացող երկու կողմերի միջև, գիտնականի մի քիչ կորացած քթարմատին, որն այնքան հարմար էր ակնոց դնելու համար: Միջատը անցավ այն փոքրիկ փոսը, որն առաջացել էր ակնոցի հարատև գործածությունից, և իջավ մինչև քթի ծայրը:

Այդ ամենահարմար տեղն էր, որ կարող էր ընտրել վեցոտանին: Այդ հեռավորության վրա կուզեն Բենեդիկտը, տեսողական ճառագայթները ուղղելով մի կետի, կարող էր տեսնել միջատին:

«Տե՛ր աստված, – բացականչեց կուզեն Բենեդիկտը՝ չկարողանալով չճչալ, – պալարածև մանտիկոր է»: Սակայն ոչ թե պետք է ճչար, այլ պետք է մտածեր միայն: Բայց մի՞թե չափազանց մեծ պահանջ չէր լինի այնքան ոգևորված միջատաբանից:

Ինչպե՛ս կարելի էր հիացմունքից չճչալ, երբ քթի ծայրին նստած է պալարածև մի մանտիկոր, լայն թևապանակով, «ցիցիլոդեթոնների» ցեղին պատկանող մի միջատ, մի նմուշ, որը խիստ հազվագյուտ է հավաքածուներում, որը առանձնահատուկ է միայն Աֆրիկայի արևելյան մասերին:

Դժբախտաբար միջատը լսեց այդ ճիչը, որին անմիջապես հաջորդեց փոշոտոցը, փոշոտոցը ցնցեց այն մասը, որի վրա թառել էր միջատը: Կուզեն Բենեդիկտը ուզեց բռնել նրան, ձեռքը երկարեց և իսկույն փակեց, բայց միայն իր քթի ծայրը բռնեց:

«Անե՛ծք», – բացականչեց միջատաբանը:

Բայց այս անգամ հիանալի սառնասրտություն ցուցաբերեց:

Նա գիտեր, որ պալարածև մանտիկորը օդում, այսպես ասած, թրթռում է միայն, ավելի շուտ քայլում է, քան թե թռչում: Ծնկի գալով նա կարողացավ աչքերից երկու մատնաչափ հեռավորության վրա նկատել սև կետ, որը սահում էր արևի ճառագայթի տակ: Ավելի լավ կլիներ, իհարկե, նրան դիտել այդ ազատ շարժումներն անելիս: Սակայն չպետք էր ձեռքից բաց թողնել:

«Եթե բռնեմ, կարող եմ ճզմել,— մտածեց կուզեն Բենեդիկտը,— ոչ, ավելի լավ է հետևից գնամ և հիանամ նրան դիտելով: Միշտ էլ կարող եմ բռնել»:

Կուզեն Բենեդիկտը սխալվո՞ւմ էր արդյոք: Այսպես թե այնպես, ահա նա չորեքթաթ, քիթը գետին կախած՝ որսի հետքին հետևող շան նման սկսեց հիանալի վեցոտանուն հետևել հինգ կամ վեց մատնաչափ հեռավորությունից: Մի քիչ հետո հյուղակից դուրս էր եկել կեսօրվա արևի տակ և մի քանի րոպե հետո հասավ Ավլեցի հիմնարկը շրջափակող դարպասին:

Ի՞նչ կաներ այդտեղ մանտիկորը, արդյո՞ք մի ոստյունով կանցներ ցանկապատի վրայով և մի պատվար կթողներ իր վրա հիացողի և իր միջև: Ոչ, այդպիսի բնավորության տեր չէր միջատը, և կուզեն Բենեդիկտը շատ լավ գիտեր այդ: Ուստի մնաց այնտեղ, սողունի նման սողալով, թեև այնքան հեռու էր միջատից, որ չէր կարող նրան ուսումնասիրել միջատաբանական տեսակետից, որը սակայն, արդեն կատարված էր. բայց իրականում բավականաչափ մոտիկ էր և կարողանում էր տեսնել գետնի վրա շարժվող խոշոր սև կետը:

Մանտիկորը դարպասի մոտ հասնելով՝ հանդիպեց խլուրդի լայն բացված բնին, որը խորանում էր հողի տակ: Միջատը առանց երկար մտածելու ծլկեց այդ ստորերկրյա անցքի մեջ, քանի որ նրանք սիրում են այդ մութ ճանապարհները: Կուզեն Բենեդիկտը վախեցավ, որ նրան կկորցնեն տեսողությունից: Բայց շատ զարմացավ տեսնելով, որ ներքնուղու լայնությունը հասնում էր ամնվազն երկու ոտնաչափի, և նրա երկար ու նիհար մարմինը կարող էր մտնել այնտեղ: Կուզեն Բենեդիկտը ժանտաքիսի նման ոգևորված էր այդ հետապնդումից և չնկատեց իսկ, որ թաղելով հողի տակ՝ անցնում էր ցանկապատի տակով: Ճիշտ որ խլուրդի բույնը հաղորդակցության մեջ էր դնում Ավլեցի հիմնարկի ներքին մասը արտաքինի հետ: Կես րոպեում կուզեն Բենեդիկտը ֆակտորիայից դուրս էր եկել: Բայց այդ մասին նա բոլորովին չէր մտածում: Նա շարունակում էր հիանալ իր նուրբ միջատով, որը նրան առաջնորդում էր: Բայց ինչպես երևում է՝ միջատը արդեն հոգնել էր այդ երկար ուղևորությունից: Նրա վերնաթևերը բացվեցին, թևերը տարածվեցին: Կուզեն Բենեդիկտը զգաց վտանգը և բաց արած ձեռքով ուզում էր բռնել մանտիկորին, երբ սա հանկարծ ֆռռռ... թռա վ:

Ի՞նչ հուսահատություն: Սակայն մանտիկորը չէր կարող հեռու թռչել: Կուզեն Բենեդիկտը կանգնեց, չորս կողմը նայեց և սկսեց վազել՝ ձեռքերը պարզած...

Միջատը թռչում էր նրա գլխի վրա և երևում էր միայն որպես մի փոքրիկ կետ, առանց որևէ ձևի:

Արդյո՞ք մանտիկորը նորից կնստեր գետնին, կուզեն Բենեդիկտը ցցված մազերի շուրջը մի քանի քմահաճ շրջան անելուց հետո: Ամեն ինչից ենթադրում էր, որ այդպես կլինի:

Սակայն կուզեն Բենեդիկտի չար բախտից Ավլեցի հիմնարկի այդ մասը, որը գտնվում էր քաղաքի հյուսիսային մասում, կցված էր մի ընդարձակ անտառի, որը

Կազմողների տերիտորիայի վրա տարածվում էր հազարավոր քառակուսի մղոն տարածությամբ: Եթե մանտիկորը մտներ ծառերի մեջ և սկսեր թռչել մի ճյուղից մյուսը՝ հարկ կլիներ հրաժարվել նրան հավաքածուի մեջ դասավորելուց, որի ամենաարժեքավոր զարդը կկազմեր: Ավա՛ղ, այդպես էլ եղավ: Մանտիկորը նորից նստեց գետնին: Կուզեն Բենեդիկտը, բախտ ունենալով կրկին տեսնել նրան, իսկույն հարձակվեց՝ երեսն ի վայր գետնին պառկելով: Բայց մանտիկորը չէր քայլում, փոքր ցատկումներ էր անում:

Կուզեն Բենեդիկտը հոգևած, ծնկները և եղունգները արևոտած՝ նույնպես ցատկեց: Նրա թևերը, բաց արած ձեռքերը աջ ու ձախ էին տարածվում, հետևելով սև կետին, որը այս ու այն կողմ էր ցատկոտում: Այդ միջոցին նա կարծես թե իր մարմնի վերնամասը քարշ էր տալիս այդ շիկացած հողի վրայով, ինչպես լողորդը՝ ծովի մակերեսին:

Անօգ՛ւտ ջանք: Նրա ձեռքերը միշտ օղն էին բռնում: Միջատը շարունակում էր նրանից խուսափել և քիչ հետո հասնելով կանաչ սաղարթին՝ մանտիկորը բարձրացավ վերջին անգամ կուզեն Բենեդիկտի ականջի տակ և, հպվելով նրան, հնչեցրեց պատենաթևավորների ամենաուժեղ, միաժամանակ ամենահեզակական սոգոցը:

«Անիծվե՛ս, — երկրորդ անգամ բացականչեց կուզեն Բենեդիկտը: — Փախչում է ինձանից ապերախտ վեցոտանին: Իսկ ես քեզ համար պատվո տեղ էի պատրաստել իմ հավաքածուի մեջ: Դե որ այդպես է, ես քեզ բաց չեմ թողնի, կհետևեմ քեզ, մինչև որ հասնեմ...»

Նա մոռանում էր, որ իր կարճատես աչքերով չէր կարող նկատել մանտիկորին սաղարթի մեջ: Բայց արդեն կորցրել էր իրեն: Բարկությունը, դժգոհությունը նրան խելագար էին դարձրել: Իրեն և միայն իրեն պետք էր մեղադրել այդ անհաջողության համար: Եթե սկզբից նրան բռներ, փոխանակ հետևելու «ազատ շարժումներ անելիս», այս բոլորից ոչ մեկը չէր պատահի, և նրա ձեռքում կլիներ աֆրիկյան մանտիկորի այդ հիանալի նմուշը, որի անունը մարդու գլխով և առյուծի մարմնով առասպելական կենդանուն է տրվում:

Կուզեն Բենեդիկտը գլուխը կորցրել էր: Նա չէր կասկածում, որ բոլորովին անսպասելի պարագաների հետևանքով գտել էր ազատությունը: Նա չէր մտածում, թե այդ խլուրդի բույնը որի մեջ մտել էր, մի անցք էր բաց արել իր առաջ, և այդպիսով ինքը դուրս էր եկել Ալվեցի հիմնարկից: Անտառը իր առջև էր, իսկ մանտիկորը թռել էր: Ինչ գնով էլ լիներ, ուզում էր կրկին տեսնել նրան:

Եվ ահա նա վազում է այդ խիտ անտառով՝ այլևս չհիմանալով, թե ինչ է անում, երևակայելով, որ միշտ տեսնում է թանկագին միջատը՝ վիթխարի դաշտային սարդի նման իր խոշոր թաթերով օդը ճեղքելով: Ուր էր գնում, ինչպես էր վերադառնալու, եթե նույնիսկ վերադառնար, անգամ չէր էլ մտածում դրա մասին: Եվ այդպես մեկ մղոն խորացավ՝ ենթարկվելով որևէ բնիկի հանդիպելու կամ որևէ գազանի հարձակման մատնվելու վտանգին:

Հանկարծ, երբ նա անցնում էր մացառուտի կողքից, մի հսկա էակ ցցվեց իր առաջ և ընկավ նրա վրա և այնպես, ինչպես կուզեն Բենեդիկտը կվարվեր մանտիկորի հետ, այդ մարդը մի ձեռքով բռնեց նրա ծոծրակից, մյուսով մեջքից և առանց ժամանակ տալու, որ սթափվի, տարավ խիտ անտառի միջով:

Այդ օրը կուզեն Բենեդիկտը ձեռքից բաց թողեց աշխարհի բոլոր հինգ մասերի միջատաբաններից ամենաբախտավորը լինելու գեղեցիկ առիթը:

XVI. Մգանգա

Երբ տիկին Ուելդոնը ամսի 17-ի այդ օրը սովորական ժամին չտեսավ կուզեն Բենեդիկտին, սաստիկ անհանգստացավ: Թե ինչ էր եղել իր մեծ երեխան, չէր կարողանում հասկանալ: Չէր կարելի մտածել, թե նա կարող էր դուրս գալ անանցանելի ցանկապատով շրջապատված ֆակտորիայից: Տիկին Ուելդոնը լավ էր ճանաչում իր զարմիկին: Եթե առաջարկեին այդ ինքնատիպ մարդուն փախչել թողնելով թիթեղյա տուփը և աֆրիկյան միջատների հավաքածուի տուփը, նա կվերժեր առանց մի րոպե վարանելու: Մինչդեռ տուփը հյուղակույմ էր, ոչ ոք ձեռք չէր տվել դրան, և պարունակում էր այս մայրցամաքում գիտնականի հավաքած բոլոր միջատները: Անընդունելի կլիներ, որ նա կամավոր բաժանված լիներ իր միջատաբանական գանձերից:

Այսպես թե այնպես, կուզեն Բենեդիկտը չկար խոզե-Անտոնիո Ալվեցի հիմնարկում:

Ամբողջ օրը տիկին Ուելդոնը նրան փնտրեց համառորեն, փոքրիկ Ջեյկի և Հալիմայի աջակցությամբ: Սակայն իզուր:

Տիկին Ուելդոնը ստիպված էր ենթադրել, թե բանտարկյալին տարել են գերեվաճառի հրամանով, բայց թե ինչու, այդ մասին ոչինչ չգիտեր: Բայց ի՞նչ էր արել նրան Ալվեցը: Բանտարկե՞լ արդյոք մեծ հրապարակի բարաքներից մեկում: Ինչպե՞ս բացատրել այդ հափշտակությունը տիկին Ուելդոնի և Նեգորոյի միջև կնքված պայմանագրից հետո, ըստ որի կուզեն Բենեդիկտը պատկանում էր այն բանտարկյալների թվին, որոնց գերեվաճառը պետք է տաներ Մոսամեդես՝ փրկագնի դիմաց հանձնելու Ջեյմս Ուելդոնին:

Եթե տիկին Ուելդոնը ներկա լիներ Ալվեցի բարկության պահին, երբ գերեվաճառը իմացավ բանտարկյալի անհետանալը, կհասկանար, որ այդ անհետացումը եղել էր հակառակ նրա կամքի: Բայց եթե կուզեն Բենեդիկտը կամովին էր փախել, ինչու՞ նրան չէր հայտնել իր գաղտնի փախուստի մասին:

Այսպես թե այնպես, Ալվեցի և նրա սպասավորների մեծ ուշադրությամբ կատարած որոնումների հետևանքով գտնվեց խլուրդի բույնը, որը հաղորդակցության մեջ էր դնում ֆակտորիան հարևան անտառի հետ: Գերեվաճառը այլևս չկասկածեց, որ «ճանճ որսացողը» թռել էր այդ նեղ անցքով: Կարելի է երևակայել նրա զայրույթը, երբ մտածեց, թե այդ փախուստը կգրեին իր հաշվին, և որոշ գումար կպակասեր ստացվելիք փրկագնից:

«Ինքնին մի մեծ բան չարժեր այդ հիմարը,— մտածում էր նա,— սակայն նա ինձ վրա թանկ կնստի, օ՛, եթե ձեռքս ընկնի՛...»:

Բայց հակառակ ֆակտորիայի ներսում և անտառի մեծ տարածության վրա արված որոնումներին՝ փախստականի հետքը չգտնվեց: Տիկին Ուելդոնը ստիպված էր համակերպվել զարմիկի կորստին, իսկ Ալվեցը՝ ողբալ իր բանտարկյալին: Զանի որ հավանական չէր, թե միջատաբանը կապ հաստատած լիներ դրսի աշխարհի հետ, ուրեմն պարզ էր, որ պատահմամբ էր գտել այդ անցքը և փախուստ էր տվել առանց մտածելու այնտեղ մնացողների մասին, կարծես թե նրանք գոյություն չեն էլ ունեցել:

Տիկին Ուելդոնը ստիպված էր խոստովանել, որ այդպես էր իրականությունը, բայց բոլորովին չմեղադրեց այդ խեղճ մարդուն, որ միանգամայն անգիտակից էր իր արարքներին:

«Խեղճ մարդ, ի՞նչ կլինի նրա վիճակը», – մտածում էր երիտասարդ կինը:

Ավելորդ է ասել, որ նույն օրն իսկ փակեցին խլուրդի բույնը մեծ զգուշությամբ, և հսկողությունը կրկնապատկվեց ֆակտորիայի թե՛ դրսում, թե՛ ներսում:

Այնուհետև բանտարկյալների համար վերսկսվեց սովորական և միապաղաղ կյանքը:

Այդ միջոցին տարվա այդ եղանակի համար բացառիկ կլիմայական երևույթ տեղի ունեցավ այդ շրջանում: Հարատև անձրևներ սկսվեցին հունիսի 19-ից սկսած, թեև մազիկայի ժամանակաշրջանը, որ ապրիլին էր վերջանում, արդեն անցել էր: Երկինքը ամպերով էր ծածկված, և հարատև անձրևները ողողում էին Կազունդեն:

Այդ երևույթը խիստ տհաճ էր տիկին Ուելլոնի համար, քանի որ ստիպված էր հրաժարվել ֆակտորիայի բակում զբոսնելուց, իսկ բնիկների համար կատարյալ աղետ էր: Ցածրադիր հողամասերը, որոնք արդեն ծածկված էին հասուն բերքով, ամբողջովին ջրի տակ մնացին: Այդ շրջանի բնակիչները միանգամից զրկվելով բերքից՝ սովի սպառնալիքի տակ էին: Բոլոր աշխատանքները կանգ առան. Մուանա թագուհին, ինչպես նաև նրա միևնույնները չգիտեին, թե ինչպես պայքարեն աղետի դեմ:

Հարկ եղավ դիմել կախարդներին, բայց ոչ նրանց, որոնք հիվանդներին բժշկում են դյուբանքներով և կախարդանքներով կամ բնիկների բախտն են գուշակում: Այս անգամ խնդիրը հանրային աղետի մասին էր, ուստի անձրևներ առաջացնող կամ դադարեցնող լավագույն «մգանգաներին» հրավիրեցին վտանգը հեռացնելու համար:

Սակայն մգանգաները նույնպես անգոր եղան: Նրանք իզուր հնչեցրին իրենց միապաղաղ երգը, շարժեցին իրենց կրկնակի գանգուլակները և գանգակները, անգոր եղան նաև թալիսմանները, հատկապես այն եղջյուրը, որի ծայրը վերջանում է երեք փոքրիկ կտուռով, չօգնեցին ոչ խելահեղ պարերը, ոչ վսեմափայլ պալատականների երեսին նետած թուրք ու մուրը: Նրանց չհաջողվեց վռնդել այն չար ոգիներին, որոնք անձրևներ էին առաջացնում:

Գործերը հետզհետե ավելի էին վատանում, երբ Մուանա թագուհին մտածեց բերել տալ այն հռչակավոր մգանգային, որը այդ միջոցին գտնվում էր Անգուլայի հյուսիսային մասում: Նա առաջին կարգի մգանգա էր, որի կատարած հրաշքներն այնքան ավելի զարմանալի էին, որքան նրանց դեռևս ոչ մի անգամ չէին փորձել այս շրջանում, ուր նա դեռևս ոտք չէր դրել: Բայց մազիկաների վայրում միայն նրա հաջողությունների մասին էին խոսում:

Հունիսի 25-ի առավոտյան նոր մգանգան մեծ աղմուկով՝ բոժոժների բարձրաձայն զնգզնգոցով հայտարարեց իր մուտքը Կազունդե:

Այդ կախարդն ուղղակի չիտոկա գնաց, և անմիջապես բնիկների ամբոխը շրջապատեց նրան: Երկինքը մի քիչ պարզվել էր, քամին կարծես ուզում էր փոխվել, և պարզվելու այդ նշանները համընկնելով մգանգայի հասնելուն՝ մարդկանց միտքը տրամադրեց նրա օգտին:

Մգանգան մի հոյակապ, գտարյուն նեգր էր: Նրա հասակը առնվազն վեց ոտնաչափ կլիներ, և չափազանց ուժեղ էր երևում: Նրա այդ արտաքինը միանգամայն հմայեց ամբոխին:

Սովորաբար կախարդները երեք կամ չորս հոգով են շրջում ավանները, որոշ թվով արբանյակների և օգնականների ուղեկցությամբ: Իսկ այս մզանգան մենակ էր: Նրա ամբողջ մարմինը նախշած էր սպիտակ խայտաբղետ նկարներով: Նրա մարմնի ստորին մասը ծածկված էր խոտից հյուսված շրջազգեստի տակ: Կզին փաթաթած էր թռչունների գանգերից կազմված մի մանյակ, գլխին դրած էր կաշվե թասակ, մեջքին կապել էր կաշվե գոտի, որից կախվել էին հարյուրավոր բոժոժներ, որոնք ավելի աղմկալի էին, քան իսպանական ջորու գրնգուն սանձասարքը. այդպես էր աֆրիկյան գուլշակների միաբանության այդ նմուշի հագուստը:

Նրա արվեստի ամբողջ սարքը բաղկացած էր մի տեսակ կողովից, որի հատակը մի երկարավիզ դդում էր: Կողովը լցված էր ոստրեններով, թալիսմաններով, փայտե և այլ ֆետիշներով, ինչպես նաև մեծ քանակությամբ թրիքի գնդիկներով, որոնք Կենտրոնական Աֆրիկայի հմայական արվեստի և գուլշակության գլխավոր պարագաներն են:

Մի առանձնահատկություն, որը իսկույն ամբոխի ուշադրությունը գրավեց, այն էր, որ այդ մզանգան համր էր. բայց այդ պակասությունը ավելի էր բարձրացնում մզանգայի հանդեպ ամբոխի տածած համակրանքը: Նա միայն կոկորդային, ցածր, երկարատև և ոչ մի միտք չարտահայտող ծայն էր հանում և դրանով իսկ պիտի ավելի բարձրացներ իր կախարդական հնարամտությունը:

Մզանգան նախ և առաջ հրապարակի շուրջը պտույտ տվեց՝ ինչ-որ պար պարելով, որից շարժման մեջ էր դրվում բոժոժների ամբողջ շարքը: Ամբոխը հետևում էր նրան և ընդօրինակում նրա շարժումները: Կարծես կապիկների մի խումբ լիներ, որը իր առաջնորդին էր հետևում: Բայց հանկարծ կախարդը, անցնելով Կազոնդեի գլխավոր փողոցով, ուղղվեց դեպի արքայական պալատը:

Իսկույն տեղեկացրին Մուլանա թագուհուն, որը լսելով նոր գուլշակի գալուստը՝ պալատականների ուղեկցությամբ նրան ընդառաջ գնաց:

Մզանգան գլուխ տվեց, խոնարհվելով մինչև փողոցի փոշին և գլուխը բարձրացրեց՝ փառահեղ հասակը ուղղելով: Թևերը դեպի երկինք պարզեց, որտեղ արագ ակոսում էին ամպի ծվենները: Կախարդը ձեռքով այդ ամպերը ցույց տվեց և նրանց շարժումները ձևացրեց ոգևորված մնջախաղի շարժումներով. ցույց տվեց, թե ինչպես նրանք փախչում էին դեպի արևմուտք, բայց նորից արևելք էին վերադառնում, և դրան ոչ մի ուժ չէր կարող արգելել:

Եվ ահա, հանկարծ, ամբողջ քաղաքի և պալատականների զարմացական հայացքի տակ, կախարդը բռնեց Կազոնդեի դաժան ինքնակալուհու ձեռքը: Մի քանի պալատականներ փորձեցին դիմադրել արքունական կարգուձևին հակառակ այդ արարքին, բայց հուժկու մզանգան նրանցից ամենամոտիկի վզակոթից բռնելով՝ տասնհինգ քայլ հեռու շարտեց:

Թագուհին ոչ մի դժգոհություն չհայտնեց կախարդի այդ խիզախ արարքի նկատմամբ: Դեմքի մի տեսակ ծամաճռությամբ, որը պետք է ծիծաղ լիներ, նայեց գուլշակին, որը թագուհուն իր հետ տարավ արագ քայլերով, իսկ ամբոխը հետևեց նրան:

Այս անգամ դեպի Ալվեցի հիմնարկն ուղղվեց կախարդը և քիչ հետո նրա դռանը հասավ, որը փակ էր այդ միջոցին: Ուստի մի հարվածով տապալեց դուռը և հնազանդ թագուհուն մտցրեց ֆակտորիայի ներսը:

Գերեվաճառը, զինվորները, ստրուկները վազեցին, որպեսզի պատժեն այդ հանդուզն կախարդին, որ համարձակվել էր դուռը խորտակել, առանց սպասելու,

որ բաց անեն: Սակայն տեսնելով, որ թագուհին չէր բողոքում, կանգ առան՝ հարգալիր դիրք ստանալով:

Ալվեցը անտարակույս պատրաստվում էր հարցնել թագուհուն, թե ինչով էր պարտական, որ այցելությանը պատվել էր իրեն, սակայն կախարհը ժամանակ չտվեց նրան և ցրելով ամբոխին, որպեսզի իր շուրջը ազատ տարածություն գոյանա, նա վերսկսեց մնջախաղը է՛լ ավելի ոգևորությամբ: Ձեռքով ամպերը ցույց տվեց, սպառնաց նրանց, դևահան արեց, շարժում արեց, որպեսզի նախ կանգնեցնի և այնուհետև հեռացնի նրանց: Նրա ահագին թշերն ուռեցին, և փչեց ծանր ամպերի վրա, որպես թե այնքան ուժ ուներ, որ կարող էր նրանց ցրել: Այնուհետև ամբողջ հասակով մեկ կանգնեց, կարծես ուզում էր նրանց կասեցնել, և թվում էր, թե ահա իր հսկա հասակով կկարողանար նրանց բռնել:

Սևահավատ Մուսանան, տարված այս մեծ կատակերգուի խաղով, չէր կարողանում զսպել իրեն, ճչում էր, զառանցում իր հերթին և բնագործն կրկնում էր մզանգայի շարժումները: Պալատականները, ամբոխը նույնն էին անում, և համրի կոկորդային ձայները կորչում էին երգի, ճիչերի և աղմուկի մեջ:

Եվ ի՞նչ, մի՞թե ամպերը այլևս չբարձրացան արևելյան հորիզոնի վրա և չծածկեցին արևը: Մի՞թե չքացան այդ նոր գուլակի դիվահարությունների առաջ: Ոչ: Եվ ճիշտ այն միջոցին, երբ թագուհին և ամբոխը երևակայում էին, թե ոչնչացրել են չար ոգիներին, որոնք նրանց ողորդում էին այնքան առատ անձրևներով, ահա երկինքը, որ առավոտվանից մի քիչ պարզվել էր, ավելի խավարեց: Փոթորկալի անձրևի խոշոր կաթիլները թմբկահարում էին գետինը:

Եվ ահա ամբոխի տրամադրությունը փոխվեց: Մեղքը գցեցին այդ մզանգայի վրա, որը մյուսներից ավելի լավը դուրս չեկավ, և թագուհու դեմքի բարկությունից կարելի էր հասկանալ, որ կախարհը առնվազն կզրկվեր ականջներից: Նեգրերի օղակը սեղմվեց նրա շուրջը, բռունցքները սպառնում էին և նրա գլխին լավ օյին կբերեին, եթե անսպասելի մի դեպք չփոխեր այդ թշնամական վերաբերմունքը:

Մզանգան, որը մի ամբողջ գլխով բարձր էր այդ գոռգոռացող ամբոխից, ձեռքը ուղղեց բակի ներսում երևացող ինչ-որ կետի: Այդ շարժումն այնքան հրամայական էր, որ բոլորը այն կողմը դարձան: Այդ րոպեին տիկին Ուելդոնը, փոքրիկ Ջեկը աղմուկն ու բացականչությունները լսելով՝ հյուղակից դուրս էին եկել: Նրանց էր, որ կախարհը ձախ ձեռքով ցույց էր տալիս, մինչդեռ աջով երկինքն էր ցույց տալիս: Նրանք, այո, նրանք էին: Այդ սպիտակամորթ կինը, նրա որդին էին չարիքի պատճառը: Այդտեղ էր կախարդանքի ակունքը: Այդ ամպերը նրանք բերել էին իրենց անձրևային երկրից՝ ողորդելու համար Կագոնդեի տերիտորիան:

Ամբոխը հասկացավ նրան: Մուսանա թագուհին, ցույց տալով տիկին Ուելդոնին, սպառնական շարժում արեց: Բնիկները, մոլեգին ճիչեր արձակելով՝ հարձակվեցին նրա վրա:

Տիկին Ուելդոնը հասկացավ, որ կորած էր և, երեխային գիրկն առնելով՝ արձանի նման անշարժ կանգնեց այդ գերգրգռված ամբոխի առաջ: Մզանգան քայլեց դեպի նա: Ճանապարհ տվեցին գուլակին, որը չարիքի պատճառի հետ կարծես գտել էր նաև դարմանը: Գերեվաճառ Ալվեցը, որի համար բանտարկյալուհու կյանքը թանկ արժեք էր, նույնպես մոտեցավ, չիմանալով, թե ինչ աներ: Մզանգան բռնեց փոքրիկ Ջեկին և խլելով մոր գրկից՝ դեպի երկինք բարձրացրեց: Թվում էր, թե ահա երեխայի գլուխը կխփեր գետնին ու կշարդեր, աստվածների գութը շարժելու համար: Տիկին Ուելդոնը ճչաց և նվաղած գետին ընկավ: Բայց մզանգան, թագուհուն նշան անելով, որն անշուշտ նրա անելիքին հավանություն տվեց, բարձրացրեց խեղճ կնոջը, և տարավ երեխայի հետ, ամբոխը միանգամայն

Ենթարկվելով նրան՝ ճանապարհ բաց արեց: Իսկ Ալվեցը, որ կատաղել էր, տարբեր տեսակետ ուներ այդ մասին: Նախ կորցնել էր քեբ բանտարկյալներից մեկին, այնուհետև ձեռքից բաց թողնել մնացած երկուսին և նրանց հետ նաև այն խոշոր գումարը, որը Նեգորոն խոստացել էր իրեն, երբե՛ք, եթե նույնիսկ ամբողջ Կազնոդեն ոչնչանար մի նոր ջրհեղեղից: Նա փորձեց դիմադրել այդ հափշտակմանը:

Բայց այս անգամ նրա դեմ ըմբոստացան բնիկները: Թագուհին հրամայեց բռնել նրան, և Ալվեցը հասկանալով, թե ինչ էր սպասում իրեն, լռեց՝ անիծելով վսեմափայլ Մուանայի հպատակների ապուշ սնահավատությունը: Այդ վայրենիներն արդարև սպասում էին, որ ամպերը կջրջանան նրանց բերողների հետ և չէին կասկածում, թե կախարդը ուզում էր օտարականների արյունով կանգնեցնել իրենց այնքան տանջող անձրևները: Այդ միջոցին մզանգան տանում էր գոհերին, ինչպես առյուծը կտաներ մի գույգ ուլիկների, սարսափած փոքրիկ Ջեկին, անզգա տիկին Ուելդոնին, միևնույն ամբոխը ծայր աստիճան կատաղած՝ նրան էր հետևում գոռում-գոչումով: Բայց գուշակը դուրս եկավ դարպասից, անցավ Կազնոդեի միջով, մտավ անտառը, քայլեց մոտավորապես երեք մղոն, առանց մի բոպե հանգստանալու, և վերջապես մենակ մնալով (բնիկները հասկացել էին, որ կախարդը չէր ուզում, որ ավելի հետևեն իրեն) հասավ մի գետի, որը հոսում էր դեպի հյուսիս:

Այստեղ, մի լայն ծոցի խորքում, գետափը ծածկող մացառների հետևը կապված էր ծղոտե տանիքով ծածկված մի լաստ: Մզանգան այնտեղ իջեցրեց իր բեռը, ոտքով հրեց լաստը, որը հոսանքը քշեց և ապա իր հստակ ձայնով ասաց. «Նավապե՛տ, ձեզ եմ ներկայացնում տիկին Ուելդոնին և փոքրիկ Ջեկին: Առա՛ջ, և երկնքի բոլոր ամպերը թող պայթեն այժմ Կազնոդեի այդ հիմարների գլխին»:

XVII. Գետի հոսանքով

Այդ խոսքերն ասում էր Հերկուլեսը, որ անճանաչելի էր դարձել կախարդի նման ծպտվելուց և խոսքն ուղղում էր Դիկ Սենդին, որը դեռևս այնքան տկար էր, որ հենվել էր կուզեն Բենեդիկտին, իսկ նրանց կողքին պառկել էր Դինգոն:

Տիկին Ուելդոնը ուշքի գալով, հազիվ կարողացավ ասել. «Դո՛ւ, Դիկ, այդ դո՞ւ ես»:

Պատանին ոտքի կանգնեց, իսկ տիկին Ուելդոնը գրկեց նրան. Ջեկն էլ իր հերթին էր գգվում նրան:

– Դի՛կ, բարեկա՛մս, սիրելի՛ Դիկ, – կրկնում էր փոքրիկ տղան:

Եվ ապա դառնալով Հերկուլեսին՝ ասաց.

– Իսկ ես քեզ չճանաչեցի:

– Հը՞, ինչպե՛ս էի ծպտված, – պատասխանեց Հերկուլեսը՝ կրծքի նախշերը սրբելով:

– Որքա՛ն տգեղ էիր, – ասաց փոքրիկ Ջեկը:

– Ի՞նչ կա զարմանալու, չէ՞ որ ես սատանա էի դարձել, իսկ գիտես, որ սատանան գեղեցիկ չէ:

– Հերկուլե՛ս,– ասաց տիկին Ուելդոնը, ձեռքը նեգրին պարզելով:

– Հերկուլեսը ձեզ փրկեց,– ասաց Դիկ Սենդը,– այնպես, ինչպես ինձ էր ազատել, թեև չի ուզում խոստովանել:

– Փրկվա՛ճ, փրկվա՛ճ: Դեռևս շուտ է փրկության մասին խոսել,– պատասխանեց Հերկուլեսը,– Արդարացի լինելու, համար պետք է ասել, որ եթե չլիներ պարոն Բենեդիկտը, որը եկավ և մեզ հայտնեց, թե որտեղ էիք գտնվում, տիկի՛ն Ուելդոն, ոչինչ չէինք կարող անել:

Իսկապես Հերկուլեսն էր, որ հինգ օր առաջ ցատկել էր գիտնականի վրա այն բռնակազին մանտիկորի հետևից: Այդ դեպքը եթե չլիներ, ոչ Դիկ Սենդը, ոչ նեգրը չէին կարող իմանալ, թե որտեղ էր պահված տիկին Ուելդոնը, իսկ Հերկուլեսը Կազոնդե գնացած չէր լինի կախարդի կերպարանքով:

Այդ միջոցին, երբ լաստը արագ ընթացքով առաջ էր սլանում գետի նեղ մասով, Հերկուլեսը պատմեց, թե ինչ էր անցել իր գլխով Կուանգայի ճամբարից փախուստ տալուց հետո, ինչպես, առանց երևալու, հետևել էր պատգարակին, որի մեջ նստել էին տիկին Ուելդոնը և երեխան, ինչպես էր գտել վիրավոր Դինգոյին, ինչպես երկուսով հասել էին Կազոնդեի շրջակայքը, ինչպես Դինգոյի միջոցով ուղարկված տոմսը Դիկ Սենդին հայտնել էր տիկին Ուելդոնի վիճակը, ինչպես կուզեն Բենեդիկտի անսպասելի հայտնվելուց հետո իզուր փորձել էր մտնել ֆակտորիա, որը այդ միջոցին ավելի խիստ էր պահպանվում և թե, վերջապես, երբ էր առիթը ներկայացել բանտարկյալուհուն խլելու սուկայի խոզե-Անտոնիո Ալվեցի ձեռքից: Առիթը ներկայացել էր այդ նույն օրը, կախարդելու գործերով շրջող մի մզանգա, այն հռչակավոր մզանգան, որին այնքան անհամբերությամբ սպասում էին բնիկները, անցնում էր այն անտառով, որտեղ ամեն գիշեր թափառում էր Հերկուլեսը՝ ուշադրությամբ ամեն կողմ զննելով և պատրաստ լինելով ամեն մի անակնկալի: Հերկուլեսի համար ընդամենը մի քանի բռնակազին գործ եղավ ցատկել մզանգայի վրա, խլել կախարդի պարագաներն ու հագուստը, պատատուկի ճյուղերով այնպես պինդ կապել ծառին, որ սատանան իսկ չկարողանար քանդել: Հետո կախարդի օրինակով իր մարմինը նախշեց և նրա դերը կատարեց անձրևը ցրելու համար. բայց առանց բնիկների անհավատալի սնահավատության դժվար կլիներ խաբել նրանց:

Հերկուլեսը այս համառոտ պատմության ընթացքում ոչ մի խոսք չէր ասել Դիկ Սենդի մասին:

– Իսկ դո՞ւ, Դի՛կ,– հարցրեց տիկին Ուելդոնը:

– Ես, տիկին Ուելդոն,– պատասխանեց պատանին,– ոչինչ չեմ կարող ասել: Իմ վերջին միտքը ձեր և Ջեկի մասին էր... Ես զուր փորձեցի կտրել ինձ սյունին գամող կապերը... ջուրը գլխիցս վերև բարձրացավ... Գիտակցությունս կորցրի... Երբ սթափվեցի, գետափի մոտ՝ պապիրուսների թփի մեջ էի, իսկ Հերկուլեսը ծնկի եկած ինամում էր ինձ:

– Իհարկե, քանի որ ես հիմա և՛ բժիշկ եմ, և՛ կախարդ, և՛ բախտագուշակ...– պատասխանեց Հերկուլեսը:

– Հերկուլե՛ս,– ասաց տիկին Ուելդոնը,– ասացեք տեսնեմ, ինչպե՞ս կարողացաք ազատել Դիկ Սենդին:

– Մի՞թե ես ազատեցի, տիկին Ուելդոն,— պատասխանեց Հերկուլեսը:— Ջրի հոսանքը կոտրեց այն սյունը, որին կապված էր մեր նավապետը, և քշեց տարավ, ես միայն նրան դուրս քաշեցի կիսամեռ վիճակում: Բացի դրանից, մի՞թե դժվար բան էր, խավարի մեջ սողոսկել փոսի հատակին թափված զոհերի մեջ, սպասել, որ ամբարտապետը քանդեն, մտնել ջրի մեջ և մի քիչ ուժ տալով պոկել սյունը, որին այդ սրիկաները կապել էին մեր նավապետին: Այնքան էլ արտակարգ բան չէ այդ: Իմ տեղը ով էլ լինե՞ր՝ նույնը կաներ: Ահա՛ թեկուզ պարոն Բենեդիկտը կամ Դինգոն: Իսկապես, գուցե ինքը Դինգոն էր...

Մի հաչոց լսվեց և Ջեկը գրկելով շան գլուխը՝ փաղաքշական մի քանի ապտակ տվեց նրան, ասելով.

– Ասա՛, Դինգո՛, դո՞ւ փրկեցիր մեր բարեկամ Դիկ Սենդին:

Միաժամանակ երեխան շան գլուխը շարժեց ձախից աջ:

– Դինգոն ժխտական պատասխան է տալիս,— ասաց Ջեկը— տեսնո՞ւմ ես, ուրեմն նա չէ: Դինգո՞, մի՞թե Հերկուլեսը փրկեց մեր նավապետին:

Այս անգամ փոքրիկ տղան Դինգոյի գլուխը մի քանի անգամ շարժեց վեր-վար:

– Ա՛յ, շունը «այո» է ասում,— բացականչեց փոքրիկ Ջեկը, տեսնո՞ւմ ես, որ դու ազատեցիր նրան:

– Դինգո՛, բարեկա՛մս,— պատասխանեց Հերկուլեսը՝ շոյելով Դինգոյին,— չէ՞ որ դու խոստացել էիր ինձ չմատնել:

Այո, խոսք չկա, որ Հերկուլեսն իր կյանքը վտանգելով՝ ազատել էր Դիկ Սենդին: Բայց նրա համեստությունը թույլ չէր տալիս խոստովանել: Բացի դրանից, նա գտնում էր, որ իր արածը շատ պարզ բան էր և մի քանի անգամ կրկնեց, թե իր ընկերներից ոչ մեկը չէր վարանի անելու այն, ինչ ինքը արեց:

Երբ Հերկուլեսը հիշեց իր ընկերներին, տիկին Ուելդոնը խոսք բաց արեց ծերունի Թոմի, նրա որդու Բաթի, Ակտեոնի և Օստինի՝ Հերկուլեսի դժբախտ ընկերների մասին:

Նրանց տարել էին Լճերի շրջանը: Հերկուլեսը տեսել էր նրանց տանելը ստորուկների քարավանի մեջ: Հետևել էր, բայց նրանց հետ հաղորդակցելու ոչ մի առիթ չէր ներկայացել: Նրանք գնացել էին անվերադարձ: Հիշելով այդ Հերկուլեսի դեմքի ծիծաղը չքացավ, և նա չկարողացավ զսպել իրեն. արցունքի խոշոր կաթիլները հոսեցին աչքերից:

– Լաց մի՛ լինեք, բարեկա՛մս,— ասաց տիկին Ուելդոնը,— հուսանք, որ մի օր դարձյալ կտեսնենք նրանց:

Տիկին Ուելդոնը մի քանի խոսքով Դիկ Սենդին հայտնեց, թե ինչ էր տեղի ունեցել Ալվեցի ֆակտորիայում նրա այնտեղ եղած միջոցին:

– Գուցե,— ավելացրեց տիկին Ուելդոնը,— ավելի լավ կլիներ մնալ Կազոնդեում...

– Ինչքա՛ն ձախորդ գործ եմ կատարել ուրեմն,— բացականչեց Հերկուլեսը:

– Ոչ, Հերկուլես, ոչ,— պատասխանեց Դիկ Սենդը:— Այդ չարագործները կարող էին պարոն Ուելդոնին թակարդը զցել: Անհրաժեշտ է, որ մենք անհապաղ փախչենք:

Ծովափ կհասնենք Նեգորոյի Մոսամեդես վերադառնալուց առաջ: Ծովափում պորտուգալական իշխանությունները մեզ կօգնեն ու կպաշտպանեն, և երբ Ալվեցը ներկայանա ստանալու հարյուր հազար դոլարը...

— Մահակի հարյուր հազար հարված կստանա գլխին այդ սրիկան,— բացականչեց Հերկուլեսը,— ես ինքս նրա հետ հաշիվը կմաքրեմ:

Իսկապես որ դա բարդ հարց էր, թեև տիկին Ուելդոնը, իհարկե, չէր կարող մտածել Կազնդե վերադառնալու մասին: Պետք էր, ուրեմն, կանխել Նեգորոյին: Դիկ Սենդի ամբողջ ուշադրությունը այդ կետի վրա պետք է կենտրոնանար:

Դիկ Սենդը վերջապես կարող էր իրականացնել այն ծրագիրը, որը նա վաղուց մտածել էր, այսինքն՝ ծովափ հասնել օգտագործելով որևէ մեծ կամ փոքր գետի հոսանքը: Այժմ արդեն գետը կար, դեպի հյուսիս էր հոսում և հավանական է, որ Կոնգո գետն էր թափվում: Եթե այդպես էր, ապա նրանք փոխանակ Սան-Պաուլո դե Լուանդա հասնելու, կհասնեին այդ մեծ գետի գետաբերանը: Դա այնքան էլ նշանակություն չուներ, քանի որ անհրաժեշտ օգնությունը կստանային նաև ստորին Գվինեայի գաղութներում:

Դիկ Սենդը պատրաստվում էր այդ գետի ընթացքով ցած իջնել օգտվելով ջրիմուռներից առաջացած լողացող կղզուց, որ լինում է մեծ քանակությամբ աֆրիկյան գետերի վրա:

Բայց Հերկուլեսը գիշերը գետափին թափառելիս, գետի հոսանքով ցած իջնող մի լաստ գտավ: Դիկ Սենդը նրանից լավի վրա հույս չէր կարող ունենալ, և պատահականությունը շատ լավ բան էր արել: Ձեռք բերվածը այն նեղ ու երկար մակույկներից չէր, որ սովորաբար գործածում են բնիկները: Հերկուլեսի գտած լաստի երկարությունը անցնում էր երեսուն ոտնաչափից, լայնությունը՝ չորս: Տիկին Ուելդոնն ու նրա ուղեկիցները կարող էին հանգիստ տեղավորվել նրա վրա, բացի դրանից՝ բավական էր այն պահել ջրի հոսանքի ուղղությամբ և միայն նավախելի թիակը բավական էր լաստը ղեկավարելու համար: Ահա իջնում էս գետն ի վար:

Դիկ Սենդը ափերը անտեսանելի մնալու նպատակով նախ ծրագրել էր միայն գիշերը ճամփորդել, սակայն այդպիսով օրվա տևողությունը կիսով չափ կկարճանար, և ուղևորությունը կերկարեր: Բարեբախտաբար, Դիկ Սենդը մտածեց լաստը ծածկել խոտերի տանիքով, որը կհենվեր լաստի երկարությամբ զգված ձողի վրա, այդպիսով ամբողջ լաստը, ինչպես նաև ղեկի թիակը, միանգամայն ծածկված կլինեին: Դրսից նայողը պիտի կարծեր, թե խոտի մի դեզ է լողում ջրի երեսին: Այնքան լավ էր սարքված այդ ծածկված լաստը, որ նույնիսկ թռչուններն էլ խաբվում էին. հատիկներ տեսնելով կարմրակտուց որորները, սևափետուր «արհինգները», գորշ և սպիտակ ծղնիները հաճախ գալիս թառում էին նրա վրա:

Բացի դրանից, այդ կանաչավուն տանիքը ուղևորներին պաշտպանում էր արևի ճառագայթներից: Այդպիսի պայմաններում ուղևորությունը կարող էր անցնել գրեթե առանց հոգնածության, բայց ոչ առանց վտանգի:

Ուղևորությունը երկար կտևեր, և անհրաժեշտ էր ամեն օր ուտելիք ճարել: Պետք էր ուրեմն որսորդություն անել, միայն ձկնորսությունը չէր բավարարում: Բայց Սենդի մոտ միայն Հերկուլեսի բերած հրացանը կար, սակայն նա հույս ուներ ոչ մի կրակոց իզուր չվատնել:

Լաստը հոսանքից տարվելով՝ առաջ էր գնում այնպիսի արագությամբ, որը Դիկ Սենդի կարծիքով, ժամում երկու մղոնից պակաս չէր լինի: Այդպիսով, նա հույս ուներ օրական հիսուն մղոնի չափ առաջ գնալ: Սակայն այդ արագության պատճառով անհրաժեշտ էր մշտական հսկողություն սահմանել, որպեսզի կարելի լիներ խուսափել ժայռերից, ծառի բներից, գետի ծանծաղուտներից: Բացի դրանից, կարող էր պատահել, որ գետի հոսանքը վերածվեր ջրվեժի, որ այնքան հաճախ է պատահում աֆրիկյան գետերի վրա:

Դիկ Սենդը տիկին Ուելդոնին և փոքրիկ Ջեկին կրկին անգամ տեսնելուց ուժերը վերստացած լինելով՝ կանգնել էր լաստի առջևի մասում: Երկար խոտերի արանքով գիտում էր գետի ընթացքը և ծայն տալով կամ շարժումներ անելով՝ ուղղություն էր տալիս չերկուլեսին, որի ուժեղ ձեռքը բռնել էր դեկի թիակը և նշում, թե ինչ էր պետք անել ուղղությունից չշեղվելու համար:

Տիկին Ուելդոնը՝ լաստի կենտրոնում պառկած չոր տերևներից շինված անկողնու վրա, թաղված էր մտածմունքների մեջ: Կուզեն Բենեդիկտը մռայլ, հոնքերը կիտած՝ չերկուլեսի ներկայությունից, որին չէր ներում մանտիկորի գործին միջամտելու համար, մտածելով կորցրած հավաքածուի, միջատաբանական նշումների մասին, որոնց նշանակությունը չէին կարող հասկանալ Կազնդեի բնիկները, լաստին նստած էր՝ ոտքերը ձգած, թւերը կրծքին խաչաձևած և երբեմն բնազդորեն ձեռքը քթին էր տանում, ակնոցն ուղղելու համար, բայց ավաղ, ոչ մի ակնոց չկար քթին: Իսկ փոքրիկ Ջեկը հասկացել էր, որ չի կարելի աղմկել, բայց քանի որ շարժումներ անելը արգելված չէր, երեխան Դինգոյի ձևերն էր անում և լաստի մի ծայրից մյուսն էր վազում չորեքթաթ:

Առաջին երկու օրերը փախստականները ուտելիք վերցրին այն պաշարից, որը չերկուլեսը իր հետ բերել էր, ուստի Դիկ Սենդը գիշերը միայն մի քանի ժամ կանգ առավ՝ մի քիչ հանգստանալու համար, սակայն գետափ դուրս չեկավ, այդ բանը վերապահելով միայն այն դեպքերի համար, երբ հարկ կլինի ուտելիք ճարել:

Ուղևորության սկզբում ոչ մի դեպք չպատահեց այդ անծանոթ գետի վրա, որի լայնությունը միջին հաշվով հարյուր հիսուն ոտնաչափից ավելի չէր: Մի քանի կղզյակներ լողում էին ջրի երեսին և առաջ էին շարժվում լաստի արագությամբ, ուրեմն վախ չկար, թե լաստը նրանց կխփվեր, եթե ուրիշ խոչընդոտներ դրանց չկատեցնեին:

Գետի ափերը ամայի էին երևում: Անշուշտ Կազնդեի տերիտորիայի այս մասերը քիչ էին գալիս բնիկները:

Ափերին բազմաթիվ վայրի բույսեր փարթամորեն աճում և ցուցադրում էին իրենց վառ գույնը: Գետի արագահոս ջրերը թրջում էին նաև անտառների ծառերի արմատները: Այնտեղ երևում էին ձյութափառ ծառեր, կոշտատերև ակացիաներ, կարծրափայտ «բոհինիաներ», որոնց բունը սաստիկ քամիներին ենթակա կողմից ծածկված է մամուռներով, թզենիներ և այլ հիանալի տեսքով ծառեր, որոնք թեքվել էին գետի վրա: Նրանց բարձր կատարները հարյուր ոտնաչափ բարձրության վրա միմյանց միանալով՝ մի տեսակ կամար էին առաջացրել, որից չէին կարող թափանցել արևի ճառագայթները: Հաճախ պատատուկի կամուրջ էր ձգված լինում գետի մի ափից մյուսը, օրինակ, ամսի 27-ին փոքրիկ Ջեկը մեծ հիացմունքով տեսավ, որ կապիկների մի խումբ անցնում էր այդպիսի բուսական կամրջով, մեկը մյուսի պոչից բռնած՝ կամրջի քանդվելու դեպքում ջուրը չընկնելու համար:

Այդ կապիկները փոքր շիմպանզեի մի տեսակն էին, «սոկո», ինչպես Կենտրոնական Աֆրիկայում են անվանում, տգեղ են՝ նեղ ճակատ, դեմքը բաց դեղին, ականջները բարձրադիր: Դրանք ապրում են տասնյակներով, հաչում են

շան նման, բնիկները վախենում են դրանցից, որովհետև երբեմն տանում են նրանց երեխաներին ու ճանկոտում կամ կծոտում:

Պատատուկների կամրջի վրայով անցնելիս, նրանք չէին կասկածում, թե ջրի երեսին լողացող խոտի այդ դեզի տակ մի փոքրիկ տղա կար, որին այնքան մեծ հաճույք էին պատճառում իրենք: Ուրեմն լաստի քողարկումը շատ վարպետորեն էր արված, քանի որ այդ աչալուրջ կենդանիները խաբվում էին:

Քսան մղոն անցնելուց հետո, այդ նույն օրը, լաստը հանկարծ կանգ առավ:

– Ի՞նչ պատահեց, – հարցրեց Հերկուլեսը, որ շարունակ կանգնած էր դեկի մոտ:

– Մի պատվար, բայց բնական պատվար, – պատասխանեց Դիկ Սենդը:

– Պետք է խորտակել, պարո՞ն Դիկ:

– Այո, Հերկուլես, տապարի հարվածով: Մի քանի կղզյակներ ընկել են նրա վրա, բայց դիմացել է:

– Սկսենք, նավապետ, սկսենք, – պատասխանեց Հերկուլեսը՝ կանգնելով դեկի թիակի առաջ:

Պատվարը առաջացել էր «տիկատիկա» կոչված ջրաբույսերից, որոնց փայլուն տերևները սեղմվելով՝ մամլվում և վերածվում էին թաղիքի նմանվող պինդ պատվարի: Նրանց վրայով կարելի էր անցնել գետի մի ափից մյուսը: Լոտոսի հրաշալի ճյուղերը ծածկել էին այդ պատվարը:

Արդեն մթնել էր, Հերկուլեսը կարողացավ առանց մեծ վտանգի ենթարկվելու դուրս գալ լաստից, լավ աշխատեց տապարով, և երկու ժամ հետո պատվարը քանդվեց, կտրված մասերը ծավվեցին ափերի վրա, ջրի հոսանքը ստացավ սովորական ընթացքը, իսկ լաստը վերսկսեց լողալ ջրի երեսին:

Պետք է խոստովանել, որ կուզեն Բենեդիկտը՝ այդ մեծ երեխան մի րոպե հուսացել էր, որ լաստը չի անցնի: Այդ ուղևորությունը նրա համար ծանձրալի էր դարձել և ափսոսանքով էր հիշում խոզե-Անտոնիո Ալվեցի ֆակտորիան և հյուղակը, որտեղ մնացել էր իր թանկագին տուփը: Նրա վիշտը շատ անկեղծ էր, և ճիշտն ասած՝ ցավալի էր նրան նայել: Ո՛չ մի միջատ, ո՛չ մի հատ:

Ինչքա՞ն մեծ եղավ նրա ուրախությունը, երբ Հերկուլեսը՝ «նրա աշակերտը»՝ համենայն դեպս նրան բերեց մի զգվելի փոքր արարած, որին բռնել էր «տիկատիկայի» թելերից մեկի վրա: Եվ տարօրինակ բան, պատվական նեգրը կարծես մի քիչ շփոթված էր, երբ միջատը նրան էր տալիս:

Բայց ինչպե՞ս բացականչեց կուզեն Բենեդիկտը, երբ այդ միջատը, որը բռնել էր ցուցամատի և բթամատի արանքում, ինչքան կարելի էր մոտեցրեց իր կարճատես աչքերին, որոնց այդ միջոցին ոչ ակնոցը, ոչ էլ խոշորացույցը չէին կարող օգնության հասնել:

– Հերկուլես, – բացականչեց կուզեն Բենեդիկտը, – Հերկուլես, դու արժանացար ներողամտության: Չարմուհի Ուելդոն, Դիկ: Ահա մի վեցոտանի, որ եզակի է իր տեսակի մեջ և աֆրիկյան ծագում ունի: Այս մեկը գոնե ինձնից չես խլի, և նա ինձնից չի բաժանվի մինչև կյանքիս վերջը:

– Մի՞թե այդքան արժեքավոր է, – հարցրեց տիկին Ուելդոնը:

— Հարցնում եք, թե արժեքավոր է,— բացականչեց կուզեն Բենեդիկտը:— Մի միջատ, որը ո՛չ պատենավոր է, ո՛չ ցանցաթևավոր, ո՛չ թաղանթաթևավոր, որը չի պատկանում գիտնականների ճանաչած տասը կարգերից և ոչ մեկին, որին գուցե կարելի լիներ դասել սարդանմանների կարգը: Սարդ կլիներ, եթե ունենար ութ ոտք, բայց վեցոտանի է, որովհետև միայն վեցն ունի: Ա՛հ, բարեկամներս, ես արժանի եմ այս ուրախությանը, և, վերջապես, կկարողանամ անունս հավերժացնել գիտական այս հայտնագործությանը: Այս միջատը այսուհետև կկոչվի՝ «Hexapodes-Benedictus»:

Ոգևորված գիտնականը անչափ երջանիկ էր զգում իրեն. նա մոռացել էր անցյալ և ապագա տանջանքների մասին: Տիկին Ուելդոնն ու Դիկ Սենդը ջերմագին շնորհավորեցին նրան:

Այդ միջոցին լաստը լողում էր գետի մոլզ ջրերի վրա: Գիշերվա լռությունը խանգարում էին միայն կոկորդիլոսների թեփուկների խշշոցը կամ գետաձիերի ձայները, որոնք զվարճանում էին գետափին: Քիչ հետո լուսինը, ծառերի ճյուղերի արանքից դուրս գալով՝ մեղմ լույսը օգեց լաստի ներսը:

Հանկարծ գետի աջ ափին ինչ-որ հեռավոր հարայ-հրոց բարձրացավ, որին հաջորդեց մի խուլ աղմուկ. թվում էր, թե հսկա մխոցներ էին աշխատում խավարի մեջ:

Պարզվեց, որ մի քանի հարյուր փղեր էին, որոնք իրենց ծարավն էին հագեցնում: Իրոք կարելի էր կարծել, թե այդ բազմաթիվ կնճիթները, որոնք ավտոմատ շարժումով իջնում և բարձրանում էին, կցամաքեցնեին գետը:

XVIII. Չանազան պատահարներ

Հետագա ութ օրերում լաստը գետի հոսանքով շարունակում էր առաջանալ մեր նկարագրած պայմաններում: Ոչ մի ուշադրության արժանի դեպք չպատահեց: Բավական ընդարձակ տարածության վրա գետը հոսում էր հոյակապ անտառների կողքով: Այնուհետև երկիրը զրկվեց այդ գեղեցիկ ծառերից, և մինչև հեռու հորիզոնները տարածվեցին ջուկափները:

Եթե բնիկները չէին երևում այս շրջանում, որից Դիկ Սենդը դժգոհելու պատճառ չուներ, դրա փոխարեն կենդանիներն էին մեծ թիվ կազմում. գետի ափերին խաղում էին զեբրերը, քարայծի մի տեսակը՝ չափազանց գեղանի «կամաները», որոնք անհայտանում էին գիշերը, նրանց փոխարինում էին ընձառյուծները (հովազները), լսվում էր նրանց մռնչոցը, և նույնիսկ առյուծները, որոնք ցատկում էին բարձր խոտերի մեջ:

Մինչ այդ փախստականներին ոչ մի վնաս չէր հասել գիշատիչներից՝ ո՛չ անտառի գազաններից, ո՛չ էլ գետի կենդանիներից:

Սակայն ամեն օր, ընդհանրապես կեսօրից հետո, Դիկ Սենդը մոտենում էր մեկ կամ մյուս ափին, դուրս էր գալիս և հետախուզում գետափի մերձավոր վայրերը:

Այդ անում էր նա պարենի պաշարը նորոգելու համար: Որևէ մշակությունից զուրկ այս շրջանում չէր կարելի հույս դնել ո՛չ մանիոկի, ո՛չ սորգոյի, ո՛չ էլ եգիպտացորենի ու մրգեղենի վրա, որոնք բնիկ ցեղերի բուսական սնունդն են կազմում: Այդ բույսերը այդտեղ աճում էին վայրի վիճակում և ուտելու համար պիտանի չէին:

Այդպիսով Դիկ Սենդը ստիպված էր որսորդություն անել, թեև հրացանի ձայնը կարող էր վատ հետևանք ունենալ:

Կրակ ունենալու համար ուղևորները փայտե ձողը արագ շարժում էին վայրի թզենու ճիպոտի մեջ, ինչպես անում են բնիկները և կապիկները, որովհետև ասում են, թե որոշ գորիլաներ այդ ձևով կրակ են ձեռք բերում: Առաջացած կրակի վրա մի քանի օրվա համար պատրաստում էին եղջերուի կամ քարայծի միս: Հուլիսի 4-ի օրը Դիկ Սենդին հաջողվեց մի գնդակով սպանել մի «պոկու», որից բավականաչափ մսի պաշար ստացավ: Դա հինգ ոտնաչափ երկարությամբ, օղակավոր երկար եղջյուրով, մորթը՝ դեղնակարմիր, փայլուն բծերով, սպիտակ փորով մի կենդանի է, որի միսը հիանալի գտան:

Գրեթե ամենօրյա գետափ դուրս գալու և գիշերվա հանգստի ժամերի հետևանքով հուլիսի 8-ին լաստը հարյուր մղոնից ավելի չէր առաջացել: Զիչ տարածություն չէր այդ, և Դիկ Սենդը իրեն հարց էր տալիս, թե մինչև ուր կտաներ այդ անվերջանալի գետը, որը մինչև այդ միայն մի քանի փոքր վտակներ էր ընդունել իր մեջ և զգալի լայնացում չէր ունեցել: Ինչ վերաբերում է ընդհանուր ուղղությանը, երկար ժամանակ հյուսիսային լինելուց հետո այժմ թեքվում էր դեպի հյուսիս-արևմուտք:

Համենայն դեպս, գետն էլ ուտելիքի իր բաժինն էր տալիս: Փախստականները ջուրն էին գցում երկար պատատուկներ, որոնց ծայրին կարթի փոխարեն կապում էին փշեր և դուրս էին քաշում զանազան տեսակի համեղ ձկներ՝ «սանջիկներ», որոնք ապխտելուց հետո կարելի է երկար ժամանակ պահել և մի տեղից մյուսը փոխադրել, բավական հարգի սև «ուզականեր», լայն գլխանի «մոնդեներ», փոքր «դագալաներ», որոնք սիրում են հոսող ջրերը:

Հուլիսի 9-ի օրվա ընթացքում Դիկ Սենդը մեծ սառնասրտության ապացույց տվեց: Նա մենակ էր գետափին և նշան բռնելով մի կամայի, որի եղջյուրների ծայրերը երևում էին մացառների հետևից, կրակեց, երբ հանկարծ երեսուն քայլի վրա դուրս ցատկեց մի ահարկու որսորդ, որը անտարակույս գալիս էր իր որսը պահանջելու և հրաժարվելու երևույթ չուներ:

Մի խոշոր առյուծ էր այդ, մեկը նրանցից, որոնց բնիկները «կարամոս» են կոչում: Սրանք ոչ մի նմանություն չունեն «նխափի» առյուծներին, որոնք անբաշ են կոչվում: Առյուծի հասակը հինգ ոտնաչափ էր. մի վիթխարի կենդանի:

Մի ոստյունով առյուծը ընկել էր Դիկ Սենդի գնդակից գետին տապալված կամայի վրա, որը դեռևս ողջ էր և ճչալով թաքտում էր ահարկու գագանի թաթի տակ:

Դիկ Սենդի հրացանը դատարկվել էր, և ժամանակ չէր ունեցել նոր փամփուշտ դնել հրացանի մեջ:

Առաջին իսկ րոպեից առյուծը նրան նկատել էր, բայց սկզբում բավականացավ նայելով:

Դիկ Սենդը կարողացավ սառնասրտությունը չկորցնել և ոչ մի շարժում չարեց՝ հիշելով, որ այդպիսի դեպքերում անշարժությունը գուցե փրկություն կլինի: Չփորձեց հրացանը կրկին լցնել, չփորձեց նույնիսկ փախչել:

Առյուծը շարունակում էր նրան նայել կատվի կարմիր և փայլուն աչքերով: Գագանը չգիտեր որսերից ո՞րն ընտրել, այն, որը շարժվում էր, թե այն, որն անշարժ էր: Եթե կաման չթաքտար նրա ճիրանների տակ, Դիկ Սենդը կորած կլիներ:

Երկու թույլ անցավ այդպես: Առյուծը նայում էր Դիկ Սենդին, Դիկ Սենդը՝ առյուծին, առանց կոպերն իսկ թարթելու:

Վերջապես առյուծը, երախը լայն բաց անելով, վերցրեց դողդոջուն կամային և տարավ այնպես, ինչպես շունը կտաներ նապաստակին, և, իր ահագին պոչը մացառներին խփելով՝ անհետացավ թավուտի մեջ:

Դիկ Սենդը մի քանի թույլ ևս անշարժ մնաց, հետո վեր կացավ և, ընկերների մոտ հասնելով՝ ոչինչ չասաց նրանց վտանգի մասին, որից ազատվել էր շնորհիվ իր սառնարյունության: Եթե փախստականները ստիպված լինեին անցնել այդպիսի վայրի գազաններով հարուստ անտառներով ու հովիտներով, գուցե այդ ժամին «Պիլիգրիմի» աղետյալներից ոչ մեկը ողջ մնացած չլիներ:

Սակայն, եթե այդ միջոցին այդ շրջանը անբնակ էր, անցյալում միշտ այդպես չէր եղել: Հաճախ շրջանի տափաստաններում նկատվում էին նախկին բնակավայրերի հետքերը: Այդ շրջաններով անցնող փորձառու ուղևորը, ինչպիսին էր Դավիդ Լիվինգսթոնը, իսկույն կնկատեր այդ երևույթը: Տեսնելով կանթեղիտի բարձր ցանկապատերը, որոնք ծղոտի հյուղակներից ավելի են դիմանում, բակի մեջտեղ կանգնած սրբազան թզենին, կարելի էր առանց սխալվելու ասել, որ ժամանակին այդտեղ գյուղ էր եղել: Բայց ըստ բնիկների սովորության, ցեղապետի մահը բավական էր, որպեսզի բնակչությունը ստիպված լիներ հեռանալ իրենց բնակավայրից և վերաբնակվել մի ուրիշ վայրում:

Կարող էր պատահել նաև, որ այդ գետի անցած վայրերում տեղական ցեղերը ապրում էին ստորերկրյա հյուղակներում, ինչպես Աֆրիկայի այլ մասերում: Մարդկության ամենացած աստիճանի վրա գտնվող այդ վայրենիները իրենց բներից դուրս էին գալիս միայն գիշերները, ինչպես կենդանիները իրենց որջից. առաջիններին հանդիպելը նույնքան վտանգավոր կլիներ, ինչքան երկրորդներին:

Դիկ Սենդը չէր կարող կասկածել, որ այստեղ էր գտնվում մարդակերների շրջանը: Երեք կամ չորս անգամ, մի քանի բացատներում, հագիվ սառած մոխրի մեջ երևում էին կիսով չափ ածխացած մարդկային ոսկորներ՝ սոսկալի ճաշի մնացորդները: Վերին Կազոնդեի այդ մարդակերները պատահաբար կարող էին եկած լինել այս գետափը այն միջոցին, երբ Դիկ Սենդը ցամաք էր ոտք դնում: Ուստի պատանին կանգ չէր առնում առանց անհրաժեշտ կարիքի և Հերկուլեսից խոսք առավ, որ առաջին իսկ ահագնագին նա լաստը կհեռացներ ավից: Ազնիվ նեգրը թեև խոստացել էր այդպես անել, բայց երբ Դիկ Սենդը ցամաք էր դուրս գալիս, իր մտատանջությունը դժվարությամբ էր կարողանում թաքցնել տիկին Ուելդոնից:

Հուլիսի 10-ի երեկոյան հարկ եղավ կրկնապատկել աչալրջությունը: Գետի աջ ափին երևաց ջրի վրա կառուցված մի ավան: Գետի հունը լայնանալով՝ մի փոքր ծոց էր առաջացրել, որի վրա բարձրանում էին երեսունի չափ ցցերի վրա կառուցված հյուղակներ: Ջրի հոսանքը անցնում էր այդ հյուղակների տակով, և լաստն էլ պետք է նույնպես նրանց տակով անցներ, քանի որ ձախ կողմում ժայռերը անանցանելի էին դարձնում գետի այդ մասը:

Ավանը մարդաբնակ էր: Օջախներից ծուխ էր բարձրանում, և մռնչուն հիշեցնող ձայներ էին լսվում: Եթե, դժբախտաբար, ինչպես հաճախ էր պատահում, ձկնորսական ցանցեր դրված լինեին ցցերի արանքում, դրությունը վտանգավոր կլիներ այն միջոցին, երբ լաստը իր համար ճամփա բաց աներ ցանցերի միջով:

Դիկ Սենդը, լաստի առջևի մասում կանգնած, ցածր ձայնով ցուցումներ էր տալիս այդ ստորջրյա պատվարներից խուսափելու համար: Գիշերը լուսավոր լինելով՝ նա

պարզ տեսնում և կարողանում էր ուղղություն տալ լաստին, սակայն լաստը նույնպես պարզ տեսանելի էր:

Հասավ վտանգավոր թուպեն: Երկու բնիկներ բարձրաձայն խոսակցելով՝ կծկվել էին ջրի երեսին, ցցերի վրա, որոնց արանքով հոսանքը քշում էր լաստը, և որի ուղղությունը չէր կարելի փոխել այդ նեղ տեղում: Ի՞նչ կլիներ, եթե լաստը նկատվեր. երկու բնիկները կսկսեին գոռալ, և ամբողջ ավանը ոտքի կկանգներ:

Ընդամենը հարյուր ոտնաչափ տարածություն էր մնում անցնելու, երբ Դիկ Սենդը նկատեց, որ երկու բնիկների խոսակցությունը ավելի տաքացավ: Նրանցից մեկը մյուսին ցույց տվեց գետի վրա լողացող խոտի դեզը, որը սպառնում էր պատռել պատատուկի ցանցը, որը պարզելով էին զբաղված նրանք այդ միջոցին:

Ուստի, շտապով ցանցը վերցնելով՝ միասին օգնություն կանչեցին:

Հինգ կամ վեց ուրիշ նեզերի իսկույն ցած իջան ցցերի վրա և նստեցին ցցերը միմյանց կապող գերաններին՝ անասելի աղմուկ բարձրացնելով:

Լաստի վրա, ընդհակառակը, կատարյալ լռություն էր տիրում, բացի Դիկ Սենդի ցածրաձայն կարգադրություններից, ոչ մի շարժում, բացի Հերկուլեսի աջ թևի դեկի թիակը մանևրող շարժումներից, երբեմն լսվում էր Դինգոյի խուլ մռնչյունը, որի ձնոտները փակում էր Ջեկը իր փոքրիկ թաթիկներով, գետի վրա՝ ցցերին խփվող հոսանքի մրմունջը. իսկ ցցերի վրա՝ մարդակերների գազանային ճիչերը:

Սակայն բնիկները շտապ հավաքում էին ցանցերը: Եթե նրանց հաջողվեր ժամանակին ջրից դուրս բերել ցանցերը, լաստը կանցներ, հակառակ դեպքում, կփաթաթվեր նրանց, և վայր կգար նրա վրա եղողների գլխին: Դիկ Սենդը հնարավորություն չունեի ո՛չ փոխել, ո՛չ էլ դադարեցնել լաստի ընթացքը, մանավանդ որ գետի այդ նեղ մասում ջուրն ավելի արագ էր քշում լաստը:

Կես թուպեում լաստը մտավ ցցերի արանքը: Անսպասելի բախտով, բնիկները մի վերջին ճիգ անելով՝ հավաքել էին ցանցերը:

Բայց անցնելիս, ինչպես վախենում էր Դիկ Սենդը, լաստը ծածկող խոտի մի մասը քանդվեց:

Բնիկներից մեկը ճչաց: Տեսե՞լ էր արդյոք, թե ինչ էր ծածկված խոտի դեզի տակ և ճչացել էր ընկերներին ազդարարելու համար... Շատ հավանական է, որ այդպես էր:

Դիկ Սենդը և մյուսները վտանգից պրծել էին և մի քանի թուպեում, շատ արագ ընթացող հոսանքից քշվելով, ավանը կորցրին տեսողությունից:

– Դեպի ձախ ափը, – հրամայեց զգուշության համար:

Գետը նավարկելի էր դարձել:

– Դեպի ձախ ափը, – պատասխանեց Հերկուլեսը՝ ղեկին ուժեղ հարված տալով:

Դիկ Սենդը կանգնեց նրա կողքին և դիտում էր լուսնի վառ լույսով լուսավորված ջրի մակերեսը: Ոչ մի կասկածելի բան չէր երևում: Ոչ մի լաստ նրանց չէր հետապնդում: Գուցե այդ վայրենիները լաստ չունեին, և երբ լույսը բացվեց, ոչ մի բնիկ չէր երևում ո՛չ գետի վրա, ո՛չ ափերին: Այնուամենայնիվ, որպես զգուշություն, լաստը ձախ ափից չհեռացավ:

Հետագա չորս օրերում, հուլիսի 11-ից մինչև 14-ը, տիկին՝ Ուելդոնը և նրա ընկերները նկատեցին, որ տեղանքը զգալիորեն փոխվեց: Այլևս նախկին շրջանը չէր, ոչ միայն ամայի էր, այլ կատարյալ անապատ, որը կարելի էր նմանեցնել Լիվինգսթոնի հետազոտած Կալահարիի անապատին: Անբերրի հողը ամենևին նման չէր բարձր շրջանների արգավանդ հողերին:

Անվերջանալի էր թվում այդ գետակը, որը կարելի էր իսկական գետ անվանել, քանի որ թվում էր, թե գնում հասնում էր մինչև Ատլանտյան օվկիանոսը:

Ուտելիքի հարցը այս ամայի երկրում դժվարացավ. նախկին պաշարներից ոչինչ չէր մնացել: Ձկնորսությունից քիչ բան էր ստացվում, իսկ որսորդությունը ոչինչ չէր տալիս: Քարայծերն ու մյուս խոտակեր կենդանիները կեր չէին կարող ճարել այս անապատում, նրանց հետ միասին չքացել էին նաև գիշատիչները:

Այդպիսով՝ գիշերները այլևս չէին լսվում սովորական մռնչյունները: Գիշերվա լռությունը խանգարում էր միայն գորտերի համերգը, որ Քամերոնը համեմատում էր նավաշինարանի տարբեր աշխատանքների առաջացրած ժխորին:

Գետի երկու ափերին ձգված տափաստանը հարթ և ծառազուրկ էր ու տարածվում էր մինչև այն բլուրները, որոնք նրան սահմանափակում էին արևելքում և արևմուտքում: Միայն սինձն էր աճում այնտեղ առատորեն, բայց ոչ այն տեսակը, որից «կասավա» կոչվող այլուրն է ստացվում, այլ այն տեսակը, որից ձեթ է ստացվում:

Պետք էր, սակայն որևէ կերպ ուտելիք ճարել: Դիկ Սենդը չգիտեր, թե ինչ անել, երբ Հերկուլեսը շատ տեղին նրան հիշեցրեց, թե բնիկները հաճախ ուտում են պտերների մատղաշ ծիլերը և պապիրուսի ցողունի միջուկը: Հերկուլեսը հաճախ քաղցը այդ ձևով էր հազեցնում, երբ անտառի միջով հետևում էր Իբն Խամիսի քարավանին: Բարեբախտաբար, պտերներն ու պապիրուսները շատ առատ էին գետի ափերին, և նրա քաղցրահամ միջուկը բոլորին դուր եկավ, հատկապես փոքրիկ Ջեկին:

Սակայն քիչ սննդարար նյութ էր այդ, բայց հաջորդ օրը, շնորհիվ Բենեդիկտի, ուղևորները ավելի լավ սնվեցին:

«Hexapodes Benedictus»-ը գտնելուց հետո, մի միջատ, որը պիտի անմահացներ նրա անունը, կուզեն Բենեդիկտը ուրախ տրամադրության մեջ էր: Միջատը դնելով ապահով տեղ, այսինքն՝ գլխարկի աստառին կայցնելով, գիտնականը վերսկսեց դադարի թոպեներին հետախուզություն անել: Այդ օրը, բարձր խոտերը քրքրելիս, մի թռչուն փախցրեց, որի փետուրների գույնը նրա ուշադրությունը գրավեց:

Դիկ Սենդը պատրաստվում էր կրակել, երբ կուզեն Բենեդիկտը բացականչեց.

— Չկրակեք, Դիկ, չկրակեք, միևնույն է այդ մեկ հատիկ թռչունը չի բավարարի հինգ հոգուն:

— Բայց նա կբավարարի Ջեկին, — պատասխանեց Դիկ Սենդը, երկրորդ անգամ նշան բռնելով թռչունին, որը չէր շտապում թռչել:

— Ոչ, ոչ, — կրկնեց կուզեն Բենեդիկտը, — չկրակե՛ք, — դա նշանատու թռչուն է, և նրա միջոցով մենք առատ մեղր ձեռք կբերենք:

Դիկ Սենդը իջեցրեց հրացանը՝ մտածելով, որ իսկապես որոշ քանակությամբ մեղրը մի թռչունից ավելի արժեք է, և իսկույն կուզեն Բենեդիկտի հետ հետևեց նշանատուին, որը մեկ թռչելով, մեկ թռչելով, կարծես հրավիրում էր հետևել իրեն: Կարիք չեղավ շատ հեռու գնալ, մի քանի րոպե հետո սինձերի մեջ ծածկված ծառի հնացած բեկորներ երևացին մեղուների ուժեղ բզզոցի մեջ:

Կուզեն Բենեդիկտը գուցե չէր ցանկանա այդ թաղանթաթևավորներին զրկել «իրենց աշխատանքի պտղից», ինչպես նա ասում էր: Սակայն Դիկ Սենդը համակարծիք չլինելով նրան, չորացած խոտ վառելով ծխով շրջապատեց մեղուներին և բավական մեծ քանակությամբ մեղր հավաքեց: Այնուհետև մի կտոր մեղրահաց նշանատուին որպես վարձ թողնելով, կուզեն Բենեդիկտի հետ լաստ վերադարձավ:

Մեղրը մեծ ընդունելություն գտավ, սակայն այնքան էլ շատ չէր, և բոլորն էլ քաղցից սաստիկ կենդվեին, եթե ամսի 12-ի ցերեկը լաստը կանգ չառներ մի փոքրիկ ծոցի մոտ, որտեղ մեծ քանակությամբ մորեխներ երկու թե երեք շարքով ծածկում էին գետինը և ծառի ճյուղերը: Եվ որովհետև, կուզեն Բենեդիկտի ասելով, բնիկները հաճախ սնվում էին այդ ուղղաթևերով, ինչ որ միանգամայն ճիշտ էր, հարձակվեցին այդ մանանայի վրա, որն այնքան շատ էր, որ տասը այդպիսի լաստ կարող էր բեռնավորել: Մարմանդ կրակի վրա նրա խորովածը շատ համեղ կարող էր թվալ նույնիսկ ավելի քիչ քաղցած մարդկանց: Կուզեն Բենեդիկտը իր հերթին մեծ քանակությամբ կերավ, իհարկե հառաչելով, այնուամենայնիվ կերավ:

Բայց և այնպես ժամանակն էր, որ բարոյական և ֆիզիկական այդ փորձությունների շարքը վերջ գտներ: Այդ արագընթաց գետակով կատարված ուղևորությունը թեև այնքան հոգևեցուցիչ չէր, ինչպես եղել էր ծովափի մերձավոր անտառում, այնուամենայնիվ, ցերեկվա ծայրահեղ շոգը, գիշերվա խոնավ գոլորշիները, մոծակների անվերջ հարձակումները՝ այդ բոլորը տանջալի էին դարձնում ուղևորությունը: Տեղ հասնելու ժամանակն էր, մինչդեռ Դիկ Սենդը դեռևս չէր կարողանում ուղևորության վախճանը որոշել: Ինչքան կտևեր՝ ութ օր, մեկ ամիս, ոչինչ հայտնի չէր: Եթե գետը ուղիղ դեպի արևմուտք հոսեր, արդեն հասած կլինեին Անգոլայի հյուսիսային ափին, սակայն, ընդհանրապես ուղղությունն ավելի շուտ հյուսիսային էր եղել և այդպես դեռևս երկար կգնային ծովափ հասնելուց առաջ:

Այդպիսով՝ Դիկ Սենդը խիստ անհանգիստ էր զգում իրեն, երբ գետի ուղղության մեջ հանկարծ փոփոխություն առաջացավ հուլիսի 14-ի առավոտյան:

Փոքրիկ Ձեկը կանգնած էր լաստի քթին և շրջակայքն էր դիտում, երբ հորիզոնում ջրի մեծ տարածություն երևաց:

— Ծո՛վը,— բացականչեց երեխան:

Լսելով այդ բառը՝ Դիկ Սենդը ցնցվեց և մոտեցավ փոքրիկ Ձեկին:

— Ո՛չ, ծովը չէ դեռևս,— պատասխանեց պատանին,— սակայն լայն գետ է, որը դեպի արևմուտք է հոսում, և մեր գետակը նրա վտակն է կազմում: Գուցե և Կոնգո գետն է:

— Երանի այդպես լինի,— պատասխանեց տիկին Ուելդոնը:

Այո, երանի այդպես լինեք, քանի որ եթե այդ գետը Չաիրը կամ Կոնգոն էր, որն Սթենլին հայտնաբերեց մի քանի տարի հետո, մնում էր նրա ընթացքով ցած իջնել

և հասնել գետաբերանի պորտուգալական ավաններին: Դիկ Սենդը հույս ուներ, որ այդպես կլիներ, և հիմք ուներ այդպես դատելու:

Հուլիսի 15-ին, 16-ին, 17-ին, և 18-ին մի քիչ ավելի արգավանդ գետափով լաստը սկսեց առաջ գնալ մեծ գետի արծաթափայլ ջրերի վրայով: Համենայն դեպս, շարունակեցին ձեռք առնել միևնույն միջոցները, և լաստը խոտի մի դեզի նման շարունակում էր ջրի հոսանքով դեպի ցած լողալ:

Մի քանի օր ևս և, անտարակույս, «Պիլիգրիմի» աղետյալների տանջանքները կգտնեին իրենց վախճանը: Եվ այն ժամանակ յուրաքանչյուրի անձնվիրության բաժինը կարելի կլիներ պարզել, ու եթե պատանին ամենամեծ բաժինն իրեն վերագրել չցանկար, ապա տիկին Ուելդոնը կկարողանար այդ բաժինը նրան վերապահել:

Բայց հուլիսի 18-ի գիշերը մի դեպք պատահեց, որը քիչ էր մնացել բոլորի կյանքը արժենար:

Ցերեկվա ժամը երեքի մոտ մի հեռավոր և դեռևս խուլ աղմուկ լսվեց արևմուտքից: Դիկ Սենդը, չափազանց անհանգստացած, ուզեց իմանալ աղմուկի պատճառը: Այն միջոցին, երբ տիկին Ուելդոնը, Ջեկը ու կուզեն Բենեդիկտը քնել էին լաստի խորքում, պատանին Հերկուլեսին կանչեց առաջամասը և պատվիրեց մեծ ուշադրությամբ ականջ դնել:

Գիշերը խաղաղ էր, ոչ մի շունչ չէր շարժում մթնոլորտի շերտերը:

– Ծովի ձայնն է, – ասաց Հերկուլեսը՝ աչքերը ուրախությունից փայլատակելով:

– Ոչ, ծովի ձայնը չէ, – ասաց Դիկ Սենդը, գլուխը շարժելով:

– Հապա ի՞նչ է ուրեմն, – հարցրեց Հերկուլեսը:

– Սպասենք լույսը բացվելուն, բայց մեծ ուշադրությամբ հսկողությունը շարունակենք:

Հերկուլեսը վերադարձավ լաստի հետնամասը:

Դիկ Սենդը մնաց առաջամասի իր պոստում և շարունակում էր ականջ դնել: Աղմուկն ավելանում էր: Քիչ հետո հեռավոր մոնջյունի էր նմանվում:

Լույսը բացվեց գրեթե առանց արշալույսի: Ներքևում, գետի մակերեսի վրա, մոտավորապես կես մղոն հեռու, ինչ-որ մշուշ էր տատանվում օդում: Սակայն Գոլորշի չէր երևացողը, և դա պարզվեց, երբ բեկբեկվող արևի առաջին ճառագայթների տակ մի հիանալի ծիածան առաջացավ գետի մի ափից մյուսը:

– Դեպի ափը, – գոռաց Դիկ Սենդը, որի ձայնը արթնացրեց տիկին Ուելդոնին: – Ջրվեժ կա այնտեղ: Երևացող մշուշը ջրի մանր կաթիլներից է կազմված: Դեպի ափ շո՛ւռ տուր, Հերկուլես:

Դիկ Սենդը չէր սխալվում: Գետի ստորին մասում մի վիհ էր բացվում՝ հարյուր ոտնաչափ խորությամբ, ուր գետի ջուրը թափվում էր անդիմադրելի թափով: Կես մղոն ևս, ու լաստը կընկներ խորխորատի մեջ:

XIX. «Ս. Վ.»

Հերկուլեսը թիակի մի ուժեղ հարվածով լաստը դեպի ձախ ասիլը թեքեց: Բարեբախտաբար, այդտեղ հոսանքն այնքան ուժեղ չէր, և գետի հունը մինչև ջրվեժին հասնելը մնում էր իր նորմալ թեքությամբ: Միայն երեք կամ չորս հարյուր ոտնաչափ ջրվեժից վեր գետի հունը միանգամից ցած էր իջնում և իր հետ տանում ջրերը:

Գետի ձախ ասիլն բարձրանում էին ընդարձակ և խիտ անտառներ: Ոչ մի լույս չէր թափանցում այդ անանցանելի վարագույրներից: Դիկ Սենդը սարսափով էր նայում այդ տարածությանը, որտեղ ապրում էին ստորին Կոնգոյի մարդակերները: Այժմ ուղևորները ստիպված կլինեին այդ շրջանով անցնել, քանի որ լաստը այլևս չէր կարող գետի հոսանքով ցած իջնել, իսկ ջրվեժի վրայով փոխադրելու մասին մտածել իսկ չէր կարելի: Այդպիսով՝ մի սուկալի հարված էին ընդունում այդ խեղճերը գուցե այն րոպեին, երբ գետաբերանի պորտուգալական բնակավայրերին հասնելու նախօրյակին էին գտնվում: Նրանք, սակայն անձնվիրաբար օգնել էին իրար: Մի՞թե այժմ երկինքը օգնության չէր հասնելու:

Լաստը շուտով գետի ձախ ասիլն կմոտենար: Ինչքան նավը մոտենում էր ցամաքին, Դինգոն այնքան ավելի անհամբերության և վշտի նշաններ էր ցույց տալիս:

Դիկ Սենդը, որ ուշադրությամբ դիտում էր շանը, քանի որ սա նախագգում էր ամեն մի վտանգ, մտածեց, թե գուցե որևէ վայրի գազան կամ բնիկ է թաքնված ծովափի բարձր պապիրուսների մեջ: Սակայն շուտով հասկացավ, որ շան անհանգստության պատճառը գայրույթը չէր:

— Կարծես լաց է լինում, — բացականչեց փոքրիկ Ջեկը՝ թևերը փաթաթելով Դինգոյի վզին: Դինգոն դուրս պրծավ և ջուրը ցատկելով, երբ լաստը գետափից ընդամենը քսան ոտնաչափ էր հեռու, ցամաք դուրս եկավ ու անհետացավ խոտերի մեջ:

Ո՛չ տիկին Ուելդոնը, ո՛չ Դիկ Սենդը, ո՛չ Հերկուլեսը չգիտեին ինչպես բացատրեն շան այդ վարմունքը:

Լաստը մի քանի րոպե հետո ցամաքին կապավ ծովային խոտերի կանաչ փրփուրների մեջ: Մի քանի ակիոններ և ձյան նման սպիտակ ձկնկուլներ սուր սուլոց արձակելով՝ իսկույն օդ թռան: Հերկուլեսը լաստը պինդ կապեց մանգենու բնին, և բոլորը միասին դուրս եկան գետափ, որի վրա թեքվել էին բարձր ծառերը:

Ոչ մի արահետ չէր երևում անտառում, սակայն գետի տրորված մամուռներից երևում էր, որ մոտիկ անցյալում այդտեղով բնիկներ կամ գազաններ էին անցել:

Դիկ Սենդը հրացանը լցրած, Հերկուլեսը կացինը ձեռքին՝ հագիվ տասը քայլ էին արել, երբ տեսան Դինգոյին: Շունը քիթը կախ արած՝ ինչ-որ հետքի էր հետևում, անընդհատ հաչելով: Առաջին նախագգացումը նրան քաշել էր գետափի այս մասը, իսկ երկրորդ նախագգացումը նրան տանում էր անտառի խորքը: Բոլորի համար շատ պարզ էր այդ:

— Ուշադրություն, — ասաց Դիկը: — Տիկին Ուելդոն, պարոն Բենեդիկտ, Ջեկ, չհեռանաք մեզանից: Ուշադրություն, Հերկուլես:

Այդ միջոցին Դինգոն բարձրացրել էր գլուխը և փոքր ցատկերով հրավիրում էր հետևել իրեն:

Մի րոպե հետո տիկին Ուելդոնը և նրա ուղեկիցները հասան նրան՝ անտառի խորքում կորած հինավուրց թզենու մոտ:

Այնտեղ կանգնել էր միմյանցից անջատված տախտակներով խարխուլ մի հյուղակ, որի առաջ կանգնած՝ ողբագին հաչում էր Դինգոն:

— Ո՞վ կա այդտեղ,— բացականչեց Դիկ Սենդը և իսկույն մտավ հյուղակ:

Տիկին Ուելդոնը և մյուսները հետևեցին նրան:

Գետինը ծածկված էր օդի ազդեցությամբ արդեն սպիտակած ոսկորներով:

— Ինչ-որ մարդ է մեռել այս հյուղակում,— ասաց տիկին Ուելդոնը:

— Եվ Դինգոն ճանաչում էր այդ մարդուն,— ավելացրեց Դիկ Սենդը:— Գուցե Դինգոյի տերն է եղել մեռնողը. տեսե՛ք, տեսե՛ք:

Դիկ Սենդը ցույց տվեց հյուղակի խորքում կեղևահան արված թզենու բունը, որի վրա երևում էին երկու կարմիր մեծ տառեր՝ համարյա ջնջված, բայց դեռևս ընթերնելի:

Դինգոն աջ թաթը դրել էր ծառի վրա և կարծես տառերն էր ցույց տալիս...

— Ս. Վ.— բացականչեց Դիկ Սենդը,— այն երկու տառերը, որ ճանաչում էր Դինգոն: Այն երկու սկզբնատառերը, որ կրում է վզակապի վրա...

Խոսքը չվերջացրած՝ հյուղակի մի անկյունից ժանգոտած մի պղնձե տուփ վերցրեց և բաց անելով թղթի մի կտոր դուրս բերեց, որտեղ հետևյալ բառերն էին գրված.

«Ինձ սպանեց... կողոպտեց իմ ուղեցույցը՝ Նեգորոն... 1871 թ. դեկտեմբերի 3-ին... այստեղ... ծովափից 120 մղոն հեռավորության վրա... Դինգո... հասիր: Ս. Վեռնոն»:

Գրությունը ամեն ինչ բացատրում էր: Սամուել Վեռնոնը իր շան՝ Դինգոյի հետ մեկնել էր հետազոտելու Աֆրիկայի կենտրոնը, ուղեցույց ունենալով Նեգորոյին: Նրա մոտ գտնվող դրամը գրգռել էր չարագործի տենչանքը, և Նեգորոն որոշել էր տեր դառնալ դրամին: Ֆրանսիացի ճանապարհորդը, հասնելով Կոնգոյի ափի այդ կետին՝ հաստատվել էր այդ հյուղակում: Այնտեղ Նեգորոն նրան մահացու կերպով վիրավորել էր, կողոպտել և լքել... Սպանությունը կատարելուց հետո Նեգորոն անտարակույս փախուստ էր տվել և այդ միջոցին էր, որ ընկել էր պորտուգալական իշխանությունների ձեռքը: Ճանաչվելով որպես գերեվաճառ Ալվեցի գործակալը՝ նա տարվել էր Սան-Պաուլո դե Լոանդա և դատապարտվել ցմահ բանտարկության գաղութներից մեկում: Հայտնի է, որ նրան հաջողվել էր փախչել, գնալ Նոր Չելանդիա և անցնել «Պիլիգրիմի» վրա, ի դժբախտություն նրա ուղևորների: Թե ի՞նչ էր պատահել ոճիրից հետո, դժվար էր կռահել: Դժբախտ Վեռնոնը մահվանից առաջ անշուշտ ժամանակ էր ունեցել գրել այդ թուղթը, որը սպանության թվականի և շարժառիթի հետ՝ տալիս էր մարդասպանի անունը: Գրությունը դրել էր այդ տուփի մեջ, որտեղ անկասկած գտնվում էր գողացված դրամը և վերջին ճիգով, արևոտած մատով կարողացել էր, որպես տապանագիր, գրել իր անվան սկզբնատառերը... Այդ երկու կարմիր տառերի առաջ Դինգոն երկար օրեր մնացած կլիներ և ի վերջո ճանաչել էր դրանք՝ երբեք չմոռանալու համար: Այնուհետ և ծովափին Դինգոյին վերցրել էր «Վալդեկի» նավապետը, և,

վերջապես, նա անցել էր «Պիլիգրիմի» վրա, որտեղ կրկին պատահեց Նեգորոյին: Այդ միջոցին Վեռնոնի ոսկորները փտում էին Կենտրոնական Աֆրիկայի այս հեռավոր անտառում և միայն իր շան հիշողության մեջ էր նա վառ մնացել:

Այո, դեպքերը այդպես պետք է տեղի ունեցած լինեին: Դիկ Սենդը ու Հերկուլեսը պատրաստվում էին քրիստոնյային վայել թաղել Սամուել Վեռնոնի աճյունը, երբ Դինգոն այս անգամ կատաղի հաչոց բարձրացնելով հյուղակից դուրս նետվեց:

Գրեթե անմիջապես հետո ահռելի ճիչեր լսվեցին շատ մոտիկից: Պարզ էր, որ մեկը կռվի էր բռնվել հուժկու կենդանու հետ:

Հերկուլեսը, Դինգոյի նման, խրճիթից դուրս ցատկեց, իսկ Դիկ Սենդը, տիկին Ուելդոնը, Ջեկը, Բենեդիկտը նրան հետևելով՝ տեսան, որ հարձակվեց մի մարդու վրա, որը գետին տապալվեց՝ շան ահավոր ժանիքներով կոկորդից բռնված:

Նեգորոն էր այդ մարդը:

Ամերիկա մեկնելու համար Կոնգոյի գետաբերանը հասնելով այդ սրիկան իր հետևողներին թողնելով, եկել էր այնտեղ, որտեղ սպանել էր իրեն վստահած ճանապարհորդին:

Առանց պատճառի չէր, որ եկել էր այդտեղ. բոլորին հայտնի եղավ այդ, երբ նրանք տեսան մի քանի բուռ ֆրանսիական ոսկեդրամ, որը փայլում էր ծառի արմատի մոտ նոր բացված խոռոչի մեջ: Պարզ էր, որ մարդասպանությունից հետո և պորտուգալացիների ձեռքն անցնելուց առաջ Նեգորոն գողացած դրամը պահել էր՝ մի օր վերադառնալու և վերցնելու նպատակով և այդ օրը կտաներ ամբողջ ոսկեդրամը, եթե Դինգոն հետևելով հետքին՝ չբռներ նրա կոկորդից: Չարագործը անակնկալի գալով՝ դանակը քաշել և խփել էր շանը այն բռնակով, երբ Հերկուլեսը նրա վրա հարձակվեց՝ գոռալով.

— Ա՛խ, սրիկա՛, վերջապես կխեղդեմ քեզ:

Բայց այլևս կարիք չկար: Պորտուգալացին անկենդան ընկել էր հենց այնտեղ, որտեղ ոճիր էր գործել: Իսկ հավատարիմ շունը մահացու հարված ստանալով և քարշ գալով մինչև խրճիթ՝ վախճանվեց այնտեղ, որտեղ մեռել էր Սամուել Վեռնոնը:

Հերկուլեսը խոր թաղեց ճանապարհորդի ոսկորները, իսկ բոլորի կողմից այնքան սիրված Դինգոյին դրեցին իր տիրոջ կողքին:

Նեգորոն այլևս չկար, սակայն Կագոնդեից նրան ընկերակցող բնիկները հեռու չպետք է լինեին: Այլևս նրան չտեսնելով, անշուշտ կփնտրեին գետափի մոտ: Ուղևորների համար լուրջ վտանգ էր այդ:

Դիկ Սենդը և տիկին Ուելդոնը խորհրդակցեցին, թե ինչ պետք է անել և այն էլ առանց մի բռնակ կորցնելու:

Մի բան պարզ էր, որ այդ գետը Կոնգոն էր, որը բնիկները կոչում էին Կվանգո կամ Իկուտուլյա Կոնգո, որը որոշ տարածության վրա կոչվում է Չաիր, իսկ ուրիշ տարածության վրա՝ Լուալաբա:

Բայց եթե այլևս չէր կարելի կասկածել, որ դա Կոնգոն է, ֆրանսիացի ճանապարհորդի գրությունից իմացվում էր, որ գետաբերանը դեռևս հարյուր քսան մղոն հեռու էր այդտեղից և, դժբախտաբար, այդ կետում նավարկելի չէր: Մի

մեծ ջրվեժ, հավանաբար Նտամո ջրվեժը, արգելք էր լինում նավարկության: Անհրաժեշտ էր ոտքով հետևել մեկ կամ մյուս գետափին, գոնե մինչև ջրվեժ անցնելը, այսինքն՝ մեկ կամ երկու մղոն տեղ, որից հետո մի նոր լաստ կառուցել և կրկին գետով առաջ գնալ:

— Այժմ, — ասաց Դիկ Սենդը ամփոփելով, — մնում է որոշել, թե պետք է գնալ ծափափ ափով, որտեղ գտնվում ենք այժմ, թե անցնել աջ ափը: Երկու ափերն էլ, տիկին Ուելդոն, ինձ վտանգավոր են երևում, քանի որ բնիկները ահավոր են: Սակայն այս ափին, ինձ թվում է, թե ավելի ենթակա ենք վտանգի, քանի որ կարող ենք հանդիպել Նեգորոյի հետևորդներին:

— Անցնենք մյուս ափը, — պատասխանեց տիկին Ուելդոնը:

— Բայց արդյոք անցանելի՞ է այդ ափը, — նկատեց Դիկ Սենդը: — Կոնգոյի գետաբերանի ճանապարհը ավելի շուտ ծախափն է, քանի որ Նեգորոն նրան էր հետևել: Ինչ արած, չի կարելի վարանել: Սակայն ձեզ հետ միասին գետի մյուս կողմն անցնելուց առաջ, տիկին Ուելդոն, անհրաժեշտ է, որ ես ստուգեմ, թե կարո՞ղ ենք ցամաքով ցած իջնել մինչև ջրվեժի ստորոտը:

Այդ առաջարկը խոհեմ էր, և Դիկ Սենդը ցանկացավ իսկույն գործադրել իր մտադրությունը:

Այդտեղ գետի լայնությունը երեք-չորս հարյուր ոտնաչափից ավելի չէր լինի, և մի ափից մյուսն անցնելը դժվար չէր պատանու համար, որը սովոր էր թիավարել: Տիկին Ուելդոնը, Ջեկը և կուզեն Բենեդիկտը պետք է մնային չերկուլեսի պաշտպանության տակ, մինչև նրա վերադարձը:

Այդ կարգադրություններն անելուց հետո Դիկ Սենդը պատրաստվում էր մյուս ափն անցնել, երբ տիկին Ուելդոնը ասաց նրան.

— Չե՞ս վախենում, որ հոսանքը քեզ դեպի ջրվեժը քշի:

— Ոչ, տիկին Ուելդոն, ջրվեժից չորս հարյուր ոտնաչափ բարձրից կանցնեմ:

— Իսկ մյուս ափին մի՞թե վտանգ չի սպառնում քեզ...

— Ափ դուրս չեմ գա, եթե նվազագույն վտանգ տեսնեմ:

— Վերցրու հրացանը:

— Լավ, բայց իմ մասին անհանգիստ չլինեք:

— Գուցե ավելի լավ կլիներ միմյանցից չբաժանվել, Դիկ, — ավելացրեց տիկին Ուելդոնը՝ կարծես ինչ-որ նախազգացումից դրդված:

— Ոչ... թողեք ես մենակ գնամ... — պատասխանեց Դիկ Սենդը: — Այդպես է անհրաժեշտ մեր բոլորիս անվտանգության համար: Մի ժամ չանցած կվերադառնամ: Լավ հսկեցեք, չերկուլես:

Այդ խոսքերից հետո, լաստի կապերը քանդելով, Դիկ Սենդը գետի մյուս ափն ուղղվեց:

Տիկին Ուելդոնը և չերկուլեսը, կուչ գալով պապիրոսների թփի մեջ, նայում էին լաստին:

Դիկ Սենդը քիչ հետո գետի մեջտեղը հասավ: Հոսանքն այս կետում թեև շատ արագահոս չէր, բայց մի քիչ ուժեղացել էր ջրվեժի ձգելու հետևանքով: Չորս հարյուր ոտնաչափ դեպի գետաբերանը ջրվեժի բարձր աղմուկն էր լսվում, և ջրի պղպջակները արևմտյան քամուց տարվելով՝ պատանուն էին հասնում: Նա սոսկում էր, երբ մտածում էր, թե նախորդ գիշերը, եթե լավ հսկած չլիներին, լաստը կորած կլիներ՝ ընկնելով ջրվեժի մեջ, որտեղից իրենց դիակները միայն դուրս կգային: Բայց վտանգն արդեն անցել էր, Դիկ Սենդը հմտորեն շարժում էր դեկի թիակը և լաստը լավ ուղղության մեջ էր պահում:

Քառորդ ժամ հետո պատանին հասել էր դիմացի ափը և պատրաստվում էր դուրս գալու...

Այդ միջոցին գոռգոռոց լսվեց, և տասի չափ բնիկներ հարձակվեցին խոտերի մեջ ծածկված լաստի վրա:

Գետի վրա կառուցված ավանի մարդակերներն էին դրանք: Ութ օր շարունակ նրանք հետևել էին գետի աջ ափին: Իրենց բնակավայրի ցցերին խփվելու հետևանքով լաստի պատռված խոտի ծածկոցի տակ նրանք տեսել էին փախստականներին և հասկացել, որ նրանք իրենց համար ապահով որս կլինեին, քանի որ ջրվեժի պատճառով, շուտ կամ ուշ, այդ դժբախտները ստիպված կլինեին գետի մեկ կամ մյուս ափն իջնել:

Դիկ Սենդը հասկացավ, որ կորած էր, բայց մտածեց, թե արդյոք չէ՞ր կարող իր կյանքը գոհելով, փրկել իր ընկերներին: Իրեն չկորցնելով, կանգնած նավի առջևի մասում, հրացանը ուսին՝ մարդակերներին չէր թողնում մոտենան իրեն:

Այդ միջոցին վայրենիներին հաջողվեց լաստից պոկել ամբողջ խոտի դեզը, որի տակ կարծում էին, թե ուրիշ գոհեր կգտնեին: Երբ տեսան, թե միայն պատանին էր ընկել իրենց ձեռքը, հուսախաբության մատնվեցին և ահռելի աղմուկ բարձրացրին: Տասը հոգուց ո՞ր մեկին պիտի բավարարեր տասնհինգամյա պատանին: Բայց այդ միջոցին բնիկներից մեկը գլխի ընկավ և, ձեռքը պարզելով դեպի ձախ ափը, ցույց տվեց տիկին Ուելդոնին և նրա ուղեկիցներին, որոնք, ամեն ինչ տեսնելով և ինչ անելիքը չգիտեսալով, գետափ էին դուրս եկել թաքստոցից: Դիկ Սենդն այլևս չէր մտածում իր մասին և երկնքից ներշնչում էր սպասում նրանց փրկելու համար:

Մարդակերները, լաստը քշելով գետի մեջտեղը, պատրաստվում էին անցնել մյուս ափը: Իրենց վրա ուղղված հրացանի փողի առաջ նրանք ոչ մի շարժում չէին անում, ծանոթ լինելով այդ զենքի հետևանքին: Բայց նրանցից մեկը, որ բռնել էր դեկի թիակը և մանևրում էր փորձված մարդու նման, լաստը ուղղեց դեպի մյուս ափը:

— Փախե՛ք,— բացականչեց Դիկ Սենդը տիկին Ուելդոնին,— փախե՛ք:

Ո՛չ տիկին Ուելդոնը, ո՛չ Հերկուլեսը տեղից չշարժվեցին: Կարծես նրանց ոտքերը գետնին գամված լինեին:

Փախչե՛լ. ի՞նչ օգուտ: Մի ժամ չանցած կընկնեին մարդակերների ձեռքը:

Դիկ Սենդը հասկացավ այդ: Երկնային ներշնչումը հասավ: Նա հնարավոր գտավ բոլորի փրկության համար գոհել իր սեփական կյանքը... Ոչ մի բան չտատանվեց:

— Աստված ինձ օգնական,— մրմնջաց նա:

Նույն բույսերին իսկ Դիկ Սենդը հրացանն ուղղեց դեպի լաստը դեկավարող բնիկը, և թիակը, գնդակից ջարդվելով, կտոր-կտոր եղավ:

Մարդակերները սոսկումի ճիչ բարձրացրին:

Հասկանալի էր մարդակերների այդ սոսկումը, քանի որ լաստը այլևս չդեկավարվելով՝ քշվեց ջրի հոսանքով, որը նրան տարավ հետզհետե աճող արագությամբ և մի քանի բույսերում հարյուր ոտնաչափ էր միայն ջրվեժից հեռու:

Տիկին Ուելդոնն ու Հերկուլեսը ամեն ինչ հասկացան: Դիկ Սենդը ուզում էր նրանց ազատել, մարդակերներին իր հետ անդունդը գլորելով: Փոքրիկ Ջեկն ու նրա մայրը, գետափին ծունկի եկած, վերջին հրաժեշտն ուղարկեցին նրան: Հերկուլեսն իր անզոր բազուկը նրան պարզեց...

Այդ միջոցին բնիկները փորձեցին լող տալով ձախ ափն անցնել, լաստից դուրս նետվեցին՝ շուռ տալով այն:

Դիկ Սենդը չկորցրեց սառնասրտությունը իրեն սպառնացող մահվան սպառնալիքի առաջ: Հանկարծ նրա գլխում ծագեց այն միտքը, թե նրանով իսկ, որ լաստի հատակը վերև էր բարձրացել, կարող էր իր փրկության միջոցը դառնալ:

Իսկապես երկու վտանգ էր նախատեսվում, եթե Դիկ Սենդը ջրվեժի շրջապատույթի մեջ ընկներ՝ ջրում խեղդվելու և օդում շնչահեղձ լինելու վտանգը: Իսկ շուռ եկած լաստը մի տեսակ արկղ էր, որի տակ մնալով՝ գուցե կարող լիներ գլուխը ջրից դուրս պահել և այդպիսով պաշտպանված լիներ դրսի օդից, որը նրան անշուշտ կխեղդեր իր անկման արագության ընթացքում: Այդ պայմաններում թվում էր, թե կարելի կլիներ խուսափել կրկնակի շնչահեղձությունից:

Դիկ Սենդի գլխում կայծակի արագությամբ անցան բոլոր այդ մտքերը: Մի վերջին բնագրով պատանին կառչեց լաստի երկու եզրերը միացնող ստաբանին և գլուխը շուռ եկած նավակի տակ, բայց ջրից դուրս պահած՝ զգաց որ անդիմադրելի հոսանքը նրան տարավ և գցեց գրեթե ուղղահայաց ջրվեժի մեջ...

Լաստը մտավ ջրվեժի հիմքում առաջացած անդունդը և նրա մեջ խորանալուց հետո կրկին ջրի երեսը բարձրացավ: Դիկ Սենդը լավ լողորդ լինելով՝ հասկացավ, թե այժմ փրկությունը իր թևերի ուժի մեջ էր...

Քառորդ ժամ հետո նա հասավ գետի ձախ ափը, որտեղ գտավ տիկին Ուելդոնին, փոքրիկ Ջեկին և կուզեն Բենեդիկտին, ուր շտապ բերել էր նրանց Հերկուլեսը:

Իսկ մարդակերները անհետ կորել էին ջրապտույթի մեջ: Նրանք, պաշտպանված չլինելով շուռ եկած լաստով, անշնչացել էին խորխորատի խորքը հասնելուց առաջ, իսկ նրանց մարմինը շուտով ջարդուփշուր կլիներ՝ խփվելով ջրվեժի ստորոտին գտնվող ժայռերին:

XX. Վերջաբան

Երկու օր հետո, հուլիսի 20-ին, տիկին Ուելդոնը և նրա ուղեկիցները պատահեցին դեպի Կոնգոյի գետաբերանի Էմբոբա նավահանգիստը գնացող մի քարավանի, որը կազմված էր ոչ թե գերեվաճառներից, այլ պորտուգալացի

վաճառականներից, որոնք փղոսկրի առևտրով էին զբաղվում: Այդ մարդիկ հիանալի ընդունելություն ցույց տվին փախստականներին, և ուղևորության վերջին մասը կատարվեց տանելի պայմաններում:

Այդ քարավանի հանդիպումը իսկական բախտավորություն եղավ ուղևորների համար: Դիկ Սենդը չէր կարող լաստով շարունակել ճանապարհը, քանի որ Նտամոյից մինչև Ելլալա մի շարք ջրվեժներ կային: Սթենլին հաշվել էր վաթսուներկու ջրվեժ, և ոչ մի լաստ չէր կարող նրանց վրայով անցնել: Կոնգոյի գետաբերանում խիզախ ուղևորը, չորս տարի հետո, բնիկների դեմ մղած երեսուներկու մարտերից վերջինը մղեց: Գետի ավելի ստորին հոսանքում, Մբելոյի ջրվեժներում է, որ նա կարողացավ հրաշքով ազատվել մահից:

Օգոստոսի 11-ին տիկին Ուելդոնը, Դիկ Սենդը, Ջեյնը, Հերկուլեսը և կուզեն Բենեդիկտը հասան Էմբոմա, որտեղ պարոններ Մոթթա Վիեգոն և Հարրիսոնը նրանց ընդունեցին մեծ հյուրընկալությամբ: Մի շոգենավ այդ միջոցին մեկնում էր Պանամայի պարանոցը: Տիկին Ուելդոնը և նրա ուղեկիցները այդ շոգենավով մեկնեցին և բարեհաջող հասան ամերիկյան մայրցամաքը:

Սան Ֆրանցիսկո ուղարկված հեռագիրը Ջեյմս Ուելդոնին հայտնեց իր կնոջ և երեխայի անսպասելի վերադարձը, որոնց նա գուր փնտրել էր օվկիանոսի այն բոլոր կետերում, որտեղ կարող էր խորտակված լինել «Պիլիգրիմը»:

Հուլիսի 25-ին, վերջապես, շոգենավը աղետյալներին հասցրեց Կալիֆոռնիայի մայրաքաղաքը: Ինչքա՛ն լավ կլինեք, եթե ծերունի Թոմը և նրա ընկերները նրանց հետ լինեին...

Ի՞նչ ասել այժմ Դիկ Սենդի և Հերկուլեսի մասին: Մեկը դարձավ տիկին Ուելդոնի տան տղան, մյուսը՝ բարեկամը: Ջեյմս Ուելդոնը գիտեր, թե ինչքան էր պարտական ազնիվ նեգրին: Արդարև, մեծ բարեբախտություն էր, որ Նեգորոն չհասավ նրան, որովհետև նա իր ամբողջ կարողությունը կտար կնոջը և երեխային փրկելու համար: Նա իսկույն կմեկներ Աֆրիկա և ով գիտե, թե ի՞նչ վտանգների ու խարդախությունների կենթարկվեր:

Երկու խոսք կուզեն Բենեդիկտի մասին: Տեղ հասնելու օրն իսկ հարգելի գիտնականը Ջեյմս Ուելդոնի ձեռքը սեղմելուց հետո փակվեց իր կաբինետում և սկսեց աշխատել այնպես, որպես թե նախորդ օրը կիսատ թողած նախադասությունն էր շարունակում: Միջատաբանը մի ընդարձակ աշխատություն էր գրում «Hexapodes Benedictus»-ի մասին, միջատաբանական գիտական մի դիսերտացիա:

Պատերը միջատներով ծածկված կաբինետում կուզեն Բենեդիկտը նախ և առաջ գտավ մի խոշորացույց և ակնոց... Տե՛ր աստված, ինչպիսի՛ հուսահատական ճիչ արձակեց, երբ առաջին անգամ դրանցով դիտեց միջատաբանական աշխարհի միակ նմուշը:

«Hexapodes Benedictus»-ը բոլորովին էլ վեցոտանի չէր: Պարզապես սովորական սարդ էր: Եվ եթե փոխանակ ութի՝ վեց ոտ ուներ, այդ նրանից էր, որ առաջին երկու ոտները պակասում էին: Եվ եթե պակասում էին, այդ նրանից էր, որ Հերկուլեսը բռնելիս անզգուշորեն պոկել էր: Այդ անդամահատությունը կարծեցյալ «Hexapodes Benedictus»-ին հաշմանդամ էր դարձրել և նրան ամենապարզ սարդազգիների կարգին դասել, մի բան, որ կուզեն Բենեդիկտը կարճատեսության պատճառով չէր կարողացել նկատել ավելի շուտ: Այս վշտից նա հիվանդացավ, բայց բուժվեց բարեբախտաբար:

Երեք տարի հետո փոքրիկ Ջեկը, երբ ութ տարեկան դարձավ, Դիկ Սենդը նրան դասերն էր սերտել տալիս, չափազանց զբաղված լինելով նաև իր աշխատանքներով: Արդարև, հազիվ հայրենիք վերադարձած, հասկանալով, թե ինչքան բան ուներ սովորելու, խորասուզվել էր ուսման մեջ մի տեսակ խղճի խայթով, որպես մի մարդ, որը գիտական պաշարից զուրկ լինելով՝ իրեն արժանի բարձրության վրա չէր գտնվել:

«Այո, — կրկնում էր նա հաճախ, — եթե «Պիլիգրիմի» վրա գիտենայի այն ամենը, ինչ ծովայինը պետք է գիտենար, ինչքան՝ դժբախտություններից կարելի կլիներ խուսափել»:

Այդպես էր մտածում Դիկ Սենդը, և այդպիսով տասնութ տարեկան հասակում մեծ հաջողությամբ վերջացրեց ծովագնացի ուսումը և աչքի ընկնող վկայականով Ջեյմս Ուելլոնի նավապետների շարքն անցավ:

Ահա թե մինչև ուր էր հասել իր վարմունքով, իր աշխատանքով Սենդ-Հուկի հրվանդանում գտնված փոքրիկ որբը: Չնայած դեռևս պատանի էր, բայց և այնպես նրան գնահատում, կարելի է ասել, հարգում էին բոլորը. սակայն պարզությունն ու համեստությունը նրա համար այնքան բնական էին, որ այդ բոլորը նա չէր զգում իսկ: Նա մտքովն անգամ չէր անցկացնում, որ հաստատամտությունը, քաջությունը, փորձություններում ցուցաբերած անդդվելիությունը նրան մի տեսակ հերոս էին դարձրել:

Սակայն սևեռուն մի միտք հետապնդում էր նրան: Ազատ ժամերին նա անընդհատ մտածում էր ծերունի Թոմի, Բաթի, Ակտենի, Օստինի մասին, որոնց դժբախտության պատասխանատվությունը իրեն էր վերագրում: Տիկին Ուելլոնին նույնպես միշտ տխրություն էր պատճառում դժբախտության նախկին ընկերների ներկա վիճակը: Ուստի, Ջեյմս Ուելլոնը, Դիկ Սենդը և Հերկուլեսը աշխարհը ոտքի տակ տվին նրանց հետքը գտնելու համար: Վերջապես հաջողվեց դա՝ շնորհիվ նավատիրոջ ամեն տեղ ունեցած թղթակիցների: Մադագասկարում, որտեղ կարճ ժամանակ հետո ստրկությունը կվերանար: Թոմը և նրա ընկերները վաճառվել էին: Դիկ Սենդը ուզում էր խնայած փոքր գումարը հատկացնել նրանց ետ գնելու գործին, սակայն Ջեյմս Ուելլոնը լսել անգամ չուզեց: Նրա գործակալներից մեկը հանձն առավ այդ գործը, և 1877 թ. նոյեմբերի 15-ին չորս նեգրերը թակում էին Ջեյմս Ուելլոնի բնակարանի դուռը:

Այդ ազնիվ նեգրերը՝ Թոմը, Բաթը, Ակտենը և Օստինը, այնքան վտանգներից փրկվելուց հետո, այդ օրը քիչ էր մնացել խեղդվեին բարեկամների թևերի մեջ:

Այդպիսով, «Պիլիգրիմի» աղետոյալներից միայն Նանն էր պակասում, ինչպես նաև Դինգոն, և հրաշք էր, որ այդ երկուսը միայն զոհվեցին այդքան արկածների ընթացքում:

Չորս նեգրերի հասած օրը, հասկանալի է, տոն եղավ կալիֆոռնիացի վաճառականի տանը, և ամենից ավելի խանդավառություն առաջացրեց այն կենացը, որը տիկին Ուելլոնը առաջարկեց ի պատիվ Դիկ Սենդի՝ «տասնհինգամյա նավապետի»: